811.13

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES [illegible]
LIBR[illegible]
ARM[illegible]

[illegible]

003
Բ-45

Ի ՊԱՏԻՒ ԿՐԿՆԱԿ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

412-1912

ՀԱԶԱՐՀԻՆԳՀԱՐԻՒՐ ԱՄԵԱԿ

ՀԱՅ ԳՐԵՐՈՒ ԳԻՒՏԻՆ

# ՏԻՊ ՈՒ ՏԱՌ

ՉՈՐՍՀԱՐԻՒՐ ԱՄԵԱԿ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

1512-1912

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ, Կ. ՊՈԼԻՍ

ՀԱՅ ԳՐԵՐՈՒ ԳԻՒՏԻՆ ՀԱԶԱՐ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԵՒ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՉՈՐԵՔԴԱՐԵԱՆ ԿՐԿՆԱԿ ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

(412 - 1512 - 1912)

# ՏԻՊ ՈՒ ՏԱՌ

“ԳԻՐ„ԻՆ ԾԱԳՈՒՄԷՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՁԳՈՒԱԾ ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՏԻՊ, 180 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ




Հրատարակութիւն եւ Տպագրութիւն
ՎԱՀՐԱՄ ԵՒ ՀՐԱՉԵԱՅ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Կոստանդնուպոլիս
ՌՅԿԱ

Markaryan Artin
NALBUR
İstanbul Çenberlitaş No. 29

A. SEYHAN
KİTAPÇI GAZETECİ
Nuruosmaniye C. No. 52
İSTANBUL

**Թղթավաճառութիւն**

ՊԱՀՋԷ ԳԱԲՈՒ, ՃԷԼԱԼ ՊԷՅ ԽԱՆ

## Ա. ԵՒ Հ. ՄԷՐ-ՊԵՐՊԷՐԵԱՆ

**Տպարան եւ Կազմատուն**

ՍԻՐՔԷՃԻ, ՌԱԼԻ ԽԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

*Հաստատեալ 22 Յունվար 1901 թ.*

Գրադարան



# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Markaryan NALBUR Istanbul Çemberlitaş

Աւելի քան չորս ու կէս դարեր առաջ անցած են այն անմոռաց օրեր ի վեր, երբ գերման ոստանի մը մէջ ապրող սովորական անձ մը — յղացումի եւ ստեղծագործութեան բոցը միտքին մէջ յար կայծկլտուն, — յանկարծ աշխատանքի եւ անքուններ գրկանաց յաղթանակը տառերու բոլորակէ եար, ուր ուրեմն կ'աշտեր գլուխ հանել Յօհաննէսը՝ Գուտէնպէրկը որուն շնորհիւ էր որ սկսան յառաջդիմել ամենուրեք ուսում ու գիտութիւն, գեղարուեստներ եւ արհեստներ:

Բովանդակ մտաւորական աշխարհը համախոհ է հաստատելու թէ Գուտէնպէրկի գիւտը մեծա՛գոյն կարող եղած է նպաստելու առաւել բոլորին ալ արագ ծաղկումին ու ծաւալման: Ան է որ համաշխարհային հանճարներու գործերը ձեռագրութեանց երկիրէ երկիր. ա՛ն է որ տաղանդներու հնչքը փոխանցեց ազգաց, եւ աշխատութեան փառքը տարած տարածեց դէպ ի հեռաւոր հեռք հորիզոններ: Իրաւա՛մբ ունենին մեծամեծ խորհուրդներ՝ երբ ստիպուեցան ու հզօր բացատրութեան դիմելու, ամենքին հաւանական մը բնորոշած ըլլալու համար այդ «աստուածային արուեստ»ը.

## Տպագրութիւնը Հրեշտակն է մարդկային Մտածման:

Հայ Ազգը զարգացումի մէջ առաւել բախտաւոր եղած է առումով, քանի որ Մեծ Գիւտին գործադրութեան դրուելէն հազիւ 60 տարի վերջ կրցաւ ունենալ իր տպագրած գիրքը, նոյն իսկ Հօլանտացիներէն, Ռուսէն, Ամերիկացիներէն, Թուրքերէն, Նորվէկիացիներէն ու կարգ մը ազգերէ՛ ալ առաջ, — հոգ չէ թէ իր Մամուլը մայր-հայրենիքին ծոցը չգտնուէր եւ տարիներ տպագրութեանց իր նախորդաց արդիւնքները զուրկ ըլլային օգտաշատ հանգամանքէ՝ բովանդակութեան տեսակէտով:

Ինչպէս հատորիս տիտղոսին առընչ նշանակեցինք, ՏԻՊ ՈՒ ՏԱՌը նիւթ ունի իրեն 1. Միջազգային Տպագրութեան եւ 2. Հայ Տպագրութեան կատարած ընթացքներն ու գործունէութիւնները: Բաւականանք ակնարկ մը միայն ձգելով երկուքին ալ վրայ,

շատ բան քիչի մէջ ամփոփելու, այսինքն գիրքիս ժողովրդական մասերի բնոյթ մը տալու մեր մատեանին ձեւերով եւ կարելի եղածին չափ սեղմ ու ամփոփ ներկայացումն ընելով Հայ-Ազգային Տպագրութեան չորս դարէ ի վեր տուած դիմագծութեանց՝ ամբողջ աշխարհին վրայ:

Դիւրութեան սիրելով մանր անկիւններու բոլորին ժամանակակից եւ արդի տպագրիչներու, արուեստագէտներու եւ գրագիտներու գործունէութեանց, համե-
գրուեցանք բաղդատաբար աւելի՛ լայն տեղ տալու անոնց, եւ ուզեցինք իրենց պատկե-րով ու կենսագրական գիծերով ներկայացնել «Կիւրեղեանները իմ աշակերտները».
զանազան ձեւով գնահատելով էջեր իրենց մասնակցելով, բաւական այլ եւ այլ գրագիտական — ըստ կարգի անունները՝ իմ խմբագրութեան հաւաքին, — նոյն ժամա-նակ — մէկ համայնապատկեր Մեծարգեան բազմազան տառերու, որոնք յօ-րինուած են այլ եւ այլ երկիրներու մէջ՝ ինչպէս եւ օտարազգի գրաչափներու կողմէ:

Յաւակնութիւն չունինք ամփոփ «լիակատար» երկ մը պատրաստած ըլլալու, քանի որ այդ «լիակատար»ը բաղմաթիւ տարւոյ հաւաքներու շարք մը պիտի ձեւա-ցունէր, պահանջելով տարիներու անվերջ աշխատութեան աշխատակցութիւն կողմէ, որուն պէտք էր որ արամադրուած այլ ըլլալին, զոր օրինակ, անհնարապէս իմ ժամա-նակագրականներու Մխիթ. Եղիա Մխիթարեանց: Կառուցանելիք էր Հայ Տպագրու-թեան Զարդարիչ-բանակին էր որ գեղեցիկ խումբ մը եղաւ մեզ՝ մեր ձեռներ սրտերն ամփոփելու, եւ, գիտուններով, երգեցիկներով, բարեկացութիւններով ու պարպատուններով տաղ ժամանակի մէջ կերպարաններու ներկայ գործը:

Թողունք պատանեկան իր ընթացքներն ու ծառայութիւնները մէկդի, վերջապէս ներկայ Ներսէսեանի՝ բաւ է տեսնել պատկերազարդ Յուշեկանին մը տարիւ այն իսկ անշուշտ այլազան փայլուն էր, բան՝ հրատարակումն հատոր մը որ — գէթ արտաքինով տեսակէտով — Հայ Տպագրութեան մարդութեան ու կատարելագործումի մասնակցութեան իր էջերուն համայնքին մէջ: Երախտիքին ընծայ տպագրութեան ու պատկերազարդման այս արժանի գործը սիրայօժար յանձն առին մեր ծանօթ Տպարանատէր ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ Եղբայրները, որոնց գործունէութիւն — ինչ շարունակ նպատակ — պատիւ ու յարգանք մըն է մեզ, ընծայուած Հայ Տպագրութեան չորեքդարեան Յոբելեանին (1512-1912) զոր այս տարի Ռուսահայերը՝ Թիֆլիզ, Թրքահայերը՝ Պոլիս, եւ Ամերիկահայերը՝ Պոսթըն կը պատրաստուին տօնել մեծահանդէս:



Թեոդիկ

Պէրա, 6 Մայիս 1912

Թ. ՀԱՅՈՑ ՌՅԿԲ

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

# Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՅ Ե.Ի

'Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

## Տ. Տ. ՍԱՀԱԿԱՅ Բ.Ի

'Ի ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ

## Տ. ԽԱՉԻԿ ՎՐԴ.Ի ՆԱՐԿԵՐԵՐԵԱՆ

'Ի ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

## Տ. ԳԱԲՐԻԷԼԻ ԵՊՍ. ՅԱԿՈԲԵԱՆ

'Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

## Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՊՍ. ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ

●●●

'Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀՌՈՎՄ. ՀԱՅՈՑ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

## Տ. ՊՕՂՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ ԺԳ. ԹԷՐԶԵԱՆ

Յ'ԱԲԲԱՅՈՒԹԵԱՆ Հ. Հ. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԱՑԻՈՑ

## Տ. ԻԳՆԱՏԻՈՍԻ ՎՐԴ. ԿԻՒՐԵՂԵԱՆ

(ԱՐՔԵՊՍԿ.Ի ՏՐԱՅԱՆՈՒՊՈԼՍՈՅ)

Յ'ԱԲԲԱՅՈՒԹԵԱՆ Հ. Հ. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԻԵՆՆԱՑԻՈՑ

## Տ. ԳՐԻԳՈՐԻ ՎՐԴ. ԳՈՎՐԻԿԵԱՆՑ

(ԱՐՔԵՊՍԿ.Ի ՄԾԲՆԱՅ)

●●●

Յ'ԱԶԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

## ՎՍԵՄ ՏԵԱՌՆ Ե. ՅԱԿՈԲԱՅ ՊՕՅԱՃԵԱՆ

1912 1912




(Ծրագրած Վ. Զարդարեանի)

# ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆԵԿԸ

# «ՄԵՂԱՊԱՐՏ ՅԱԿՈԲ»

## 1512-3 Ի ՎԵՆԵՏԻԿ

# ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ... ԴԷՊ Ի ՅԱՌԱՋ.

## «ԳԻՐ»ԻՆ ԾԱԳՈՒՄԸ



ՆԵՂՈՍԻՆ անհամեմատօրէն և բարբարոս փուլերուն մէջ երբ սուզուինք, պիտի տեսնենք դարձեալ մեր նախնիները, նախամարդիկ՝ որոնք իրենց զգացումները, գաղափարները ու հոգեկան վիճակները արտայայտելու համար անտեղիտալի պէտքն ունեցած են դիմելու բառերուն, ոճերուն և դարձուածքներուն այս ու այն լեզուին, սկզբնական շրջաններուն՝ մնջկատակներով, բոբոխումներով, կակազումներով և պատկերաւոր բացագանչութիւններով որոնց համադրոյթը կորձոյեցաւ մը ու եղի փառաւորագոյն էր ամփոփած:

Նախապատմական այդ դարաշրջաններէն սկսեալ, ժողովուրդները յամբրնթաց և աստիճանական քաղաքակրթութեան ու զարգացումին հետ սկսան զարգանալ ու ճոխանալ նաև անոնց լեզուները: Քանի՛ քանի՛ անհատական սերունդներ արդէօք նպաստած են՝ ձևացնելու համար խօսուելիք լեզուն: Եղած գիւտի մը, նորաձևար առարկայի մը և անոր յատկութեանց մասերուն անուններ դնել, յղացուած նոր մտածումի մը ստորոգումները տալ հարկ էր: Եւ այսպէս, բառերը կ'ունենային այդ խեղճիկ, աղքատիկ և անկերպարան լեզուին մէջ:



1. ՔԱՐԱՆՁԱՒԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ. — **Եղջիւրի վրայ փորագրեալ Հիւսիսի եղջերու մը:** — Գրութեան առաջին կերպը եղաւ առարկաներ կամ կենդանիներ ներկայացնել փորագրութեամբ:



2. ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆՇԱՆԱԳԻՐՆԵՐ — **Ձուկ, թռչուն, զարձ. ն. դզալ:** — Անմիջապէս կերպը եղող այդ փորագրութեանց յաջորդեցին գծագրութեամբ եղած պատկերներ.



3. ՄԵՀԵՆԱԳՐԱԿԱՆՆերը պարզուած պատկերներ էին՝ եգիպտական քաղաքակրթութենէն ծնած:



4. ԲԵՒԵՌԱԳԻՐները ցցիկներու խումբեր են, համազօր՝ նշաններու: — Այսպէս ծնունդ առած է Ասորական սեպաձև այս արձանագրութեանց:



5. ՀԱՆԳՈՅՑԱՒՈՐ-ԳԻՐԸ. — Ամերիկայի մէջ, Բերուի հին քաղաքակրթութիւնը ծանօթ **քիփու** կոչուած այս գիրերը որոնք հանգոյցներ էին թելերու մէջ յանգած գաղափարներ արտայայտելու. Եւ որոնք կը բաղկանային գոյնզգոյն չուան ի կամ հանգոյցներէ, որոնց կարևորութիւնները կամ թիւ կամ տեղ ցոյց կու տային:

«ԳԻՐ»ԻՆ ԾԱԳՈՒՄԸ. — ՍԿԶԲՆԱԿԱՆ ՁԵՒԱՓՈԽՈՒՄՆԵՐ

Մերձաւորներու հետ անտակցիլը հնարաւոր էր առանձին մը, քանի որ կար գէթ ալէկ լեզու մը՝ որով նախամարդիկ կրնային իրարու հաղորդել իրենց գաղափարները, կամքն ու զգացումները: Բայց ասոր. օգտակար գիւտ մը, լաւ արհեստ մը կարելի էր մերձաւորէ մերձաւոր փոխանցել, զայն կերպարանելով եղանակը ցոյց տալով և կամ նմանցնելով, որով սերունդէ սերունդ անկորուստ պահել հնարաւոր: Բայց ինչպէս սակայն կարելի էր դէպք մը, եղելութիւն մը, մտածում մը հեռու անձեր ապրողներու հաղորդել և կամ յաջորդ սերունդներու ա[illegible]-

ցունել: Բանի որ գիր չկար, ի՞նչպէս կարելի էր իմաստուններու, խորհողներու, մեծ միտքերու յայտնութիւնները, գիտողութիւններն ու դատողութիւնները կտակել գալիք մարդկութեան՝ որ ա՛յնքան պէտք ունէր օգտուելու անոնցմէ եւ իր կարգին յաւելցնելու իր մտածումին ոյժը:

Եւ սակայն, վաղնջուց դարերու մէջ իր մրգաւոր գոյութիւնը քաշկռտող հեք մարդն ալ հնար՝ երեւակայեց օր մը իր մէկ մտածումը կորուստէ զերծ պահել, [illegible] պատկե՛րն որուն իմաստին բանալին համար պէտք էր անշուշտ գաղափի կարողութիւն: Ա՛յս եղաւ սա՛ [illegible]՝ որուն յաջորդեցին գծագրութեամբ յօրինուած պատկերներ:

Քաղաքակրթութեան որոշ մէկ աստիճանի մը հասած, մարդիկ այլ եւս արտայայտութեան այդ ձեւով չգոհանալով՝ գիւտած են [illegible]ները, որոնց միջոցաւ կարելի եղած է գաղափարներու բաղդատաբար մեծին պարզում մը: Սա եւս սակայն կամաց կամաց անբաւարար նկատուելով, յառաջդիմութեան հետամուտ մարդկութիւնը հեղինակեց տեսակ մը հնչական նշաններ, որոնցմէ յօրինեցաւ [illegible]ը, կամ, ուրիշ բացատրութեամբ, սեպաձեւ տառական գիրը:

Ու եկաւ վերջապէս այն օրը, երբ փիւնիկեան այբուբենը — ծնունդ եգիպտական քաղաքակրթութեան — ձեւաւորուելով՝ իր կարգին ծնունդ տուաւ ուրիշ այբուբեններու (յունական, արաբական, մոնկոլեան եւն.): Հրէական այբուբենը ծագում առաւ արամեաններէն՝ զոր Հրեայք Բաբելոնէն բերին, իրենց գերութենէն դարձին: Նոյն արամեաններէն է դարձեալ որմէ ածանցուեցան ասորի, պարսիկ, հնդկա-բակտրիական ու վրացի այբուբենք: Իսկ փիւնիկեանին ամէնէն շատ տարածուն ճիւղն է յունականը որ նախատիպը եղած է լատինին եւ սլաւ այբուբենին: Աւելցնենք թէ Յոյնք իւրացնելով փիւնիկեանը՝ կատարելագործեցին զայն, եւ հնարեցին ձայնաւորները որոնք անծանօթ էին փիւնիկեցիներուն: Յունական քաղաքակրթութեան մէջ կ'ըմբռնուի նաեւ Յունականը որ հայրն է մեծամասնութիւն դպրերուն, հայերէն եւ կիւրեղեան տառերուն:

Տիեզերքին վրայ սփռուած ժողովուրդներ, այսպէս, ունենալով իրենց սեփական գիրը՝ յաջողեցան կորուստէ փրկել մարդկային խորհուրդն ու մտածումը:

Գիրի բոլոր այս ձեւափոխումներուն շարքին՝ ի՞նչպէս չյիշել Նոր-աշխարհի մէկ անկիւնը քաշուած ազգութեան մը, Եկուցիին հնարած [illegible]ը՝ գտնուել ի վեր ամանաց եւ ցարդ ի գործածութեան բնիկ հնդիկներու կողմէ:

## «ՁԵՌԱԳԻՐ»Ի ԴԵՐԸ

Գիրին գիւտը եղած էր, որով հսկայ քայլ մը առնուած ըլլալ ի յառաջդիմութիւն, մանաւանդ այն օրէն՝ երբ մարդիկ դարերու ընթացքին իրենց մտածումներէն հատուածներ դրոշմեցին վերջ քարի, մետաղի, կաւեղէնի, փայտի եւ հիւանդեղէններու վրայ, [illegible] հնարեցին հուսկ ուրեմն: Եգիպտացիք էին առաջինք որ օրին մէկը ձեռք ձգելով պրտու կոչուած տունկը (պապիրոս), անով՝ բուղը պատրաստելու արհեստը զարգացուցին: Պապիրոսին յաջորդած է Մագաղաթը որ կը պատրաստուէր փայլուն եւ ողորկ մորթէ (ոչխարենի կամ այծենի): Մագաղաթին ֆրանսերէնն է [illegible]՝ Պերգամ քաղաքին անունով, որովհետեւ նախ նոյն տեղին թագաւորը Եւմենէս Բ. գործածած է մորթէ շինուած այդ թուղթը՝ Քրիստոսէ 200 տարի առաջ: — Մագաղաթին վրայ կ'սկսին աշխատիլ մաքուր գիր ունեցող բնօրինակիչները: Արուեստագէտը կը գեղազարդէր էջերը նկարներով եւ ոսկեզօծումներով: Կազմարարը գիրքին թերթերը կը զօդէր, մինչեւ որ գործը գլուխ հանուած՝ կը հասնէր գրոց-բրոց մարդ նկատուած Գրավաճառին ձեռքը: Տարիներու ընթացքին արդիւնք այս գործողութիւնները ցոյց կու տան թէ գիրքեր ժամանակին թանկագին եւ հազուագիւտ առարկայ էին՝ յաճախ գեղաքանդակ արկղիկներու մէջ պահուած եւ կամ շղթաներու միջոցաւ կապուած՝ ընթերցանութեան յատկացեալ գրասեղաններու վրայ:

Այդ օրէն բանաստեղծութիւն, կրօնք ու գիտութիւն սկսան տարածուիլ գրացի երկիրներու մէջ ալ: Գրչագիրներ ամէն կողմ սկսան ընդօրինակութիւն կատարել և իրենց արտադրած ձեռագիրներուն շնորհիւ մարդկութեան ջամբել՝ հնարաւոր չափով մը՝ ուսում ու գիտութիւն:

Բայց ընդօրինակելու այս դրութիւնը կրնա՞ր բաւարարութիւն տալ ամենուն: Ձեռագիրներ ա՛յնքան սուղ էին, և անհնար էր որ անոնցմէ կարենային օգտուիլ աղքատ ու նոյն իսկ միջին դասակարգի մարդիկ: Ժողովուրդին ամենատարր մեծամասնութիւնը կը մնար դեռ. զուրկ գիրքերէ, ուսմէ և զարգացումէ: Դարե՛ր անած են գրչագիրները այդ տաժանագին աշխատութիւններ: Դիւրին է հասկնալ թէ ինչ ի՛նչ և հազարաւոր կատարուած այդ օրինակութեանց պատճառաւ ո՛րքան գրական ու գիտական երկասիրութիւններ մեծ փոփոխութիւններու կ'ենթարկուէին, սխալներ և այլափոխութիւններ ակամայ մուտ գործելով անոնց մէջ: Գրչագիրներ համառօտագրութիւններ ալ սկսան ընել՝ զորս կարդալու դժուարութիւնը կը կրէին նոյն իսկ հմտագէտները: Այսօր սակայն այդ ձեռագիր հատորներն առարկայ են բանասէրներու կողմէ պրպտումի և լուրջ ուսումնասիրութեանց, ու իրենց երբեմնի արժէքէն անհամեմատ բարձր գիներ ունին:



ՔՐԻՍՏՈՍԻ 1181 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԳՐՈՒԱԾ ԽՈՋԱՎԱՆՔԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԷՋ ՄԸ

Ձանց ընելով խօսիլ հոս բոլոր օտար ազգաց այն ձեռագրերուն մասին՝ որոնցմէ մնացորդներ (բարբարոս արշաւանքներէ, հուրէ և սուրէ մազապուր ազատուած) խնամով պահուած են կառավարական և անհատական թանգարաններու մէջ, իբրև հին հին դարուց յիշատակ, բանկագին խրխար և ուսումնասիրութեանց առարկայ վաւերաթղթեր, — անցողակի յիշենք թէ Հայն ալ ունեցած է զանազան ժամանակներու մէջ յօրինուած իր ձեռագիրները՝ որոնց միջոցաւ անիկա ինքզինք, իր լեզուն ու իր գրականութիւնը դարե՛ր զարգացուց, և որոնցմէ բարեբախտաբար բաւական թիւով հատորներ պահուած կը մնան դարդ Էջմիածնայ, Երուսաղէմի, Վենետիկոյ, Վիեննայի մատենադարաններուն մէջ և ցեցամէջ ու փոշոտ անկիւններ հայ վանքերու:

Ն. Մառ, Մխաքեան, Տէր Մովսէսեան, Բարսամեանց, Գալեան, Կանայեանց և ուրիշներ 19րդ դարու վերջերը սատարած են մեր ձեռագիրները ծանօթացնելու գործին՝ խղճամիտ կերպով ցուցակագրելով զանոնք. իսկ Վիեննայի բազմահմուտ միաբան՝ Հ. Յակոբոս

Վրդ. Տաշեան 1895 ին է որ հրատարակեց — Այտընեան Աբբահօր յիսնամեայ յոբելեանին առ-թիւ — իր բանասիրական ու պատկառելի գործը, Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, որուն մէջ խօսուած է իրենց մատենադարանին ձեռագրներուն կարգով 568 (այժմ 1000 զանազան ձեռագրներու վրայ, զայն մանրա-մասնօրէն յատկանշելով: Այս գիրքը կը բաղկանայ 1 64 մեծադիր էջերէ (բաց ի գլխաւորներէն մասէն, 276 էջ), ճոխացած 7 գմայլելի յաւելուածական տախտակներով որ ցուցադրուած են այլ և այլ դարուց գեղագրներու գործերէ նմոյշներ, զարդագրեր, կողքի զանազան և ոսկեզօծ պատկերներ ու յատանցքի նոյն զարդանկարներ, որոնք ամէնքն ալ կը խօսին հայկական հին ոճին ինքնատիպ բնութեանը վրայօք: Տարիներու աշխատութեան արդիւնք բանասիրական այս հոյակապ գործին համար — որուն աշխատութիւնը $1\frac{1}{2}$ տարի տեւած է — վատնուած է շուրջ 6000 քրոնա, զորմէ որուն 2000ը սիրայօժար առատացուած է Վիեննայի Կայս. Կաճառը:


Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՏԱՇԵԱՆ

Յառաջ բերենք յառաջաբանէն հետեւեալ հատուածը. — «Հայ մատենագրութեան և անոր պատմութեան զբաղողին համար անհրաժեշտ է մեծ հաւաքածոյ վրայ քիչ անգլիութեան ունենալ: Հայոց մատենագրութեան հնգրիս պատմութեան մ'անհնար է գրել այսպէս, ինչպէս կը պահանջէ այսօր գիտութիւնը, եթէ լոյս չախուռի էջմիածնայ ... և այլն ձեռագրուն վրայ»:

# ԱՐՈՒԵՍՏԻ ՀՆԱՐԻՉՆԵՐԸ

## «ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ» ՀՆԱՐԻՉԸ

Ձեռագիր մատեանները անբաւական էին ժողովուրդներու ընդհանուր և արագ զարգացման համար:

Պէտք էր որ ծնէր 15րդ դարու հանճարեղ մարդը, մեծ գործաւորը՝ Կիւթէմպէրկ և վերխարի հանգրուան մը բանար ազգերու քաղաքակրթութեան ընթացքին, առնելով ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆը, որով կարելի ըլլար գիրքերու միջոցաւ իմացականութեան ջահը պտտցունել երկիրէ երկիր և հզօր մղում մը տալ միտքերու բարեբար զարգացման:

Քաղաքակրթութեան պատմութիւնը ոսկեղրուագ քանդակած է անունն այդ բանկագին մարդուն որ նոյնչափ ռամկավարականօրէն մին եղաւ համար ազգաց մտաւորական յառաջդիմութեան: Կիւթէմպէրկ բացած է վիճակ մը որ յանէ՛ն անկիրք դիտի մնայ երախտապարտ մարդկութեան հոգին մէջ, զորչափ ատոմ ու զգլխութիւն, գիտութիւն և արուեստներ — իմացական կեանքի այդ չքնաղ գործունէութիւնները — կենդանի մնան տիեզերքիս վրայ. վասն զի Կիւթէմպէրկի գիւտը գերազանցապէ՛ս ստորարած եղաւ ատոնց ամէնո՛ւն ալ փոյթերուց բարգաւաճման ու ծաւալումի գործին:

Տպագրութեա՛մբ է որ հնարաւոր դարձաւ երկնածին Պապիրոսի պատառներուն և Մագաղաթին յաջորդող Թուղթին վրայ գրուածքի մը օրինակներն արագօրէն և յանհամեմատ առատութեամբ բազմապատկել — իրարու քով շարուած մետաղեայ կարկառուն տառերու միջոցաւ — և տպուած գիրքը տարածել ի սփիւռս աշխարհի:

Տպագրութեա՛մբ է որ մեծ միտքեր սկսան աւելի սերտ մտերմութեան մէջ գտնուիլ իրարու հետ և գիւտերու անվերջ շարքի մը ծնունդ տալ:

Տպագրութեա՛մբ է որ իրենց աշխատանոցներուն մէջ փակուած գիտուններու աչքը կը զօրէ տեսնել հեռաւոր հորիզոնի մը վրայ ծնունդ առնող լոյս մը, և գաղափարներու անմիջական հաղորդակցութեամբ ու շփումով յառաջ կու գան անվերջ գիւտեր ու բարիքներ՝ համօրէն մարդկութեան համար:

Տպագրութեա՛մբ է որ խորհողներ, իմաստուններ, գաղափարի բոլոր առաջնորդներ, բարոյախօսներ և հաստատակամ կեանքի վարիչներ կրնան խօսիլ բիւրաւոր մարդոց, անոնց գաղափարներն ուղղել և ազդել անոնց վրայ:

Ո՞վ որ կրնայ առանձին նստիլ ինքզինք՝ երբ գիտէ կարդալ և գիրք մը ունի ձեռքը: Ովկիանոսներէ և քաղաքներու խաժամուժ ամբոխէն հեռու՝ անձուկ անկիւն մը, իր գիւղին մենութեան մէջ ապրող շինականն իսկ՝ երբ կարդալ գիտէ՝ կրնայ պտտիլ և տարփալ մեծ միտքերէ ճառագայթող լոյսերով, գիտակ դառնալ աշխարհի անցուդարձերուն, օրօրուիլ և անրջանքի հեշտալի կեանքն ապրիլ՝ բանաստեղծներու գրուածքներով, մանաւանդ տեղեակ ըլլալ մարդասէրներու գործքին, ընկերաբաններու տեսութեանց և մարդկութիւնը յուզող ու զայն զբաղեցնող սուր ու սերտ հարցերուն:

Տպագրութեա՛մբ է որ գիտութիւն, գրականութիւն ու գեղարուեստ՝ որ քան զոր մեծ զարկ ստացան: Անո՛վ է որ ազգեր սկսան զիրար աւելի ճանչնալ, փոխադարձաբար օգտուիլ իրարու բրած յառաջդիմութիւններէն, հեռաւորութիւնները զեղչել, անջրպետները ջնջել, համամիտ ու խորհրդակից դառնալ իրարու:

Երբ տպուած գիրքի մը էջերուն մէջ կը թափառինք, մեր անծանօթ սերունդներ են, արօրի ու բահի մարդեր, որոնք իրենց գլուխները կը ցցեն հոն ու կը բանան խօսիլ մեզ՝ դարերու մէջէն. չքացած ազգե՛ր բոլոր որոնք իրենց փառքի արեւներով կարծես կը նային դէպ ի մեզ, մեր ժողովուրդներ, անխոնջ վաստակաւորներ որոնք կը թելադրեն մեզ օգտուիլ իրենց ջանքերէն, իրենց ձեռնարկներէն ու յղացումներէն: Ու մենք մոռցած մեր շուրջի ամայութիւնը՝ երբ առանձին ենք, մոռցած չարութիւնները՝ երբ ապիրատներէ հալածուած, մոռցած չուառութիւնը՝ երբ դժբախտներու ցաւերէ շրջապատուած, մոռցած նաեւ սեւն ու սուգը՝ երբ սփոփութիւնն է եկած մտած մեր սեմէն ներս, առօրեայ տաղտուկ մտածումներէ ու նկատումներէ պահ մը զերծ, կը մխրճինք հաճոյքի մը թերթերուն մէջ ու մտքի կրնանք ապրիլ իմաստասէրներու, քերթողներու, գիտուններու, ճշմարտախոհ ու գեղեցիկին համար կռուողներու և յոգնած մարդկութեան՝ կեանքերնին ի սպաս դնողներու թանկագին մտերմութեան մէջ, ազատելով մեր միտքը խաւարի տիրապետութենէն, զայն կաշկանդող բիւր ըմբռնումներու բիրտ գերութենէն:

Ի՞նչ պիտի ըլլար արդեօք աշխարհի վիճակը՝ երբ տպագրութիւնը չստեղծուէր, և սուղ ու կրակ ձեռագիրներ մենաշնորհը մնային իշխաններու և քուրմերու, կամ, երբեմն իբր զարդ ու պերճութիւն հանգչէին առանձնաշնորհեալ եկեղեցիներու վանքի գրադարաններուն մէջ և կամ քանի մը բախտաւորներու գզրոցներուն մութ անկիւնը: Հասարակ ժողովուրդն ո՞ւր պիտի գտնէր իր սփոփանքին ու ինքնազարգացման աղբիւրը:

Այսպէս, առաւել քան չորս դարէ ի վեր՝ ազգերու յեղաշրջումին ու բարգաւաճման մեծ գործօնը եղած է Տպագրութիւնը: Անո՛վ է որ բռնութիւններ տապալած են ու ժողովուրդներ ազատագրուած: Ճնշուածներու, տառապողներու աղաղակները՝ Լրագրական Թերթերու մղիչ զօրութեամբ Մամուլին տակէն անցած՝ հազարաւոր օրինակներու շնորհիւ ափէ ափ երկիրէ երկիր կը թռչին, կ'արձագանգեն, խոժոռները մտածել կու տան, անտարբերները զգածել, ընկերային հոսանք մը որոնել կը գրգռեն. ու մարդկային եղբայրութիւնը կ'սկսի ամրապնդուիլ աւելի սերտ կապերով, արհամարհելով պատնէշներն ու սահմանագլուխները:

Իրաւո՛ւնք ունէր գահընկէց Սուլթանը՝ Համիտ քառորդ դար ամբողջ իր ամենազօր ինքնակալի հանգամանքովը դողալու Տպագրութենէն ու Լրագրական Թերթերէն, ցվերջ ատելու զանոնք և կաշկանդելու տպարանի և ձուլարանի ամէն աշխատութիւն բովանդակ Թուրքիոյ մէջ:

Երկրագի իր ոսկեձեղուն որջին մէջ կկզած, ի՛նչ էր որ մնմախոնեց օրերով. — «Նզովից-արմատ սա Հայերուն [illegible] ա՛յնքան չեմ անարժէքի կոր, որքան [illegible]...»: Այդ խելօք, անվնաս ու խորհին անմչան սաւերն էին արդարև որոնք հոս գաղտագողի և արտասահմանի մէջ սանձարձակ կերպով միարեր յեղաշրջեցին ու զինք հաւկ ութեան առաջնորդեցին դէպ ի գահավէժ. թերթերն ու գիրքերն ալ չուշացան անարգար մարդու իր անունը խարանելու նշմնեալին:

Փառք և պատի՛ւ Մամուլին: Քաղաքակրթութեան այդ հրաշալի սարքը դեռ ի՛նչե՛ր կը վերապահէ մեզ՝ իր արտադրած օրաթերթերով, հանդէսներով ու հատորներով, ազատ միտքի ու գաղափարի իր արշաւասոյր վարուցանքին մէջ:

# ԿԻՒԹԷՄՊԷՐԿ (1397-1468)

**Հին օրեր. — Փայտափորագրութիւնը. — Անբաւ տպագրութիւն. — Չինացիք. — Հօլանտ. Կիւթէմպէրկ. — Իր երիտասարդութիւնը. — Դէպ ի գործ. — Տնտութեան ջարդեր. — Իր առաջին 3 բարի ընկերները. — Պատմական դասը. — Հայելագործութի՞ւն թէ... — Վերադարձ. — Կիւթէմպէրկի նոր «բարի-ծաղիկ» ընկերները. — Սեւ օրը. — Վարպետը դո՛ւրս. — Տախտակագրութիւն եւ երկաթեան վախճան. — Շէֆէր որդին ազնիւ մէկը — «Կիւթէմպէրկ» անունը փրկուած մոռացութենէ. — Կիւթէմպէրկ բռնուած ու լքուած. — Իր հոյակերտ արձանը. — Աշխարհիս առաջին տպագրութիւնները:**

Տպագրութիւն անծանօթ եղած է նախնեաց, երբ «տպագրութիւն» բառով հասկնանք անոր 2 գլխաւոր մասերը՝ [illegible] ու [illegible], զոր Կիւթէմպէրկ միայն հնարեց և 1453 ի առաջինը [illegible], — ձի՛շտ այն թուականին՝ երբ Սուլթան Մէհմէտ մեծազօր աշխարհակալը Բիւզանդիոնի առումը կը կատարէր՝ իր պատմական ձախաստանութ մղելով Յունաց դէմ, մինչ ի Կիլիկիա զաղթական Հայեր «յաղօրս էին աղաղակեալ», ինչպէս կը գրէ Հայր Չամչեան: Ուրեմն չպէտք է տպագրութիւն նկատել Բաբելոնի գրչական արձանները, բրուտի նշանները, հին ակնարոյժներու կնիքները եւայլն:

Փայտի տպագրութիւններն ասեր իրենց եղանակով՝ սերտ աղերս ունին փորագրութեան պատմութեան հետ, բայց իրենց նպատակով և իրենց շատ ծաւալման ժամանակամիջոցով՝ կը գրաւեն տպագրութեան պատմութեան առաջին գլուխը:

Սակայն և այնպէս նախնիք եթէ չէին ճանչցած այդ արուեստը, զանազան գիտէին անոր սկզբունքները: Անգղ. գրագէտ Տիխոլսի կ'ըսէ թէ հռոմայեցի աղջեկի մարդոց ծանօթ էր ան, բայց ծածուկ պահած էին այդ գիւտը, վախնալով վաճառականներ որոնց կրնա՛ր պատճառ ըլլալ տպագրութիւնը՝ քաղաքական տեսակէտով: — Նախնիք արդարև բարձրաքանդակ և խորաքանդակ փորագրութիւնը կ'արկանէին ի կիր՝ քարի, մետաղի, անօթի, դրամի վրայ, ևն.: Անոնք ճարտարօրէն ի գործ կը դնէին նաև, այսինքն [illegible], նոյն իսկ գործածելով [illegible] որոնց նմոյշները կարելի է հանդիպիլ բրդուն հողէ կանթեղներու վրայ: Միջին դարուն, ձեռագիրներ գունաւոր տողերը յօրինած էին մետաղեայ կտրուած տախտակներ, և այդ կաղապարներու միջոցաւ՝ անոնք [illegible] կը կիրարկէին զանազան միլաններով: Ընդօրինակիչներ նոյնը կ'ընէին. նախ գլխագիրներու, յետոյ փոքր գիրերու համար. և այսպէս [illegible], մանաւանդ եկեղ. երգեցողութեան մատեանները, շարականներ: — Նոյնպէս, ծակոտկէն կաղապարի միջոցաւ էր որ շինեցին «խաղի թուղթ»երը որոնց պատրաստութիւնը լայնագոյն տեղը կը գրաւէ Տպագրութեան և Փորագրութեան պատմութեան մէջ: «Խաղի թուղթ»երուն տպագրութիւնը [illegible] 1400 թուականին եղած է, [illegible] ԺԵ. դարուն Ա. կէսին մէջ, գրեթէ միաժամանակ, Հօլանտայի, Գերմանիոյ ու Փլանտրայի մէջ տպագրուեցան — շնորհիւ ցցուած և միլանուած փորագրեալ պնակիտներու — կրօնի ու բարոյականի խել մը գիրքեր, որոնք նկատուած են Տպագրութեան ամենահին յիշատակարանները: — Անկցուննք թէ բուն տպագրութեան գիւտէն վերջն ալ, քրիստոնեայ բոլոր ազգաց տպագրեալ սկզբնական մատեանները գրեթէ միշտ կրօնական եղած են:

Կարեւո՛րը մոռցանք ըսելու : «Փայտաքանդակ փորագրութիւն» յորջորջումով ծանօթ այս եղանակը սակայն ի գործածութեան էր Չինաստանի մէջ, Քր. Ե. 200 տարի՛ խել առաջ :

⁂ Յառաջդիմութիւնը միայն կարելի եղած է [illegible] Գերմանացիի մը վիճակուեցաւ վերջապէս բախտը՝ մեծ առեղծուածը լուծելու, յետ երկար և տաժանագին հետազօտութեանց :

ՀԷՆՆԷ ԿԻՒԹԷՄՊԷՐԿ կը կոչուէր այդ մարդը, 1397 ին ծնած Մայանսի մէջ՝ ազնուական ընտանիքէ մը : Իր երիտասարդութեան մէկ մասն անցուց հօրենական տանը մէջ որ զարդարուած էր միջին դարու աշխարհական քանդակներով ու պատկերներով: Մուտքի դուռին վրայ քանդակուած կար հսկայ ցուլի մը գլուխ՝ սա արձանագրութեամբ . — «Ոչինչ կրնայ խնձի դէմ դնել», որ զօրցեսս Կիւթէմպէրկի կեանքին նշանաբանը եղաւ . և միթէ Տպագրութեան նշանաբանն ալ նոյնը չէ՞ :



ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԻՉ
ԵՒ ՌԱՀՎԻՐԱՅ ՔԱՂԱՔԱԿԻՐԹՈՒԹԵԱՆ
ՀԷՆՆԷ ԿԻՒԹԷՄՊԷՐԿ

15 տարեկանին՝ հայրը կորսնցուց : 1420 ին հարկադրուեցաւ հայրենի երկրէն հեռանալու՝ Ֆռէտէռիք Գ.ի հանդիսաւոր մուտքին առթիւ պայթող խռովութեանց հետեւանօք, (թագաւորը դիմաւորելու համար հարուստներու և ժողովրդային դասակարգին միջեւ ծագած կատաղի կռիւը) :

Կիւթէմպէրկ հաստատուելով Ստրասպուրկ, գաղափարը կ'ունենայ առնելու [illegible] դարիճակի մը (գալըպ) միջոցաւ, խղոտ մելանով ծածկուած, որով կարելի պիտի ըլլար բնագիրի մը օրինակներն առնուլ թիւով հանել թուղթի էջերուն վրայ : Լման 10 տարի աշխատեցաւ, հետամուտ ըլլալով բախանցելու մեծ դաղտնիքին և ընելու հրաշարուեստ գիւտը, մէկ խօսքով՝ [illegible] :

Արդէն հասած էր գործածուիչ արդիւնքի մը, երբ անդրադարձաւ թէ պիտանի խանգարուած էր՝ իր անվերջ հետազօտութեանց երեսէն նիւթապէս ըլլալով մեծամեծ ծախքերու : Սակայն և այնպէս ոչի՛նչ խրտչեցուց, ոչի՛նչ ընկրկեցուց Աշխատութեան այս դիւցազնը՝ միշտ յառաջ իր փորձին մէջ : Երեք բաժնեկիցներ — Տռիծճան, Ռիֆֆ և Հայլման — ընկեր բրաւ իրեն, որոնք բաւական մը դրամ դրին՝ գործը բոլորէն ծածուկ շարունակելու համար, իրր թէ հայելի շինելու նպատակով :

Կիւթէմպէրկ կեցած էր փորագրել մետաղեայ շարժուն տառեր . կը մնար միայն ձեռք ձգել սա՛նկ նիւթ մը կամ բաղադրութիւն մը որ յարմար ըլլար այդ տառերը բազմապատկելու և առաջադրուած նպատակին ծառայելու : Երկաթը շատ կարծր ըլլալուն՝ թուղթը կը ծակէր, կապարն ալ շատ կակուղ՝ կը ճզմուէր մամուլին ճնշման տակ . գալով փայտին՝ ո՛չ ոյժ ունէր ան, ոչ ալ տոկունութիւն : Հարկ էր ուրեմն խիչ խիչ մետաղներու խառնուրդով յառաջ բերել տառեր՝ պատշաճ պնդութեամբ և ընդունակ դարիճակներու մէջ թափուելու :

Յանդուգն ձեռնարկը դեռ ի կատարելութիւն և իրականացում ճամբայ կ'առնէր տակաւ, երբ դժբախտութիւնը նորէ՛ն կու գար այցելութեան՝ իրենց աշխատանոցը : Այդ անվերջ փորձերն ու պրպտումները սուղի նստած էին անոնց ալ : Բոլորին մէկ անկումի մնացին : Փառապանծ յղացումը յաջող ածելու համար, որի ընկերները չկարենացան յօժարակամ և անդրադարձ ծախսելու կարասի, գործարկէն ու տագնապք, նոյն խել պա՛րոք ալ ընելու. ա՛յնքան վառ էր իրենց հաւատքը՝ գործին մեծութեան և զայն վարող մե՛ծ գործաւորին, Կիւթէմպէրկի հանճարին վրայ : Այդ գործողութիւններն ալ սակայն ապարդիւն մնացին :

Եւ ձախողուածն իր լրումին հասաւ, երբ ընկերներէն Տռիծճան 1439 ին մեռնելով՝ ընկերութիւնն ալ լուծուեցաւ : Պահանջատէրեր դատ բացին որ շարունակուեցաւ բաւական և կան-

չուած վկաներով ու գաղտագողի կատարուած պայմանագրութեան երեւան եկեղը հաստա-տեցաւ թէ [illegible] [illegible] [illegible] [illegible] առատորէն մըն էր յոլ եւ թէ [illegible] [illegible] [illegible] էր որուն համար բաներ գտած էին տարիներով :

Առնելիքորդներէն հալածուած, Կիւթէնպէրկ աշխատութիւնները կը լքէ եւ 1450ին անց-նելով Սթրազպուրկէն իր ծննդավայրը՝ իր խել օժներով կը վերսկսի հին ընդհատուած գործին : Կը գծէ, կը փորէ, մետաղներու խառնուրդի փորձեր կը կա-տարէ անդուլ. եւ որովհետեւ ձախողուած էր միջոցներէ զուրկ ապրելու միշտ՝ գործին շարունակութեան համար կը կազմէ նոր ընկերակցութիւն մը Ժան Ֆաուսթի եւ Փիէռ Շէօ-ֆէրի հետ : Առաջինը տեղացի Մայնցցի ջոջ ոսկերիչ մըն էր դատաւորի, որ, ապագայ գործին արդիւնքներէն իր բա-ժինը ապահովելու համար, վերջ միայն՝ դրամ փոխ տուաւ : Իսկ Շէօֆէր երիտասարդ գրագիր մըն էր քաջակիրթ, անհրաժեշտ կերպով ճարտար ընդօրինակիչ մը՝ զոր Ֆա-ուսթ իսկոյն փեսայ առաւ իրեն :



ԿԻԹԵՄՊԵՐԿ, ՖԱՈՒՍԹ ԵՒ ՇԵՕՖԵՐ

Վարպետը հնարած էր արդէն մետաղեայ շարժուն տառերը, բայց տակաւին չէր կրցած բաւարար կերպով խառնուրդը : Շէօֆէր եղաւ գտնողը լուծոյ, հաստատու-չափ իրարու միացունելով կապար ու ծարիր ([illegible]), — բանկակի՛ն խառնուրդ որուն միջոցաւ այլ եւս կարելի էր ձուլել երկաթէն նուազ կարծր եւ Մամուլին ճնշման բաւա-կան դիմացող տառեր՝ նոյն եղերով : Այս օրէն սկսեալ տպագրութիւնը հնարուած էր : Ահ-ա՛ն, այդ վայրկեանէն իսկ, հազար հազար գրիչներով հազիւ ութեան ձեռք ձգած իր գե-րագոյն յաջողութեան պատմէջին վրայէն՝ բազմապատիկ վաստակաւոր յանկարծ մրցակից մը ու-նէր իր առջին : Տեսարանն ի՜նչ շուտ փոխուած էր : — Գիրք կատարելագործուած ըլլալով, [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Ընչաքանց եւ գրուժան Ֆաուսթի մտամտաւոր կ'ըլլայ վրայէն ննջել տա-մարդը. չէ՞ մի որ առանձինութ էր ինք, այժմ ամենազօր : Եւ անզուր փոխա-տուն կ'ուզէ Կիւ-թէնպէրկը որ հրաժա-րի գիւտին շահագոր-ծումով զայնալից ի-րաւունքէն : Ձեռքէն կը խլէ անոր փուռը (ձուլարանը), մա-մուլն ու տպարանը :


ՏՊԱՐԱՆԸ ԺԵ. ԴԱՐՈՒՆ. — ԿԻԹԵՄՊԵՐԿ՝ ԳՈՐԾԻՆ ԳԼՈՒԽԸ

Ֆաուսթի այս ա-պերախտութեամբ ըշ-ուառութեան մատ-նուած «Տպագրու-թեան Հայր»ը կը հար-կադրուի տարտամ ար-խուր հեռանալ Մայնցէն, անձնդիր եւ արիաբար զօրավարի մը պէս որ ձախողանքներէն իր յաղթական վերադարձին դուռը կը փնտռէ մայր-հայրենիքէն . . . :

Նոր արուեստը եռանդեամբ շահագործելու համար, Ֆաուսթ ընկեր կ'ընէ իրեն՝ իր փե-սան Շէօֆէրը : Երկուքը մէկ կ'սկսին տպագրութեան գործին, առանց խղճահարութեան՝ ձեռա-գիրներու գնո՛վ ծախելով տպած գիրքերնին : Գործաւորները թերահաւատ ու ամբոյծ էին Ֆա-ուսթի՝ Մեծ Վարպետին համբէլով ցոյց տուած ընթացքէն : Յաճողի աշխատաւորներ Ս. Գիրքին

վրայ երդում ընել կու տայ անոնց, որպէս զի դուրս չհանեն արուեստին գաղտնիքը : Ասով ալ չգոհանալով, ծերուկ վաշխառուն ձեռնարկութեան տառագրութիւն կ՚առնէ որ իրենց անունները պիտի կրէր՝ եւ բաժնեկցութեան ընէին տալին անոնցմէն : Եւ իրեն վերջին մէկ չոր աղաւնոյթեան, Ֆուստ իր աշխատանոցը կը հաստատէ մառանի մը մթատեղ խորքին մէջ, ամբողջ օրը գործաւորները հոն պահելով ու դուռը փակելով կղպելով : — Իրենց մէկ՚մէն բաղկանամայն էր այն տունն որ գործը շարունակուած է : — Ժամանակ անկէ վրայ հասաւ ու Ֆուստ արն առաւ տարաւ ա՛յն պահուն երբ ինք իր շահակարողին հասնէ էր : Ի՛նչ արժանաւոր վախճան՝ Կ.արգեւորին քրտնեց պտուղը վաստըկէն չարքաշ աշխատի տնիպա մար յա : — Աւելի՞ն կայ : Փեսան անէրնօրը աղաքանին սեպհականութեան դառնալով՝ այս նոր գիւտին չահագործումը կը շարունակէր, երբ Մայնցս քաղաքը յանկարծ առնուեցաւ եւ աւարի տրուեցաւ : Ճէօֆէր ապաստանեցաւ այդ աղէտէն պատճառաւ, գործաւորներն ալ սփռուեցան ցրուեցան :

Իր զաւակը ժան Ճէօֆէր վերահաստատեց նոյն տպարանը : Այս մարդը միայն գիտցաւ յարգել Տպագրութեան հնարիչին յիշատակը, ընդունելով հանդերձ օրինակին՝ մանաւանդ ժամը այցելող անկեղծ Ֆուստի անդամ աշխատութեանը : 1505 ին տպագրուած է Մարգարիտներէն կայսեր ձօնուած գիրքին յառաջաբան հանդերձ կը կարդանք. «Մայնցի մէջ է որ Տպագրութեան հրաշալի արուեստը հնարուած է 1450 ին հանճարեղն Յովհ. Կիւթէմպէրկէ, ապա բարելաւուած ու տարածուած իր յաջորդներուն՝ Ֆուստի եւ Ճէօֆէրի ջանքերով» :


ԿԻՒԹԷՄՊԷՐԿԻ ԱՐՁԱՆԸ (Ստրասպուրկ)

Երբ այս փոխադարձ արձանագրութիւնը գտնուեցաւ, Մայնցի երկանի գործարանը եւ անհետ անկերիքը դուրս յաջողեր իրարմէ փառքը տպագրութեան գիւտին հնարիչն ըլլալու :

Կիւթէմպէրկ իր աղաչանքին ընկերացած մանէն վերջ 2 տարի միայն ապրեցաւ : Ծանրակշիռ մեկնելուն՝ բաժանեցաւ 10 տարի, թշուառութեան դատապարտուած : Երբեմն այդ օրերուն մնացող արդիւնքը վերջապէս ժողվելով հիմնեց նոր աշխատանոց մը Գօնրատ Հոմէր անուն անձի մը օժանդակութեամբ, մինակը հրատարակելով Summa que vocature catholicon գիրքը 1460 ին : Ո՛չ որ գիտէ այսօր թէ տպագրութեան այդ մեծանուն հնարիչն ի՛նչպէս անցուց այդ երկայն տխուր տարիները : Ինչ որ գիտենք, այն է թէ 1465 ին ատենէն հաց չունէր : Կեանքին վերջին օրերուն, Ադոլֆ որ Նասօ դուքսը բաշխ մը յատկացուց անոր : Շնորհիւ այս վճռանձն այլ յապաղած պաշտպանութեան, Կիւթէմպէրկ կրցաւ նուիրուիլ նորէն կատարելագործութեամբ նախասիրած իր արուեստին, եւ 15 Փետրվար 1468 ին մեռաւ Մայնցի մէջ :

⁂ 1840 ին, Ստրասպուրկ, «Կիւթէմպէրկ-Հրապարակ»ին վրայ կանգնուած է Տաւիթ-Անժէ Հէյ արձանագործի, ներկայացուած՝ Մանուշին ձեռքին հանելու վրայ թե՛րթ մը որ սա արձանագրութիւնը կը կրէ. Եւ եղեւ լոյս : Գարդ, առանձին եւ պատուանդանի կերտուածք մը ունի ան : Աւագանին իր պատուանդանը զարդարուած է այլաբանական 4 հարթաքանդակներով որոնք կը խորհրդանշեն Տպագրութեան Բարերարութիւնները, Եւրոպայի, Ասիոյ, Ափրիկէի եւ Ամերիկայի մէջ : Այս քիչատանդակարանին բազմանալ հանդէպին նշրկայ եղած են աշխարհիս բոլոր երեւելի տպագրիչները : Առիթ մեծարանքի արժանաւոր ցոյց մըն էր՝ ամէն արուեստներէն բանկագինը հնարողին համար, վասն զի Կիւթէմպէրկ առանձինն առած եղաւ այդ ամէն արուեստները յաւերժացնելու :

⁂ 15 քաղաքներ կը մրցին, իրարմէ խլելու համար այս հրաշարուեստ գիւտին՝ իրենց պատերուն մէջ ծնիլը տեսած ըլլալու փառքը . ասկայն բաց ի 4էն (Հառլէմ, Ստրասպուրկ,

Մայնցն և Պամպերկ), իրենց յաւակնութիւնները կը կայանան անանկ փցուն հիմերու վրայ՝ որոնց մասին չարժեր խօսիլ : — Անկէ զատ, Կիւթէմպէրկի վերագրել տպագրութեան գիւտը՝ շատեր կը զլանան : Հօլանտացիք երկար ատեն պնդած են որ Լօռան Գօսթէր անուն մարդ մըն էր՝ որուն Կիւթէմպէրկ փոխ առած էր իր կատարելագործութիւնը : Այս զրոյցն ալ վերջ ի վերջոյ ջուրն ինկաւ : Առ առաւելն Գօսթէրի կարելի է վերագրել փայտափորագրութեամբ տպուած լատիներէն գիրք մը, Speculum salutis անուամբ : Հաւլէմի մէջ՝ շարժուն տառերով տպուած անանուն գիրքը 1484 էն առաջ չէ եղած :

∴ Ձուլածոյ շարժուն տառերով կատարուած առաջին տպագրութիւնը եղած է Մայնց քաղաքը 1453 – 5 թ. Աստուածաշունչն է՝ 640 թերթերով, նաև «թողութեան թուղթ»եր : Նիքօլա Ե. Պապը 1454ին այս գիրքերէն նուիրեց այն հաւատացեալներուն որոնք դրամական նուէրներով օժան կը հանդիսանային Կիպրոսի թագաւորին՝ Տաճկաց դէմ մղած պատերազմին ատեն : Այդ Ածաշունչէն բնաւ չկայ հիմայ : Առաջին գիրքը որ ճշգրտօրէն կը կրէ տեղը, թուականն ու տպագրիչներուն անունը՝ Մայնցի «Սաղմոսարան»ն է, մեծադիր մագաղաթ, 1457ին Ֆուստ-Շէօֆէրի Մամուլէն դուրս եկած : 6 օրինակ միայն մնացած է անկէ. կը պարունակէ 75 թերթիկ և 288 գլուխ՝ փայտէ կաղապարներով կարմիր-կապոյտ զարդանկարուած . ի շարս նոյն անձերուն հրատարակութեանց, կը յիշատակուի 1462 ի Աստուածաշունչ մը :

Բ

## ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Տեղ մնաց որ չարգելուէր այս մոգական գիւտը : Քիչ շատ ամէն ո՛ւր որ այցելեց՝ զօրաւոր ասպնջականութիւն մը վայելեց իսկոյն : Կիւթէմպէրկի զաւակները — ինչպէս կը կոչուէին տպագրիչները — ցրուեցան Եւրոպայի այլ եւ այլ կողմերը, բոլորն ալ նոր առաքեալներ գիտութեան և յառաջդիմութեան : Գերմանիա, Զուիցերիա, Ֆրանսա և Իտալիա անոնց յանկարծ բացուիլը բաւական կարեւոր տպագրատուներու : Տպագրական արուեստը լաւ ընդունելութիւն գտաւ նոյն ատենի վեհապետներէն շատին կողմէ որոնք մեծ մարդասիրութիւն մը կատարած եղան, գիւրացնելով ծաղկումը գիւտի մը որ կոչուած էր ժողովուրդներու աչքերը բանալու ճշմարտութեան ու բանականութեան լոյսերուն : Լուի ԺԲ. զայն նկատեց «աւելի աստուածային քան մարդկային» բան մը, մինչ Ֆռանսուա Ա. բոլոր տպագրիչ-գրավաճառները զերծ կացուց զինուորական ծառայութենէ : — Սակայն և այնպէս նորածին տպագրութեան համար քաջալերական եղող այս բաւականը չունեցաւ երկար տեւողութիւն : 1521ին Գրաքննութիւնը — Մտածման լոյս-բերող կարապետ այդ անզուգ պարգեւն — մկրատ՝ առաւ գիրքերու համար . այնուհետեւ բաւական ատեն ո՛չ մէկ գիրք հրատարակուեցաւ առանց արտօնութեան :

∴ Էն առաջ, Մայնցէն տպագրութիւնը փոխադրուեցաւ Պամպերկ որ (1461ին) գերմ. լեզուով «Առակաց գիրք» մը լոյս տեսաւ : — Իւլրիխ Զէլ 1467ին տպագրութիւնը Գօլօնիա տարաւ որ տպեց Ս. Օգոստինոսի 2 գիրքերը : — Միեւնոյն տարին Ժան Մէնթէլ սկսաւ ի գործ դնել տպագր. արուեստը Ստրասպուրկի մէջ, 1473 — 6 լոյս ընծայելով Վէնսան տը Պօվէի 10 հատոր «Սպէքիւլօմ»ը : — 1465էն սկսեալ 3 գերմ. գործաւորներ Ֆուստ-Շէօֆէրի աշխատանոցը լքելով Իտալիա անցան և հաստատեցան Սուպիաքօ վանքը (Հռոմի մօտ) . հոն էր որ 1465ին տպեցին «Լաքթանսի երկեր»ը : Երեքէն Իւլրիխ Հան Հռոմ կանչուեցաւ Թօռքուէմատա կարտինալին կողմէ և 1467ին հրատարակեց անոր «Խորհրդածութիւնք»ը, — մինչ Կիւթէմպէրկ ողջ էր դեռ : Միւս ընկերները եկան միացան իրեն և նոր ատեն մը հիմնեցին . Քիչ ատենէն տպարանները շատցան հոն . 1475ին 20 հատ կային և 7 տարուան ընթացքին 12000 հատոր լոյս ընծայեցին : — Տպագրութիւնը մուտ գործեց Վենետիկ 1469ին՝ Նիքօլա Ժանսօն Ֆրանսացիին կողմէ, նոյն քաղաքին մէջ Հայոց առաջին տպագրութենէն 43 տարի առաջ : Նիքօլայի տպարանը փոխանցուած է յետոյ Անտրէա Թօռռէզանիի՝ ապագայ պարոնատէր Ալտէ

Մանուչիի որ վճռական յառաջդիմութիւններ կը մտցունէ իր արհեստին մէջ (1494—1515) աւելի յստակ տառերու և յարմարագոյն «ֆորմա»ի գործածութեամբ։ Իր հիմնած տունը կը շարունակեն Բօլ և իր թոռը Ալտէ կրտսեր՝ մինչև ԺԶ. դարու վերջ։ Իսկ ի Ֆիորէնցա՝ Ճունթաները յաւէ մրցում մղեցին Ալտէներու գործին դէմ, գէշ նմանողութեամբ մը։— 1469ին Յոհաննու ու Վենետիկի հետ ունեցաւ տպագրութիւն. Ժան տը լա Բիեռ. և Կիյոմ Ֆիշէ Մայանէն բերել տուին Իւլրիխ Կէռինկը, Միքէլ Ֆրիպուրկէրն ու Մարթէն Գռանցը. զանոնք Սորպոնի հաստատելով՝ տպագրեցին նախ «Կասպարինոսի նամակները», Կրատէս փիլիսոփային «Թուղթ»երը, Վալլայի «Վայելչութիւնք լատին լեզուի»ն եւն.։ 1473ին 3 տպագրիչք Սորպոնէն ելան և հաստատուեցան Ռէն-Ժագ փողոցը։ Շատով բազմաթիւ մրցակիցներ ունեցան ի Բարիզ, և Լուի ԺԱ.էն ա՛յնքան քաջալերուող տպագրութիւնն արագօրէն տարածուեցաւ ամբողջ Ֆրանսա։

1471ին տպագրութիւն Մէց մտաւ։— 1473ին Լիոն և Պուտուէշը։— 1477 Անժէռ։— 1479 Բուաթիէ և Օքսֆորտ։— 1480 Գայէն։— 1483 Թռուա։— 1484 Ռէն։— 1486 Ապբվիլ։— 1487 Պըզանսօն։— 1488 Թուլուզ։— 1490 Օռլէան։— 1491 Տիժոն և Անկուլեմ։— 1493 Նանթ։— 1495 Լիմօժ։— 1496 Թուռ.։— 1497 Ավինեօն։— 1500 Բէռփինեան։ Նոյն տարիներուն էր որ Բարիզի մէջ՝ Հանրի Էթիէն իր հրատարակութիւններով մեծ համբաւ տարածեց մէկ դարու չափ, և երբ 1520ին մեռաւ՝ այրին ամուսնացաւ նշանաւոր տպագրիչ Սիմոն տը Գոլինի հետ։— Զուիցերիոյ մէջ Ժան Ֆրօպէն (1460—1527) տիեզերական համբաւ մը կ'ստանայ «Երասմ»ի հրատարակիչը դառնալով։— Պելճիքա, Մանսիոնի և Թ. Մառթէնի (1450—1534) գործը կը շարունակէ Քրիս. Բլանթէն (1514—1589) որ առաջնակարգ տպագրիչ մը համրուեցաւ։— Յիշենք այս առթիւ քանի մը նշանաւոր համբաւաւոր տպագրիչներ ալ։ Բարիզ՝ Անթուան Վիթրէ (1595—1614)։ Սէպաստիէն Քռամուազի (1585—1669) և Լուի Պիլէն՝ անդ։ Լէյտի մէջ՝ Էլզէվիրները (1592—1617)։— Աւելի նորերէն, կան Ժօզէֆ-Ժէռառ-Պառպու (1746), Ճօն Պասքըվիլ (անգլ. 1706—1775), Ժան Պաթիսթ Պոտոնի (իտալ.) 1740—1813։ ԺԸ. դարու վերջերն ու ԺԹ. դարու սկիզբներն էր որ ՏԻՏՕները (Ֆրանսացի) աշխարհահռչակ դարձան՝ տպագրութեան մէջ ներմուծած իրենց բարեկարգութիւններով։

Ի վերջ կոյս ԺԵ. դարու, տպագրութիւնն արտակարգ զարգացում մը տեսաւ. բոլոր մեծ քաղաքներն ունեցան իրենց գործարանները։ Ուիլեմ Քէքսթըն Անգլիա մտցուց զայն և իր մամուլը հաստատեց Ուէսթմինսթրի աբբայութեան 1474ին։— Միւնոյն տարին էր որ Պալի, Պոլոնիի և Թուռինոյի մէջ սկսաւ ան։— Յաջորդ տարին ի Ավլիյ։— 1478 Ժընեւ։— 1480 Լայբցիկ։— 1482 Վիէննա։— 1483 Լէյտ։— 1489 Լիզպոն։— 1491 Քռաքովիա։— 1493 Քոփենհակ։— 1499 Մոնսերրա։— 1507 Էտինպուրկ և Ֆռանքֆորթ-սիւռ-լը-Մայն։— 1516 Քուանգուր։— 1523 Ամստերտամ։— 1524 Տրէսբ։— 1528 Լովէն։— 1539 Պեռն։— 1543 Պոն։— 1547 Համպուր։— 1563 Կօա։— 1564 Մոսքուա։— 1566 Մէքսիքօ։— 1578 Պէռլին և Վարշավա։— 1590 Մաքաօ։— 1603 Եդքին։— 1638 Քէմպրիճ (Հիւս. Ամեր.)։— 1647 Մալթա։— 1656 Քրիստիանիա (Նորվեգիա)։— 1671 Քանթոն։— 1686 Ֆիլատէլֆիա։— 1693 Նիւ Եորք։— 1711 Բետերսպուրկ և Թիֆլիզ։ Արաբերէն տառերով տպագրութիւնը Մայնցի մէջ եղած է 1486ին (բառական մը միայն)։ Իսկ 1514ին Կրէկորիօ Ճիորճի Իտալացին Ֆանոյի մէջ հրատարակեց առաջին Ա. գիրքը, Հայկական Տպագրութենէն 2 տարի վերջ։ [illegible] Այս հրատարակը զոր Ալպէ Ա. 1511ին հաստատեց՝ համապատմօրէն գործածուեցաւ։ Ասոյց է թէ Հրեաները, Հայերն ու Յոյները իրենց լեզուներով տպագրութիւններ կրցան ընել սմ. նոյն վրայ՝ ԺԶ. դարուն ընթացքին, որուն ալիափ անդրադառնանք յետոյ։— 1720ին էր միայն որ պասմաճի (տպագրիչ) մահմետականներէն Իպրահիմ անուն հաւատափոխ Հունգարացին Սուլթանէն արտօնութիւն առաւ թրք. և արաբ. լեզուներով գիրքեր տպելու՝ «Քուրան»էն ի զատ։ 1729ին նախ երկհատոր բառարան մը հրատարակեց արաբերէն թրքերէն։— ԺԹ. դարու Ա. տարիներուն էր որ սկսաւ արեւել. լեզուներով տպագրութիւններ ըլլալ ա՛յն տառերուն միջոցաւ զորս Հռոմի մէջ փորագրել տուած էր երկար տարին Թուրքիա ապրած Պրէվի ֆրանս. դեսպանը։ Այդ գեղեցիկ տառերը վերջէն գրաւուեցան խաղ. արքունի տպարանէն։ Նախ եբրայեցերէն տպուեցաւ ի Ս. Սինօ, ապա Բարիզ 1508 և Գերմանիա 1512։ Չինական տառեր Ա. անգամ Եւրոպա փորագրուեցան Բ. Քիւխլէռի ձեռքով 1663ին։ Արտասովորական (runique) այբուբենով տպուեցաւ շուէտական քերական մը

1611ին Տօքիօյի : Տպագրութիւնը հնագոյն ձեռք մտաւ ամբողջ աշխարհի մէջ : 1756ին Ճամայիքա մտաւ : — 1767 Մարթինիք : — 1772 Մադրաս : — 1784 Բարպատոս : 1787 Քուպա : — 1789 Պուէնօս-Այրէս : — 1792 Պոմպէ : — 1795 Սիդնէյ : — 1803 Նոր Օռլէան : 1807 Մօնթէվիտէօ : — 1813 Ռիօ Ժանէյրօ : — 1816 Հաւայի : — 1817 Քորֆու : — 1818 Թաիթի : — 1821 Պուռպօն կղզին : — 1822 Քօշինշին : — 1823 Սինկափուր : — 1824 Բատաւիա : — 1825 Պօլիվար և Սանթիակօ : — 1830 Աթէնք : Եւ այլուրք հանդերձ :

# ՏՊԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ահաւասիկ հիմայ արդի տպարանէ մը ներս, անոնցմէ համար թէ ի՛նչ կայ ու կազմածք կը պարունակէ ան, և թէ ի՛նչ գործ ու գործածութիւն կան հոն :

1. Դարակ կամ Տառատուփ և կամ Փէթակ (քասա = casse), 2 մասի բաժնուած տախտակ խորշխորշաւոր դարակ, գլխագրական գրաստարաններուն կամարիչին պէս առ. ի շեղ զետեղուած : Վերը ծակերուն կ՚ըսեն Բէչէքի. Վերի մասը կը գտնեն գլխագիր տառեր, վարի մասը՝ բոլոր-գիր երը : 2. Սրբագրութեան տուփ (boîte à corrections) : 3. Գրաքանակ (այս բառը պօլսոյ ժամանակակից գրաշարներէ գործածուած է) կամ Գրալար (քոմբոս = composteur) : 4-5. Տառ (գլխագիր և բոլոր-գիր) : 6. Բացակ կամ Զատիչ (բոսլուք = espace), կապարեայ անջրպետ տառերու : 7. Փոքր քառակ և 8. Քառակ (քատրաթ = cadratin և cadrat), տպագրութեան մէջ՝ պարապ տեղեր լեցնելու ծառայող ձուլածոյ կապարի կտոր : 9. Գրաշար, (հանկուկ մը հին բառով Շարադրող, իսկ Շարադրութիւն՝ արուեստ գրաշարութեան) մեքենայիկ, composant : 10. Շրջանակ՝ պտուտակով սեղմուելիք (շասի = châssis à serrage à vis) : 11. Շրջանակ տպագրական : 12. Հարթոցաւ (ֆինշէլէ, rabot) : 13. Պնակէր կամ Տախտակէր (կալէ = galée), գրծմկալին մէջ լեցուածքը այս տախտակին վրայ է որ կը փոխադրէ գրաշարը : 14. Շեղահատ հարթոցաւ (rabot à biseauter), «ֆինշէլէ»ին արդէն մէկ տեսակը : 15. Դրոշակ (թօխմախ, taquoir), շարուած էջերուն տառերը շտկելու ծառայող գրանիր գործի : 16. Հատոց-հարթոց (coupoir avec rabot) : 17. Տպաչափական գիծ (typomètre) : 18. Չափական (calibre), ճերմին արտանապիծ չափելու գործի : 19. Մելան փռելու սեղան (table à encrer) փոքրի մամուլի համար : 20. Կապարահատ դանակ (couteau à plomb) : 21. Հաստատակալի համար Դարձակ (moule à bascule) : 22. Ձուլման հնոց (fourneau-moule à clicher) : 23. Իջակալ (ֆօռմա = forme), երկաթէ շրջանակ որ շարուած էջերը զետեղուած են : 24. և 27. Սեպ (décognoir), մեքենային մէջ իջակալը սեղմելու յատուկ անկիւնաւոր փայտ կամ երկաթ : 25. Մելանի թիակ (spatule à encre) : 26. Կաղմասղոց (scie à coulisse) : 28. Էջակալ (chasse-page), էջերը հրող գործի : 29. Ճանկալ (chasse-griffe) : 30. Կտրատման դանակ (couteau à découpage) : 31. Զարդագիծ քերիչ (gratte-filet) : 32. Մուրճ : 33. Զոյգ ուղղանկիւն պնակէր (galée à double équerre) : 34-35. Ձուլածոյ սեպ (կամանիփիսա) էջերը սեղմող, (cales en fonte) : 36. Բանալի (անախթար, clef) : 37. Տառաքաշ (չիմփի, ճիմպիզ, pince) : 38. Շամփուր, երկաթէ ձող-բանալի (broche) : 39. Մկրատ : 40-42. Մելանաքսոց գլան (մերնէքթիկ թիլինտրօս, rouleau à bras) որ տախտակ կը պտտցուի : 43. Ոտնակով (ոտքով բանող) մամուլ (presse à pédale) : 44. Թուղթին մէկ կողմը տպող մամուլ (presse en blanc) : 45. Թուղթին երկու կողմը տպող մամուլ (presse à retiration) : 46. Շրջագործ մամուլ (presse rotative) որ ամենավերջին կատարելութիւնն է :

∴ Տպագրութեան առաջին մամուլը (Կիւթէմպէրկի օրով) կը բանէր աղջամուղջեալ արտաքոյ մը միջոցաւ, հնձանի մը պտուտակին պէս, և բաւական ժամանակի կը կարօտէր տպելին համար : Գուդէնպէրկ հնարած հօլանտական մամուլը յաջորդեց ասոր : Յետոյ եկաւ

«մեկ անգամեն» կոչուածը՝ մարմարով և թափծու պլաթինով որ երկար ատեն գործածուեցաւ : Ստանհոփի մեքենան 1818 ին մտաւ Ֆրանսա, թէև 13 տարիէ ի վեր Անգլիոյ մէջ գոյութիւն



ՏՊԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

ունէր ան : Նախկին մեքենաներուն բոլոր մասերուն յաջողեցին ձուլածոները : Քէօնիկի «ամերիկեան մամուլ»ով կարելի եղաւ տպել մեծադիր թերթեր : Ասոր ալ յաջորդեց 1817 ին Կոուպըր



Գրադարան

որուն առաձիգ գլաններով խցան (**թամբօն**) ները կը մեղմանային յատուկ ընդունարանի մը մէջ : Այս գիւտը մեծ յեղաշրջում մը յառաջ բերաւ տպագրական արուեստին մէջ և տպող մամուլը տեղը բռնեց նախկին ձեռքով մամուլներու պտուտակին : 1814 ին Քէօնիկ և Պաուէր հնարեցին մեքենական այն մամուլը որ 1 ժամուան մէջ 1000 թերթ կը տպէր : Այնուհետեւ նոր կատարելագործութիւններ տեղի ունեցան և յաջորդաբար ունեցանք մէկ կողմ և երկու կողմ տպող մամուլներ, ևն. ևն. : Վերջապէս Մառինօնին էր որ յղացաւ «շրջադարձիկ մամուլ»ը՝ մեծածաւալ օրաթերթերու արագատիպ հրատարակութեան համար :

⁂ Թէ ինչո՛ւ հայերէն գիրերու փերակը (քասա) բաժնուած է այսպէս անկանոն և տարօրինակ վիճակով մը. — Որպէս զի բնագիր մը շուտով ու դիւրին շարուի : Հայ «բոլոր-գիր»երը

**Լայնք 85 սանթիմէթր** — **Երկայնք 58 սանթիմէթր**

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | » | ) | ] | - | * | — | = | |
| Թ | Ժ | Ի | Լ | Խ | Ծ | Կ | Հ | 1/1 | 2/2 | 3/3 | 4/4 | 5/5 | 6/6 | 7/7 | 8/8 |
| Ձ | Ղ | Ճ | Մ | Յ | Ն | Շ | Ո | | | | | | | 9/9 | 0/0 |
| Չ | Պ | Ջ | Ռ | Ս | Վ | Տ | Ր | | | | | | | 9 | 0 |
| Ց | Ւ | Փ | Ք | Օ | Ֆ | | [illegible] | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| ց | ֆ | շ | ր | ղ | զ | | յ | [illegible] | օ | | ՛ | . | , | ° | ´ |
| ժ | պ | դ | լ | գ | ե | | կ | մ | ի | | ս | ծ | ռ | [illegible] | [illegible] |
| ճ | | | | | | | | | | | | խ | և | 1 1/2 | 1 |
| ջ | է | | | ն | | տ | | ր | | ն | ր | ր | ք | 2 | 4 |
| փ | | | | | | | | | | | | | | | |
| ձ | վ | ո | | ւ | | էքսա 5 բունթօ | | 3 | ա | | | , | - | զնզն. խասրա-ներ | |
| չ | | | | | | | | | | | | . | : | | |

ՀԱՅ ԳՐԱՇԱՐԻՆ "ՔԱՑԱ" Ն

կը բաժնուին 3 կարգի : Առաջինները որոնք ունին 4-6 բջիջ՝ շատ գործածելիներն են, ինչպէս **ա, ե, ի, ն, ր, տ, ո, ւ** : [**Է** գիրը թէեւ առաջին կարգին է, բայց հայերէնի մէջ իր կարեւորութեանը համար չէ՛ որ 6 բջիջ գրաւած է, այլ հայատառ տաճկերէնի համար] : Գալով Բ. կարգիններուն, անոնց ալ յատկացուած է 2 բջիջ, առաջիններէն նուազ գործածուելնուն համար, որոնք են **պ, դ, լ, գ, զ, կ, մ, ս, օ, և, ը, թ, ք, վ** : Իսկ Գ. կարգինները ամէնքէն քիչ գործածելի ըլլալնուն՝ զետեղուած են միւսներուն եզրը գտնուող փոքր բջիջներուն մէջ:

⁂ **Գրաչափ**ը (բունթօ=point) տառի մը մեծութիւնը որոշողն է. բաղդատմամբ միլիմէթրին՝ շատ ու շատ բարակ է: 12 «բունթօ»ն կը կազմէ 1 «քառորակէն» որ հաւասար է 4 1/2 միլիմէթրի. իսկ 20 «քառորակէն» հաւասար է 9 սանթիմէթրի : Տառերուն տեսակներն իսկ (բարձրութիւնն ալ շատ անգամ) կը տարբերին իրարմէ. հայերէն տառերը կ'սկսին 6 բունթօէն և կը յանգին 60ի, իսկ բարձրութիւնին միշտ նոյն չափն ունի, այսինքն ֆրնս. **տիտօ** կոչուածը (62 1/2 բնք.), բաց ի ձեռնագմանց համար բատ կամս յօրինուած փայտէ խոշոր տառերէ :



ՆՄՈՅՇ 16 ԵՐԵՍՆՈՑ ՊՐԱԿՈՎ ԳԻՐՔԻ ՄԸ ԷՋԵՐՈՒՆ ԿԱՊՈՒԱԾՔԷՆ

⁂ Գալով գիրքի մը էջերուն, իւրաքանչիւր «ֆորմա» կ'ունենայ 4-32 էջեր, այսինքն 4, 8, 16, 32, որոնցմէ ընթացիկներն են 8 և 16 էջնոցները: 24 էջնոց «ֆորմա» հազուագիւտ է : Առդեւ դրուած պատկերով գաղափար կարելի է կազմել թէ ի՛նչ դիրքերով կը կապուին էջերը՝ մամուլին յանձնուած ատեն :

⁂ Աւելցունենք թէ ձուլուած տառերուն նիւթը կը բաղկանայ նախ 80 մաս կապարէ և 20 մաս ծարիրէ (antimoine) : Հիմայ հայ տառերուն ձուլման համար կը գործածուի 60 մաս կապար և

40 ծարիր, իսկ բրք. տառերու համար 78 կապար և 30 ծարիր: Այս խառնուրդով է որ ձեռք կը բերուի փափաքուած կարծրութիւնը՝ մամուլին ճնշման պատշաճօրէն դիմացող: Այդ երկու նիւթերը սակայն թունաւոր ըլլալով, հեգ գրաշարը դատապարտուած է ամէն օր տառից փոշին շնչելու, որով իր արեան շրջանը կը խանգարի՝ ծնունդ տալով տեսակ տեսակ հիւանդութեանց:
— Ճարտիկ գրաշար մը օրուան մէջ 10 հազար գիր կրնայ ժողվել բջիջներուն մէջէն և իր գիրընկալին մէջ շարել: Հաշիւ ըրած են որ տարուան 300 օրերուն՝ գրաշարի մը աջ ձեռքը կ'ընթանայ միջին հաշուով 1300 մղոն հեռաւորութիւն մը:

Երբ գիրընկալը լեցուի, տողերը կը սեղմեն և գիրընկալին մէջէն հանելով կը զետեղեն «կալէ»ին մէջ: — Տպագրութիւնն այն գործողութիւնն է որով թուղթին վրայ կը փոխանցուի գրոշմը տառերուն՝ իրենց շարուած ձևով: Հեղինակը կամ փորձերու սրբագրիչը երբ տպուելուն հրամանը տայ **(պօն ա թիրէ)**, իջադրութեան **(էմբօզիսիօն)** գործողութեան կը ձեռնարկուի: Թուղթերը պատրաստելով «ֆօրմա»ն մամուլին կը յանձնեն՝ մելանին և ճնշման չափը ճշդելէ վերջ: Այս գործողութիւնը որ օրաթերթերուն համար դժուարութիւն չպահանջեր՝ կը կարօտի սակայն մեծ խնամքի, երբ տպուելիքը մաքուր գործ մըն է և պատկերներ ալ **(քլիշէ)** կը բովանդակէ: Թուղթին մէկ կողմի երեսները կոխուելէ յետոյ՝ խումբ խումբ մէկզի կը դրուին տպուածները՝ խղոտ թանաքին թացութիւնը բոլորովին քաշել տալու համար, յետոյ կը սկսին միւս երեսներուն տպագրութեան՝ որուն տեղական բարբառով կ'ըսեն «ռէվօլթօ»:



ԲԱԶԿԱՄԱՄՈՒԼ (PRESSE A BRAS)

Ինչպէս ըսինք վերև՝ Կիւթէնպէրկի օրէն սկսեալ մինչև մեր դարը՝ տիպը **(թիռաժ)** շարունակուած է բազկամամուլներով որոնք սկսած են տեղի տալ այլ և՝ հետզհետէ կատարելագործուած մեքենաներու առջև որոնց պատկերները ցուցցինք քիչ մը անդին՝ 44, 45 և 46 թիւերով:

*
* *

Բարիզ հրատարակուած «Մասեաց Աղաւնի» ամսաթերթին 1856 Հոկտեմբերի թիւին մէջ հրատարակուած կը տեսնենք լիակատար համայնապատկերը տպարանի մը կազմածքին ու աշխատութեանց՝ գունաւոր ընտիր տպագրութեամբ, — ա՛յնքան պատուաբեր՝ իր հայ տպագրիչին, Ճանիկ Արամեանի համար:

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.— ՀԱՅԵՐԷՆԸ

## ՄԵՐ "Ա. Բ. Գ.„Ը

ՈՎ, որ ինծի գիր մը սորվեցուց՝ իրաւցունէ իր ծառան բրաւ զիս» կ'ըսէ արաբական առածը: Հապա ո՞րչափ աւելի երախտագիտութիւն պարտի ունենալ իր մէջ ամէն ազգ անո՛նց հանդէպ որոնք լեզուի մը Այբուբենքը հնարած են: «Գիրերը — կը գրէ Մեկ. Եալվ. Մուրատեանց — հաստատուն անօթն են մարդուս հոգիին ու լեզուին ձախորդութիւնները երկար դարեր կրելու և յաւերժացընելու»: Տեսէք Դուրեան Սրբազանն ալ ի՛նչ կոկիկ կը բանաձեւէ այս մասին. «Մարդուս խորհուրդները որոնք կենդանի բարբառով կը հաղորդուին ուրիշի, յաջորդ սերունդներու՛ ալ աւանդելու և այսպէս անցանելի գաղափարաց կայուն աղբիւր հանար՝ անխուսափելի պայման մըն է **գիրը** որ ժողովուրդի մը մտանձնագրութեան և անոր պատմութեան կեանքն ու սնունդն է»:

Հայ նշանագիրներու գիւտը չեղած, Ասիացիներ Եգիպտացւոց պէս «բեւեռագիր» կը գործածէին թիւով 22, մինչեւ Ե. դար: Մեր մէջ, դիւանագիտութեանց համար գործածուողները «Պահլաւ գիր»երն էին, իսկ եկեղեցական գրութեանց համար «յոյն եւ ասորի տառերը»:

Հայը քաղաքական կազմակերպութիւն ու գիրք ունեցող ազգ, տիրացած միանգամայն կանոնաւոր լեզուի մը, 15 դար առաջ պէտքը կ'զգար նաեւ տիրանալու իր ուրոյն գիրին՝ որո՛վ միայն կարելի պիտի ըլլար ունենալ ազգային հեղինակութիւն, ճոխացունելով իր լեզուն, ծաղկեցունելով իր գրականութիւնն ու մտնելով յառաջդիմութեան իրական ճամբուն մէջ:

Այս սուրբ նպատակին էր որ յառաջ կը մղէր երանելին Մեսրոպ՝ իր հոգիին բոլոր բափոյն ու իր ձգտումներուն բովանդակ ուժգնութեամբը: — Հայոց մէջ — բառ պատմագրաց — մինչեւ այն ատեն գործածուող յունարէն, ասորերէն կամ պարսկերէն գիրերը չէին կրնար գոհացունել ազգին յառաջդիմական ոգին և անոր անկախ ընոյթը՝ կազմելու համար զուտ ազգային գրականութիւն մը: Առ այդ, Մեսրոպ՝ Սահակ Հայրապետի հետ համախորհուրդ՝ ջանաց ի գործ ի գոյ ածել հայ տառերը. Թագաւոր ու իշխաններ ի մի խմբած, ժողովներ գումարել տուաւ՝ հնարք մը որոնելու, հայկական գիրք ստեղծելու առաջադրութեամբ, յանձն առնելով երկիրէ երկիր անձամբ թափառելու, գիտուն գիտուն գտնելու և մտածագործն մտածողութեան, ի խնդիր հայ այբուբենքին: Գնաց Միջագետք՝ Դանիէլ Ասորիին, անցաւ Եդեսիա՝ Պղատոնին, վազեց Սամոսատ՝ Հռոփանոսին, և այդ խնդրոյն անձերուն խորհուրդներով, մանաւանդ ի՛ր իսկ համաճարեղ հնարամտութեամբ յաջողեցաւ հուսկ ուրեմն կերպարանել հայ այբուբենքը որ — բանասէրներու պրպտումներուն վերջին եզրակացութեանց համեմատ — աւելի հաւանական է՝ մեծ մասամբ Յունարէնէ առնուած ըլլալ յարմարցնելով, քան թէ սերած՝ Սեմականէն, ինչպէս կը կարծուէր: Բայց որքա՛ն արժանիք կրկին Մեսրոպի կողմէ՝ կարգ մը գիրերու համար ալ, զորս պարսկերէնէն և ասորերէնէն ձեւացուց և կամ ինքնակերտեց զանոնք: Ոմանք կ'ըսեն թէ անկէ միայն ձայնաւորները զատ, ուրիշներ՝ թէ անոր ջանքը եղած է Այբուբենքին կրկնակ



ԲԱՂԴԱՏԱՑՈՅՑ ՏԱԽՏԱԿ
ՅՈՅՆ ԵՒ ՀԱՅ ԱՅԲՈՒԲԵՆՔԻ
Յոյն Այփաբեթին ձեւափոխութենէն կերպաւորուած մեսրոպեան նախնի տառեր:

գիրերուն համար (որոնք օտար լեզուի մէջ չկան ու մեր լեզուին հնչման յատկութիւնը կը կազմեն), ոմանք ալ 14 տառ. միայն գտած է կ'ըսեն: Ի՛նչ որ ալ ըլլայ, ստոյգ է թէ Սահակ-Մեսրոպի ամփոփ աշխատութեան արդիւնքն է մեր գիրերուն գիւտը: Աւանդութիւնն այս մասին խօսքը կ'ընէ տեսիլքի մը զոր ունեցեր է Մեսրոպ՝ իր ստեղծագործ երազանքի յափշտակութեան մէջ: Այս տեսիլքը քերթողաբար պատկերացուցած է Մալկարացին Արտաշէս Յարութիւնեան.

*Եւ աղօթքի պահուն մը մէջ վերացեալ,*
*Հոգւոյն պայծառ անհունութեան աչերն՝ բաց,*
*Տեսաւ շարանն հրաքանդակ տառերուն...:*

Շնորհիւ «գիր»ին գիւտին, Հայուն վերածնունդը սկսած էր այլ եւս: Թարգմանիչներ թարգմանիչներու յաջորդեցին, եւ դարը որուն մէջ մեր մատենագրութիւնն իր զմայլելի շրջանը բոլորեց՝ իրաւամբ կոչուեցաւ «Ոսկեդար»:



ԳԵՐԵԶՄԱՆ Ս. ՄԵՍՐՈՊԻ, ՕՇԱԿԱՆԻ ՄԵՋ

Ս. Սահակ 439ին կնքած է իր արդիւնաւէտ կեանքը, թաղուելով հին Աշտիշատի Տէրրք կոչուած գիւղին մէջ: Իր գերեզմանը ցարդ լքուած երեւոյթ մը ունի, ափսո՜ս: Արժան չէ որ ազգային լուսաւորութեան գործին ա՛յնքան սատարող այս Հայրապետն ունենայ իր հոյակապ դամբարանը, Հայուն խորին երախտագիտութեան իբր բարձրացեալ ապացոյց: — Անոր մահէն կէս տարի վերջ վախճանած է Ս. Մեսրոպ և թաղուած է Օշական: Համբո՛յր իրենց շիրիմներուն:

## ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ ՀԱՅԵՐԷՆ ԳԻՐԵՐՈՒ

Հնարիչին անունով **Մեսրոպեան** կոչուած են մեր նշանագիրները որոնք հին **երկաթագիր** բառածն էին, ամէնքն ալ մէկ չափի, մէկ մեծութեան վրայ: Հետզհետէ գրչագիրներու ճարտարութեամբ, այդ երկաթագիրը փոխուեցաւ: Դարեր վերջն էր որ հնարուեցաւ **Նոտր** գիրը: **Նոտր** առաջացած է **Նոտարագի** բառէն, այսինքն «նօտար»ներու գործածածը:

Եւրոպացիք սովորաբար իրենց տառերը կը սիրեն յորջորջել՝ զանոնք հնարողին և կամ ձուլողին անունով: Բաց աստի, այդ տառերը ճանչցուած են զանազան ազգութեանց անուններով. այսպէս՝ **ալման**, **ֆլաման**, **ռոմէն**, **իթալիք**, **անկլէզ**, **նորման**, **էժիբսիէն**, **կոթիկ** եւայլն եւայլն, (մեծամասնութեամբ՝ տպագրիչներու ծանօթ բառեր):

1 Տոկուն, Նրբաճաշակ և արուեստին ամենանուրբ պահ

2 Գրիգոր Ռոմֆայէլեան ձուլարանին մէջ

3 Տոկուն, նրբաճաշակ եւ արուեստի

4 Գրիգոր Ռոմֆայէլեան

5 Ռոմֆայէլեան ձուլարան

6 Տոկուն, Նրբաճ

7 Տէր Աստուած զօրութեանց, ո՞ նման է քեզ. Հզօր ես

8 Հզօր ես դու Տէր՝ եւ ճշմարտութիւն քո

9 Հզօր ես դու Տէր՝ եւ ճշմարտութիւն քո

10 Հզօր ես դու Տէր՝ եւ ճշմարտու-

11 Աստուած զօրութեանց, ո՞ նման է քեզ

12 Եթէ գոյ ի քեզ իմաստութիւն,

13 Նրբաճաշակ և արուեստին ամենանուրբ

14 Սիրալիր սիրտն անսպառ է։ Անման

15 Ռոմֆայէլեան ձուլարանին մէջ

16 Անմահութեան ակնկալու հոգին

17 Ձուլարաններու մէջ Մխիթարեան

18 Ահա լուսնին նորարծարծ

19 Բնութիւն նորոգեալ իբրև

20 Անմահութեան ակնկալու հոգին

21 Մարդս փոքրիկ արարած մ'է,

22 Թող գովէ փառքդ . ըղձակալ ազգին

23 ամա ինծ նա, Կանգնեցրէք, խնդրեմ

24 Տուն վեհազին մեծի Պարոն

25 Եւ ամենք ինոցանէ կամեցան ունել

26 Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա յիսուս,

27 Հզօր ես դու Տէր եւ ճշմարտութիւն

28 Քանդակագործութիւն, նկարչութիւն

29 Մեր հեռաւոր եղբայրներ

30 Հայ եկեղեցիները դադարել էին ար

31 Կարծես կեանքը կեցեր է մէջս

32 աւետեցին Մարիամին

33 Կախաղանը կը բարձրանայ իր

34 Ահա գարնանաբեր լուսն

35 Եւ ինչպէս ցոյց են

36 Շէքսպիրը «Համլետի» մէջ „երազող

37 Սակայն մենք չէինք

Դեռ չըչորցած բուլվարի 38

Տոկուն, Նրբաճաշակ և արու 39

Տպարանը տպագրա 40

Մարդ օձ, որը իր տեսա[ 41

Եթէ գոյ 42

Հարմ 43

Ռոմֆայէլեան ձուլարանին մէջ միայն՝ տառեր կը ձուլուին 44

Տոկուն, Նրբաճաշակ եւ արուեստին 45

Տոկուն, Նրբաճաշակ եւ արուեստին ամեն 46

Ռոմֆայէլեան ձուլարանին մէջ 47

զոժգոճութիւն 48

Սիրալիր սիրտն անսպառ է: 49

Մարդս փոքրիկ արարած մ'է, բայց 50

Եթէ գոյ ի քեզ իմաստութիւն, 51

Եթէ գոյ ի քեզ իմաստութիւն տուր 52

սաղմոսանուագն թէ Աղբերն 53

"Հանդէս Ամսօրեայի կեանքը„ 54

Ամօթի զգացումը, բարկ 55

Տէր Աստուած զօրութեանց, ո՞ նման է քեզ. Հզօր 56

ճշմարտութիւն քո շուրջ 57

սաղմոսանուագն թէ Աղբերն 58

սաղմոսանուագն թէ Աղբերն 59

Եթէ գոյ ի քեզ իմաստութիւն 60

Եթէ գոյ ի քեզ իմաստութիւն 61

Տոկուն, Նրբաճաշակ եւ արուեստին 62

Տոկուն, Նրբաճաշակ եւ 63

Տոկուն, Նրբաճաշակ եւ արուես 64

Տոկուն եւ Նրբաճաշ 65

Ո՛ ձմեռ գիշեր երբ կը 66

Տոկուն, Նրբաճաշակ եւ արուեստին 67

Ահա գարնանաբեր 68

Ահա գարնանաբեր 69

Եթէ գոյ ի քեզ իմաստութիւն, 70

71 Ռափայէլեան ձուլարանին մէջ միայն՝ տառեր կը
72 Տոկուն, Գեղաճաշակ եւ արուեստ
73 Ձուլարանին մէջ միայն տառեր կը
74 Տոկուն, Գեղաճաշակ եւ
75 Պապը Այի Կ. Պոլիս
76 Իվերջնում աւուր մեծի տօնին կայր Յիսուս
77 Իվերջնում աւուր մեծի տօնին
78 Իվերջնում աւուր մեծի տօնին կայր
79 Իվերջնում աւուր մեծի
80 Սարտենեացւոց
81 Տոկուն, Գեղաճաշակ եւ արուեստին ամենանուրբ պահ
82 Տոկուն, Գեղաճաշակ եւ արուեստին
83 Տոկուն, Գեղաճաշակ եւ արուեստին ամեն
84 Տոկուն, Գեղաճաշակ եւ
85 Ռափայէլեան ձուլարանին մէջ մի
86 Ահա գարնանաբեր լուսնին
87 Տոկուն, Գեղաճաշակ եւ արուեստ
88 Մազերդ ի վար իջեր կախուեր է, ճիւնը
89 Աշխարհ ամբողջ անոր շունչին
90 Կը զգայ Թախիծ մ'անսահման
91 վիրաց անբժշկականաց ,
92 Տոկուն, Գեղաճաշակ եւ արուեստին
93 Տոկուն , Գեղաճաշակ եւ
94 Գուտտեններէն եկած յանձնարարուր
95 Քիւրքճի խան ջարխի յարկ Թիւ 26
96 Պատէ գիշե՛ր մը զիս անվերջ:
97 Աստուած զօրութեանց, ո՞ նմանէ քեզ.
98 Տոկուն, Գեղաճաշակ եւ արուեստին
99 Գրէքը Ռափայէլեան ձուլարանին մէջ միայն
100 Ռափայէլեան ձուլարանին մէջ
101 Գոյնը հայերէն գծագրութեան տեղերէնը գառար
102 Նաբօլէոն Բոնափարթէ իռնէյի
103 Ինչո՞ւ համար կրօնաւորներէն ոմանք
104 Ինէ գոյ է տեղ իմաստութեան
105 Տէր ... որ հնեցին

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓՈՂՈՑ Թիւ 17 106
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 107
ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍ 108
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՉԷ՛ ՏՊԱՐԱՆԸ 109
ՃԱԿԱՏԱԳՐԵԼ 110
ԱԶՆՈՒԱՓԱՅԼ ՊԱՐՈՆ 111
ՎԱՆԵՑԻՈՑ ՀԱ՛ՆԵԼ 112
ՍԷՔԻԶԻՆՃԻ ՖԱՍԸԼ 113
ՇՈՒՇԱՆ 114
ԳԻՏՆԱԿԱՆՑ 115
ՔԻԹԱՊ 116
ՇՏԵՄԸ 117
ՓԸՅԼԸԿ ՄՈՒՃԵՂ ՎԸՐԴՈՒՀԻ 118
ՄՈՍԿՈՒԸ ԸՐՄԸՒԻՐ 119
ՆԻՔՈԼԸՅԵՎ ԸԽԸԼՅԽԸ ՔԸԴԵՁ 120
Տ Ի Ը Ր Գ Է Ք Ի Ր 121
ՏԻՐԸՆ ԿԻՐԸԿՈՍ ԹՈՐՈՄ 122
Ա Ր Ա Ր Ա Տ 123
ԵՂԵՌՆԻ՛Ն ՃՈՒՐՋ 124
ՊԱՔՈՒ 125
Յ Ո Ւ Ճ Ա Ր Ջ 126
ՀՆՉԱԿ 127
Վ Ե Ր Ջ Ի Ն 128
ՀԱՄՐԻ 129
ՐԻՔ 130

131 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ
132 ԿԱԶՄԱՏՈՒՆ
133 Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ձ Ո Ւ Լ Ա Ր Ա Ն
134 ԹՂԹԱՎԱՃԱՌ
135 ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ
136 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ
137 ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
138 ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹԻՒՆ
139 ԱՆՄՐՑԵԼԻ
140 ԹԱՐԳՄԱՆԻՉ Ե ԴԱՐՈՒ
141 ԹՂԹԱՎԱՃԱՌ
142 ՃԱՇԱԿԱՒՈՐ ՏՈ
143 ՄԱՏԹԷՈՍ
144 ՌԱԽՈՒՂ
145 ԲԻՒՐ
146 ԼԱՄԲՐՈՒՆԵՑԻ
147 ՓԱՐՊԵՑ
148 ԻՆՃ
149 ԱՐՄՏԻՔ
150 ԳՐՈՒԹԻՒՆ
151 ԿԱԶՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ 152
ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ 153
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ 154
ՅԱՂԹԱՆԱԿ 155
ՍԱՐԳԻՍ ՀՐԱՉՆԵԱՑ ՀԱՄԱՉԱՍՊ 156
ՏՐԴԱՏ ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ 157
Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա 158
ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ 159
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ 160
ԽԻՍՏ ՆՈՒՐԲ ԵՒ ՅՈՅԺ ՏՈԿՈՒՆ 161
ՏՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ, ԹՂԹԱ 162
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ 163
ՎԻՄԱԳՐՈՒԹ 164
ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ 165
ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ 166
Վ Ե Ն Ե Տ Ի Կ 167
ՎԱՐԴՈՒՀԻ ՆՈՒՆ 168
ՅՐԵՆԵԱՑ 169
ՍՈՒԿԷ 170
ՈՒԺԱ 171
Մ Խ Ի Թ Ա Ր 172
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ 173
ԳՈՂԹԱՆ 174

175 ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
176 ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺ
177 ՌԱՓԱՅԷԼԵԱՆ, Կ. ՊՈԼԻՍ - ԳԱՀԻՐԷ
178 ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱ
179 ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
180 ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
181 ԹԱՆԳԱՐԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՆԱԽՆԵԱՑ
182 ՇՆՈՐՀԱԼԻ
183 ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
184 ԱՄՍՏԵՐԴԱՄ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԹՐԻԵՍՏ ՀՌՈՄ
185 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
186 ՎԵՆԵՏԻԿ ՏՊԱՐԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ
187 ՄԱՄԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂԻ ՃԱՌՔ
188 ՄԱՍԹԷՈՍԵԱՆ ՆՐԲԱԶՈՅԼ ՏԱՌԵՐ
189 ԲԱԳԱՐԱՏ ՀԱՅԿԱԿ
190 ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄԵԱԿԻ
191 ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՆՑՈՆ
192 ՀՐԱՉԵԱՅ
193 ԳՐԻԳՈՐ Հ. ՏԷՕՎԼԷԹԵԱՆ
194 ԵՐՈՒԱՆԴ ՆՇԱՆԵԱՆ
195 Յ. ՄԱՍԹԻՃԵԱՆ, Կ. ՊՈԼԻՍ
196 ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
197 ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
198 ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ
199 Հ. Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
200 ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ
201 ԼՈՐԴ ԲԱՅՐՆ
202 ՑԿԱՃԷՆ
203 Վ. Յ. ՍԱՄՈՒԷԼՈՖ
204 ԱՐՇԱԿՈՒՀԻ
205 Թ Ի Խ Կ Հ

ԳԵՂԱՏԱՌ ՏՈՄՍԵՐ 206
ՊԱՏՄԱՀԱՅՐ ՉԱՄՉԵԱՆ 207
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ 208
ԱՃԱՌԱՏՈՒՆ 209
Գ Ե Ղ Ե Ց Ի Կ 210
Հ Ա Յ Ե Ր 211
ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ՎԱՐԺ 212
Ց Ո Ւ Ց Ա Կ Տ Ա Ռ 213
ՍԹԱՆՊՈԼ 214
Մ Ա Յ Ի Ս 215
ՁՈՒԼԱՐԱՆ 216
ԴՐՈՒԹԻՒՆ 217
ՉՈՐԵՔԼԵԶՈՒԵԱՆ 218
Շ Ո Ւ Շ Ա Ն 219
ԱՐՄԵՆԱԿ 220
ԳՐԻՉ 221
ՀՆԱԶԱՆԴ 222
ՃԱՃԱՆՉ 223
„ԿՈՒԹԷՆՊԷՐԿ“ 224
կիսաջրոբցբբջ 225
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ 226
Վ Թ Ճ Դ 227
Կ Ռ Խ Ծ 228
Ղ Ճ Յ 229

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԶՈՐՍ ՏԱԽՏԱԿՆԵՐՈՒՆ

* Թիւ 1—105 տառերը **պարզ-բոլոր** կը կոչուին ընդհանուր անուամբ: Թիւ 106—160՝ **պարզ-գլխագիր**: Թիւ 161—178՝ **«անգլիք»-գլխագիր**: Թիւ 179—182՝ **«ռոմանս»-գլխագիր**: Թիւ 183—202՝ **շեղ-գլխագիր**: Թիւ 203—205՝ **երկարագիր**: Թիւ 206—229՝ **ձևագիր**:

* Թիւ 1—6 կը կոչուին **Ֆիւրմնեան**: Թիւ 7—12 **Վենետիկեան**: Թիւ 13 **Լուսինեան**: Թիւ 14 **Վենետիկեան**: Թիւ 15 **Ռուսահայ**: Թիւ 16 **Վենետիկ**: Թիւ 17 **Միխիթարեան**: Թիւ 18—21 **Վենետիկ**: Թիւ 22 **Վիեն.**: Թիւ 23 **Ռուս.**: Թիւ 24 Հնդկական: Թիւ 25—6 **Արամեան**: Թիւ 27 **Վիեն.**: Թիւ 28—33 **Ռուս.**: Թիւ 34 **Վենետ.**: Թիւ 35—41 **Ռուս.**: Թիւ 42 **Վիեն.**: Թիւ 43 **Ֆիւրմնեան**: Թիւ 44—5 **Անի**: Թիւ 46 **Զէյթուն**: Թիւ 47—8 **Անի**: Թիւ 49—50 **Անի-Վենետ.**: Թիւ 51—4 **Անի-Վիեն**: Թիւ 55 **Մասրէսեան** (Ճեկրէր և Կեզէց): Թիւ 56—61 **Իտալիք-Վիեն.**: Թիւ 62—65 **Իտալիք-Արամեան**: Թիւ 66 **Իտալիք-Վիեն.**: Թիւ 67—9 **Իտալիք-Վենետ.**: Թիւ 70 **Նօրիկ-Վիեն.**: Թիւ 71—87 **Արամեան**: Թիւ 88 **Լուսինեան** (Փարիզ): Թիւ 89—90 **Արամեան**: Թիւ 91 **Պոլիս-Իզմիր**: Թիւ 92—6 **Նօտման**: Թիւ 97 **Պարօնէ Վիեն.**: Թիւ 98—100 **Նօր**: Թիւ 101—3 **Նօր-Միխիթարեան**: Թիւ 104 **Նօր-Վիեն.**: Թիւ 105 **Զայնագրեալ բոլորագիր**: Թիւ 106—9 **Միխիթարեան**: Թիւ 110—1 **Հնդկ.**: Թիւ 112—7 **Միխիթ.**: Թիւ 118—27 **Վիեն.**: Թիւ 128 **Ռուս.**: Թիւ 129 **Վիեն.**: Թիւ 130 **Օ. Բարսեղեան**: Թիւ 131—9 **Արամեան**: Թիւ 140 **Վենետ.**: Թիւ 141 **Պոլիս**: Թիւ 142—4 **Արամեան**: Թիւ 145 **Վենետ.**: Թիւ 146 **Արամ.**: Թիւ 147—8 **Վենետ.**: Թիւ 149—51 **Պոլիս**: Թիւ 152 **Արամեան**: Թիւ 153 **Վիեն.**: Թիւ 154 **Արամ.**: Թիւ 155 **Փարիզ**: Թիւ 156—60 **Վիեն.**: Թիւ 161—4 **Արամ.**: Թիւ 165—8 **Վիեն.**: Թիւ 169—71 **Ռուս.**: Թիւ 172 **Վիեն.**: Թիւ 173—4 **Ռուս.**: Թիւ 175—8 **Պոլիս, Փարիզ, Վենետ.**: Թիւ 179—82 **Պոլիս, Վենետ.**: Թիւ 183 **Պոլիս**: Թիւ 184—5 **Վիեն.**: Թիւ 186—7 **Վենետ.**: Թիւ 188 **Մասրէսեան**: Թիւ 189 **Վիեն.**: Թիւ 190 **Վենետ.**: Թիւ 191—2 **Վիեն.**: Թիւ 193—4 **Ռուս.**: Թիւ 195—8 **Պոլիս**: Թիւ 199 **Վենետ.**: Թիւ 200—1 **Պոլիս**: Թիւ 202—5 **Վիեն.**: Թիւ 206—9 **Արամ.**: Թիւ 210—1 **Վիեն.**: Թիւ 212—23 **Արամ.**: Թիւ 224 **Վիեն.**: Թիւ 225 **Պոլիս**: Թիւ 226 **Վիեն.** (կօրիկ): Թիւ 227 **Վիեն.**: Թիւ 228 **Վենետ.**: Թիւ 229 **Արամեան**:



† Հ. ԱՐՍԷՆ ԱՅՏԸՆԵԱՆ

⁂ Հայ տպագրութեան գիւտէն դարեր վերջ՝ մեր ձուլածոյ տառերն, ինչպէս որ վերոյիշեալ ցուցակէն կը տեսնուի, ստացած են զանազան անուանակոչութիւններ, զորս հայ գրաշարներ — այլ և այլ տեղերու մէջ — մասամբ բարձի թողի ըրած են և մասամբ ալ որդեգրած: Այսպէս, բաց ի ընթացիկ **բոլոր-գրէն** (գլխագիրին հակադրութեամբ), որ մեր գիրքերու ու թերթերու մէջ տիրապետողն է, կան հետևեալները. — **Վարժ** (անգործածելի. Գաբրիէլ Վ. Այվազովսկի տառը ձևերը տուած է), **Մասիս, Անի, Զէյթուն** (համանուն թաշկինակի վայրերու կոչումով), **Լուսինեան** (Իշխան Գուխասնի մականուամբ): Իսկ **Արաքսեան, Արամեան, Միխիթարեան, Ֆիւրմնեան** են. բառերով կը հասկցուին այդ գրաձուլիչներու յօրինած տառերը: Կան դեռ ալ անգործածելիներն ալ. — **Արեւելք, Արշալոյս** են. որոնցմէ Ա.ք Մխիթ. Սօրկուձեան վարդապետը ձևակերպած է, իսկ Բ.ք համանուն անդրանիկ հայ լրագիրը կը յարաբերի: — Մեր գիրերու բազմազանութեան մէջ կ'ըմբռնուին **կենդանագիր, թռչնագիր, ձկնագիր, փառագիր, փակագիր, զարդագիր, ձևագիր, ծաղկագիր, օձագիր, զօրագիր** են. իրենց յօրինուածքին համեմատ:

Չմոռնանք յիշել այս առթիւ Այտընեան Աբբահայրը, որ, գեղարուեստի սիրահար,

գծագրած է կաղապարներն այն չքնաղ տառերուն՝ որոնք Վիեննայի Մխիթ. տպարանի ճոխութիւնը կը կազմեն և որոնցմէ ցուցադրած ենք հայ տառերու մեր համայնապատկերին մէջ: 1895 ին երբ այս մեծանուն գր. վաստակաւորին յոբելեանը տօնուեցաւ, «Հանդէս Ամսօրեայ»ի կողքին վերջնորեր էջին վրայ շարուած էին Յոբելեարին հնարած գիրերէն օրինակներ՝ հետեւեալ խորագիրով և ինքնատիպ բանաձեւերով՝ տակէ տակ. — **«Յոբելեանի տարին ԳԻՐՆ իր պատմութիւնը կը պատմէ:** Մեսրոպ զիս ծնաւ. Թարգմանիչք զիս գործածեցին. Ազգը զիս կարդաց. Ժամանակը զիս փոխեց. Գիտունը զիս յարգեց. Ձուլիչը զիս ձուլեց. Տպագրիչը (զիս տպագրեց). Հարկը զիս տարածեց. Գեղեցկութիւնը զիս բազմացուց. Ճաշակը զիս զարդարեց. Ճարտարի մատներ զիս ձեւաւորեցին. Նոր տպարաններ շրջեցայ. Պատի՛ւ զիս հնարողին. Պարծա՛նք զիս գործածողին. Բարգաւաճա՛նք զիս յարգողին. Շնորհակալութի՛ւն զիս գեղեցկացընող մատներուն. Ճարտարն ինձ նոր կեանք տուաւ»: — Այս չքնաղ նկարդեանք գրչէն ելած է վառվռուն գրագէտ Թարուլ Վ.անանդացիի:



**«Զինկօկրաֆ»** Մ. ԻՒԹԻՒՃԵԱՆ

⁂ Տպագրական արուեստին մէջ կ'ըմբռնուի **Պատկերազարդութիւնը** որուն տեսակներէն բանենք Դրոշմագրութիւնը (2 կերպ, գրչով, taille-douce, և ժանտաջրով, eau-forte), Փայտագրութիւնը (տոպախի վրայ եւն. փորագրութիւն), Զինկագրութիւնը (zincographie), Գալուանաձուլումը (galvanoplastie) եւն.: Իւրաքանչիւր ճիւղին մէջ վարպետներ ունեցած է Հայք՝ Թուրքիա կամ այլուր: — Գալով զինկատիպ պատկերագործութեան, Պոլսոյ մէջ հազիւ քանի մը հայեր կան, որոնցմէ Ա.ն է ՄԿՐՏԻՉ ԻՒԹԻՒՃԵԱՆը: Ծնած է Հասքէօյ 1876ին: «Մխիթ.»ի շրջանաւարտներէն: 1896ին Եւրոպա անցնելով, 6 տարի Զուիցերիոյ և Գերմանիոյ աշխատանոցներուն մէջ ծառայած է, արուեստը կատարելագործելու համար: 1901ին մայրաքաղաքս վերադառնալով՝ իր գործատունը հիմնած է, (նախ Իգմիր Օրէլի, ապա Իգմիրլի օղլու խան, հուսկ ուրեմն Գալիֆիւրի խան), և 11 տարիէ հետէ ինք եղած է վայելչօրէն պատկերազարդողը՝ Պոլսոյ հայերէն և օտար բոլոր թերթերը: — Վերջերս ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՄՃԵԱՆն ալ բացաւ իր գործատունը (Պարը ալի, Մեսսըրեր Օրէլին դիմաց) և բաւական յաջող «քլիշէ»ներ սկսաւ պատրաստել: — Ապագայ կը խոստանայ նաեւ ԳՐ. ԱԼԻՒԱԹՃԵԱՆ՝ այժմ Բարիզ:



ՐԱՖՖԻ

⁂ Այս արուեստներէն զատ, կայ նաեւ Վիմագրութիւնը (lithographie), այն է մամու-

ւոր քարի մը վրայ գիր ու պատկեր յօրինել : Պօլսահայը մէ՛կ հատիկ վարպետ մը ունեցած է, հանգուցեալ Կիւրճեան Արթաքին : — Վիմագիր կը տպագրուին հարսանեկան հրաւիրագիր, քարտեզներ եւն. : — Վիմագրութեան արուեստի սիրուն յուշարձան մըն է **Բաճճիի** պատկերը (1906ին Նախիջեւան պատրաստուած) որուն գիծերուն նրբութեան ու բանձրութեան առջ առ- առջ ապշուածքովը ձեւացած է անա հայազգի մեծանուն վիրպատանն' իր կենսագրական ամ- բողջական գիծերով զոր կարելի է ընթեռնուլ, վրան խոշորացոյց մը բռնելով : **Հայ գիրերով շինուած** կան դեռ կենդանագիրներ մէկ քանի ազգային երեւելի անձերու, «քառ-բոսրակ»- ներու վրայ վիմագիր դրոշմուած :

## ՓՈՒՆՋ «ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ»

Դար մը առաջ Մեսրոպեան տառերը չեզու եղած էին' գիրենք վայելչացուցող մասերը զօվելու համար : Պատեհ առիթն է ուրեմն ժամանակագրական կարգաւ բերելու հայերէն այն գիրքերն ու հանդէսները որոնց էջերուն մէջ շարուած մաքրատիպ գիրերն ու գեղարուեստա- կան պատկերները պատիւ կը բերեն առուգիւ հայկական տպագրութեան :

1733. **Աստուածաշունչ** (Մխիթար Աբբայ). «Իսկ այժմ նորին լուսազգին բերովք, աղ- նուազոյն պատկերօք, գեղեցկագոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ և բազմօք ծա- խիւք՝ վերստին տպագրութեամբ ի լոյս ածեցաւ» : Տպ. Վենետիկ : 1838. **Վայելչագրու- թիւն** (Հ. Աղեքս. Գալֆայեանց): Տպ. Վիեննա : — Կայ նաեւ Փարիզ տպուած Հ. Ամբր. Գալֆայ- եանի **Հայկական գեղագրութիւնը** (վիմագիր) : 1854. **Պատմութիւն վարուց Տեառն մե- րոյ Յս.ի Քս.ի** (Հ. Գաբր. Այվազովսքի) : Տպ. Փարիզ : — **Արկածք Վարդայ Մամի- կոնենայ** (Հ. Սահակ Թոռնեան) : Տպ. Վիեննա : 1855-8 **Մասեաց Աղաւնի**, Աւետա- բեր Հայաստանեայց, (Խմբ. Գ. Այվազովսքի և Ա. Գալֆայեան): Տպ. Փարիզ: 1860. **Պատարագ Հայկազն մանկանց** (Ճ. Արամեան) : Տպ. Փարիզ: 1879-81. **Փորձ Հայաստանի** (Հրտ. Ջ. Մսերեանց): Տպ. Մոսկուա : — **Խորհրդատետր Ս. Պատարագի** : Տպ. Վիեննա (1879) : 1881. **Ճիրակ**, տեղագրութիւն պատկերազարդ (Հ. Ղ. Ալիշան) : Տպ. Վենետիկ : — **Տեղե- մար** (թրգմ. Գ. Ա. Նար Պեյ) : Բ. տպ. Փարիզ : 1883-1912. **Բազմավէպ** : Տպ. Վենետիկ : (Մնացածները կենդանագրական և բնապատական պատկերներու շարք մըն են, բեւեռ ուրիշ չանէկան բաներ ալ կը բովանդակեն) : 1885. **Սիսուան**, համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լեւոն Մեծագործ (Հ. Ղ. Ալիշան) : Տպ. Վենետիկ : 1887-98. **Արաքս** (Հրտ. Ս. Գուլամիր- եանց): Տպ. Պետրպուրգ : 1890. **Ազգաբանութիւն ազնուական գարմին Տիւզեանց** (Հ. Գ. Մէնէվիշեան): Տպ. Վիեննա : — **Աղբիւր-Տարազ** (1890-1912): Տպ. Թիֆլիզ : — **Այրարատ**, բնաշխարհիկ հայաստանեայց (Հ. Ղ. Ալիշան): Տպ. Վենետիկ : 1892. **Էջմիածնի Աւետարան**, Յովս. Սաջադովեի (թրգմ. Հ. Բ. Պիլեզիկճեան : Տպ. Վիեննա: 1893. **Որ օրհնես զայճնաւիկ** (50 լեզուով), Հ. Գ. Գալէմքեարեան : Տպ. Վիեննա : — **Սիսական**, տեղագրու- թիւն Սիւնեաց աշխարհի (Հ. Ղ. Ալիշան) : Տպ. Վենետիկ : — **Նկարագրութիւն հաստա- կաց աղօթից Հայաստանեայց Եկեղ.** (Ս. Սահակ) : Տպ. Վենետիկ : — **Թատրոն** (հրտ. Աղ. Թարխանեան) : Տպ. Թիֆլիզ (1893-1903, նաեւ 1905, Ե. Տարի) : 1895. **Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց** (Հ. Յ. Տաշեան) : Տպ. Վիեննա : 1896. **Հայկ Դիւցազն** (Հ. Ա. Բագ- րատունի) : Տպ. Վենետիկ : — **Արօրի պատկ. Օրացոյցը**. №11: Տպ. Բագու : — **Ազգագրա- կան հանդէս** (խմբ. Երուանդ Լալայեանց): Տպ. Թիֆլիզ, (1896-1906) : 1898. **Բանալի արհայութեան**, աղօթագիրք (Հ. Գ. Գովրիկեան) : Տպ. Վիեննա : — «**Արաքս**»ի **ալբոմը** : Տպ. Պետրպուրգ (Լիփերման) : — **Անահիտ** (խմբ. Ա. Չօպանեան) : Տպ. Փարիզ (1898-1912) : 1900. **Արշալոյս** (խմբ. Հ. Ս. Երեմեան) : Տպ. Վենետիկ : 1901. **Հայապատում** (Հ. Ղեւոնդ Ալիշան) : Տպ. Վենետիկ : — **Յիշատակարան երկհարիւրամեայ յոբելինի Մխիթ.**

**Միաբանութեան** ի Վենետիկ, 8 Սեպտ. 1701 - 1901 Սեպտ. 8: — **Հանդէս Ամսօրեայ** (200ամեակ): Տպ. Վիեննա: — **Դեղունի** (1901, 5, 6, 9): Տպ. Վենետիկ: **1902. Կենսագրութիւն Հ. Ալիշանի** (Հ. Ս. Երեմեան): Տպ. Վենետիկ: — **Մլքէի Աւետարան**, հազարամեայ յիշատակին նմանահանել հրատարակուած պատկերներու և յիշատակարաններու: Տպ. Վենետիկ: **1903. Գեղարուեստական ալբոմ** Յ. Այվազովսկիի յիշատակին (խմբ. Ե. Բաղդասարեանց և Դ. Օրբելեանց: Տպ. Պետերբուրգ: — **Իսպիրայում** (Ա. Անդրանիկեան): Տպ. Թիֆլիզ: — **Հնաբանական բառարան** (Հ. Ս. Էփրիկեան): Տպ. Վենետիկ, 1903 և 7: — **Բանբեր գրականութեան եւ արուեստի** (խմբ. Ն. Ադոնց): Տպ. Պետերբուրգ (Պուշկինեան) 1903 - 4: — **Մեր տիպեր, տեսարաններ**, գեղարուեստական ալբոմի պրակներ: Տպ. Թիֆլիզ, 1903-4: **1904. Խաչ եւ Սուրբ** (Ռ. Յ. Պերպերեան): Տպ. Վիեննա: — **Անիի Յիշատակ** (Կ. Յ. Բասմաջեան), պատկ. ալբոմ, երկլեզուեան նկարագրութեամբ և Անիի յատակագծով: Տպ. Բարիզ: **1906. Յոյս** (խմբ. Բագրատ Այվազեան): Տպ. Թիֆլիզ: **1907. Արդուններ** (խմբ. Զաբէլ Բերբերեան, Եղիշէ Բաղդասարեան): Տպ. Պետերբուրգ (Պուշկինեան): — **Ամէնուն Տարեցոյցը** (Թէոդիկ): Տպ. Կ. Պոլիս, (Վ. և Հ. Տէր-Ներսէսեան) 1907 - 1912: — **Յուսաբեր** (խմբ. Մարիամ Մեհրաբեան): Տպ. Թիֆլիզ (Տրուդ), 1907 - 9: **1908. Լոյս** (խմբ. Արամ Անտոնեան): Տպ. Կ. Պոլիս: — **Հոգեւոր երգեր** (Աւետարանչ. Հայոց), ձայնագրեալ: Տպ. Կ. Պոլիս (Յ. Մատթէոսեան): — **Հայրենիքի երգարան**, ձայնագրեալ, հայ երգերու ներդաշնակաց յաւանկարներով: Տպ. Պոսթըն (Հայրենիք): — **Գեղարուեստ**, (խմբ. Գարեգին Լեւոնեան): Տպ. Թիֆլիզ (№ 1-3, Էլեկտրաշարժ տպ. Օր. Ն. Աղանեանց, 1908-9: № 4. Տպ. Մ. Մարտիրոսեանց, Պուշկին 1911: **1909. Սիամանթօ** (35 ամեայ Յոբելեան), ալբոմ: Տպ. Թիֆլիզ: — **Հայ գրողներ**, Ա. Ռուստամեաք, 1909: Տպ. Թիֆլիզ (Պրոգրէս): Բ. Թիւրքամեաք, 1910: Տպ. Թիֆլիզ (Կուլտուրա): **1910. Նաղաշ Յովնաթան** (Ա. Չօպանեան): Տպ. Բարիզ: — **Ամբողջական գործը** (Ատոմ Եարճանեանի): Տպ. Պոսթըն: — **Պատկերացոյց հաւաքածոյ մանուր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եւ շրջակայից** (Սահակ Վ. Աստուածատրեան): Տպ. Վաղարշապատ: **1911. Մեղրագետ** (Ռ. Զարդարեան): Տպ. Կ. Պոլիս (Արաքս և Օ. Արզումեան): — **Յուշանուէր Պատմութեան Հայոց**: Տպ. Վենետիկ: — **Յուշարձան**, գրական ժողովածոյ՝ առթիւ 100ամեայ Յոբելինի հաստատման Մխիթ. Միաբանութեան ի Վիեննա (1811 - 1911) և 25ամեայ տարեդարձին «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթի (1887 - 1911): — **Ասպիկ**, 3 թիւ ամսաթերթ: Տպ. Վենետիկ (Յ. Պոյաճեան): — **Ծաղր** (խմբ. Մեր. Պարսամեան): Տպ. Կ. Պոլիս (Ծաղր), 1911 - 2: **1912. Ակնարկ մը Վիեն. Մխիթ. Միաբ. 100-ամեայ գործունէութեան վրայ** (1811 - 1911) Հ. Ներսէս Ակինեան: Տպ. Վիեննա: — **Ամերիկահայ Տարեցոյցը** (Մուշեղ Եպսկ.): Տպ. Պոսթըն (Կիլիկիա): — **Ազատումն Երուսաղէմի** (թրգմ. Հ. Արսէն Տիրոյեան): Տպ. Վենետիկ: — **Խոյուած Երազներ** (Հրանդ Նազարեանց) և **Կերոններ** (Վ. Մալէզեան). Տպ. Կ. Պոլիս (Վ. և Հ. Տէր-Ներսէսեան): — **Հայ էջեր** (Ա. Չօպանեան): Տպ. Բարիզ (Կ. Ներսէսեան):

* Մեր կազմածը «փունջ» մը ըլլալով միայն, բաղ ձեռքն մեզ արգոյ տպագրիչներ, եւ աւելին չկրցանք քաղել Հայ Մամուլի ածուներէն:

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մինչեւ հոս յածեցանք տպագրական աշխարհին մէջ, կանգ առնելով հայերէն շարժուն տառերու բարեձեւութեան համար աշխատողներուն եւ իրենց Մամուլներէն դուրս ելած տիպեր հանողներուն առջեւ: Տեսնենք հիմա թէ զանազան ժամանակներու մէջ որո՞նք եղած են շահագրգռող՝ հայերէն տպուած գիրքերով — մեր մտաւորական կեանքի այդ զարմանազան բեկոր-

ներով, — առանց խղճամիտ ցուցակագրութեամբ և հայ տպարաններու բոլորած գործունէութեամբ:

* * Այս խումբէն առաջինը կրնայ դասուիլ իրաւամբ Հ. ԳԱՅԹԱՆԵԱՆ, «բազմիկիր» երիցագոյն անդամը Վենետիկի Մխիթ. Միաբանութեան, մականուանեալ «Տեառ.»: Ծնած է 15 Օգոստ. 1828 ին Պոլիս, քհնյ. ձեռնադր. 1853 թ.: Իր յիսնամեակը տօնուած է 1903 ին: Թողուց իր յօրինած դասագիրքերն ու թրգմ. վէպերը, յիշենք միայն այն համբերատար ոգին՝ որուն շնորհիւ Հ. Եղիշէ կարող եղած է կէս դարու ընթացքի մը մէջ կերպարանել երկհատոր ստուար և հոյակապ ցուցակ մը՝ այլ և այլ երկիրներու Մամուլներէն համբուրուած հայ մատեաններու, գրքոյկներու և թերթերու, 1512 թուականէն շարայարաբար ելլուած կազմուած մինչեւ 1912: Հարկադրուած ըլլալով քանի մը հեղինակ թարգմանելու այդ **ձեռագիր** աշխատասիրութեան հոծ մատուածներուն մէջ, համոզում գոյացուցինք թէ այս ալեւոր վաստակաւոր օժտուած է պայծառ իմացականութեամբ, անսպառ կորովով և աննուաճ յարատեւութեամբ: Տղայ հասակէն սիրահար բոլոր այն գիրքերուն և թուղթի կտորտանքներուն որոնց վրայ «մեսրոպեան տառ.» դրոշմուած է, յամառ հաւաքիչը դարձած է անոնց և իր Ոսկանի մատենադարանն առաջին ճոխացուցողներէն գլխաւորը: Վիեննա գտնուած ատեն, սկսած է Դիւանը կարգի դնել և այնուհետեւ նուիրուած՝ շատերու համար անհրապոյր տաղտկալի և անհերքելի օգտութեան մը որ իր «ցուցակ»ն է:



Հ. ԵՂԻՇԷ Ծ. Վ. ԳԱՅԹԱՆԵԱՆ

* * Այդ ցուցակն է որ առեւօք զինուած է մասամբ օգտուիլ Հ. ԶԱՐՊՀԱՆԱԼԵԱՆ՝ 1883 ին տպագրութեան յանձնած իր «Հայկական Մատենագիտութեան» համար: — Անուանի կամքի կորովով աշխատող մեծ դէմք մըն ալ: Ծնած է 4 Դեկտ. 1827 ին, քհնյ. ձեռնադր. 17 Յունր. 1847 ին Ս. Ղազարի վանքին ուր վախճանած է 13 Փետր. 1901 ին: Մասնաւորաբար նուիրուած Հայ Մատենագրութեան ուսումնասիրութեան, Հ. Գարեգին յաջորդաբար պատրաստած է բանասիրական կարեւոր երկեր որոնցմէ յիշենք միայն «Պատմութիւն Հայկական Տպագրութեան»ը, սկզբնաւորութենէն մինչեւ առ մեզ 1513-1895:

* * Այս երկուքէն անմիջապէս յետոյ կ'արժէ դասել Պարտիզակցին Հ. ՂԱԶԻԿԵԱՆ (բազմարդիւն միաբան Ս. Ղազարու վանուց), որ սուղ ժամանակի մէջ անհագին գործ արտադրած է և իր հաստատամտօրէն զմայլելի թարգմանութիւններով կոչուած է «Աշխարհաբարի Բագրատունին»: Ծնած է 8 Հոկտ. 1870 ին: Ձեռնասուն Տուրեան Ս.ի: **Միջոց մը գրաշարութիւն ըրած է Պոլիս**: Անցնելով Վենետիկ՝ քահանայ ձեռնադր. 1895 թ., **չմելով դադրել իր գրաշարի կեանքը՝ հարկին բերմամբ**: Կազմող է «Հայկական նոր Մատենագիտութիւն և Համայնագիտարան Հայ կեանքի» անուն յոգնավաստակ բառգիրքին (տպ. 1909-11) որուն երկսիւն մեծադիր ու մանրատառ էջերուն մէջ հաւաքուած են հայ թարգմանիչներ, հայ հեղինակներ ու հեղինակութիւններ, հայ տպագրիչներ ու տպարաններ, ի հարկին հին գիրքերու Յիշատակարանաց, յառաջաբաններու և բովանդակութեանց ամբողջական մէջբերումներով և քննադատա-



† Հ. ԳԱՐԵԳԻՆ Վ. ԶԱՐՊՀԱՆԱԼԵԱՆ

բեանց աղբիւրներու մանրազննին ցուցումներով : Այս գործը հասած է ցարդ **Հիւսմանս** անունին. տպագրութիւնը մէկ կողմէն յառաջ կը տանի, տարուոյս ընթացքին յոյս ընծայուելու համար Գ. հատորը՝ ցվերջ Մ տառի : Մեզ կը մնայ մաղթել ներհուն աշխատասիրողին, որ արժանի ըլլայ ի մօտոյ ողջունելու լուսապայծառ ճակատը Ֆ տառին :



Հ. ԱՐՍԷՆ Վ. ՂԱԶԻԿԵԱՆ

* * Միջոցաբեան այս երրորդութենէն զատ, Լէօ կը ներկայանայ մեզ՝ իբր խիստ ուշադրաւ դէմք մը որ մեծագոյն ծառայութիւնը մատուցած է Հայ Դպրութեան, «Հայկական Տպագրութեան» անուն իր ընդարձակ և չանձկան հատորներով, որոնցմէ Ա.ը 1901ին և Բ.ը 1902ին տպուած են Թիֆլիզ, նախապէս «Մշակ»ի մէջ յօդուած առ յօդուած երեւալէ վերջ : (Ուսանելու այս բազմանիստ պատմագէտ-վիպասան-հրապարակագիրին կենսագրութիւնը տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը» 1911) : Լէօի «Հայկական Տպագրութիւն»ը բովանդակ տարիներու աշխատութիւն մը ունի: Ո՛չ թէ բանասէրը, հապա խոստացուած պատմաբանն է, որ կը կանգնի մեր առջեւ, հայ տպագրական աշխարհի անցուդարձերուն մէջ խառնուելով Հայ կեանքին ալ : Այն աշխատասիրութեան զատած մեծ յարգանքն իբր շեշտող պարագայ՝ յիշենք թէ 1904ին **Երկրորդ** տպագրութեան արժանացած է ան, որուն շուրջ յարուցուած գրականներուն առթիւ՝ առած իր պատասխանէն յառաջ կը բերենք քանի մը հատուած միայն. «Իմ ծրագիրն էր տալ պատմութիւնը մեր անցեալ մտաւոր, կուլտուրական և քաղաքական կեանքից : Եւ այս աշխատութիւնը անուանեցի **Հայկական Տպագրութիւն**, որովհետեւ տպագրութիւնն է այն առանցքը որի շուրջը պտտում են զանազան պատմութիւնները : . . . Տպարանը միայն արհեստանոց չէ . նա գրականութեան հոգին է , առանց նրան անհնարին կը լինէր երեւակայել անգամ այն ամենը , ինչ ունենք այսօր : . . . Հետեւելով մեր գրականութեան , ես չէի կարող չը հետեւել և մեր կեանքին , որովհետեւ այդ երկուսը — կեանք և գրականութիւն — չէ կարելի բաժանել իրարից» :

* * Եւս ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ վերջին չորս անձերէն տարբեր միջոցի մը հետեւած է , 1901 տարուան Ազգ. Հիւանդանոցի «Ընդարձակ Օրացոյց»ին մէջ հրատարակելով «Կ. Պոլսոյ Հայերը և իրենց Պատրիարքները» վերնագրով փոխառար պատմութիւնը մեր Պատրիարքներուն ու Տպարաններուն , ընդունելով պատկերացնել անձինքին պաշտօնավարութեան շրջանին անցած Տաճկահայոց կեանքը , մտաւորական ու կրթական շարժումները , Ազգայնական բազմազան գործունէութիւնները , կրօնական պայքարները , քաղաքական հոսանքն ու մանաւանդ Պոլսոյ տպագրական աշխարհը , — բոլորն ալ ուրոյն ուսումնասիրութեանց առարկայ դարձնելով , խղճմտօրէն պատկերացնելով ու բերելով կարգել մինչեւ 1858 թուականը : Հ. Ասատուր անհամար ընթերցումներ ու պրպտումներ ընելու հարկադրուած է (օգտուելով անշուշտ իր սեպհականութիւնը եղող հարուստ մատենադարանէն) , այդ 181 էջերուն մէջ



ԼԷՕ (ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱԽԱՆԵԱՆ) Ծն. 1860

կարենալ ամփոփելու համար ժամանակակից Հայոց Պատմութիւնը : Մեզ համար կրկնակի գնահատելի է իր աշխատութիւնը, քանզի անոնց ձեռնարկը ամփոփուած է ուրեք ուրեք իր գրքերու կամեցողներու եւ հնարաւոր գործածքներու գիտնալու, քաղաքի բանասէրներուն մէջ կաղապարելու համար ազգային պատմութեան գրութիւնը որոնք անպայման զգուած պիտի ըլլային Համիտեան անցուր գրաբարներէն : — Երկար տարիներ Պոլսոյ գրական շարժումին մասնակցող այս կենսագիր-բանասէրին ընդարձակ կենսագրութիւնը տե՛ս «Ամենուն Տարեցոյցը» 1911 :



ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

* * Յիշենք Ռուսահայ գրագէտ ՄԻԱՆՍԱՐԵԱՆՑ ՄԻՔԱՅԷԼն ալ (1829 - ? ) որ 1876ին հրատարակած է «Bibliographia Caucasica et Transcaucasica»ն :

* * Հայ Տպագրութեան Պատմութեան համար վաւերականներու ներկայ շարքին կարելի չէ զանցել անունը Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆի որ բաւական կարեւոր գեր մը կատարած է, ուրիշներէ աւելի մեծապատիւ աշխատած եւ հայրապատ ըլլալով նոյն գործին ի սպաս : — Համառօտիւ գծենք հոս իր կենսագրականն ալ : Ծնած է 8 Դեկտ. 1872ին Գում Գափու, ծանօթ գործարանատէր-ազգասէր Գէորգի անդրանիկ որդին : Ցաճախած է Մայր-Վարժարան ուր քանի մը տարի հրատարակած է «Լրաբեր» ամսաթերթական հանդէսը՝ ձեռագիր : 18 տարեկանին հայրը կորսնցնելով, 1894ին կամք ի կառ կը շարունակէ հօրը բացուցած գործարանը, մինչեւ անոր վերջնական փակումը : Այդ բաւականէն կ'սկսի իր յեղափոխական կեանքը : Պարոնի աշխատակցած է Արեւելքի «Մասիս»ին թերթին եւ հոս հրատարակած՝ «Լոյս»ի եւ «Ծաղիկ»ի մէջ **Դիւցազ** ծածկանունով քրոնիկներ, որոնցմէ մին ազդեցիկ ներկայացմամբ մը գեղ գրաւեց մը ըլլալուն Զարդարեան արգիլուած է գրել շարժելէ, ապառնալիք սպառնալով : 1893ին սկսած է հրատարակութեանը «Տեսարան»ի զոր կառավարութիւնը դադրեցուցած է, բերքն արտօնութիւն չունենալուն համար : Նոյն տարին սկսեալ «Գրացուցակ հրատարակութեանց» անուն ամսօրեան շարունակած է 2 տարի. ապա Վ. Բօյանի հետ լոյս ընծայած «Հանրագիտակ» երկրագործական շաբաթաթերթը (1897): — Գում Գափուի ցոյցին մասնակցած ըլլալով՝ բանտարկուած է եւ 5 տարուան բերդարգելութեան դատապարտուած : Ընդհ. ներումին՝ ազատ արձակուելով, հիմնած է Զարմանաճրդարի իր գրատունը (զոր ցարդ կը վարէ եղբայրը՝ Պինէն) : Բանտարկեալի այդ դժնդակ կեանքը պարբերաբար բացուած է գրեթէ մինչեւ Սահմանադրութեան հռչակում : 1894ին, քօղարկ տարին, հրատարակած է տետրակ մը՝ համաձայնականին դէմ զգուշական միջոցներ պարունակող. հանրօգուտ այս Հեւէարկն ալ կ'արգիլուի կառավարութենէն տպարանները կը գոցուին եւ Զարդարեան կ'արտաքսուի ... բանտային մեծարանաց : — Գրատունը հիմնած բաւականէն կ'սկսի հաւաքել հայերէն գիրքեր (հին տպագրութիւն) — որոնցմէ շատը ծախած է վերջէն Հ. Եղ. Դաշեանին, Հ. Աստուրի եւ Հ. Արս. Ղազիկեանի, եւ ժողվել հին ձեռագիրներ, նամակներ, պատկերներ եւն. առանցմով **Յիշատակարան** մը կազմելու առաջադրութեամբ : Իր միջերը ձախողուցած են հօրը մահէն եւ ուրիշ անկեալ ձարուած դէպքով ազգ. վաւերագրեր, պատմաններ եւն. որոնցմէ շատը սակայն ընդհանուր եղած են Համիտեան Ռէժիմէն :



ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Բարեբախտաբար մաս մը բան պահ ձգած ըլլալով Հ. Ա. Երեմեանի քով (որ մտադիր էր հետզհետէ հրատարակել զանոնք «Բազմավէպ»ի մէջ), Զարդարեան կրցած է յետոյ իր ուսումը վերստանալ և 1910ին նոյն տարին սկսիլ սրտով ու հոգւով հրատարակութեան պատկերազարդ այն շահեկան գործին (**Ցուցատախտակ**) որ «Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները» կը բովանդակէ, զարդարուած մանրանկար նիշ գիրքերով և բերելէ բազմաթիւ զինկոգրաֆ էջերով: «Ցուցատախտակ»ին առաջին պրակը կը շարունակուի դեռ, իր եղբօր՝ Պիեռի գործակցութեամբ: — Բաց ասկէ, երկու քինն մէկ ձեռնտուն եղած են տպուած երկերու վերատպումի գործին և «Ազատ մատենաշար» անխոնջ լոյս ընծայած քանի մը ատենաւ գիրքեր: — Վահան 1911ին անցած է Երուսաղէմ, մատենադարանը կարգադրելու պաշտօնով: Վանքին գրացուցակը պատրաստած ատեն, փոշիներու մէջ իրր անտէր նետուած բանկագին նմոյշներ մը երեւան հանած է, Գագիկ թագաւորին կնոջ ու աղջկան պատկերը որ այժմ մեծ արժէք հանեց Յերուսաղէմի մէջ և ուսումնասիրուեցաւ Դարեգինի վրայ: Նոյն տարւոյն վերջերը Դուիլի մեկենասով՝ հաստատուած է նոր կրէ գրատուներ: Պատրաստած ունի եգիպտական զարդերու պատմութիւնը զոր մտադիր է լոյս ընծայել. ունի նաև «Հին օրեր, մանուած գրուածներ» անուն գործ մը որ կը պարունակէ սփռած գրականական **անտիպ** գործեր, Գարեգին 1, Պէշիկթաշլեան 2 անտիպ առտուար, բազմաթիւ նամակներ նշանաւոր Խրիմեան Հայրիկի ևն.):

* * Հայ տպագրութեան պատմութեան գրագողներէն կան դեռ երկու հոգի ալ, ԱԲՐԱՀԱՄ ԱՅՎԱԶԵԱՆը, ծն. 1846, մեռ. 1909. (պատկեր և կենսագրութիւն տե՛ս «Ամենուն Տարեցոյցը», 1910 տարի) որ իր **Ծար հայ կենսագրութեանց** համառօտ երկին մէջ Հայոց տպագրական գործունէութիւնը հակիրճ անցուցած է՝ տարածուն, համառ և անվրէպ մտքով մը: — Իսկ միւսն է կենսագիր-հրատարակագիր և Ազգ. երեսփոխան ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆը: Ծնած է Սկիւտար, 17 Յունիս 1879ին. ուս. կրթ. ստացած Պէրպէրեան, յետոյ Կեդրոնական վարժարանը Հ. Ասատուրի: 1897ին «Բիւզանդիոն»ի մէջ երեւցած է իր Ա. յօդուածը Ա. Ա. ստորագրութեամբ. «Ամենուն Հայոց կաթողիկոսութիւնը», յետոյ մասնակցած է Կեդրոնականի շարքը յարուցուած խնդրոյն: Այնուհետև մնայուն աշխատակից «Բիւզանդիոն»ի, սկսելով շարքն «Անհետացող դէմքեր»ու և զանազան բանասիրական յօդուածներ որոնցմէ կարեւորներն են յիշենք «Հայոց անմիաբանութեան պատճառները», «Զօրաւոր Հայերը», «Կրթ. չմտածել մը», «Բանկացիի գերեզմանատունը» ևն.: Արդէն 3 տարի խմբագիրը եղած է Հիւանդանոցի «Ընդարձակ Օրացոյց»ներուն (1908-1910), որոնցմէ վերջինը շահեկան է յայտ, 453 էջերով կուռ ամփոփումն ըլլալով «Ազգ. Սահմանադրութեան» պատմութեան: Հեղինակած է «Սրբուհի Տիւսաբի վրայ ուսումնասիրութիւն մը (1901ին Վենետիկ տպ.), նաև ատոր կենսագրականները «Կ. Փոլսեան»ի և «Արևելեան Հայկական»ի (վերջիններս դեռ անտիպ): Իր «Իսմիլի Հայերը» գործը 1907ին պսակուած է Եգիպտոսէն պր. մրցանակով: Աշխատակցած է Հ. Ամսօրեայի, Ծաղիկի (Հայ եկեղ. երաժշտութիւն), Սուրհանդակի (Յունաց պատրիարքութիւն) և պօլսեցող պարբերականներու, երբեմն «Մ. Անգլեան» և «Ծաղիկ» ծածկանուններով: — Ասոնցմէ զատ, Ալպօյաճեան 1912 տարւոյ «Կոչնակ» ամերիկեան հանդէսին 2—5 թիւերուն մէջ հրատարակեց «Չորս հարիւր ամեակ Հայ Տպագրութեան» վերնագրով յօդուած մը որ հարևանցիկ ակնարկ մըն էր՝ նոյնին վրայ ձգուած:

* * Հոս կուզ կ'առնենք պահ մը, յիշատակելու համար քանի մը անձեր ալ որոնք ո՛չ նուազ ծառայութիւն մը մատուցած են Հայ Տպագրութեան պատմութեան մէկ որոշ ճիւղին, հայ թերթերու ուսումնասիրութեան: 1. Հ. ՓԻԼԻՊՊՈՍ ՃԱՄՃԵԱՆ («Ազգ. լրագիրներու և օրագիրներու պատմութիւնը», 1850ին՝ «Եւրոպա» շաբաթաթերթին մէջ, Վիեննա): 2. ՄԻՀՐԴԱՏԵԱՆՑ (1860ին՝ «Փարիզ» հանդէսին մէջ, Բարիզ): 3. ՅԱՐՈՅ (1878ին՝ «Հայոց Մամուլը Ռուսաստանում», Թիֆլիզ): 4. Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ (1893ին՝ «Պատմութիւն Հայ Լրագրութեան», Վիեննա): 5. Ջիւանի անզուգական աշուղին զաւակը՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆՑ (1895ին՝ «Հայոց պարբերական մամուլը», Ալեքսանդրապօլ): 6. Հ. ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆ (1909ին՝ «Հայ մամուլը 15 տարուան մէջ՝ 1894-1909», Վենետիկ): 7. ԱՐՇԷՆ-ՏԻՐԱՆ (1912ին՝ **Ամերիկահայ Մամուլը**. Մուշեղ Ս.ի «Ամերիկեան Տարեցոյց»ին մէջ, Պոսթըն:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ
## ԵՒ ՀԱՅ ԳԵՂԱԳԻՐՆԵՐ

**Գիր**ի գիւտին հետ սկսաւ զարգանալ նաեւ **Գեղագրութիւն**ը, կամ ուրիշ բառով **Վայելչագրութիւն**ը (calligraphie) որ գիրերուն ամենէն չքնաղ ու շնորհալի ձեւեր տալու արուեստն է: Յարեւելս՝ Գեղագրութեան ընծայուած պատիւը մեծ էր ի վաղուց անտի: Երկնային Կայսրութեան պատմագիրներ կը յիշեն երեւելի վայելչագիր Վան-Հի-Չէ անուն իշխան մը՝ Քրիստոսէ 3րդ դարուն ապրող: Պարսիկները նոյն արուեստին կու տար ձանցան ԺԸ. դարուն. իսկ Մահմետականք զայն ամենաբարձր կատարելութեան հասուցին, անոր վրայ կեդրոնացնելով իրենց բոլոր ջանքերը, քանի որ կրօնքնին կ'արգիլէր իրենց՝ դէմք գծել: Արեւմտեան քաղաքակրթութեան մէջ, Գեղագրութիւնը յատկապէս վերաշրջումներ կրեց արուեստներու զարգացումին հետ. գլխագիրեր եւ սկզբնատառեր արտակարգ ազդուածքով սկսան յօրինուիլ, կենդանիներու, ծաղիկներու եւ արուեստի զարդերու խուռնկար պէսպիսութեամբ. մինչեւ այն օրը երբ ծնաւ Կիւթէնպէրկի գիւտը որ «ձեռագիր»ներու դարը փակեց:

* * Պատմութեան մինչեւ մագաղաթի ու թուղթի դարեր, մեր ազգը զանազան ժամանակամիջոցներու մէջ ունեցած է **գրչագիր**ներ որոնք իրենց ձայնաւոր մատեաններուն մէջ թողած **փետուր**ով՝ կերպարանած են մարգարտաշար տողեր ու շքեղաշուք էջեր, զայսօր ամենուն հիացման արժանի: Զոր օրինակ, Եկեղեաց Աւագ վանքը 1439ին Սիմէոն արեղայէ գրուած «Յայսմաւուրք»ը յիշատակութիւն կ'ընէ «երջանիկ վարդապետին Գէորգա» որ անզուգական գեղագիր մըն էր եւ «առնէր զարուեստ գրչութեան գեղեցիկ եւ ճարտարութեամբ»: Առաքել Դաւրիժեցի պատմագիրն ալ կը յիշէ Ծաղկագրութեան մէջ համբաւաւոր վարդապետ մը, Զաքարիացին Մինաս վարդապետ որ ձեռքն անցած որ եւ է գիրք վայելչօրէն կը պատճէնէր «ոսկով եւ լաջվարդով»:

Դարեր առաջ, այսպէս, ապրած են մեր մէջ վարպետներ որոնք մենաստաններու խաղաղաւէտ մթնոլորտին մէջ՝ ծռած են մագաղաթներու վրայ եւ տարիներու համբերատար աշխատութեամբ, սագի թեւերէն փրցուած ու խնամով տաշուած շուշանաթոյր գրիչը ձեռքերնին՝ ճոխացուցած են գանձարանը հայերէն ձեռագիրներու. ատոնք հիմայ թանկագին [illegible] են եւ նմոյշները՝ մեր հին գեղագրութեան արուեստին:

Նոր ժամանակներու մէջ, — երբ երկաթէ գրիչը յաջորդեց փետուրին, — ունեցանք դարձեալ գեղագիրներ, ուսուցիչ եւ հեղինակ: Հիներէն մինչեւ նորերը՝ համառօտ ցանկ մըն է [illegible]. — Հ. Աղեքս. Պալճեան եւ Հ. Արսէն Այտընեան (Վիեննա), Ամբրոս. Դալֆայեան (Բարիզ), Հ. Պետրոս Վ. Մինասեան (Վենետիկ), Ռափայէլ Դադանճեան (Պոլիս), Մ. Մ. Մինասարեանց (Պետերսբուրկ), Յ. Դաղէզեան, Տիրացու Մարգար (հետս Տ. Յովհաննէս քհնյ. Ծամպազեան՝ Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցին), Մնացական պատուելի (ապա Տ. Մատթէոս քհնյ. Պէշիքթաշի Ս. Աստուածին Եկեղեցին, վախճանած), 1870ական թուականին Պրն. Յարութիւն (մեռած), Ազարիկ Գերձակեան, Կարապետ Եազմաճեան (Համբէօյ, մեռած), Խաչիկ Թումաճեան, Միհրան Տէօքմէճեան, Յովսէփ Վահիկեան, Պետրոս Դրդանկրճ (այն երկուքը Բասկերի Խապացիին աշակերտ), Տրդատ Զօհրապ (մեռած), Տարայիչ Գարակէօզեան (մեռած), Սանփան Ակլայեան, Տիրան Չրաքեան, Խաչիկ Էնկիւզեան, Գրիգոր Յովակիմեան, եւն. եւն. [վերջիններս ամէնքն ալ Պոլսեցի]:

# ԵՐՐՈՐԴ ՄԱՍ.— ՀԱՅ ՏՊԱԳՐԻՉԸ՝ ԵՐԿԻՐԷ ԵՐԿԻՐ

## 1512 - 1912

### ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ կրնանք խոստովանիլ թէ տպագրութեան գործին նուիրուած Հայեր — օտարազգի արուեստակիցներու նման — ժամանակի երկար անցորդութեան մը միջոցին՝ եղած են լծակից ու գործակից դաստիարակին ու կղերականին : Ազգերու լուսաւորութեան գործին համար Տպարանը մնալով իբրեւ տաճար, զարկել ի վեր չդադրեցան իր պատարագը մատուցանելէ. Մամուլ-բագինին վրայ՝ ձեռամբ սեւ մելանին ու բոլորանուէր սպասարկութեամբ Գրաշար-դպիրներու : Իր գոյութեան ու կոչումին մէջ միշտ բարձր և ազնիւ՝ Կիւթէնպէրկի գիւտը եղած է տարածիչը լոյսի և բարիքի. միայն չկրցան երբեք զայն նկատել միայն ազնիւ շահերու՝ որոնք կրնային յառաջ գալ անոր կիրառումէն : Անով պարծեցած է համաշխարհ մտաւորական աշխարհը, վասն զի համօրէն ընդունուած էր այլ եւս թէ մարդկութեան խորական յառաջդիմութեան մեծ ազդակ ունի «կապարեայ զօրաց» տառերուն և մեքենային տակ անոնց անխոնջ երրորդարձին հետ :

Սակայն և այնպէս, տարիները բերին, բոլորը տակաւ փոփոխել սկսան Տպագրութեան արուեստին : Նոր սերունդներ հասան, որոնք հայրենակիցնին ազգին զայն իրենց շահանդ նկատումներուն : Տպագրութիւն որ միայն հասարակաց կրթութեան ու զարգացման ազդակը էր մնար, դարձաւ առեւտրական զբաղում մը, ապրուստ հայթայթելու միջոց մը, շատ բան տուժելով իր ազնուացուցիչ հանգամանքէն : Եւ սակայն, դեռ ի լոյս առաջնորդող, դեռ ի բանականութեան ու մարդասիրութեան մօտ հրատարակութեանց առքերէ՝ փոխան ի փոխ երեւան գալ սկսան խուսափումէն, կրօնական, ատելութեան արծարծող ու կիրքերը փայփայող գիրքեր ալ, բան էր որ տպագրիչը նպաստաւորուէր աղէկ վճարումներով : Առաւօտեան ու շատ հրատարակել, ու շատ շահիլ : Ասիկա հանգամանք սկզբունքը դարձաւ Կիւթէնպէրկի Ձուլակ-առանց ամբարշտութիւնն տարածելով որակին և անխնամութեամբ Մամուլին ունեցած սեպուհ դերը :

Յամենայն դէպս, Մամուլը գտնելով իր նախնի կոչման բարձրութեան մէջ՝ պատմութեան վրայ է միշտ՝ վաստակ դէմ մղուած պայքարներուն ի տես և անխոնջներու համար տարուած յաղթանակներուն ի նպաստ : — Այս հրաշալի զինուորին ծառայութեան, անոր զաղանտաց բարձրացման և զայն գործածողութեան դիտելով՝ Հայոց լուսաւորութեան համար ծառայած ըլլալու միակ առաջադրութեամբ՝ ունեցած ենք բազմաթիւ Հայեր որոնք արժանի, ստառապած, չարչարուած ու ձամբորդած են անդադար և յաջողած գլուխ հանել սուրբ գործը : Անոնց աղուններէն այն դէմքերուն որոնց շատ բան կը պարտի մեր ազգը. — Վենետիկի մէջ ասկէ չորս հարիւր տարի առաջ ապրող **Մէղապարտ Յակոբէն** մինչեւ **Թոխաթեցին Աբգար** որ նժդեհութեան զաւակը ձեռքը՝ միեւնոյն ատեն երկիրը, ապա Պոլսոյ՝ առաջին հիմերը դրաւ հոն տպագրութեան, նոյն նպատակաւ Տիգրանակերտցի Տօվքեան քաղաքը պանծացնող **Տէրզնցին Յովհաննէս** այրիացեալ քաղաքն, տպագրութեան արուեստ սորվելու համար Ստամպոլի մէջ հաստատած եղող **Մարզուանցին Գրիգոր**, համբերեն Աստուածաշունչը տպագիր ընելով առաջին անգամ Հայուն ձեռքը յանձնող **Պլենց Ոսկան** բազմաչարչար վարդապետը, Սպահանի՝ վանքի մը անկիւնը՝ բանդը, որով ու ատ. ի չգալ ի զոյ ատող **Եսայեան ցին Խաչատուր** և իր ժիրամիտ աշակերտ **Ջուղայեցին Յովհաննէս**, պաշտպանող Հայութեան գիտական մխիթարութիւն՝ **Մխիթար Աբբայ**. Հայ Մամուլի մը գոյութեան համար իր «երկայն բաղձանքը» մինչեւ նախիջեւանի աշակերտ բարձրերը տարածող **Արղութեանց Արքաղան**, իր տպագրիչ-ձուլիչի հմտութեամբ՝ Վալաց վերջին բաղաքներէն հրահրող **Ակրուչեր-**

ցին **Արապեան**, իր կրթական ձգտումներուն համար «չնորհք» պատուանունը շահող **Սամ-պօլցին Մկրտիչ Ամիրա**. Հնդկաստանի Հայ գաղութը զօրացունելու համար այսօրուան մա-մերը յանձնն ազգային յառաջացման չնորհակի քաջանան **Շմաւոնեան**, աշխարհի երեք մասերուն վրայ իր տպարան կանգնող մեղուաջան Արմաշեցին **Մուրատեան Արտաշէս**. մեծանուն նկարչական գիր կերտող՝ Երուսաղէմի պէս տեղ մը՝ գրաշարական յաջողել կեանքին ձեռ յօժարակամ փոխանակող **Համասանցին Տանիազար**. Օսկանեան Վ. առար-բական ու Տարօն՝ հայ մամուլը ջանալով տեսութեան պէս պարագայով եղրամկալեցաւրեան **Խորէ-նեան Հայրիկ**, Պոլիսէն Դրիգոր Լուսաւորիչ՝ **Տիգրանեան Թադէոս**, Տաճիկներուն նկա-րեմակերը՝ **Մխիթարեան Ցախանեան**, Եւրոպայի մէջ՝ Հայ չարժման տառերուն եւ տպական շէնք ու չնորհք տուող անզուգական **Արամեան Ճանիկ**. **Տնեաարդին Եղիա** որ բրբրանա-յոց մէջ ազգասիրութեան համար վառ. պահելու համար իր Երգարանը լոյս-աշխարհ՝ ամեն եւ ինք լոյս-աշխարհէն մատ 'ի դանդիս, Բաղդերու երկիրը՝ Հայերէ բոլորովին բանալ գիտցող մը քաշուած՝ նայուերը իրասպարակող սարարախտ Ոսկեպարեանն **Աստանազ**, եւ դեռ ամենքը չարք մը ինն ու նոր գեղթերու՝ որոնք Մայր-Հայրենիքեն փարատանելով ձեռ. կամ մօտ, անցեալին մէջ յանձն առին անեն գրկանք եւ յոգնութիւն, Հայ Մամուլին բարիքները տարածելու եւ անով օգտակար ըլլալու համար ազգին :

* * *

ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ եղաւ բոլոր այդ անձերուն կատարած ձեռնարկները արձել ու խմբել գիրքիս այս «Երրորդ Մասին մէջ՝ ՄԵԿԵՐԻ ԵՒ ԹՈՒԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՒ : Զոր օրինակ, երբ տեսանք թէ Հայ Տպագրութիւնը ծնունդ է առած 1512 թուականին **Վենետիկի** մէջ, ԻՏԱԼԻԱՆ առաջին Դյուխն բերինք մեր խորանին եւ անոր **Վենետիկ, Բաքու, Հռոմ, Միլան, Լիվօռնօ** եւ **Բասալ** քաղաքներուն մէջ անցքի ունեցած գանազան հայ-օտար տպարաններու գործունէութիւնները ժամանակագրական կարգաւ **միանալով** առաջադրինք՝ մին-չեւ մեր օրերը : — Խաղխաղէն յետոյ կարգը ԹՈՒՐՔԻՈՅ կու գար, այսինքն անոր մայրաքա-ղաքին, ուկից առնելով 1567 թուականէն : Եւ երբ **Կ. Պոլիսը** (Բ. Դյուխ) մինչեւ 1912 թուա-կան պատկերացուցինք՝ կեդրոնին եւ արուարձաններուն մէջ Հայ Մամուլին դարէ դար եռեւեփ առած գործունէութեամբ, իսկի եղաւ անոր միքանիայ եւ նեղ.ասր գաւառներն ալ միասին առ-նել, այդ միեւնոյն Դյուխին տակ կապուցած ըլլալու համար **Թուրքիոյ բաժինը** : — Ծրա-գրուած այս ուղղութեան համեմատ, Թուրքիայէն անմիջապէս վերջ անցանք ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ, վասն զի 1616ին հոն կը համդիպինք **Իլվօվ** քաղաքին (**Լէմպէրկ**), որով այդ երկիրն ալ (Գ. Դյուխ) գալէնով մինչեւ մեր օրերը բերինք կապել՝ **Լէմպէրկի, Թրիէսթէի** եւ հասկ ուրեմն **Վիէննայի** Մխիթարեանց գալուստ ու տպարանի տպարաններով : — Հանդե-սատամ մը ՖՐԱՆՍԱ (Դ. Դյուխ). չէ՞ մի որ 1633ին կ'ունենանք **Մարսէյլ** հայերէն գիրքի մը հրատարակութեամբ, որով սկսաւ եղաւ Ֆրանսան ալ իր բաժին մը քաղաքներով ներկայացու-նել : — Եւ այսպէս, **մինչ սկզբնական թուականին եւ երկիրի դասաւորման դրու-թեամբ**, չընկցանք երկիրէ երկիր, անհնարինէ՞ր որ Հայ Մամուլը ծնունդ էր եւ հոյ չարժման տառերը գործածութեան դրուած էին՝ կարճ կամ երկար տեւողութեամբ :

* * Դարերէ ու տարիներէ հետէ անհետացած հոյ տպագրիչներու կենսագրական գծերը քաղելու համար լուսոյն եւ փակուական աղբիւր կը ներկայանան մեզ՝ իրենց դրոշմած գիրքերուն եւս գետեղուած ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆները : Ասոնցմէ՛ է որ ըմբռնցաք կ'իմանալ 1. Որո՛ւն **եկեղեցա-կութեամբ** եւ կամ **արդեամբ** տպագրուելը, 2. Փորձերը նոյնին, տպարանատեանին, գրաշարին եւ այլ օգնականներու անուանցը հետ՝ ո՛ւր ենելայի եւ որո՛նց գաւառ ըլլալնին, 3. Դործը գլուխ հանե-լու համար քաշած նեղութիւնին, 4. Տարի եւ երբեմն ալ տեւողութիւն տպագրութեան, 5. Անու-նները կարողկլածներու կամ պատրիարքներու որոնց օրով լոյս եկած են նոյն մատեանները, վերջա-պէս քիչ շատ ամէն ինչ որ կրնայ չահագրգռել բանասէրը : — Դիտելի է որ մեր հին տպագրիչնե-րէն շատեր Նարեկացիին համգամանքով՝ աստղական խոնարհամտութեամբ մը ուզած են իրե-զնինքնին կոչել **մեղաւոր, բազմամեղ եւ ամենեցուն ծառայ, անիմաստ, անպիտան, չնչին, տրուպ** եւն. եւն. : Յետոյ, այս անտեղի ածականներուն խմատր կարծես մեղմելու դի-տումով՝ անոնք իրենց անուններուն կցած են երբեմն **դպիր**, երբեմն ալ **տիրացու** բառերը՝ համազօր «ուսումնասէր»ի, «ուսումնական»ի, քիչ շատ «կարդալ-գրել գիտցող»ի : — Այդ Յի-շատակարաններուն մէջ Հայոց եւ Փրկչի թուականները հոյ տառերով նշանակուած են յանախ.

զոր օրինակ «ի թվին Հայոց ՌՃԾ» : Արդ, ՌՃԾ համազօր է 1150 ի, որուն վրայ պէտք է բարդել 551ը՝ Փրկչեան թուականը (1701) գտնելու համար : — Վաղնջական ժամանակներու մէջ ապրող մեր տպագրիչները բարեխառն (ուղղութը) հանգամանք մը նկատած են շատ անգամ տը-պարաննին յանձնել ժամի մը կամ սուրբի մը վերին պաշտպանութեան, այսպէս «ընդ հովանեաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ», կամ «բարեխօսութեամբ Ս. Մինասայ զօրավարին» են. : Հայուն թուոյ բարեպաշտութեան գաղափար սալացոյց կրնայ սեպուիլ այս պարագան ալ :

# ԳԼՈՒԽ Ա.

1512 էն սկսեալ

# ԻՏԱԼԻԱ

մինչեւ 1912

## ՎԵՆԵՏԻԿ (ՎԱՆԱՏԻԿ)

1. **Մեղապարտ Յակոբ.** — Վենետիկ, դասական բացառութեամբ՝ Ադրիականի այդ թագուհին, վաճառաշահ քաղաք մըն էր, միջին դարուն, Արեւելքի եւ Արեւմուտքի համար : Գեղարուեստից եւ արուեստներու հայրենիքն էր ան, ուսմ եւ վառարանը լուսաւորութեան եւ ազատութեան : Արդէն, Կիւթեմպերկէն առաջ, հոն կը տպագրուէին «խաղի թուղթ»եր փայտափորագրութեան դրութեամբ : Մեծ գիւտին՝ Գերմանիա գործադրութեան դրուելէն քառորդ դար վերջ, բազմաթիւ մամուլներու անիւներ հոլոված են այդ գեղեցիկ ոստանին մէջ՝ ընթրուոր գիրքեր ի լոյս ածելով : Միայն թէ երկրին կառավարութիւնը կ'ուզէր որ տեղացիներ մնային իբրեւ տպագրիչ, Խոտացի ըլլալուն՝ ամէն վստահութիւն վայելող : — Ռուբինեանց Հարստութեան օրով, Կիլիկիոյ հայերը Վենետիկցիներուն հետ ունէին սերտ յարաբերութիւն եւ Թրիստանի 1253 թուականէն ի վեր առեւտրով զբաղող սակաւաթիւ Հայ Գաղութ մը գոյութիւն ունէր հոն, մինչեւ նաեւ Մառքօ Ծիանի անուն հայասէր Իտալացիի մը բարեպաշտութեամբը կառուցած Հայոց Տուն մը՝ իբրեւ իջեւան համազգի պանդուխտներու : Ասոնցմէ մէկն էր ապահովաբար՝ ինքզինք **Մեղապարտ** կոչող ՅԱԿՈԲ անուն անձ մը որ 1512 էն 1513՝ այդ քաղաքին մէջ լոյս ընծայեց **5 հատ հայերէն գիրք**, — նախախայրի՛քը հայկական տպագրութեան : Հայոց ՋԿԱ. թուին՝ ա. **Պարզատօմար** (առանց յիշատակարանի) : ՋԿԲ թուին՝ բ. **Պատարագատետր** («որ որ կարդայք, մեղաց թողութիւն խնդրեցէք ալ.» յիշատակարանով) : գ. **Ուրբաթագիրք** (առանց յիշատակարանի) : դ. **Տաղարան** (առանց յիշատակարանի) : ե. **Աղթարք** (առանց յիշատակարանի) : — Վենետիկ տպուած հայերէն այս 5 գիրքերն իրենց վրայ կը կրեն ներկայ տպանիշը : — Թէ ի՞նչ բան կ'ուզեն խաչաղբոշմի մը պարուրակէ պատուանդանին մէջ խմբուած լատին այս 4 տառերը, կարծիքները ցարդ այլընդայլոյ եղած են դժբախտաբար : «Հանդէս Ամսօրեայ» խօսք. տպագրիչներու քանի մը ~անուն



ՏՊԱՆԻՇ ՅԱԿՈԲԻ
Կարմրադեղով դրոշմուած

# ՀԵՐԵՋԵՄ ԷՋԵՐ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
## ԵՐԳՐԵՆԻԿ ՆՄՈՅՇՆԵՐԷՆ
### Վենետիկ (1512 — 3)





Առ քեզ, ՄԵՂԱՊԱՐՏ ՅԱԿՈԲ, կը վերընծայեմ իմ հիացումս ու պաշտումս՝ անխոնջութեանդ ծառայութեանց համար զոր չորս դար առաջ ըրիր մեզի մատուցիր Հայկեան սերունդին, ի տար աշխարհի կամովին պանդխտելով, հոն անձամբ և անձայն աշխատելով և Հայ տպագրութեան նախերախայրիքը տալով մեզ, իբր մասունք նուիրական մեր մտաւորական տաճարին: Հայ ազգը **մեղապարտ**ութեանդ համար **երախտապարտ** պիտի մնայ յաւէտ, և սիրով մականունի մը պէս՝ անուանդ լծուած այդ ածականն ալ պարտի այլեւս **բազմերախտի** վերածել անպայման:



✲

* * Հ. Գարեգին Ծ. Վ. Մենէվիշեան հաճեցաւ ներկայ էջերն իրենց Վիեննայի մատենադարանէն լուսանկարելով մեզ փոխադրել, առանց ընկերացնելով նամակ մըն ալ որմէ կ'արտագրեմ հետևեալ ուշագրաւ տողերը. «Առաջին (ՊԱՐԶԱՏՈՄԱՐ) թէև ոչ այնչափ «մաքուր, բայց իր **դեղին երեսներովը**՝ բովանդակ «Հայութեան **աղիտակերես** կը հանէ՝ գերութեան և «մարդկութեան առջև, քանի որ 62 տարի ետքը միայն՝ «Գուտենբերգի առաջին տպարանին (հաստատեալ 1450 «ին) փառաւոր մամուլից կ'ըսէ Հայութեան՝ իբր խօսուն «վկայ մեծաձայն հնչեցնելով, թէ գիտցած են Հայք օգ«տակարն ու շինականին՝ նոյն իսկ հեռաւոր տարագնացից ուղեկցութեամբ ձեռք անցընել»:

կը բաւէ, Antonio Ziroto. — I Zanandrea Asolano. — D. Zuan Matteo Asola. — Zuan Andrea որոնք այդ ժամանակամիջոցին մէջ իրենց տպարաններն ունէին ի Վենետիկ: Հ. Ակինեան «Հայ-Վենետ»ի մէջ կը յիշէ կու տայ Zuan Andreaի որ Ասոլացի նշանաւոր փորագրիչ-տպագրիչ մըն է եղեր: Իսկ Մարսիլիա հրատարակուող Arménia ի 29 Մայիս 1912 թուակիր համարին մէջ՝ Բարթեւեան Կ. Յ. Բաստամեան բանասէրը սոյնս կը մեկնէ առեղծուածը: D = Dei (servus) ծառայ Աստուծոյ: I = Iacobus (Յակոբ): Z = Zanni կամ Zuan (Յովհաննէս), ինչպէս Հայ-Հռոմ. բնագիրք մը, Ծանօթ: A = Armenius (Հայ): — Ով որ ալ ըլլայ այս «Մեղապարտ Յակոբ»ը, համոզուած է որ իր սեպհական տպարանը չէ ունեցած և վերոյիշեալ գիրքերը տպել տուած է օտարի մը գործարանին մէջ, — ծանօթ ըլլալով մեզ՝ տեղական կառավարութեան երբեմնի խստութիւնը՝ օտարներ ազգութեան եղող տպագրիչներու համար:




Նմանահանութիւն

Բովանդակութեան տեսակէտով մեծ բան մը չեն արժեր այս 5 գիրքերն ալ: **Պարզատօմար** ը (որուն 3 օրինակ կը գտնուին Վիեննայի Մխիթարեանց և Երուսաղէմի Յակոբեանց վանատուններ), փոքրադիր տպուած է, 59 թերթ, երկրորդ երեսով թուարկուած, տպագրութիւնը ծայրէ ի ծայր միօրինակ գիրով՝ մանր ու կանոնաւոր, սեւով և կարմիրով: Բաց ի պարզատօմարէն՝ կը պարունակէ «նշանացոյց», «կաղանդացոյց», «երազացոյց», «ծննդեան տղայոց» և «մարմնախաղաց»:

**Պատարագատետր** ը (մէկ օրինակ ունի Երուսաղէմ), 17 սանթիմ երկայն և 11 սմ. լայն՝ տպուած է, ամբողջովին մէկ տեսակ խոշոր ու տձեւ գիրով, կրկնագոյն, **ս և ո** տառերն ուրեք ուրեք իրարու տեղ գործածուած, քանի մը պատկերներով, 44 թուղթ, երկրորդն ալ երեսով թուարկուած (*):

**Ուրբաթագիրք**, կրկնագոյն, 2 մասի բաժնուած, «Սուրբ Ուրբաթ» և «Աղօթք Կիպրիանոսի», ընդ ամէնը 24 թուղթ: Աղաւաղուած աղօթքներով, յաւուրքներով, ծռուած Վեցհազարեակով և գեռ. խել մը պառաւաշունչ ըմբռնումներով խճողուած աղօթքի մատեան մը որ ա՛յսչափ կ'ըլլայ: Փաստ-փաստ մը տալու համար, «Ուրբաթագիրք»էն բարգմանաբար հատուած մը նկարագրութենք հոս. — «Ամէն տեսակ ձեռ (գան) ի «մասին գրուածք: Ա՛ռ. պղպղուն դանակ «մը և 3 գամ, ստանցմով խաչակնքէ՛ (?) «վէրքին վրայ և աղօթքներ ըսէ՛» . . . :

**Տաղարան** ը (2 օրինակ Երուսաղէմ, 1 օրինակ ալ Պալեան Տրդատ Ե.ի քով) կը բո-

(*) **Պատարագատետր**ին է մանր. եւ **Պատարագամատոյց** եւ **Խորհրդատետր**՝ որոնցմէ զանազան ձեւով հրատարակուած են հետեւեալները. — ՊՈԼԻՍ 1568, 1706, 1748, 1787, 1844: ՀՌՈՄ 1642, 1677, 1777: ՎԵՆԵՏԻԿ 1686, 1690, 1741, 1809, 1823, 1826, 1832, 1854: ԻԶՄԻՐ 1761: ՆԱԽԻՋԵՒԱՆ 1794: ԹԻՖԼԻՍ 1803: ԵՐՈՒՍԱՂԷՄ 1841, 1873, 1884: ՎԻԵՆՆԱ 1858, 1879, 1904: ԷՋՄԻԱԾԻՆ 1873: եւն. եւն.: — Նաեւ 1863ին արեւմտեան արուեստը սորվելու համար երբ Եւրոպա կ'անցնի Ածատուրեան Եսայի Վրդ. եւ Լոնտոնի մէջ հայ մատուռ մը կը հաստատէ, «Պատարագամատոյց»ը թարգմանելով անգլիերէնի՝ կը հրատարակէ հայերէն բնագրին հետ:

վանդակէ. ինչ ինչ աշուղական քերթուածներ Յովհ. Թլկուրանցիի, Նաղաշի, Յրկանի, Գրիգոր վարդապետի և Ներսէս կաթողիկոսի, (վերջինս՝ 137 տանկով, գրոտանքի համար): Տողերուն սկիզբը զետեղուած են կիսախորան զարդեր:

**Աղթարք** (2 օրինակ Վենետիկի Մխիթարեանց և Կեսարիոյ Ս. Կարապետի վանքերը), 24 ութածալ թերթ (296 էջ) այբուբենով թուադրուած, կրկնագոյն, 16 սմ. երկայն և 10 լայն: Կը բովանդակէ մնապաշտիկ սովորոյթներ, գուշակութեան աղօթք գրուածներ, արանց և կանանց նկարագիրները որոշող մասեր՝ համեմատ այն կենդանակերպերուն որոնց տակ ծնած են անոնք, նաև կենդանակամարի պատկեր մը՝ Զոդիակոսի նշաններով, տարեցոյց (տանուտերացոյց), ամսացոյց, երազահան և խառնախորհուրդ մը, հուսկ ուրեմն բժշկարան մը (հարիւրաւոր Գալիանոս բժիշկէն:

* * Հայ Մատենագրութեան ինչ բանկագին ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլար «Մեղապարտ» այս Յակոբը, եթէ հակական աղագրութիւն սորվեցնող այդ օրերուն կարենար ձեռք անցունել, զոր օրինակ, Հայկի սերնդեան ծագումն ու պատմութիւնն հառող մէկ քանի ձեռագիր յուրջ երկեր և զայն անդարձ կորուստէ փրկելով՝ փոխանակեր այս կարէ-կարօտ, աղճատ և աղկաղկ գործերուն հետ:

24. **Աբգար Դպիր**.— Էջմիածնի պատրիարքական կեղեքումներէ նեղուած կաթողիկոսն Միքայէլ Ա. Սեբաստացի՝ երբ առժամաբար իր ծննդավայրը կ՚ուղեւորի, եկեղեցականներէ ժողով կը գումարէ, որ կ՚որոշէ Սեւերեկին քաղաքացին սերունդէն ԱԲԳԱՐ ԴՊԻՐԸ (այլ անուամբ Սաֆար կամ Աֆեր) զաւկին և քահանայի մը ընկերակցութեամբ Հռոմ ուղարկել ընծաներով, Պապէն օգնութիւն խնդրելու համար: Նուիրակութիւնը հազիւ 2 տարիէն՝ 1564ին հոն կը հասնի և սիրալիր ընդունելութեան մը կ՚արժանանայ Պիոս Դ.էն որ յատուկ բնակարան մը կը շնորհէ անոր: Աբգար սակայն Պապէն հրաժեշտ կ՚առնէ՝ Հայոց Հայրապետը Հռոմ հրաւիրելու, որպէս զի երես առ երես կարենան տեսնուիլ և զարման մը խորհիլ փարատման Հայութեան զարտերուն: Այս համբերութեան համար Աբգար՝ Պապէն որոշուած ուղեկից եկեղեցական մըն ալ ունէր հետը, զոր Կիպրոս կը ղրկէ Վենետիկ հասնելուն, իրեն օգտակար համար: Վերջինս կը մեռնի սակայն նոյն կղզին: Միեւնոյն ատեն Աբգար կ՚իմանայ թէ Թուրքերը հասած եղեր են իր հայրենիքը: Այս պարագան կը պատճառէ զինք, ինչու որ մտադիր էր Կ. Պոլիս անցնիլ: Կը մնար իրեն՝ տպարան կազմել քանի մը տառ գործին, որպէս զի Թուրքիա տալ կոխելուն կարենար ի հարկին տպագրութեան թէ Եւրոպա իր դեգերումի ձեռքէ եր ազգային-քաղաքական որ և է համգամանքէ:



ԱԲԳԱՐ ԴՊԻՐ Աբգարի որդին ՍՈՒԼԹԱՆՇԱՀ
(Սոյն պատկերները նախօրինակին վրայէն կենդանացուցած է Դ. Սրապեան, Վ. Զարդարեանի «Յիշատակարան»ին համար):

**Տպագրութեան առնելու էն փրկարար յերիւրանքը կը-նար ըլլալ**: Այս առաջադրութեամբ, 1565ին (այսինքն միեւնոյն քաղաքը «Մեղապարտ Յակոբ»ի տպագրական գործունէութենէն 52 տարի վերջ) կ՚աջողի տպել միայերբ մեծադիր օրացոյց մը **Խուռնայ փնրու տումարի, գեղեցիկ եւ պիտանի** խորագիրով որ Հայոց առաջին օրացոյցն է տպագիր, իր յորջորջմին պէս «խառնախորհուրդ», տարեն պարունակելով քանի մը տարիներու յունային խառապումները ալ: Ասոր կը յաջորդէ **Սաղմոսարան** մը, որուն մէկ օրինակ կը գտնուի ցարդ Ամբրոսիանեան մատենադարանը (Միլան): Ինչ տառեց տառերը նախորոք պատրաստել տուած էր Հռոմ, Պապին ձեռնտուութեամբ: Իր որդին Սուլթանշահ՝ հօրը

բացակայութեամբ կ'որդեգրուի Պապին կողմէ որ անոր անձնիկ կոչումը «Մարք-Անտոն»ի կը վերածէ՝ ուսումնեցի զօրավարի մը անունը, նաև բաշակ կը յանձնուի անոր: Աբգարորդին նոր յառնելենի և ուսման մէջ քաջ յառաջդիմելով՝ բարձր պաշտօններու կը կոչուի և շնորհաւոր զարդական ազգակիցներու օժանդակել սորվեցաւ: Այս անձն էր որ վերջէն Էջմիածնայ Թադէոս կաթողիկոսին ընդարձակ նամակ մը յղած է, (զոր Գ. Զարդարեան իր 1911 ի «Յիշատակարան»ին մէջ նմանահանութեամբ զետեղեց), պատմող՝ իր գործունէութիւնը Հռոմի մէջ: Այդ գիրը սակայն չէ հասած Հայրապետին ձեռքը՝ նոյնին մահուանը, և կը գտնուի Անտոնեանց Միսիթարեանց մատենադարանը յՕրթաքէօյ: — Սողմոր հրատարակեան տարի մը վերջ՝ Հաւատաքննութիւնը սաստկացած էր Իտալիոյ մէջ, յաջորդող Պապին կրօն. անհերող ոգւոյն պատճառաւ: Աբգար հեռանալով որ անկարելի պիտի ըլլայ յաստորչական նոյնկեղ. գիրքեր լոյս ընծայել նոր՝ զայն առանց ներարկելու լատին կղերին գրաքննութեան, կը մտադրէ Կ. Պոլիս անցնիլ՝ ազատ գործելու համար: Իտալիայէն իր հեռանալուն մասին յայտնուած կարծիքներն այս երկրորդին ալ արձագանք կ'ըլլան, աչքի առջև ունենալով առաջին առթին Պոլիս հրատարակած անոր գիրքերը որոնք չծոցող կու զան այս վերջին վարկածին: — ԹՈԽՐԹԻՆՑ բանին մէջ արձանագրած ենք շարունակութիւնը Սուլթան Աբգարի տպագրական գործունէութեան:




ԱԲԳԱՐ ԴՊԻՐ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆ ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՆ
(իրենց տպած «Սաղմոսարան»ին էջ մը)

3Ա. **Տէրզնցի Յովհաննէս** **քահանայ եւ իր հաւասար զաւակը**. — Յովհաննէս ծնած է Տիգրանակերտ (Ամիդ), որդի Խանէսի ու Մարիամի: 1583 ին Հռոմ կը մեկնի, ուր և չքաւոր վիճակի մէջ՝ իր զաւակներէն Խաչատուրի հետ: Հոն կը ծանօթանայ Աբգարորդին Սուլթանշահի, որուն հետ ընկերանալով 1584 ին Dominici Basal խաղ. տպարանը կը դրօշմէ **Տօմար Գրիգորեանն յաւիտենական**, որ թարգմանութիւնն էր Յուլեան նոր տոմարին տեղ՝ Գրիգոր ԺԳ. Պապին լատին լեզուով հեղինակածին: Այս գիրքին մէջ հեղա-

գրքերական տողեր չեն պակսիր տպագրիչին կողմէ. «Մի՛ մեղադրէք, եղբարք, զի առաջին արուեստն է», այսպէս՝ «զրեցաւ իրս զնուշիկն զորդիական քիչեցէք ի Տէր», նաև «Եւ զանձամբ աշխատողս զաւէր Յովհաննէս Տէրզնցիս»: Գրիգորեան Տումարը կը պարունակէ նաև Ընթերցուած պատկեր մը՝ երկաթուան տառաբեկորներով: Տպագրութիւնը 1586ին աւարտած է: Խաչատուր քեռայրիչն էր հոր ձեռնարկած այդ գործին: — Այս մէկ նորոգող՝ Կիւրէմելի արուեստ գործադրած ընդուն փոխարին համար՝ Տ. Յովհաննէս կ'ուզէ հայրենի վերադառնալ. սակայն չզիջանիր ինչ պատճառ կը ձերբակալուի և բանտ կը դրուի. ազդեցիկ իր նոր արդեան արուեստ զաղափարեա Հայաստան տանելու նպատակը մը կուանած էր անդադար կառավարութեան: Բայց ասոնց արձակուելով՝ անիկա իրաւունք կ'առնայ Վենետիկի մէջ ապառ գործելու: Հոն է որ 1587ին կը տպէ **Սաղմոսարան** մը (ըստ հավաքածու Մարկոս Աւետարանչին): Ներկայ պատկերս արտագրուած է նոյն գիրքէն՝ որուն յիշատակարանին մէջ այլոց կը տեղեկանանք թէ ձեռնտու զանուած է իրեն՝ Բաղէշցի Կարապետ և թէ իր հանգուցեալ երեցկինը կը կոչուէր Խանփաշա: — Տէրզնցին երբ 1583ին Հռոմ կը գտնուէր՝ բազմամասեր հրատարակած է Երուսաղէմի Դուռ իր Պատրիարքին ուղղած իր ընդարձակ թուղթը: — Ինք Վենետիկէն Մարսիլիա անցած է և հայացուցած Le Chevalier Paris et la belle Vienne վէպը չափաբերեալ:



ՏՊԱԳՐԻՉ ՏԵՐԶՆՑԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՆ
ԻՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԶԱՒԿԻՆ ՀԵՏ

4. **Յովհաննէս Անկիւրացի** — [illegible] Գաղատացի. հայրն էր Մուրատ սարկաւագ և մայրը՝ Փաշամելիք. ունէր 2 զաւակ, Միքայէլ և Գաբրիէլ: — Արտաքին Կարողիկոս մեծ սէր կը տածէր տպագրական արուեստին մասին, որուն սակայն չկրցաւ հմտանալ. Իր աշակերտին՝ Կեսարիոյ «բարունակեան» Գրիգորի առաջարկեց որ Հռոմ երթայ նոյն արուեստին, և երբ այս վերջինս ալ չյաջողեցաւ, հայրապետը յանձնարարեց Յովհ. Անկիւրացիի որ կարելին ընէ՝ նպատակին հասնելու համար: Յովհաննէս քիչ շատ հմուտ էր եւրոպական լեզուներու, ուստի 1637ին փութաց քայլերով կ'ուղեւորի Հռոմ, Հայ ազգին մէջ տպագրուած Ս. Գիրք տարածելու առաջադրութեամբ, վասն զի ձեռագիրներ շատ հազուագիւտ էին: Չորս տարի կը մնայ հոն և յանձնառու անէն տառապանքի՝ կ'աջողի վերջապէս չինել հայերէն տառերու պղպջակ կաղապարներ: Շնորհիւ իր լեզուագիտութեան՝ յարգուած է տեղացիներէ և անոնցմէ յորջորջուած **Հօվաննի Մօլինօ**: Իր յօրինած տառերը Վենետիկ փոխադրելով՝ ձեռնամուխ կ'ըլլայ Աստուածաշունչի տպագրութեան, բայց իր զօրաւոր մասղրութիւնը մատամբ միայն կրնայ իրագործել 1642ին «մեծաւորաց հրամանաւ և բրխխկէնով» լոյս ընծայելով **Սաղմոս ի Դուռ իր** գիրքը, որ կը պարունակէ Սաղմոսերգութին, Բարեխօսի Երից Մանկանց, Ս. Կոյսին, Մանասէի և Ն. Շնորհալիի պատկերները՝ մաքուր փորագրութեամբ: Ինք մեծ խնամք տարած է գիրերուն ձևին, շարուածքին, մելանին, թուղթին, ծաղկագիրներուն, պատկերներուն և անոնց կապուածքին, մանաւանդ բնագիրին ճշդապատութեան համար և իրեն օգնական գրաշար ունեցած է 12 տարու Յովսէփ անուն տղայ մը: Տպագրութիւնը կատարուած է ՍԱՂԻԳԱԹԱՌ լոյսի մը մամուլով: — Յաջորդ տարին Յովհաննէսի միևնոյն քաղաքը տպած գիրքը կ'ըլլայ **Ցիսուս Որդին**՝ Շնորհալիէն քանի մը տամեսորներով. իբրև տիպ՝ առաջինէն բառեր, պատկերազարդ և 2 տեսակ գիրով: — Այս գիրքերուն հրատարակութեան ձեռնտու զանուած են Յովսէփ [illegible] մը և [illegible] մը, երկուքն ալ ազգաւ յոյն. իսկ փորձերու սրբագրութեան հսկած է Տարէնացի Մ'նու. Աստուածատուր:

5. **Ջուան Պաթիսթա Պօվիս** — Ազգաս լսածն, ըստ Վենետիկցի այս նայասէր ստարազգին արուեստը լոկ ինքնօգնութեամբ սորված՝ «առ. ի պայծառութիւն Ազգին Հայոց» 17 տարի վերջ, 1660 ին, կրկին կը տպագրէ **Յիսուս Որդին**՝ Յովհ. Անկիւրացիի օրինակին հետեւելով: Մէջի պատկերներէն հետաքրքրական է վեղարով վարդապետ մը որ ամպերուն բարձրացած՝ կը քարոզէ խուռն բազմութեան մը: Ճ. Պարիսա իր Յիշատակարանին մէջ ներողութիւն կը խնդրէ ընթերցողէն՝ սպրդած սխալներու համար, որովհետեւ հայերէն ընտ չէր գիտեր, և փորձերու սրբագրիչ ունեցած էր Ջուղայեցի Տ. Ստեփանոսի որդի Եղիազար ա-ղան, իսկ գրաշար՝ Ստեփան անուն հայ տղայ մը «որ շատ աշխատեցաւ և օգնութիւն արար այս արհեստիս ի սրբագրելն և ի շարելն»: — Իր տպանիշը եղած է եզ մը, աղեղ մը և 3 աստղ:

6. **Միքէլ Անճէլօ Պառպօնի** — Այս և յաջորդ Իտալացի տպագրիչներ սկսան անպայման շատ դիւրաւ գործել. փոքր տարին իրենց տպարանները ճոխացուցին Մեսրոպեան տառերով ալ, և հրատարակեցին մեծամասնութեամբ տպագրուած կրօն. գիրքեր որոնք Կաթոլիկ դաւանանքը Լուսաւորչական Հայոց ճանչցնելու գործը պիտի դիւրացնէին... : Ու այդ՝ անէն ջանադրութիւն անպակաս կ'ընէին արդէն յաջորդակի Հռոմի քահանայապետներ, որոնք հիմնեցին նաև հայերէն տառերով ուրոյն տպարաններ, և անէն ալ որ Հայ կար՝ տարածել ջանացին իրենց «ուղղափառ»ութիւնը: «Հաւատոյ Տարածման Ս. Ժողով»ն իր հաստատութեան գործունէութեան, այսինքն կրօնական մարդորսութեանը վրայ էր անվերապահ կերպով, հիմնելով «Բռօբականտա Ֆիտէ» համանուն տպարանը: — Մ. Պառպօն տպագրած է 1671 ին **Տօնացոյց** մը, 1680 ին **Աւետարան** և **Հայելի Բանաւորութեան**, 1681 ին **Ժամագիրք համառօտեալ**, 1682 ին **Սաղմոս**, 1685 ին **Բուրաստան Աղօթից**, **Նարագոյն ծաղիկ զօրութեան**, **Աւետարան** (Բ. տիպ, համառօտեալ), 1690 ին **Դպրութեան գիրք**, **Խորհրդատետր**, **Հաւատոյ խոստովանութիւն**: — Իր տպանիշը եղած է մակառնանին համանման 2 ձուկ: — **Աւետարանը** տպուած է «հրամանաւ սանր՝ Օֆիցին» ? « . . . ի վեհապետութեան եկեղեցւոյն Քրիստոսի Իննոչէնցիոսի ամենասրբոյի, և ի հայրապետութեան տեառն Յակոբայ Սրբազնի Կաթողիկոսին Հայկազանց»: — Michiel Angelo Barboni :

7Ա. **Թադէոս Կիրեց Համազասպեան** — Տարաբախտ Ոսկան վարդապետի քաղաքէն՝ Երեւանէն էր ինք, ամոր հետ Եւրոպա ճամբորդած և գործակից ըլլալով անոր՝ ցոյց տուած այնպիսի սոր անհաստատութիւններ որոնք տպարանին փճացումն ու Ոսկանի մահը փութացուցին հաւկ ապա: Պիտի անդրադառնանք այս չքաւորութեան՝ ՖՐԱՆՍԱՅԻ բաժինին մէջ: — Թադէոս Մարսիլիայէն Վենետիկ անցած է՝ միտքին առնելով հոնտ անձերէ սրբագրուած Տօնացոյց մը և քանի մը ձեռք ճաշոց: Վենետիկի մէջ ՍԱՀՐԱՏԵԱՆ ԳԱՍՊԱՐի կ'ընկերանայ և կը բանայ տպարան մը 2 տեսակ նորաձոյլ տառերով. հոն է որ կը տպէ **Խորհրդատետր** մը և ճաշոց գիրքը 1686ին «ի տպարանի Ջուղայեցի Խօճայ Սահրատենց Տանն Տաճիկեանեան»:

8. **Պրն. Գասպար Սահրատեան** — Ջուղայեցի Խօճայ Սահրատի որդին էր Գասպար՝ Տաճիկեանեան հանրածանօթ գերդաստանէն: Բնակելով Թադէոս Երէցէն՝ 1687 ին Ճ. Մօրէլլիի մամուլով և իր արդեամբը կը տպէ **Խորհուրդ Քրիստոնէական** (224 եջ, [illegible] միջակ գիր, մաքուր տիպ, բայց [illegible]), «ի տպարանի Տեառն Սահրատեան . . . Տպագրեցաւ խնդրանօք Խօճայ Սահրատի որդւոյ Պարոն Մուրատին»: — Պրն. Գասպարի որդիներն էին Աղայ Ստեփան, Սահրատ և Բարսեղ:

9. **Հաճատեր Գուլնազար** — Ծնած է 1629ին Ագուլիսի մէջ և սոսր համար «Ագուլեցի» կոչուած : Մեռած է 1 Յունվար 1695ին : Վենետիկ : Հայոց լուսաւորութեան գործին իբր մեկենաս փառաւոր ծախսած է : Վայելուչ գիրեր ձուլել տալով Վենետիկ կը հիմնէ տպարան մը 1687ին ու նոյն տարին լոյս կ'ընծայէ **Պարզաբանութիւն Սաղմոսացը** Գօլոնցի Յովհաննէս վրդ.ի ձեռամբ : Այդ գիրքին արտագրուած է իր կենդանագիր որ ժամանակին տպագր ցոյց կու տայ : Հայրենակից Մ՛ա. Աստուածատուր որ իր աշխատութեամբ էր՝ մեծ ջանք տարած է նոյն տարպանին կազմակերպութեան և փորձերու սրբագրիչը եղած է :



ԱԳՈՒԼԵՑԻ ԳՈՒԼՆԱԶԱՐ ՆԱԶԱՊԵՏ
Տպագրիչ ի Վենետիկ

10. **Ճիագօմօ Մօռէթթի** — 1687ին տպած է Յովհ. Հոլով վրդ.ի **Պատասխանատուութիւնք** անուն վիճաբանական գիրքը : — Հ. Գուգիաստեան իր ձեռագիր ցուցակին մէջ «Սաղմոսարան» մըն ալ կը յիշատակէ, 1685ին այս Իտալացիին տպարանէն լոյս ընծայուած :

11. **Անտօն Բօռթօլի** — Վենետիկցի իտալ. տպագրիչներէն հայ գիրքերու հրատարակութեամբ զբաղող այս անձին գործունէութիւնը ընդլայն ու տիրապետող եղած է, 1695ին սկսած ու մինչև 1777 շարունակուած, նոյն իսկ Մխիթարեանց տպարանին բացումէն ալ յետոյ : Պօռթօլի ընդունայն մաքառած է՝ անոնցը խափանելու համար, որովհետև 1789ին Աբրահամը պաշտօնապէս կ'արտօնուէր Ս. Ղազարի մէջ սեփական տպարան մը հիմնելու : — Պօռթօլիի մամուլէն ելած հայերէն գիրքերն են (1695 - 1777) բաւական կարգաւ. — Դաշանց թուղթ, Տօմարաց գիրք, Պարոնէզ հոգևոր (քարոզ), Ժամագիրք(ներ), Ժամերգութիւն մեկնեալ, Քրիստոնէական(ներ), Նոր կտակարան(ներ), Համառօտ խոստովանութիւն, Սաղմոս(ներ), Պրէվիար (Լատ. թրգմ.), Գիրք քրիստ. վարդապետութեան (Մխիթարի Ա. գիրքը 1715), Համառօտ Աստուածաբանութիւն Ալպերտի (Մխիթարի Բ. գիրքը), Կրր. աղօթից, Տարական, Գիրք մաղթանաց, Առաքինութեանց, Աղբիւր բարի, Հոգևոր պարզմ., Մեկնութիւն «Հայր մեր»ի, Վարք Ս. Յովհաննէսի, Խոստովանարան Թովմ. Ագուինացւոյն, Խրատ զգօնան, Տաղարան, Քերականութիւն(ներ), Դաշտիկ ծաղկաքի, Ակն հոգւոյ, Աստուածաբանութիւն(ներ), Մեկնութիւն (Ժողովողի, նաև Աւետարանի), Գիրք ակնկէն և բուրգք քաղցրալուրք, Խորհրդատետր(ներ), Կրթութիւն կատարելութեան, Քաղաքայ համբակագոյն, Տոմար(ներ), Էֆիմէրիտ., Բառգիրք Հայկազեան (1749), Վարժումն կատարելութեան, Գիրք օրինակաց, Ճշմարտութիւն յաւիտենական, Պատմ. վարուց Ոսկեբերանի, Ազգաբանութիւն տանն Յաբեթեան Մովս. Խորենացւոյ, Աշխարհագրութիւն, Կերակուր քահանայից, Արհեստ փրկութեան, Ժամանակաց, Երգք հոգևորք, ևն. ևն. :

12. **Ճուանի Բյաշօ** — 1719ին տպած է 2 գիրք, **Խոկումն Քրիստոնէական** և **Պարտէզ** (Դ. տիպ) : — Իր տպարանը հիմնուած է արդեամբ Ճօրճի Ռիցցի = (Գէորգ Գաշեան) : — Ա. գիրքը թարգմանութիւնն է Գօլոնցի Յովհաննէս Վրդ.ի :

13. **Բաթթիսթա Ալպրիցցի Ճեռօլիմօ.** — 1729ին տպած է «Գիրք երանելոյն Ալբերտի որ կոչի **Դրախտ հոգւոյ**» զոր լատիներէն թարգմանած են Մխիթար Աբբայ և հայրենակից իր սանը Յովհաննէս. իսկ յաջորդ տարին **Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի**, հեղինակ Մխիթար Աբբայ:

14. **Ստեփաննոս Որլանտեան.** — 1750ին տպած է **Լոյս ժամանակի** (հեղինակ Յովհ. Եւսեբիոս Նիրէմբերգեանց՝ Յիսուսեան, լատիներէն թրգմ. Անգի Զաքարիա վրդ.), **Այբբենարան**, 1751ին **Փիլիսոփայութիւն** 4 հատոր, թրգմ. Հ. Վրթ. Ասկերեանց, 1752ին **Նոր Կտակարան**, **Պարտէզ հոգեւոր**, **Ժամագիրք**, **Աւետարան**, 1753ին **Դժոխք բացեալ**, **Ձայն Տեառ. ի եւ հաւատացեալ հոգւոյն**, **Խոկումն վարուց**, **Վարդարանի աղօթք**, 1759ին **Ընտանեկան պատասխանիք ընդդէմ կրօնի**, 1763ին **Կանոն աղօթից Սրբոյն Նարեկայ**:


IN VENETIA, Per Naabiet de Gulnasar. 1687.
Con licenza de' Superiori, e Priuilegio.

ՎԵՆԵՏԻԿ, ԱԳՈՒԼԵՑԻ ՆԱՀԱՊԵՏ ԳՈՒԼՆԱԶԱՐԻ տպարանէն 1687ին լոյս ընծայուած մէկ գիրքին Ա. էջը

15. **Դեմետր Թէոդոսեան.** — Մխիթարեանք երբ ունեցան իրենց հայերէն տառերը՝ չուզեցին Ա. Պօրթօլի տպարանին կապուած մնալ և իրենց Միաբանութեան գիրքերը սկսան փոխն ի փոխ տալ տպ. Թէոդոսեանի, Վալվազեանի և Փիացեանի ձեռօք, մինչև իրենց սեփական տպարանին հաստատութիւնը: — Դեմետր 1772ին տպած է **Երգութիւն աղօթից**, **Գիրք երգոց**, **Առաքինութեանց** (Պետրոս Արագոնացի), **Պարտէզ**, 1773ին **Գիրք մալութեանց**, 1774ին **Քերականութիւն լատ. լեզուի**, 1775ին **Խորհուրդ Աստուածպաշտութեան**, **Քրիստ. վարդապետութիւն**, **Ճառասանութիւն**, **Հիւանդ բարեպաշտութեանց Ս. Ա.Ծ.ածնի**, 1776ին **Նոր Կտակարան**, 1777ին **Քերականութիւն Հայկազեան**, **Խրատ յաղագս կրօն. կատարելութեան**, 1781ին **Աղօթամատոյց Ս. Եփրեմեայ**, **Վարդարանի աղօթք**, 1782ին **Մեծանշենուոր Պարգասուոր**, **Տօնացոյց**, **Սաղմոս**:

16. **Պետրոս Վալվազեան.** — 1784-5ին տպած է Չամչեանի հռչակաւոր գործին 2 հատորները՝ **Պատմութիւն Հայոց** (Շահրիմանեանց երկու եղբայրներուն՝ Յովսէփի և Զաքարի ծախքով), նաև **Ակն հոգւոյ**, **Պարտէզ**, **Սպասաւորութիւն Ս. Պատարագի**:

17. **Յովհ. Փիւզեան.** — 1786 ին տպած է Զամչեանի **Հայոց Պատմութեան** Գ. հատորը, **Սաղմոս, Թովմա Կեմպացի, Տօմար Եւսեբեան, Աստուածաբանութիւն** (Ներսէս Լամբրոնացի) 1787, բովանդակելով Քս.ի Համբարձման և Հոգին Սուրբի Գալստեան ճառերը:

18. **Մխիթարեանք Վենետիկոյ.** — Հիմնադիրն է ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ, ծնած Սվազ 7 Փետր. 1676 ին, Պետրոս և Շահրիստան համեստ ամոլէն: 1691 ին անդրանիկ Ս. Խաչ վանքը կը մտնէ՝ նոյն տարին սարկաւագութեան աստիճան առնելով, և փոխան **Մանուկի՝ Մխիթար** անուանակոչուելով: Կանուխէն զարգանալով բնութեամբ՝ կ'անցնի անվեհեր Սեւան (Էջմիածին) և յետոյ իր ուղեւորութեան՝ յարաբերութեան մէջ կը մտնէ լատին կրօնաւորներու հետ **որոնք իրեն կը ծանօթացնեն Եւրոպան ու հարդիկութիւնը**: Սակայն աննրպաստ պարագաներ խոչընդոտ կ'ըլլան իր սրբազան գործակցութեան, որով կ'առնուի դառնալ ծննդավայր՝ ուր վարդապետ կը ձեռնադրուի 20 տարեկանին: Իր քարոզներէն զգացողներուն պատճառաւ կու գայ Պոլիս և Ս. Լուսաւորիչ եկեղեցին (Գալաթիա) կ'սկսի քարոզել, յետոյ Սեւ Ծովու ճամբով կ'ուղեւորի մինչեւ Կարին, անհնարին վարդապետելով: Պոլիս դարձին՝ հալածանքը կ'սկսի իրեն դէմ Լուսաւորչական Հայերէ: 1701 ին Ծերս կը հաստատէ և հանձնեց աշակերտներու հետ սկիզբը կը դնէ իր Միաբանութեան՝ Սեպտ. 8 ին: Հոն է որ (ի բաղն Պէկօղլի) **կրօն. զիրենք սքել կուտայ** ու կ'սկսի տարածել զանոնք, մինչեւ որ օրուան Պատրիարքները — Դամասցի Եփրեմ, ապա Աւետիք — բուռն հալածանքով կը դառնան իրեն: Մխիթար Վրդ. կ'առնուի ապաստանիլ Դալարիոյ Յիսուսեանց վանքը, յետոյ Եւրոպի Բարուչիններու մենաստանը: Եղած հալածանքներէն ճարահատ՝ իր աշակերտներուն հետ ծպտելով նաւ կը նստի ու կը քաշուի Մօրէա (Յունաստան), Մէթոնի մէջ կը հաստատէ իր Միաբանութիւնը 1706 ին: 6 տարի ետք՝ Կղեմէս ԺԱ. «աբբայ» տիտղոսը կը շնորհէ իրեն: 1715 ին կը հարկադրուի հոնկէ գալ ի Տօսկերու քաղաքը մեկնիլ իր աշակերտներուն մեծ մասին հետ, արշաւանքին հետեւանօք թուրք զօրաց որոնք իր մենաստանը կը կործանեն: Վենետիկի մէջ, 1717 Սեպտ. ամսուն, Ծերակոյտին հրովարտակով իրեն կը շնորհուի «կարմիր կղզի»ն՝ Ս. Ղազարն ուր վանք ու ժամ կը կառուցանէ, ինք՝ հիմնադրողի մը աներկիւղներուն վրայ: Կը վախճանի 27 Ապրիլ 1749 ին: — Այդ խաղաղաւէտ մենաստանին մէջ ապրած իր կեանքի վերջին 31 բեղմնաւոր տարիները նուիրեց ուսումնասիրութեան: Համօրէն Հայերս կոչելու ենք զինք՝ ոչ միայն հաստատուն Ուխտին, այլ և Հայ գրականութեան վերածնութեան հիմնադիրը, մեր «երկրորդ Լուսաւորիչ»ն ասանց այլեւայլի: Այդ ուսումնական մենաստանն էր որ ընծայեցին ա-



ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ ՍԵԲԱՍՏԱՑԻ

տոր հատկերը մեր Մատենագրութեան, — Հիւրմիւզ, Չամչեան, Աւգեր, Զախջախեան, Բագրատունի, Այվազովսքի, Ալիշան, Նուր-Պէյ, Սարուխան, Հնախօս, Դաղիկեան եւն. եւն.: Մխիթարի վերջ՝ Միաբանութեան առաջնորդութիւնը վարած են Պոլսեցին **Հ. Ստեփանոս Մելքոնեան**, որուն մահուամբ (4 Սեպտ. 1799) Ճուռճոմլեցին **Հ. Ստեփանոս Ագոնց**, որուն մահուամբ (24 Յունվ. 1824) Պոլսեցին **Հ. Սուքիաս Սոմալեան**, որուն մահուամբ (10 Փետր. 1848) Պոլսեցին **Հ. Գէորգ Հիւրմիւզ**, որուն մահուամբ (11 Ապր. 1876) Տրապիզոնցին **Հ. Իգնատիոս Կիւրեղեան** որ 36 տարիէ ի վեր կը շարունակէ իր հինգ նախորդներուն բազմարդիւն գործունէութիւնը: — ԱՒՍՏՐԻՈՅ բաժինին վերապահելով խօսիլ համառօտ Միաբանութեան Բ. ճիւղին բոլորած ըլլալուն գործունէութեան մասին, կը բաւականանանք **Ս. Ղազարու Տպարանին** վրայ ակնարկ մը ձգելով աստանօր: Մխիթար ի մասնաւորի մեծ զարկ տուած է հայկական տպագրութեան բարգաւաճման: Ինչպէս տեսանք յառաջագոյն, մինչեւ 1789՝ բոլոր միաբաններուն գործերը կը տպուէին Վենետիկ քաղաքը՝ Պօրթոլի եւ այլ Իտալացիներու տպարաններուն: Կառավարական հրաման՝ բազմերախտ Աբբահայրը կ'աջողի իր վանքին յատուկ Կիւրեմլէրլեան Տպարան ալ կանգնել **1788** ին: Յաջորդ տարին կը ձեռնարկուի տպագրութեան գործին, լոյս ընծայելով Ս. գիրքը՝ «Մեկնութիւն երգ երգոցին Սողոմոնի»: Սիւրմէլեան, Սամտարեան եւ Սօրկունեան Հարք կը սատարեն անոր կազմակերպութեան, մանաւանդ վերջինս որ ատեն մը Փրանսա ապրած եւ արուեստին տեղեկացած՝ իրենց տպարանը կ'օժտէ նորաձոյլ տառերով: 1823 ին նոյն հաստատութիւնը կ'ընդարձակուի ու կը կատարելագործուի Ճերմակեան եւ Բաջունի Հարց ջանքերով: Իսկ զարդիս օժտուած է ամ առաջնակարգ մամուլներով, կազմածներով, օտար տառերով եւն. եւ ատոնցմով հանդիսացած եւրոպական տիպար գործարան մը: 1833 ին Մխիթարեանք երբ «Հաւատով խոստովանիմ»ը 24 լեզուներով տպագրեցին ու մատուցին Պէլճ. թագաւորին՝ շքանշան ստացան: Իրենց պատկերազարդ շքեղ տպագրութիւնք գնահատուած են յաջ՝ ցուցահանդէսներու առթիւ միտալներու արժանանալով. 1851 եւ 62 (Լոնտոն), 1865 եւ 67 Բարիզ, 1861 (Ֆլորէնցա), 1872 եւ 82 (Վենետիկ), 1873 (Վիէննա): — Բանւորք Իտալացի են ամբողջ եւ հմտացած հայերէնի գրաշարութեան: — **Իրենց Մամուլէն** ցարդ լոյս ընծայուած գիրքերուն եւն. ամբողջական ցուցակը հրատարակուած ըլլալով 1910 ին, աւելորդ կը սեպենք զայն ցանկել կրկին: Փունջ մը միայն կապենք շատ արժէքաւոր հատորներէ: — Իրենց հրատարակած Ա. թերթը եղած է «Եղանակ Բիւզանդեան» (1800-20), Բ.ը՝ «Դիտակ Բիւզանդեան» (1812-17), իսկ Գ.ը որ իբր կիսամսեայ, եռամսեայ եւ ամսեայ՝ անխափան լոյս տեսած է 70 տարիէ ի վեր, 1843 ին սկսած «Բազմավէպ»ն է, վերջին տարիներս «Գեղունի»ներու յաւելուածներով: — Այրարատ, Աշխարհագրութիւն Մ. Խորենացւոյ, Աշխարհագրութիւն



ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԷՋ

(12 հատոր), Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի, Աշխ. Հայաստանի, Ած.աբանութիւն (4 հատոր), Ատլաս աշխարհացոյց (մեծադիր), Ընաշխարհիկ բառարան, Բառգիրք (երից վարդապետաց) 2 հատոր, Բառգիրք արուեստից և գիտութեանց, Բեւեռագիր արձանագրութիւնք, Բժշկ. բառգիրք, Եմանական (գրբ. և աշխ.), Երգք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Երդումն հին Հայոց մէջ, բնիկ Հայկազունք, Թանգարան հին և նոր հայկ. դպրութեանց, Հայապատում, Հայբուսակ, Հայկական Մատենագիտութիւն, Հայկ. նոր Մատենագիտութիւն, Հայկ. ստամնախութիւն, Հայկ. ուղղագրութիւն, Հայ կայսերք, Հայկ գիւղացի, Հայ-Վենետ, Միքէլ Անճտարան, Մխիթար (բացատրել բերր), Մխիթ. Միաբանութիւն (տպ. 1905), Յուշիկք հայրենեաց Հայոց, Նուագք, Ճառք բնիկ Մատենագրաց նախնեաց, Ճառք Մատենագրութեանց նախնեաց, Պատկերք Պատմութեան Հայոց (Յրնո. 3 հատոր), Պատմ. հայկ. ազգարանաց, Պատմ. (մեծ փոքր) Մխիթ. Աբբայի, Սիսական, Սիսուան, Սոփերք հայկականք, Փաւստոս Բիւզանդ, Քաղուածք աշխարհացոյց, Քերականութիւն (Բազբասանի), Քրոնիկոն, եւն. եւն.: Առանցմէ զատ Մխիթարեանք տպագրած են գեղարուեստական շքեղ պատկերներ և քարտեր Հայոց Պատմութեան և Մատենագրութեան երեւելի դէմքերուն (որոնց «Քանդակք» նմանակարգութիւններն ալ), պատմական տեսարաններ են: — 124 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող այս տպարանին (որ իր առանձին ձուլարանն ու կազմատունն ալ ունի) ամէնքէ հրատարակութեանց մէջ պէտք է նշանել Հայութիւնը շահագրգռող եւրոպ. լեզուներով բազմաթիւ գիրքեր ալ:

19. **Յ. Պոյաճեան.** — Այն օրէն ի վեր որ Մխիթար իր ականաւոր մամուլն ունեցաւ, Վենետիկի մէջ օտար տպագրիչներ այլ եւս դադրած են հայերէն գիրք տպելէ: **1911** ին միայն կը հանդիպինք մի անուն **Յ. Պօյաճեանի** որ նոյն տարին (Փետր. — Ապր.) 3 թիւ «Աստղիկ» պատկերազարդ ամսաթերթը կը հրատարակէ Վենետիկի մէջ: Այնուհետեւ տպարան և Աստղիկ կը մարին՝ զօգցես Մխիթարեանց Արեւին բոլոր պայծառութեանը տակ:

## ՊԱՎԻԱ

20. **Թեսէոս Ամբրոսիոս.** — Իտալ. Ալպանեզի ազգատոհմէն, ծնած է 1469 ին և մեռած 1540 ին: Հմուտ սորի և քաղդէական լեզուներու՝ ատոնց դասատուութեան համար ուսուցիչ կարգուած է Պօլոնիոյ համալսարանին: Լատիներէն կանոնիկոսներու Ռեկտէն է այս կղերականը որ 'ի Պավիա **1539** ին հրատարակած է լատին լեզուաւ գիրք մը՝ **Ներածութիւն ի Քաղդէական, Ասորական, Հայերէն եւ յայլ 10 լեզուս** տիտղոսով, որ կը պարունակէ այլ եւ այլ լեզուաց այբուբեններ՝ թուով իբր 40, անոնց փոխադարձ ձեւերով, նաեւ «գիտնալու արժանի խորհրդանշական և հմայական բաներ»: Ուրեք ուրեք կարմիր տպագրուած այս հետաքրքրական գիրքէն Վիեննայի Մխիթարեանց Մատենադարանը կը պահէ օրինակ մը, որուն՝ հանդիպակաց էջին պատկերը հաճեցաւ մեզ ուղարկել Հ. Մէնէվիշեան: Պատկերին խորագիրին բացատրութիւնն է «Յանկուած բազմաց»: Մէջ բերուած հայերէն հատուածները քաղուած են Ա. Գիրքէն, միօրինակ տառերով, գրեթէ առանց գլխագիրի: — Theseus Ambrosius ի այս մասնաւոր վրայօք համառօտակի խօսած է Հ. Ա. Վարդանեան «Հանդէս Ամսօրեայ»ի այս տարուան Մայիս թիւին մէջ, «Տպագրութեան 400 ամեակին առթիւ» վերնագրով:

# ՀՌՈՄ

3բ. **Տէրզնցի Յովհաննէս**. — Տե՛ս գիրքն ի Վենետիկ:

21. **Ա. Բաւլինեան**. — Հռոմի մէջ Steph. Paulinus անուամբ վարժարան մը կար որ ունէր տպարան մըն ալ, որ 1623ին տպագրուած է «Եւգինէոս Դ. Քահանայապետի Կոնդակ»ը (միաբանութեան Հայոց ընդ Հռովմայ Ս. Եկեղեցւոյն) զոր Հայերէնի վերածած էր Սաֆար Աբգար Դպիրի ազգատոհմէն Տ. Բարթողիմէոս աստուածաբան քահանան (R. D. Bartolomaeus Abgarus Armenus):

22. **Ուրբանեան**. — Ուրբանոս Ը. Պապը 1623ին հիմնած է բազմալեզուեան տպարանը որ կը կոչուի նաև ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ԺՈՂՈՎՈՅՆ ՏԷ ՓՐՈՓԱԿԱՆՏԱՅ ՖԻՏԷ, կամ ՏՊ. Ս. Ժ. ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՒԱՏՈՅ, և կամ ՏՊ. ՍՐԲԱԶԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՀԱՒԱՏՈՅ, և որ շարունակած է իր տպագրական **հաւատարիմ** գործունէութիւնը մինչև 1890ական թուականը, լոյս ածելով «հրամանաւ Մեծաւորաց» նշանակով կրօնական գիրքեր՝ ժամանակագրական կարգաւ. — Այբբենարան, Աւանդ պարզաբանութեան քրիստ. վարդապետութեան, Դաւանութիւն ճշմարիտ և ուղղափառ հաւատոյ, Կարգաւորութիւն Ս. Խորհրդոյ Պատարագի Հայոց, Քերականութիւն Գաղանոսի, Քրիստ. վարդապետութիւն, Կղ. Գաղանոս, Ձեռբածութիւն յիշկինս, Գիրք Թովմայ Կեմբացւոյ, Նորագոյն ծաղիկ զօրութեանց, Քերական և տրամաբանական ներածութիւն, Սպասաւորութիւն Ս. Պատարագի, Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ ի յանձնից Հայոց ազգի, Մանր աղօթամատեանք՝ առաքինութիւնք, Խորհրդատետր, Միաբանութիւն Հայոց (լտ. հայ., նաև միայն հայերէն), Բառգիրք Լատինացւոց և Հայոց, Կրթութիւն քրիստ., Չորք խոկմունք յաղագս յաւիտենականութեան, Կոնդակ Եւգինէոսի, Նորագոյն ողեկցութիւն հրեշտակային և մշտանե, Յոբելեան ներողութեան, Ընտրութիւն հոգւոյ, Առձեռն բառգիրք լատիներէն հայերէն: — Այս ժամանակներուն Ուրբանոս և Ուրբանեանք աղէկ դեր կատարեցին կրօնական մարդորսութեան . . . :




1539 ԻՆ ԲԱՎԻԱ ՏՊՈՒԱԾ ԳԻՐՔԻ ՄԸ ՄԷԿ ԷՋԸ

23. **Վաստանեան** . — Նոր ժամանակներս հիմնուած է՝ անխտրականի կերպով գործածման այս տպարանը: Նախ. Կարապ.-Պատր. Թէքեան Ս. երբ Հռոմ մեկնեցաւ՝ Պօլսէն նոր պաշտպանութիւնը խնդրելու՝ իր «գերապայծառ» ութեան անկեղծօրէն ցանկացող պաշտօնեայ Կու-բայիկեանցն դէմ, 1911ին համանուն տպարանէն լոյս ընծայեց «Արձագանգ» շաբաթաթերթը, զոր սակայն Պօլիս փոխադրեց և ուրոյն մը տպագրել տուաւ Սարաճեան տպարանը (1911):

## ՄԻԼԱՆ (ՄԵԴԻՈԼԱՆ)

24. **Միլանօ** . — Համառօտ լու. վարժարանի այս տպարանէն լատին լեզուաւ մէկ գիրք միայն լոյս ընծայուած է, 1624ին, **Բառարանութիւն հայերէն լեզուի** Ֆրանչիսքօ Ռիվօլայի, առանց գլխագրի՝ մէկ անուան բոլորագրերով:

## ԼԻՎՕՐՆՕ (ԱԼԻՎՕՐՆԱ կամ ԼԻՎՈՒՐՆԱՅ)

25ա. **Յովհ. Վրդ. Ջուղայեցի** . — Նոր Ջուղայ (Սպահան) Ամենափրկիչ վանքին բարեջան առաջնորդ Խաչատուր Կեսարացի (որուն դիմանկարը տպագրուած է ՊԱՐՍԿԱՍՏԱՆի բաժնին մէջ,) միաբաններէն Յովհաննէս վարդապետը կ'ուղարկէ Եւրոպա, իրենց վանքին մէջ հաստատել ծանօթ առանց տպարանական արուեստին կատարելագործմանը համար: — Յովհաննէսի ծնողքը կը կոչուէին Եղիազար և Անաստասիա: — Տարուան մը պանդխտութենէ վերջ՝ Ջուղայի այս միաբանը կը հասնի Իտալիա, վասնզի խնդրած էր թէ հայերէն ձուլուած տառեր այդ երկիրը գոյութիւն ունէին: Վենետիկի մէջ գտնուած գիրերուն չհաւնելով, կ'անցնի Հռոմ ուր սակայն արգելքներու կը բախի. հակառակ ասոնց՝ կ'աշխատի ակերը մը տալ գործել. յետոյ երբ կը տեսնէ թէ անկարելի է «Հաւատատարածութեան» բռնապետութեան կողմէ յարուցուած խոչընդոտներուն յաղթել, կ'անցնի Լիվոռնօ քաղաքը՝ տպագրութեան վերաբերեալ հակիրճ արհեստագիտներու հետ: 3 տարի և 3 ամիս՝ գիշեր ցերեկ իր աշխատանոցին մէջ կապարով ու մեքենով պարապող այս անխոնջ վարդապետը կ'աջողի հասնիլ ուրեմն 1643ին դրոշմել հայ տպագրական արուեստին լուրջ պատիւ բերող գեղատիպ մատեան մը **Սաղմոս Դաւթին**, «Տպուած տպարանի, զոր կանգնեաց Յովհաննէս, ի վաճառուց քաղաքն և ի նաւահանգիստն ի Լիվոռնոյ»: Այս Սաղմոսին ճակատը սեւ ու կարմիր գիրերով տպուած է: Յիշատակարաններէն գիտենք թէ տեղեկանալ վանական այս անխոնջ տպագրիչին քաշած նեղութիւններուն: Հոդ է որ կը խոստովանի թէ այդ Սաղմոսը (1050 օրինակ) իրր նախշ հրատարակած է 80 օրուան մէջ՝ Ջուղայի իր հոգևոր հօրը դրկելու համար: Էն ուշագրաւ մասն է հետևեալը. «...Վասն որոյ ընթերցողք լիցին Տեառնդ խոյ, վասնզի ծառայի քոյ, իբրև զմեր անձնուեր. վասնզի մանուկ որպէս ի պատերազմ, իբրև սրբաւոր սասացոյ զառ»: — Արուեստին այլ եւս տիրացած՝ Յովհաննէս վրդ. այս մէկ գիրքը լոյս ընծայելէ վերջ, իր յօրինած և ձուլած բազմազան փականչ տառերը կը փոխադրէ հայրենիք: — Աւելի անդին՝ իր տպարանական գործունէութեան շարունակութիւնը տե՛ս ՊԱՐՍԿԱՍՏԱՆի բաժնին մէջ:

**26ա. Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի.** — Յովհ. վարդապետն եւս՝ Լիվոռնոյի մէջ հայ տպագրութիւնը սկսած է 1670ին և շարունակուած մինչեւ 1700ի սկիզբները: — Մէկ քանի գիրքեր տպարանի յիշատակութիւն չունին, բայց տառերուն ու ձեւերուն նոյնութիւնն ապացոյց է թէ Լիվոռնօ բացուող այս գործատունը մէկ մասն էր բազմերախտ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ Մարսիլիոյ գործատան:— Այս քաղաքը տպուած գիրքերն են 1670ին՝ **Պարզէզ հոգեւոր** (Ա. տիպ) թարգմանիչ՝ Կ. Պոլսեցի Յովհ. վրդ., տպագրիչ՝ Ագուլեցի Կարապետ վրդ.: — 1691ին՝ **Գեղականութիւն** (Լեհաստանի մէջ Վարդան Յունանեան կարօղիկ Վարդապետէն դրոշմուած և Հռոմ ունենալով Պապական եղած Առաքելեան Խաչատուր ուսումնական վարդապետի ձեռնտուութեամբ): — 1696ին՝ **Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի**: — 1697ին՝ **Պատմութիւն դարձի եւ մկրտութեան Յովհաննու Յովսէփայ Թադէոսեան մեծատուն հրէի ռաբունոյ** (իտալերէնէ թրգմ. Յակոբ Վ. Զրպեան): — 1698ին՝ **Բառգիրք Հայոց**. Էջմիածնայ Երեմիա վրդ.ի (աշխատասիրութեամբ Եւդոկիացի Սարգիս Եպսկ.ի): Այս բառգիրքը 30 **տարի վերջ կրկին տպագրուած է**, պարունակելով Ածաշունչի, Աշխարհագրութեան, Բնաբանութեան և Բժշկութեան (Դեղատու) բառեր, նաև Վարդան վրդ.ի Աշխարհացոյցը, մէն մի էջ՝ առանձնակարգ ջոկերով, ընդ ամէն 576 երես. վերջին բառը նուիրուած է Յիշատակարանին՝ որ կը հանդիպինք «հայրապետական բառարան» (?) դրուագներին, տպագրութեան տառերը Գրն. Մուրատին և իր ծնողաց, նաև Տեառ, Խաչեր, Սանահնի և Անոնի տպագրիչներուն: — 1698ին **Աշխարհագրութիւն** (Մ. Խորենացիի), «Աղուեսագիրք»ով միասին: — 1701ին՝ **Թէոփիլոս**, «այսինքն խօսակցութիւն Թէոփիլոսի ընդ փարդակեղին՝ յաղագս ճշմարտութեան և ջերմեռանդութեան», 240 էջ՝ գծաւոր, երկաթագիր տառերով: — 1702ին՝ **Պարզատումար Հռոմէական**: — Այս թուականէն ետքը՝ Պոլիս կը շարունակուի նմանանուն տպարանն՝ որուն պիտի հանդիպինք կրկին ԹՈՒՐՔԻՈՅ բաժինին մէջ:



ԵՐԵՄԻԱ ՎՐԴ.Ի "ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ"Ի
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 3րդ. ԷՋԸ

## ՊԱՏՈՒԱ

**27. Տիմոթէոս Գառնուէլ** (= Agnelli) Սարքինեան եղանակաւ 1690ին քաղաքիս մէջ տպած է Ա. անգամ ըլլալով **Դաշանց Թուղթը** որ սա վերտառութիւնն ունի. «Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և Ս. Սեղբեստրոսի Հռոմայ Պապին և Տրդատայ Հայոց արքայի, և Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչին, ստ-

**Շարագրեցեալ** յամի Տեառն 316, և **տպագրեցեալ** ի թուին Տեառն 1690, ի ՊԱԴՈՎԱ» հրամանաւ Մեծաւորաց (con licenza de'Superiori): Այս գիրքը, — որ առանց նոյն տառի՝ լեցուն է սխալներով, — 84րդ էջէն սկսեալ կը պարունակէ «Համառօտ խոստովանանք»ը, (մէկ ալ էջի համարակալած՝ խաչերէնն ալ), նաեւ Պապականներու յատուկ քանի մը աղօթք ու պատկեր: — Հայերէն **միա՛կ** գիրքն է տակաւ՝ դրոշմուած համալսարանական այս տառանին մէջ, թէեւ Հ. Գաբրիէլեանի ցուցակը «Պարանէզ» մըն ալ արձանագրած ունի միեւնոյն տարին:

## ԳԼՈՒԽ Բ.

| 1567էն սկսեալ | ԹՈՒՐՔԻԱ | մինչեւ 1912 |
|---|---|---|

## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՍՏԱՆՊՕԼ, ՂԱԼԱԹԻԱ, ԲԵՐԱ, ՕՐԹԱՔԵՕՅ, ՍԿԻՒՏԱՐ, ԽԱՍՔԵՕՅ

Բիւզանդական Կայսրութեան կործանումէն՝ շուրջ 2 դար յառաջագոյն, Կ. Պոլսոյ մէջ գոյութիւն ունէր արդէն հայ գաղութ մը, որ մեծ մասամբ բաղկացած էր Կաֆայեցի (Քէֆէցի) տարագրեալներէ: Այդ գաղութը Թրքաց **առաջին** Պատրիարք Յովակիմ Արքեպիսկոպոսէն (1461-1478) սկսեալ մինչեւ 78րդը՝ Յովհաննէս Արքեպսկ. Արշարունի (1911), աճած ու տարածուած է գաղթող ընտանիքներ Փոքր Ասիայէն մայրաքաղաքս պանդխտելով այլ եւս հոն հաստատող և սերունդներ շարունակող Հայերով՝ որոնք գիտցած են պահել իրենց հաւատքը, լեզուն ու գրականութիւնը: Օժտուած ձեռներէց ոգիով, Պոլսահայը հանդիսացած է քաղաքակրթիչ տարր մը՝ իր շուրջի զանազան ազգութիւններուն մէջ, ընծայելով Ազգին ու Կառավարութեան՝ այլ եւայլ ասպարէզներու պատկանող ուշիմ անհատներ, — եկեղեցական, փարթամներ, գրագէտ, վաճառական, Պետական պաշտօնեայ, արուեստագէտ և արհեստաւոր: — Ասիկա իր հաւատքը կրցաւ պահել հոն՝ եկեղեցիով, իր լեզուն՝ Դպրոցներով, իսկ իր գրականութիւնը՝ **Տպարան**ներով, որոնք հին ատեններուն կը գտնէին մեր Պատրիարքաց խնամատարութեան և հովանաւորութեան ներքեւ: — Այդ տպարաններուն բոլորած գործունէութիւնը մեր ծանօթութեան ներքեւ բերելէ առաջ, տեսնենք թէ ի՞նչ վիճակ ունէր հին Ստամպօլը 15րդ դարուն՝ տպագրական տեսակէտով: — Արդարեւ այս ատենին մէջ մինչեւ հիմայ լոյս տեսած հայերէն և հայատառ տաճկերէն գիրքերէ կը տեղեկանանք թէ **Կոստանդնուպոլսոյ** անուններն էին **Բուզանդիա**, **Բիւզանդիոն**, **Ասիթանէ**, **Տէր-Սաադէթ** և **Տէր-Ալիյէ**:

* * Պուքրէշ քաղաքը 1906ին ռումաներէն գիրք մը հրատարակած է գրաշար-տպագրիչ մը George Ionescu անուն: Այդ գիրքին անունն է ԱՌԱՋՆՈՐԴ ՏՊԱԳՐԻՉԻ (Calauza Tipografului): Հեղինակը Տպագրութեան արուեստին ծագումն ու զանազան երկիրներ հաստատութեան պատմականը համառօտակի շարունակելով կը հասնի Տաճկաստանի, որուն (էջ 67) անդրադարձական թարգմանութիւնն է հետեւեալը՝ զոր կը պարտինք ռումանագէտ Տ. Ղեւոնդ Փափազեանի, Թուլչայի հայ քահանային. — «Կրօնական յետադէմ ժամանակներու մէջ, Սուլթաններու Կայսրութեան Կ. Պոլիս քաղաքը 1483ին առաջին անգամ երեւան կու գայ տպագրական մամուլը՝ «Սուլթան Պայազիտ Բ.ի օրերուն, ձեռամբ քահանայի Ներսէսի (Հրեայ), որդի Մովսէսի և թոռ՝

«բարքի Իսրայէլ Նաթանի, Աբիրայէն, երկուքն ալ տպագրիչ: Գերսոն մինչեւ 1530 Կ. Պոլսոյ մէջ ի գործ կը դնէ այդ արուեստը զոր ապա իր զաւակները կը տարածեն Ծով. Տեղարեան նշանաւոր քաղաքները: Ասոնցմէ մին կը հաստատուի Սէլանիկ (*) ուր շատ մը տպագրութիւններ կ'ընէ մեծ յաջողութեամբ: — Ի սկզբան, Թուրքիոյ տպագրիչները — միշտ Հրեայ — Պայազիտ Բ.ի իշխանութեան ատեն կը տպագրէին ծածուկ, որովհետեւ նոյն Սուլթանն իր երկրին մէջ այդ արուեստին մուտքը չէր թոյլատրեր. հակառակ գործողներ մահուամբ կը պատժուէին: — Յաջորդը՝ Սելիմ Ա. արտօնութիւններ կը շնորհէ, այնպէս որ զգուշաւութիւնք սիրող սոյն կայսեր օրով բազում գիրքեր լոյս կը տեսնեն: Սակայն Սելիմ Ա. իր հօրմէն գրուած արգելքի հրովարտակը 1515 ին կը վերանորոգէ: — Թուրքիոյ մէջ իբրեւ տպագր. արտադրութիւն կրնանք նշանել 1490 ին դրոշմուած **Եբրայեցւոյ պատմութիւն** մը՝ Յովսէփ պէն Կորիոնի ձեռամբ, նաեւ ուրիշ գիրքեր 1492, 1500, 1506, 1509, 1512, 1515, 1598 եւն. թուականներուն: — Բայց ամենէն նեղ դրութեան ժամանակներուն համար ի Թուրքիա տպագրական կարեւորագոյն երկը կը սեպուի Pentateucul poliglotp 1546 ին, որմէ օրինակ մը կը գտնուի Վենետիկի Կայս. Մատենադարանը: Հետեւաբար անհիմն է Գալիմաք Բարաթորուցի կարծիքը թէ հազիւ 1738 ին տպագրութիւնը Տաճկաստան մտած ըլլայ: — 1726 ին, Սուլթան Ահմէտ Գ.ի օրով, տպագրութեան արգելքը կը վերցուի (Հիճրէի ١١٣٢ թուին): — Ադրիանուպոլիս տպագր. մամուլը կը հաստատուի 1534 ին, միշտ Հրէից ձեռքով, իսկ Սելանիկ՝ աւելի կանուխ, 1515 ին: — Կ. Պոլսոյ Յունաց Պատրիարքարանը 1625 ին՝ Կիրիլ Լուքարիս պատրիարքին օրով՝ օժտուած կ'ըլլայ յոյն տառերով մամուլ՝ տպարանով մը, զոր կը վարէ Կէֆալօնիացի Նիկոդիմոս Մէթաքսա. սակայն իր աշխատութիւնները Ճիզվիթներու կողմէ անյաջողութեան կը մատնուին: — 1698 ին **Վենետիկէն կը բերուին մամուլ մը եւ հայ տառեր որոնք Ենիչէրիներու կողմէ աւարի կը տրուին:** (Երկտողիս ընդգծումը մեր կողմէ եղած է): — Առաջին թուրք լրագիրը լոյս կը տեսնէ 1831 ին»:

Շահեկան գրուածներ չեն պակսիր Գէորգ Եուսուֆեանի գիրքէն բաղդատաբար մէջ բերուած այս հատուածին մէջ: Մեզ համար ամենէն հետաքրքրականն է ճակատագիրը հայերէն այդ տառերուն որոնք իբրեւ մեղապարտ առարկաներ՝ կ'ենթարկուէին խուժդուժ Ենիչէրիներու վանդալականութեան: — Այդ թուականէն ալ առաջ, խաւարամիտ եւ նախապաշարեալ Սուլթաններու հալածանքին հետեւանքն է անկասկած, որ Աբգար Դպիրի Պոլիս ոտք կոխելէն (1567) մինչեւ Երեմիա Չէլէպի (1677), գրեթէ **հարիւր տարի տարուան** վիճակի դադար մը կը տեսնենք Պոլսոյ տպագրութեան: — Դառնանք հիմայ Աբգար Դպիրի եւ իր բազմաթիւ յաջորդներուն, միշտ ժամանակագրական կարգը յարգելով:

2.ր **Աբգար Դպիր** 1567 ին իր տպագրական կազմածներով Իտալիայէն կը ժամանէ Կ. Պոլիս՝ ուր կը ձերբակալուի, յետոյ անմեղութիւնը հաստատելով ապա կ'արձակուի եւ կը հաստատուի **Գէճէլի թաղ՝ Ս. Նիկողայոս եկեղեցին ուր կը հիմնուի Պոլսահայոց անդրանիկ տպարանը.** հոն է որ Թոխաթեցի Աւաքել աբեղայի ձեռամբ կը դրոշմէ հետեւեալ 5 գիրքերը: — 1567 ին **Փոքր Քերականութիւն կամ Այբբենարան**, 1568 ին **Պարզատումար**, **Ժամագիրք** եւ **Պատարագամատոյց**, 1569 ին **Մաշտոց**:— Հ. Գալէմքեարեան «Հ. Ամսօրեայ»ի այս տարուան Յուլիսի համարով կը խօսի սոյն Մաշտոցին վրայ՝ զոր տեսած է եղեր Վատիկանեան Մատենադարանի մէջ, 15 տողնոց երեսներով, տեղ տեղ կրկնագոյն, տառատեսակը գէշ եւ սխալներով լեցուն, սկիզբն ու աւարտը պակասներով՝ որոնք ձեռագիրով լեցուած են յետոյ: Յարգելի բանասէրը տառերուն մաշածութենէն կը հետեւցնէ որ 1569 ին տպուած ըլլայ նոյն գիրքը, որուն մէկ էջին նմանահանութիւնն է յաջորդ երեսին պատկերը՝ կիսով չափ փոքրցուած: — Ճէվահիրճեան Մաղաքիա Դպիր իր ձեռագիր ժամանակագրութեան մէջ **եղեւ բասմիայ** բացատրութիւնը կը գործածէ տառից **տպագրութեան** համար: — «Ս. Նի-

(*) Թերեւս այս անձն ըլլայ Մանտէսական Հրէից նախահայրը: Ծ. ԹԱՐԳՄԱՆՉԻՆ: — Սելանիկցի իսլամացած Հրեայք **մամին** կը կոչուին: Ծ. Թ.Է.:

կոչայու» անուամբ 2 եկեղեցիներ գոյութիւն ունեցած են Պոլիս, մին Թօփ-Գափու, միւսը՝ Հիսար-Տիպի: Ըստ Հ. Աստուրի՝ Աբգարու տպարանը կը գտնուէր առաջինոյն մէջ: Այդ եկեղեցին յետոյ քանդուած՝ մզկիթի վերածուած է (Պէճիկի ճամի): Իսկ ըստ Օրմանեան Ս.Ի՝ միւս Ս. Նիկողայոսն է (նոյնպէս աւերակ) ուր գործած էր Աբգար՝ որ վերջին գիրքը տպելուն տարին՝ Պոլսէն Էջմիածին անցած է: Իր հետքը կորսուած է այնուհետեւ:



ԱԲԳԱՐ ԴՊԻՐԻ
Կ. ՊՈԼԻՍ ՏՊԱԳՐԱԾ «ՍԱՂՄՈՍ»ԷՆ ԷՋ ՄԸ

## 28. Երեմիա Չելեպի Քէօմիւրճեան. —

Իր ժամանակին կարեւորագոյն դէմքերէն մին եղող այս պատմաբան գրագէտին բացած Ե. տպարանն ալ իր նախորդին պէս փաղանցիկ կեանք մը կ'ունենայ, 1677-8 ին ամառը եւ մասը տարածելով լոյս ածելով 2 գիրք միայն, **Գիրք որ 'ի մնացորդացն Յիսուս որդւոյ գրոցն Տեառն Ներսիսի Կլայեցւոյ** (Կրօն. քերթուածներ տետրակ մը), **Տնօրհնական տեղիք** (նկարագրութիւնք Երուսաղէմի), երկուքն ալ իր ձեռնհասութիւններ:— Երեմիա Չելեպի մեծ դեր կատարած է Պոլսոյ մէջ՝ իբրեւ հաշտարար ազգային գործիչ, մանաւանդ դաւանական խառութեանց առթիւ ծագած կռիւներուն առեն: Բաց լեզուագէտ, տաղերէն վերածած է Նոր Կտակարանը, խորհրդածի Պատմութիւնը, նաեւ յոյն եւ լատին լեզուներէ զանազան թարգմանութիւններ: Հեղինակած է 5 հատոր Օսմ. Պատմութիւն մը եւ այլ աշխարհագրական գործեր, տաղեր ու ճառեր: Իր երկերէն գլուխ գործոցը կարելի է նկատել ժամանակից անցքերու պատմութիւնը (Վենետիկի վանքը՝ ձեռագիր) որմէ օգտուած է Հ. Չամչեան, իր «Հայոց Պատմութիւն»ը յօրինած առեն:— Վենետիկի Մխիթարեանք լուսաւոր անուն կրնկար պիտի առած ըլլային հանուր Հայութեան եւ ի մասնաւորի Պոլսեցւոց, եթէ այդ **ձեռագիր** գործը Հայ Տպագրութեան 400ամեակին առթիւ **տպագիր** լոյս ընծայէին վերջապէս:— Քէօմիւրճեան 1695 ին մեռած է 60 տարու:

## 29. Գրիգոր Մարզուանեցի. —

Վերոյիշեալ Չելեպիէն քաջալերուած, ուրիշ յօրինած փորքրաքանակ տառերը ձեռք կը ձգէ եւ բազում աշխատելով 1694 ին կը հիմնէ տպարան մը որ 40 տարուան գոյութիւն մը կ'ունենայ:— Ինք ծնած է Մարզուան, Մկրտիչի զաւակ. ուսում առած է Ամասիոյ վանքը՝ Ծաղիկ Սարգիս վարդապետէն, որմէ ծաղկարարութիւն ալ սորված է եւ որուն հետ 1684 ին Պոլիս գալով, այլ եւս բան-գործ ըրած՝ տպագրական արուեստին եռանդով կ'անձնատուէ: Վարպետ չէ ունեցած. ինքնիրենը հմտացած է մամուլի եւ ձուլման օրէնքներուն, երկար առեն փորձեր կատարելով եւ Երեմիա Չելեպիի թողուցած կաղապարներէն ներշնչուելով: Այս պատճառաւ իր առաջին տպագրութիւնները ճաշակէ զուրկ են, նախաւոր իր բախած ջանքերուն: Գրիգոր յետոյ կրցած է բաւական խնամուած գործեր լոյս ընծայել՝ շնորհիւ իր յօրինած «զարդափար»ներուն եւ անունով ձուլած «արձիլ գիր»երուն. կը պատրաստէ «ցազագիր»եր, կը գծէ եւ կը փորագրէ «խորանազարդ»եր եւ այլ պատկերներ:— Իր տպարանին երախայրիքն է **Տաղարան** մը, տպագրութիւնը 1698 ին աւարտած՝ 4 տարուան մէջ, գործակցութեամբ Կ. Պոլսեցի Ա.Ն.Ա.ՏՈՒՐԻ (որուն բերուն գործունէութեան պիտի անդրադառնանք քիչ վերջը): 1706 ին միանկն է այլ եւս եւ ունի իր «նորակերտ» աշխատանոցը. հոնկէ լոյս ընծայած է հետեւեալները.— 1706. **Խորհրդատետր Սրբազան Պատարագի**

(ընդօրինակութիւն Թովմաս Երէցի ձեռագրին գործէն) : 1706. **Յայսմաւուրք** (զոր 24 տարի ետք նորէն տպած է, Ակնցի սեղանաւոր Մինա. Ղազար և ուրիշներ խրաւագրած ընդարձակ գինք՝ Ա. տպագրութեան տանն : Բ.րդ փորձերու սրբագրիչն է Պաղտասար Դպիր) : 1709. **Ագաթանգեղոս** (ձեռագիրը յանձնուած Աղամի Ածատուր վրդ.է), **Ա. տիպ**, (Բ.ր Գ. Արապեան 1824 ին, Գ. և Դ. Վենետիկ 1835-62, Ե. Թիֆլիս 1883) : 1713. **Կրթութիւն հաւատոյ**, հեղինակ՝ Ջուղայեցի Յովհ. Մրքուզ ածւարան վրդ. (այն գործին մէջ կը յիշատակուի Դանջացի Յովհ. վրդ. «որ 'ի յառ. և 'ի տար **բդրոյ**՝ զաշխատանս ինչ կրեաց») : 1717. **Մեկնութիւն աւետարանին Յովհ. Ոսկեբերանի** : 1719. **Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Զենոբ**, արդեամբ և ծախիւք նորին հեղինակի (Յովհ. Կոլոտ վրդ.) : «Զենոբ»ի Բ. և Գ. տիպերը եղած են 1832 ին և 1889 ին Վենետիկ : 1723. **Գիրք սօմարաց ի Տաղարան փոխրիկ** : 1726. **Նարեկ** : 1734. **Ներբող Լուսաւորչին** : — Յիշենք իր գործարանին աշխատաւորներէն Ներսէս «շարող գրոց», Յակոբ Դպիր «տպագրող», Եսայի «մրաճող» : 1734 էն վերջ չենք հանդիպիր այլ ևս Մարզուանցի Գրիգորի, գուցէ մեռած ըլլալուն : — [Հայ Տպագրութեան 400-ամեայ յոբելեանին առթիւ, ժողովրդ. բանաստեղծ Միհրան Յովհաննէսեան նոր լոյս ընծայեց «**Զենոբ Գլակ** հանդէպ արդիական քննադատութեան» անուն գործ մը որ շահեկան է յոյժ՝ ազգային պատմագրութեան տեսակէտով] :




ԳՐԻԳՈՐ ՄԱՐԶՈՒԱՆԵՑԻԻ 1719ԻՆ ՏՊԱԾ ԳԻՐՔԻՆ Ա. ԷՋԸ

30. **Աստուածատուր Աղուչեաց Վաշտեցւոյ** հոգաբարձութեամբ 1698 ին տպուած է **Գիրք խոստովանութեանց** ը զոր հեղինակած են «Աստուածաբան վարդապետներ» : 112 էջնոց գրչագրութեամբ յատուկ գիրք մըն է տաղիս, միջակ թուղթի վրայ՝ անճոռնի տպագրութեամբ :

31. **Անանուն** տպուած են կոչել հատոր 2 մատեաններն ալ, 1699-1700 ին տպուած, որովհետև տպագրիչի յիշատակութիւն չեն պարունակեր : 1. **Գիրք սօմարաց... երազահան, եւ երակ առնելու ?** ի հայրապետութեան Տ. Նահապետի Ս. Կաթողիկոսի,

ի մայրաքաղաքն Կ. Պոլիս (*) : 2. **Մեկնութիւն Երգոց Երգոյն** (համառօտ էլրգրուագի հա-չառաւ վրդ.) : — Տպագրեց նաև չկրող գիրքերէն կան նաև **Խոստովանութեան կամ Ամ-բաստանութեան** (1701), խոշկերէն թրգմ. Կ. Պոլսեցի Յովհ. վրդ. : — **Ճառաց գիրք փոխա-դութեան** (1732) : — **Տաղաւէս** (Պաղտասար Դպիրի) 1750, են. :

26.բ **Տպ. Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի.** — Խաչիկ Լիվոռնօ քաղաքէն Պոլիս փոխադրուած է այս տպարանը. պարագա՛յ մը որ կը հաստատէ արդէն նշանագրերն Ոսկան վրդ.ի տառերուն և պատկերներուն, մանաւանդ որ գերման հայավէս ծրարներ ևս նոյնք կը վկայէ: Այդ միջոցին «Չէլէպի բանակը» ծածկանուամբ գիրքեր հրատարակող Մխիթար վրդ.ի (ապա Աբբահայր) անծանօթ թուակ, Ենքն կը զրուցուին համանուն տպարանին՝ ուրկէ 1700ին լոյս ընծայուած են **Գիրք մեկնութեանն յայտնութեանն Սրբոյ Յովհաննու Աւետարանչին** (Լատիներէն թրգմ. Թիֆլիզցի Պետրոս վրդ.), **Համդէրձ Աստուծոյ, Գիրք յարութենից** (նորակերպ ազգ քերական՝ որ 1712ին վերստին դրոշմուած է): Դարձեալ, 1701ին այս տպարանը տպուած է **Ռանոյի չերձեռանգակերպ** (Լատիներէն թարգմ. Թիֆլիզցի Պետրոս վրդ.), Ա. տիպ :

32. **Մհտ. Աստուածատուր Դպիր.** — Պոլսոյ մէջ գործող հայ տպարաններէն միակն է ինք որ անընդհատ գործունէութիւն մը ցոյց տուած է. իր շառաւիղներն անխափան կերպով մինչև մեր ձեռքէն քալած են որդւոց որդի, իրենց տպագրած բազմաթիւ գիրքերով ընթերցասէր Հայութիւնը կշտացնելով և տարէ տարի ծաղկեցնելով նոյն տպարանը՝ մինչև իրենց գերդաստանին վերջնական անկումը: Աստուածատուր, իր զաւակը, թոռը, թոռնորդիները, նաև թոռանը թոռները **մէկ ու կէս դար** տպարաններին և ձուլարաններին անխափան շարունակած են յաջորդաբար: Այսպէս 1. ՄՀՏ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ (1700-50): 2. Տիրացու կամ Չէլէպի ՅՈՎՀԱՆՆԷՍ (1746-76) զաւակը: 3. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՊՕՂՈՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ (1777-90) զաւակ և թոռ: 4. ՊՕՂՈՍ ՅՈՀԱՆՆԻՍԵԱՆ Պօլիս (1799-1819) թոռը: 5. ՊՕՂՈՍ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՉԵԽՑԻ Օրթագիւղ (1820-35), միևնոյն անձը՝ մականունը փոխած: 6. Տղայքն ԵՐԻՑ ՈՐԴԻՈՑ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ (Աստուածատուր, Գէորգ, Դաւութ) Օրթագիւղ (1836-53), թոռնորդիները: 7. ԱՐԱՊԵԱՆ ԵՂԲԱՐՔ Պօլիս (1855), նոյնք: 8. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՉԻԿ ԱՐԱՊԵԱՆ Օրթագիւղ, թոռանը թոռները, մինչև վերջին տանուտէրս գրաշար և գրաձուլիչ: Թուականի կարգաւ պիտի անդրադառնանք իւրաքանչիւրին տպարանական գործունէութեան, 50Ա, 50Բ, 51Ա, 51Բ և 52 թուահամարներով: — Ինչպէս ըսինք, Մհտ. Աստուածատուր իր տպարանը 1700ին հիմնելով 50 տարի յարատեւօրէն բանեցուցած է զայն, մինչև իր մահը որ 1750ի մօտերը պատահած ըլլալ կը կարծուի: Կենդանութեանը, զաւակը Տիրացու Յովհաննէս գործակցած է իրեն, և մահէն վերջ բաւական տարիներ երախտագէտ որդին **ի տպարանի հանգուցելոյ Աստուածատրի** բանաձևը պահած է իր դրոշմած գիրքերուն վրայ: — Հետաքրքրական է թերթաթիլ հիմնադիրին և իր յաջորդներուն լոյս ընծայած գրեանց Յիշատակարաններուն մէջ՝ խմանալ համար իրենց գերդաստանին հին ու նոր անդամները, տպարանին Եւդոկիացի, Վանցի են. բանուորները՝ զանազան համեստական կամ դրուատալից մակդիրներով: Այդ Յիշատակարաններէն շատին ընթերցումն էր անոր որ մեր միակ առաջնորդը եղաւ՝ ուրուագծելու նախապատմական այս օրինակ ընտանիքին ազգագրութիւնը, բոլորն ալ սիրով ու եռանդեամբ նուիրուած տպագրութեան արուեստին և փայլած իբր տպարանապետ, գրաշար, «տպագարկ», «մրաճար», գրաձուլիչ ու հրատարակիչ: Դաղափար մը տալու համար թէ Աձ.առուրի ծերութեան օրերուն՝ ի՛նչ մեծ

(*) **Երգարան** անուամբ ողորմելի գիրքին Ա. տիպը լոյս տեսած է **1668**ին Ամսթէրտամ, Բ. եւ Գ. տիպ Վենետիկ (1678-96), Ե. տիպ Մարսիլիա (1709) եւն. եւն.:

ենցուկ մըն էր իր գաւակը, կը բաւէ նայիլ — օրինակի համար — Դանիէլ Անդալի «Գիրք Սաղմոսաց»ին Յիշատակարանը. «... Նաեւ զցուպ ձեռին իմոյ ի գործատանս՝ զպարտիզպան անձանձիր շարադրողս [գրաշար] և զգրող զկապարեայ գաղափարան [գիրերը գրող] զօր-բացու Յոհաննէս որդեակն իմ պատրաստական ծառայ ձեր ամենեցուն»: Ինքն ու միւսները՝ պաշտօնակից հայերէ շատերու պէս՝ սովոր են բանեցունելու անձին խոնարհութեան բնորոշիչ որակականներ որոնցմէ զարմանալին է տաճկական ռամիկ «հող տակի ձերոց»ը: — Մահ. Աստուածատուրի հայրն էր Խօճա Կարապետ, (տեղացւոց գաւառական ասացուածք «զրոց-բրոց» մը), մայրը՝ Մարիամ, իսկ կողակիցը՝ Շարուխի: Ուրիշ զաւակներ ունեցի: Երէ իր մեծաման տպագրիչ բառերը՝ Պօղոս Յովհաննիսեան (Արապեան)ի խօսքին համար ընծայեց՝ Ապուշեխր պետի ըլլայ իրենց ծննդավայր: Դալով իրենց Օջախին զոր ջանացին վերջ անքանց պահել, պապենի այդ գործարանն իր սկզբնաւորութեան տարիներուն՝ «բարեխօսութեան»ը յանձնուած էր «Մինասայ գործատունին» կամ «Մինասայ արապաճաս վկային»: — Մահ. Ածատուր՝ Յովհաննէսեան զատ՝ անդրանիկ զաւակ մըն ալ ունէր Մինաս անուն, որ 1720ական թուականին սկիզբները հօրը քով գրաշարութիւն կ'ընէր: Հաւանական է որ կանուխ մեռած ըլլայ Մինաս, քանի որ իր անունին ու գործունէութեան ո՛չ մէկ կը հանդիպինք այնուհետեւ: — Մահ. Աստուածատուրի տպած գիրքերը հետեւեալներն են. — Նարեկ (Կ. Պօլսոյ Ա. տիպ) **1700**: Ժամագիրք տանձի **1701** (զոր վերստին տպած է 1719, 1721, 1725, 1733 և 1738 տարիներուն: Ճառ. Խաչի (Նարեկացւոյ) **1702**: Շարակնոց: Կտակգիրք («տառցեալ երանելւոյն Յակոբայ Տեառն եղբօրն», արձակ) **1703**: Գործք առաքելոց **1704**: Դաւանութիւն հաւատոյ և նկարագրութիւն անուղղայից **1713**: Մաշտոց **1714**: Գիրք պարապմանց Ս. Կիւրղի Եպսկ.ի **1717**: Ներբողեան ի կաթողիկէն Վաղարշապատու, ժողովածու գիրք (Գ. տիպ, Անանիա փիլիսոփայի) **1718**: Վարք Հարանց (Բ. տիպ, Խաչատուր Վ. Կեսարացիի) **1720**: Աղօթագիրք (պատմութիւնք ... յաղագս ... Ադամայ և Եւայի, հեղինակ Առաքել Սիւնեցի): Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի **1721**, (վերջինս 1741ին ալ տպ.): Տօնացոյց **1722** (նաեւ 1725 և 1740): Համդերձ Ած.ով. գիրք Արութիւնց **1722** (նաեւ 1740): Յիսուս Որդի (Ե. տիպ) **1725**: Գիրք տօմարաց ... Երուսաղէմ **1726**: Գիրք պատմութեան Սրբոյ և մեծի Բարսեղին Աշ. Երուսաղէմի, և սրբոց Տնօրինականաց Տեղեաց ... Յա.ի Բա.ի (հեղ. Համամ վրդ., Ա. տիպ) **1727**: Գիրք Տրամաբանութեան (հեղ. Ջուղայեցի Սիմէոն վրդ). **1728**: Պղնձէ քաղաք (Բ. տիպ): Գիրք Սաղմոսաց (*) (Դանիէլ Անդալը) **1731**: Վէմ հաւատոյ (Ջիմառացի Յակոբ Վ.) **1733**: Տաղարան փոքրիկ **1734** (նաեւ 1740): Յածախապատում **1737**: Սաղմոս: Քերականութիւն (հեղ. Պաղտասար Դպիր, որ նոյն տարին քանի մը տպարանաց փորձերու սրբագրիչը եղած է), **1738**: Դամձարան **1740**: Շարական **1742**: Երանչ. երգեցմունք հոգեւորականք **1743**: — Եւ դեռ ուրիշներ:

33. **Սարգիս Դպիր.** — Իր տպարանը **1703**ին սկսած է գործել և թողած է մօտաւորապէս 20 տարուան գործունէութիւն մը որ սակայն պատուաբեր չէ հայ տպագրութեան՝ արուեստի տեսակէտով. թէ՛ ինք և թէ իր 2 զաւակները կատարած են մեծ մասամբ անյաջող տպագրութիւններ: Սկիզբները՝ Սարգիս իր դրոշմած մատեաններուն վրայ «ի տպարանում ծառայ Բա.ի Սարգսին» բանաձեւը կը գործածէր, տպարանն ալ «ընդ հովանեաւ Ս. Աստուածածնայ» էր: — Անա հոնկէ լոյս ընծայած հատորները. — **Գիրք աղօթից** (Վարդան վրդ.

(*) Այս գիրքն իր ծախքովը դրոշմել տուած է օրուան հանրածանօթ ու շինարար Պատրիարք Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցին որ 1715-1741 Աթոռին վրայ մնացած է՝ Պօլսահայոց կուլտուրական շարժման հիմերը դնելով: Այսպէս, Սկիւտարի մէջ բացած է դպրանոց մը, դաստիարակուած եւ ճանաչուած բազմաթիւ ձեռնասուններ որոնցմէ շատը վարդապետ ձեռնադրուած է եւ որոնք քիչ շատ ուշելին մասնակցեցին կարողութիւն: Փարձեալ, իր քաջալերանքով ծախքուած են հայ տպարաններ. Կոլոտի պատրիարքութեան 26 տարիներուն մէջ Պոլիս 80 է մօտ գիրքեր լոյս տեսած են: — Նանանք հիմայ **Գիրք Սաղմոսաց**ի Յիշատակարանը. — «... Անհնարօտար կամեցողութեամբ եւ ծախիւք գոյից... տեառն Յոհաննէսի Արքայան եպիսկոպոսի եւ ած արեան վարդապետի Բաղիշեցւոյ, ակերապետի Կ. Պոլսոյ:... Այսինքն զսուրբ արտս եւ զվանօրայս եւ զհամայն եկեղեցիս ընէ եւ հաստատ պահել, առակերտս բազմացուցանել ծախամաք մարմնական գոյից, եւ հոգեւոր կրթութեամբ ած.ային տանից. **իսկ սէ զաշխուէս գրեանս Ս. Վարդապետացն՝ տալ տպել եւ ի լոյս ածել սուրբ գիտութեան հեշտողաց»:**

Մարտիրոսի) 1704 : **Ժամագիրք տօնից** . 1704 : (Հ. Ղազիկեան տեսած ըլլալով զայն՝ կը գրէ . «...Պատկերներն՝ սքանչելի , տպագրութիւնն՝ անթերի և աղուոր» ) : Ժամագիրքը 1721 ին նորէն տպած է : **Պղնձէ Քաղաք** (Ա. տիպ) 1708 , որուն յիշատակարանին մէջ կ՚ըսէ . «...յիշեցէք զնուաստ արուեստաւոր գործոյս՝ զնուաստ Սարգիս» : **Սիրաքի գրոցն որ կոչի Ժողովածու** (Ա. տիպ , Ս. Ներսէսի և Յա.ի պատմութիւններ) : Ծաղկոց 1710 : **Մեկնութիւն տեառն խորհրդոյ Ս. պատարագի** (Յովհ. Արճիշեցի) : **Մաշտոց ձեռնադրութեան առ կոյսն Երանուհի** 1717 : — Միշտ գործակցած են իրեն՝ 2 զաւակները ԳԷՈՐԳ և ՄԱՐՏԻՐՈՍ որոնց սորվեր սկսաւ նախկիններ տարին : Տպարանին աշխատաւորներէն յիշենք Պետրոս , Տէրվէրն ու Աբրահամը : — Սարգիս Դպիր կ՚ենթադրուի մեռած ըլլալ 1820-ական թուականին սկիզբները , նոյնպէս իր որդին՝ Գէորգ :

34. **Տիրացու Պետրոս** (Աստրախանցի) . — Այս անձը որ նորն ու եղբօրը հետ գործակցած է բաւական ատեն , 1705 ին լոյս ընծայած է միայն **Խոկումն Վարուց** , որուն յիշատակարանն է . «Շնորհիօք ամենազօրին Աչ. ես Տիրացու Պետրոս որ եմ Աստրախանցի , սկսի գրքուկս զայս . . . և յօժարեցայ տպագրել զաս . . . են.» :

35. **Մեծ. Մարտիրոս Դպիր** (**Մարզուանցի** կամ **Բաղդադեցի** , այսինքն Կ. Պոլսեցի) . — Հօրը հետ երկար տարիներ գործակցելէ վերջ , 1721 ին ինքնագլուխ շարունակած է , մինչև իր մահը որ 1752 ի ատենները կ՚ենթադրուի : Իր տպարանը «բարեխօսութեամբ ամենամաքուր կուսին Մարիամու» էր և ինք կ՚աշխատէր «սիրելի , աչաց լոյս , ցաւց ձեռին իւրոյ որդեակ»ը՝ Սերոբ (կամ Սրապիոն) որ մանուկ հասակէն չարաչար աշխատելով կրցած է սորվիլ գրաշարութիւն և տպագրութիւն: Սերոբի հետ կային նաև Անտոնն ու տպարանապետին կրտսեր զաւակը Սարգիս , տպագրիչ Տէվէկէր , փոքրիկ գրաշար՝ Սահակեան , Խաչեր , բոլորն ալ «սիրեցու» յորջորջուած: — Մարտիրոսի դրոշմած գիրքերուն Յիշատակարաններուն մէջ կը հանդիպինք նաև անուններուն այն անձանց որոնք արդեամբ օժանդակած են իրեն , և զորս հանօրէն գերդաստանով յիշուած կը տեսնենք : — Իր տպարանէն լոյս ընծայուած են հետեւեալները . — Համառօտ գիրք աղօթից , 1721 : — Գիրք և ճառ. նոպեշան . . . Տէրունական





ՄԱՐՏԻՐՈՍԻ ԴՐՈՇՄԱԾ ԱՂՕԹԱԳԻՐՔԻՆ ԱՌԱՋԻՆ ՈՒ ՎԵՐՋԻՆ ԷՋԵՐԸ

տօնից ։ (պատկերազարդ) 1722, ի **Բուզանդիա** (այս բառին Ա. անգամ է որ կը հանդիպինք). թէև «ի տպարանի Սարգսի» բառած է, բայց տպագրիչն ինք էր։ — Համեւլակք և առեղծուածք ... վասն ուրախութեան մարդկան... այլ և կատարեալ պատմութիւն Յովսէփ մանկին (Վերջնակ՝ Ներսէս Ճրմարակի) 1724 ։ — Վերակացութիւն (Ա. Զուգակցի) 1725 ։ — Կոչման ընծայութեան Կիւրեղ Երուսաղէմի) 1727 ։ — Գրքոյկ վարդ. Արշարունեաց եպսկ.ի արարեալ մեկնութիւն ընթերցուածոյն (Կիւրեղ Երուսաղէմի) 1728 ։ — Ժամագիրք, 1729 ։ — Ժողովածու գիրք (Գ. տիպ) 1730 ։ — Գիրք աղօթից (Եփրեմ Խուրին ասորւոյ) Ա. տիպ ։ — Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց (Հեղինակ՝ Պօղոսի Մխիթարեան Վարդ Վ.) 1734 ։ — Գանձարան փոքրիկ, 1739 ։ — Գիրք աղօթից 1747 ։ — Խորհրդատետր Ս. Պատարագի, 1748 ։ — Տաղարան վայելուչ և գեղեցիկ 1758 ։ [Թովման, Սողոմոն, Զաքարիա, լուսապսակ



1722 ին **ԲՕՒԶԱՆԴԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ** տպարանէն լոյս ընծայուած **ԳԻՐՔ ԵՒ ՃԱՌ ՀՈԳԵՇԱՀ** անուն գիրքէն քաղուած կրօնական պատկերներ, լուսանցքի զարդեր ու բոլորանուտ — կիսով չափ փոքրցուած — որոնցմով դիւրին է գաղափար մը կազմել նոյն ատենի Կ. Պոլսոյ փայտափորագրութեան արուեստին մասին։

գլխով Սարր. ասոնք եղած են մեր նախնի գաղթականաց՝ ինն ձեռագրերէ քաղուած] ։

36. **Պետրոս Կաստանեանցի** — Ազգական նշանաւոր Ոսկան Վրդ.ի որմէ՛ ստացած է եղեր անոր տպարանին մէկ մասը: — Կարգին կ'ըսեն Խոսրովեան Պօլիս կը գրէ զինք' տպարան բանալով «բրօշիւրաներ»ի գործը յառաջացնելու համար: Պետրոս 1704ին կը հիմնէ այդ տպարանը' Բերա, **ի թաղն Պէկօղլի** (ինչպէս կը կարդանք հոնկէ լոյս ընծայուած գիրքերուն ճակատը), որ հազիւ 10 տարուան գործունէութիւն մը կ'ունենայ, հրատարակելով հետեւեալները. — Բուրաստան աղօթից (Բ. տիպ, լատիներէն թրգմ. Սանփանենս Վ. Լեհացի 1704: — Աստուածաշունչ (Ոսկանեան մանր գիրերով, պատկերազարդ, բայց անյաջող տպագրութիւն' դրուագի տեսակէտով), 1705: — Գիրք աղօթից, 1709: — Աւետիս ժամագիրք, 1712:

37. **Թօփալճեանցի Պօղոսի Վրդ.**, «պատճառ տպագրութեան և որբագրութեան **Լուսաւորիչի** (1704) զոր երկաթեաց է Աստափացի Պօղոս Վրդ.:

38. **Յակոբ** (**Գենեւանցի Վարդանի որդի**)ի «Համառօտաբանութիւն և ծախսից» 1710ին տպուած է **Աւետիք Աւետարան** մը (Բ. տիպ) որուն վերջաբանին կը կարդանք յիշատակարանը. «... Այլ և յուղղ աշխատեալ ի վերայ սորին, որ ունէր գիրս այս մերձ առ մերձ եկաղ' զայս ևս ընդարձակեալ անցուցեալ միջնորդին նորոգեալ բացագանչեալ...: ... յիշել զմարդկային աղօթս ձեր զազնուական և զբարեպաշտ զնորահաստ և ծաղկածաղ զԳենեւանցի Վարդանի որդի Յակոբին, և զբազմահանճար և նորաշարժեալ զծնօղ եղբայրն Ճուղրեցի Բարաքեալի որդի զՄինաս դպիրն, որք ամենայն ջանիւ, արդեամբք և գործք ի լոյս հանին զեկեղեցական բնական զսուրբ աւետարանս այս»:

39. **Հայր եւ անկատար Տառարան**ն 1735ին լոյս ընծայուած է Համդեցի Միհաս վրդ.ի **Ազգաբանութիւն** «բազմաթիւ Հայոց, յորդորող որդի, համառօտակ ի Մովսէսէ Խորենացւոյ» անուն Հայոց Պատմութիւնը զոր հեղինակը 1693ին գրած է: — Աստ Բ. տիպը Վաղարշապատ հրատարակուած է 1870ին:

40. **Տիրացու Բարսեղ եւ Յակոբ** — Աերասատցի երկու եղբայրներ էին «ծաղկարար», տպարանին «ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի բազմահնար եկեղեցւոյ» Կալատ Յովհ. պատրիարքի օրով բացած 1735ին և զայն կոչած **Նորակազմ**: Մինչև 1740, իրենց տպած 4 գիրքերուն Յիշատակարաններուն մէջ երկուքին մէկ յիշուած են. այնուհետև միայն Բարսեղը կը մնայ որ 1755ին արդէն մեռած էր, բայց տպարանը գործունէութիւն ունի և հոն աշխատող իր զաւակներն էին ԳԱԲՐԻԷԼ (որ առանձին ալ գործած է), Աստուածատուր, ՍԱՐԳԻՍ և ՄԻՔԱՅԷԼ (վերջին երկուքն ալ առանձին գործած). Իսկ «Սպանեկերացի խոնարհ Յովհաննէս» և փոքրիկն Մանուէլ գրաշար էին հոն: — Բարսեղի տպարանէն հրատարակուած գիրքերն են. — **Իշր ընդ Եդրարու** (Տեառն աղօթից պատմութեան բանից նշման ... առաքելական Յովհաննու): — Ճառընտիր: **Աւետարան**, 1740: — **Խրատ հոգեկան** (Թիմոթէ թրգմ. Ճամճի օղլու Յակոբ դպիր), 1736: — Գիրք որ կոչի **Լուծիչ տարակուսանաց** (հեղինակ' Արմուշի Մանուէլ Վարդապետ Կ. Պոլսեցի), 1755: — **Տէրունի տօնացուցի** (Օրացոյց) 1776-7:

41. **Գաբրիէլ Գալիփ (Բարսեղեան).** — Սեբաստացի Տիրացու Բարսեղի զաւակն է ինք: Տպած է միայն 2 գիրք, 1745 ին՝ Նալեան Յկբ. Պատր.ի «Մեկնութիւն աղօթից ներբողինաց Ս. Գրիգորի Նարեկացւոյն» և 1750 ին «Գիրք պատճառաց Արիստոտելին»: — Իսկ իր միւս եղբայրները՝

42. **Սարգիս եւ Մ՛իքայէլ Գալիփ (Բարսեղեան կամ Սեբաստեանց)** 1747 ին **մէ՛կ** գիրք միայն դրոշմած են, Նալեան Յկբ. Պատր.ի «Աշխարհաբառ. Քրիստոնէա-կան»ը (Բ. տիպ), որուն Յիշատակարանին մէջ հարազատնին՝ Գաբրիէլն ալ կը յիշեն:

43. **Աբրահամ Գալիփ** Թրակացի. — Ծնողքն էին Սարգիս և Ազիզ, իսկ հոգե-ւոր եղբայրը՝ Կեսարացի Գէորգ դպիր: 1737 ին իր «նորակազմ տպարանէն» լոյս կ՚ընծայէ **Մեսրոպ Երէց** «Պատմութիւն երջանիկ վարուց և մահուան ... մեծին ներսէսի» (նուիրակամ աշակերտութեամբ Պրն. Դանիէլի որդի Տիրացու Մովսէսի), որուն Յիշատակարանին մէջ կը համարինք «գրքածախ» Յարութիւնի: Աբրահամ Գալիփի դրոշմած ուրիշ գիրքերու Յիշատակարան-ները կը պարունակեն անունները Սեբաստացի Յակոբին ու Բարսեղին, նաև Մարտիրոս Դպի-րին: Ըսել է՝ ինք վարպետ մը չէր այնքան և աշխատակիցներ օգնած են իրեն: Արուեստին կացութեան մասին սա երկտողն ունինք աչքի առջև. «որ իւր իսկ ձեռամբ անհամ-գիտ աշխատեալ՝ եւ զնորին սևարդր կազմեալ գրոց, ո՛չ համատարած այլոց մշակաց»: Գրաշար ունէր Անտոնը որ սրբագրիչ ալ էր, իսկ աշխատաւոր՝ Խոյեցի Սեւանեան Կարապետի որդի Խաչատուր, նաև Յովհաննէսը: Իր տպած միւս գիրքերուն համար ձեռնտու եղած է Պալատացի Մհտ. Շահնազար, իսկ ցանկերու պատրաստութեան և սրբագրութեան աշխատող՝ Պարոնտէր դպիրը: — Բաց ի առաջինէն՝ հրատարակած է նաև հետևեալ գործերը. — **Գիրք Դպրութեան** (Տաղարան) 1738: Ձմերան հատոր (Գրիգոր Տաթևացի «[illegible]») 1740: — Ամառան հատոր (Գր. Տաթևացի) 1741: — **[illegible]**, 1742: — **Սարգիս Շնորհալի** «Գիրք մեկնութեան եօթն թղթոց կաթուղիկէից ... որ կոչի Սարգիս գիրք», 1743: **Ոսկէփորիկ** (Գր. Տաթևացի) 1746: Վերջինս կը պարունակէ Տաթևացիի անյայտ մէկ պատ-կերը՝ փայտի վրայ փորագրուած:

44. **Տիրացու կամ Ջուջին Յովհաննէս** (Աստուածատուրեան). — Իրեն ու իր գերդաստանին մասին խօսեցանք բաւական 32րդ թուահամարով: — Իր անունն ալ դրոշ-մուած կը գտնենք երբեմն ՅՕՀԱՆՆԷՍ, կամ ՈՎՀԱՆՆԷՍ: — Տպած է հետևեալները. — Գիրք պատասխանական սրբոյն Աթանասիոսի ([illegible]): — Յիսուս Որդի: — Տաղարանու-թիւն (Գր. Մագիստրոսի) 1746: — Ժողովածու գիրք (Ե. տիպ ի Պոլիս) 1747: — Գիրք սահմա-նաց յոգնադիմի խորհրդոց (Առաքել դպիր): — Պղնձէ քաղաք, 1749: — Գիրք Տօմարաց, 1750: — Երգարան: — Տաղարան փոքրիկ և համառօտ յորում պարունակին երգք հոգևորք, 1751: — Թուղթ Պօղոսի Տարօնեցւոյ: — Գիրք աստիճանն տաղոյ դպրաց եւ. (ձեռնադրութեան): — Ժամագիրք ատենի, 1752 (նաև 1762 ին և 1768 ին): — Յանկգիրք Նոր Կտակարանի, 1753: — Նարեկ, 1755 (նաև 1774 ին): — Ճրագ ճշմարտութեան, 1756: — Վկայաբանութիւն ընդ Յայսմ, 1757: — Գիրք աղօթից (Նալեան Յկբ. Պատր.) 1760: — Պատմութիւն Ս. Վարդա-նայ (Եղիշէ) 1764: — Սաղմոս, 1765: — Պատմութիւն Ս. Երուսաղէմի (Բ. տիպ), հեղինակ Հաննա վրդ., 1767 ևն., ևն.:

45. **Պետրոսեան Ստեփաննոս** (Ակնեցի). — Տպարանը 1750 ին հիմնած է ու նոյն տարին հրատարակած **Տետրակ որ կոչի զուարճական կրկնագոր** «որ է ուղղափառ հաւատոյ և յննարան, և ներձուածողաց ձաղկիչ և կշտամբանս» հեղինակ՝ Սիմէոն Մամուէլ Կեսարեան: — 21 տարուան դադար. մը վերջ՝ 1771 - 1792 կանոնաւորաբար գործած է այլ եւս, լոյս ընծայելով հետեւեալները. — **Գիրք Աղօթից** «բանք եղանակեան Գողոփի. Տեառն Յովհաննու» 1771: — **Ժամագիրք Հայոց**: — **Տետրակ այբբենական** որ է գասն ընթերցման (2 անգամ տպ.) 1772: — Տարեցոյց, 1781: — **Գիրք որ կոչի ակն լուսոյ** (*) «Մոլորեցեալ վերջաւորեցաւ գրքոյկս այս... առանձնակար շարադրութեամբ, որ է առաջին




ՊԵՏՐՈՍԵԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՏՊԱԾ 1781 Ի ''ՏԱՐԵՑՈՅՑ,,ԻՆ Ա. ԵՒ Դ. ԷՋԵՐԸ

երից մասանց նախկական շարադրութեանց» (հեղ. Սիմ. Մ. Կեսարեան): — **Կրթութիւն քրիստոնէական**, 1782: — **Ծաղկանոց**, կրօնչն. երգեցմունք, 1784: — **Տաղարան** «վայելուչ և գեղեցիկ ի զանազանից բանաստեղծից ասացեալ և տաղեալ... ի վաղեմնական տպագրութիւնս այսմիկ. արդեամբք Եղիայ դպրի»: — **Գանձարան փոքրիկ**, 1788: — **Սաղմոս**, 1789: — Ա. գիրքս որ կոչի **Մաշտոց**, 1792: Ստ. Պետրոսեանի տպած 1781 ի ներկայ հազուագիւտ տարեցոյցը (վերջերս տպուած Իզմիրլեան Հայրիկէ,) նուիրեցինք Վ. Նեմայի մատենադարանին: Զարդագիծ ձախակողմին պատկերները կրնան իբր նմոյշ նկատուիլ այդ ատենի

(*) Հին ատեն, անկէ առաջ որ գիրք մը գրուածէր՝ անոր բոլոր խորագիրն այսպէս ըսել **գիրք որ կոչի** ով կամ պարզապէս **գիրք** ով ակնը կ'ըսէին, իրենց ալ «գիրքը» տարբեր բան մը ըլլալն յայտնելու...:

նայ տպագրիչներուն գեղարուեստական ճաշակին : Դ. Էջին տառատեսակն սպառագործուած է 1777 ին Էջմիածին տպուած «Կարգ բաղման կարգաւորաց»ին որուն Բ. Էջի պլլորանական պատկերին շուրջն ու մէջը տեղաւորուած է միևնոյն տառատեսը : Յատուկ ուշադրութի՛ կ'արժէ քանի մը տառ-նաորներ և շանկման բժշկարան մը տմսացոյց : — Բերա՛ Միհրան Պէօրէկեանի ունի 1789 ին տպուած մեծադիր **Տարեկ** մը կայ, որուն ճակատին վրայ «ի տպարանի Պետրոսեան Սահակեանի, ՌՄԼԸ» կը կարդանք : Այս գիրքին ո՛չ Հ. Ղազիկեանի «Մատենագիտութեան» մէջ կը հանդիպինք, ոչ ալ Հ. Գարեգինեանի ձեռագիր ցուցակին մէջ : Հետաքրքրականն այն է որ տպագրողին կէս էջնոց Յիշատակարանը ան հակառակին տալը կը պարունակէ . «Ի տպարանի Աստուածատուր որդւոյ Յովհաննէսի» . այդ, 1776 ին Յովհաննէս դադրած է արդէն միայնակ գործել և իր զաւկին՝ Պօղոսի հետ է մինչև 1790 : Ի՞նչպէս միևնոյն տարին նոյն **Տարեկ**ին ճակատին վրայ դրոշմուած **Պետրոսեան Սահակեանս** անունը . երկու տպագրիչներ արդեօք ձեռնամո՞ւխ եղեր են միևնոյն գործին : Կան նաև յաւելուածական էջեր՝ 1-4 թուադրուած, որ գրուած է «Եռ. ամ. աշխարհ այս Ա.» խորագիրով 36 տուն երկար տաղաչափ մը գրաբար, խրատական իբր 4 տողնոց, որոնց սկզբնատառերը քով քովի բերուելով կը կարդացուի «ա. գ. ա. գ. ր. օ. դ. Ա.Ծ. ա. ա. ո. ւ. ր. և. ո. ր. դ. ո. յ. Յ. օ. հ. ա. ն. ն. ի. ս. ի. ա. ս. ա. ց. և. ա. լ.» պարբերութիւնը :

46. **Յովհաննէս եւ Յակոբ** (երկուքն ալ «Տիրացու») . — Մեր քով գտնուած «Տաղարան»ին նայելով, տպագրութիւնին անշուք է, պաղած և մաշած տառերով : — Հրատարակած են հետևեալները . — Գիրք վկայաբանութեան Ս. Մարիամ կուսին, 1766 : — Տաղարան փոքրիկ, Պաղտասար դպրի տաղերով զանազան գունով : — Շարական, 1768 : — Ծաղկոցիկ քրիստոնէական ուսման, յոյժ հարկաւոր նորափթիթ մանկանց, 1769 . (խոշորագիր, անհարթ փայտափոր պատկերներով, առաջափակ էջերով, Տիգրիկցի հանգ. Մահ. Խաչատուրի որդի Մահ. Պօղոսի արդեամբ տպուած) : — Մէջ բերենք «Պաղտասար պարուտոր դպիր»ի **Տաղարան**էն հատուած մը . — «Արի՛ սէր իմ . . . արի՛ հովիւ բարի . գիս ի յօտար երկիր տարի, «առ ալ, առ ալ . եկ ի խնդիր մոլորելոյս, եկ ի խնդիր քո ոչխարիս : . . . Կամաւ ի քէն խոտո-«րեցայ, շուտ մոլոր դերեցայ, յանցխա տեղիս մոլորեցայ : . . . Ես ինձ արարի . . . գնեկալ «զարարի . . . գրարին բռնեալ ես չարարի : . . . Դու ես խնդրող մոլորելոց, յաղիղ ուղղէն դորելոց . ո՛վ այցելու գլորելոց, ամահ, ամահ» . . . ևն. : Անկանոն թուադրուած էջերէն վերջ զետեղուած է Ղարիպի հեշտական **Տաղեր**, «դրվեցաւ տառ տառս այս՝ առ. ի յիշել գարե-բաց երեսուն բոլորոց» :

47. **Յովհաննէս եւ Յօդոս** (Աստուածատրեան) . — Երեխը և եղէնց գերդաստանին մասին խօսեցանք թուականի 32րդ թուահամարով : — 1777 էն սկսեալ մինչև 1790 հայր և որդի գործակցաբար բանեցուցած են տպարանին հետևեալները հրատարակելով . — Օրացոյց (*) : — Ճառ. վասն ծննդեան և չարչարանաց Յս.ի Քս.ի, 1777 : — Տետրակ տօնացուցի, 1778 : — Գիրք աղօթից (Եփրեմ Խուրինն Ասորւոյ), 1779 և 1788 : — Գիրք պատմութեան Ս. Երուսաղէմի (Հաննա վրդ. Պ. տիպ) : — Տարեկ 1782, (8 տարի վերջ՝ նորէն) : — Ժամագիրք սանձի, 1786 : — Բացատրականութեան գիրք : — Խորհրդատետր Ս. պատարագի, 1787 : Գործք առաքելոց, 1788 : — Շարական, 1790 : — Այնուհետև Յովհաննէս մեռած ըլլալ կ'ենթադրուի, ու նոյն գործը կը շարունակէ առանձինն ՊՕՂՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ որուն պիտի անդրադառնանք քիչ յետոյ :

(*) Կ. Պոլսոյ մէջ **առաջին** Օրացոյցը 1761 ին տպագրուած է : — Հայոց **բոլոր** օրացոյցներուն եւ տարեցոյցներուն ցանկը տե՛ս «Ակնէնուն Տարեցոյցը» 1911 տարի, **Փոխան յառաջ բանի** վերնագիրով գլուխին մէջ :

48. **Մայր Դպրատուն**. — ՄԿՐՏԻՉ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ ԱՄԻՐԱՅ (ծն. 1742, մեռ. 1800) որ 1790ին Կ. Պոլսոյ անդրանիկ բաղաքին **դպրատունը** (վարժարան) հիմնած է ի Գում-Գաբու, Յըշըճը փողոց, և որ ՇՆՈՐՀՔ պատուանունը առցած է Զաքարիա պատրիարքէն՝ իր կրթանուէր և եկեղեցասէր արարքներուն համար, վերին հսկողութեամբ ՄԱՏԹԷՈՍ ԴՊԻՐԻ՝ կը բանայ տպարան մըն ալ «Մայր Դպրատան» մէջ ուր կը դրոշմուին հետևեալ գիրքերը. — 1792. **Յուլ Խոհանոցից** (տպագրութեամբ խոստովանութեամբ համար առաջնորդ, երկասիրութիւն Կաղզուանցի Պօղոս քհնյ.ի, տպուած Շնորհք Ամիրայի ծախքով): — 1793. **Ճաշոց** (Մուրատ Ամիրայի ծախքով): — **Ճառ** վասն ծննդեան և չարչարանաց Տեառն մերոյ Յս.ի Քս.ի, (հեղինակ՝ Ղազարոս Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քարոզիչ Գէորգ Վարդ.): — 1794. **Նուագարան** (հեղինակ՝ Կեսարացի Գաղատաքաղեան Գրիգոր դպիր, Չերոտ Մ՚նո. Մինաս Ամիրայի ծախքով): — **Ժամագիրք** («օգնականութեամբ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ դպրաց մանկավարժ Առաքելեան Առաքել դպրի», գրաչար՝ Մանուէլ դպիր, գրող՝ Յարութիւն, մրգարիչ՝ Մինաս և Յովնան): — Վերոյիշեալ գործերուն տպագրիչ եղած է Մատթէոս դպիր որ այնուհետև Մայր Դպրատան տպարանէն կը հեռանայ և առանձին կը գործէ: — Միևնոյն տպարանը 1805ին կը դրոշմէ **Տետրակ զանազանութեան եկեղեցւոյ** անուն Նալեան Յկր. պատր.ի և այլոց առանձնորդներու հաւաքածոյ մը՝ «ի ձեռն տպագրիչ ՄԱՐՏԻՐՈՍի» զոր պէտք չէ շփոթել Սարգսեան Մ՚նո. Մարտիրոսի հետ, քանի որ վերջինս 1752ին մեռած է: — Հ. Գաբրիէլեան իր ձեռագիր ցուցակին մէջ Մայր Դպրատան լոյս ընծայուած կ՚արձանագրէ 1808 թուականով «Երկրաչափութեան համառօտ» մըն ալ:


ԳԻՐՔՈՅՍ
ՈՐ ԿՈՉԻ ՆՈՒԱԳԱՐԱՆ

Աստուածահանեցեալ ՚ի կեսարացի
գաղատաքաղեան Գրիգոր
դպրէ.
Յամի Ներմարմնութեն Տեառն
1794.

ՄԱՅՐ ԴՊՐԱՏԱՆ ՄԷՋ ԴՐՈՇՄՈՒԱԾ ԳԻՐՔԻ ՄԸ 2 ԷՋԵՐԸ

49. **Մատթէոս Դպիր**. — ծնած է 1740ին և իր ուսումնականութեամբ՝ համակրութիւնը շահած Շնորհք Ամիրայի որուն հիմնած տպարանին մէջ բաւական ատեն անօրէնի պաշտօն վարած է, ինչպէս տեսանք վերև: Մատթէոսի դրոշմած գիրքերուն մէկուն Յիշատակարանին մէջ կը հանդիպինք «ուսուցչապետ մանկավարժ» յորջորջման՝ իր անձին համար գործածուած. կը հասկցուի թէ վարժապետ էր. իր քոյրն ալ, **Ռուբինէ Նոտար**, վարժուհի էր արդէն: — Մատթէոս շարադրած է 1776-8 տարիներու օրացոյցները՝ Հրեայի մը օգնութեամբ: — Մայր Դպրատան տպարանէն հեռանալէ վերջ՝ իրենը կը հիմնէ Պալատ, «ի բաղնի Ալվաշեր, ընդ հովանեաւ Ս. Հրեշտակապետին»: — Ըստ Հ. Գաբրիէլեանի ցուցակին, Մատթէոս դպիր 1800ին տպած է **Սաղմոս** մը հայ. տառ. և 1802ին՝ **Քրիստոնէական փոքրիկ**: — Տպած է նաև 1805, 1809 և 1825 տարիներու օրացոյցները որոնցմէ 1825ին իր վերջին գործը կ՚ըլլայ, նոյն տարին խոկ մեռած ըլլալուն:

50ա. **Պօղոս Յօհաննիսեան** ( կամ **Արէպեան** ) — Գործած է 1799-1819՝ Պոլիս, Բիւրքճի խան։

50բ. **Պօղոս Արապեան Ապուչեխցի** — Միեւնոյն անձը։ Գործած է 1820-35՝ Օրթաքէոյ, մինչ Պոլիս՝ Բիւրքճի խանին մէջ ալ տպարան ունէր զաւկրներուն հետ։

51ա. **Տպրն. Երից Որդւոց Պօղոսի Արապեան** — Յետ մահուն ի-րենց հօր, գործած են 1836-53՝ Օրթաքէոյ։

51բ. **Արապեան Եղբարք** — Օրթաքէոյէ Պոլիս փոխադրուելով, գործած են 1855ին՝ Կեսիկլի Մուստաֆա Բաշա խան։

52. **Յարութիւն Եւ. Խաչիկ Արապեան** — Վերջին շառաւիղք, Ապուչեխցի Պօղոսի թոռները որոնք իրենց պապուն հիմնած Օրթաքէոյի գրաձուլարանը միայն պահեցուցած են քիչ մը ատեն։

* * **Պօղոս Յօհաննիսեանի** պապուն, հայրիկին եւ իր ձեռնասուն որդւոյ գերդաստանին կատարած տպագրական գործունէութեան մասին խօսեցանք բաւական 32, 44 եւ 47 թուահամարներով։ Գանք հիմայ իրեն, իր զարդերուն եւ տառերուն։ — ՅՕՀԱՆՆԻՍԵԱՆ մականունն ԱՐԱՊԵԱՆի վերածուած ըլլալը կ'առուգուի 1807ին տպուած «Նարեկ»ով, որուն ճակատը կայ **ի տպարանի Յօհաննիսեան Պօղոսի**, իսկ Յիշատակարանին մէջ՝ **Տպագրիչ Տիրացու Պօղոս Արէպեան**։ — Պ. Արապեան 1820ին երբ Օրթաքէոյ փոխադրուեցաւ, Պոլիս ալ տպարան ունէր միաժամանակ։ Այս պարագան կը հաստատեն 1822ին տպուած «Նարեկ»ը, նաեւ 1823ի «Աւետարան»ն ու «Գործք առաքելոց»ը. **ի տպարանի Արապեան Պօ-**



ՊՕՂՈՍ ԱՐԱՊԵԱՆԻ ՅՕՐԻՆԱԾ ԶԱՐԴԱԳԻՐԵՐԸ
**քաղուած 1802ի «Նարեկ»ի գլխոց սկզբնատառերէն**

**ղոսի Ապուչեխցւոյ. եւ երից որդւոց իւրոց՝ Աստուածատրոյ, Կէորգայ եւ Գալուստի, որ ի Բիւրճի խանին եւ կամ ի Միջագիւղն**։ — Պօղոսի մահէն վերջ Երից Որդւոց տպարանական անունը թէեւ շարունակուած է, բայց զաւակները հանգուցեալ հօրերնուն անունն ալ ուզած են անմոռաց պահել երբեմն, ինչպէս կը տեսնենք 1847ին տպուած «Նարեկ»ին ճակատը։ — Դարձեալ, Պ. Արապեանի՝ Մհտ. Աստուածատուրի թոռն ու Յօհաննէսի զաւակն ըլլալը կ'ապացուցուի 1799ին տպուած «Ճաշոց»ով. **Ի. Պոլիս, Բիւրճի խան, ի տպարանի Մհս. Աստուածատուրեան տիրացու Յօհաննէսի որդւոյ Արապեան տիրացու Պօղոսի**։

* * Պօղոս Արապեան ծնած է 1742ին, Ակնայ մօտ՝ Աղուչէկի գիւղը: Սուլթան Մահմուտի օրով Պոլիս գալով՝ հօրը հետ կը բնակի Այազմա բաղը. միջոց մը շրջուն փերեզակութեամբ կ՚ապրի, ապա կ՚աշակերտի իր տպագրիչ հօր՝ Աստուածատուր Յովհաննէսի քով՝ որուն ունեցած գիրերը հնացեալ ձեւի բերած ու կատարելագործած է, պակասներն ալ ամբողջացունելով: Հօրը հետ, յետոյ առանձին, հոսկ ուրեմն զանկրնորուն հետ գործակցաբար **Երուսաղէմական տպարանը** անընդհատ աշխատած է, հայր և մայր տառեր շինելով, ձուլելով և գիրքեր տպելով բազմաթիւ գործերուն անձամբ, մեծ ատաղ հանդիսանալով հայ մատենագրական խղճամիտ և անոր առաջնակարգ զարգացման: Բայց, պարկեշտ և գործունեայ, օժտուած մանաւանդ խնայողական զօրեղ կարողութեամբ և ձեռներէց ոգւով մը, յաջողած է բերել վիճակի մէջ դառնալ գործ մը յառաջացունել և իրմէ առաջ բնակիչներու ուրիշներու կողմէ տեղի ունեցած անյաջող փորձերէ վերջ՝ ազգային հիմը դնել հայ տպագրութեան ի Պոլիս, ուր, խորաթափանց տպարան իրեն յատուկ ձուլարանն ունէր՝ որուն մէջ պատրաստուած կարգերու տառերը չէին հասներ ի վաճառ, կ՚երեւի թէ Միքայելեան աշխատանքներ բազմացուցած ըլլալու դիտմամբ:



Պ. Յովհաննէսեանի 1802ին տպած «Նարեկ»ին Յիշատակարանը (*)

(Կարդալ իր տպարանին աշխատաւորներուն անունները)

* * Երբեւ քաջ տպագրիչ և գրաձուլիչ՝ համբաւը հեռացեալ տարածուած ըլլալով անէն կողմ, Արապեան 1770ական թուականին կը հրաւիրուի Վրաց վերջին Հերակլ թագաւորէն ի Թիֆլիզ՝ ուր կը ժամանէ տաժանագին ուղեւորութենէ մը վերջ. կ՚աշխատի նախ՝ ուսումնասիրելու համար վրացերէն տառերը զորս վերջ ի վերջոյ կանոնաւորելով տպարան կը հաստատէ: Երեք վաստակած պաշտօնն այսպէս յաջողութեամբ գլուխ հանելուն ի վարձ կ՚առնայ 8000 դահեկան որ բաւական կարեւոր գումար մըն էր այդ ժամանակին համար: Թիֆլիզէն կ՚անցնի Էջմիածին ու ներկայ կ՚ըլլայ միւռոնօրհնէքի արարողութեան՝ Սիմէոն կաթողիկոսի օրով, որ չըլլամար յարգանք և պատուախնդրութ պօղոսեալ այս տաղանդաւոր տպարանապետին: Հանդէպ ի Պոլիս ճամբայ ելլելով՝ Արապեան ալ կ՚ընէ 7 տարի անխափան պահք բանել Ս. Կարապետի տօնին, երէ երբեք ողջ առողջ կարենար վերադառնալ: Աղուչէկցին Պօղոս պատկանելով հայ նահապետական այն սերունդին որ Լուսաւորչի հաւատքին կապուած՝ հոգեկան գերագոյն զոհողութիւնը կ՚ունենայ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատալիքներուն ջերմեռանդօրէն փարած ու ժուժկալ մնալուն մէջ, երբեմն այդ պահեցողութիւնը կը յարգէ՝ գինիի մէջ պաքսիմատ միայն թաթխելով և ճաշակելով:

(*) Այս գիրքին եզերք կայ զարդին բանեցած ցանկ մը: Հետզհետէ կայ մըն է անկէ, իր պատասխան՝ բառերու մեկնութեանց զարմանալի ոճէն.— **Ազգարան,** խաղաղ սուրբ գործիք որ է բերան: **Աղօթք խմբութեանց,** [illegible] **Աւետական** [illegible] **Բանին ներմնակարութեան,** [illegible] **Ընդունայն** [illegible] **Համաձայնութեան** [illegible] **Յոյսով,** [illegible] **Վերջնական անուն,** [illegible]

* * Բաց ի Միսրայեան տառերու պատրաստութեան և հայերէն գիրքերու տպագրութեան գործէն, Գ. Արապեան նշանակելի ծառայութիւն մատուցած է նաև Օսմ. Պետութեան, հնարելով թրքերէն **Նէսխի** և **Թա՛լիգ** գիրերը որոնք իր մականուամբ յորջորջուած են (ԱՐԱՊ ՕՂԼՈՒ): Երէ. յետոյ, առանց ձուլման մեծ միջոց տուած են — ժամանակագրական կարգաւ — Տիգր. Ալամեան, Յ. Մխիթարեան և Խ. Գէորգեան, մանաւանդ վերջինը որ գեղեցկագոյն կերպով կատարելագործած են տաճկերէն շարժուն տառերը : — Սուլթան Մահմուտ անգամ մը կու գայ այցելել Գ. Արապեանի գործարանը : Բոլորովին հետաքրքրուած Մամուլով և յարակից գործիներով, գլուխը կը ծռէ բանալ մեքենային վրայ՝ ամէն ինչ մօտէն դիտած ըլլալու համար. Հայազգի Կիւրէմոլերկը հազիւ ժամանակ կ՚ունենայ Կայսեր գլուխը բռնելով մէկդի առնելու, քանի զի մեքենան իջնելու վրայ էր . . . : Վեհապետը երախտապարտ մնալով իր հպատակին այդ ազատարար բռնացքէն, մանաւանդ գնահատելով անոր կարողութիւնն ու բարբ տառերու հնարումով երկրին մատուցած ծառայութիւնը, 1816ին անոր կը կարգէ զինք Արքունի Տպարանին, առանձին կալուածով, որուն փոխադրեան պատճէնն ունինք ի ձեռին : Իսկ օրինակը կը գտնուի Հասարակաց Կրթութեան պաշտօնատան մէջ (ուր կը մնայ դասի մը հետևանօք). տարածութիւն է 11 × 140 սանթիմէթր, **Մահմուտ Խանի Մուրատեան** տուղրայութեամբ, գեղեցիկ փայլուն զանազան սափի մը մէջ : Անտարակոյս ատոր խառնակութի բարդամասնութիւնը՝ զոր կը պարունակէ Բարունակեան Գառնիկի :

*Արքունի տպարանին մէջ գործածուած «Նէսխի» գիրերուն մայրերը, յարակից մասերն ու կազմածքը 25 տարի առաջ ի նորոյ հնարող ու նոյն բաժանմանն գլխաւոր անհրաժեշտ նորոգութիւններն ընող, մանաւանդ պատուելի «Դամղայի թարգմանութեան» համար յօրինուած տառերը ձուլելու մասին մեծ աշխատութիւններ ընծայող հայազգի Արապ օղլու Պօղոս և իր երկու որդիներն՝ Աստուածատուր ու Գալուստ տարիէ մը ի վեր կատարելագործութեան և ուղղամտութեան շարժած, նաև արհեստին մէջ հմտութիւն ցոյց տուած են. յետոյ, Կայս. Տպարանին՝ պաշտօնէից անուշադրութեան և անհոգութեան երեսէն խանգարուած բոլոր գործիքները վերոյիշեալներուն ջանքին ու խնամքովը կանոնաւորուած են և դրուած այնպիսի վիճակի մը մէջ, որ հաստատութիւն կարող ըլլայ օգտակար անկէ : Իմ Վեհափառութիւնս մտածած է որ այսուհետև չէ կարելի այս ընծայել գեղեցիկ մատեաններ, Տիւաններ (բանաստեղծութեանց հաւաքածոյ) «Թա՛լիգ» կոչուած գիրերով : Այս պարագան յիշեալ Արապ օղլուի նկատողութեան յանձնուած և խորհրդակցութիւն կատարուած է անոր հետ, որ «թա՛լիգ»-ներուն կաղապարաց շինութեան կարելի ըլլալը յայտներով՝ գործի ձեռնարկած է ու քանի մը ամսուան մէջ գիրերը թափելով տպագրած է նմոյշ մը՝ հաւանութեան արժանացած : — Նկատելով որ այն արհեստին մէջ ձեռնհաս միայն Արապ օղլուն կը գտնուի որ «Նէսխի» և «Թա՛լիգ» տառերուն պատրաստութեան համար աշխատած է՝ արհեստն իր տղոցն ալ սորվեցնելով, և որ Կայս. Տպարանին գործերուն վրայ անմիջական հսկողութիւն ըրած է կատարեալ ուղղամտութեամբ և հաստատամտութեամբ, իր նմաններուն պէս, իրեն այս «պէրաթ»ը տրուիլ առաջարկած է՝ Տէրութեան ատաղանին Կայս. Տպարանի վերատեսուչ Էսատ [illegible]. Նկատելով որ Արքունի փառօղարանին մէջ Կիւլեսարի օղլու Յակոբ Գալֆայի նախաձեռնութեամբ ու ժամագործ Առաքելի կողմէ ի նորոյ շինուած մեծ անիւը (չարխը բէլիր) Կայս. հաւանութեան արժանացած է. Նկատելով որ իմ հարկատու հպատակներէս այսպիսի գիտուններուն Եւրոպացւոց հետ (Ֆրէնկներէ) մրցում ընելը Տէրութեան փառքն աւելցնելէ զատ՝ այդոց ալ աշխատելու, ձգնելու և օրինակ առնելու գրգիռ մը կ՚ըլլայ, և յիշեալ անձերը հարկէ զերծ և իրենց «սարը մէոր» ու «բաղդշա»ներուն (շրջակին) արտօնութիւնը պարունակող հրովարտակը տրուած է ١٢١٠ թուականին, նմանապէս յիշեալ*

*Արապեան Պօղոսի տէր Ներկիսոյ ١٢٣٢ տարւոյ Րէպիւլ Ախըրի 24ին. ըստ որում՝ անկէ առաջ Կայս. հրովարտակով հրամայուած է «պէրաթ» չտալ Կայս. ատազանիկս տարբեր մէկու մը բարեխօսութեամբ եւ առանց իմ հրամանիս չարձանագրել զայն, եւ այս կարգի հարկագերծներուն սեփականութիւն եղող տուները, ծովեզերեայ դարպասները (եալը), այգիները, պարտէզներն, արտերը, հարկագերծման բուսականներն ու անոնց սահմանները — երկայնութիւն, լայնութիւն ու տարածութիւն — ընել, եւ առանց հարկագերծման բուսականէն սկսեալ ի նորոյ տէր եղած բնակարաններուն եւ կալուածներուն տասանորդի եւն. տուրքերը պահանջել անոր փմարել, իրենց զաւակներուն ու ծառաներուն՝ ձեռնտուին գտնուած պաշտօնեարութիւններուն համաձայն՝ անուանի զանուանիր առնուել եւ անոնց իրերներուն մօրհակները մէկիկ մէկիկ ընելով ճշմարտութիւն երեւան հանել, որպէս «Սանայօլ Գատրըրը»ին եւ ըստ այնմ նոր «պէրաթ» տալ: Յիշեալ Արապ օղլու Պօղոս եւս կանչուած ու հարցաքննուած է նոյն պաշտօնատէրին, ուրկէ հասկցուած է որ իրեն ունի 4 զաւակ, Ածատուր, Գարուստ, Գէորգ եւ Տմաւոն (= Սիմէոն), նաեւ հանգուցեալ Թաւիթ աղայի «վագըֆ»էն Օրթաքէօյ իր բնակած տունն ու Պօլիս՝ Պիշրըքի Խանի մէջ «պասմաճի օտասի» մը (տպագրատուն). առանցմէ զատ որ եւ է կալուած ու ծառայ չունի: Ուստի կը հրամայեմ որ յիշեալն իր 4 զաւակներով «ճիզյէ»է (գլխատուէից յատուկ տուրք մը) եւ այլ բոլոր տուրքերէն ազատ ըլլայ եւ հարկահաւաքներուն կողմէ արտօնագիր (թէզքէրէ) չպահանջուի իրմէ. նաեւ տակառի (ճուպը), տիկի (բուշում) եւ կարասի (զազդան) . . . . .* [անընթեռնլի] *էն եւ . . . . .* [անընթեռնլի] *էն, ինչպէս եւ երկսեռ ծառաներու տուրքերէն եւ բաժին ու բրինձ, «բիշըքճի»ի եւ Կայս. բանակին հարկերէն եւ «Սաղ-ղուն պաշչէփ»էն զերծ կացուցի. զաւակներն ու սպասաւորներն այ . . . . . . .* [անընթեռնլի] *բարապանի (եասաքճի) եւ «ամէլ օղլանը»ի տուրքերէն, խոտ ու յարդ հնձելէ եւ անոնց վրայ հսկելէ ազատ ըլլայ. իր ուտելիքին, խմելիքին, հագնելիքին, «սարը մէօր»ին, «բաղչա»ին, պահպանողական զօրքերուն, անկողինին, նաւակին, զաւակներուն տարազին, պօսթական «զէրվ»ի (զդակ), «բաշաք զաղխաղը»ի, զգեստի եւն. մասին ո՛չ որ միջամտութիւն ընէ. արտօրէից տուրքի եւ «զառատիէ պաղչէսի»ի պահանջմամբ՝ վերատեսուչներու . . . . .* [անընթեռնլի] *եւ այլոնց կողմէ նեղը չըլլուի. իր բնակարանը այլոնց կողմէ ո՛չ որ կարենայ մտնել. ծովով թէ ցամաքով ճամբորդութիւն ըրած ատեն՝ իրեն դիւրութիւն ընծայուի. իրեն եւ ծառաներուն զգեստ ու տարազ փոխել հարկ եղած պարագային՝ արգելք չյարուցուի. պահպանողական զօրքերուն, դուարներուն, ջորիներուն ո՛չ մէկ պատրուակ ցուցուի. վըտանգաւոր տեղեր՝ այլոնց կողմէ փոխանորդ մարդեր իր քով դրուի, որպէս զի կարենայ ողջամբ ժամանել որոշած վայրը: ١١ Ճեմազիել էվվէլ ١٢٣٢*

Կարի չահեկան բովանդակութեամբ այս «պէրաթ»ը գիրի առնուած է «տիվանի» կոչուած բոլորագեայ գիրով՝ մէկ տող սեւ և մէկ տող կարմիր: — Պօլսահայերէ 4 ազգատոհմ միայն **պէրաթլը** էին, Տիւզեանք, Տատեանք, Պալեանք և Արապեանք, ամէնքն ալ վերոյիշեալ իշխանական առանձնաշնորհումները վայելով: Կուրբերին ծածկող սաւանը — հասարակ մահկանացուներու կուրբերէն զանազանուելու համար — կանաչ գոյն ունէր, ոսկեծոփ: — Բաց աստի, երկրին օրէնքը կը պահանջէր որ Քրիստոնեայք Իսլամներէ զանազանուելու համար՝ գդակներնուն վրայ կրէին սեւ սնդուսի մէյմէկ կտոր. միեւնոյն ատեն՝ ամէնքը արհեստաւոր պարտաւոր էր գդակին վրայ կրել իր արհեստը յատկանիշող պզտիկ առարկայ մը. այսպէս, սափրիչներունը «չախմախ» էր, սեղանաւորներունը՝ ոսկի զանազան մասեր, իրենց Ա. Բ. Գ. աստիճաններուն համեմատ, ոսկերիչներունը՝ մատանի, եւն.: Գ. Արապեան առաջինն ու միակն էր

եղաւ որ սկսաւ իր գլխին վրայ կրել Սուլթան Մահմուտէ շնորհուած արոյրէ Մամուլ-Նշանը որուն իրականէն' համաչափ նմանահանութիւն մըն է ներկայ պատկերը :

* * Պ. Արապեան Արքունի Տպարանին մէջ կը հրատարակէր «Թագվիմի վագայի»ն և անոր հայերէնը «Յայտարար լրոյ Մեծի Տէրութեանն Օսմանեան» 500ական օրինակ . հայերէնի թարգմանիչն էր Պատրիարքարանի քարտուղար Տիրացու Յուսիկ :— Այս 2 թերթերուն տպագրութեան համար կառավարութիւնը 2000 դրուշ ամսաթոշակ կը վճարէր իրեն ու թերթերը ձրի կը յղէր բոլոր գաւառային առաջնորդներու և կառավարիչներու : Հոն կը տպուէին նաև կառավարական ամէն տեսակ գործեր :— Օրթաքէօյ, Արապեան ձուլարանի մէջ կը պատրաստուէին թուրք տառեր' մի միայն Արք. Տպարանին համար . հրաման չկար զայնս դուրս հանելու, Սուլթանին կողմէ առանց մասնաւոր «իրատէ»ի : Ատոնց մէկ օխան կ'արժէր 40 դրշ., խել հայ տառերունը' 25-30 դրշ.: Վերջէն, երբ առաջին Սահմանադրութիւնը հռչակուեցաւ, չմնաց նախկին խըստութիւնը, քանի որ Եւրոպայէն սկսան գիրեր բերուիլ:



ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՏԷ
բացառապէս շնորհուած գլխանիշ Մամուլ-Նշանը' ՊՕՂՈՍ ԱՐԱՊԵԱՆԻ

* * Եէնիչէրիներու ժամանակ, ինք' քաղաքէն հեռու ըլլալու նկատումով, 7000 դրշ.ի գինքի փոխարէն տուն մը կը գնէ Օրթաքէօյ, Թաշ Նէրտիվէն կոչուած թաղին մէջ' ուր տպարան մըն ալ հաստատելով կը շարունակէ գործել զաւկըներուն հետ ընկերովի :— Ինչպէս տեսանք վերևի «պէրաթ»ին և 1807 ին դրոշմուած «Նարեկ»ի յիշատակարանին մէջ, մեծանուն տպարանապետն ունէր 4 զաւակ, Ածատուր, Գէորգ, Գալուստ և Սիմէօն, որոնք — բաց ի Սիմէօնէն — ցմերջ աշխատակցած են իրենց հօր, իբր գրաձուլիչ, գրաշար և տպագրիչ :— Անդրանիկը կ'ունենայ 3 մանչ զաւակ, Յովհաննէս, Գրիգոր և Անտոն, բոլորն ալ իրենց պապենի գերդաստանին գործը շարունակած, որոնց կը վերագրուի կեդծարարութեան դէպք մը . հայրերնին յանկարծամահ եղած է. Յովհաննէս մեռած է Հալէպ, խել Գրիգոր և Անտոն Ռուսիա մեկնած են :— Գէորգ կ'ունենայ 5 աղջիկ և մէկ մանչ (Խաչիկ Արապեան), այդ աղջիկներէն մէկը միայն ամուսնացած ու վերջերս մեռած է, խել միւսները ամուրի մնացած են և ցարդ կենդանի . Խաչիկ ներկայիս մէջ 85 տարու, Արապեան գերդաստանին վերջին ամուրի շառաւիղն է արու' ռսկերչութեամբ զբաղող : — Իսկ Գալուստ որ «Երից որդւոց» կրտսերագոյնն էր' ամէնքէն ճարպիկ ու բանգէտը եղած է և տպարանական տուրեւառիկ գործերով ապահոված է իրեն դիւր կեանք մը . իր արու միակ որդին Յարութիւն նոյնպէս աշխատած է պապենական արհեստին և ամուրի մեռած 1890 ին' 74 տարու :— Օրթաքէօյի տպարանին այրելէն տարի մը վերջ' 1855 ին **Արապեան Եղբարք** վերջին գործատուն մը կը հիմնեն Պոլիս, Կէտիկլի Մուսթաֆա Բաշա խան, զոր քիչ մը ատեն միայն վարած են : Գալով Խաչիկի, Օրթաքէօյի ձուլարանը բաւական ատեն առանձինն գիրեր ձուլէ վերջ' թուրքերէն հայր և մայր տառերը 1600 ոսկիի



† ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՊԵԱՆ

ծախած է Ծով. Նախարարութեան' ուր պաշտօնի ալ կոչուած է, Էյուպ Բաշայի տնօրէնութեան օրով . բայց գժգոհ չուրջիններուն անոպայ ընթացքէն' 9 ամիս վերջ գործատրապետ-ձուլիչի այդ պաշտօնն ալ լքած է . իրեն յաջորդած է Սռ. Տամատեան :— Ցարդ կանգուն կը մնայ Օրթաքէօյի ձուլարանին, քաղաքէն երկարկանի չէնք մը ուր այցելեցինք վերջերս, նոր նորեր

ու նիւթեր քաղելու համար : Միջանկեալ կը դնեմ մարդ այդ անշուք գործարանը որուն մէջ հնամենական սեղանի մը վերջին շառաւիղները այրած ու դատած են բոլ երկար, և որուն լուսամուտները կարծես անցքերը աչքերը ըլլային հինայ՝ գործունէութեամբ առլցուն փառաւոր անցեալի մը վրայ պաղած մնացած . . . :

* * Այսպէս, Արապեան Պօղոս և զաւակները երկար ատեն կրցած են իշխել մայրաքաղաքիս տպագրական հորիզոնին վրայ և բոլորել արդիւնաւէտ գործունէութիւն մը, հասցնելով նաև բազմաթիւ գրաշար ու գրաձուլիչ՝ որոնք իրենց կարգին տէր դարձած են տպարանի և ձուլարանի : — Արտաշէսեցին Պօղոս ակնարու մօրուքով պատկառելի ծերունի մըն էր. իր խօսքը կը փնտռուէր միշտ, քաղաքական և ազգային հրապարակ խնդիրներու մէջ, որովհետև խիստ ուղղամիտ էր և անաչառ : Հին Հայու բացառութեամբ, «սուրբ» մարդ մը նկատուած էր՝ որուն վրայ կը պարզուր ակնածանք պատկառանքն ու վստահութիւն : Նախազգալով իր մահը՝ երբ որ և է տկարութիւն խել չունէր, առջի իրիկունէ սպասել կը խօսի իրեններուն. «Այս գիշեր ժամը 5 ին պիտի մեռնիմ. անկողինս արևելք-ի ձգեցէք. կէս ժամ առաջ արթնցուցէք զիս, որպէս զի մնաք-բարով ըսեմ» : Եւ իրօք ալ որոշեալ ժամուն ձայն կու տան իրեն. առջորթի և օրհնութեան սեւ խօսքեր կը մրմնջայ և անվրդով համակերպութեամբ մը երկրաւոր աւանդով՝ ժպիտը շրթունքին կ'աւանդէ հոգին 95 տարեկան հասակին մէջ, 1835 ին : Թաղուած է Օրթագէօյի մախիլին գերեզմանատունը : — Բանի մը շաբաթ առաջ Հ. Կէոփկեանի հետ գացինք դեգերիլ այժմ անբաղ ու լքուած այդ հողվարդին մէջ՝ քանդուած տապանաքարերու մէջէն անո՛ր գտնելու համար : Բայց գերեզմաննոցը հիւսիսի կողմէն կեռ՛ւական խորուած և զարզկուած իր տապաններէն՝ մարզարանի վերածուած էր... : Ի զո՛ւր որոնեցինք անհետացող Ամիրաներու այդ շքեղակայանին մէջ շիրիմը համեստ գրագործով այդ մեծանուն Հայուն որ շուրջ երեք քառորդ դար՝ ստացած էր ազգակիցներու և Իսլամներու մատուցական յարգանքին : Հո՛ն, անոյի մահասպանին ծառերը, առւեծի մը կուշին կանգուն մարմարեայ հոյակապ աղբիւր մը իր նոր կառուցուածքին մէջ շա՛տ բան կը խօսէր այդէն՝ հայու անյայտացող դամբաններու մասին . . . :



ԽԱՉԻԿ ԱՐԱՊԵԱՆ

* * Ամբողջ ընտանիքին տպարանական գործունէութիւնները՝ կեդրոնատեղիներու հետ՝ հինգ բաժանմունքով սրոնած ըլլալով ԱՐԱՊԵԱՆՑ ԲԱԺԻՆներ սկիզբը, կը բաւականանանք անոնց հրատարակած գիրքերուն և թերթերուն ցուցակը զետեղել հոս՝ ժամանակագրական կարգաւ : — 1799, **Ժամագիրք** (նաև 1850 ին) : **Ճաշոց : Տօնացոյց** (որ 1802 ին ատպառած է. վերջապէս տպուած 1828 ին) : 1802, **Նարեկ** (նաև 1807, 1822, 1832, 1836, 1839, 1847, 1852) : **Տաղարան** (նաև 1816 ին «Անանի Տաղարան» ձայնքաղ) : 1804, **Ճառ ծննդեան եւ չարչարանաց Յս.ի Քս.ի** : 1805, **Աւետարան** (նաև 1823 ին, դարձեալ «Իւղաբերից Աւետարան») : 1806, **Աստիճ Սաղմոսի** (հայ. և տաճ.) : **Բացատրութիւն յարգարական գինաց** (յունարէնէ թրգմ.) Աղարիգոս տարկուազի : 1807, **Գիրք մեծագին եւ պատուական ականց** (պրսկ.է թրգմ. Գէորգ դպիր) : **Ներբողեան Ս. Արտաոյն Իշխանին** (Արք. Վ.րդ. Աստուածացի) : 1808, **Ներբող Ս. Հրեշտակապետաց** (Շնորհալի) : 1814, **Քրիստոնէական**, հարց-պատասխանի (աշխ. փոքր). նաև տաճկերէն՝ ընդարձակ : 1817, **Գործք առաքելոց** (նաև 1823, 1839 և 1853. վերջին երկու բաժանմունքն՝ երկիցս) : 1820, **Բան հաւատէր սիրոյ** : 1824, **Ագաթանգեղոս**, արրագրեալ բառ բնաիր օրինակաց : **Թանգարան խրատու** : **Մաշտոց** ընդարձակ, թարգմ. յուն. (նաև 1848 ին՝ «Ծխական որ է Մաշտոց», դարձեալ «Հայր Մաշտոց») : 1826, ԲԱՌԱՐԱՆ ՊԻՍԿ.-ՀԱՅ (ձեռ. Պոլարեցի Գէորգ Դպիր), Յակոբ Տիգրանի հաստատ քերականութեամբ : **Սահման Ազգ. Ժողովոյն** : **Լապտեր հոգւոյ** (Կարապետ Արքեպսկ.) : **Քերականութիւն Հայոց լեզուի** (Արզրումցի Տ. Միքայէլ Տ. Յարութիւնեան) ընդարձակ և համառօտ. (նաև 1829 ին՝ Փէշտմալճեան Գր. վարժապետին, «համառօտ» և «միջակ») : 1827, **Ժամակարգութիւն Եկեղեցւոյ** «յորում են 3 գիրք, Սաղմոս, Անանի ժամագիրք և Տօնացոյց» : **Քերական** լեզուագիտութեան, հայ. և տաճ. :

1829, **Կրթութիւն քաղաքավարութեան**: 1830, **Օրացոյց** (ապա 1834-39. նաև 1844): 1834, **Գեղեցիկ գրոտառ** (հատուկներն բրգմ.): **Յայսմաւուրք**: 1836, **Արփիական Հայաստանի** (գրբ. փորագրած Յովհ. քհնյ. Վանանդեցիի): 1838, **Վանանդեցի Ցախսիփայ**: **Ընթացք հայ գրութեան**: ԹԺՇԿԱՐԱՆ **Միհայէլ Լէոնէի** (6 հատոր, 1833-39): 1840, **Ազգային Բիւզանդեան**: **Մեկնութիւն ժամակարգութեան**: 1841, **Մերապարգիսոսի Գեւորգի** «սրբազան գործողութիւնք» (բրգմ. խոսք.): **Փոքր քաղաքներու մեծ սիրտ մարդիկը** (կատարելագործութիւն, բրգմ. խոսք. Յովսէփ Գ. Թաւուզեան): 1842, **Եղերերգութիւնք չարչարանաց Խաչելոյն**, առաջաւորեալ (Վառնացի Մարտիրոս գրիչ Պողոսեան): **Քաղաքավարութիւն** (4 հատոր, բրգմ. խոսք. Յ. Զամուռեան): 1843, **Ճառ Ա. ժամանակի մարդոց** են.: 1844-6, ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ **Դիրքեր Պասուեկի Փէշտիմալճեանի**: 1847-50, **Սուրհանդակ Բիւզանդեան**: 1848, **Լուսաւոր** (Գ. Փէշտիմալճեան): **Համեմատական ուղղագրութեան** են. (Մատթէոս Գարթ.): **Սաղմոս** (1. խոշորագիր, 2. միջակ, 3. փոքր, 4. Հայ. և Տաճկ. «նորոց բարգմանեալ պարզ ոճով») զանազան բաժանմունքով: 1852, **Աւետարանի վարդապետութիւնք** են. (տեսր Ա.): **Պատմութիւն տանն Արծրունեաց** (Թովմա Վ. Արծրունի): 1853, **Հաւերժական քարոզխօսութ.**: 1855, **Մեղու** (հանդէս): 1856, **Ջաւարհանէօս** (հանդէս): — Այս ցուցակէն կը հանկցուի թէ Արտալեանք 84 գիրք (մանր հատորատ) տպագրած են, միջ 1834 ի իրենց օրացոյցին հետ՝ տպածներնին մէկ ցանկն ունին (ընդ ամէնը 46 գիրք): Թուականներն առանց յիշատակուած ըլլալ՝ այդ ցանկէն ունինք դեռ հետեւեալներն ալ. — **Աւետարան**: **Ճառընտիր**: **Համ Տօնիւ Հայոց եւ Հռոմայեցւոց Ընտիր խուրձ**: **Սերմ խմաստութ** (նաև Տաճկ.): **Զէն հոգեւոր** (Նահատ Յկր. Գամբ.): **Կեանք չարչարանաց** (Տճկ.): **Պատմութիւն Լուսաւորչի** (Տճկ.): **Պատմութիւն Մարկոսէ կեանքի**: **Պղնձէ քաղաք**: **Տաղարան Եկեղեցւոյ**: Այս 12 ը բարդելով վերջին 84 ին վրայ՝ կ'ունենանք համագումար 96, ինչ որ պատկառելի թիւ մըն է առաջին՝ 57 տարուան շրջանի մը համար, երբ նկատի առնենք թէ ատենցմէ շատ առատ գործեր են՝ քանի մը տարիներու ընթացքին տպուած, վասն զի ինն տանն Մամուլը կառավարողներէն շատ ընդարձակ ընթացած գիրքերուն զարկ էր զգուշին, «արագատիպ» ի տեսակ:

53. **Տպ. Մայր Եկեղեցւոյ Ս. Էջմածնի.** — Կոչուած է նաև «Տպարան Պատրիարքարանին Մայր Եկեղեցւոյ» կամ «Տպարան Մայր Ս. Աթոռոյն», Ակնեցի ԱՆԴՐԷԱՍ ՎՐԴ. ՆԱՐԻՆՆԵԱՆԻ տեսչութեամբ ընդհանուր որ յայտնի **տպագրիչ** մըն էր: Նոյն գործատան մէջ «ի տիպ տրամադրեալ» գիրքերն են. — **Ճառ ներբողեան** «ի հանդէս երջանիկ կաթողիկոսն Ս. Հռիփսիմեանց հրաշազարդ յորինուածովք» Մ. Խորենացիի: — **Դիրք աղօթից** (1817): — **Պատմութիւն անցից** «որ եղեւ ի Կ. Պոլիս, վասն յայտնի կացուցանելոյ զճշմարտութիւն հաւատոյն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ՝ այնոցիկ որ չէին տեղեակ և մեղանչէին» 1818: — **Բժշկարան հոգեւոր** (Եփրեմ Խ. Աստի): — **Բացայայտութիւն մեաց** «Հրամեր Սիրոյ» տեսակին (Դր. Վ. Խասպուտեցի) 1822: — **Ծրխս. Վարդապետութիւն** ուսմնական ...: — **Պատմութիւն** «նահատակութեան Ս. Վարդանանց, և Ղեւոնդեանց քհնյ.ից» (Եղիշէ) 1823: — Խորհրդատետր (1825):

54. **Աբրահամ Ամիրայ Փերդեան.** — Իր ծնողքն էին Ակնեցի մեծատուր Մհտ. Յոհան և Աննա Թերզեանց, որոց ՅՈՀԱՆՆԵՍ ալ կոչուած է: Եղբայրն էր Մհտ. Երամ. որոց Գաբրիէլեան Գէորգ Պէյ Երամեան իր եղբօրորդին կ'ըլլայ, իսկ Աբրահամ Բոյու Երամեան՝ իր եղբօրը թոռը: — Աբրահամ Ամիրայ ազդեցիկ դէմք մըն էր ազգ. գործերու մէջ, մանաւանդ Կարգին Հայոց հետ միութեան բանին նախատակոր: Մեռած է 30 Մայիս 1827 ին բարեբարի համբաւով մը՝ զոր կենդանութեանն ալ ստացած է իր դրոշմած մատեաններուն ճակտին, որ կը կարդանք «Արդեամբք և ծախիւք առն ազգասիրի և բարեպաշտի ակնեցի

Մնաս. Յօհաննէս Մնաս. Աբրահամ Ամիրայի : Յիրաւ խել սխալական գործարանի» : — 1824 ին էր որ Մուրատ Պալագեանի մօտ՝ Հասան Փաշա խանին մէջ հիմնեց տպարան մը զոր 3 տարի կանգուն պահեց և ուր հրատարակեց հետեւեալները. — **Յիսուս Որդի** [փորձերուն սրբագրիչն էր Աւյանեան Թագւոր դպիր] : **Յաճախապատում** : **Զգօն** (Յակոբ Մծբնացի) 1824 : **Թուղթ ընդհանրական** (Ն. Շնորհալի) : **Մեկնութիւն** Աւետարանին Մատթէոսի, 1825 : **Մեկնութիւն** Աւետարանին Մարկոսի, 1826 :

55-64. **Տաճկական տպարաններ**. — Ուզեցինք այս խորագրին տակ խմբել հայ մասնաւորներ ու հաստատութիւններու հրատարակող հետեւեալները՝ որոնց մեծամասնութիւնը — բրքարարութ. թերթի անուամբ — կարճատեւ կեանք ունեցած է : — ՄԱԹԹԷՈՍ ԱՄԻՐԱ [Աբրամի Տպարան], բաց է ի բաքքերէն՝ ունէր հայերէն տառեր ալ, յաջորդաբար իր փարիչները եղած են Գ. Արապեան, Յ. Մինասեանեան, Յ. Պօյաճեան, Ճ. Արամեան : 1832-3, հոն տպուած է **Թագվիմի վագայի** Պօլսոյ անդրանիկ տաճ. լրագիրը (*) որ 12րդ թիւէն իր հայ. թարգմանութիւնն ալ կ'ունենայ «**լրոյ գիր** Մեծի Տէրութեանն Օսմանեան» և որ 1840 ին լոյս կը տեսնէ հայատառ-տաճկերէն. 1843 ին անուն **Ճէրիտէի հավատիսի** կը փոխուի, 1847 ին ալ «Յայտարար գիր լրոյ»ի, հուսկ ուրեմն «Մուրհաճիդակ Ըսդագարեան»ի : — Աբրամի Տպարանին մէջ դրոշմուած են հայ. քանի մը թերթեր ու գրքոյկներ ալ՝ որոնցմէ յիշենք 1865 ի **Աւանեան Օրացոյց** ընդարձակ, «**Թաւրակ** Հայաստան աշխարհի» 1860, **Վէճ պատասխանական**. 1862, **Ազգ. տաղաչափութիւն մը**, 1865, ևն. : — ՇԻՐԻՆԷԹԻ ԽԱՅՐԻԷ շրկետային ընկ.ն ալ ունեցած է պահ մը իր սեպհ. տպարանը՝ Տեղեկագրի և ժամանակացոյցի հրատարակութեանց համար, որոնցմէ յիշենք **Անսր նէշիր** : — ՃԷՄԻՅԷԹԻ ԻԼՄԻԷԻ ՕՍՄԱՆԻԷ. տպած է **Աճլուր եդրայր** (1863), «**Աստնաբանութիւն** ի տօնի Ս. Գ. Լուսաւորչի», «**Յեղեռնէ** ճեպաց», «**Ս իլլէբ** Սինոդոսի ճանկալանէն...», «**Ազգ. Եկեղ.** խնդրոյն վրայ համառօտ խօսակցութիւն մը համառօտ պատասխան», բոլորն ալ 1869 ին : — ՄԷՃՄՈՒԱՅԻ ՀԱՎԱՏԻՍ. 1863 ին տպած է **Պօլօժէնիա** : — ՄԷՏԱՅԸ ՀԱՔԻՔԱԹ. 1872-3 ին տպած է **Հարբէֆ** ընտական փիլիսոփայութեան, **Քաղուածք** Տիեզերական ժողովոյ, **Պիոս Թ.** քաղը շրջաբերական, **Դարոյիկ** մեկնելոյ, **Անհարկութիւն մը** Գեր. Գազանճեանի հանած անարակին վրայ ևն. : — ՄԻՀՐԱՆ (Նազգաշեան), Կեսարացի. 23 տարիէ հետէ իր սեպհ. տպարանէն լոյս կ'ընծայէ **Սաղաթ** համաշխարհային տաճ. թերթը. նաև քանի մը հայ. դասագիրքեր Օսմ. լեզուի յատուկ, որոնցմէ յիշենք 1884 ի «**Գրամահր** : — ԱԼԷՄ. 1889 ին տպած է **Միրաճըր աղպալ** : — ԹԻՃԱՐԷԹ ՕՏԱՄԸ (Առեւտր. Սենեակ). տպած է համաւուն վարչութեան 1889 ի համաւուն տեղեկագիրը : — ԱԽԹԷՐ. այս տպարանը նախ կը գտնուէր Վէզիր խան, ուրկէ փոխադրուած է Էպուսսուտ ճատտէսի. թիւ 54 : 1897-9 ին տպած է Մ. Արփիկեանի մէկ քանի դասագիրքերը, «Ինդալն» ու «Համրագիտակ» պարբերականները, նաև «Առաջնորդ առողջապահութեան» : Տպարանատէրն էր Թաճիր անուն պարսիկ մը որ **Ախթէր** անուն պրսկ. թերթն ալ հրատարակած է և զոր Կառավարութիւնը պաշտօնի կոչելով Մէքքէի մէջ՝ տպարանն ու թերթը դադրեցուց :

65-76. **Եւրոպական տպարաններ**. — Դարձեալ, ուզեցինք այս խորագրին տակ խմբել օտար անձերու և օտար թերթերու անուններով բացուած այն տպարանները որոնք հայերէն գիրք ու թերթ հրատարակած են : — Ա. Պ. ՉԸՐՉԻԼ. Սուրբ Գրոց տարածման համար ի Պօլիս՝ Միսիօնարներու առաջին տպարանն էր այս որ կը գտնուէր Համ. Պարտէզ Վ.արչութեան Նոնէի դին, և որ 1839-58 ին լոյս ընծայած է բազմաթիւ հին և նոր կտակարաններ, «Աւետաբեր» 1855 էն սկսեալ, **Պատմական** և Բրոյեստանք, **Լիակատար** բառ-

(*) Իսկ Պօլսոյ ֆրանս. անդրանիկ լրագիրն եղած է Moniteur ottoman, երկուքն ալ Ալէքսանտր Պլաքի կողմէ հիմնուած:

թանութիւն (1848), **Լուսիլլա** 1854, **Ճրագ** նոցա, **Երկու** ամուսնութիւն (1856) ևն.: Հոն աշխատած են Յարութիւն և Սարգիս Փափազեանք: Ա. Պ. Չըրչեան յաջորդած է Յարութիւն Մխիթարեան՝ որուն մասին խօսած ենք իր կարգին: — ՏՊ. ՍՈՒՐԲ ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻ (Imprimerie de St. Benoît), Վինչենց անուն լազարիստի մը կողմէ ԳԱԼԱԹԻԱ բացուած՝ որ աշխատած է ի նպաստ Կաթոլիկութեան տարածման, հետեւեալները հրատարակելով. — **Որդեգիր կուսին կամ զարդ մը** (1844). այս գրքոյկին բուն պարական «Յառաջաբանութեան» հանդիպակաց սա հատուածը կայ որ կրնայ մասամբ գաղափար մը տալ հեղինակին լեզուին ու նպատակին մասին. «Մէկ ուրիշ գիրք մըն ալ հիմայ տաճկերէն խօսքով կը տպուի կոր Վանքը էրմէնի մէ Բրօթէսթան Բարոյիչ անունով, հատուկի բաներուն վրայ, որ սար եղեւէն անմիջապէս անիկայ ալ պիտի հրատարակուի»: **Ընկ. Համազգեաց** (1846): «**Բամնեւերկու պատճառ** վասն ընդունելոյ կաթողիկէ եկեղեցին» 1847: «**Հաւատոյ** հիմունքները ու կանոնները» 1849: «... **Ճշմարտասէր** անձի մը խորհրդածութիւնները» 1851: «**Պատասխանի** առ բանս Տեարակին անուանեալ. Ճշմարտութիւն... Հասուն Գերապայծառին հետ ունեցած զառին վրայօք» 1854: ևն., ևն.: — Ս. Բենեդիկտոսի տպարանին համար Հ. Աստուր 1790ի սկիզբները բացուած է կ'ըսէ իր «Պատրիարքաց Պատմութեան» մէջ. մենք այդ թուականներուն տպագրուած գիրքերու չհանդիպեցանք: — Ն. ՏԷ ԹԱՄԹՐՕ (Դալաթիա). 1846-50ին տպած է **Սկզբունք** թարգ. գիտութեան: **Համառօտ** մտածմունք տարին ամէն մէկ օրուան, քրիստոնեաներուն հոգեւոր շինութեան համար: **Աւետարանական** տետր: **Մշտար** և զրոյց թուաբանութիւն (անգլ. թարգմ. Վ. Վ. Ա.): **Նոր** Կտակարան: ևն.: — Պ. ՃՕՆՍՕՆ, Բողոքական Միսիոնար. 1847ին մէկ գիրք միայն տպած է. «**Անգլիական Եկեղեցին** և անոր հաւատալիքը, հաւատքը, քահանայական պաշտօնը և պաշտամունքը»: — ՀԷՆՐԻ ԳԱՅՈԼ. տպած է Հիսարեանի **Բանասէր** հանդէսը (1851) որ կը պարունակէ Պօլսահայոց անդրանիկ վէպն աշխարհաբար: **Խաղողին Խնամողութիւնը** (1857): **Վիրգինիա**: **Միհրդատ** (1858): ևն.: — ԷԼԻՎԱՆԳ ՀԷՐԱԼՏ, անգլ.-ֆրանս. այս օրաթերթը 1868ին տպած է **Թէմփէլլի** հայատառ-տաճկերէն գիրքը: — ՏՊԱԳԻՐ. ՄԱԿԱՐՕՆԵՑ և ԱՍՄԱ ԱԼԹԸ, ՃԱՄԼԸ ԽԱՆ: Պօլիս՝ Բէրքէճէլէր՝ Սպանէքօֆի անուն Պօլիար մը կար որ տպարան ունէր ուր սպիր. թերթ մը կը հրատարակէր: Յետոյ ծախու առաւ Ասմա Ալթը, Ճամլը խանին մէջ գտնուող հայ տպարան մը (որ կը կարծուի ըլլալ Յ. Միհենտեանինը): Հոս էր որ պարապեցաւ այնու հետեւ զանազան լեզուներով գործերու տպագրութեամբ: — Տպած է Օ. Խօճասարեանի **Օրագիրին** Ա. թիւը, Տիրան Փափազեանի **Ծաղախօս սափրիչը** (1872), **Երգարան բանտականը** (1871) ևն.: — Ասմա Ալթը տպած է Մարգարեան Բերովբէի հաշուոյն Պօղոսեանի **Թուաբանութիւններն** մին, նաև Յ. Գ. Գալֆաճեանի թարգմանած «**Ընտիր խորհրդածութիւն** երեւելի հեղինակաց» գրքոյկը 1873ին: — ԼԱ ԹԻՒՐՔԻ. ֆրանս. այս թերթին տպարանն 1876ին լոյս ընծայուած է **Միւճրան իւլ ռաղայիպին**: — ԱՆԹՈՒԱՆ ՉԷԼԷՊԻ. վաղեմի տպարան-վիմագրատուն ի Դալաթիա, զարդ կանգուն: Տպած է **Նոր Հայաստան** (1878): — ՄԱՆՈՒԷԼ ԱՐՏԻԼ. տպած է «Նոր դասագիրք **թուաբանութեան**» (1888):

## 77. Յովհաննէս Գ. Միւհէնտիսեան. —

**Նոսմենալից մանկութիւն. — Ձեռատետր մը եւ ճեռներէց ոգի. — Միւհէնտիսեան՝ երամշտակէս. — Անցիլ երկր. — Կաղապարած խազեր. — Ոսկերիչի աշկերտութեան ոսկերչապետութիւն. — 1839 թուական. — Սկիւտարի տպարանը. — Առաջին ործր. 8 բունուց հայերէն եւ փայտէ մամուլը. — Սկիւտարէն Չուգուր Չեշմէ. — Արապեաններուն գչարութիւն. — Տպարանը պատրիարք մը կը զոցէ, յաջորդը կը բանայ. — Օրուան "Մէտրիմ,,ը. — "Հայաստան,,. — 13 տեսակ գիր. — Իր հնարած գործիքը. — Ձուլարան. — Տպագրիչի խոստովանութիւններ. — "Թա'լիզ,, "Նէսխի,, "Րըգգա,,. Տանիւց Կիւբլէմպէրլը. — Եէչարի զասէ. — Ո. Գազանճեան եւ Յ. Միւհէնտիսեան. — Գոյնիմէ, Բուլ եւ Գօճոօլիս. — Յիշատակ ալպօմը. — Տպարանական կատարելագործումներ. — Փառքի օրեր. — Բախտին անիւը. — Դժոխքի բարեկամներ եւ բանս. — Եռուսաղէմի պատրիարքը կը զնէ Միւհէնտիսեանի մայր տառերը. — Վերջալոյս. — Անխոնջ ծերունին. — Ներբող. — Տպագրած գիրերը:**

Ծնած է 21 Փետրվար 1810ին Սամաթիա: Հայրն էր **Միւհէնտիս** Գէորգ որ Սուլթան Մահմուտի ճարտարապետ՝ Պալեան Գրիգորի օգնականն էր:— Նախ. կրթ. կ'առնէ բաղին դպրոցն ուր կ'աւանդուէին համառօտ քերականութիւն, քիչ մը թուաբանութիւն ու սաղմոսներ,

Զամչեան քերականութեան, նաև կարգ մը «ուրիշ»ներ որոնք ձայնաւորութեան ու Տրամաբանութեան պայմանադրական կանոններու շուրջ կը դառնային: Պատանին Յովհաննէս առանց֊մով չբաւականանալով՝ գիտութեան մասին ունեցած խոր հակումին գոհացում կու տայ, գիշերները առնէր՝ գիտնական իր հօրմէն երբեմն դասեր առնելով. օրինակի համար՝ գաւաթ մը ջրով եւ պարունակեալ հեղուկը հաշուել. «**օգրանիս** կոչուած գործիքով իրերու առնել» և ժամը քանի՞ն ըլլալը գիտնալ, իւրաքանչիւր օրուան արևածագը գտնել և դեռ խել մը հաշուական զուարճալիքներ: — «Տղայ հասակէս ի վեր (կ՚ըսէ իր ինքնակենսագրութեան մէջ զոր 1877ին պատրաստած է Պետութեան առաջարկով), մեծ զբօսանքս էր մեքենաներ կերպ կերպ բաներ շինել, արհեստ ու նորէն շինել»: Զեռարուեստի սէրն այսպէս կանոնաւոր չեղած է իր մէջ ու զինք վերջ ի վերջոյ իր փառքի ու հռչակի զենիթը բարձրացուցած, շնորհիւ մանաւանդ իր ձեռներէց ոգիին, յարատեւ ու մտադիր աշխատութեան եւ կամքի անտուած կորովին: — Մեղրամամով պարապումի մանկական այս դրուագը նորէն առնուած է Յ. Պարոնեանի, գրանկարելու համար զինք իր «Ազգային Ջոջեր»ին մէջ՝ կարի երգիծախառն ոճով մը:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ
**անզուգական Տպագրիչն ու Գրաձուլիչը**

* * Օժտուած բրրրակ ու պատգամին ձայնով մը, Յովհաննէս փոքր տարած է մարզելու զայն՝ դաս առնելով ձայնագրագէտ Տիրացու Համբարձումէ: Բաւական առեն շարունակած է դպրութիւն ընել՝ մանաւանդ Գուզկունճուկի եկեղեցին: Այդ պատեհութեամբ է որ ծանօթացած է Սկիւտարցի Միսաքեան Պատուելին, որուն՝ Միւհէնտիսեանին կեանքին մէջ մեծագոյն դեր մը խաղալուն պիտի անդրադառնանք յետոյ: Եկեղեցական երաժշտութեան մասին իր համբարած հմտութեան առհաւատչեայ կարելի է նկատել արեւելեան նօտագրութեան վրայ՝ վերջին տարիներուն իր ձեռնարկած շահեկան գործը որ անտիպ կը մնայ Օր. Մարիի քով (իր դուստրն և ազգանուէր դուստրը): Ասոր յառաջաբանին մէջ կը հանդիպինք սա ուշագրաւ հատուածին. «Թէ որ մեր աշխատութիւնը «միջոց մը ըլլայ ազգերնուս մէջ «այս արուեստը ծաղկեցնելու, «ի հարկէ ժամանակէ մը ետև ե- «կեղեցական բոլոր երգերն ալ կա- «նոնաւոր կերպով գրի կ՚առնուին, «և կարելի է որ շարական ու տա- «ղարան նօտայով տպուին. որով «ամէն եկեղեցիներու մէջ կանոնա- «ւոր և միակերպ տարրերութիւնը կը տիրէ»: — Տարիներ յետոյ, տպագրական արուեստին մէջ երբ կ՚առաջդիմէ, չմոռնար իր երբեմնի խոկումն ալ իրագործել, յօրինելով այդ հայկական խազե-



ՀԱՅ ԵՐԱԺՇՏ. ԽԱԶԵՐ
**Մայրերը պատրաստուած Յ. Միւհէնտիսեանէ**

րուն հայր և մայր կաղապարները՝ որոնց համախումբ օրինակը կը գտնուին աստանօր, և որոնք սեփհականութիւնն են հիմայ իր աղջկանց, թուրքերէնի կաղապարներուն հետ :

* * Դիտութեան և ձեռարուեստի համար կարծես ստեղծուած տղայ, 16 տարեկանին «խամարխայի սնտուկ» կոչուած փոքրիկ նուագարան մը ձեռք կը ձգէ և անոր ողորմուկ գլանին վրայ երկաթէ փուշեր գամելով՝ քանի մը փորձերէ վերջ կ'աջողի «Առաւօտ լուսոյ», «Տէր ողորմեա» ևն. ձայնագրոշմել ու նուագել, ծնողացը հիացումին մեծ առարկայ դառնալով : — «Առաւօտ լուսոյ»էն մինչև «սէրէնատ» կամ «նօքթիւռն»՝ ճամբան հեռու էր, իրաւ, բայց ոստում մը բաւ էր՝ դէպ ի եւրոպական երաժշտութեան խիզախելու համար. ու կ'սկսի հետևիլ կանոնաւոր դասընթացքի մը, Ճուզէբբօ Եանովիճ անուն դաշնակահար մը իրեն ուսուցիչ ունենալով : Մխիթարեան բաւական յառաջդիմած է դաշնակ ածելու մէջ, այնպիսի ատեն մը՝ երբ բովանդակ մայրաքաղաքին մէջ հազիւ դաշնակահարներ մատի վրայ կը համրուէին:

* * Թաղին դպրոցէն 15 տարեկանին ուսումնատարս ելնելով կը հետևի ոսկերչութեան և քիչ ատենէն այդ արհեստին կ'ընտելանայ՝ իր վարպետը գերազանցելու աստիճան, մինչև որ այս վերջինը կը հարկադրուի շահընկեր ընել զինք : — 1831 ին հայրը կորսնցնելով՝ իր վրայ կը ծանրանայ բազմանդամ ընտանիքին հոգը: Պահ մը փոխերանոց պաշտօնի կը կոչուի, բայց բաշակէն դժգոհ՝ կը մտադրէ ինքնագլուխ գործել Չոխաճի խանին մէջ, ու շատ չանցած՝ ոսկերչական կ'անուանուի այն ատենի ամիրայական գերդաստաններուն և ջոջ ազգայիններուն, շնորհիւ իր ձեռակերտներուն անմրցելի նրբութեան :

* * 1839 թուականն է որ կ'սկսի Մխիթարեանի տպարանական գործունէութիւնը : — Օր մը Խ. Միսաքեան բարեկամը թելադիր կ'ըլլայ իրեն՝ ոսկերչութենէ հրաժարելով տպարան մը բանալու : Դժուարի՛ն հարց և խորհրդ խորհին՝ արհեստէն չեղողի մը համար անշուշտ: Ահա թէ ի՛նչ գրած է ինք այս մասին. — «Տպագրութիւնն ի՞նչպէս կ'ըլլայ, **Հայ գիր, մայր գիր** ի՞նչ բան են, ասոնց մասին բնաւ գաղափար չունենալով, միայն իր գլուխն չափ (Միսաքեանի) վեր ի վերոյ տուած տեղեկութիւններէն քաջալերուած և այս գերազանց գիտին վրայ յանձնուս արանչացած՝ խեղճ մը ունեցայ պարապ ատեններս պղպջատակայ գիրեր շինելով զբաղելու» : — Իբրև նախափորձիք՝ պղպջատի վրայ կը փորագրէ — յառաջագոյն իր ազնիք օրացոյցներուն համար պատրաստուած — 8 **բանկօ** հայկական մանր տառեր՝ անչափ փայլուն և անթերի որ, Խաչատուր Պատուելի գմայլելով ի տես այդ ձեռակերտին՝ շնորհը չի մասնել կ'առնէ արքունի ճարտարապետ Սերվէրեան Յովհաննէսի վրայ, որուն ջանքով դեռ նո՛ր կառուցուած ու բացուած էր գիշերօթիկ ճեմարանը : Այդ դպրոցը տպարանով մը կ'ուզէին օժտել արդէն. արդ ո՞վ կարող էր տպարանապետ կարգուիլ հոն՝ **հէզարփէնէն** Մխիթարեանէ զատ : Չմոռնանք դիտել սոյ ընթերցողին, թէ մետաղի վրայ փորագրութիւն ընելու, տառեր յօրինելու և ձուլելու իր ճարտարութիւնը մեծ աղերս ունի անտարակոյս ոսկերչութեան մէջ իր ունեցած խոր հմտութեան հետ. ո՞չ ապաքէն քաջակորով **ուստէֆեար** մըն էր Մխիթարեան : — Ու կ'սկսի գիրերուն ամբողջական պատրաստութեանը : Ճեմարանի լուսարանը կը յանձնուի իրեն՝ իբր տպարան, ուր, մէկ երկու օգնական գործաւորներով քանի մը ամիս գիշերը ցորեկին խառնած՝ աքնելէ յետոյ, գործը գլուխ կը հանէ և 1839 Նոյեմբերի վերջ կ'աւարտէ 1840 թուականի Օրացոյցին տպագրութիւնը՝ հազար հազար օրինակ, մինչ ամփոփարար օրացոյցի մը ապառման թիւը տասը հազարի մէջ կը խաղար : Այդ օրացոյցը որ «յԻսքիւտար, ի Ճեմարանի Ս. Երուսաղէմի» տիտղոսը կը կրէ և որ մաքուր ու փայլուն տպագրութեամբը կրնայ դասուիլ զուգակշիռ Վենետիկեաններուն՝ 3 տարուան կեանք ունեցած է լոկ, վարժարանին փակման հետևանօք : — Իր ունեցած գործիքը նախապէս փայտէ համարուկ մամուլ մըն էր՝ զոր ձեռք անցուցած էր Թադէոս Տիվիրճեանի տպարանէն : — Նոյն տարիները Տաճկաստանի մէջ հայերէն տպարանի արտօնութիւն Արապեաններն ունէին. ո՛չ ոք կը համարձակէր նոր տպարան բանալ : Մխիթարեան իր տպարանը կը պարտի հզօր աջակցութեամբ Սերվէրեանի որ՝ Բիւքքճի խանին մէջ հաստատուած տպագրիչ Արապեան Պօղոսը համոզած էր նախօրօք, թէ ազգային հանգամանք ունեցող օրացոյցներ ու դասագիրքե՛ր միայն պիտի տպագրուէին Ճեմարանի նոր տպարանին մէջ : — Հակառակ դպրոցին գոցուելուն, Յովհաննէս կը շարունակէ հոն իր տպագրիչի արհեստը, մինչև որ 1843 ին Կալս. Տպարանի (Թագվիմխանէի Ամիրէ) վերատեսչութենէն կը հրաւիրուի՝ թուրքերէն **բա՚լիգ** կոչուած գիրը ձեւակերպելու և ձուլելու համար : Իր տպարանական կահ-կարասին կը փոխադրէ Պօլիս, Չուգուր Չէշմէ

խանք, սկսելով նոյն տարերուն յօրինման : — Արապեանք ձեռագրածի խմբագրումէն օգտուելով՝ ձեռք նետած էին կրկին օրացոյցի տպագրութեան՝ զոր իրենց մենաշնորհն ընել կը կարծէին : Մխիթարեանք եւս իր կարգին առանց հինաւուրց Բերակեանը ապելով չզգեւիր ծախս ճանել : Այս մրցումը կը զայրացունէ իր ախոյեանները որոնք կը դիմեն խոկոյն իրենց բարեկամը եղող օրուան Պատրիարքին (Աստուր), անոր տպարանը գոցել տալու համար : — **Մէարիֆը** գոյութիւն չունէր տակաւին . այս կարգի գործեր ձեռնհասութեան մէջն էին Կայս. Տպարանի վերատեսչութեան՝ որուն գիր մը մատուցանելով Պատրիարքը կը հանէր իր նպատակին . չէ՞ մի որ Նորին Ամենապատուութենէն հրաման չառած՝ Մխիթարեան մէ՛ջքը գործած էր տպարան բանալու..., այսինքն խռովման առաջնորդ ազգային յառաջդիմութեան գործին : — Դէպքը մինչեւ Բարիզ արձագանգ գտած էր . եւ Օսմ. դեսպանատան Ա. թարգման Յակոբ Գրճիկեան ինքնաբերաբար ընդվզած Հայուն բանկագին զարգացումը խարուածող այդ անհարկի անօրինութեան դէմ՝ չուշանար ազդու աղերսագիր մը յղելու Արտաքին Գործոց նախարար Րէշիտ Բաշայի, խնդրելով վերաբացումը տպարանին : Մինչ այս մինչ այն, կը հրաժարեցունէն ազգասէր (ի՛նչ կ'ըսեմ) ազգականասէր Պատրիարքնիս, որուն կը յաջորդէ Իզմիրի առաջնորդ Մատթէոս Եպսկ. (յետոյ Կաթողիկոս), իր առաջին գործն ընելով «բազրիր» մը գրել, տպարանը բանալ տալ վաղվաղակի եւ ի՛ր իսկ հովանաւորութեամբ ստանալ տպագր. արտօնագիր մը, նաեւ «Հայաստան» անուն լրագրին տպագրութեան հրամանագիրը Մխիթարեանի անուամբ առնելով՝ անոր տալ տալ նոյն թերթը : Առոր Ա. թիւը լոյս տեսած է 1 Յուլիս 1846ին՝ Յ. Տէրոյենցի խմբագրութեամբ : — Այլեւս բոլորովին նուիրուած տպագրական արուեստին՝ կը ջանայ իր կատարելութեան հասցունել զայն, կարելի եղածին չափ : Հետզհետէ կը չինէ 11, 14 եւ 18 **բաճըօ** տառերը, որոնց գլխագիրերն ու նօտերը միասին հաշուելով՝ **13** տեսակի կը բարձրացունէ զանոնք քիչ ատենի մէջ : «Նորանոր 8 բանըս «գիր մըն ալ չինեցի — կը խոստովանի իր կենսագրականին մէջ — չիտակ սխեմերով, որուն չնորհիւ պրշտուր «գրերն ու ծոցագրերը մէջտեղէն վերնալով եւ գրերուն «տեսակը քիչնալով, թէ՛ ձուլելու եւ մաքրելու, եւ թէ՛ շարելու շատ դիւրութիւն կու տար : Արհեստին եղողները «բաւ ծէս աղէկ կը հասկնան» : — Պողպատի վրայ հայ տառեր դաշն ու գլուխին գծելու համար կը հնարէ մասնաւոր գործիք մը, նաեւ մեքենայ մը, (իր ժամանակին համար տակաւին մե՛ծ յաջողութիւն), որուն մէջ պղնձատ եւ ոզնին տեղաւորելով, յառաջ բերած ճնշմամբ՝ հայր գիրերէն գիրատ կը հանէ մայր գիրերը, որոնցմով է որ կը ձուլուին կապարեայ տառք : Առանկով մեծապէս դիւրացուցած կ'ըլլայ տառերու փորագրութիւնն ու ձուլումը, կեանքին մէջ բնաւ ուսումնասիրած եւ ընդօրինակած չըլլալով բարձրութիւնները երրորդական ձարտարապետութեան : Իր յօրինած այդ գիրերով է որ տպուած են նոյն ատենուան գրքէ բոլոր հայերէն գիրքերն ու թերթերը, մանաւանդ «Մասիս»ը : Այնպէս որ, եթէ անկէ Օսմ. այրութեանքին կողապարները ամենավերջին կատարելութեամբ կերտելու չյաջողեցանէր իր կեանքին յառաջոյն տարիները, տարակոյս չկայ թէ իր տպարանն օժտուած պիտի ըլլար աննախընթաց կերպով ձոխ մթերքով մը մեզովրեան զանազան ու զարմանազան տառերու :

ՕՐԱՑՈՅՑ

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

1842

ԵՒ ՀԱՅՈՑ

ՌՄՂԱ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԱՐՔ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԳԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ՑԻՒՍՔԻՒՏԱՐ

Ի ՃԵՄԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

**Սկիւտարի ''Ճեմարան,,ին տպարանէն ելած վերջին օրացոյցը**

* * 1847ին էր որ լոյս ընծայեց **Յայտարարութիւն վասն նորակերտ տառից** անունով տետրակ մը : Գաղափար մը տուած ըլլալու համար իր գրելակերպին, տեսութեանց եւ իր դաւանած սկզբունքներուն մասին, առաջ կ'արտագրենք անկէ քանի մը հատուած. — «Տպագրութեան գիտակ գրականութեան ու գիտութիւններուն բարգաւաճութեամբ ի՛նչ նպաստ «ընելը մտածելով, այս ազնիւ գիւտին օրէ օր պայծառանալուն վրայ բոլոր մարդիկ աշխատին

«նէ, կարծեմ տե՛ղն է: Մարդս կենալը համար ցորենը ի՛նչ կարևորութիւն ունի նէ, «գրականութիւնն ու գիտութիւնները այսօր և միշտ՝ անկէ աւելի կարևորութիւն ունենալով, և «ժամանակուան ասոնց յառաջացուցիչ միջոցներէն մէկն ալ տպագրութիւնն ըլլալով, ըսել «է որ տպար յառաջադիմութեանը մեր հզօրագոյնը բոլոր մարդկանց օգտին աշխատած պիտի «ըլլայ: Մեզի կը մնայ ծաղկեալ ազգաց ըրածներէն օրինակ առնել և մեր ազգային տպագրու-«թեանը առաջ տանելու ջանալ: . . . Մենք նախնեաց գիր բանելով եւ Ս. Մեսրոպի հնարած «երկաթագիրը պիտի իմանանք, ժամանակուան գործածած յղկեալ երկաթգիրներն անգամ բունէն «բազմապատիկ հեռացած ըլլալը մէկ դի. բոլորագիր բառերն ալ ա՛յնչափ այլայլած է որ, «Մեսրոպեան նշանագիր ըսելու ապացոյց՝ միայն բոլորագիր կարդալն մնացած է: . . . Ս. «Մեսրոպ նեղ ատենին մէջ՝ քաշած աշխատանքներովը ազգին կարօտութիւնը լեցնելու ջան-«քով, դիւրին կամ դժուար գրուելիք գիր մը հանելու փոյթ տարաւ, վասն զի այն ժամանակի «կարիքներու գիր մը ունենալ էր, քան թէ գրի մը դիւրաւ գրուիլը: . . . Գիրին ձևը չփոփոխե-«լու ատեն չկար: . . . Եւ ահա վերջին դարերու՝ բոլորագիրը հանեցին երկաթագիրէն, և բոլո-«րագրէն ալ նոտր գիրը: . . . Տպագրութիւնը մեր մէջ հաստատուելու ատենն ալ, իբրև տը-«պագրութեան յարմար՝ բոլորագիրը ընտրուեցաւ: . . . Մենք հիմայ ո՛չ նախնեաց նշանագիրները «արհամարհելով, ո՛չ ալ երախտաւոր գործիչներուն ստգիւ դնելով՝ համարձակեր ենք այս փո-«փոխութիւնս ընելու, . . . դժուարութիւնները վերցնելով ազգին բանասէրներուն ծառայութիւն «մը ընելու փափաքով»:

* * Զուգար Չէշմէ խանի իր տպարանին վերակացու կը կարգէ եղբայրը՝ Մարտիրոս, և անոր օգնական կու տայ Զարիֆեան Գրիգորը (յետոյ քրոջը ամուսին). իսկ ինք կ'սկսի չարաչար դառնել՝ **թա՛լիգ**ներն ամբողջացնելու համար: Այդ աշխատութիւնը կը տևէ բաւական տարիներ, վասն զի թուրքերէնն ունի աջէն ու ձախէն կցուող տառեր և կէտադրութեանց բազմազան ձևեր: Պատրաստած գիրերուն հայրերն ու մայրերն ալ հետզհետէ շինելով՝ Միւհէնտիսեան իր սեփական տպարանին մէջ «Բխասլէի իբիգամիէ» ձեռագիր տեսակը կը շարէ ու կը տպէ: Գործը կը մատուցանէ Կայսեր՝ Եէսարի Զատէ Մարաշիա Իզզէթ անուն սինքրիի մը կողմէ որ չափէնար՝ զայն իրր իր ձեռակերպ հաստատելու բոլորին, և որ խելոյն կը կարգուի վերստեսուչ Արքունի Տպարանի 12500 դրշ. ամսականով . . . : Այս մարդն ա՛յնքան կուրացած է իր յաջողութեանը որ, անգուգական արուեստագէտ պատ մը տպարանատէրաց բանտարկե՛լ իսկ տուած է, անոր արդար ընդվզումները սպառնալեօք յաղթահարած, և, հեղինակի արժանիք, իրաւունք ու փառք ըրտօրէն կորզած: — 1844ին, Միւհէնտիսեանի գեղարուեստական կիրթ ճաշակին ու կարողութեանը կը վստահուի նորէն թղթադրամի (գայիմէ) տպագրութիւնը: Յիշենք այս առթիւ թէ մայրաքաղաքիս մէջ առաջին անգամ թղթադրամ տպագրողը եղած է Գազանճեան Թադէոսեան անուն հայ մը: Անոր շինածին — որ զուրկ էր գեղարուեստական հրապոյրէ — կեղծերը եղած ըլլալուն՝ Միւհէնտիսեան փոխերանոց կանչուելով կը տպագրէ 5000 դրշ.նոց թուղթեր, յետոյ 1000նոց, 500նոց, 250նոց «Փայրբար» կոչուած **գայիմէ**ներէն, որոնք շրջաբերութեան հանուած էին՝ Տէրութեան դրամագլուխն աւելցնելու դիտաւորութեամբ: Դարձեալ, ինք է եղած տպագրող՝ զանազան ժամանակներու մէջ՝ այս և ուրիշ տեսակ թղթադրամներու, որոնցմէ յիշատակելի են 1857ի վերջերը հրապարակ հանուած 1000 և 100 ոսկինոց **Թահվիլաթը մուտրգալէ**ները: — Օր. Մառի Միւհէնտիսեան իբր յիշատակ իր մեծամօրն հօրմէն պահած ունի ալպօմ մը որ կը պարունակէ այդ բոլոր թղթադրամներէն մէյմէկ նմոյշ, նաև հօրմէն յօրինուած բոլոր հայերէն ու թրքերէն տառերուն ցուցակները:

* * Համբաւը սկսած էր զարկ առնուլ առաւել քան երբէք: Գործերը կը տեղային անվերջ, տպարանը կը ճոխանար օրէ օր՝ յանկարծ Ամերիկայէն բերուած տպագրական 3 հատ նորաձևար երկաթեայ, 5 հատ ալ վիմատիպ մամուլներով: Հրապարակին տիրող ինք էր գրեթէ. «Հայաստան»էն, ուրիշ թերթերէ և օրացոյցներէ զատ՝ կը տպէր պատրիարքարանի գործեր, դասագիրքեր և եկեղ. մատեաններ, զանոնք զուտ ու Կոկիկ արտածելով: Հայ տպարան գտնուած տեղերու (ինչպէս Իզմիր, Թիֆլիզ ևն.) ձուլածոյ տառեր կը ծախէր ու կ'առաջնորդէր տպագրութիւնը մաքրային տանելու և տամարներու՝ շնորհիւ Ճէզայիրլեան Միքայէլ աղբօր: — Արագավոր քանի մը մամուլ եւս կ'ապսպրէ Բարիզ, և 9 Յուլիս 1856ին Գալաթիոյ Ս. Լուսաւորիչ ժամին դէմը՝ քարաշէն տպարանի մը շինութեան կը ձեռնարկէ, տպագրական կարգ մը զննումներու համար կրկին Յունաստան ղրկելով Մարտիրոս ու Միքայէլ իր զրօսանք եղ-

բայրները, որոնք քիչ ատեններ կը վերադառնան : Խօսքն իրեն տանք նորէն. «... Եղբայրս «մեքենան տեղը անցուց, որով ամէն զառ 4 արագաւոր, լիթօկրաֆ և **բայլ տուս** տպելու «համար ալ մէյ մէկ մեքենայ : Կրկին տպուեցին 100 նոց, 50 նոց, 20 նոց և 10 նոց գայիմէ- «ները. կաղապարները Կիլիօշէի մեքենային մէջ Մարտիրոսը կը բանէր քարի վրայ և մեր **լի- «թօկրաֆ** բանող վարպետը գինկօյի վրայ **բանքնոթ** ընելէն ետքը՝ Միքայէլն ալ **ամբոսով** «կ'իջեցնէր. ես ալ ձեռքով փորուեցիք գրերը կը փորագրէի կամ **ամբոսով** իջածները կը սրբա- «գրէի : Բայց որովհետև մեր պարոնները չէին սիրեր աշխատիլ, **ամբոսով** իջեցներ՝ Չարքի- «ձեանի, կալվանոյի գործողութիւն ալ կազմարար Յակոբի իրր թէ սորվեցնելով ամբողջ օրը «ժամավաճառ ըլլալ կ'ուզէին իրենք» : — 1856 Մայիս 26 ին Միւհէնտիսեան ձեռնամուխ կ'ըլլայ տպագրութեան Օսմ. Փօսթայինին (հեղինակութիւն Տիգրան Միրզայ պէյի), որուն համար բաւական նեղութիւն քաշած է՝ թէ՛ տրուագիծներուն պատրաստութեան և թէ կրկին երեսներով գոյնզգոյն տիպին, բաղդատութեանց և տեսլեալ կազմին համար : — 1860 էն սկսեալ իր բախտը կ'սկսի խոժոռիլ. ձախողուած ձախողուածի՛ վրայ : Թղթադրամներուն հրապարակէն վերցուելու որոշման, զայն տպագրելու համար յատկապէս գնած կազմածքին ու պատրաստուած կաղապարներուն փառնած ատակին, մանաւանդ զինք շրջապատող ազդուականներու յուսի վարմունքին պատճառաւ կ'ենթարկուի նիւթական անհագին վնասներու : Ի ծնէ բարի սիրտով, ամէնուն բարիք կամեցող, ազնիւ, դիւրահաւան և պարզամիտ՝ սորուած է սիրել ու ներել [անուններ չենք ուզեր տալ՝ չեղած չըլլալու համար գործիս նպատակէն,] որոնք բազմից անիրաւ չահագործիններ չորրած, ամբոխներով և խարդաւանանքներով փճացուցած են այն պատկառելի հարստութիւնը զոր Միւհէնտիսեան իր մտաւոր տաղանդով ու ճակատին քրտինքով էր դիզած : Կատիպուլի Դ.ալարեայ տպարանին չէնքը գրաւի դնել, խաղալիք դառնալ ննջամիտ փաստաբանի մը ձեռք, իննալ մինչև պարաքի տակ ու կեղեքուիլ բարեկամներու անդուլ շահատակութիւններով, մինչև իսկ իր շինած պղպատեայ հայ տառերը միամտաբար պահ տալ Թաշճեան Պետրոս անուն անձի մը : — Նոյն միջոցին, 1865 թ. Երուսաղէմի նորընտիր պատրիարք Եսայի Ս. պաշտօնով Պոլիս եկած ըլլալով՝ փախաք յայտնած էր Միւհէնտիսեանի մայր տառերը գնել ու միասին տանիլ, Ս. Յակոբեանց վանքը ձուլարան մը հիմնելու մտօք : Թաշճեան մայրերը կը ծախէ անոր, և փոխարժէքն իրեն ու համախոհ փաստաբանին կը յատկացունէ, ազնուութիւնը գործելով գնէ հայր գիրերը բո՛ւն տիրոջը դարձունելու վերահին : — Սակայն տպարանին վիճակը փարատական սկսած էր, գործաւորութիւններն ալ կաղն ի կաղ ընթանալ. այնպէս որ պարտքի և յարակից տխուր մամուքներով պաշարուած՝ տարարախտ հայ տպարանապետն ու գրաձուլիչը ժամանակ չունենար մայր գիրերը վերակերտելու, այսինքն պղինձի զարնելով պակասծներուն տեղը դնելու : Այսչափն իրր թէ հերիք չըլլար, պատասխանատուներէ ոմանք չէին խղճար բանտարկելու զինք, տպարան ու գործ ձեռքէն կորզելու սև առաջադրութեամբ : — Տեղը չէ՞ յիշել համար մարդկութեան պարծանք Կիւբէնպէրկը՝ շահամոլ և ննջամիտ Ֆաուսթի մը ձեռքը խաղալիք դարձած ... : — Այսպէս, Միւհէնտիսեան դառնացած իր կեղծ բարեկամներուն ընթացքէն՝ հայերէն տառ չինելու, ձուլելու և տպելու զբաղումը կը չքէ ակամայ, պետական գործերով պարապելով՝ նիւթական կորուստները հատուցաբակչուելու ակնկալութեամբ : — Մասնաւորման էր տանձի. նոր գիր մը յօրինել : Կը դիմէ Բումէջի Գագաւոքիոի՝ Մարտիփս Իզզէթ էֆէնտիի — երևելի գեղագիր — որմէ **ճէպի** կոչուած գիրերու օրինակներ առնելով՝ սկիզբ կու տայ չինութեանն ատոնց պղնձեայ հայրերուն, յայժ ճարտարութեամբ : Այդ տառերով է որ կը շարէ և մաքուր կը տպագրէ տանձի. քերթուած մը, մատուցանելով զայն օրուան առագահին : — «Ցիրանի (կը յարէ Սառրազամ Բաշան, հիացիկ դիտելէ վերջ այդ նրբաձոյլ ու չքնաղ տառերուն շարուածքը), շատ զո՛հ եմ որ այսպիսի փառաւոր յիշատակ մը ձգելու պատճառ եղար : **Ազգային ընդհանուր բլլայու ևսք ձեզ** » : Կառավարութիւնը կը յատկացունէ անոր բաւականաչափ դրամ : Աշխատութեան չմիտող տաղանդաշատ վարպետը գործին գլուխն է նորէն, Գատըքէօյի իր բնակարանին պարտէզին մէջ հիմնելով ձուլարան մը՝ նոյն գրաղումին համար : — Իր ձեռակերտներն են նաև կարգ մը գրբոչմարուղներ (վարազայի սանհնէ), որոնց նմանը ո՛չ Զըրչել անուն Անգլիացին Բարիզի մէջ, ո՛չ ալ անդացի ուրիշ արուեստագէտներ յաջողած են պատրաստել :

* * 76 տարու էր արդէն, երբ հեղինակեց 16 **բանիրօ** տանձի. «նէսխի» գիրերը՝ որոնք հիմայ շատ կը գործածուին : Այս գործն ալ իր կեանքին տասը տարիները գոյցած է : Իսկ 79

բայրները, որոնք քիչ տեւեցին կը վերադառնան : Խօսքն իրե՛ն տանք նորէն . « . . . Եղբայրս «մեքենան տեղը անցուց, որով տպէ զատ 4 պարագայով, վիօլկաչի և **թայլ տուս** տպելու «համար ալ մէկ մէկ մեքենայ : Կրկին տպուեցաւ 100 նոց, 50 նոց, 20 նոց և 10 նոց գայմէ-«ները կառավարութեան Կիլիտչեի մեքենային մէջ Մարտիրոսը կը բանէր քարի վրայ և մեր **լի-«թոգրաֆ** բանող վարպետը զինկօյի վրայ **թրանսփորթ** ընելէն ետքը՝ Մկրտիչն ալ **ասիտով** «կ'իջեցնէր . Ես ալ ձեռքով փորուելիք գրերը կը փորագրէի կամ **ասիտով** իջածները կը սրբա-«գրէի : Բայց որովհետեւ մեր պարոնները չէին սիրեր աշխատիլ, **ասիտով** իջեցնելը՝ Զարդի-«ճեանի, կալվածոյի գործողութիւն ալ կազմարար Յակոբի իրր թէ սորվեցնելով ամբողջ օրը «ժամավաճառ ըլլալ կ'ուզէին իրենք» : — 1856 Մայիս 26 ին Մխիթարեան ձեռնատուն կ'ըլլայ տպագրութեան Սամ. Գոնտոյեանի (հեղինակութիւն Տիգրան Միհրան պէյի), որուն համար բանական հեղութիւն քաշած է՝ թէ՛ ուղղագիծերուն պատրաստութեան և թէ կրկին երեսներով գունզգոյն տիպին, բացարձակութեանց և տեսակներու կազմին համար : — 1860 էն սկսեալ իր բախտը կ'սկսի խոտորիլ . ձախողուած ձախողուածի՛ վրայ : Թղթադրամներուն հրապարակէն վերցուելու որոշման, զայն տպագրելու համար յատկապէս գնած կազմածքին ու պատրաստած կաղապարներուն վատնած ստակին, մանաւանդ զինք շրջապատող ազնուականներու յոյժ վարմունքին պատճառաւ կ'ենթարկուի նիւթական անձկին վնասներու : Ի ծնէ բարի սիրտով, անձնուն բարիք կամեցող, ազնիւ, դիւրահաւան և պարզամիտ՝ սորված է սրել ու նորէ [անուններ չենք ուզեր տալ՝ չեղած շըլլալու համար գործիս նպատակէն,] որոնք բազմից անիրաւ չահարամիններ շարքած, տոկոսներով և խարդաւանանքներով փճացուցած են այն պատկառելի հարստութիւնը զոր Մխիթարեան իր մտաւոր տաղանդով ու ճակատին քրտինքով էր դիզած : Կառավարի Դեպարհեյ տպարանին չէնքը գրաւի դնել, խաղալիք դառնալ ճենգամիտ փառասէրանի մը ձեռք, իբրեւ մինչ պարտքի տակ ու կեղեքումի բարեկամներու անձուր չահատակութիւններով, մինչեւ իսկ իր չինած պղպջակոյ հայ տառերը միամտաբար պահ տալ Թաշճեան Պետրոս անուն անձի մը : — Նոյն միջոցին, 1865 թ. Երուսաղէմի նորընտիր պատրիարք Եսայի Ս. պաշտօնով Պոլիս եկած ըլլալով՝ փափաք յայտնած էր Մխիթարեանի մայր տառերը գնել ու միասին տանիլ, Ս. Յակոբեանց վանքը ձուլարան մը հիմնելու մտօք : Թաշճեան մայրերը կը ծախէ անոր, և փոխարժէքն իրեն ու համախոհ փառասէրանին կը յատկացունէ, ազնուութիւնը գործելով զանց հայր գիրերը բուն տիրոջը դարձնելու վերաին : — Սակայն տպարանին վիճակը վատթարանալ սկսած էր, գործառնութիւններն ալ կայն ի կաղ ընթանալ . այնպէս որ պարտքի և յարակից տխուր ժամանակներով պաշարուած՝ տարաբախտ հայ տպարանապետն ու գրաձուլիչը ժամանակ չունենար մայր գիրերը վերակերտելու, այսինքն պղինձի զարնելով պահուածներուն տեղը դնելու : Այսչափն իրր թէ հերիք չըլլար, պարտատահանջները ամենք չեն խղճար բանտարկելու զինք, տպարան ու գործ ձեռքէն կորզելու սեւ առաջադրութեամբ : — Տեղը չէ՞ յիշել համար մարդկութեան պարծանք Կիւրեղեանը՝ շահամոլ և ճենգամիտ Յաւարի մը ձեռքը խաղալիք դարձած . . . : — Այսպէս, Մխիթարեան դառնացած իր կեղծ բարեկամներուն ընթացքէն՝ հայերէն տառ. չինելու, ձուլելու և տպելու գրաղումը կը չքէ ակամայ, պետական գործերով պարապելով՝ նիւթական կորուստները հատուցանելու ակնկալութեամբ : — Մասնաւորապէս էր տաճկ. նոր գիր մը յօրինել : Կը դիմէ Բամէկի Գաղասբէկի՝ Մարաշու Իզզէթ էֆէնտիի — երեւելի գեղագիր — որուն **նէսխի** կոչուած գիրերու օրինակներ ստանալով՝ սկիզբ կու տայ չինութեան առանց պղպջակէ հայրերուն, յայժ ճարտարութեամբ : Այդ տառերով է որ կը շարէ և մաքուր կը տպագրէ տաճկ. քերթուած մը, մատուցանելով զայն օրուան սուլթանին : — «Ցիրաւի (կը յարէ Սարգսեան Բաշան, հիացիկ դիտելէ վերջ այդ նրբաձոյլ ու չքնաղ տառերուն շարուածքը), շատ գոհ եմ որ այսպիսի փառաւոր յիշատակ մը ձգելու պատճառ եղար : **Ազգային շնորհակալ ըլլալու եմ ձեզ** » : Կառավարութիւնը կը յանձնէ անոր բանկանոտային դրամ : Աշխատութեան չվհատող տաղանդաւոր վարպետը գործին գլուխն է նորէն, Պաղչէկօյի իր բնակարանին պարտէզին մէջ հիմնելով ձուլարան մը՝ նոյն գրաձուլին համար : — Իր ձեռակերտներն են նաեւ կարգ մը դրբոշմարուղիներ (վարագայի սահի՞կ), որոնց նմանը ո՛չ Զըրչի՛լ անուն Անգլիացին Բարիզի մէջ, ո՛չ ալ տեղացի ուրիշ արուեստագէտներ յաջողած են պատրաստել :

* * 76 տարու էր արդէն, երբ հեղինակեց 16 **փաւնտօ** տաճկ. «նէսխի» գիրերը՝ որոնք հիմայ շատ կը գործածուին : Այս գործն ալ իր կեանքին տասը տարիները գոցած է : Իսկ 79

տարեկանին՝ յաջողեցաւ յօրինել տալ **Նէսխի 6 պունթօները** : «Փուշ»երով ու «պատի»-ներով իր յօրինած բոլոր գիրերուն օրինակները հաւաքելով չքեղ ալպոմ մը կազմած՝ Եղան. Նախարար Մահմուտ Ճէլալէտտին Փաշայի ձեռամբ մատոյց Սուլթանին և ընդունեցաւ Գ. կարգի Մէճիտիէ պատուանշանի և Գեղարուեստից շքանշանի :

* * Բաց ի իր մասնակի գրագումներէն, Միհէնտիսեան Բերայի բնակարանին մէջ ունէր ձուլարան մը (1882-3) Գրիգոր Ռափայէլեանի հետ գործակցաբար : Յետոյ տեղին անպատեհութեան տեսակէտով ձուլարանը փոխադրած է Պոլիս, և ընկերէն բաժնուելով՝ գործը յանձնած է Սռ. Տամատեանի որ քանի մը տարի շարունակած է զայն, մինչև վարպետին մահը : Այնուհետև իր ժառանգորդ զաւակներն ընկերովի կը շարունակեն ձուլարանի գործը՝ Խաչիկ Գէորգեանի հետ :

* * Այս անխոնջ արուեստագէտն ու քաջարուեստ տպագրիչը որ «Թուրքերու Կիւթէնպէրկը» կոչուած է նո՛յն իսկ Թուրքերու կողմէ, 80 տարեկան պատկառելի ալեւոր մըն էր՝ երբ ձեռնարկեց ձեռագիրի ձևով **ռըգգա** տառերու հայրերը յօրինելու, զոր իր մահէն քանի մը օր առաջ աւարտեց և որ կրնայ նկատուիլ Միհէնտիսեանի գլուխ-գործոցը : — Աւելորդ չըլլայ յիշել թէ Միհէնտիսեանի հնարած գիրերէն առաջ՝ Իսլամացած Իպրահիմ անուն Հունգարացին և Պօղոս Արապեան շինած էին **Արապ օղլու** յօրջօրջուած վայելչութենէ զուրկ գիր՝ ցարդ գործածութեան մէջ : — Վերջին տարիներուն, Միհէնտիսեան Բերայի տանը մէջ ունէր իր աշխատանոցը: Անոր չորս պատերուն մէջ, արև ծագէն մինչև մայրամուտ՝ այս ծերունազարդ արուեստի Կիւթէնպէրկը փակուած և ջուխտակ ակնոցները քիթին՝ լռիկ մնջիկ կը գործէր անդուլ, խլամ տառերու նկարչային բանաստեղծականութեանը մէջ խորասոյզ : Իր վերջին տենչանքն էր այդ գործն աւարտել՝ վերջ աւանդել հոգին. ինչպէս որ ալ եղաւ 17 Նոյեմբեր 1891ին, Բերա, իր բնակարանին մէջ:

1 شو جهان معرفتده اليوم حيرتبخشاى انظار اعتبار اولان بوتجه بدايع مدنيه‌نك بودرجه‌لرده
ترقدار اولقلغنه برسبب مادى آرآنيلورسه باسمه‌نك ايجادنى كوسترمك كافيدر.

2 شو جهان معرفتده اليوم حيرتبخشاى انظار اعتبار اولان
بونجه بدايع مدنيه‌نك بودرجه‌لرده ترقى دار اولقلغنه برسبب

3 شو جهان معرفتده اليوم حيرتبخشاى انظار اعتبار اولان
بونجه بدايع مدنيه‌نك بو درجه‌لرده ترقى‌دار اولقلغنه بر

4 شوجهان معرفتده اليوم حيرتبخشاى انظاراعتبار

5 شوجهان معرفتده اليوم حير تبخشاى انظاراعتبار

ՆՄՈՅՇՆԵՐ Յ. ՄԻՀԷՆՏԻՍԵԱՆԻ ՅՕՐԻՆԱԾ ԹՈՒՐՔ ՏԱՌԵՐԷՆ

1. Նէսխի 6 պունթօ, 2. Նէսխի 12 պունթօ, 3. Նէսխի 16 պունթօ, 4. Նէսխի 24 պունթօ, 5. Ռըգգա 24 պունթօ:

* * Միհէնտիսեան Յովհաննէսի կեանքը սերտ աղերս ունի Թուրքիոյ ո՛չ միայն գրական ու տպագրական, այլ և ելմտական զարգացման հետ : Իր օրով Տաճկաստան մուտ գտած են, առաջին անգամ ըլլալով, **կալվանօ, սթէրէօթիփի** և **զինկօկրաֆի** ձևերը՝ տպագրական բազմապատկման արուեստին : Հայազգի այս մեծանուն արուեստագէտին յաւէտ երախտապարտ պիտի մնանք մենք՝ Հայերս ու Թուրքերը մանաւանդ : Թուրք մամուլն էր որ իր մահուան առթիւ պանծացուց արդիւնաշատ կեանքն անմոռանալի վաստակաւորին, յոյժ պատուաբեր դրուատիքներով : Ուստի արժան և վայե՛լ է որ Օսմանցիք յաւերժացունեն անոր յիշատակը՝ Գեղարուեստից վարժարանը կամ այլուր կանգնելով արձանը Միհէնտիսեանի, ա՛յն մարդուն որ կենդանութեանը կոթողեց արդէն իր անունը՝ հնարած իր տառերուն : — Յառաջ բերենք իր մահուան առթիւ Օր. Մարիի ուղղեալ բազմաթիւ ցաւակցական գիրերէն Արմաշու վանահօր սա տողերը, որոնց մէջ այնքան հոծ ու ճիշդ կը պատկերանան ազգօգուտ ծառայութիւնները հռչակաւոր տպագրիչին. — «Ողբալի աղէտ մը եկաւ հարուածել Ձեր գերդաստանը, աղէ՛տ մը որուն վրայ ո՛չ թէ խօսիլ դարձուածքով պէտք է հայիլ: Ամէն Հայ որ գիր-

քերու վրայ կը բաբախի՝ հանգչած է Ձեր հօր անունը, իբրեւ հարուստ արուեստագէտ որ փայլ տուեց ազգային տպագրութեան, իբրեւ իմաստուն պաշտպան որ հովանաւոր հանդի-սացաւ բարեյոյս գրասիրաց, իբրեւ ազգային բարերար որ գրոց և գրքոց ծառայման երախ-տաւորը եղաւ : Իսկ անխոնջ հոգի՛ն : Տառեր ալ նոյնպիսի աշխատութեանց ձեռնարկած են, այլ քիչեր առաջին երիտասարդութենէն ցնոր ծերութիւն միեւնոյն ուղղութեան հաւատարիմ մնացած են : Այդպիսւոյն կորուստը աղէտ է խորապէս, զի թէպէտ արդիւնաշատ կեանքեր երբ զօրացան կը կատարեն՝ վարձուց պսակին ամփոփել կ՛սկսին, սակայն Ձեր բազմաշխատ ծնո-ղին կեանքը թէեւ արդիւնաշատ, այլ սակային արդիւնաւոր էր հանրութեան համար : Հօր մը մահը ազգի է միշտ. այլ երէ բացառիկ պարագաներ կան յորս հօր է սուգը պարծանաց փառքին հետ փոխարինել, բազմարդիւն Միւհէնտիսեանի մահն է, որուն անունը կարող էր փառաւորուելու: Ուստի և ես առաւել քան ազգակից մը, կը ներկայանամ Ձեզ գրովս սփոփակից մը»:

* * Միւհէնտիսեան 3 տեղ տպարան ունեցած է. ՍԿԻՒՏԱՐ, ՍԹԱՆՊՕԼ և ԳԱԼԱԹԻԱ (Հայոց Եկեղեցւոյ փողոց, թիւ 17) : Առանցմէ յոյս ընծայած ամէն գիրք ու թերթ **ի տպարանի Յովհաննու Միւհէնտիսեանի** բանաձեւը կը կրեն, բաց ի 1849 ին տպուած «Առեւտրի ժամա-մագիրք»էն որուն վրայի արձանագրութիւնն է **Յովհաննու Միւհէնտիսի Պէտրզեան** : Ահա՛ կարեւոր մէկ ցանկը տպած իր գործերուն՝ ժամանակագրական կարգաւ : **Գիրքեր**. — 1840, Յայտարարութիւն ազգ. Ճեմարանին : Օրացոյց, 1841, Յիսուքին : 1842, Քաղաքականութիւն : 1844, Մանկավարժութիւն : Խորհրդածութիւնք Փասքալայ : 1845, Ճառ. : Դիմառնութիւն : 1846, Քրիստ. Միութիւն : Բարոյ. սկզբունք : Քրիստոնէական : Համխօսութիւն : Մեսաքսագործու-թիւն : 1847, Նարդեան : 1848, Առաքինութեան հարկաւորութիւնը : 1849. Եղբ. սնտեսութիւն : 1850, Արուեստ երկայնակեցութեան : Վարք Յիսուսի : Հրահանգ Արքայութեան : Ոսպէնան : 1851, Հրահանգ Երկրին Աւետեաց : Սերէու : Աշխ. ճգնուի վրայ : Քերական քերականաց : 1852, Ընթերցանութիւն : 1853, Քիմիական գետ. : Ուղղախօսութիւն : Վարչութիւն ընդհ. ազգաց : 1854, Նկարագրութիւն Պարսկաստանի երեւելի շինուածոց : 1855, Տօնացոյց : 1856, Տոմարագիտութիւն : Բարի մարդ : 1857, Տաղք Ս. Հէքիմեանի : 1858, Դատախազականութիւն : Աղայա : Լուսաւորեալները : 1860, Նկարագիր աշխարհ Երուսաղէմի : Մեջուշեխա : Պղատոն ի Վատիկոր : 1861, Տաճար Մուսայից : Նմկարիմէ : Պատմութիւն Հայոց : 1863, Յիսուսն : Ազգ. Սահմանադրութիւն : 1864, Քարոզիկի մը մտածումները : Տառեան Պօղոսի դարձը : Քու ի Ս. Եկեղեցին : Բամեյա : Բարեկարգութիւնք : Յարութիւն Պէզճեան : 1865, Արձանական : Աղայացոյց գոյութեանն Ա. : Պատմական օրինագիրք : Մեծատառնի աղօթն : 1866, Մարգա-րիտ : 1867, Քնար Հայաստանի : 1870, Կայծակ բըզակործան : 1871, Սօս և Սօնդիպի : Թա-լէրան : 1872, Միալացոյց : 1873, Հրահանգ բարեկարգութեան : — Առանցմէ զատ կան գեւ. դասագիրքեր, տեղեկագիրներ, կրօնական պրակներ, Նարեկ, Շարական, Մաշտոց, են. են : — **Թերթեր**. — (1853-63) Հայաստան, Բուրաստան Ս. Սահակեան : Նոյեան Աղաւնի : Առողջիկ արեւելեան : Մեղու : Սէր : Կիլիկիա : Ժամանակ : Ձեփիւռ. Հայրենեաց են. են. :

78. **Յարութիւն Մինասեան**. — Հայրն էր ՄԻՆԱՍ որ Երիզայէն Պոլիս գալու համար կ'ընկերանայ թուրք Բաշայի մը, իբր անոր ծառան : Այդ բարձրաստիճան անձը մայրաքաղաքս ժամանելուն՝ կախաղան բարձրացած է : Մինաս անոր մնալով, հայրենակից-ներու կը դիմէ և «բերդէնտճի»ի մը քով կ'սկսի պաշտօն վարել, յետոյ փնտռուելան կ'ըլլայ, ամուսնանալով Նէնէսիկ Խաչուկի աղջկան՝ Լուսիայի հետ : Այս Խաչուկն ամիրայական գեր-դաստանէ համբաւաւոր և ազդեցիկ դէմք մըն էր : Մինաս ազգ. պաշտօններ ալ վարած է և ունեցած է 14 զաւակ, որոնցմէ անդրանիկն է ՅԱՐՈՒԹԻՒՆ (ծնած Լանկա և բնակած Համ-քէօյ) որ առեն մը հօրը գործին հետեւած է : 1830 ական թուականին երբ Բաղդասարեանք Պոլիս կը հաստատուին, պատանին Յարութիւն անոնց կը սորվի Պէտէքի վարժարանը, կը հետեւի բո-ղոքականաց կրօն. պաշտամունքին և անոնց բացած դպրոցներուն մէջ ուսումնառութիւն սա-նելով 1848 ին Երէց կը կարգուի Եզմիրի, ուր անդէն թարգմանութիւններով կը պարապի. յիշենք առանցմէ «Ճանապարհորդութիւն Քրիստոնէի դէպ ի Երկնային Քաղաքը» : 1855 ին Պոլիս

վերադառնալով կը նուիրուի տպարանական աշխատութեանց. Եղբօրը հետ կը հրատարակէ «Փող արեւելեան» թերթը Վէզիր խանի իր նոր գործատան մէջ՝ զոր յետոյ փոխադրած է **Ասմա Ալթը, Համիր խան.** (այս խանին մէջ առանց անունի տպած է կարգ մը գիրքեր): Տպարանը ծախած է վերջէն Սպանէօսի Պուլկարին որ **Տպագրութիւն Մակեդոնիայ** անունով շարունակած է նոյն գործը: Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻՆԱՍԵԱՆն ալ ինք է, սկզբնատառեր համառօտութեան ըլլալով «Երգնկացի»ի:— Եւ որովհետեւ իր տպագրած գիրքերն իբր **բողոքի**՝ գործածելու կը համարուէին դաս մը Լուսաւորչականներ, Մինասեան անունին ումանց վրայ Յ. Մ. սկզբնատառերը դրոշմած է՝ Յ. Միւհէնտիսեաններուն հետ նոյնացուած ըլլալու դիտումով:— Չորրորդ մասնաւոր՝ բաւական տպագրիչ եղած է միախառնական երկլեզուեան գիրքերու որոնք են.— Բարեպաշտութիւն. Խայր ամէլլէր. Իկահիլէր. Մասրէս Իսահիին բէվսիրի (1860). Աշխարհագրութիւն. Մուխթասար Ճիօղրաֆիա. Ճան բէֆրիշի (1861). Իսաիլը չերիֆ (1863). Հայ. Քերականութիւն աշխ. (1864). Երգեր ու եղանակներ (Բ. տիպ 1868, իսկ Ա.ը 1860). Հրաւէր միութեան «Նամակ սիրոյ առ կաթուղ. հայ բողոքականաց» 1869, 76. Աղօթք բնութենական եւ առանձին (1869, նաեւ 1870ին՝ նոյնին **յաւելուածը**). Նոր Կտակարան (1871) եւն. եւն.:— Յ. ՄԻՆԱՍԵԱՆ Վ. Է. ՏԻՐԹԷԹԻ անունով դրոշմած է **Իւմի rafuaf** անուանական գիրքը: Ընկերը կը կարծուի ըլլալ Յարութիւն Փափազեան:— Մինասեան երկիցս ամուսնացեալ՝ կարուածատէր մեռած է 1871ին Հասգիւղ, մահուընէն քիչ վերջ իր կնոջ:— Հօս՝ իր պարագաներուն եւ Բարիզ՝ իր աղջկան դիմեցինք, որոնք հանգուցեալին լուսանկարը չկրցան մեզ հայթայթել:

79. **Տպ. Ա(րեւելեան) Համազգային,** կամ **Ազգային** եւ կամ **Ճարգիէ** [Խաւռ-օ'ղլի խան, թիւ 13], սեփականութիւն Ազգ. Հիւանդանոցի, որուն անօրէնն էր Ա. Ճէվահիրճեան եւ ուր 1844-65 հրատարակուած են.— Մաքին մշակութիւնը. Մասծութիւններ. Արիստոդեմ. Մասայք Մասեաց. Իփիգենիա, Բուրաստան. Քերականական լուծում. Աէր (թերթ) 1862. Կ. Պոլիս. Հինն. ատրիկութիւնք. Դաստիարակի մը վերջին օրը. Դարնան ծաղիկներ. Մատուռն գրական (Ա. Տիւսա). Ճերմակ. Գերեզմանք երիտասարդաց. Յուլիանէ. Մասն Ողիմպիադայի՝ բազմահոյն Հայոց. Գործք առաքելոց. Երգարան (1865). առեւն մըն ալ՝ «Մեղու» գաւեշտաթերթը, նաեւ Ազգային ժողովներու ատենագիրք:

80. **Կ. Ս. Իւթիւճեան (Մասիս).**— Ծնած է Պոլիս 24 Հոկտ. 1823ին: Զգաստութեանը՝ Պալար «վարժարան-տուն»ի մանկարաններ յաճախած, ապա աշակերտած Աւետիս Պէրպէրեանի եւ Սկիւտարի ճեմարանին: Ինքնազարգացմամբ՝ կը հասնի ուսուցչ. ասպարէզը: 1848 թ. Բարիզ անցնելով, 3 տարի վերջ շրջանաւարտ Աւելար. Բարձր. Վարժ.էն: Դարձին, «Հայաստան» թերթին անունը «Մասիս»ի վերածելով՝ 2 Փետր. **1852**ին կ'սկսի հրատարակել զայն Միւհէնտիսեան տպարանէն, ինք մնալով արտօնատէր-խմբագրապետ: Դրասենեակն էր Վէզիր խան: Մինչեւ 1883 թ. իբր շաբաթաթերթ, օրագիր ու եռօրեայ՝ անընդհատ շարունակած է հանդէսն թերթը, մեծ հոգ տանելով կոկելու աշխարհաբարը, առաջնելով լրագրական լեզուն եւ հաստատելով բաւական թիւով խմբագիր: Այնուհետեւ աչքի հիւանդութեան պատճառաւ՝ թերթը կ'ստիպուի յանձնել «Արեւելք»ի վարչութեան: 1884ին «Մասիս» «Արեւելք»ի միանալով իբր հանդէս սկսաւ հրատարակուիլ **ի տպարանի «Արեւելք» եւ «Մասիս» լրագրաց:**— Միւհէնտիսեանէ բաժնուելով, Իւթիւճեան 1855ին Եւրոպայէն բերուած իր սեպհ. տպարանը կ'ունենայ Չինիլի խան, պահ մը ընդ խնամով Արդ. Մուրատ-



ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

նանի․ տպարանը յետոյ կը փոխադրուի Գալաթիա (բրանգայի ճամբուն վրայ, Ամենափրկիչ ժամին կողմերը)։ — Երկու անգամ փակուած է տպ. զանազան պատճառներ և 10 տարի կրկ. տեսչութիւն բռնած բազային վարժարաններու։ Ունի շատ մը թարգմանութիւն և հեղինակութիւն։ — Մեռած է 28 Յունիս 1904 ին և թաղուած Շիշլի, թողլով կարող հրատարակագիրի համբաւ մը։ — «Մասիս»ի գրաշարապետ եղած է «Թոփալ» † Գրիգոր. իսկ շատ վերջերը՝ Շիշմանեան և Մկրտիչեան Արտաշէսները։ — Այս տարին ունեցանք թէ Պօլսոյ կարգ մը գրաշարապետներ ալ կան՝ մեռած և ողջ՝ որոնք միայն բաւականին պարապելուն համար պիտի չյիշատակուին յաջորդ տարեգրութեան շարքին մէջ։ — **Մասիսի** տպարանէն լոյս ընծայուած են հետեւեալները. — Բանաք խմ (1861). Ճանապարհորդութիւն յԱնի (1865). Առաջնորդութիւն Կրդ. Յանձնառողաց (1866). Նամակ Ս. Արք. Զաքարեանց (1867). Աշխարհաբար հրահանգ. Հաւաքարանք ... . Երկար. գիմակով մարդը (1870). Հայ Պատրիարք մը ի Պարիզ (1872). Բաց. Տնտեսութիւն (1873). Հատուածք պատմութեան Հայաստանի (1874). Սահմանադրութիւն Օսմ. Պետութեան. Ուսումն. մխութիւն. Վերջին երգը (1877). Կարմիր մարդոց երգումը (1882). Մարքիզուհին. Անմահութիւնք Բարիզի (1883), ևն. մեծ մասամբ Երկուանեանի թարգմանութիւնները։

81. **Յովհ. Մարգարեան.** — Ազգակամն էր Պալեան Կարապետ Ամիրայի։ 1853 ին **Ար. Մուրատեանի** էգմեալի տպարանը գնելով՝ նոյնին խմբագրութեամբ տպագրել տուած է **Սկիւտարի** մէջ «Հայաստանեայ գիշերներ»ը։ Սակայն «Մասիս»ի նոր տպարանին վարչութիւնը Ա. Մուրատեանի յանձնուելով, Մարգարեան առանձին կը մնայ, և անկարող նոյն գործը շարունակելու՝ մամուլն ու տառերը կը ծախէ **Յ. Տէրոյենցի** որ զանոնք Սկիւտարէն Պօլիս փոխադրելով կը բանայ իր տպարանը։ — Մարգարեան. առաջ ՍԿԻՒՏԱՐ առաջին տպարանը հիմնուած է ձեռքերունի, իսկ Մարգարեան. վերջ՝ Մկրտիչ Վրդ. Խրիմեանին։

82. **Յարութիւն Փափազեան.** — Երզնկացի բողոքական. Զրպչեան տպարանին մէջ աշխատած է, պա՛ մըն ալ ընկերացած Յ. Մինասեանի։ Իր հիմնած տպարանէն (որ Յ. Փ. (ՃԷՐԻՏԷՀԱՆԷ) տիտղոսն ալ պահած է) հրատարակուած են հետեւեալները. — Գործք Առաքելոց (1853). Ուղեւոր Անգլիա Յ. Փափազեան վրձգ. (185?). Ընթերցարան (1858). Բարի մարդ և բարի քրիստոնեայ (1860). Հաւաքածոյ հոգ. ասացուածոց. Նկարագրութիւն Ս. Գրոց (1869). Յորդորակ. Բանք ... (1871). Դամակրթարդ ... . Հաւատք ... . Բերականութիւն ... . Մեծ ... (1875). Կիրակնօրեայ դպրոցաց դասեր (1879)։ Այնուհետև ... է գործէ և պա՛ մը Յ. Պօյաճեանի տպարանը գրաշարապետութիւն ընել վերջ՝ մեռած։

83. **Տղ. Թանմիջեան** (Էսմիրլեր խան). — Այս խանին անուամբ գոյութիւն ունեցած տպարանին անունը կը կարծուի ըլլալ Թանմիջեանի որ 1862 ին օրացոյց մը տպած է, իսկ 1854 ին 3 գիրք՝ առանց տպարանատիրոջ յիշատակութեան. — Հնօրինակ կամ ... . Բարի Յիսուսէն. Անհարկաւորութիւն (Թարգմ. անգլ. Յովհ. Գ. Կրճիկեան)։

84. **Յ. Տէրոյենց.** — Ծնած է 8 Օգոստ. 1801 ին Պրուսա։ Նախ. կրթ. ստացած է անդ։ Յետոյ ինքնօգնութեամբ ուսած շատ մը լեզուներ։ Արմաշու վանքն ալ մանկավ

հմտացած է նախնեաց մատենագրութեան և Ա.ծ.աբանութեան։ Յետոյ դարձած Պրուսա և ուսուցչութիւն ըրած։ 1828 ին Պոլիս կու գայ և պաշտօն մը իբր թարգման կը մնայ Խիւսրէվ Մէհմէտ Բաշայի քով։ Մինչև 1841, դաստիարակ է Սկիւտարի ճեմարանին մէջ, հասցնելով ակնառու աշակերտներ։ Ճեմարանին փակուելէն վերջ, քանի մը տարի զբաղած է մասնաւոր դասերով և գիրքերու հրատարակութեամբ։ Վերաբացումին (1846) կրկին պաշտօնավարած իբր Տնօրէն։ — Իր կեանքն ու գործունէութիւնը լրիւ ճանչնալ փափաքողներ կրնան կարդալ Յ. Գ. Մրմրեանի կենսագրութիւնը։ Կը բաւականանանք քանի մը տողով ըսելու թէ բուն պաշտպանողական մը եղած է Տէրոյենց, ջատագով «Լուսաւորեալ» կուսակցութեան և երկար տարեն գրիչ շարժած' լուսաւորչականներու ախոյեան սկսած բողոքական և կաթողիկ հասարակութեան դէմ։ Անոր բազմաթիւ գործեր' ինքնագիր և թարգմանածոյ. — Ընթացք հայ գրութեան. Քաղաքավարութիւն. Ճառ առաջին մարդոց կրթութեան վրայ. Յայտարար ուղղութեան. Ճանապարհ երջանկութեան. Խորհրդածութիւնք Բասքալայ. Ճառ. Մկրտութեան (և) Հաղորդութեան. Հնախօսութիւն ազգաց. Քրիստոնէական. Տեսչութիւն հովուական. Զօրք եղբարք. Տեղագրութիւն Երուսաղէմի. Ուսումն բարուց. Բանասպառ. Յաղագս մանու նախանձչաց. Պետաց գողութիւնք և չարութիւնք. Կեանք Քրիստոնեայ. Խորհուրդ գաղտնի ընկերաց. Քրիստ. եկեղ. կառավարութեան վրայ. Մեծն Նապոլէոնի մտածութիւնք. Իրաւախոհ. Հնախօսութիւն Հայոց հերձուածութեան, և ն. և ն.։ Թողած է նաև շատ մը ձեռագիրներ որոնցմէ նշանաւորն է **39 հատոր** «Եկեղ. պատմութիւն»ը Երուսաղէմի մատենադարանը պահ։ Ասոնցմէ զատ 1846 ին սկսած է հրատարակել 1. «Հայաստան» թերթը, պատրիարքարանի ծախքով և Մ. Աղաբոնի գործակցութեամբ, մինչև «Մասիս»ի երևումը (1852), 2. «Զօհակ» (1855-6), 3. «Երևակ» (1857-66)։ — Տէրոյենց **1854** ի տարիներ տպարան մը հիմնած է, ուր կազմածները գնելով Յովհ. Մարգարեանէ (Սկիւտար) որոնք նախապէս սեփականութիւնն էին Արք. Մուրատեանի (Իզմիր)։ — Իր տպարանէն լոյս ընծայուած են' բաց ի վերոյիշեալ իր գիրքերուն մէկ մասէն' հետևեալները. — Տղայ կրթելու վրայ. Առաջնորդ երկինք. Յամառեն Բերականութիւն. Մարկոս. Պարսից բաղմոսը և իր փախարքայն. Ոսկանեան. Փարիզն յԱմերիկա. Օրացոյց 1863. 64. 68.) և ն. և ն., մինչև 1877 թ. տպագրուած Վէպեր, Թէակէ և Այրը Էֆէնտի խանին մէջ։ — 1841 Մայիս 1 ին «Ուսումնական Ընկ.» մը կը կազմուի Պոլիս, նպատակ ունենալով հայ գիրքեր տպել, գլխաւորաբար Յ. Տէրոյենցի գործերը։ — 19րդ դարու այս ներհուն գրագէտ-հրատարակիչը մեռած է Սկիւտար 24 Յունուար 1888 ին։ — Զաւակը Զենոբ պատ մը շարունակած է հօրը գործը, յետոյ նոյն արհեստը լքելով' փաստաբանութեամբ պարապած։



ՅՈՎՀ. ԶԱՄՈՒՌՃԵԱՆ (ՏԷՐՈՅԵՆՑ)

85Ա. **Մկրտիչ Վրդ. Բժշկեան.** — Ծնած է Վան 4 Ապրիլ 1820 ին։ Զինուորագրութենէ խոյս տալով կ'անցնի Պարսկաստան, Կովկաս ու Պոլիս' ուր — իբր դաստիարակ — կը ծառայէ ազգին երևելիներուն հետ, և ուր կը կրթէ կնոջ ու աղջիկը։ 1851 ին ուսուցչ. պաշտօնով կը մեկնի Թալաս, ապա Կիլիկիա։ — 1850 ին Մխիթարեանի տպած «Հրաւիրակ Արարատեան» իր ներքինականութեան օրինակ մը կայ մեր քով որուն կողքին վրայ գրած է ինք. «Այս տաղաչափական մատեանս եսս ողորմելի Զէյթունցի Տ. Ղազար քհնյ.ի վասն նուագելեաց ծննդոց խնդ, յամի Տեառն 1852 Նոյեմ. 13, ի Ս. Աթոռն Կիլիկիոյ. Նուաստ ծառ. Բժ.ի **Մկրտիչ Վարդանեան Վանեցւոյ**» ։ — Կը դառնայ Պոլիս, յետոյ ծննդավայր, և 1854 ին Դարբինեան Եղիշէ վարդապետը կը ձեռնադրէ յԱկլունար, կուսակրօնի անունն մնայով։ Փոխարէնով օգտակար ըլլալ նոյն վանքին' կը մտածէ ժառան-

գաւառաց վարժարան մը և տպարան մը հաստատել հոն։ Խաւարամիտ միաբաններու հակառակութեանց վնաս՝ կը հարկադրուի Պոլիս անցնիլ կրկին, քարոզիչ կարգուելով Սկիւտարի Ս. Խաչ ժամին։ Օտեան Գրիգորի հօրը ձեռնտուութեամբ՝ Խրիմեան կ'աջողի սկիզբ մը տալ իրականացման իր իտէալին։ Յունիսի սկիզբը տպարան մը կը բանայ ՍԿԻՒՏԱՐ «ընդ հովանեաւ Ս. Խաչ եկեղեցւոյն» և կ'սկսի «Արծիւ Վասպուրականի» ամսաթերթին հրատարակութեանը (1855-6)։ 1858ին տպարանը կը փոխադրէ **Վարագայ Վանքը** (Վ.ԱՆ), ուր կը հիմնէ գիշերօթիկ վարժարան մըն ալ։ — 1860ին կը մեկնի Թիֆլիզ, հանգանակութեան համար։ Դարձին՝ դպրոցը կը պայծառացնէ և կը շարունակէ իր թերթը։ 2 տարի վերջ կ'ընտրուի Մուշի առաջնորդ, որով մամուլը կը տեղափոխուի ՏԱՐՕՆ ուր 1863ին լոյս կ'ընծայէ «Արծուիկ Տարօնոյ» հանդէսը՝ Սրուանձտեանց Վրդ.ի աշխատակցութեամբ։ — Ասկէ անդին **Հայոց Հայրիկին** բոլորած կեանքը եղերերգութիւն ու դիւցազներգութիւն դարձած է ծայրէ ի ծայր, ամէնուս ծանօթ։ Հարստահարութեանց դէմ բողոքելու բուռն պատրիարք (1869-73), հայրենասիրական գոհար գիրքերու հեղինակ, պերճ բեմբասաց, Պերլինեան Վեհաժողովի պատուիրակ ու իր ծննդավայրին սովելոց բարերար հրեշտակ, Երուսաղէմ վտարանդի (1890), ազգընտիր Հայրապետ ամենայն Հայոց (1892), կեղեքեալ Հայութեան և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ իրաւանց ոխերիմ պաշտպան անվհատ, մինչև իր յետին շունչը՝ 29 Հոկտ. 1907։ — Դառնալով հայկական գաւառներու մէջ իր հաստատած Մամուլին [որ Վ. ԱՐԾՈՒԵԱՆ ալ կոչուած է], բաց ի համանուն թերթէն՝ տպած է **Հրահանգ մանկանց** (1856, Սկիւտար), **Այբբենարան** (1857), **Ուսեալ պանդուխտ** (ողբերգութիւն 3 արար, 1873, Վարագ), **Հայրենագիտութիւն** (2 հատոր, 1883, Վարագ)։ — Այդ մամուլը կառավարութեան կողմէ գրաւուելով Վան փոխադրուեցաւ, կապարեայ հայ տառերն — իբր յո՛յժ վտանգաւոր տարրեր — բնաջինջ ըրին Համիտի հաւատարիմ արբանեակներ։ Հայու ապրանք այդ գործիքը ծառա-



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ
Երիտասարդութիւնը



ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔ (ՎԱՆ)

յած է վերջին տա՛ղ. գիրքերու եւ. տպագրութեան համար՝ Վանի մէջ : Բանի մը տարի առաջ երբ Սահմանադրութիւնը հռչակուեցաւ , Վանցիներ յաջողեցան կրկին Վարագայ վանք փոխադրել զայն , յաւերժացունելու համար յիշատակը երեւելի տպարանատէր յուսամիտ վարդապետին :

86. **Թադէոս Տիվիթճեան** . — Ծնած է Պոլիս 1810 ին : Նախ ոսկերչութիւն ըրած է : — Ժամանակակից է Գէորգ և Գալուստ Արապեանց և Յ. Տէրոյենցի : Լայարիան՝ ամենօք հրեաներու փորագրել տուած է հայ տառեր՝ գեղեցկութենէ զուրկ , անձռնի . յետոյ զանոնք ձուլել տուած է Արապեաններու , մինչեւ հիմնեց իր սեպհ. ձուլարանը : Ընդարձակ տպարան մը ունէր Վէզիր խան , որ գրաշարապետութիւն ըրած են Նարեկ Արքին , Խոսով Տիգրան (Գրիգորեան) : Վերջերն էր որ զայն փոխադրեց Ցէնէր (Ոսկեղջիւր) , Ցրէնկեան Արքանամի տան մէկ մասին մէջ՝ ի Բերէմիս մահալէ : — Բոլոր Որ. Գարիսա երկար ատեն գործակցած է իրեն՝ իբր կազմարար : — Ինք մին էր Պոլիս Ա. անգամ արագատիպ մամուլ ունեցողներէն, երբ նոյն միջոցներուն շատեր բազկամամուլով գործ կը տեսնէին : Տպած է ի մասնաւորի եկեղ. հատորներ (Զայնքաղ Շարական , Աւետի Ժամագիրք , Սաղմոս , Աւետարան եւն.) : — Գիտէր խօսիլ ու գրել յուն., գղղր., և խառ. լեզուները : — Ամուրի էր : Բնակամին Թուանջիլիկի ընդերք ունէր , անտեսագէտ , խնայող ու խոհեմ էր յոյժ , միջակ կազմով , բարեբարոյ և փոյթեռանդ : — Պուլկարերէն բոլոր տառերը զառաջին ինք եղած է ձուլող , որանցմով տպագրած է յետոյ բազմարիւ գիրքեր , այդպէսով մասնակցած ըլլալով ջամբելով ամբողջ Պուլկարիոյ բնակիչներուն : Տարին երկիցս մեծ տօնախմբութիւններու առթիւ կը ճամբորդէր կարճաժամանակ այդ հայրենիքը , յաճախ հեռագրեր ալ կանչուելով ու միասին տանելով հակերով գիրք զորս կ'ապառէր՝ քաղքէ քաղաք շրջելով և ապառիկ խել տալով շատերու որոնց վրայ մեծագումար առնելիքներ ունեցած է՝ ցարդ անգանձելի մնացած : Անոնց յառաջադիմութեան գործին մեծապէս սատարող այս հայազգի տպագրիչը կոչուած է իրաւամբ **Պուլկարաց Գրիգոր Լուսաւորիչը** : Ասեղի՜ն կայ . — Պկր. յեղափոխութեան ատեն սփիւռք բուղքի կռփարիչներու մէջ Տիվիթճեան խրախուսիչ արտառոյ կոչ մը դրոշմած է՝ նոյն ազգը ապրելութեան յուծէն թօթափելու մղող , այդ խել պատճառաւ ձերբակալուած և յետ դատավարութեան 50 ոսկի տուգանքի դատապարտուած : Երախտապարտ Պուլկարներ տարին անգամ մը սովորութիւն ունին Սօֆիայի Մայր Եկեղեցին հոգեհանգիստ կատարելու իրենց հին ու նոր բարերարաց համար , որոնց հետ կը յիշատակեն նաեւ Տիվիթճեանը : — Թադէոսի աշակերտներն էին Եուվանջօ անուն Պուլկար մը , նաեւ ի Սօֆիա հիմայ ն. տպագրիչ Խրիսթօ Պրըմբօֆ՝ որուն գնած էինք , իր վարպետին լուսանկարն ունենալու համար , Պոլսոյ մէջ արտարձանէ արտաքին մեր դեգերումներէն ձեռնտուն : Պատասխան տուացինք թէ առեւոք ինք եւս Պոլիս Պկր. յեղափոխական գոլով՝ արժանացած է բուռք ատելութեան . . . մեծարանաց , վրայ տալով նաեւ բոլոր գոյքերն՝ ինչ որս նաեւ Տիվիթճեանի պատկերը : — Թադէոս անգամ մը փորձութիւն ունեցած է դրոշմելու «Նամզէ զայմէսի» Աւստր. կեղծ դրամաթուղթ : Սոփիա պատճառ եղած է որ բաւական ատեն բանտ պառկի ինք , որկէ ազատ արձակուած է՝ դատավարութեան միջոցին յայտարարելով . «Ես **Լեփէլը** կարծելով տպեցի զանոնք» : — Բանտէն վերջ՝ ձայնը բոլորովին մարած էր : Կեանք փաշա , Ալի Պէյ Եօքուշը՝ իր սեպհ. տանը մէջ առանձնացած է հոգին 1878 ին : — Ահա իր տպած գիրքերուն համառօտ մէկ ցանկը . — Գիրք ընտրութեան (Յ. Ս. Տիվիթճեանի) 1856 . Սանդուխտ Կոյս 1862 . Հայկի գործոց և աշխատութեանց Տիգրանեան Միկրոփ . Իրաւունք ազգաց . Առողջարանութիւն 1864 . Կիլիկիա (հանդէս) 1864, 69 . Օրացոյց 1867 . Աւետարան 1876 . Ազգային ջոջեր 1879 եւն. :

87. **Ռուբէն Յ. Քիւրքճեան** . — Ծնած է Պում Գարու : Նախ. կրթ. ստացած բաղին վարժարանը : Հոնկէ եկեղեցւո՛ւ անմիջապէս զբաղած է գրաշարութեամբ որուն համար ունէր խոր հակում : Աշակերտ Մխիթարեանի որմէ սորված է յետոյ գիր ձուլելու

արուեստ : Տպագր. ասպարէզին մէջ նախընթաց յառաջադիմութեան՝ ծնած է երկու տպարան, մին՝ Ձինճինճեան Եօզղաշու, բնիկ 19, (Պոլսոյ Հասագի այժմու չնքրին տեղը), որուն փորձեր էր Պ. Բիրիջեան. միւսը՝ Լուսաւորչի ժամին եռակը, ճաճաշրջանեան Գրիգորի (ստոյն քահանայ) նաև ընկերոջը: Հրատարակած իր գործերը համբաւաւոր էին՝ իրենց մաքուր տպագրութեամբ: Քիւրքճեանի յօրինած տառերը ժամանակին ամէն կատարելագործեալներէն կը սեպուէին որոնք ցարդ իր մականուանը կը յորջորջուին: Գործին սիրահար՝ իր հիւանդագին օրերուն իսկ, յառաջդիմելու եռանդը չէ մարած իր մէջ. ոչ մէկ ջանք կը խնայէր իր տպարանն օժտելու կատարելագործեալ մեքենաներով, զորս բերել կու տար Եւրոպայէն: Իր որով՝ գիրերը ձեռքով կը ձուլուէին. Քիւրքճեան նմանեց **Թուլումճանով** բանիւ գործերը: Իր ձուլարանին մէջ նոյլուած զատ ուրիշ լեզուի տառեր պատրաստուած չեն: — Թուրքն Գում Գարու բնակած տանն տեղւոյն եկեղեցիին գրքապետ եղած է, շնորհիւ իր գեղեցիկ ու մաքրուած ձայնին: Սիրուած անձ մըն էր, բարեհամբոյր և նեզ բնաւորութեան համար. վարած է Մայր Եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ ատենապետի պաշտօնը: Ճարտարօրէն կ'ածէր «քանօն», որուն համար արհեստ երաժշտութեան երկրպագուներ ձեռքի վրայ կը բռնէին զինք: Երբ վերջին տարիները Պոլսոյ հաստատուեցաւ, շարունակեց նոյն կոչին եկեղեցւոյն մէջ դպրութիւն՝ ու ի չգոյն ձայնաւորի. առանց իրեն ժամ չէր ըլլար: Պոլսոյ հաստատուելուն պատճառն էր հիւանդութիւնը, բժիշկներու խորհուրդով, որովհետև նիրաօրէն փարած ըլլալով գործին՝ ամփոփուած էր միշտ կապարի ու ծարիրի նեւ խառնուած և տառոց բունալից փոշիները շնչելով ախտ ինկած էր: Այս անձնանձիր վաստակաւորին համար անհնար ըլլալով պառկիլ կեանք մը վարել, քիչ յետոյ կոչի փոխադրեց ձուլարանն իր յարակից բոլոր կազմածքով. նոյնկէ էր որ կը դրկէր գիրեր՝ իր երկու տպարաններուն համար: Հազիւ 45 տարեկան, մեռած է ծերունոյն՝ Օգոստ. 10ին գիշերը, 1870ական թուականին: Վայելուչ յուղարկաւորութիւն մը եղած է, և բառ վաղեմի սովորութեան՝ Մայր Եկեղեցիէ բերուած դպրապետի շապիկ ձգուած է դագաղին վրայ: — Մահէն քանի մը օր վերջ Եւրոպայէն կը հասնէին իր ապսպրած մեքենաները, որոնք սնտուկներու մէջ դեռ եւս փակ՝ կը փոխադրուէին Արմաշ որուն վանքէն կը գնուէին: — Տպարանը յանձնուած է Պ. Բիրիջեանի որ քանի մը տարի միայն շարունակած է: Իսկ Քիւրքճեանի եղբայրը գիրերուն մայրերը ծախած է Հայ. Հոռոմ. Էնֆիէճեան վրդ.ի, 200 ֆրնս. ոսկի փոխարէն. վերջինս ալ ժամանակ մը վերջ, իր կարգին ծախած է զանոնք Յ. Պօյաճեանի, ի գին 250 օսմ. ոսկի: — Ռուբէնի աշակերտներէն մէկ հոգի միայն կայ ողջ, Տէօվլէթեան Սարգիս, այժմ մեքենավար Պօյաճեան գործատան մէջ: — Մեր ձեռք ձգած կենդանագիրին եռեւ Քիւրքճեան ձեռ մը ունի գրած առ. Եսայի պատրիարք Երուսաղէմի, 20 Օգոստ. 1867, ի Պոլսոյ, որմէ կը նշմարի թէ նոյն ատեններուն կոչի կը գտնուէր արդէն: Այդ կենդանագիրը երկար ժամանակուընէ վերջ հազիւ կրցանք հայթայթել հանգուցեալին քեռորդի Տիկին Ս. Գալէնտէրեան (Մարքիզոյ): — **Տպած գիրեր.** — Ճերմակ թռչունք (1857-8). Մեղու (1857-61). Լուսաւորեալ զար. Քերականութիւն (1856). Պ. Լուսաւորիչ. Կանոն մարդկայ (1858). Գիտուն ազդակ (1859). Բարի մարդ՝ բարի քահանայ. Բարի մարդկան չար մարդոյն (1860). Անզուգն Պետրոս. Եռանկի գիշերները. Պղնձէ քաղաք. Առողջարանութիւն (Տրր. Ա. Կրճիկեան) 1861. Արծիւ (1862). Ազգ. Սահմանադրութիւն. Կայսրէ և Սրէլլա. Ֆօսք և Մարգարիտ (1863). Օրացոյց (1863, 66, 68). Հէնրիկոս, Դատաքննութիւն դատաքննութեանց. Երազահան, Թուաբանութ. տիկին (1864). Ազգ. Համգամանկութիւն. Քննութիւն 1836ի սահմանադրութեան (1865). Ծիլն Աւարայրի (1866-7). Քրիստոնէական (Պ. Տանիելեանց). Հայ աղջկանց կարգալու գիրքին ճամբայ (1866). Զատիկ. Ընթացք աշխարհիս. Քնարն յանկարծ հայրենեաց (1867). Սուտ լուսաւորչեանն. Բառարան նոյ. յոյն. Փիլիսոփայութեան պատմ. (1868). Եօթն գիշեր. Հարանիք մը. Տրամաբանութիւն. Մամուլ (1869). Գերեզմանք երկաստարդաց. Կի-



ՌՈՒԲԷՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

վէպեր. Ուսումն Պարսից. Անառակն (1870). Աղջկանց արտասանութիւններ. Ոսկի Պսակ (1872). Ցնորք և երևակայութիւն. Միապաղաղ (1873). Պանդուխտ Վանեցին (1876). Բրիտանական (Արտաձանաց) 1877. տեղեկագիրք, դասագիրքեր են.:

88-101. **Գրաձուլիչներ.** — ՄԱՐՈՒԳԷ ՅՈՎՍԷՓԵԱՆ : — ՏԻԳՐԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ : — ԿԱՐԱՊԵՏ ՏՆՏԵՍԵԱՆ : — ՆՇԱՆ (Իզմիր) : — ԳՐԻԳՈՐ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ : — Գ. ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՈՐԴԻՔ : — ԳՐԻԳՈՐ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ : — ՍՏԵՓԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ : — ԽԱՉԻԿ ԳԷՈՐԳԵԱՆ : — ՊԱՊԱ ԽԱՉԻԿ (Աքքաբեան) : — ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆ : — ԵՐՈՒԱՆԴ ՓԱԼԱԳԱՃԵԱՆ : — ՄԻՀՐԱՆ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ : —



ԳՐԻԳՈՐ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ

Ասոնք տպարանատէր չեն եղած բնաւ. իրենց տպարել թողած են գրաձուլարան բանեցունել՝ հայ և օտար տպարաններու տառ. հայթայթելով : *** Առաջին երկուքին մասին՝ որոնք մեռած են՝ ծանօթութիւն չունինք : *** Կարապետ եղբայրն էր Ե. Տնտեսեանի : Օրթաքէօյ, Յ. Արապեանի ձուլարանին ձարտար գործաւորապետը եղած է և հասցուցած շատ մը աշակերտներ որոնցմէ կը բաւէ միայն յիշել Գ. Ռափայէլեանը : Մահէն չորս տարի առաջ աշխատած է Յ. Ծերունեանի ձուլարանը (Սօֆիա). Պոլիս դարձին՝ մեռած է : *** Նշան, աշակերտ Կ. Տնտեսեանի, բաւական ատեն ալ Գ. Ռափայէլեանի քով աշխատած, ապա Յ. Պօյաճեանի ձուլարանը վարած : Անցնելով Իզմիր՝ կը հիմնէ գրաձուլարան մը զոր ցարդ կը շարունակէ : *** Գ. Ռափայէլեան ծնած է 1846 ին. մինչև իր մահը (Պօյաճըգիւղ, 28 Յուլիս 1911) վարած է իր հիմնած հաստատութիւնը, վարպետ ձուլարանապետի համբաւ մը ձգելով : Հին Օսմանի վերջին տարիներուն՝ մասնաճիւղ մը ունէր Եգիպտոս զոր ինք անձամբ կը վարէր : Սամ. հռչակաւոր վերջ վերադարձած է մայրաքաղաք և զարկ տուած միևնոյն գործին : Արտասահման լոյս տեսնող շատ մը թերթերու գիր հայթայթած է, որով միջոց եղած՝ ազատ գաղափարներու պատրաստութեան գործին, վասն զի, ինչպէս գիտենք, կառավարութ. շարժման ատենէր այդ ատեններուն մամուլը հսկողութեամբ կը ձուլէին ի Պոլիս և անոնց պատասխանատուն խափս արգիլուած էր : *** Իր մահուանը՝ զաւակներն Արմենակ և Վաղինակ՝ յաջորդ «Գ. Ռափայէլեան Որդիք» անուամբ : ՏԻՊ ՈՒ ՏԱՌ շարուած է անոնց նորաձոյլ տառերով, որոնց հայերն ու մայրերը ժամանակին Գ. Ռափայէլեան գնած էր նշանաւոր տպագրիչ-գրաձուլիչ ձանիկի որդի՝ Ներսէս Արամեանէ : *** Գ. Տէօվլէթեան, Ռափայէլեանց գործաւորապետ 27 տարիէ ի վեր : Ծնած է Հասքէօյ : Վերջէն 2 տարի առաջ երբ Ռափայէլեան մասնաճիւղ մը բացաւ Գահիրէ, Տէօվլէթեան վարիչ կարգուած է անոր : Տարի ու կէս յետոյ Պոլիս դառնալով, ցարդ կը պաշտօնավարէ միևնոյն հաստատութեան մէջ որ էն առաջ Բերա Մինասեանի ատին էր, յետոյ Օրթաքէօյ, Ղալաթիա, Սուլթան Համամ, Իպեամ խան, հուսկ ուրեմն Պապը Ալի : Հայկական ջարդերուն, կառավարութիւնը խստութիւն բանեցնելով բոլոր ձուլարաններուն վրայ՝ ուզեց իւրացնել անոնց կաղմածները : Անոնք որ առխալեցան ցանկեր պատրաստել. Գ. Ռափայէլեան և Խ. Գէորգեան



ԽԱՉԻԿ ԳԷՈՐԳԵԱՆ

իրենց գործիքներուն **22 հազար ռուբլի** գին դրին, բայց կառավարութիւնը չգնեց: Գեղարուեստից վարժարանի մէջ մասնաւոր վայր մը յատկացուելով իրենց՝ Խ. Գէորգեան, Տէօվլէթեան և ուրիշներ սկսան աշխատիլ հրակողութեան տակ: Գաղափար մը տալու համար թէ ի՛նչ աստիճանի հասած էր Համբոեան բռնութիւնը տպագր. բուրք տառերու մասին, կը բաւէ ըսել թէ 50 տրամ **վաւի** կամ մէ՛կ **էլիֆի** համար պէտք էր խնդրագիր մատուցանել և օրերո՛վ սպասել: Սահմանադրութեան հռչակմամբ Թախայեան ձուլարանը Սերեան խան փոխադրուեցաւ և Գ. Թախայեան ալ կրցաւ ազատօրէն Գահիրէէն Պոլիս գալ: Գործարանը հիմայ կը գտնուի Ճգալ օղլու համարէն: *** Խ. Գէորգեան ծնած է 1856ին Պալար և աշակերտած Խորէնեան վրժրն.ի: 14 տարեկան կը մտնէ Տ. Ալաճեանի քով, Վէզիր խան, ուր կը մնայ մինչև 1880: Նոյնին գործը յետոյ իրեն յանձնուած է: Հոդ կը ձուլուէին սովորաբար «Արապ օղլու» կոչուած 16 բունիօ հին ձեւով **Նէսխի**, նաև հայ տառեր: Գէորգեան հոնկէ փոխադրուած է Օսման պէյի տպարանը, յետոյ Պապը Ալի («Բիւզանդիոն»ի տակ), իսկ Գեպզէն յետոյ՝ Գեղարուեստից վարժարան: Սահմ. հռչակումին՝ հաստատուած է Իզզամ խան (Բէշաշիկ), մինչև 1912ի գարնան, որմէ յետոյ վերջնապէս փոխադրուած Ճգալ օղլու եօգուշու, թիւ 34: —

| | |
|---|---|
| 1 | شـو جهان معرفتده اليوم حيرتبخشاى انظار اعتبار اولان بونجه بدايع |
| 2 | شو جهان معرفتده اليوم حيرتبخشاى انظار |
| 3 | مَاالثَّمَرُ اليَانِعُ تَحْتَ خُضْرَةِ الْوَرَقِ |
| 4 | خاچيك كيغورقيان |
| 5 | درسعادت باب عالى جادەسندە جغال اوغلى نومرو ٣٢ |
| 6 | دفعرت حقك اجل لطف بدانس يدر ؛ سيد |
| 7 | حيات رب منانه پادشاه قدردانه و شهنشاه جهانه ولى |

ՆՄՈՅՇՆԵՐ Խ. ԳԷՈՐԳԵԱՆԻ ՀՆԱՐԱԾ ՏՃԿ. ՏԱՌԵՐԷՆ

1. Նէսխի 8 բունիօ, 2. Նէսխի 24 բունիօ, 3. Հարէքէլի 18 բունիօ, 4. Նէսխի 36 բունիօ, 5. Նէսխի 12 բունիօ, 6. Թուլութ 16 բունիօ, 7 Րիգըա 18 բունիօ:

Յ. Մինհէնախեանէ տուած, նաև իր հնարած և ձուլած տաճկ. տառերն են «Նեսխի» 8, 12, 24 (սեւ), 18 (հարէքէլի) և 36 բունիօ, — վերջինս՝ նոր գործածութիւն սկսուած, — «րիգըա» 18 բ., «թուլութ» 16 բ.: Օսմ. մամուլին մատուցած այս ծառայութեանց համար՝ վերջերս վարձատրուած է Գ. կարգի «Մէարիֆ» պատուանշանով: — Գործառորդակս ունի Գաբրիէլեան Պօղոսը: *** Պապա Խաչիկ, քաջավարժ գրաձուլիչ, աշակերտ Յ. Մինհէնախեանի. իր սեպհ. գործարանը չէ ունեցած, այլ իբր գործարանապետ պաշտօն վարած է զանազան ձուլարաններու մէջ. այժմ Օհրանի Մարտիրոսեանի քով: *** Ամ. Տամատեան (որուն պէտք հաղորդենք նաև իր կենսագրութիւնը՝ **Արսէյֆ** թերթի բացատրութեամբ,) գրաձուլիչ ալ եղած է Ե. Տնտեսեանի ընկերութեամբ և ընկերակցութեամբ: 1870ի միջոցները գրաձուլարան մը բացած էին իր եղբայրներուն Օտուն Գարու, որ արդիւնաւոր եղած չըլլալով՝ 1874ին յանձնուեցաւ Սոնաֆանի, ընկերութեան լուծմամբ, և որ շարունակուեցաւ մինչև 1893: Այդ միջոցին Ա. անգամ ըլլալով, Տամատեան universel (այսինքն ամէն գործածութեան կատարող) գրաձուլիչ-մեքենայ մը բերել կու տայ. տպագր. տառերու գինը — որ 30 դրշ. էր — մինչև 15ի



ՅԱԿՈԲ ԾԵՐՈՆԵԱՆ

կ'իջեցնէ, որով՝ տպագրութիւնը կը դադրի Միւհէնտիսեանի, Արամեանի, Պիւրքճեանի և



† ԳՐԻԳՈՐ ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

այլոց մենաշնորհին ըլլալ։ Համիտեան խստութեանց բեր-մամբ՝ Տամատեան կը հարկադրուի գրաձուլարանը ծախե-լով Եգիպտոս անցնիլ։ *** Յ. Ծերոնեան ծնած է Բումէլի Հիսար՝ 31 Մարտ 1866ին։ 15 տարեկանին կը մտնէ հօ-րեղբօրորդի՝ Գ. Ռափայէլեանի ձուլարանը, որ նոր փո-խադրուած էր զայն Ղալաթիա, Միւհէնտիսեանի տպարա-նը։ Երկար տարիներ հոն կը մնայ՝ արհեստին հմտանա-լով. վարպետին Եգիպտոս գաղթելուն առթիւ՝ Ծերոնեան կը վարէ վարչութիւնը նոյն գործարանին զոր քիչ յետոյ կը փոխադրէ Միւհէնտիսեանի տունը, Բերա, ուրկէ զի Միւհէնտիսեանի՝ փորագրուելու վրայ եղող մայրերը ձուլ-ուին։ Երկու տարի ետք Ծերոնեան կը փոխադրուի Պապը Ալի ճատտէսի, մինչեւ Դէպքին տարին. յետոյ Ռափայէլ-եանէ բաժնուելով կը հիմնէ իր սեփ. ձուլարանն, Իմամ խանի դրան մօտ. 6 ամիս վերջ հայկ. Ջարդերը սկսելուն, Եւրոպա ապաստանած իր մեքենաներէն մէկ մասը նոյն մի-ջոցին առնելով, հազիւ քանի մը ամիս գործը կը շա-րունակէ և ձուլարանին շէնքը կը փոխանցէ Ե. Պէշեանի որ կ'սկսի հրատարակել «Բիւզան-դիոն»ը. Ծերոնեան ալ Ֆրանսացիի մը հովանաւորու-թեամբ կը փախչի Սօֆիա ուր կը բանայ նոր ձուլարան մը զոր 13 տարի անխափան կը վարէ, հօրեղբօրորդւոյն պէս՝ արտասահմանի յեղափոխականներու գրերը մեծ մա-սին հայերէն և տաճ. տառ. հայթայթելով։ Պուլկարիա Ա. անգամ համաձայն հաստատութիւն մը ինք եղած է հիմ-նող, Ե. Փալագաշեանէ քիչ առաջ։ Ազատութեան հռչակ-մամբ՝ վերադարձած է ծննդավայր և իր գործատունը բա-ցած Շարգ խան, զոր ապա Բէրչէմպէ Բազար փոխադրած է (Ղալաթիա)։ *** Ե. Փալագաշեան, եղբայրն է Յովհան-նի և որդին՝ հռչ. ձուլիչ Գրիգորի որ Պոլսոյ առաջին ու-ժանակներուն և մամուլի «զասի»ին հեղինակն է՝ մե-ռած 27 Նոյ. 1893ին, [իր հետաքրքրական կենսագրու-թիւնը տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը» 1913 տարի]։ — Եր-ուանդ ծնած է 1861ին Պոլիս, ուսումն առած Ա. Սուրէն-եանի վարժարանը 1878ին։



ԵՐՈՒԱՆԴ ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Փորագրութեան արուեստին մէջ աշակերտած է † Թէլլալեանի։ Օր մը ձեռք անցունելով վնասուած գրաձուլիչ-մեքենայ մը՝ նորոգած է զայն և գործա-ծութեան վիճակի մէջ դրած, միաժամանակ աշխատելով փորա-գրելու զանազան տեսակ տառերու մայրեր որոնցմէ յիշենք իր պատրաստած եբրայական գիրերը՝ նոյն լեզուէ կրացի մը հա-մար. դարձեալ՝ տաճ. զարդագրերու մայրեր որոնք նորութիւն մըն էին, քանի որ գիտենք թէ. թուրքերէնը զուրկ է անոնցմէ։ Այս աշխատութեանց միջոցին Տպագր. Տեսչութիւնը եկած կըն-քած է անոր ձուլիչ մեքենան, արգիլելով անոր՝ նոյն արուեստն ի գործ դնել։ Միւս կողմէ ոստիկանութիւնը կը հետապնդէր տպագրիչները, երեւան հանելու համար Հ. Յեղ. խմբակցու-թեանց կնիքները փորագրող անձը։ Երուանդ տեսնելով որ պի-տի չկրնայ Թուրքիոյ գործել՝ Դէպքին տարին կը փախչի Սօֆիա, յանդգնութիւնը գործելով հին կառավարութենէն կնքուած իր



ՄԻՀՐԱՆ Մ. ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

կաղապարները քակելով ձեռք տանելու։ — Պուլկարիա կ'սկսի այլ եւս ազատ գործել՝ իր բազ-

մանկութեան տարիներով ձեռք ձուլարանին մէջ, մասնաւորապէս մշուշ տալով պզտիկ գիրերու ձուլման գործին: Ներկայիս մէջ կը մնայ Սոֆիա միեւնոյն արուեստով: *** Միհրան Մ. Տէօքմէճեան ծնած է 2 Յունր. 1851 ին Պալաթ: Նախն. կրթ. ստացած է Հասքէօյի Ներսէսեան վարժ.ին: Պահ մը Թօքմաճեանին քով գրագրութիւն ընելէ ետք՝ վաճառականութիւն բռնած է. Գամամճեան, միասնաբար Չէմպէրլի Թաշ ձուլարան մը բանեցուցած է ընկերովի: Պէզքին տարին առեւտր. ասպարէզէն ալ կամաց քաշուելով՝ նուիրուած է այլ եւս տառեր ձուլելու արուեստին միեւնոյն վայրը, յետոյ Պապը Ալի եւ Սուլթան Համամ (Մէքքէկը Սոկաքի), միշտ մէկ ալ ընկերակցութեամբ Գ. Ռաֆայէլեանի: Ազատութեան վերջ, երբ գրաձուլարաններու մասին խիստ նախօրութիւն կար, Տէօքմէճեան իր սեպհ. գործատունը կը բանայ Մէքքէքէ Օրէջի գնմաց, թիւ 1, ուր ցարդ կը ձուլուին ամենազգի տառեր եւ ուր գործաւորապետ է Գրիգոր Չէնըրեան:

ՄԻՀՐԱՆ Մ. ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

*Արդար ըլլալ մարդուս պարտքն է:*

ՄԻՀՐԱՆ ՏԷՕՔՄԷՃԵԱՆԻ ունեցած գլխագրերէն ու բոլորագրերէն նմոյշներ որոնք չեն գտնուիր ''Հայերէն Գիրերու Ցուցահանդէս,,ին մէջ (երես 22.25)

102-103. **Կարապետ Իրանեան** — ծնած է Պոլիս 1827 ին. գաւառացի ընտանիքի Օհանի որդի. աշակերտած Մայր Վարժ. ձայնագրապետ Արիստակէս Յովհաննէսեանի, որուն հետ 1857-8 հրատարակած է **Քնար Արեւելեան**: Իբր երաժշտապետ, բաւական տաեն պաշտօնավարած է մայրաքաղաքիս արուարձանաց հայ դպրոցները, նաեւ 1861-2 ին հրատարակած **Քնար հայկական** երաժշ. հանդէսը Ն. Թաշճեանի հետ եւ իր վարպետին ձեռնտուութեամբ: Մեռած է 13 Հոկտ. 1862 ին: Մահուանը յաջորդ տարին Թաշճեան պահ մը շարունակած է հանդէսին ընթացքը, նաեւ սեպհական մը՝ հանգուցեալին ի յիշատակ՝ Պէշիքթաշլեանի տաղաչափով: Վերջինս վրայ կը կարդանք **ի յիշատակի Կ. Իրանեան**: Երաժշտութեան մէջ՝ այդ **տաղարանը վիմագրուած** մըն էր. Երանեան Դաշտնի պզտիկ խումբ մը ունէր որ կ'երգէր վիմագրութեամբ եւ արդէն լոյս ընծայուած են վերոյիշեալ երաժշտ. պարբերականները: *** ՏԻ. Յ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ. — Եօզղաթեան. ժամանակակից Յ. Մինասեանի: 1860 ին մէկ գիրք միայն տպած է, **Նկարագիր գոյաձեւութեանց** (թրգմ. անգլ.):

104. **Յովսէփ Կամաքեան** — ծնած է 16 Հոկտ. 1837 ին Պալաթ: Նախն. կրթ. ստացած հոն, ապա Հասքէօյ, Դալաթիա եւ Ճեմարան: Պահ մը ոսկերիչի մը քով աշակերտելէ վերջ՝ Խրիմի պատերազմին տաեն, հայազգի Սամուէլ Եսայեանի հնութեանց վաճառատունը կը մտնէ, յետոյ անկախ որ օտարազգի զինուորականներու թարգմանութիւն ընելն աւելի շահաւէտ է՝ կ'սկսի տալով պարապել: Պատերազմը դադրելուն՝ Յովսէփ անգործ կը մնայ, ուստի Արմաշու վանքը կը դիմէ կուսակրօն ըլլալու մտադրութեամբ զոր գլուխ չհանելով եւ կը դառնայ Պոլիս՝ վանահօր Սռ. Մաղաքեան Ա.Ի. հետ որ Պատր. Տեղապահ ընտրուած էր եւ որուն քով կը ծառայէ ժամանակ մը: — Օր մը ուսումնական Եսայեան (= Յովհաննէս Անդրէասեան) Պատրիարքարան կ'այցէ՝ միասին բերելով քանի մը տեսակ եւ յայտարարելով թէ հայ տառերը կ'ուզէ Եւրոպ. տառերու վերածել, այն համոզմով որ այդ միջոցաւ միայն կարելի էր Հայուն իր ինքնութիւնը ծանօթացնել եւրոպացիներուն?: Հոն պատրաստակամութիւն կը յայտնէ գործին յաջողութեան համար տրամադրել Ռումանիա ունեցած բոլոր ապարանքները: Կը պատասխանուի իրեն թէ ազգային խորհուրդ մըն էր իր յղացածը: Մինչ այս մինչ այն,

գործը ժողովուրդը խռնուած էր՝ տեղապահը վար առնելու առաջարկութեամբ : Եռանդուն այդ անցքին առնչութեամբ՝ կը գրէ Գավաֆեանի, եկեղեցեան հասու ըլլալու համար : «Պոլսահայք ազգային տուները յեղաշրջելու գաղափարներով խմորուած ըլլալով՝ ձեզ կը փնտռեն կոր, բաներնիդ համեն պէտի ...» կը պատասխանէ Գավաֆեան ձեռնօրէն : Թումանեանին՝ գլխարկն առնելով կծիկը դնելը մէկ կ'ըլլայ : — Գավաֆեան պատրիարքարանէ հեռանալով Մանուկ Փաշա գրավաճառի խանութ մը կը բանայ ու կ'սկսի ծախել Մխիթարեանի տպած գիրքերը : Արհեստակիցները կ'զգացին և կը ջանան անոր խանութը գոցել տալ՝ պաշտօնապէս «վարպետ եղած» ըլլալը պատրուակ բռնելով. բայց իր պաշտպանին՝ տեղապահ Մաղաքեանի միջամտութեամբ անոնց առաջարկութիւնը ջուրը կ'իյնայ : — Յովսէփ Յ. Մարգարեանի և Պ. Արապեանի միանալով՝ 1867 ին կազմած է «Եղբարք Դրավաճառութեան» ընկ. մը որ քանի մը տարուան կեանք ունեցած է : — Այն տասնուան ընթացքին դասագիրքերն էին Քերական, Ճեքարան, Սաղմոս, Աւետարան, Գործոց ու Նարեկ. ուստամ մը գայնս ասպարէզէ վերջ՝ չուչը Ճուկայ կ'առնէր : Արապեանը, Մխիթարեան, Թիրաքեան, Տիվիրճեան և Մինասեան մեծաչափ բրած էին առանց տպագրութիւնը. գրավաճառք տասնորդով կը գնէին անոնցմէ : Յովսէփ Յ. Մինասեանի հետ համաձայնած՝ Յ. Մ. սկզբնատառերով տպել կու տայ ամեն գիրքեր և 12 դրշ.ի ծախուող Սաղմոսը 5 ի կ'իջեցունէ : Այս մրցումը կը գրգռէ հայ տպագրիչները որոնք կը բողոքեն Պատրիարքարան, առարկելով թէ «բռօր»ի մը տպարանէն կրօնական գիրքեր լոյս կ'ընծայուին՝ իբր Յ. Մինասեանի տպագրութիւն : Գավաֆեան չվհատիր . բաւական գրամ ծախսելով կ'աջողի արտօնագիր առնել և 1860 ի սկիզբները տպարան մը հիմնելով (Թիրաքճի խան, վարի յարկ, թիւ 20 և 26,) անէն գիրք ազատօրէն տպել և ամեն ծախել : — Դրաշար ունեցած է ի մէջ այլոց Աշճեան Սիմոնը (այժմ գործարանատէր) : —



ՅՈՎՍԷՓ ԳԱՎԱՖԵԱՆԻ
Երիտասարդութիւնը

Անգամ մը իր գրատունը տաթիկաններ գալով կը խուզարկեն. հայ բազմութիւնը պատկերներ կը հաւաքեն, զինքն ալ կ'առաջնորդեն բանտ՝ վեց տպագրիչներու հետ որոնք սկսուի բաղդի կախարդիչներու վրայ՝ Լեւոնի, Հայկի, Վարդանի և Տիգրանի պատկերները գրուշած էին : Տուգանք վճարելով՝ բոլորն ալ ազատ կ'արձակուին քանի մը շաբաթէն, իսկոյն փաստաբաններուն շնորհիւ՝ որոնք գործին լաւ շահագրգռական նկատուիլը պարզած էին : — Դարձեալ, օր մը Ներսէս Պատրիարք տպագրութեան համար՝ Սահմանադրութեան տետրին ձեռագիրը կը յանձնէ Գավաֆեանի : Կրկ. Ներք. Թեւֆիկ Բաշա ձեռագիրը քննութեան կ'ենթարկէ, բայց մէջը վնասակար ոչինչ գտնելով կ'արտօնէ տպագրութիւնը : Այդ միջոցներուն, հայ տպարաններու գործերը յանձնուած էր Սարաֆեան Յարութիւնի (*) որուն պաշտօնը ձեռք ձգելու բաղձացող Միք. Աշճեան չուշանար տպուած օրինակ մը քննելով 2 բառեր մատնանիշ ընելու Եպարքոս Թեւֆիկ Սայիտ Բաշայի. — (Պատրիարքական) **գահ և Քօնսթիթիւսիօնէլ** :



ՅՈՎՍԷՓ ԳԱՎԱՖԵԱՆ

---

(*) Իրմէ զատ, զանազան ժամանակներու մէջ՝ մայրաքաղաքիս **հայ գրաքննիչ**ները եղած են — գիրքի ու թերթի — † Յակոբ Տիկրանեան, Միքայէլ Ասեան, † Պօղոս Պասմաճեան, † Միհրան Պօղոսեանփեան (Կամար), Եղուանց Խաչատուրեան, Լեւոն Սուրէնեան եւ Եղուարդ Վարժապետեան (օգնական):— Հայ. գիրքերու վրայ գրաճարող **Հրամանա Մէարիֆի** տարացը 1882ին սկսած եւ տանելով մը տարի շարունակուած է, յետոյ Տպագր. Տեսչութեան կողմէ տրուած հրամանագրին, բաժանմունքին եւ անօրէնին րէֆոսու տարածք՝ մինչեւ 1908:

Տպուած 500 օրինակները բարեբախտաբար փոխադրուած էին Պատրիարքարան՝ ուրկէ չէին կրնար գրաւել. սակայն տպագրիչը կը դատապարտուի բանտի ուր 2 ամիս կը մնայ, որովհետեւ Պատրիարք Հօր դիմումները ո՛չ մէկ արդիւնք ունեցած էին: Աւելի՛ն կայ: Տպարաններու վրայ հսկողութիւն կատարող հաւատափոխ Հազըր անուն անձ մը (որ փոքրիկ գումարներու փոխարէն՝ արկածեալ թանկագին ծառայութիւններ մատուցանելու յօժար էր), բանտ կ'այցելէ և բարութիւնը կ'ունենայ Գավաֆեանի իմաց տալու թէ իր **Երգարանը** կային բաներ և Հայ-Հռոմէականի մը թարգմանել տալով Պօլիս «Ժողովուրդ» ըրեր են: Յոլեկի յանկարծակի կու գայ՝ միտք բերելով տարաբախտ Տնանեանը որ զնդանի մէջ փչած էր հոգին՝ համանուն գիրք մը հրատարակած ըլլալուն: Խսկոյն իր փաստաբաններուն չար ընելով՝ նախորդ ամբաստանութեան խնդիրին մղում տուիր կ'աղերսէ, և տուգանքի, կրծոտի, տպարանի փակման, ամէ՛ն բանի համակերպելով՝ քիչ օրէն բանտէն դուրս ելլելուն, դժոխքէ փախչողի մը պէս կը մեկնի Աթէնք, մինչ իր բացակայութեան՝ տուն, գրավաճառանոց ու տպարան՝ անհնարին խուզարկութիւններ կատարուած էին: 2 տարի Յունաստան մնալ հարկ կ'ըլլայ՝ ծանօթանալով փախըստական Թուրքերու, ամէնքն ալ ազատամիտ սպաներ, բարձրաստիճան անձեր և պաշտօնական աղախիններ ու գալեակ որոնք գաղտագողի մեկնած էին անդարձ՝ Մայր-Հայրենիքէն, Կարմիր Սուլթանին հետապնդման պատճառաւ: Մինչ այս մինչ այն, Պօլսէն փառաւոր անձէ նամակ կ'առնայ ուեսող՝ թէ իր ծանր պատիժը 45 ոսկի տուգանքի վերածուած ըլլալով կրնայ այլ եւս ազատ մուտք գործել ի Թուրքիա: Դարձին՝ Գավաֆեան երեսի վրայ ձգուած և փճացումի վտանգին տակ կը գտնէ գործ ու գործատուն, զորս վերակենդանացունելու իր ջանքերն ապարդիւն կը մնան, հակառակ գրավաճառանոց և տպարան կրկին բանալուն, մանաւանդ որ առնէր մէյ մը Ոստիկանութեան կանչուելու երկիւղն ալ կար գործին մէջ, որ իր եռանդը կը կասեցունէր ու կեանքը կ'անհանգստացունէր: Զախորդութեանց այդ օրերուն՝ նախկին փայլուն վիճակին տիրանալու սին յոյսով, «ալէկոս» խաղալը չու չանար վերջին հարուածը տալու իր գործառնութեանց: 1892 Յունվարին կ'որոշէ քաշուիլ գործէ, Զարմաքձըլարի իր գրատունը Գ. Պալեանի, իսկ տպարանն ու կազմատունը փոխանցելով իր պաշտօնեաներէն Միհրան Յ. Փափազեանի: Հայկ. Կոստանդին, քաղաքական հոգեվարք մը տեսնելով առաւել քան երբեք, Գավաֆեան կը խառնուի գաղթականութեան մեծ հոսանքին որ կէս առ կէս գիր ու ցան բրաւ Պօլսոյ Հայութիւնը: Ընտանեօք կը հաստատուի Պուլկարիա, բաւական տարի Ռուսչուք, վերջին տարիներս ալ Շումլա՝ ուր կ'ապրի ցարդ, զաւակին ծերութեան մը մէջ: — 1863-88 տարիներուն իր տպած գիրքերը եղած են՝ ժամանակագրական կարգաւ՝ Գաղտնիք բնութեան, Պոէտ. մխիթարողը, Հռովմայ քահանայապետը, Տօնացոյց, Գաղտնիք առողջութեան, Բավօր, Առձեռն գրագիտութեան, Յաջորդութիւն պատրիարքաց Երուսաղէմի, Լեզու իմ մեծնուն, Ազգ. լարան, Պատմութիւն առն և կնոջ, Երեք ձառք դամբանականք, Սուրբ հայկականք, Բերթուածք նուիրականք, Իմաստասիրութիւն առողջութեան, Գործք առաքելոց, Օրացոյց ժողովրդ. (նաև պարզ օրացոյցք), Սիրաք և Սամուէլ, Միութիւն Հայոց, Աշըր Ղարիպ, Աշխ. հայ լեզուն, Բնական Պատմ. Հայոց, Գերեզմանք, Պատասխան ընդդէմ յայտարար ձմ., Շինանք մեր գերեզմանատունը, Գիտուորք, ճաշակ ոսկեղէն դպրութեան, Աւետարան եւն., եւն.: — Երկար տարիներ հրատարակիչը եղած Ա. Մար. Փարազաշեանի (նաև քանի մը ծանօթ ուսուցիչներու) զանազան **դասագրեանց** — շատը բազմաթիւ տպագրութիւններու հասած, — որոնք ազգ. դպրոցները ողողելով՝ հեղինակներէն աւելի տպագրի՛չը նպաստաւորած են:

## 105գ. Կանիկ Արամեան. —

**Հռչակաւոր վիմագրող, փորագրիչ, գծագրիչ, տառերու հնարիչ, տպագրիչ և տպարանատէր-արուեստագէտ որ միաժամանակ գրող ալ էր: — Արամեանի խոստովանութիւնը հայ տառերու մասին:**

Ծնած է 1820ին՝ Իզմիր: Համեստ ծնողքի զաւակ, տղայ հասակէն Պօլիս եկած և դերձակութեան աշակերտած է: Մէկ կողմէ իր արհեստին աշխատելով, հետամուտ կ'ըլլայ նաեւ ինքնազարգացման և հայերէնը կ'առաջացունէ. **առեն մըն ալ գրաւարութեամբ**

**կ՚գրաւի** : Դերձակ Ֆրանսացիներու հետ տեսնուելէն Ֆրանսերէնն ալ կ'ուսանի ինքնիրեն և Բարիզ երթալու ցանկութիւնը կ'ունենայ : 1846 ին է որ կը մեկնի հոն և քանի մը տարի կը շարունակէ իր արհեստը : — 1850ական թուականին Արամեանը կը տեսնենք դերձակութենէ քաշուած և ինքզինքը տուած փորագրութեան ու ձուլագրութեան արհեստներուն. այդ օրերուն է որ կը հրատարակէ հայերէն ձեռագիր բերրիկ մը : Յետոյ իր մտասեւեռումը կ'ըլլայ հայկական նոր տպարան մը բանալ, հայ տառերը գեղեցկացունել՝ եւ բոլորականներուն մերձեցունելով զանոնք : Կ'աշակերտի Բարիզի նշանաւոր տպագրիչներէն Վալանի (Պօնաբարդ փողոց, թիւ 44) և արհեստն անոր քով կատարելագործելով՝ հետամուտ կ'ըլլայ առաջադրած նպատակին : Երկար աշխատելէ վերջ ձուլարան մը կը հիմնէ և կը հնարէ շարուածքով ու տեսքով գեղեցիկ այն տառերը — տեսակով այլազան — որոնք մինչև այսօր իր մականունովը կը յորջորջուին : Մեծադիր թուղթի վրայ տպագրեալ այդ տառերուն մէկ ցուցակը ձեռք անցուցած ըլլալով, տեղեկացանք թէ իր հնարածները կը յանգին **73** պատկառելի թիւին, այլ եւ այլ «թանիօ»ներով, գլխագիր ու բոլորագիր միասին հաշուելով : Ահա՛ նոյն ցուցակին մէջ նշանակուած գիներուն ցանկը. — **Գին մարդ**. — Թիւ 1-5, հատը 10 ֆր. : Թիւ 6-7, 14 ֆր. : Թիւ 8, 19, հատը 6 ֆր. : Թիւ 20-21, հատը 8 ֆր. : 22-60, հատը 5 ֆր. : 61-66, հատը 7 ֆր. : 67-69, հատը 8 : 70-73, հատը 12 : — **Գին ձլեալ? տառից**. — Թիւ 1-21, պնդամիտր, քիլօն 14 ֆր. : 22-28, 8 ֆր. : 29-38, 10 ֆր. : 39-51, 11 ֆր. : 52-61, 12 ֆր. : 62-66, 13 ֆր. : 67-69, 18 ֆր. : 70-73, 24 ֆր. : «Իսկ հատարակ նիւթ»ոյններ՝ ֆր. 7-14 : — Այս վայելուչ ու սիրուն գիրերը զանազան ժամանակներու մէջ հայ գրաձուլիչներէ ընդօրինակուած և ձեւափոխուած են մասամբ : Արամեան «Մասեաց Աղաւնի»ի անդրանիկ թիւին մէջ սապէս պարզած է փորձ գրաձուլիչի իր հայեացքը. — «Արուեստից մէջ եղած նորաձեւութիւնները 2 տեսակ կրնան բաժնուիլ. մէկը առ ի զարդ և ի գեղեցկութիւն, մէկալը յօգուտ և ի դիւրութիւն: Գեղեցկութեան ու զարդի համար անթիւ փոփոխութիւններ եղած են մեր հայերէն գրերուն ձեւին վրայ. հին ձեռագրաց մէջ՝ **ձագագիր**, **մարդագիր**, **ծաղկագիր**, **կենդանագիր** բառածներէն մինչև մեր օրերուն վայելուչ գեղագրութեանց մէջի ձեւերը : Իսկ դիւրութեան և օգտի համար՝ յայտնի է թէ Մեսրոպեան **երկաթագիր** տառերը հետզհետէ կլորութիւններն կորսնցնելով՝ քառակուսի ձեւ առեր, մանրցեր, փոխուեր են, մինչև հիմակուան **նօտր** ու **շղագիր** բառած ձեւերը առեր են. որով հին երկաթագրէն գրեթէ նոյնչափ հեռացեր են որչափ Արարացւոց գիրը երրայականէն, լատինը յունարէնէն, ռուսը կիւրեղեան գրերէն : Քանի որ մեր ազգին մէջ տպագրութեան արուեստը մտաւ, ԺԶ-ԺԷ դարերուն գրուած ձեռագիրներուն գեղեցիկ **բոլորագրերը** օրինակ եղան տպագր. գրերուն : Անոնց մէջ ալ թէպէտ Ոսկան վարդապետին Ամստերտամ փորագրել տուածները աւելի հաճոյ և ընդունելի եղան իրենց ատեն՝ քան թէ նոյն ատեններ Վենետիկ, Հռոմ, Կ. Պոլիս և Մարսիլիա փորագրեալները, բայց ընդհանրապէս ամենն ալ մէկ ձեւի, մէկ ոճի վրայ ըլլալով, նոյն գեղեցկութիւնն ու պակասութիւններն ամենուն վրայ ալ կը տեսնուին : Այս պակասութեանց գլխաւորները 4 հատ երեւցեր էին մեզի, Եւրոպացւոց գեղեցիկ ու կանոնաւոր գրերուն հետ բաղդատելով. նախ՝ ուղղահայեաց դրիւք կենալու տեղ (ինչպէս որ երկաթագիր գլխագիրը կը կենայ՝ առանց մէկդին ծռելու), բոլորագրոյն դէպ ի առջեւ պառկած՝ շղագրի ձեւով կենալը : Այս դիրքը ոչ միայն ազնուութիւն կու տայ գրերուն, — մանաւանդ երբ գլխագրի, նօտր գրի կամ երկաթ. գրի քով համգիպին, — այլ և կարդալու դժուարութիւն կը պատճառէ և աչքը շուտ կը յոգնեցնէ : Բ. Գրեթէ ամէն գրերուն ալ քառակուսի ձեւ մը ունենալը. որով թէպէտ միակերպութիւն մը կ'առնէ իրենց իրարու քով շարուածքը, բայց այս միակերպութիւնը չափէ դուրս ըլլալուն՝ գեղեցկութիւն մը չի տար, կը ձանձրացնէ, կարդալու ալ դժուարութիւն կը պատճառէ՝ մանաւանդ նոր սորվողներուն : Գ. Մէկ քանի գրերուն իրարու սաստիկ նման ըլլալով՝ մէկմէկու հետ շփոթիլը. որով շատ համբակներ եղբ եզ կը կարդան, եղնիկը եզնիկ, դաւիթը գաւիթ, խաորը խոտոր, փաղանգաւշակը գաղանգաւշակ են. : Դ. Քանի մը գրերուն պատճառաւ տպագրութեան մէջ քաշուած դժուարութիւնները. որով հարկ եղած է շատ մը **ծոցագիր** հնարել որ **պաշտօր գրերուն** քով համդիպած տառերին՝ հեռու չմնան անոնցմէ. այսպիսի են Գ, Բ, Լ, Դ, Հ, Ւ, Չ, Վ : Դարձեալ, քանի մը գրերուն վերի կամ վարի ծայրերուն չափէն աւելի դուրս երկըննալը. որով իրենց քովի գրերէն հեռու կը մնան՝ թէ որ բառուածքին մէջ այն ծայրերը կապարին լայնքէն դուրս չելլեն. իսկ եթէ դուրս ելլեն՝ անդադար կը կոտրին.

այնպիսի են մ և յ գրերը : Անա այս 4 պակասութիւններն ալ մեր ազդի գրերուն վրայէն վերցնել ուզելով՝ հարկադրեցանք այս նոր ձևիս վերածել զանոնք» : — *** Իր գիրերը կը ներկայացնէ նախ փարդեանին՝ Վ.ալսէրի տպարանին մէջ, իրաւունք ստանալով «Արամեան տպագրութիւն»ը դրոշմելու հայերէն գիրքերու վրայ : Բէչ մը ատեն Վ.ալսէրի քով իրեն յատուկ տպարանն ունենալէ վերջ, 1859ին կը հիմնէ զատ տպարան մը և կ'ունենայ իր մեքենաները, (Տես Սիւրխս փողոց, թիւ 38), սկսելով տպագրութեամբ Ս. Ոսկանեանի «Արևմուտք» կիսամսեային : Վ.ալսէրի քով չորած հայ. գիրքերուն մէկ քանին «'ի գրատան Ճանիկի Արամեան 'Նիկոմիդացւոյ» բանաձևը կը կրեն : Առանցմէ է «Ընդունելութիւն ընծայի» գրքոյկը զոր 1856ին ինք խմբագրած էր **Թ. Տէրվիշեան** ծածկանունով, ի պատասխան Դր. Վ. Գաղզարաճեանի «Ընծայ» գիրքին : — Նոյն միջոցներուն Վ.ենետիկցի 3 վարդապետներ (Ա. Գաչֆաեան, Գ. Այվազովսքի և Մ. Թէոդորեան) իրենց միաբանութենէն հրաժարած՝ Բարիզ անցած էին : Արամեան տպագրած է անոնց գրչէն եկած գործերն ու մանաւանդ **Մասեաց աղաւնի** «Հայաստանեայց աւետաբեր» ամսաթերթը 1855էն սկսեալ, (որուն տպագրութիւնը հինգերորդ տարին Թէոդոսիա փոխադրուած է) :

* * **Բարիզ տպ. գիրքերը**. (1854-62). — Խորհրդածութիւնք յաղագս քրիստ. հաւատոյ : Վարք Յս.ի : Վարդապետարան : Հայկ. գեղագրութիւն (վիմագր.) : Համառօտ քառագրքեակ : Պօղ և Վիրգինէ : Հրաւէր սիրոյ : Արևելք (1855-6) և Արևմուտք (1859) հանդէսք Ստ. Ոսկանի: Վերադարձ 3 վրդպտաց (նաև Յաւելուած): Պարսք և խրատք : Ուրուագիծ ազգ. և ընթացից Մխիթ. Միաբանութեան : Սաղմոս (փոքր, գրպնկ.) : Փելիքս և Պաւլինէ : Դաշնակք : Բարիզ (հանդէս Արր. Մուրատեանի) 1860: Տքնութիւնք և սփոփանք հայրենասիրի : Վ.աճառականութիւն նախնեաց : Գիրք ընդդիմութեանց : Դատարան հայկազն մանկանց : Նարեկ (փոքր, գրպնկ.) : Եզնիկ : Երկատող : Խնդիր միութեան Հայոց, են. են. : — Բոլոր այս հատորները գեղեցկագոյն նմոյշներ կրնան համարուիլ մաքուր և հիանալի տպագրութեան, մանաւանդ «Վարք Յիսուսի»ն և «Դատարան»ը որ պերճարան-ընթերցարան մըն է, գիտական հրահանգիչ պէսպիսութիւններ և Հայաստանի վայրերու և այլ 200ի մօտ յաջող պատկերներ պարունակող : Իսկ «Ոգի Հայաստանի» կոչուած նկարը զոր «բայ ստու» տպագրութեամբ Ճ. Արամեան հրատարակած է՝ ցոյց կու տայ գեղեցկագէտի յոյժ զարգացեալ իր ճաշակը : — Այս մեծածախս գործերուն երեսէն սակայն նիւթապէս ազդուած՝ Արամեան կ'ստիպուի տպարանը փոխադրել Մարսիլիա 1862ի վերջերն ուր հազիւ քանի գիրք տպած, (մին 1864ին՝ Մ. Միքայէլեանի «Ընդարձակ բառարանութիւն»ը), կը փոխադրուի Պօլիս և վերջնապէս հաստատուի հոն (նախապէս Ոսկան չարշի փողոց, Շէրիֆ բաշա խան, թիւ 13, ապա Չարմարճըլար, Յակոբեան խան թիւ 12-16), սկզբնական ամանակի նեղութեանց տոկալով :



ՃԱՆԻԿ ԱՐԱՄԵԱՆ

* * 1865էն կ'սկսին մայրաքաղաքիս մէջ տպած իր գիրքերը — բաւական բազում — և կը վերջանան մինչև իր մահը, 16 ապրիլ 1879ին : Ճ. Արամեան Մարսիլիայէն Պօլիս գալէն՝ դեռ իր տպարանը չհիմնած, 80 ոսկի ամսաթոշակով վերատեսուչ կարգուած է «Արքունի Տպարան»ին 1865 թ. ու նոյն տարին իր անուանով հոն տպագրած է իր առաջին ընդարձակ օրացոյցը՝ փոքրադիր : — Անա անոնց կարևոր ցանկը՝ միշտ ժամանակագրական կարգաւ. — Խնդիր կարող.: Եղծ բանաքաղութեանց : Նուէր հոգևոր : Պատմութիւն ազգ. երկամեայ անցից : Եղիշէ : Պաղին գխաւորութիւնը : Ռուսիա և ընդհ. ժողով հայոց : Բանաք խմ : Կրօնափոխութիւնը բարեկարգութիւն չէ : Բնար պանդխտին : Զէյթունցիք : Հայոց եկեղեցին և անդրանեանկանք : Ժպիտք և արտասուք : Վ.աճառ : Արշակ Բ. : Մէքքէրնիք : Պատմութիւն ազատութեան Հաճնոյ : Տաղք և բարեկարգութիւնք Պ. Դուրեանի : Աղքատութիւն : Հռխրխիե : Հա-

ւսութիւնք : Տողիկք : Անգամագնութիւն : Ազգ. դաստիարակութիւն : Ամուսն. առողջաբանութիւն : Ծանէնն 'ի Սիսիր : Վանգով : Մանարձան : Թէ. ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովէն : Նորն Աստուած : Գ. Սրուանձտեան : Թորոս Լեւոնի : Բանի մը բարդ. : Հայաստան և Խոպին : Ներկայ հայերէնին ապագայ վիճակը, եւն. եւն.: Նաև անհամար դասագիրքեր եւ 1865-73 տարեցոյցներ, որոնք շնորհիւ իր գեղանձղ ատեւրուն՝ ժամանակին հայ. գիրքերուն մէջ են փայլուններն կրնան սեպուիլ՝ տպագրական տեսակէտով : Իսկ ընդարձակ օրացոյցները յատուկ նորութիւն են, պատրաստուած ընտրով եւրոպ. նմանօրինակ գործերու հետեւողութեամբ : Պատրիարքարանը սակայն կառավարութենէն արտօնութիւն կ'առնայ թէ «հայերէն օրացոյց տպելու իրաւունքը Տէր Երեմիայի կը պատկանի միայն. . .» և արգելք կը հանդիսանայ այդ գեղեցիկ գործին հրատարակութեան, ինչ որ չկրցաւ յաջողիլ:

* * Արամեան իբրև գրող ալ կը ներկայանայ մեզ, ազգ. հարցերու շուրջ գրիչ շարժելով երբեմնակի : 1861 ին երբ գրավէճ բացուեցաւ Պոլսեցւոց մասին, ճանիկ քանի մը տետրակ հրատարակեց ընդդէմ այն կուսակցութեան որ կը յարձակէր նոյն օրէնդրութեան վրայ : 1867 ին ալ հրատարակած ունի «Լուսաւորչական Հայք» անուն տետրակ մը : — Իր «Ընդունելութիւն ընծայից», զոր ոմանք Ջունդի և Մխաքեանի վերագրեցին, արամեան գրուածք մըն է, և մեր երգիծաբանական գրականութեան ամենահին փաստագիրը կրնայ նկատուիլ : Ան ինքնուրոյն շնորհ մը ունի և եթէ ուրեք ուրեք կան կոշտ բացատրութիւններ, «չանխկարի» գրուած ըլլալու նկատումով են անշուշտ : Այդ երկը հոս մեծ աղմուկ հանած է ժամանակին և մեծապատիւ սպառած: — Իր բուռն ազգասիրութեան ապացոյց՝ բաւ է նկատել դաստիարակեալ 7 Ոսկեանցի Հայերու՝ կախաղանէ ազատելու գործին ոգի ի բոյն աշխատիլը, Փրուս. հիւպատոսարանի հզօր միջամտութիւնը յաջողելով ապահովել,— ինք արդէն Փրանսահպատակ գոլով : — Բաց ի արհեստին մէջ ունեցած անժխտելի կարողութենէն, Արամեան մասնակցած է ազգ. գործերու և հանգանակութեանց շատոնց մայրաքաղաքիս բոլոր յայտնի ազգայնոց. Իր աշխոյժ նկարագրին ալ՛ նման յծորդ կու գար նաև իր փայլուն տրամաբանութեան ալ, ազդելի հագուստ կապուտով ու «սիլինտր» գլխարկով որոնք եւրոպական չէնք ու շնորհ մը կ'ունեցունէին իր անձին վրայ : — Մեծահամբաւ յաջողութիւն մը տարբած են ազգայինք Հայեւոց 'ի Հայեաց օգուտ — ու կը բնակէր այս նշանաւոր հայը : Ներսէս Պատրիարք, գիրի ու գիրքի համար արդիւնքները գնահատող վեհ վարդապետ, ներկայ եղած է նոյն օր, 17 ապրիլ 1879: Թաղուած է անդ. նոյն գերեզմանոցը: — Հասցուցած է բաւական բազմ աշակերտներ: Առանցմէ է գրաշարական † Զարեհ՝ զոր Բարիզ տարած էր, և որ ապա Պօլիս դառնալով տպարան բացած է :

## 106. Թօզլեան Կղեարը • — Կեսարացի : Անդրանիկն էր ՅՈՎՀԱՆՆԷՍ որ

տանէօք ազատախօս-հայ ծախած է Տօկատ : 1869 ին Վեզիր խանի մէջ կը բանայ պզտիկ տպարան մը որ 7 տարուան կեանք կ'ունենայ: Ուսումնական անձ մըն էր. այդ պատճառաւ նախանձ-ծառ սեպուած է փաստարանութեամբ պարապելով յանձ, 1875 ի վերջերը ձեռքի համենալով իր տպարանն ուրիշ-ւոյ ընծայած է. — Տպին Մանուկյ (1869), Վերժ, Աչ եախոտ ըիշեր իմլերինին պիրինձի ըերրիկի (1871), Բարեկամ մանկանց, Տիր-պինի աչք, Նոր օրացոյց ժողովրդ. (1872), Թէյսիրի խմլա (Երիզացի Մ. Գ. Թիրիաքեա-


Յ. Գ. ԹՕԶԼԵԱՆՑ


ԱՌԱՔԵԼ ԹՕԶԼԵԱՆ

նի) 1873, Նոր հրաշք ի Գում Գարու, Դիւցազներգութիւնք Մեծին Վարդանայ և Վահանայ Մամիկոնէից (1875): — Միւս եղբայրներն են ԱՌԱՔԵԼ, Կարապետ, Թադէոս և Մարտիրոս, որոնցմէ վերջինը միայն ողջ՝ վաճառական է ի Գարա Հիսար: Առաքել ևս — ծանօթ թրք. գրավաճառ. — 20 տարիէ ի վեր ունէր իր տպարանը (Պապը Ալի, թիւ 56) ուր կը տպագրուէին թուրք և ֆրանս. դասագիրքեր: 1912 Ապրիլին մեռնելով՝ զաւակը Լեւոն կը շարունակէ նոյն գործը:

107. **Պօղոս Քիրիշճեան.** — Ծնած է Պալաթիա 1839ին, որդի ղերձակ Քիրիշճի Յովսէփի: 18 տարեկանին Մխիթարեանի աշակերտելով՝ 10 տարի աշխատած է անոր քով: Ռ. Քիւրքճեանի մահէն քանի մը տարի առաջ անոր հետ ընկերովի՝ Ֆինճանճըլար Եօգուշը բացած է տպարան մը որ 1877ին առեւտները փակ էր արդէն: Պօղոս յետոյ վարեց կ'ըլլայ Բերա, չէշմէ փողոց թիւ 5 (Հ. ԳՐԻԳՈՐ Վ.ՐԴ. ԷՆՖԻՃԵԱՆԻ հիմնած) տպարանին և իր տպած գիրքերուն վրայ կ'սկսի դրոշմել ՊՕՂՈՍ ՔԻՐԻՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.: Այնուհետև աշխատած է Յ. Թօսպեանի տպարանը (Թագսիմ), Պօլիս՝ Չէմպէրլի Թաշ՝ Օսմանիէ, ապա «Stamboul»ի տպարանները: Մեռած է 23 Ապրիլ 1903ին: — 1863ին յարած էր Մասոնական Միութեան և Հայկական «Հայկ սեմեակ»ի անդամակցելով՝ պատուած հանանուն Միութեան եռագոյն ժապաւէնով: — Տպած գիրքերը. — Հաստենան առաջնորդութիւն (1869), Դիրք ժողովրդեան, Ազգ. ժողովոյ. մատենադարան, Ճանապարհին մը խաչին պարզ քննութիւնը, Դամբանական (1870), Պատմութիւն Հայոց (Ա. Պէրպ.), Անակրէոնի տաղք, Մատենագրութիւնք Մ. Պէշիքթաշլեանի, Պարտաւորութիւն կրթ. արտոյն Կիլիկիոյ (1871), Տրամաբանութիւն (1877), Առաջին քայլ բարուոքման ազգին Հայոց ի Հայաստան աշխ., Երկրագործութիւն (1878), Հայութեան ճոգին (1879), Առողջապահութիւն և տածումն (Տրդ. Փէշտիմալճեան), Հայկական բառաքննութիւն, Միութիւն Հայութեան (1880), Առակք Եզոպոսի (թրգ. Թ. Կէօզիւբեան) (1881), են.:


ՊՕՂՈՍ ՔԻՐԻՇՃԵԱՆ

108. **Ա. Ն. Ճանճապարեանց.** — Հարբէօյ: Հանանուն գլխոցին մէջ էր այս տպարանը որուն վերակացուն էր Ս. Միքայէլեան բնագիր-դասատուն, իսկ գրաշարապետ՝ † Յր. Զամիաշրճեան: — Կարապետ Վ. Ճանճապարեանի փոխանակման վերջ, կառավարութ Նուպար Բաշա անոր բաղդած 1000 ոսկիին վրայ եռապատիկ բարդելով 1866ին հիմնեց «Նուպար-Ճանճապարեան» վարժարանը, որուն ղեկավար եղբօրն **Ասատուր Նուպարի** և **Ն. Վ. Ճանճապարեանի** 'ի յիշատակ: — Միքայէլեան վերջէն ծախու առնելով այս տպարանին գիրերն ու գործիները՝ Պօլիս շարունակեց հիմնագլուխ: — Ա. Ն. Ճանճապարեանց տպարանէն լոյս ընծայուած գիրքերը. — Ոսումն քրիստ. հաւատոյ ... ի պէտս զարգացեալ (Կ. Վ. Ճ.), Համառօտ աշխարհագրութիւն, Բառարան ընտանեկան (1869), Եւնիքէրի (2 հատոր, գրիծ Տիմիթրիոս Զօպաքիոսէի) Թալերան, Թուաբանութիւն (Ս. Միքայէլեան), Համաքանդոյք (Թորոս Նազարեան) 1870, Երկրագունտ (Ոստանդականի հանդէս) 1870-1:


† ԱՌԱՔԵԼ ՆՈՒՊԱՐ

109. **Ա.(րշակ) Յակոբ Պօյաճեան.** — ծնած է Տիգրանակերտ 1837ին: 19 տարեկանին Պոլիս գալով յանձնուած է Տրք. Համլինի վարժարանը (Պէպէք): Ղրիմու պատերազմին, Սկիւտար՝ անգլ. սպասպարանութեան մէջ մտնելով, վարած է թարգմանի պաշտօն 1854 թ. և տարի մը ետք Ղրիմ ուղևորած առևտր. գործով: — Դարձին, օր մը ՉԸՐՉԻԼ.ի տպարանը կ'այցելէ, Եւրոպայէն նոր բերուած գլանաւոր մամուլի մը փորձերուն ականատես ըլլալով: Երկար տանն ճանապարհորդութեանը դիտելէ վերջ, տպագր. արուեստի մասին սէր մը կ'արթնի իր մէջ: Կ'անցնի Իզմիր, հոնկէ առագաստանաւով կ'ուղևորի Ամերիկա, և Նոր Աշխարհի մէջ Կիւրեմպէրկեան Տաճարին տպատուրնէն վերջ՝ կը դառնայ Պոլիս, ձեռնարկելով տպարանի մը հաստատման: — 1859ին Արքունի Տպարանին մէջ բարեփոխութիւններ մտցունելու գործը յանձնուած էր Անման Վէֆիք անուն անձի մը և Տրք. Սերոբեանի որ ամերիկ. հանդպարանական մըն էր: Ասոնք իրենց կարգին՝ նոյն գործառան կազմակերպութեան հոգը կը վստահին փորձառութեամբ Պօյաճեանի որ նոյն գործը գլուխ կը հանէ: — 1860ական թուականին, Կիլիկիա ուսում ու երկրագործութիւն տարածելու նպատակաւ՝ Օտեանի, Աղաթոնի և այլ ծանօթ ազգայնոց ձեռնարկին անդամակցած է: — Երբ Աղաթոն հեռագր. տեսուչ կը կարգուի, պաշտօնական տպագրութիւններ կը յանձնէ Պօյաճեանի որ կ'ստանձնէ նաև հեռագր. գործիներու եւն. նուազուրդով հայթայթումը: «Իրատէ»ով իրեն յանձնուած է նաև Թուղ. պատերազմի առթիւ թղթադրամ կոխելու գործը, միաժամանակ Տարաւանքի և Վառտօրի հեղուցներու ի պաշտպանութիւն ընծայելով ականներու հայթայթումը: — Հիմայ, Յովհ. Միսիւեանի տանը խօսքը՝ թղթադրամի տպագրութեան այդ օրերուն անձի ունեցող իրադարձութիւններ պատկերելու և տպարանական յայտնութիւններ պարզելու համար. — «1876ի Յուլիսին «կանչուեցայ Փոխարանցեան: Եղնու. նկարր. Դա«վիթ Բաշա հաղորդեց թէ նորէն դրամաթուղթ «պիտի տպուի. և որովհետև շատ շատ կ'ու«զէին և նոր կաղապարներ շինելու ատեն չը «կար, Աղոթիկ Մէճիտի օրով շինած կաղա«պարներու **բաղդամներ Համիտի** փոխելով «և **Թիլէ**ները շինելով գործի սկսանք, տպա«գրութեան վրայ հսկելու համար ալ Մարտիրոս «Եղբայրնիս առաջարկեցինք. բայց տպագրու«թիւնք անձոռնի ըլլալուն՝ Մարտիրոսէն թեա «գոհ չէին: Պօյաճեան Յակոբ բարեկամնիս դիմում ըրաւ Մալքէ Նազըրին՝ նոյն գործն իւր «վրան առնելու համար. և անիկա Եւրոպա երթալով 2 գոյն միանգամ տպող մամուլ մը, [առոր «ճիշտ նմանը ժամանակաւ ես բերել տուած էի, բայց ի շնորհս Էնքէրճեան Յակոբի՝ տեղու«թեան անցած և Արքունի Տպարանը կեցած էր], **մաշինա կիլիօթէ** մը, **բանքօթրամ** մը, «**կալվանօյի** վերարկելոյ մեքենաներ, անագին **porto** մը, **մաշինա ա ռապօրէ** ևն. ևն. «առնելով Պոլիս դարձաւ, **ալ-ֆով** փորագրող վարպետ մըն ալ հետ առած. և մենք գործէն «հրաժարեցանք: Բայց գիտնալու արժանի բանը աս է որ, Եւրոպայէն եկող այն վարպետին «շինածները մեր շինածներէն առաւելութիւն մը չունէին բնաւ, միայն թէ անոր առած ամսականը «մերիններէն քանի մը պատիկն էր . . . »: — Ա. Յ. Պօյաճեան 1889ին «ազգային» ընտրուած է թաղական Հայոց, պաշտօն զոր ցարդ կը շարունակէ: — Իր տպարանը նախ Վէզիր խանն էր որմէ փոխադրուած է Դալաթիա, յետոյ Պոլիս, Ամերիկեան խան՝ 1872էն ի վեր, ուր կը մնայ ցարդ, իբր տպագրիչ Ամերիկեան աւետարանչական բոլոր Ս. Գիրքերուն՝ զորս հա-



Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

խաղնէն Զրրչի և Յ. Մինասեան կը տպէին : — Գրաշարապետ անցած է † Յարութիւն Փափազեան և † Մանուկ Վ. Աբգարեան : — 1875 էն մինչև այսօր իր տպարանէն լոյս ընծայուած են «արգէնքը և ծախուք Ամերիկեան ընկերութեան Ս.Գ.աշունչ գրոց» և «Ս.Գ. աշունչի Բրիտանական և Արտասահմանեան Ընկերութեան ծախուք» **Ռևսումեանց, Գիրք Աղօթից, Նոր Կտակարան, Աւետարան**՝ իրենց մասերը, գրբ., աշխ. և ռուսերէն լեզուներով, բոլորն ալ տառն և անտառով : Նոյնպէս զատ Ն. Եփրեմեանցի խմբագրած **Բառգիրքը** (1884), **Աւետարեր** (մինչ), **Բառարան Ս. Գրոց** (1881), **Հոգևոր երգարան** (1869), Ընտրողութիւնք Նոպարեան բարգմ., Հայ բնակաձև արձանագրութիւնք, Աշխարհագրութիւն, Ընթերցարան, են. են.:

110. **Գէորգ Զարդարեան** — ծնած է Կեսարիա 1834 ին, Զարդար ազնուականի պատմական ազգատոհմէն՝ որուն կը պատկանին նաև վիրաբուժապետ Մինասն : — Հօրը Միհ. Աբրահամի մահուամբ, Գէորգ 1851 ին Պօլիս կու գայ և մօրեղբայրը՝ Յակոբ Ձրէնկեան զինք կը տանի առնը կիրթութեան : Այս Վ.ալիտէ խանի մէջ սեղանատորութեամբ կը պարապի : 1863 ին Յակոբ-Արշակի հետ ընկերովի՝ Մահմուտ Բաշա կը հիմնէ բերթականատուն մը զոր քանի մը տարիէն Սուլթան Համամ կը փոխադրէ : 1870 ին կը բանայ տպարան (Սուլթան Համամ, թիւ 12-14), կազմատուն, սփիւռքի թուղթի գործարան, իսկ 1872 ին խուսաբարատարան մը Եսաի Պոլէ : Օժտուած էր հայրենակիցներու ձեռներէց ոգիովը՝ որուն չծորցեց մեծամեծ գործառնութիւններ ընելու յանդգնութիւն ալ որ սակայն սուղի նստաւ իրեն և պատճառ մը վճարումները դադրեցնելու նախկարգէց զինք : Զարդարեան կրկին չխմբեցաւ՝ վուչի զարգացու իր պատմութեանը : — Ինք հնարած է բազմալեզուեան **պատի օրացոյցը** զոր մինչև իր մահը (30 Մայիս 1888) հրատարակած է : 1873 ին կ'սկսի տպել փոքրադիր **Ժամանակաւոր Տարեցոյցը** զոր դադրեցուցած է 1880 ին, վնաս հասցուցած ըլլալուն համար Հիւանդանոցի Օրացոյցներուն : — Տարուէ տարի մղում տալով տպարանական գործին, կ'սկսի վիմագրութեամբ և գունավիմագիր արուեստով ալ պարապիլ. 24 կտորէ բաղկացեալ Օսմ. պետութեան մեծածաւալ քարտէսը կրնայ նոյնչ ծառայել իր ձեռներութեան : Վիմագիր հրատարակած է նաև ձայնագրերով 31 տետր, դաշնակի ու ջութակի համար, Նորաձի Համի էմինի հետ : — Բաւական տարիներ մասնակցած է ազգ. գործերու. Մայր եկեղեցւոյ թաղականն. 1880-5 երբ առանձնական էր՝ յաջողեցուցած է 4 թաղերու դպրոցները միացնելու ծրագիրը. 1865 ին Եզ.ք. Ժողովի անդամ, Ս. Փրկչի Հիւանդանոցի հոգաբարձու՝ 1872 ին մարբագործումներ կատարելով մատակարարական գործին մէջ : Անդամակցած է նաև «Արևել. Տնտես. Միութեան» և Մագրիքէօյի Եղբայրակ. ժողովի : — Թողած է 2 զաւակ, Վահան և Պիմէն որոնցմէ առաջինը պաշտօն մը հօրը գործը շարունակելէ վերջ՝ նախապատուութիւն տուած է գրականութեան զոր ցարդ կը շարունակէ կրտսեր հարազատին հետ : — Գ. Զարդարեան «գործարան»էն լոյս ընծայուած են. — Փախանրն եանրլոպղրղրնա ոլիր խայար, Սևոայի կուկուկ (1870), Աղվնեբարի մենակեացը, Հետազօտութիւն (Մ. Մինդաոեանց), Մարդարանութիւն, Ճամբորդութիւն ի Մայր Աթոռն (1871), Գժոխքէն փախած մարդ մը, Հայրենասիրութիւն Հայոց (1872), Դրախտի բնութիւն (1876), Օտար մեղքը (1879), Կիւրատ, Նիւ. Դիտակք առողջապահութեան (1882), Խաչի ձառ., Մարգարիտ արքայութեան (1887) են. են., նաև Եւանկաքուի հայարարդութ և լատիներէն քանի մը գիրքեր :



ԳԷՈՐԳ ԶԱՐԴԱՐԵԱՆ

111. **Պետրոս Ճեզվեճեան.** — Ծնած է Պոլիս 1839 թ.: Անդրանիկ ՏԻՊ ՈՒ ՏԱՌի հեղինակին: Նախ. կրթ. ստացած է ծննդավայրին՝ Գալաթի դպրոցը, յետոյ Սկիւտարի Ճեմարանը: Կ. Ս. Խրիմեան Հայրիկ պարծին հանդէ հանելով գիրք՝ Չինիլի խանի մէջ իր «Մասիս»ի տպարանը կ'աշխատցնէ իբր գրաշար: Երիտասարդ մնաց այս տպարանատեղին մասին չկրնալով բաւարար հոգեր քաղել իր գաղափարներէն, դիմեցինք վաղեմի տպագրիչ Կարապետ Ս. Պարոնեանի որ հաճեցաւ հետեւեալը գրել մեզ. — «Զինքը կը ճանչնամ թախթրմանէ կոչուած կառավարական տպարանին մէջ իբր վարպետ մամլագործ պաշտօնավարած ատենէն, որ մնաց մինչեւ վերջ, նոյն խուլ իր մասնաւոր տպարանն ունեցած ատենն ալ: Այդ միջոցներուն «Մախսուսէ»ի շոգ. ընկերութեան **Երթեւեկի տոմսակներուն** տպագրութիւնը ստանձնել յաջողելով՝ նոյն գործին յատկացնելու փոքրիկ տպարան մը հիմնեց Եռասմփեան խանին մէջ, շարունակելով հանդերձ «թախթրմանէ»ի մէջ ունեցած պաշտօնը: Թէեւ յետոյ գործն ընդարձակելով՝ բաւական ատեն տպագրած է **Հուրիզան** և **Փարոս** շաբաթաթերթերը, **Պագէն Մարաշլեան դասատուներ** տխրագոյն ընդարձակ երկը որ ընդ առ ընդ հրատարակուեցաւ, մանաւանդ բազմաթիւ մեծ ու փոքր աղբիւրն ու հրապարակային զանազան գործերը: — Մեռած է 1882ին: — Ճեզվեճեանի հաւաքած աշակերտներէն յիշենք իր ազգական Նշան Կ. Պերպերեանը որ վարպետին հոգեվարքի օրերուն յաջողած է տպարանին արտօնագիրն իր անուան փոխանցել, զոր գիր ու կազմածք և վարել իր մահէն. աշխատանքը: — 1870-6 Պ. Ճեզվեճեանի տպարանէն լոյս ընծայուած են. — Յարութիւն Արարատոյ և հոգին Ս. Եկեղեցւոյ, Ճառագայթնորդութիւն ի սուրբ Բազմ Հայոց, Առաջին Տեղեկագրութիւն վիճակին Նիկոմիդիոյ, Սէր Միջէի, Ոսկեար զառն հիւրեայի, Արցուր Եղբայր, Նուէր կաղանդի (տրամախօսութիւն), Սեղոյէ զարշը սէրս, Առակ սուրբ կուսանաց՝ ապաշխարհելէն (Յ. Ս. Մակեդեան), Նկարագրութիւն Կովկասու (թարգմանութիւն Ռուսերէնէ), Նուէր մանկանց (Արկածք ազնիւ աղջկան):


ՊԵՏՐՈՍ ՃԵԶՎԵՃԵԱՆ

112-113. **Մարգարեանք.** — Երկու մասին խօսելէ առաջ՝ կարելի չէ անյիշատակ անցնիլ ԹԷՕԴՈՍ ՄԱՐԳԱՐԸ որ պօլսական գրավաճառներու նախահայրը եղած է: Իր զաւակն էր Յակոբի Պարոնի, և ծնած է Պոլիս 1789ին: Ամիրաներու մատակարար էր հայրը, որուն հետ պատանին Մարգար անոնց գրասենեակները կ'երթեւեկէր ու գիրք կը ծախէր: Հասան Բաշա խանին մէջ տպարանատէր Թէոդեան Արքաճամ Ամիրայի գիրքերն ալ իր միջոցաւ կ'սպառէին: **1805ին առաջին հայ գրավաճառը կը բանայ Պօլիս**. նոյն տպարանին մօտիկները, զոր տարս կը փոխադրէ Չարշըբազարը՝ Մեծ Նոր խանին առջև, որով՝ գիտութիւնը կ'ունենայ աւելի շատ շփման մէջ գտնուելու Ամիրաներու հետ: Թէեւ յետոյ կը փոխադրուի Միրզայն, Եաղտիզ խան: Այդ բաւականին սկսեալ՝ համբաւ կ'սկսի տարածուիլ ամէն ո՛ւր որ հայ ընթերցասէրներ և հայ գրավաճառներ կային, մանաւանդ հեռաւոր անկիւններ (Հնդկաստան, Ռուսիա, Պարսկաստան ևն.): Խանութը զարդարուած էր կրօն. պատկերներով՝ շարք գծուած իր բեմադրութեամբ: Մարգար յաջողած է Ամիրաներ որ տառապէն մեծածախս գիրքերու հրատարակութեան: Երկար ատեն գործակալ եղած Մխիթարեանց: — Իր գրատունը ժամադրավայր դարձած էր գրոց-բրոց մարդոց — վարժապետ և եկեղեցականաց — որոնք հոն հաւաքուելով կը սիրէին վիճիլ օրուան խնդիրներու վրայ: — Մեռած է 3 Յունիս

(*) Յիշենք այս առթիւ թէ Պոլիս **1812ին կազմած է առաջին հայ Հրատարակչականը** Յովհաննէս Չէլէպի Տիւզ:

1845ին : — Մահէն վերջ, իր բանկարժէք գիրքերն ու ձեռագիրը Հայ մը գնած է իր զաւակէն, և մեծագին վաճառած է Բարիզի Ազգ. Մատենադարանին : —



ՁԵՌԱԳԻՐ ՔԻԹԱՊՃԸ ՄԱՐԳԱՐԻ

* * Ունեցած է 16 զաւակ — 4ը մեռած — որոնցմէ ՅԱՐՈՒԹԻՒՆ (մանչերուն երէցը) ծնած է Բերա : Նախ. կրթ. կ'ստանայ Գում Գաբու : Միջոց մը հօրը գործին կը հետեւի, յետոյ կը մտնէ Մր. Համլինի ամերիկեան վարժ.ը (Պեպէք) ուր անգլ. կը սորվի և կը ճանչնայ գիտութեանց, և որկէ ելլելուն ատենը կը կարգուի Սամաթիոյ դպրոցին. ասկից չնամակերպելով աշակերտներուն' կը հրաժարի և Գուրու Չեշմէ Ամիրայի մը տուն տարի մը կը մնայ ուսուցչ. պաշտօնով : Հօրը մահուամբ, կը պարտաւորուի գրատան գործերն բանաձնել և իրր ժառանգութիւն կ'ուզէ անոր անունը պահել իրր մականուն : Կը մնայ ալեւ ընտանիքին. հոգ կը տանի իր 2 քոյրերուն և 11 եղբարց կրթ. և այլ գործերուն: Կրտսերագոյնը Թէոդիկէն կը դրկէ Բարիզ' Մուրատեան վարժ. : — Եղբն է որ Գավաֆեան Յովսէփի պէս նոր կեանք կը մտցունէ գրավաճառութեան մէջ որ մինչեւ այն ատեն տատանորդի դրութեամբ էր և հին գիրքերու առուտուրէն անդին չէր անցներ : Հեղինակներու հետ պայմանաւորուած' իր հաշուոյն գիրքեր տպել կու տայ և Ա. Հայկունիի ու Ոսկանեանի թարգմանութիւնները լոյս կ'ընծայէ, զգուշանալով «հրատարակիչ» անունէն, տպագրիչներու թշնամութիւնը սրած չըլլալու համար : Չարձեալ, իր երաշխաւորութեամբ լոյս տեսած է **Ժիլ Պլաս**' բաժանորդագրութեամբ : — Կոչ կ'ուղղէ արհեստակիցներուն, միանալու և օրինաւոր շահով ապրելու համար և հիմնադիրը կ'ըլլայ «Եղբարք Գրավաճառութեան Ընկ.եան» Պ. Սրապեանի և Յ. Գավաֆեանի հետ ընկերովի : — Հօրը նման, ինք ալ խառնուած է ազգ. գործերու և Խօլի Չրգմայ խանի իր սենեակը ժողովատեղի կը դառնայ Օտեանի, Ոսկանեանի, Նահապետի պէս մտաւորականներու, որ կը ստեղծէին մեր Սահմանադրութիւնը : — Ժողովրդ. քաւեարկութիւն տարածելու համար կանոնագիր մը կը կազմէ և յառաջ կը մղէ իր եղբայրները որոնք [illegible] ձեռուրնին կիրակի օրեր գացին աղքատներուն խանութը գեղեցկացնել դաս կու տան : Այս ուղղութեամբ անա կը կազմէ «Անձնուէր Ընկ.»ը 1860ին, որ ձրիդասատուելով ա՛յնքան օգտակար հանդիսացած է մերայնոց : Բայց «խաւարեայ»ները կը հալածեն և «Ասոնք ժողովուրդը **բռօր** պիտի ընեն» ըսելով կ'սկսին խանդերն փակել, ծեծել ու թշնամանել զիրենք : Մարգարեան չյուսահատիր. գիշերային ու կիրակնօրեայ դասեր կը հաստատէ ազգ. դպրոցներ, ու նոյն գործին գլխը նեցուկ կ'ունենայ Բ. Նազարեանը, որ հիմնադիրին



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

մահէն (1 Մարտ 1878) վերջ՝ անոր յաջորդ կը հանդիսանայ Դալարիս, օժանդակութեամբ հանգուցեալին որդւոյն՝ Վահրամի: — Յ. Մարգարեանի գիւտն է հայ ազգութեամբ յարգագոյն բաշկինակ մը՝ զոր Յակոբեան Միքայէլի միջոցաւ պատրաստել ու բերել տուած էր Մանչեսթրէն, և որուն 4 անկիւնները հրեշտակներու դէմքեր կային, մինչ պորտին դրոշմուած էին Մեսրոպեան տառերը՝ բաւանչաններով հանդերձ, առողջ կրելով սա նախադասութիւնը. «Կարդալ սորվեցէք, գիրք սիրեցէք»: Այդ բաշկինակները թուղթի տեղ իբր պաստառ գործածուած են ձրիաբար՝ գաւառացի Հայերու կողմէ իր խանութէն գնուած գիրքերու: Բաց աստի տպել տուած է խաղի թուղթեր որոնց վրայ կային հատուածներ Հայոց Պատմութենէն, գրուած Արմենակ Հայկունիի կողմէ: — Մարգարեան 1862 ին հրապարակ հանած է պատի փոքրադիր օրացոյց մը որուն մէն մի թերթին առջև կար երկտողեան մը Եզովբոսի առակներէն: Շատ վերջերը, Ռուսիա՝ Կ. Ափինեան և Վ.Ենեանիկ՝ Մխիթարեանք կատարելագործած են զայն: — Ընթերցասիրութիւնը Հայաստանի մէջ ծաղկած տեսնելու տենչով, Յարութիւն գրեթէ ամէն գաւառ գատ գատ առանձնակ ոսկի արժողութեամբ գիրքեր կը բաշխէ իբր դրամագլուխ, պայման դնելով որ նոր ազգապանքները փոխարժէքը միայն պիտի պահանջէ: Այդ առակները մեծ մասամբ կորսուած են յետոյ: — Անգամ մը Երուսաղէմ ուղևորութեանն առթիւ Երեմիա Չէլէպիի խակական գրով 100 տարուան ձեռագիր բանկագին ժամանակագրութիւնը նուիրած է Ս. Յակոբեանց վանքին: — Երկար ատեն անդամակցած է Վահրամէկ խորհրդոյ և շատ օգտակար առաջարկներ ներկայացուցած: Երեսփոխան ընտրուած է Պէշիկթաշէն, որ «Հայկազեան Ընկ.»ը կազմած էր, հրատարակելով Ն. Մեզպութեանի, Զօրայեանի, Մուրատեանի և Ա. Մ. Գարագաշեանի դասագիրքերը որոնք — ընկերութեան նպատակին համեմատ — առանց շահու ծախուած են: — Մարգարեանի նշանաւոր խօսքերն էին. «Հայ մարդուն հայ աչքին». «Մինչև Ա. զաւկիդ ծնունդը՝ կնոջդ հետ իբր նշանած վարուէ՛». «Երբ ուսուցիչներ կառքով երթան, գիտցէք որ ազգը յառաջացուած է». «Երբ ամէն հայ գրել-կարդալ մը գիտնայ, ինքնին կու գայ ազատութիւնը»: — 1870 ի սկիզբները բացած է տպարան մը Բիւրքճի խան, զոր Եաղօրգ և Եօղիւ Չրգման խաները փոխադրած է յաջորդաբար և որ՝ մահուանը յաջորդ տարին փոխանցուած է իր որդւոյն՝ Վահրամի: Հոն տպուած են (1871-8). — Արկածք ազնիւ տղային և բուշնոյն, Ընդհ. տեղագրութիւն Գաղատիոյ վիճակին վրայ, Բէօր օղլու, Դատախազական մանկանց, Թանիր իլէ Ճէօրէ, Համառօտ բնական խօսակցութիւն, Հեզաբան մանկանց, և այլն:



ՎԱՀՐԱՄ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

* * 1873 ին իր քով առած էր արդէն զաւկրներէն ՎԱՀՐԱՄը: Միւս որդին է Միհրդատ որ հիմայ տպագր. գործով կ'զբաղի և որուն որդին Ոսկիան իր հօրեղբօր՝ Վահրամի քով ծառայելէ վերջ, այժմ գրատուն մը բացած է Մեծ Նոր խանի գետնայարկը: — Վահրամ ծնած է Պէշիկթաշ 9 Սեպտ. 1857 ին և նխն. կրթ. առացած անդ: 1869 ին Բարիզ Մուրատեան վարժարանը ղրկուած է, ուրկէ տարի մը վերջ վերադարձած է՝ պատերազմին պատճառաւ, կրկին յաճախելով Մաքրուհեան դպրոցը՝ Նար Պէյի տեսչութեան օրով, ուրկէ շրջանաւարտ եղած է և մտած հօրը գրախանութը: Հայրը մահուընէն 3 տարի առաջ Գ. Զարդարեանի տպագրած օրացոյցին ետև դրոշմել տուած է «Գրատուն Վ. Յ. Մարգարեան», այսպէս յաջորդին անունը կենդանութեամբ նուիրագործած ըլլալու համար: Անոր մահէն վերջ, Վահրամ կ'առանձնէ բոլոր գործերը: 1880 ին տպագր. նոր օրէնքին համաձայն կ'առնէ 1000 ոսկւոյ երաշխաւորութիւն տալ: Այդ թուականէն կ'սկսին խառնակ մամուլի օրէնք և գրաքննութիւն: 1881 ին ինք և Ս. Պարտիզպանեան կը կանչուին Պոլսոյ. Ատեանի կողմէ, մին «Արուեստ նամակագրութեան», իսկ միւսը Ստ. Փափազեանի Ընթերցարան գիրքերն առանց արտօնութեան հրատարակած ըլլալնուն: Վահրամի փաստաբանութեամբ դատը կը վերջանայ 25 դրշ.ի տուգանքով, մինչ ընդհ. դատախազը 50 ոսկի կը պահանջէր: Այնուհետև առանց հրամանի տպուած անվնաս գիրքե-

րու համար 10 ոսկի տուգանք կը սահմանուի : — 1882 Մայիսին Վահրամ կը մեկնի Էջմիածին՝ ուր կ'ընկերակցի Արք. Այվազեանի որուն հետ կը շրջին գրեթէ ամբողջ հայ աշխարհը , 40 է աւելի վանքեր այցելով : Դարձին՝ նոր փորձանք մը կ'սպասէր իրեն . կառավարութիւնը ձեռք անցուցած էր Խիզանու «Ուսումնասիրաց Ընկերութեան» (որուն գործադիր ժողովի ատենապետն էր Վահրամ) կանոնագիրը որ **Հայաստան** բառը պարունակելուն՝ պատճառ կ'ըլլայ — իբր յեղափոխականի գործ — Վահրամի ձերբակալման . սակայն ինք երկու տարի առաջ Ռումանիոյ հպատակութիւն ընդունած ըլլալուն՝ ազատ կ'արձակուի : Նոյն կանոնագիրը Պատրիարքարանէ վաւերացուած ըլլալով , Ներսէս Պատր. կը միջամտէ «թաքրիր»ով մը . սակայն դատը կրկին կը շարունակուի Վահրամի տպարանի փակմամբ և տուգանքի դատապարտութեամբ : Վերաքննութեան , ապա վճռաբեկ ատեաններու դիմումով , թէ՛ ընկերութիւն և թէ տպարան (մինչեւ 1891) կը յաջողի շարունակել : — 1884 ին կ'ընտրուի երեսփոխան Աքսարայի , բայց 30 տարին լրացուցած չըլլալուն՝ չվաւերացուիր : 1890 ին Նազըմ Բաշա ոստ. մն. դեսպանատունէն կը պահանջէ Վահրամի Օսմանեան հպատակ ըլլալը , գաղտնի հրատարակութեանց տարածիչն ըլլալու ծանր ամբաստանութեան տակ : Նոյն տարին Պելկատիներին կը փախչի մայրաքաղաքէն , պաշտօնապէս փնտռուած ըլլալու համար , և յաջորդ տարին Չերազի L'Arménie ի մէջ **Պանդուխտի** ստորագրութեամբ հրատարակութեան կու տայ Բրօֆ. Տքթ. Վամպէրիի և նշ. Լորդի մը հետ ըրած տեսակցութիւնը : Վառնայէն կ'անցնի Թէօրէնճէ ուր կը կազմէ թատերասիրաց խումբ մը Դուռ Դարուցի փախստականներէ և Դուրեանի ու Պէշիկթաշլեանի թատերգութիւնները ներկայացնելով կը պտտի Ռումանիոյ քանի մը քաղաքները : Հայ գաղութին մէկ մասը ատոնք չհաւնելուն՝ կը գրէ «Արամ» դրաման զոր կը ներկայացնէ Ռումանիոյ և Աւստրիոյ-Հունգարիոյ հայաբնակ քաղաքները : 93 ին Պոլիս կը դառնայ ուր կը բանտուի 101 օր , և իր դեսպանատան միջամտութեամբ ազատ կը թողուի՝ Թուրքիայէ դուրս ելլելու պայմանով , բայց նկատի առնելով իր զբաղած վաճառման գործունէութիւնները՝ օրուան պատրիարքին ու դեսպանին միջնորդութեամբ Վահրամ կը մնայ մայրաքաղաքս , ազգ. գործերու չխառնուելու պայմանաւ : — 1883 էն է որ կ'սկսի դասագիրքերու պատրաստութեան և հրատարակութեան . — **Հայրիկ Բուրաստան , Սիրուն գրօսարան , Ոսկեփնջիկ ,** Մարգարիտներ մանկապարտէզի-ծաղկոցի տղոց , Գեղեցիկ գրօսարան (տասնեակով տղոց) , Մանկավարժական քերականութիւն , Գոհար մատենիկ , Արծաթ մատենիկ , Իրազննութեան դասեր , Նկարազարդ Էրմէնի Էլիֆպէսի (թուրք ուսանողաց հայերէն ուսուցման դասագիրքը) , Դասեր ազգ. պատմութեան , Կրօնի ուսում , Աշխարհագրութիւն , Ապարանջան (աղջիկներու ընթերցարան) և իր զաւկին նուիրուած քերական մը «Ա. Բ. Գ. Յարութին Մարգարեանի» անուն : Ասոնցմէ զատ իր ծախքով հրատարակած է ուրիշներու զանազան դասագիրքերը որոնցմէ յիշենք «Մայրերաչափը մերոսը» : 1900 ին կ'անուանուի՝ հանգստութեան ազատելու համար : — 1910 ի ամբան հրատարակած է **Նոր Բեմ** պարբերականը (5 թիւ) , զոր ընդհատած է Եգիպտոս ուղևորութեանն առթիւ . Իսկ 1879 ին խնամօք խմբած և վիմագիր լոյս ընծայած է 50 ից. ազգայիններու մեծագին խմբանկարը , կորուստէ փրկելով շատ մը ազգ. յայտնի գործիչներ : — 1879 - 91 ին իր տպարանը դրոշմուած են . — Բառարան յատուկ անուանց (Ն. Ճիվանեանի) ի յիշատակ իր հօր , Նուէր Կաղանդի , Աւետարան , Թօշնեալ ծաղիկ , Պարտաճանաչութիւն , Դիւանակ 1911 տարւոյ , ևայլն :

114. **Օգսէն Բօճաարեան** . — Հայր՝ ազգ. երեսփոխան և ուսուցիչ Հայկ Բօճաարեանի : Ծնած է 1833 ին Սամաթիա և մեռած 21 Ապրիլ 1878 ին : — Ան. Փափազեանի ժամանակակից և անոր պէս վառվռուն ու խիզախ այս հրապարակագիր-երեսփոխանին կեանքն ուսումնասիրել զուր ըլլալով մեր նպատակէն՝ կը բաւականանանք համառօտակի յիշելով միայն իր տպարանական կարճատև գործունէութիւնը՝ Եասթըճեան խանի մէջ , ուր բաւական ատեն հրատարակած է իր **Օրագիրը** , նաև 1873 ին «Բացատրութիւն հրաւիրագրի ազգ. քաղ. ժողովոյ» գրքոյկը : — Օգսէն խմբագրած է զարձեալ **Նոր Դար** թերթը : — Իր մասին տե՛ս նաև 122 բաժանմամբ՝ **Միհրան Սարրեան** :

115. **Ս. Ղ. Մարտիզպանեան.** — Սամուել կամ Սամիկ ծնած է Գում-Գափու 1851ին: Ինք, Կ. Ա. Պարոնեան և Կ. Պիպերեան — որոնք սերտ գործակցութեան յառաջացած էին, — կը հիմնեն տպարան մը 1873ին Ս. Ղ. ՄԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ. անուամբ, Եսուտիեան խան, վերի յարկ, թիւ 12: Քանի մը տարի վերջ ընկերներէն բաժնուելով՝ Սամիկ առանձին կը վարէ գործը: 33 տարիէ ի վեր նոյն տեղէն Բիզա Բաշա խան փոխադրուած է ուր կը մնայ ցարդ: Տպած է «Հայրենիք», «Մասիս», «Խիկար», «Փունջ» և Հմայեակ Ա.ի «Լոյս» հանդէսները: Հակառակ 39 տարուան տպարանատէր ըլլալուն, համեմատաբար խիստ քիչ թիւով գիրքեր լոյս ընծայուած է, որոնցմէ յիշենք Ա. Տրդատի «Ամուսնութեան առողջապահութիւնը», Միացեալի «Մայրենի լեզուները», «Սաղմոս», «Աւետարան», «Գաղտնիք երջանկութեան» (տպած Ա. գիրքը 1873ին), «Սիրաք և Սամուէլ», «Տնական բժիշկ», «Ինքնօգնութիւն», «Աշխ. քերականութիւն», «Մեծապատիւ մուրացկաններ» ու խել մը դասագիրքեր: Երկար տարիներ սիկառի թուղթի և քառորդ դարէ ի վեր ալ պատի բազմալեզուեան օրացոյցի պատրաստութեամբ զբաղած է: Գ. Զարդարեան երբ պատի օրացոյցը հանեց, հազր 6-7 դրշ.ի կը ծախուէր ձեռքէ, իսկ մեծադրամակ՝ 5 ի. մինչ այսօր 1 դրշ. է միայն: Զարդարեանէ անմիջապէս վերջ Մարտիզպանեան սկսաւ նոյն գործը: Անգամ մը գաղափարն ունեցած է ստուարաթուղթին վրայ ներկայացունելու զանազան ազգութեանց պատկանող ջոջ անձնաւորութեանց գունաւոր պատկերներն, ինչպէս Հայերէ՝ Սանասարեանց, Հրէաներէ՝ Հիրշ, և սակայն չէ կրցած զայն իրագործել հանել, կառավարութեան խստութեան հետեւանօք:


Ս. Ղ. ՄԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

116. **Ս(իմէօն) Միքայէլեան.** — Թիւլեան Միսաք Բաշայի ճամ, Թրքահայ յայտնի մաթեմատիկոս որ երկար տարիներ պաշտօնավարած է Պոլսոյ ազգային վարժարաններուն մէջ, հեղինակած երկհատոր թուաբանութիւն մը, (նոյնին համառօտն ալ,) և որ մեռած է 1878ին՝ յառաջացած տարիքի մէջ: — Հասրէօյ, Ա. Ն. Ճամճազարեան վարժարանի աշակերտն էր, միեւնոյն ատեն վարիչը նոյն տպարանին՝ զոր ապա իրացուց իր պահանջքին փոխարէն և զոր փոխադրեց Մեծ Նոր խան, վերի յարկ «դուռանէջ» թիւ 10, ուր տպեց. — **Ճիլլէր** (1874), **Եվլյոմ Թէլ, Լուծումն** պատասխանոյ Ակնայ Բողոքականաց (Յ. Վ. Փափազեան), **Համանագրութիւն** կենդանական ընդհանուր ազգ (1875), Ըմպարձակ թուաբանութիւն տեսական և գործնական (Ա. հատոր, 1878, իր երկասիրութիւնը), ևն., նաև պատրիարքարանի գործեր: — Իր մահէն վերջ, տպարանը ծախած են Միքայէլ Սարըեանի:


Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

☞ Էջ 84, Խրիմեան Հ.ի Վարագայ վանքը տպած գիրքերէն մոռցած էինք յիշել **Գաղթականութիւն ի Վասպուրականէ Սենեքերիմայ արքայի (1860)**:

117. **Եղիա Մ. Տնտեսեան.** — Ծնած է 29 Մարտ 1834ին Օրթագիւղ՝ ուր սնուցած է իր մօր. կրթ.ը ու բաւական սորված եկեղ. երաժշտութիւնը: Հայրը գիւղացին մնացած էր. անկէ ծնունդ առած է իր մականունը: — 1848ին կը մտնէ Արապեանց տպարանը. 4 տարի կը պարապի հոն գրաշարութեամբ: Վերջէն, Բեաղաջըգլի արուեստը Կիւրեղ-պէրկիւնէն գերադաս համարելով կը նուիրուի ուսուցչ. ասպարէզ, չմոռնալով տպարանական բարւոք պաշտօնավարութեան վկայական մը առնել: 1861ին կը հրատարակէ իր անդրանիկ երկը. «Մանկավարժ կարդիկեաց թուղթեր մեկնութեան»: — Երբ Ազգ. Սահմանադրութիւնը հաստատուեցաւ, Պոլսահայոց մէջ գոյացան երկու հակառակորդներ. հինները կոչուեցան «Խաւարեալ», միւսն ալ «Լուսաւորեալ». վերջինք կազմեցին «Անձնուէր Ընկերութիւն»ը, նպատակ ունենալով ստամբ լուսաւորել հայ **Գաւառացիները**: Տնտեսեան այդ ընկերութիւնը կազմակերպողներուն [Յ. Մարգարեան, Ա. Խորասանճեան, Գ. Զարդարեան, Յ. Փոլաճեան ևն.] մէջ գտնուելով, 1862ին սիրայօժար կը մեկնի Կիլիկիա: Կրթական այդ միահեծան առաքելութիւնը շատ արդիւնաւոր եղած է: — Պոլիս դարձին, կ'անդամակցի երաժշտ. յանձնաժողովի մը որ պաշտօն ունէր բարեկարգել ժամերգութեանց դրութիւնը: Իւր եւրոպ. ձայնագրութեան տարածումին կուսակից, 1864ին լոյս կ'ընծայէ «Բովանդակութիւն նուագաց եղանակաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ըստ ութն ձայնից» գիրքը՝ եւրոպ. խազերով: — Երաժշտագէտի իր համբաւը հասած էր մինչեւ Ս. Երկիր, ուրկէ 1865ին հրաւէր կ'առնէ եւ ուր կը մեկնի իբր ուսուցիչ ձայնագրութեան «Ժառանգաւորաց»ի: Տարի մը Պոլիս գալով, 1867ին կրկին կ'անցնի Երուսաղէմ նոյն պաշտօնով. այդ առթիւ Ս. Յակոբեանց տպարանին վերին հսկողութիւնը կը յանձնուի իրեն. նոյն միջոցին է որ կը տպագրէ «Պատմութիւն Ս. Գրոց»ը: Յետոյ կը դառնայ Պոլիս եւ պահ մը գրավաճառութեամբ կ'զբաղի. այս պարագումը խորան կ'ըլլայ իրեն՝ տպարան մը բանալու: Առ. Տամատեանի հետ կ'աշխատի Միհրանեանի ձուլարանը. վերջէն իրենը հիմնելով՝ կը պատրաստէ բաւականաչափ հայերէն տառեր: 1872ին կ'աջողի ունենալ իր սեպհ. տպարանը [Նուրոսմանիէ խան, թիւ 17. նախ Պալճէ Գաբու, Լալա Էֆէնտի խան, թիւ 13] ուրկէ լոյս ընծայուած են մասնաւորապէս Սրուանձտեանցի գործերը՝ որոնց ձեռագիրները կ'ըսուի թէ ինք սրբագրած է: — 1873ին կ'անուանեն զինք անդամ նորակազմ երաժշտ. յանձնաժողովի: Տնտեսեան եռանդեայ աշխատութեամբ կը յօրինէ հայկական խազերով **Ճաշոց** մը՝ որ տակաւին անտիպ կը մնայ. իսկ 1874ին հրատարակ կը հանէ **Ձայնագիր Երգոցը** որ հայ երաժշտ. արուեստին մասին հնագոյն ուսումնասիրութիւն մըն է, ձեռնհասներէ գնահատուած: Եղիա այլ եւ ձեռքի վրայ է իբր ներհուն եւ հեղինակաւոր երաժշտագէտ, կրօն. ժողովին ալ փափաքելով, 1877ին կոչուելով Պատրիարքի եւ Պալատին ժամերուն դպրապետութեան պաշտօնին: Կը հրատարակէ իր մէկ երկն ալ, **Վարժութիւն ձայնաւոր մանկանց**, իսկ 1879ին **Նուագք հայկականք** պարբերականը, 1880ին **Նոր Երգարան Հայոց**. միաժամանակ վարելով Գեղարուեստից Վարժարանի ձուլարան-տպարանի տեսչական պաշտօնը: Այդ օրերուն է որ ընկերացած է տպագրիչ Արամ Աշճեանի (ԱՐԱՄ ԱՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.): — Ռուսթուրք պատերազմէն վերջ,



ԵՂԻԱ ՏՆՏԵՍԵԱՆ

խաղացած էր գրաքննութիւնը որ սկսաւ խեթիւ նայիլ գլխաւորաբար մեր ազգային երգերուն և անոնց հանրածանօթներուն. անոնց հրատարակիչներէն Յ. Գաւաֆեան և Ե. Տնտեսեան կը հետապնդուին. առաջինը կը փախչի Աթէնք, իսկ Եղիա ձերբակալուելով՝ եղեռնագործէ մը աւելի ծանր ամբաստանութեան տակ կը բանտուի 1881 ի սկիզբները: Իր անլոյս զնդանին մա-հասփիւռ ու նողկալի մթնոլորտին մէջ հազիւ 3 ամիս կրնայ ողջ մնալ, և 23 Ապրիլին կը կըն-քէ իր արդիւնաւէտ կեանքը: — Պայքարի հոգվածքը, դարաւոր յանկերգներուն տակ՝ ո՞ւր է անկոյն տապանը բոլոր ըմբոստական Գրաքննութեան այս անողորմելի նահատակին որ ողջ ի բոլին ծառայած էր հայ գրականութեան, հայ երաժշտութեան, հայ տպագրութեան և հայ ազգասիրութեան . . . : — Բանտարկութեանը միջոցին և բանտարկէն վերջն ալ կողմն ի կող կը գործէր դարձեալ իր տպարանը՝ կառավարական խստութիւններով: — Գ. Պաղտասարեան ա-նոր Մասիսը կը գնէ վերջէն, զոր՝ իր կարգին կը ծախէ Եօանէսեանի, ձեռամբ Պ. Ասարունիի որ այդ Թումաճանեան գրագիրն էր: — Իսկ Տնտեսեանի ԵՐԳԱՐԱՆները գաղտագողի վառած են իր ազգականները, «չարը խափանած ըլլալու» քաղաքականութեամբ . . . : — Եղիայի զա-ւակն է Լեւոն որ Լոյսարիա՝ իր մօրեղբօր «Թօմաս և Ընկ.» մեծ բիրալաճառատան պետն է: — Ե. Տնտեսեան տպարանէն լոյս ընծայուած են. — Գրոց-Բրոց, Հնոց-Նորոց, Թնն. Կրօնա-գիտութիւն (1874), Ո՞վ է մեղաւոր, Շուշան Շաւարշանայ (1875), Սանդուխտ կոյս, Հրաչ-եայ Արտաշեսեան, Մանանայ, Իմաստ. Կաղնու, Խաչի ձառ (1876), Թէ ի՞նչ չարեցանք Պար-սկին Վեհամաղալեն (1878), Թորոս Աղբար (1879), Ազգային ջոջեր (1880), Մատենադարան ժողովրդեան (1882) եւայլն:

118. **Պէշիկչեանք** — Պաղր Ալի, համանուն տպարանին հիմնադիրն է ԿԱՐԱ-ՊԵՏ, բնիկ Թալասցի որ 60 տարեկան մեռած է Բերա՝ 29 Դեկտ. 1910ին: Ընդհ. Օսմ. գին. և քղք. վարժարաններու վաղեմի գրավաճառ որ 35 տարիէ ի վեր նուիրուած տպագր. գործին՝ հրատարակած է անհամար աժան բրք. դասագիրքեր ևն. և հանդէսներ, (Բեխճըի Կըզլըր, Մէքթէպ, Բ. Զրա՛ար Կօզէթասը, Եէնի Կօզէթա): Ձիքանլըի ցուցահանդէսէն առնուած է ոս-կի մեդալ, ձարոնի Միքասյեն՝ Ծաղող Արեգական պատուանշանը, Սերպիոյ թագաւորէն՝ Բագօվայի Ս. աստիճան, Օսմ. կառավարութենէն՝ Մէճիտիէ և Օսմանիէ, նաև արծաթեայ շքանշան: Ունէր Ալթայի աստիճան և պատուոյ անդամ էր Նիւ Եօրքի բարեգործ. ընկ.եան: — Ասեն մը գործակցած է Գասպար Պ. Գայսէրեանի: Տաճկ. գիրքերով ու թերթերով հրապարակը ողողող այս տնձր տպած է նաեւ 2 պարբերական, Դ. Բալասի «Հանրագիտակ»ն ու Ա. Ան-տանեանի «Լոյս»ը, (վերջնոյն շարուածքը «Մանզումէ»ի կողմէ): — Իր մահէն վերջ՝ զաւակները սկսած են շարունակել նոյն գործը Կ. ՊէՇԻՉԵԱՆ ՈՐԴԻՔ անուամբ, և 15 Մայիս 1912էն սկսեալ տպագրած՝ **Վերածնունդ** պարբերաթերթը (Սամ. Ոսմկ. ուսանող. Միութեան):

119-121. **Տպարան Հայաստանեայց** — Նախապէս ՀՄԱՅԵԱԿ Ե. ԳԻ-ՄԱՔՍԵԱՆի՝ Եէնի Գափու, «պօղազ»ի մէջ գտնուող տանը մէջ էր այս տպարանը, հիմնուած 1875ին, Դիմաքսեանի կողմէ: — Ինք ծնած է 1839ին Եէնի Գափու, ուր ուսած է նախ. կրթութիւնը: 1857ին Երուսաղէմ անցնելով կ'աշակերտի ժառանգաւորացի: 69ին վարդապետ կը ձեռնադրուի, 1880ին ալ եպիսկոպոս՝ Գէորգ Դ. է: — Նոյն գործատան մէջ տպուած է **Լոյս** հանդէս: Ասոր, քաջալեր հանդիսացած է իրեն՝ Ներսէս Պատրիարք: Մինչև երիցայի իր առաջնորդ ընտրուիլը, 10 տարի շարունակած է նոյն բերքը: Տպարանը կար բազկատա-մուտ մը՝ Մինասեանէ գնուած: Հոն հրատարակուած է նաև Դիմաքսեանի «Ծիրք մանուկ Միջնեկրական»ն, «Գայլ Վ.ահան»ը, Աղօթագիրքեր, Ճառական, Տօնացոյց ևն.: Նաև Գանձարան խրատուց, Նախակրթ. քերականութիւն աշխարհիկ լեզուի (1876): — Դիմաքսեան Ս. Երկաթ առէնէ ի վեր քարոզիչն է Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցիին: Անդամակցած Կրօն. և այլ ժողովներու: ** Դիմաքսեանի յաջորդած է ԿԱՐԱՊԵՏ Ա. ՊԱՐՈՆԵԱՆ որ Պատ-

թատրոնի առաջարկութեամբ 1879 ին իր պաշտօնավարութեան տակ կը վերաբանայ համանուն տպարանը, զայն Եէնի Գարուէն փոխադրելով Պատրիարքարանի փողոցը, թիւ 11. բայց հազիւ 2 տարի շարունակելէ վերջ՝ երկրին անապատ և խիստ ձմեռ պարագաներուն տակ կ'ստիպուի փակել զայն: — Կ. Ա. Պարոնեան ծնած է 29 Փետր. 1852 ին: — Հոն իր տպած գործերը եղած են Ազգ. Ժողովոյ նոյն շրջանի ատենագրութիւնք, Պատրիարքարանի պաշտօնաթուղթեր և օրուան պատրիարքին քանի մը հովուական տեսակները, նաև «Մամուլ» շաբաթաթերթը (որուն մէջ յօդուածներ ալ գրած ունի «Դիմակ» և «Ապտակ» ծածկանուններով), Կին, Խաղ, Գինի, Բոլ ար Դօգի ծերութիւնը, Լուդովիկոս անուն բարոյավէպը, Օր. Ե. Կեսարացեանի Նամականին (1879), Հայր Աբրահամ կէ Յովսէփ Գեղեցիկին բեռպէսի են.: — 20 տարի հետէ գրաշարապետն է Մատթէոսեան տպարանի, իսկ 13 տարի հետէ օրացուցագիրը՝ Գ. Պաղտասարեանի գործին: Ա. Սագաեանի «Ծաղիկ»ին ալ աշխատած է և նոյնին խմբագրութիւնը վարած պահ մը: — Իր մասին խօսած ենք նաև Մ. Կ. Սարըեանի կենսագրութեան մէջ: —



ԺՄԱՅԵԱԿ ԴԻՄԱՔՍԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ
**վարդապետութիւնը**

** ՏԻՄՈԹԷՈՍ ԵՊՍԿ. ՍԱՓՐԻՉԵԱՆ իր պաշտօնքին փոխարէն զոած է «Հայաստանեայց» կոչուած այս տպարանը, զայն վարձու տալով ՄԻՔ. Կ. ՍԱՐԸԵԱՆի որ 1882 էն մինչև 1887 տպագրած գիրքերուն վրայ իր անունին տակ՝ փակագիծի մէջ պահած է նաև «Դիմաքսեան»ը, որովհետև 30 տարին լրացուցած չըլլալուն՝ տպարանի արտօնագիրէ զուրկ էր: Սարըեան տպած է **Հայկական եկեղեցի** (Թ. Սալախօրեանց), **Թուրանորիչ աղջիկը, Նկարագրութիւն ուղևորութեան ի հայաբնակ գաւառս** (մասն Ա., Մ. Միրախորեանի), **Խառն նամակներ**: — Սափրիչեան 29 Մայիս 1909 ին չքաւոր վախճանած է Եէնի Գարու՝ 88 տարու: 31 տարուան եպիսկոպոս, տարիներ Պալըքեսէրի առաջնորդութիւնը վարած. 1867 ին Երուսաղէմէն Հապէշիստան ուղևորած՝ Թէոդորոս թագաւորին և անգլ. կառավարութեան միջև ծագած գժտութիւնը բառնալու պաշտօնով: Հեղինակ «Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշստան» երկհատոր ուշագրաւ գիրքին՝ որ 1871 ին Երուսաղէմ տպուած է անգլ. թագուհւոյն ծախքով, և որուն ֆրանսերէնն ալ հրատարակուած է: (Ա. հատորին սկիզբը Լայբցիկ պատրաստուած **Բիւսթ** մը կայ՝ Տիմոթէոսի վարդապետութիւնը ներկայացնող, համբիչ ի ձեռին և մուշտակ վերարկուով, Գ. Սահակ Եպիսկոպոսի հետ):



ԿԱՐԱՊԵՏ Ա. ՊԱՐՈՆԵԱՆ

122. **Միքայէլ Կ. Սարըեան.** — Ծնած է Պալաթ 1859 ին: 11 տարու՝ կը մտնէ «Մասիս»ի տպարանը որուն գրաշարներն էին Տ. Տօղրամաճեան և Գրիգոր: Քանի մը ամիսէն կ'անցնի Օ. Խօճասարեանի «Օրագիր»ին տպարանը, (գրաշարապետք Կ. Պիպերեան և Կ. Պարոնեան), քիչ յետոյ Ճ. Արամեանի տպարանը. հոն կը մնայ 5 տարի, քաջավարժ գրաշար մը դառնալով: — Նոյն միջոցին Գէորգ Այվազեան Պապը Ալիի դիմաց խանութ մը վարձած՝ թերթիկի մը բաւելու չափ գիրով տաճկերէն «Մամուլ»ը կը հրատարակէր, խմբագրապետութեամբ Ռ. Քէչեանի: Սարըեան այդ թերթին գրաշարապետը կ'ըլլայ. իսկ երբ արտօնա-

տէրը թերթը կը դադրեցունէ, Սարըեան կ'առանձնէ անոր հրատարակութիւնը, Թէքեանն ու Տ. Ազատեանը խմբագիր պահելով: Ճարտար օրերը հայ լեզուաւ մէյ մէկ խմբագրական կու տար Օ. Խօճասարեան որ իր թերթը նոր դադրեցուցած էր: Այս վերջինը երբ «Նոր Դար» լրագիրին արտօնութիւնը կ'առնայ, տպագրութիւնը կը յանձնէ Սարըեանի, վասն զի Օգսէն իր տպարանը գրաւած էր: Կը փոխադրուին Եւտուքեան խան, բայց հազիւ 2 շաբաթ շարունակած՝ Օգսէն հիւանդանալով կը մեռնի: Միքայէլ այնուհետեւ կը տպէ Հ. Ալահաճեանի «Փունջ»ը, մինչեւ որ նուագուրդով իր վրայ կը մնան Պատրիարքարանի բոլոր գործերը: Այն ատեն է որ Ս. Միքայէլեանի աղոցմէն գնելով տպարանական կազմածքն ու իր ունեցածին միացունելով, Սարըեան կը փոխադրուի Մէրճան, Էօրթիճիլէր Ճամիսի, Բիւյուք Է.Ֆ. խանի ստորնայարկը: Հոն գրաշար կ'ունենայ † Յ. Զամաչըճեան, Տ. Մամուլեան, Յր. Քրիստափորեան (Ռուսիա), † Տիրան Փափազեան, Գրիգոր Պէյլէրճեան («Մուրճ»ի գրաշարապետ), Հարէօյցի † Գաբրիէլ, Թ. Սանճագճեան, Միհրան Քիրազճեան (այժմ Բալաթարի տպարանը), † Խորէն Տիգրան, և կ'աջողի քիչ ատենէն ատարուլ դիզուած ատենագրութիւններ: Կը շարունակէ տպել «Փունջ»ը, Յ. Պարոնեանի «Թատրոն»ն ու բազմաթիւ հայ. և տճկ. գիրքեր: — Իբր տպագրական կանոնի հնազանդ անձ, չի ենք իր կեանքէն դրուագ մը միայն: Փատարան Ճաճապցի տանկրնդրու առթիւ կիրակի օր մը շրջաբերականներ պիտի կարդացուէին ժամերու մէջ՝ այդ հաստատութեան բանալոյ: Նախօրօք լաւ ըլլալով նոյն թուղթին տպագրութեան յանձնուիլը, Սարըեանի կը դիմէ Արք. Այվազեան և 50 ոսկի կ'առաջարկէ՝ ձեռագիրն ունենալու համար. բայց տպագրիչը չփոխուիլ կը ձեւացունէ և կը ճամբէ զայն: — Յ. Պալաթեանի գործատան մէջ պահ մը իր հաշուոյն կ'աշխատէր Կ. Ս. Պարոնեան՝ բարոնի ազդեր տպելով. յետոյ երբ «Հայաստանեայց»ը կ'առանձնէ և Գում Գաբու կը հաստատուի, ինք և Սարըեան գործի փոխանակութիւն մը կ'ընեն. ազդերը կը յանձնուին վերջնոյն, իսկ Պատրիարքարանի գործերն ալ Պարոնեանի: Բաւական ատեն յետոյ ատոնք իրենց տպարանները կը միացունեն ու կը փոխադրուին Մէրճան. վերջէն Պարոնեան կը կոչուի Ուզունեան տպարանի գրաշարապետութեան, հօրս որբմն Մատթէոսեան, որ կը մնայ ցարդ: — Սարըեան մինչեւ իր 30 տարին լրացունելը՝ տպած իր գիրքերուն վրայ կը գործածէ **Գիմաճեան** անունն ալ և վարձու կ'առնէ Տիգ. Սախրիճեան Ս.ի արագատիպ մեքենան: Իր վարչութեան տակ հրատարակուած է Մ. Մելիքեանի «Հայրենիք» թերթը՝ խմբագրապետութեամբ Ա. Արփիարի և աշխատակցութեամբ Նշ. Վալադեանի, Լ. Եազմաճեանի և Բ. Լիմոնճեանի. սակայն տպագր. գործերով կարի ծանրաբեռն՝ քանի մը ամիսէն կը դադրեցունէ զայն որ այնուհետեւ կ'անցնի վերջնոյն Յ. Ճանճապարի: — Սարըեան յետոյ հաստատուած է Պապը Ալի՝ Յ. Աստուրեանի վերնայարկը: Դէպքին տարին, երբ Գ. Պաղտասարեան կը զրկուի տպարան բանեցունելու իրաւունքէ, կը դիմէ Սարըեանի, անոր արտօնագիրով՝ իրենը կարենալ շարունակելու համար: Կառավարութիւնը շուտով հոտ կ'ըլլայ այս խաղարկութեան ու կ'սկսի միշտ նեղել Սարըեանը որ վերջ ի վերջոյ կ'առնպուի գործը փոխանցել Վահան Վ. Տէր Մինասեանի և ինք դառնալ նախկին տեղը, պարապելով միայն բարոնի ազդերով. այս գործն ալ կը յափշտակէ ձեռքէն ախոյանչակ Պապա Թահիր, դերասանապետու ամէն աջակցութիւնք ընելով: Այդ դժբախտ շրջանին է որ Սարըեան կ'ընկերանայ ԳԱԼՈՒՍՏ ԳԱՅԸՔՃԵԱՆի որուն հետ նոր տպարան մը կը հիմնէ Պապը Ալի ճամբէջի, թիւ 38, (Մ. ՍԱՐԸԵԱՆ ԵՒ ԸՆԿ.), 2 տարի Գայըքճեանի հետ, տարի մըն ալ առանձին՝ հրատարակելով բաւական դասագիրքեր Ս. Գաբրեանի և այլոց, Վ. Փափազեանի (Լիլա) զաւեշտաբերերն, Ալահաճեանի «Փունջ»ը, Սրոփ խաղեր (1902), մինչեւ վերջնական փակումն իր տպարանին, գործերու ձախորդ գնացքով: — Այժմ կ'աշխատի Աստուրեան տպարանի մէջ:



Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ

123. **Արամ Մ. Աշճեան**. — Ծնած է Կեսարիկ Թալաս 1855ին: Իր քոյրն է համբաւաւոր ձեռագէտ-կարուհի **Սուրբիկ Մասմաջեան** որ շատ մը աշակերտուհիներ հասցուցած է եւ որ սանտօք գաղափարը յղացած է «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան»: — Արամ 1878ին տպարան մը բացած է Սիմաւոնեանի խանի գետնայարկը, թիւ 35, նաեւ Եուսուֆեան խանի միջնայարկը, թիւ 15, սանն մըն ալ ընկերանալով [Ա. ԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ] Ե. Տնտեսեանի, երբ վերջինս պաշտօնի անցաւ Գեղարուեստից վարժարանի: — Հրատարակած Միքայել Կարոյեանի **Դեղ եւ դարմանք երեւնից ցաւոց Հայկայ եւ Արամայ ազգին ներքոյ** գիրքը տպագրելուն համեմատ կը դատապարտուի բանտի, նաեւ տպարանի փակման: Գեղջին կ'արտաքսուի մեկնիլ վանէն, յետոյ Ռումանիա՝ ուր գերծ չը մնար դարձեալ Համիտեան հալածանքներէն: Սահմանադրութեան հռչակումին Պոլիս կու գայ եւ կը մեռնի Գատըգիւղ 1909ին: — Իր տպարանէն լոյս ընծայուած են. — Ազգ. Վերակազմութիւն, Նոր կեանք (Եղիա), Մի կարիլ արտօսր (1879), Բերկրանք ու վիշտ, Աւանդք Կարոյեանի (1881), Լապտեր Դիոգինեան (1883ին սկսուած իր թերթը՝ կրկնակի նախապարտութեան հրամանաւ գալ-բած եւ 1888ին կրկին երեւցած քանի մը համար), Թէոդորոս Սալմէնի (188.), Յուշատետր, Պարոն Ճուպլան (1885), Բառադասութիւն (1886), Տարեցոյց Խիկարի (1888), նաեւ Ս. Պարտամեանի «Ընտանիք» հանդէս ու «Դաստիարակութեան մասին», Դպրոցական Տիկնանց Ընկ.եան 1879-82ի եւ «Ազգանուէր Հայուհեաց» 1881-83ի տեղեկագիրները:



ԱՐԱՄ ԱՇՃԵԱՆ



Տպագրիչ Յ. ՊԱՐՈՆԵԱՆի եղբայր
† ՍՈՒՔԻԱՍ ՎՐԴ.

124. **Յարութիւն Պարոնեան**. — Եղբայրը՝ Սուքիաս վրդ. Պարոնեան Մարսիլիայէն մամուլ մը կը ղրկէ իրեն, նաեւ մեծաքանակ թուղթ, զորս Յարութիւն կը մերժէ Բէրբէյի խան եւ 1877ին Սուլթան Համամ կը բանայ տպարան մը որ քանի մը տարուան կեանք կ'ունենայ: Հոն տպուած են **Խօսք Փափազեանի Սեփեանի** (1877), **Օրացոյց** (1877-8): — Յարութիւն Պարոնեան 1873ին պահ մը ընկերացած է Յովսէփ Գավաֆեանի [ՅՈՎՍԷՓ ԳԱՎԱՖԵԱՆ ԵՒ ԸՆԿ.] եւ հրատարակած 1874ի օրացոյցը:

125. **Կ(արապետ) Պր. Պիպէրեան**. — Ծնած է Գաղատիա 1842ին, հայ հռոմէական. Պզտիկուց եկած է Պոլիս եւ գրաշարութեամբ պարապած: 1873ին՝ ինք, Կ. Պարոնեան եւ Ս. Պարտիզպանեան միանալով տպարան մը կը բանան, սակայն ընկերութիւնը կը լուծուի քանի մը տարիէն. այնուհետեւ Պիպէրեան կը հաստատուի Սիմաւոնեանի խան, թիւ 18-19, գրաշելով հրատարակչի գործերով, սիկարի թուղթով, [**Ռեժի** անուամբ քարտխաւոր սիկարի թուղթն իր հնարածն է,] եւ խել մը հայատառ-տաճկերէն թարգմանածոյ վէպերու հրատարակութեամբ: 1878ին տպած է «Քրիստ. վարդապետութիւն Հայաստան.», 1894ին՝ Ծածուկ

Մեղք, Պէն սիր մակումար, 1897ին՝ Մօգաիզ (Յ. Մ. Հաճեանի, 2 հատոր), 1900ին «Լոյս» Յ. Հագարապետեանի, ևն.: — Հիմայ Բարիզ է և զաւկին հետ գլխարկագործութեամբ կ'զբաղի:

**126. Յովհ. Մանուկեան.** — Ծնած է Իզմիր 1837ին: Պատանի տարիքէն Նիւ Եօրք անցած է՝ փորագրութեան և տպագրութեան արուեստները սորվելու համար. մտած է հոն Harper Brothers տպարանը: Քիչ ատենէն իբր քաջ փորագրիչ զնահատուելով, 4 տարի վերջ վարած է նոյն տպարանը շուրջ 8 տարի, յետոյ Հարբըր Եղբօր հետ Պոլիս եկած և միջոց մը փորագրութեամբ պարապած: Դրեթէ առաջին անգամ ըլլալով Ամերիկայէն բերել տուած է արագատիպ մեքենայ մը, և նախ Աչըր էֆ. խանը, ապա Ղալաթիա՝ Էսկի Զինդանի տպագրատան տեղը (նախկին Օսմ. Դրամատունէն վեր) ունեցած է իր անկախ տպարանը, հուսկ ուրեմն Ղալաթիա, Շահտափար փողոց, թիւ 37, ուր 18 տարի անխափան գործած է, ամփոփարար վարչութեանց տպագրութիւնները և հրատարակելի գործեր: Գրաշարապետն էր Մածունեան Խաչիկ, յետոյ Վահան Տէօվլէթեան. իսկ գործառրապետ՝ այժմ Փասքալեան Տ. Վարդան քահանան է: — Մանուկեան մեռած է 25 Յունիս 1895ին: Իր միակ որդին Լևոն շարունակած է հօրը գործը, նաև 10 տարի տպարանը վարձու տուած է Imprimerie Française ի: Յետոյ գիրերը ծախու տուած են Ռ. Սարաֆեան և որդիներ: — Աչըր էֆ. խանին մէջ՝ Յ. Մանուկեանի դրոշմած Ա. հայերէն գիրքը եղած է **Բեռակին** մը (որուն յաջող պատկերները փորագրուած են իր կողմէ), նաև «Սարեանկ և Տրդատ», «Ազգ. Հայուհեաց» 1879-81 ի տեղեկագիրք, «Լէնարտէ Ս. Թէոդորոսի մարտիրոսը» ևն.:


ՅՈՎՀ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

**127. Գարեգին Պաղտասարեան.** — Ծնած է Սկիւտար 1851ին: Որդի ձեմարանի հայկական Տէր Մեսրոպ քահանայի: Հազիւ նախն. կրթ. ստացած՝ ժամագործի մը քով կ'աշակերտի 2 տարիի չափ: Իր եղբայրն է Օհան էֆ. որ իր ժամանակի գր. շարժումին մասնակցած է և որ ապա եղաւ պետ. պաշտօնեայ, Պէռլինի օսմ. դեսպանատան խորհրդական: Անոր թելադրութեամբ Գարեգին կը մտնէ Ա. Ճէվահիրճեանի «Մեր» հանդէսի տպարանը, գրաշարութեան համար որ շահաբեր զբաղում մը ճանչցուած էր այն ատեն: Ճ. Արամեան Բարիզէն նոր վերադարձած՝ հաստատուած էր Մուրր Զարշըսի կողմը, Ճամլը խան և իր նորաձոյլ ու վայելուչ տառերով մեծ յեղաշրջում ներմուծած տպագր. արուեստին մէջ: Պաղտասարեան յառաջդիմութեան բաղձացող՝ նախապատուութիւն կու տայ Արամեան գործատան: Հոն թէև նիւթապէս չօգտուիր ի սկզբան, բայց իր ճաշակը կը մարզուի և մեքենաներու մասին իր ստացած փորձառութիւններով կը հռչակուի հետզհետէ: Նոյն տպարանը կը փոխադրուի յետոյ Չաքմաքճըլար, Շէրիֆ Բաշը խան, և հուսկ ուրեմն Յակոբեան խանի վերնայարկը: Ճանիկի գիները տա-


Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ծայրայեղ կերպով սուղ էին, այդ իսկ պատճառաւ՝ շատերու անմատչելի. Գարեգին ճարպիկութիւնը կ'ունենայ յաճախորդները գիջում ընելու՝ գինը քիչ շատ հրապարակի գիներուն մօտեցունելով. Արամեան օգտուելով այս եղանակէն՝ փութի կը վարձատրէ զինք ու իր տպարանին տնօրէնութիւնը կը յանձնէ անոր, պաշտօ՛ն զոր մինչեւ տպարանատիրոջ մահը շարունակած է: 1870ական թուականներուն՝ Արամեան Մխիթարեան գործերը ստանձնելով բաւական օգտուած է, նաեւ իր հրատարակած ձոխ տարեցոյցներով եւն.: Ճանիկի մահէն վերջ, ժառանգորդները տպարանին վերատեսուչ կը կարգեն Պաղտասարեանը որ պահ մը իր տպագրած գիրքերուն ճակատին՝ փակագիծի մէջ «Արամեան» անունն ալ դրոշմած է: 1880ին կը տեսնենք զինք սեփ. տպարանի մը տէր, Սուլթան Համամ ճառուկի, թիւ 14, Զարդարեան թղթավաճառանոցի վրայ, որուն գետնայարկը կը յատկացուի իր հրատարակութեանց, իբր գրատուն: Իր նորաստատ տպարանին համար պէտք եղած եւրոպ. տառեր, զանազան զարդեր, արագատիպ մեքենաներ եւ կազմարարական գործիներ յատկապէս Եւրոպայէն բերել կու տայ, եւ Արամեան տառերն իբր 70 տեսակ ձուլել տալով գործի կ'սկսի, լոյս ընծայելով ծանօթ գրագէտներու բազմաթիւ հեղինակութիւններն ու պարբերականները. — Կրբ. խորագրոյն վրայ: Շարժմունք երկնային մարմնոց: Շրջագայութիւն: Ալալա (1880): Գիրք եւ սուր: Օրացոյց (1881էն ընդհատաբար մինչեւ վերջ): Դրական գրօսանք: Բնութիւն մէրոնի վրայ (1882): Դր. եւ խմտ. շարժում (1883-7): Երկրագունտ (1883-8): Դրագիտութիւն: Թարս աղբար: Ծաղիկ արդի հայ մատենագր. (1885): Արրս Բոնապարտէն: Մարդիկ եւ իրք: Հայ. մատենագր. (1885): Իսա: Դրամ: Ընկերային նամականի: Տնտես (1886-8): Պատմութիւն Ս. Փրկչի: Լոյս եւ ստուերք (1887): Խօսնակ: Սոխակ (1888): Աղջկանց դաստիարակութեան ձեռն. (1890): Պատկեր աշխ. գրականութեան: Նուպարեան բառգիրք (1892): Օրինագիրք առողջութեան: Անգիր դպրութիւն: Ճար հայ կենսագրութեանց (1893): Աշխ. ուսուցան: Արեւածագ (1894): Մկրեան Աղօթագիրք: Աստուածաշունչ (մեծադիր, 1895, մինչ 1892ին՝ ջոկ Հնգամատեան): Սփոփանք ռամկին: Թշուառ. ընտանիքը: Տէմիրճիպաշեան բառգիրք (1896): — Արամեանին ազնուացման ու կատարելագործման հետամուտ՝ Պաղտասարեան կը կատարէ կարեւոր գիւտ մը. կը յօրինէ մեքենայ մը փոքր չափով, 1 ժամուան մէջ միանուագ քառագոյն 20-30 հազար օրինակ դրոշմող: Սակայն իր տարապայման գրաշումներուն պատճառաւ՝ միջոց չունենալով հսկողութիւն կատարելու 1896ի Պատի Օրացոյցին տպագրութեան վրայ, կը դատապարտուի 53 օր բանտի եւ տպարան բանեցունելու իրաւունքէ զրկման: Խնդիրը կը կայանար պարզ անուշադրութեան մը վրայ որ կէտադրութեան մը սխալմունքն էր. Սուլթան Համիտի **գահակալութեան** յատուկ՝ նոյն տօնին պայմանադրական ածականն էր **մէյամին մէնու** (= բարեբաստիկ), մինչ «մէնու»ի տեղ **մէյնուս** շարուած էր որ ճիշդ հակառակ իմաստը կու տայ . . . : — Այսու հետեւ նոյն տպարանը յաջորդաբար վարած են Մ. Սարգեան եւ Վահան վրդ. Պարտիզակցի: Սահմ. հռչակումէն, Պաղտասարեան կրկին իր անուամբ կը շարունակէ իր տպարանը որ անցեալ տարի այրելուն հետեւանօք բանտարկութիւն մը կ'ունենայ իր անօրէնին՝ Յ. Ափիկեանի հետ, որոնք յետոյ ազատ կ'արձակուին: Վերստին կը հիմնէ գործատուն մը Կ. Պոլիս, Սիրքէճի, թիւ 18, իսկ այժմ Սալգըմ Սէօյիւտ, թիւ 41: Վերջին տարիներս տպագրած է՝ **Ճաշակ**, Նուպարեան **Բառգիրք** եւ զնզն. դասագիրքեր:



ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ.

## 128. Վահան Վ. Տէր Մինասեան.

Պարտիզակցի այս եկ. առակախօս-գրագէտին (1850-1909) շահեկան ինքնակենսագրութիւնը տե՛ս «Ամենուն Տարեցոյցը» 1910 տարի: — **Լոյսի** արտօնատէրը 1898էն մինչեւ 1908 իր անունով վարած է Պաղտասարեան տպարանը, ախտոր միջադէպի մը հետեւանօք որուն անդրադարձանք վերեւ: — Տպած է Սիրտ: Ճաշակ: Լոյս: Համբաւիք, եւն. եւն.:

129. **Հայ Գրաշարաց Ընկ.** — Գրաշարական միութիւն մըն էր անիկա՝ նախաձեռնութեամբ Ա. ՄԱՂԵԱՆ բաղդ. ծայուն, որ պահ մը վիմագրող Մոքսեսեան հօր հետ ալ ընկերացած է և որուն փոքրիկ տպարանը կը գտնուէր Ֆինճանճըլար, Ամերիկ. խանին վեր: Այդ տպարանը յետոյ փոխադրուած է Պասըր Ալի, մինչ Թօզլեանի արտօնագիրով: Այս ընկերութիւնը 1880-90 տպած է. — Մոլութեան մը զոհերը: Դարբնոցպանեան: Թագուհւոյն մանեակը (թարգմ. Բ. Պօզաճեան): Արքային գրօսնու: Պ. Գալըպաճեան բառարան եւն.: — Տպարան և անուն խրացուցած է յետոյ



Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

130. **Յ(արութիւն) Ասատուրեան.** — Ծնած է Կեսարիա 185· ին: **Հայ գրաշարաց ընկերութեան** (Շիրքէթի մուրէթթիպին) յաջորդ: Այդ ընկերութեան անունը բաւական ատեն գործելէ վերջ, կը կանչուի կառավարութեան կողմէ որ կ'ազդարարէ իրեն. «Պունտան պէօյլէ **Շիրքէթ** նամը գալգաճագ». բան մը որուն կը բաղձար արդէն: Այնուհետեւ իր անունը պահած է միայն՝ դրոշմած իր գիրքերուն ու թերթերուն վրայ, որոնք են (1894-1912). — Բարոյագիտութիւն: Նիւթ: Համրագիտակ: Տարեցոյց «Լոյս»: Պէշիկթաշլեանի բանաստեղծութիւնք: Թուրան: Մուրճ (օրաթերթ) եւն. եւն.: — Սահմանադրութեան հռչակումէն վերջ՝ այս տպարանին անունը վերածուած է Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ:

131. **Սերվիչէն** (**Զաբրեան**). — Ծնած է Եէնի Գաբու 1862 ին: Նախապէս փորագրիչ էր: Տպարանը բացած է 1880 ին՝ Բաբըմ Բաշը խան, զոր յաջորդաբար տեղափոխած է Ֆնտըգլեան խան, Խասէքի Համամ փողոց, Սուլթան Համամ, ուրեմն Հօճա խան ճառուէխ՝ իր սեփական շէնքին մէջ, վիմագրութեան ճիւղով: Երկար ատեն պարապած է կառավարական և պաշտօնական գործերու բազմալեզուեան տպագրութեամբ: Իր քով պաշտօնավարած է Արամ Կ. Սրվաճեան, որ ծանօթ է իբր փորագրիչ ու գրաշարապետ, հուսկ ապա՝ տնօրէն: Ներկայիս մէջ գրաշարապետն է Կարապետ Տէմիրճեան: Հետեւեալը փունջ մըն է նոյն տպարանէն լոյս ընծայուած գիրքերէն. — Բնար Սիրազան (1889): Մայրենի լեզու: Քերականութիւն (1891-3): Իրական կեանքի նուագներ: Գեղեցիկ գրուածք (1892): Կոնդակ օրհնութեան: Մինրան Արփկեան բառարան (1893): Նոր դրութիւն գրավարժութեան (1894): Նոր գեղագրութիւն (1909): **Օրացոյց** (1893 էն սկսեալ՝ մինչեւ վերջ, պզտիկ ընդհատումներով), նաեւ պատի օրացոյցներ, իբր մրցակցութիւն Ս. Գ. Պարտիզպանեանի նոյն հրատարակութեան:



ՍԵՐՎԻՉԷՆ

132. **Տիգրան Ճիվէլէկեան.** — Հայ-Հռոմէական: Ծնած է Կեսարացի ծնողքէ 1852 ին Պոլիս: Մեռած 14 Փետրվար 1907 ին Բերա: Աշակերտած է Բերայի Վ.իեննաց-

ւոյ վարժարանի : Լրագրական կեանքի մէջ իր մուտքն ըրած է Անտոն Սագալեանի «Միմոսով», յետոյ վարչութիւնը ստանձնած է ԹԷՐՃԻՄԱՆԻ ԷՖՔԵԱՐԻ. [սոյն թերթին տպարանէն լոյս ընծայուած գիրքերէն յիշենք **Հին եւ Նոր տօմարաց** վրայ, 1882 : Տպարանին գրաշարապետն էր † Թէֆիկի Յակոբ] : — Արտօնատէր՝ 1885 ին սկսող **Ճէրիտէի Շարգիյէի** (զոր մահէն վերջ զաւակը կը շարունակէ ցարդ) և **Սուրհանդակ** ազգաթերթի, 1899 ին սկսած և 1 Դեկտեմբեր 1908 ին դադրած : «Ճէրիտէի Շարգիյէ»ի գրաշարապետ եղած են Բիւզանդ Փափազեան, Արտաշէս Շիշմանեան են. : — 1881 էն սկսեալ՝ Ճիվէլէկեան տպարանէն լոյս ընծայուած են. — Լեւոն Ժ. Գ. : Հաւատք, Յոյս, Սէր : Ներկարարք : Երկրագործն : Մանրավէպք : Սիլուան : Աղջիկ մը սիրար (Սիպիլ) : Ընտանեկան բանգարան : Արուեստ ճարտարութեան : Վեց ու կէս օրուան ժառանգ մնացած որբուհի : Գաղտնիք բնութեան : Մասիս (Մ. Շահտանեան) : Ընտ. գաղտնիքներ : Վարդապետութիւն ԺԲ. առաքելոց, են., են. : Առնցմէ զատ, իր թերթին մէջ հրատարակուած թերթօն-վէպեր առանձնակի, Անտոն Ալիքի և Տիգրան Աղամեանի թարգմանութեամբ :


Տ. ՃԻՎԵԼԵԿԵԱՆ

133. **Յ(օսէփ) Յակոբեան** — ծնած է Արմաշ 1854 ին : Պոլիս գալուն նախապէս ջրդաղածութեան ըրած, յետոյ բացած է տպարան մը Թարագճըլար փողոց, Սասրճը խան, թիւ 3, 5 և 1882-91՝ տպած է մեծամասնութեամբ դասագիրքեր որոնց շատին վրայ բաւական շինելու սովորութիւն ունէր, թերեւս զանոնք միշտ բարձ քշելու նպատակաւ : Այնուհետեւ տպարանը ծախելով Յ. Մատթէոսեանի՝ պարապած է ցորենի վաճառականութեամբ. տակէ վնաս ընելով վերստին մը բացած է Պէյօղլ : Կարուածային մեռած է Գանոնիլլի 1894 ին : — Յ. Աշճեան գնած է իր տպագրած բոլոր գիրքերը որոնք են. — Նոր համակատի (Ս. Յէլէկեանի), Թուականութիւն, Գղ. հայ. թարգման-ճեզարան, Համառօտ աշխարհագրութիւն, Պատմութիւն Ս. Գրոց, Տարերք թարգմանութեան, Հաւաքածոյ (Մ. Գարաճեանի), Բառարան բրք. հայ., Երգարան, Աւետարան, Փոխասաց, Պարտէզ ծաղկոց :

134-136. **Պէրպէրեանք** — ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ ծնած է Պոլիս 1842 ին : Աշակերտած է տպագրիչ Պետրոս Ճէզվէճեանի քով որուն հիւանդութեան օրերուն՝ տպարանին պատօնագիրը փոխանցելով իր անուան, 1882 էն սկսեալ անկախ գործած է մինչեւ իր մահը (8 Յունվար 1907, Բերա) : — Իր անուանը գործը սկսած մէջ 1882-8 **Բուրաստան մանկանց**, Պօղոսեանց ամբողջական պարբերականը զոր բաւական տարի շարունակեց՝ խմբագրութեամբ Մ. Մօզեանի : Միժամանակ վարպետ փորագրիչ մը ըլլալով, ինք պատրաստած է «Բուրաստան»ի բոլոր պատկերները : Տ. Զրաքեան Նշանի մահուանն առթիւ «Բիւզանդիոն»ի մէջ գրքրած է գեղեցկական յիշատակներ, արժանաւորապէս գնահատելով մեծանուն տպարանատէրը : — Պէրպէրեան սերտ բարեկամն էր Յ. Յ. Պարոնեանի որուն անէն գործութիւն ցոյց տուած է **Խիկարի** հրատարակութեամբ տարիներուն : — «Բուրաստան»էն վերջ, լոյս ընծայած իր գործը եղած է **Ժողովրդական Տարեցոյցները** (1894-1908) որոնք այնքան շքեղ էին և գրաւիչ՝ նկարներուն տարիներուն: —


ՆՇ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Իր տպարանը նախ կը գտնուէր Էսկի Զապթիէ. տարիներ վերջ հոնկէ Իսմամ խան փոխադրուելու՝ իր Զարեհ զաւակին ընկերացուց գործին (Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ) : — Բեղուն գործունէութեան մը ցոյց տալով այս տպարանէն լոյս ընծայուած են. — Միրանոյշ (1884), Հնդեւրոպական նախալեզու (Տէրվիշեան) 1885, Գիտական շարժում (Ն. Տաղաւարեանի ամսաթերթը) 1885-7, Թշուառներ (Վ. Հիւկօ, Ե. տիպ, պատկ. 7 հատոր, կառավարական արգելքով վերջին 3 հատորները չեն ելած) 1885-9, Գիւղացուց աշխատութեան (թրգմ. Կ. Գարակիւլեան) 1886, 25 ամեայ յոբ. գործ. Ադամեանի. Տաղաչափութիւնք, Մ. Արիկեան բառարան, Կրթարան (5 բն., Յ. Գուրգէնի), Յուզման ժամեր (Յ. Սէթեան) 1888, Մեծկլէ (Ա. հատոր), Առաջին Մրմունջք (1889), Հովուական աղօթագրութիւն, Վէրքեր (1892), Բիւրակն (Բրոֆ. Ճէճիզեան) 1898-1900, Գամէլիազարդ տիկին, Առաջնորդ փառատաւանաց (1900), Համրագիտակ եւ Առաջն. վճռականաց (1903), Բիւրակն (առանձ. հատոր 1906-8) են. են. : ** Հօրը մահուէն վերջ ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ տպած է Առեւտուր (Ս. Չէօմլէքճեանի) 1908, Բուրգերէն, Աւարայրի արծիւ, Խենթերուն բժիշկը, Ուսուցանելու մեթոդը, Մրճում (1909) են. : — Զարեհ այնուհետեւ իր տպարանով միասին անցած է Եգիպտոս: — Պիտի հանդիպինք իրեն Գահիրէի մէջ:

137. Տպ. «Արեւելք»ի. — Այս օրաթերթին անդրանիկ արտօնատէրը եղած է ՍՏԵՓԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ : Ծնած է 25 Հոկտ. 1853ին Էյուպ: Իր մանկութիւնն անցուցած է Օրթագէօյ, յաճախելով Ս. Թարգմանչաց վարժարանը՝ մինչեւ 1865. Սերեանց, Արփիարեանց, Գուրգէնի եւն. ժամանակակից: Կայս. «Լիսէ»ի բացուած օրն իսկ (1 Օգոստ. 1868) գիշերօթիկ կը մտնէ հոն, ծանօթութիւն հաստատելով Յ. Պօյաճեանի, Յ. Եսսուճեանի, Յր. Ասլանեանի, Եր. Թնկրեանի, Մանուկեանց, Յ. Թորոսեանի եւ Կ. Սրվանձտեանի հետ, միասնաբար կազմելով Միացեալ 4 ընկերաց ամենուհին՝ Դպրոցասիրաց՝ 1 Մայիս 1870ին, որ ապա միանալով Արեւելեանի, Արարատեանի եւ Կիլիկեանի՝ այնքան մեծ դեր կատարած է : — 1873ին շրջանաւարտ ըլլալով կը հետեւի ճարտարագիտութեան եւ վկայական կ'առնայ 1877ին, (զոր չանագործած է սակայն 1906էն յետոյ, Եգիպտոս գաղթելուն) : — «Դրականութիւնը հաճելի է ինծ, — կը գրէ մեզ Հելիոպոլիսէն 13 Մյս. 1912 ամսաթիւով, — փորձեցի ամէն ճիւղերը. առեւ ձախող եղաւ արդիւնքը. ուսանողի մը համար 4 ամիս բանտարկուած եմ: 2000 տողի մօտ տաղաչափական նմանօրինակ փորձերս քովս անտիպ կը մնան դեռ.» : — Դրաձուլիչներու խմբումին մէջ (88-101 բաժանմունք) խօսած ըլլալով իր մասին, անցնինք **Արեւելքի** իր արտօնատիրութեան: Ե. Տնտեսեանի հետ, 1876էն սկսեալ՝ երկցս ձեռնամուխ կ'ըլլայ նոր անունով օրաթերթի մը հրատարակութեան. արտօնութիւնը միշտ կը մերժուի. 1883ի վերջերը միայն կ'աջողի առնալ զայն եւ կը ձեռնարկէ «Արեւելք»ի հրատարակութեան՝ 2 Յնվր. 1884էն սկսեալ 13 տարի անխափան, խմբագրապետութեամբ Ե. Թէջեանի եւ Տ. Արփիարեանի : 1896ին (աղէտալի տարին) ազդարարութիւն կ'առնայ թէ իր լրագիրը ջնջուած է, կը քաշուի ազգ. կեանքէ ու կ'անցնի Եգիպտոս, Գահիրէի մէջ ցայսօր ճարտարագիտութեամբ պարապելով : — Գալաթիա, Նորատունկեան խանի իր տպարանէն (որուն պաշ մը «Մասիս» ալ միացած է,) «Արեւելք»էն զատ լոյս ընծայուած են հետեւեալ գիրքերը. — Մանր ուսմունք քրիստ. հաւատոյ (1884), Չիկ-Չակ (1885), Անհետացած սերունդ մը, Թէոէզ, Արաքսիա, Բարեկամ մանկանց (1887), Սփոփանք





ԶԱՐԵՀ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

ռամկին, Վարժապետին աղջիկը (1888), Յիմարը (1889) ևն. : — «Արևելք»ի գրաշարարներէն եղած են Թոփալ Կարապետ և Արտաշէս Տէրմաննեան : ** ՁԱՐԵՀ ԵՍԻՍԻՅԵԱՆ (եղբայր գրագէտին Երուանդի) համանուն թերթին բանաստեղծական մին ըլլալով՝ կը գնէ զայն, ստորագրելին հետ միասին : Թերթը մասնաւորապէս մը հետեւանօք խափանուած էր. 1 Յուլիս 1898 ին հազիւ կարելի կ'ըլլայ վերջացնել զայն : — Եւստաթեան ծնած է Օրթագիւղ 1870 ին : Նախն. կրթ. ստացած Ծաղկագարեան, յետոյ հետեւած Իրաւագիտական վարժարանի դասընթացքին : 17 տարեկանին խմբագիր Phare du Bosphoreի, ապա խմբագրապետ : Վերջէն, Կ. Պոլսոյ Աւստրիական Անձակի անօրէն կարգուելով՝ անկարելի կ'ըլլայ շարունակել «Արևելք»ը որ 1 Նոյեմ. 1906 ին վերջնապէս կը փոխանցուի Գարեգին Պօյաճեանի : Եւստաթեան Աւստրիական Անձակի տպարանին վարիչը, համանուն թերթին պատասխանատու-անօրէնն ու խմբագրապետն է հիմայ : ** ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ ծնած է Այնթապ 1878 ին և յաճախած քաղքին Ներսէսեան, Վարդանեան և Արևմտեան վարժարանները : Իզմիր անցնելով՝ պաշտօնավարած Պալեօլեան վաճառատան մէջ, քանի մը տարի ալ Գաղատիոյ ծխախոտի վարչութեան, իբր քննիչ, մինչև իր անուան փոխանցումն «Արևելք»ի, որուն խմբագրապետ եղած են յաջորդաբար՝ Տրդ. Յ. Թոփճեան, Երուանդ Սրմաքէշխանլեան և Ե. Օտեան : Իր օրով տպարանը Նորատունկեան խանէն փոխադրուած է Վլաքթա՝ Աւստր. Նամակատան դիմաց : — Գրաշարապետ՝ Նշան Գօմխօնճեան : — «Արևելք» վերջերս հրատարակած է «Լուսին», «Պայքար» և «Ձեզոք» անուններով ալ, իր կարճատև դադարմանց միջոցին:



ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ

138. **Յովհ. Թօլայեան** . — Ծնած է Բերա 1856 ին՝ հայ-հռոմէական ծնողքէ : Նախն. կրթ. ստացած ծննդավայրին Մխիթարեանց վարժարանը, յետոյ մ[illegible]ած Վենետիկ (Մ. Ռափայէլեան). դարձին՝ քանի մը տարի յաճախած Կոյս. Լիսէ : Երիտասարդ տարիքէն հետեւելով լրագրական ասպարէզ՝ 7 տարի խմբագիր եղած է Կ. Փանոսեանի «Մանզումէ»ի, ապա «Մէճմուայի հավատիս»ի : 1888 ին բանտուած է Եգիպտ. քօլէրայի խոզերուն առթիւ «Երկրին մէջ անտանր միայն արդարութիւն կայ» յօդուածին համար զոր անստորագիր գրած էր Գրիգոր Վրդ. Էնֆիէճեան նոյն թերթին մէջ : Թօլայեան թերթն չէ տուած յօդուածագիրը ու իր կարգին պաշտպանած է զինք դատարանի առջև և փրկած աքսորէ : Բանտարկութեանը 70րդ օրը (զաւակը Երուանդ նոյն օրը ծնած է,) պատասխանատու արձակուելով՝ շարունակած է «Մ. հավատիս»ը որ տարիէ մը դադրելով եղած է ՄԷՃՄՈՒԱՅԻ ԱԽՊԱՐ 25 Յունիս 1884 ին : Այս թերթին տպարանը որ Էնֆիէճեան Վարդապետի սեփականութիւնն էր՝ կը գտնուէր Բերա, Շիշլի փողոց, թիւ 5. վարիչն էր Պ. Քիրիշճեան, իսկ թերթին նիւթական հոգը տանձնած էր Հասունեան պայքարին մէջ մեծ դեր խաղացող միևնոյն վարդապետը որ բուռն anti մըն էր, վախճանած 1884 ին՝ 50 տարու : Մահէն առաջ իր տպարանը փոխանցած է Յ. Թօլայեանի որ 28 տարիէ ի վեր անընդմիջաբար կը շարունակէ, բաց ի թերթէն՝ տպագրելով Հ. Կաթողիկէ պատրիարքարանի բոլոր գործերը, աղօթագիրքեր, իր բազմաթիւ թատերակներ վէպեր, Ծաղիկ արդի հայ մատենագրութեան (1885), Պատմութիւն Արմենիոյ (1885), Սուքիասանց Բօշից պատմութիւն (1889), վերջին տարիներս, գանկին **Լուկաս** եղիծա-



Յ. ԹՕԼԱՅԵԱՆ

բերքը եւայլն : — Իբր վաղեմի արտօնատէր եւ կարող հրապարակագիր, Յ. Թօփալեան արգասաւորով գրիչ մը ունեցած է եւ զայն շարժած է միշտ ազգ. շահեր պաշտպանելու համար : Վերջին օրերուն, Թէրզեան Կ. Պատր.ի հակասահմանադրական ընթացքին դէմ բողոք բարձած է իր թերթին մէջ եւ լոյս ընծայած՝ անջատ պրակներ, փոյթ չընելով որ Թէրզեանի կուսակիցները մէկիկ մէկիկ կ'սպառնէին դադրեցնել բաժանորդագրութիւննին, թերթերը ետ դրկելով : — Թօփալեան տարիքին 25 տարուան գրաշարապետն է Յիրանցի Ճարեան :



† ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԷՆՖԻԷՃԵԱՆ

## 139. Սահակ Նիկողոսեան. —



Ս. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ծնած է Տիարպէքիր : Պոլիս գալուն՝ պահ մը վիմագրութեամբ զբաղած է եւ 1885ին Սալըր խանի մէջ հիմնած տպարան մը՝ զոր յետոյ Ձինճանճըլար, հուն ուրեմն Սիւմպիւլի խան փոխադրած է եւ տպած Յ. Փափազեանի «Տեղագրութիւն Կ. Պոլսոյ եւ շրջակայից»ը, «Թուագիտութիւն» Դ. տարի, Տ. Փափազեանի «Հնչակ» գաւեշտախաղերը, Կ. Յ. Փայլեանի «Մարիա՝ թէ Հայկանոյշ»ը, «Պարանց հայ մամլոյ» 1889, ժող. սիկարի թուղթին կեղծը, եւն. : — Պոլսէն Եգիպտոս փախած է Դէպքին տարին, որովհետեւ յեղափոխական ըլլալուն՝ 101 տարուան դատապարտութիւն կրած էր: — 6 տարիէ ի վեր մեռած է Գահիրէ ուր կ'զբաղէր դարձեալ տպարանական գործերով :

## 140ա. Օննիկ Բարսեղեան. —

ծնած է 1859ին Կեսարիա ուր ստացած՝ իր նախն. կրթութիւնը : 13 տարեկանին՝ ընտանեօք գալով է Պոլիս եւ 2 տարի Ոսկերչաց եկեղեցւոյ դպրոցը յաճախելէ վերջ, 1874ին աշակերտած է Պ. Քիրիշճեանի՝ գրաշարութիւն սորվելու համար : Արհեստին լաւ մը կ'ընտելանայ եւ Գալաթիա, Եէրշէմէզ Բազար, Սազըր խանի մէջ կը բանայ պզտիկ տպարան մը **1888**ին՝ հրապարակի գործերով զբաղելով : Այդ տպարանը 2 տարի յետոյ կը փոխադրէ ծննդավայրը, բայց կուսակալին Աբէտին Բաշա կը հակառակի, որով Բարսեղեան կ'ամփոփէ իր գործիքներով դառնալ Պոլիս : 1892ին Թէրսանէի հրամանատար Հասան Բաշա կը հրաւիրէ զինք՝ վարելու Ծով. նախարարութեան պատկանող 175 գինուորով եւ 25 սպաներով տպարանը : **Ուստա** Բարսեղեան հոն կը պաշտօնավարէ 5 տարի՝ առանց յարգանք վայելելու իր շուրջիններէն : Դէպքին տարին հրաշքով կ'ազատի ստոյգ մահէ մը, եւ գաղթականական հոսանքին քշուելով՝ ընտանեօք կ'երթայ հաստատուիլ Վառնա ուր անմիջապէս կը հիմնէ ԱՐԵՒԵԼԵԱՆ տպարան մը, եւ **Պուլկարիոյ մէջ հայերէն առաջին գիրք տպողի** փառքն իրեն կը վիճակի : — «Արեւելեան տպարան»էն լոյս ընծայուած են. — Տիրանին Փէնեթի, Մանկավարժական երգարան, Կատակ (շաբաթաթերթ), Հագագ (ամս. թերթ), Տաւրոս (շաբաթաթերթ, 19 թիւ), Կաղանդչէք, Թորգոմուհի, Կուսակրական բառգիրք, Ծաղիկ (կիսամսեայ, 20 թիւ), Անձնապան մեռեալ, Անիծեալ պանդուխտ, Ծովկուսին աչքը, Ոստայնանկներ, Վարդի վարդեր, Վիպարերը, Կաղանդը հաւատարմութեան, Խորհրդաւոր դատ մը,

Մերժուած սէր (Երուխան), Արփիար Ճամբայ, Տասը տարի Հ. Յ. Դաշնակցութեան մէջ, ևն. : — Սահմանադրութեան հռչակումին՝ տպարանով փոխադրուած է Պոլիս և զաւկին ԳԱՐԵԳԻՆի հետ բացած տպարան մը ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ անուամբ, Ղալաթիա, Եէրշիլմէզ Բազար, Կիւլզառէ խան, թիւ 7 : Օ. Բարսեղեան այս գործը զաւկին յանձնելով՝ գրաշարութեան կոչուած է «Ազատամարտ» տպարանը : Անդամ Գրաշարաց Միջազգային Ընկերութեան : ** Գարեգին ծնած է 1888 Փետրվարին և կանուխէն ձախարակուած հօրմէն՝ գրաշարութեան մէջ ի Վառնա : Պան մը ընկերացած է Յ. Ազնաւուրի, յետոյ առանձին գործած և արտադրած հետևեալները. — Նոր երգարան, Տիգրան և Զարուհի, Սիրվարդին սէրը, Երկու անվարանները, Վէպ ու կեանք պարոնի ժառանգ մնացած անօթևն, Լը Պարպուզիէ, Այսօր, Յարութիւն (2 հատոր միայն), Նորմա, Պերպու Հալաճեան (Մ. Յակոբեանի ?), Դրոց-Բրոց, Սիրեկիոյ փախստականները, Սատուրնի Դահիր, Կարմիր գիրքը (Ռ. Սեւակի քերթուածներուն Ա. պրակը շարուած է նախ Պոլիս՝ Թուրքի մը տպարանը, որուն հետ Ե. Արմէն ընկերակցութեամբ հայ տպարան մը հիմնել ձեռնարկած էր), Տեառ Լա զզացի, Հառաչանք, Տանօրեակ, Բանաստեղծին սիրտը, Հոգիի երանգներ, Ազգայնապաշտութիւն, Մղձաւանջը, Անառօղ Յրանօ, Ճուշան Ճառարշանոց (Բ. տիպ) ևն. :



Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

141-142. **Մատթէոսեան** + — ՅԱԿՈԲ ծնած է Լոնտոն 13 Նոյ. 1833ին :

Ազատամիտ մայր մը ունէր որ Անասարանմանկան Հայոց ժողովարանը կը յաճախէր. զաւակն ալ հետևելով մօրն օրինակին՝ կանուխէն կը յարէ բողոքականութեան, և կ'աշակերտի նախ Մայր վարժարանի, ապա Մարր Համլինի դպրոցին : 1848ին Ամերիկա կը մեկնի՝ **կազմարարութիւն** սորվելու. 4 տարի կը մնայ Նիւ-Եօրք՝ այդ արհեստը կատարելագործելով և զայն ճարտարօրէն ի գործ դնելով, Պոլիս դարձին, Վէզիր խանի մէջ : — 1868ին «Ազգասէր» կ'ընտրուի. 2 տարի վերջ կը ճամբորդէ Փոքր Ասիա, հովուելով իր հօտին բոլոր եկեղեցիները : 1889ին կամովին կը հրաժարի ազգասիրութենէ : Նոյն տարին, Պայպլ Հաուզ, կազմարարութեան ճիւղին կը կցէ տպագրատուն մըն ալ, որ ուշագրաւ գործատուն մը կը հանդիսանայ : — Կը կարգուի վերատեսուչ կիրակնօրեայ դպրոցին և իր բոլորած անդամի կեանքով կը վայլէ ամէնուն յարգանքն ու համակրանքը : Աղքատական մանուան առթիւ հրատարակուած է ճշմարիտ քրիստոնէի մը վայել **Նորհուրդ հաւատացեալ**՝ իր վշտակիր հոգին ամոքելու համար : Բ. տպագրութեան արժանացած այդ գիրքն անդրանիկն է իր տպարանէն ցայդ մեծ ու փոքր լոյս ընծայուած 572 հատորներուն՝ որոնց պրակները բաշխելու ամփոփութիւնն ունէր : Ասկէ զատ, Մատթէոսեան ջանք չէ խնայած «Աւետաբեր»ը գեղանկարիչի գինով մը տպագրել



Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

տալու համար: Բայց իր ջանքերուն լաւագոյնները թափած է Բերայի Աւետ. Եկեղեցիին շինու-թեան և ձայնագրեալ **Հոգեւոր Երգեր** ին հրատարակու-թեան համար: Չկրցաւ Պատրօնը տեսնել այդ երկուքը, վր-այ հասնելով իր մահը 22 Յունիս 1906 ին: — Հայր Մատթէոսեան գլխովին ծառայած է բարիին և օգտակարին: ** ՎԱՀԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ծնած է 1871 Պոլսո. ին: Աշակերտած է Ռօպէրթ Գօլէճի: Հօրը կենդանութեանը՝ հետը գործակցարար, իսկ անոր մահէն վերջ կ'առանձնէ ընդարձակ կազմատան ու տպարանի կրկնակ գործը, «Յ. Մատթէոսեան» անունն անփոփոխ պահելով: Բազ-միցս Եւրոպա ճամբորդած է՝ տպարանական կատարելա-գործումներու համար: Իր գործատունն ունի 7 մեծ և 7 փոքր մամուլ անգլիական, գերմ. և ամերիկեան: — Ֆին-ճանճըլար Եօգուշը, Ամերիկեան խանի (թիւ 27) իրենց տպարանէն լոյս ընծայուած բազմաթիւ գիրքերէն ու թեր-թերէն յիշենք մէկ քանին. — Ընդարձակ օրացոյց Ա. Փրկչի (1900-10), Մասիս (1900-2) Տ. Արփիարեանի, Ոսկեան, Տէմիրճիպաշեան, Մինասեան, Յակոբեան, Լուսինեան և Փափազեան բանաստեղծները, զանազան ժա-մանակներու մէջ Ա. Գիրք, դասագիրք, անգլիագիր են. են.: — Գրաշարապետ՝ Կարապետ Ա. Պարոնեան:



ՎԱՀԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

143. **Սամիտոս Աւղուրլեան** + — Հայ հռոմէական: 1889 ի առեւններ՝ ծե-րունի տարիքին մէջ բացած է տպարան մը (Սայխոխէ խան) որ հազիւ տարուան մը կեանք ու-նեցած է: Առեւօր «սրմարէշ» էր, ապա սեղանաւոր: Բաց ի տպարանէն՝ ունէր թղթավաճա-ռատուն մըն ալ: Տճկ. գիրով տպագրած է 9 կտորէ բաղկացեալ գունաւոր ու գեղեցիկ այ-բուբենացոյց մը մեծադաւալ, որուն երեսէն վնասելուն՝ չըած է տպագր. ասպարէզը: Տպած է նաև «Մանկական պարտէզ» 1890 ին:

144-146. **Գայսէրեանք եւ "Մանզումէ",,** + — Կեսարացի տպագրիչ 3 եղբարց անդրանիկն է † ԳԱՍՊԱՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ որ (Պապը Ալի ճառտէսի, թիւ 25) բազմաթիւ տճկ. գիրքերէ զատ տպած է հետեւեալ հայերէնները. — Զեփայր գեղձ (1888), Նախագիտելիք Ուս. լեզուի (1889), Խօսուն Նըշոյլք, Տըր. Գոխուն թեատէսի (1890), են.: Իր նորու-թեան, Գասպարի մահացքն իր յուսանկարով երեւցած է: — Առեն մը գործակցած է նաև Կարապետ Թէշիշեանի: ** Երկրորդն է ԳՐԻԳՈՐ որ «ԱՍՐԸ» անուամբ գրատան հետ՝ 1899 ին տպարան մըն ալ ունեցած է, դարձեալ Պապը Ալի, ուրկէ լոյս ընծայուած են Դ. Բոլսաի «Համ-բագիտակ»ը, **Աշխարհաբար Նաւեկ** (1902), Դպրոցի գիրքը (1903) են.: Գրիգոր՝ Յ. Փաշազաշեանէ գնած է Ա. անգամ տպագրուած Մինասեանի անգլ. հայ. բառա-րանին տառերը: Եղբօրը՝ Յովհաննէսի տպարան ունենա-լէն քանի մը տարի վերջ քաշուած է տպագրական գոր-ծէ: ** Կրտսերնին է ՅՈՎՀԱՆՆԷՍ ՖԷՐԻՏ, 1 68 Յուն-վարին ծնած: 11 տարեկանին Պոլիս գալով՝ նախ լրագրի ցրուիչ կ'ըլլայ, ապա գրավաճառ և հրատարակիչ Զուհար, Խմբան, Խաղէր, Մուսավէր



Յ. ԳԱՅՍԵՐԵԱՆ
**"Մանզումէ,,ի այժմու տնօրէնը**

ճիւղ, Նորգա, Մուշի եւն. տակ. թերթերու, մինչեւ 11 Ապրիլ 1901՝ **Մանզումէի** (Պապը Ալի, թիւ 54) արտօնատէր դառնալը, Կարապետ Փանոսեանի իբր յաջորդ, որ նոյն թերթը սկսած էր հրատարակել 2 Փետր. 1866 ին՝ հայատառ-տաճկերէն, մինչեւ 1896 : — Յ. Պալ-եանի՝ յաջորդաբար Փասխի, Ե. Տ. Անդրէասեանի եւ Յակոբ Տ. Յակոբեանի խմբագրութեամբ ծաղկեցուցած է «Մանզումէ»ն, ամէնէն թերթին աւագին աղբարանները զբաղմունք պատճառ եղած են քանի մը հեղ աւելի գա-գարումներ **ժամանակներով** արգիլք բերանգիլ նորոգին էին Հին Թէժիմին : Այսպէս, անգամ մը **նէճամէթի** անունով շարունակեր **նէճամէթի** գոր Գրա-քննութիւն բեկանելով էր բարգմանել **նէճասէթի** ...: Յետոյ, Հայրապ Բաշեանի **Յիտարձանին** ներքեւ (նորա-գծեալ բառը սկզբնաւորն ինքն էր եղերեն...), նաեւ Գուլպէնկ Ձէվահիրճը **իէհասին** անուամբ բարեւր **բացասար** յիշատակ... : — Բայց սակէ, Յովհան-նէս, Բաշիմ եւ Ի. Պէշեան անգամ մը երկուանայ խիստ բանտարկութիւն մը կրած են, երկրորդ պաշտօնեաները մէջ ամանակ եւն. պատրաստելով Ի. Գուռ. յարձակեալ (?) ամբաստանութեամբ : — Սահմանադրութեան հռչակումէն, բոլոր հայերէնները նման «Մանզումէ» եւ անոր ծառայ կ'առնեն «Ազատական ամիսին օգնէն» մեծապ-էն սակ, մինչեւ իր անակնկալ խափանումը 27 Յուլիս 1909 ին՝ Պարզմ. Ասատնին կողմէ : Այս սարքի Մարտին կը վերադարձնի Ա. Բիւզանդի եւ Ա. Անտոնեանի յաջորդական խմբագրութեամբ : — Փանոսեանի օրով այս թերթին գրաշարական եղած է + Համբի Մանուկ, իսկ Յ. Ձէրճայի օրով՝ Յակոբ Հէքիմեան, Ազարիկ Միկայէլեան, Բիւզանդ Փափազեան, Արտ. Ճիր-մաներեան, հիմայ՝ Սամաթիացի Օննիկ : — «Մանզումէ»ի պատմութիւնը լոյս ընծայուած են «Յիշ-մատարութիւնը» Արամ Անտոնեանի, «Թշուառները» Վիքթոր Հիւկոյի, 1909 :



† Կ. ՓԱՆՈՍԵԱՆ
"Մանզումէի,, հիմնադիր տնօրէնը

147. **Անթիփա Կալլճեան**. — Ծնած է Պոլիս 1847 ին : Նախապէս ընկեր էր «Հայ Դրաշարաց» միութեան՝ որմէ բաժնուելով կը բանայ տպարան մը Էսկի Զապթիէ փո-ղոց, թիւ 63, զոր 5 տարիէն կը ծախէ ուրիշի, պաշ մը ընկերանալով Միքիճեանի : — Եաղը-ճեան հիմայ գրաշարապետն է «Սաբահ» լրագրոյ գիրքի ճիւղին : — 1889-94 իր տպածները. — Յրնո. նոր բերական, Մէճլը (Գ. եւ Ե. հատոր), Ասրիէն, Ծաղկաքաղ մանկանց, Աշ-խարհագրութիւն քերականութեան, Զուարճալի բառարանք եւն. :

148. **Յակոբ Ճ. Արամեան**. — Տպագրութեան գործնական-տպարանա-տէր ճանիկի միակ զաւակն է՝ Բարիզ ծնած 1865 ին : Նախ. կրթ. ստացած Պոլիս՝ Ներսէսեան, յետոյ Յունանեան, Պէրպէրեան ու Ռ. Դուշէ : 14 տարեկան պատանի՝ հայրը կորսնցնելով, կ'ակսի սպաս մը գրաշարութեամբ պարապիլ «Մասիս»ի տպարանը, վերջն ալ Յակոբեան խանի հօրենական աշխատանոցին մէջ՝ ուր Գ. Պաղտասարեան ընկերն էր տպելէն : Երբ շախմատա-թեան տարիքը բաւականաւ շրջանին՝ Գարեգին կ'առանձնի. պատասխանատուի դերը հանձնել կատարելութեան : Այդ պատճառաւ է որ հօրը մահէն վերջ տպագրուած գիրքեր **Տպ. Գ. Պաղտասարեան (Արամեան)** բանաձեւը կը կրեն : — Նոյն միջոցներուն, տպարանը տեղափոխած էր Միհրդատեան եւ ուրիշներու գործերը : Ասկէ եր հօր կը գնէր, ձուլարանը գործ ու-նենալու համար, վասն զի բոլոր մայր-տառերը նոյն գերդաստանին սեփականութիւն ըլլալով՝ ուրիշ տեղ չէին գտներ «Արամեան» կոչուած նորաձեւ եւ փայլուն գիրերն. (բեւ վերջէն Ռո. Տամատեան — «Արեւելք»ի երբեմնի արտօնատէրը որ Օսման Պէյի կողմէ ձուլարան

[illegible]



Ն. ԱՐԱՄԵԱՆ

[illegible]

149-150. **Թադէոս Սանճագճեան.** — Հայ հռոմէական: Ծնած է 1 Մայիս 1859ին: Աշակերտ Պօղոս Փիրիչեանի: 1890ին տպարան մը կը բանայ Բերա, Հայկազ Զարչըլին, որ 13 Յուն. 1891էն սկսեալ կը տպէ Յ. Ճանազարի «Հայրենիք»ը, Արշակ Չօպանեանի **Առաւօտեան ձայներ** (1891) և **Թուղթի փառքը** (1892): — Դեռ ինք՝ կ՚անցնի արտասահման և կը մնայ կառավարական տպարանն ի Կրաց (Աւստրիա): Սահմանադրութեան հռչակումէն Պոլիս գալով՝ կրկին կը բանայ իր անկախ տպարանը Պապը Ալի, Իգտամ խան, թիւ 38, որ 1910-12 հրատարակած է — օտար լեզուէ գանազան գիրքերէ և հանդէսներէ զատ — Մայրը: Սանթօ (1910): Բարեկամ Հիմարին յառաջդիմութեան (1911): Ի՞նչ է ազգութիւնը: Մարդուն ծագումը (1912) ևն.: — ** ՀԱՅՐԵՆԻՔ վերջէն իր սեպհական տպարանը կ՚ունենայ և 6 Յուլիս 1892էն սկսեալ կը փոխադրուի՝ խմբագրական նոյն կազմով (Ա. Արփիար խմբագրապետ)՝ Ղալաթիա, նախկին Օսմանեան Դրամատուն, մինչև 1416 թիւ, Հայկական Ջարդերու տարին, երբ Հայրենիքեանք դուրս կը փախչին: — 13 տարի խափանուած կը մնայ պօլսական այս առաջին 10 փարանոց ազգաթերթը. 6 Յուլիս 1909ին կըրկին Յ. Ճանազարի սեփականատիրութեամբ քիչ մը ատեն լոյս կը տեսնէ (Պոլիս, Էպուսուուտ փողոց, թիւ 38): — Ղալաթիա գտնուած ատեն «Հայրենիք» տպած է Լ. Մկրտիչեանի **Ամուսնական խնդիրներ** (1894):


Թ. ՍԱՆՃԱԳՃԵԱՆ

151. **Միհրան Յ. Փափազեան.** — Ծնած է Օրթագիւղ 1856ին: Յակոբ Գալաֆեանի յաջորդ՝ 1892 Յունուարին: Սիւմպիւլլիւ խան (թիւ 12, 17, 21, նաև 18, 19, 21) տպած է Աշխարհագրական քերականութիւն (1891), Խորէն կամ Ա. ընթերցարան, Գործնական քերականութիւն, Ծաղիկ (Յ. Փափազեան) 1892, Ընդարձակ հրագիտութիւն, Աստեղի ժամագիրք (1893), Պարտէզ հոգևոր (1899), Սաղմոս, Ա. Մ. Գարագաշեանի դասագիրքերը ևն.: Ներկայիս մէջ կ՚զբաղի կազմարարութեամբ միևնոյն խանը:


Մ. Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

152. **Ռոդոս Սագաեան.** — Եղբայրգա-ւազագիր Անտոնի: Հայ հռոմէական: Ծնած է Պոլիս 22 **Օգոստոս** 1857ին. նոյն ամսուան անուամբ **Օգոստինոս** մկրտուած է, [աշխատակցելով **Օգոստոս**]: Գրաշար Կ. Ա. Պարոնեանի քով, վերջնոյն՝ Թութիա խանը տպագրիչ եղած ատեն: — Սագաեան 1892ին կը հիմնէ իր տպարանը Ղալաթիա, Հայնի Բաշա խան, 6 տարի յետոյ Գուրջունլը խան, թիւ 4-7: Արտօնատէր **Ծաղիկի** որ գանազան ձևափոխումներ կրած է: Ե. Տ. Անդրէասեան և Բ. Պօզաճեան երբ «Ծաղիկ» օրա-


Ռ. ՍԱԳԱԵԱՆ

թերթը կը հրատարակէին, կիրակնօրեայ թիւ մը խորագիրը կարմիր տպելուն և Ալիշանի պատկերը դնելուն համար՝ Սազականն 45 օր բանտ կը պառկի ու հրաշքով կ'ազատի աքսորէ. չէ՞ մի որ յայս ինն կառավարութեան՝ յեղափոխական մըն էր մեծամեծ վանականը: Իր պատճառաւ Ռոզոսի տառապած ըլլալուն ի մխիթարութիւն՝ Հ. Ղևոնդ փառակցական որբ-տասուց գիր մը ուղղած է վերջին: — Սազականն ներկայիս մէջ այժ տուած է յանձակն տպագրութեանց (գիրքեր ու թերթեր): Դրաշարապետ՝ նախ Օ. Արզումանն, յետոյ Լատուտ. Մանաճանեան: — Փունջ մը՝ Ռ. Սազականի տաղերէն. — Ի՞նչ պէտք է գիտնայ գեղատի աղջիկ մը, Ի՞նչ պէտք է գիտնայ գեղատի մանչ մը, Աղջկան վառոցը (թրգմ. Միք. Ճանդանեանն), Ծնորհքով մարդիկ (Զապէլ Եսայեանի, 1906-7), Տէրոյենց (1908), Զայն Հայրենեաց (Լևոն Լարենցի, 1909-10), Բառգիրք (Ս. Գաբրամաճեան) 1910, Պատմ. Հայ Դրականութեան, Այտիւլ Համեր և Ծէրզօք Հայնա (Է. Օտեանի, 1911) ևն.:

153. Տպ. «Բիւզանդիոն»ի. — Նախապէս Պասը Այի ձառաէսի, յետոյ Սուլթան Համամ, Մօլա Թաշը: Տպարանատէր, խմբագրապետ, տէր և անօրէն՝ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ, 8 Օգոստոս 1859ին ծնած Գում Գաբու: 1876ին մտած է խմբագրական ասպարէզ (Մասիս, Թ. Էֆքերար և Արևելք): — Հ. Գաթէրճեանի «Հայ Լրագրութեան պատմութեան» մէջ կը գրէ. «79էն 84 **Մասիս** իր պայծառութեան գագաթին վրայ է: Այդ միջոցին թերթն ազգայնացուցած և զարգացուցած են Գաբրիէլեանցի, . . . Տէրվիշեանի, . . . Դրատէր Աստմի, բայց մանաւանդ Բ. Քէչեանի՝ «Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի» պատմագրին հասարակական կարեւոր և կենցաղական յօդուածներն: Այս գրագէտին ազգ. տնտեսութեան, շարադրական և քղք. տնտեսութեան, Հայաստանի տնտես. վիճակին և այլ նոյնկարգի գրութիւններն **Մասիսի** այն միջոցի կարևորութեան կնիքը տուած են»: Կարդալ նաև Բ. Պօղաճեանի խմբագրական յիշատակներն ու Գ. Զօհրապի «Ծանօթ դէմքեր»ը՝ Քէչեանի մասին: Բիւզանդ գրչի նոյն կորովով և տոկուն հաստատութեամբ յետոյ վարած է «Արևելք»ի խմբագրապետութիւնը, մինչև հիմնելը 4 Նոյ. 1896ին **Բիւզանդիոնը** զոր ցարդ կը շարունակէ կատարեալ ձեռնհասութեամբ՝ զաւկըններուն և Ա. Ակօպյաճեանի հետ: — Դրաշարապետ՝ Մինդատ Աղապօղեանն: — Նոյն տպարանէն 1911ին լոյս ընծայուած է «Թուրքիոյ 3 մեծ հիւանդութիւնները» գրքոյկը՝ Տքր. Ն. Տաղաւարեանի:



Բ. ՔԷՉԵԱՆ

. . . Գր. Ա. Մաղաքեան. — «Տիպ ու Տառ»ի տպագրութիւնը ճիշդ հոս հասած էր, երբ ծանօթ գրավաճառ և մեր բարեկամ Պետէն Զարդարեան — որ Վաճառամ Մարգարեանի, Կարապետ Ա. Պարոնեանի, Վիէննական Մխիթարեանց և այլոց նման ա՛յնքան ջերմ վկայութեամբ մը ցոյց տուաւ մեր երկասիրութեան պատրաստութեան ընթացքին, — մեզ նուիրեց **Ճաշքինար** «Վէ նա մուհիմ հիքեայէլէր մեճմուասը, Յիլ 100 փարայ» խորագրով 79 էջնոց հաստատ-աաճկերէն գրքոյկ մը (թարգմանութեամբ Յակոբ Կ. Աճեմեանի), որ 1872ին ԱՍԻԹԱՆԷի մէջ (Կ. Պոլիս) լոյս ընծայուած է ՅԱՊՐԻԴԱԻ Գ. Ա. ՄԱՂԱՔԵԱՆ էն: — 103 բառամաքրով յիշատակուած՝ պօլսայ տպագրիչ **Յ. Տ. Ուսիփանեանի** պէս՝ այս անձն ալ տպարանական գործունէութեան անծանօթ կը մնայ մեզ:

154. **Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան.** — Անդրանիկը՝ Վահրամ ծնած է 1879 Յունիսին Պոլիս և յաճախած Բերայի Վիեննացւոց վարժարանը: Բաւական ատեն պաշտօնավարած ընդհանուր-ապահովագրիչ Վ.րայրի քով, յետոյ մեկնած Մարսիլիա, առեւտրական գործով: — Հրաչեայ՝ երեք եղբօրմէն ամենէն փոքր՝ յաճախած է նախ Բերայի Վիեննական, ապա գերմանական «Րէալ-Շուլէ» վարժարանները, քանիցս Եւրոպա ուղեւորած՝ տպագրական արուեստին կատարելագործման համար: — Երկու եղբայրներ 22 Յունվար 1901 ին կը հիմնեն Ստամբուլ Համամ, բաղնիքին կից՝ փոքր տպարան մը զոր հետզհետէ կ'ընդարձակեն, փոխադրուելով Մեսաժէրի խան, թիւ 2-3, եւ 1908էն ի վեր Սիրքէճի, Ռեշիդ խանի ընդարձակ սրահներուն, գործատունին օժտելով պէտք ու գերմանական մեծ մեքենաներով, զանազան և այլ ապագրութեանց յատուկ մեքենաներով, նաև գիրքերու և տեղերու համար կազմարարական ճիւղով մը: — Բաց ի հրապարակի բազմաթեան գործերէ (travaux de ville), — որոնց համար մասնաւոր համբաւ շահած են, — Տէր-Ներսէսեանք գնահատելի ճաշակով ու մաքրութեամբ տպագրած են մինչեւ հիմա գրքեր, կոնդակներ, տեղեկագիրներ եւայլն, շուրջ 300 հատ: Առնցմէ յիշենք՝ Տարեցոյցներ (Նշան Պապիկեանի), Երկունք (Արտաշէս Յարութիւնեանի), **Ամէնուն Տարեցոյցը** (6 տարի և շարունակելի), Նոր տաղեր (Միսաք Մեծարենցի), **Բառարան** հայերէն տաճկերէն (Պետրոս Կարապետեանի), **Բառարան** անգլիերէնէ հայերէն (Մինասեանի), Եղիա Տէմիրճիպաշեան (Թէոդիկ Սամիկեանի), **Հայորդիներ** (Սիամանթոյի), Միամիտ մը արկածները (Օ. Չիֆթէ-Սարաֆի), **Թորոսի Ցանցեր** (Մկրտիչ Աճէմեանի), **Պատրզգիրներ**, Ազատ Բեմը (Ալփիարի), Հայրենիքի քնար (պարերգութիւն՝ 16 թիւ), **Դրական Համբուններ** (Մ. Յովհաննէսեանի), Արեւելքի բոցեր (Եդուարդ Գոլանճեանի), **Շիրակ** (Վահան Թէքէեանի շաբաթաթերթ), Ծու-Ծու (Վահան Փափազեանի), Կակաօյ Զինուոր (Երուանդ Օտեանի), Եղիայի սիրային նամակները և Հերանուշ Արշակեան (Հրանտ Նազարեանցի), **Ամիս մը ի Կիլիկիա** (Տիկին Զ. Եսայեանի), Հայ Նոր Բանաստեղծները (Եանգ Արմէնի), **ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ՏՕՆԻՄ և ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ** Ա. և Բ. տարի (Մ. Արք. Օրմանեանի՝ որուն **ԱԶԳԱՊԱՏՈՒՄ** անուն հոյակապ Ազգային-Եկեղեցական բազմահատոր երկասիրութիւնն ալ մամուլի տակ է), **Կերոններ** (Վահան Մալէզեանի), **Խաչուած Երազներ** (Հրանտ Նազարեանցի), Եղիշէ (Բարգէն Եպիսկոպոսի), **Նոպարեան Յանձնաժողովոյ** և **Միացեալ Ընկերութեանց** բազմաթիւ հրատարակութիւնները ու գրքերը, եւայլն, եւայլն: — Պատշաճութեան օրինաց համաձայն ըլլալով ՏԻՊ ՈՒ ՏԱՌ-ի տպագրիչ-հրատարակիչներուն տպարանական գործունէութեան մասին ներբող հիւսել, կը բաւենք որ իրենց գործատունէն լոյս ընծայուած հատորները խօսին այդ մասին, որոնցմէ բաց ի **Շէնդ տպագրութեանց Փունջ** ին մէջ պատուածներէն՝ յիշենք «Բանալի Բժշկութ»ի ցարդ լոյս ընծայուած 40 օրինակներուն գեղարուեստական բազմագունաթիւ կողքերը, որոնց համանման տպագրութիւններ մայրաքաղաքիս մէջ իրենք եղան նախածող: — Անկեղծ ենք թէ Տէր-Ներսէսեանք իրենց նշանակելի յառաջդիմութիւնը կը պարտին մասնաւորապէս իրենց ուղղամտութեան, որով ամէն հեղինակներու և հրատարակիչներու բացարձակ վստահութիւնը



ՎԱՀՐԱՄ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ



ՀՐԱՉԵԱՅ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

գրուած են, եւ ի մասնաւորի նախորդ ամէնին՝ յաջողած են ասել Գրաքննութեան գծուպրա փրկուելիք խեղճ մը ազգային-գրական գործեր, զոր օրինակ «Սանասարեան վարժարանի դասագիրք քանանեայ Տեղեկագիրը», Կիլիկեցի Սա՛ւսկ կարողիկոսի եւայլ կոնդակներ, ևն.: — Գրաշարագետ՝ Վահան Տէօվլէթեան:

155. "Ճիճու" ստորագրի հիմնադիրն է ՄԻՀՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ՝ 1870ին ծնած Թալաս, որուն Վ.արդ-Պատրիկեան վարժարանէն շրջանաւարտ: — Պոլիս գալով, 1903ին Պարոն Ալիքի տեղակին վրայ կը հիմնէ ստորագրուն մը՝ զայն գնելով Միքայէլ Սարգսեան: — Իր ստորագրած բազմաթիւ տաճկերէն գիրքերէն զատ՝ կան հետեւեալները. — Մասիս (Նոյեմբեր Ալաէն) 1907-8, Այգեկութք (Ա. Փափազեան, 1905), Բիւրակն, Փունջ, Առաւօտեան կանանցիր ուխտամներու գինոպրոցեան (1909) եւայլն:



Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

☞ 114 թուականով ներկայացուած ՕԳԻՍ՝ ԽՕՃԱՍԱՐԵԱՆի ստորագրուն լոյս ընծայուածներուն վրայ պէտք է աւելցնել հետեւեալ՝ տասնից թուականի. — «**Զարթուցմ՚ Հայոց**. Երեց Եսայի Վարդապետ Նշանեան Աքսորականաց» — Տպած Ա. Ժողովրդական Ընկերութեան Պալատ. (էջ 55):

## 10 ՅՈՒԼԻՍ 1908

Գրաքննութիւն ի սպառ վերցուած է եւ խնդրին անմեղ բառերու եւ տառերուն խեղդող ցանցորդում մը, ազատ եւ հրաշունչ յօդուածներ ամէն բերնի մէջ. ՕՍՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ առած զինուորեան սակ՝ ազատ եւ արտասանման պարձողներու ձառախօսններ, բանտերէն, ծածքեր, յանցանքներու վրայ բերուած ստորագրութիւն ժամանակներ եւ օդին մէջ ծփացող դրօշներ ամէնուրեք: Ակնկալի կերպով խմբագրուած՝ յաճախ երկրաչափութիւն բերքերու, արագօրէն դրոշմուած բառցիկներու եւ պրակներու ողողում մը հրապարակին վրայ՝ ձեռքէ ձեռք խլուող Բ. Գ. տիպ մեծատառ սրտոտ **իշխան**ները ելան: Եկեղեցին բեմ՝ աշխարհական քարոզիչներու, եւ բարոյի դասեր կեանքի վրայ բաց՝ ամենձախնկ երգողներու բերաններուն նման: Հասնողը բաղխանման մը ձեռք ձգած է՝ ստորագրի պէս բան մը հիմնելու եւ շարունակ գրքոյկներ լոյս ընծայելու համար. մերկ թուղթերու սպակին ու գոյնին նայող չկայ, անոնց անագին սպառումը կայ միայն՝ որ ի քրքել ակսան պիտի բազմին «սփռուիւն ունեցող» պատկերներ ու պօստօսող խօսքեր քմայական: — Այս էր վիճակն Ազատութեան հռչակման վաղորդայնին խոկ, մինչ քառորդ դարէ հետէ Գրաքննութեան կապարեայ լուծին տակ կքխացող Մամուլը մէկէն ի մէկ թօթափած իր ծանրութիւնը՝ կ'սկսէր անկաշկանդ գործել: — Անենօք ստորագրուած, սակս **Մուզիր** նկատուած հայերէն գիրքերու եւ պատկերներու անարգել վաճառումն մըն է որ անդի կ'ունենայ խանութներու ցուցափեղկին, փողոցներու անկիւն, եւ «Մէարիֆ»ի մելամանցը — զոր տարիներու ընթացքին՝ ակադեմոն թրուծ էին Հայերու մատենագրութիւնէ յաջորդակի վերցուած անհամար հատորներ ու հանդէսներ, — կը դադրէր մէկ անգամէն: — Ամէն արուարձան իր քանի մը սկսուողներն ու չարաններ կ'ունենայ. ամէն հայ «կուսակցական» զարգացման հետամուտ կ'երեւի. Գիրքին փառքն է որ կը տարփողուի ամէն անկ, եւ անոր հին ստատւած երկրակրութիւններ վերստին կը հրատարակուին՝

ւզօր բանաստեղծներու պէս «ապագայական անտուց» Պէմայի վրայ կարդացուած : — Տաղանդաւոր գործունէութեան այս խոլարշաւ փուլին մէջ՝ առաւօտէն մինչեւ իրիկուն, գիշերն ի բուն իր «քնացու»ին առջեւ արձանացած ձէք գրաշարն է այս անգամ որ կը ցցէ գլուխ, իր օրավարձքին բարձրացման ակնդէտ : Գործաւորներ կը խմբուին եւ խորհրդակցութիւններ կը կատարեն Գրաշարաց խնայողական սնտուկի մը կազմութեան համար : Այդ առաւօտ է գլխ. եւս ամէն փորձերու միջոցին է որ Պօլիս կու գայ «ազգոյ-ակմօքրար» ԳԱՐԵԳԻՆ ԿՕԶԻԿԵԱՆ (Ցամլեմ), ծանօթ՝ ի Կովկաս բանուոր դասակարգի մէջ ունեցած գործունէութեամբ եւ իր կարգ մը հրատարակութիւններով, (կենսագրութիւն տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը, 1910 տարի»), եւ կը ձեռնարկէ հիմնել **Օսմ. տպագրական բանուորներու արհեստակցական միութիւն** մը որուն մէջ պիտի մտնէին բաց ի գրաշարներէ տպարանի այլ ճիւղերու գործաւորներն ալ : Կարգ մը ժողովներու մէջ — որոնց ներկայ եղած էին հայ եւ թուրք աշխատաւորներ — Գարեգին բացատրելով բանուորական միութեան կարեւորութիւնը՝ կրցաւ ընդունիլ տալ անոնց այդ միութեան ծրագիրը որուն **կանոնագիրն** ալ 2 լեզուներով խակոյն լոյս ընծայեց «Կիլիկիա» տպարանէն : — Մեծ Նոր Խան նենոյ մը կը վարձուի՝ իբր կեդրոնավայր հայ գործաւորներու, ննջելու մըն ալ Պազր Ալլի գլխոց՝ թուրք գործաւորներու, ու քիչ ատենէն անդամներու թիւը մէկ քանի հազարի կը հասնի : Դրամագլուխը կ'սկսի աճիլ եւ Միութիւնը ձեռնակութեան մը կը վայելէ գործաւորներու եւ գործատէրերու կողմէ: Աշխատանքի ժամերը 10-12էն 8ի կ'իջեցուին, վարձքերը կը կրկնապատկուին, երկուստեք յարուցուած խնդիրները կը հարթուին եւ համաձայն Միութիւնը մեծ թափով կը շարունակուի մինչեւ 31 Մարտ 1909՝ Յետադիմական Շարժում. եւ անոր անդրծնեբուն բեր կ'առաւարման, Միութեան օրինաց դէմ շարժողներ երեւան կ'ելլեն, որով՝ ապարանատէրեր առաւձանապար կ'սկսին ձնշել վերստին բանուոր դասակարգը՝ ամանապատկելով անոր ձեռք բերած իրաւունքները : Միութիւնը մեծ դժուարութեամբ կը շարունակէ իր գործը, ախտահեղով անձկացութեան իր գործունէութեան ասպարէզը : Կարեւոր դեր կը խաղան անդամներէն Թագւոր Մասրէեան, Մկրտիչ Դանիէլեան, Յ. Ճարեան, Զենոբ, Արմ. Գառնիկեան եւայլք : Կոզիկեան այսպէս հիմնադիրն ու ղեկավարը եղած է գործին, նախագահն ու քարտուղարը միանգամայն, յառաջ երկար ատեն խորհրդատու, մինչեւ որ ուրիշներ կարող եղած են իրենց գործերն իրենք վարել :



Գ. ԿՕԶԻԿԵԱՆ

156. **Օսմնի Արդուանն**. — Ազատութենէն օգտուելով՝ ամէնքն ալ պէս բանտող, սակայն շատ կարծեալ կեանք ունեցող հայ տպարաններու շարքին մէջ ամէնէն փայլուն, կարկառուն ու անխախտ կրնայ սեպուիլ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ անուամբ Յակոբեան խանի վերնայարկը 1908 նոյեմբերին բացուող այս գործատունը, ձիշդ նո՛ն ար աանօրը իրենն էր հիմնած մեծանուն տպագրիչը Հ. Արամեան, պօլսոյ տպարանական աշխարհը լեղաշրջելով: — Մասրէոսեանի եւ Տէր-Ներսէսեանի նման՝ Արզումանն ինքնարան բռած է իրեն մարքուր, արագ եւ առատ գործ, գլխաւորաբար այժմ տպով Պոլսոյ, Դրքոներու եւ այլոց դասագիրքերուն հրատարակութեանց : Պզտիկուց սրտեռանին սէրն ունեցող այս երիտասարդ տպագրիչը մեր բեղմնաւորութեամբ գիրի առատ հնապէս իր ինքնակենսագրութիւնն որ կը պատմէ շնորհկան գրուագներ . . . . **Մեր 400ամեակին տարին** խմացայ թէ եղի մը պատրաստուած էր՝ անոր մէջ խառնուելով ինչ որ կը վերաբերի Հայ Տպագրութեան. առիթը ծանր գործ մը կը ներկայէ զօր ձեզի պէս մէկը միայն պիտի կրնար գլուխ հանել, ծանօթ ըլլալով ինձ՝ համբերատար եւ անձանձիր աշխատութիւններ : Ձեր գործով վերահաստ պիտի ըլլանք թէ ի՛նչ զիմակեղուններ ունեցած է մեր տպագր. աշխարհն անցեալին ու ներկային մէջ : — Ծնած եմ 1 Մարտ 1880ին: 12 տարեկանիս՝ գրաշար ըլլալու համար մտած եմ Պօյաճեան տպարան որ աշակերտած եմ

փողեմի գրաշար Տիգրան Մանուկեանի որ ծերունազարդ տարիքին մէջ ցարդ կ'աշխատի հոն : Տարի մը վերջ սրուկարներն շարել սորված եմ Յարութիւնէ որ եղբայրն էր «Լրագիր»ի խմբագրապետ Նիկողոս Թիւլպէնտճեանի . նոյն լեզուաւ յառաջ շարած եմ ամբողջ Ած.աշունչ մը 8 **բանբօ** : Վերջին ծայր սիրահար էի արհեստին . կը բաղձայի գեղեցիկ կողքեր շինել , սակայն վարպետները մեզ չէին յանձներ նմանօրինակ գործեր . Ես ալ առտուները որոշեալ ժամէն բաւական կանուխ կը փութայի աշխատանոց որուն ամայութենէն օգտուելով՝ ծաղկազարդ շրջանակներ կը կազմէի գաղտագողի , մինչեւ գործաւորաց գալուստը , երբ արդէն ես շինածները քակած՝ իրենց տեղերը դրած կ'ըլլայի : — 1892-6 շրջանին Պօլսոյ ամենամեծ հայ տպարանը Պօյաճեանինն էր , ուր պաշտօնավարել պարծանք կը սեպէին ամէն բանուոր . առանց բեր կը հասնէր 50-60ի , 20-25ը միայն գրաշար՝ որոնցմէ կ'արժէ յիշել երբեմնի տպարանատէր 70ամեայ † Յր. Փափազեանը , եղբայրը † Սարգիս , † Միհրան Վ.այլեան , Տ. Մանուկեան , Յ. Թիւլպէնտճեան , Սիսակ Մուրատեան , † Պետրոս Նիկողոսեան , Ներսէս Բիւրատեան , Սարգիս Թաշճեան , Գաբրիէլ Ա. Գաբրիէլեան եւն. : Յ. Փափազեան համակրելի ծերուկ մըն էր որ **Տղայոց Աւետարանը** կը շարէր . օր մը քովը կանչեց զիս ու ըսաւ . «Տղաս , հոս հիմա շարող իմէ աղէկ մէկը չկայ , կ'ուզեմ քեզի սորվեցնել , վերջին տարիքիս մէջ՝ իմէ քեզի յիշատակ մը թող մնայ» : Բանի մը օրէն սորված էի արդէն եւ այնուհետեւ բաղդաւորաբար ձայնագրեալ «Հոգեւոր երգարան»ները ինծ յանձնուեցան . Ինքն ալ շատ չանցած Ա. Պօլիս գնաց աղջկանը քով եւ հոն մեռաւ : Պօյաճեան տպարանի գրաշարապետն էր Համբէօյցի Վարդանեան որ ամէն լեզուէ կարող էր շարել . Միւհէնտիսեանի աշակերտ . 45 տարի գրաշարութիւն ըրած եւ անցեալ տարի մեռած 61 տարու : — Դէպքէն , գաղթականական հոսանքը զիս ալ Պուլկարիա քշեց : Վառնա հասնելուս յաջորդ օրն իսկ կրցայ գործ գտնել՝ քաղաքին պուլկար ամենամեծ տպարանին մէջ (Իքօնօմօֆ) , պուլկարերէն շարել գիտնալուս շնորհիւ : 2 տարիէն Պօլիս դարձայ եւ եօթնօրեայ բանտարկութենէ վերջ Մարտ 28ին մտայ «Արեւելք»ի տպարանն ուր կը հրատարակուէր «Մասիս» իր օրերը , գրաշարապետութեամբ Մօրուք-Արթաշի (Ճիշմանեան) : Գարա Արթին , Եսայի , Պետրոս Նիկողոսեան , բոլորն ալ ծայր աստիճան արագ շարողներ՝ կը մրցէինք իրարու հետ , ժամուան մէջ 60 տող լեցունելու համար որ մօտաւորապէս 2000 գիր ըսել է : Տարիներու պաշտօնակից մըն ալ ունէինք , Զիլինկիրեան Կարապետ զոր հայ գրաշարաց նահապետ կ'անուանէինք եւ որ Գ. Էջի Կ. Ս. Իւթիւճեանէ թարգմանուած բերթօնը միայն շարելով՝ օրն իրիկուն կ'ընէր : Ինք կը պատմէր մեզ թէ հին ատեն գրաշարք շարադրանով չէին աշխատեր , այլ գործ-գլուխ , խոշորագիր 1 տողը 5 բարա , բայց օրական 200 տող շարողը մատով կը ցուցուէր եղեր . մինչ մենք այս պատմութիւնները լսելով կը խորհէինք թէ օրական 5-600 տող շարելով համեմատ փոխանակ 60-70 դրշ. ստանալու՝ 15-20 դրշ. կը ստանանք ... : Ծո՛ւլ շարողները մեր խումբին մէջ կային աղուոր շարողներ ալ . երբեք չեմ մոռնար , օր մը անոնցմէ մին «Ոճիր մը գործուած է Բերա» խորագրութիւնը շարած էր «Սրճեփ մը գտնուած է Բերա» ... : Հին Ռէժիին «Սուրհանդակ»ի տպարանն աշխատող մըն ալ Ե. Թօփճեանի մէկ յօդուածին մէջ «Կայս. **կառավարութեան**»ը «Կայս. **խառնակութեան**» շարած էր անգամ մը որ բարեբախտաբար չէր վրիպած սրբագրիչին աչքէն . այնպէս՝ աչքերը բացած էր խեղճին : Չկարծուի թէ ինչ ինչ խմբագիրներ ալ չեն գործած նմանօրինակ անճշդութիւններ . «Մերքին յուր»ի թարգմանիչ մը «Էյֆէլի կիւն 2 ամէն **մէրճէպնիլէր**»ը հայացուցած էր «Ասոր օր 2 պարսիկ **մեհմանաւնաներ**» : — Ինծի ժամանակակից ծանօթ գրաշարներէն կան դեռ Ն. Մանաճեանեան , Մկր. Նաճարեան , Յակոբ Թումայեան , Միսաք , Յակոբ Հէքիմեան եւն. : — 1899ի սկիզբները ալ «Վէրի» լրագրի տպարանէն կանչուեցայ . «Արեւելք»ը ձգելով հոն գացի , ուրկէ քիչ յետոյ անցայ Գ. Գալէմքեարեանի տպարանը՝ Ղ. Բոյաճի «Համրագիտակ»ին հրատարակութեամբ


Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

համար: Բոլոր կոչուեցան նորէն «Ծաղիկ» օրաթերթի խմբագրապետութեան, որուն գրաշարապետութիւնն ալ իրն յանձնուեցաւ 20 տարեկանին: 1900ին «Ծաղիկ» դադրեցաւ. այնուհետեւ Սագաեան ու Կը ընկերովի շարունակեցին նոյն աշխատանքը՝ մինչեւ Սահմ. հռչակում, երբ 1908 Նոյեմբերին ունեցայ վերջապէս իմ անկախ տպարանս զոր հիմնեց՝ միակ մղձաւանջս էր եղած և որմէ լոյս ընծայած Ա. գիրքս եղած է **Դիւցազն փառաց**: — Յարդ մինչեւ 140 բատրկնոյ կը տպածներէն յիշենք մէկ քանին. — Կեղծ հանճարներ (1909), Կուէ արձաններ, Կործք պատը. Մանանայի կարմիկէ Հայոց, Յաղթութիւն, Մոնթէ Քրիստո, Յաղագս (1910), Աւրա որ ոտ, Լուռ ցաւեր, Հայուհին, Կեանքը ինչպէս որ է, Ծիրանագոյն, Սրտի ձայներ (1911), Կոչումը, Արդի բարոյագիտութիւնը, Ձեռք Դէպ (1912), իսկ բեմականներ Կատակ, Պարոնցակ, Երբանիս, Կոմէոյ, Մարմնամարզ, Փարոս, Ռոմեո, Տամար, Բանախօսն, Եղիշէ, Յիշատակարան եւն.: — Գրաշարապետ Վահրամ Գէորգեան:

157. **Տպ. «Ժամանակ»ի.** — Պատը այս ձեռնարկի, ձգել օգտ եղաւ չը, թիւ 19: Արտօնատէր-խմբագրապետն ՄԻՍԱՔ ԳՕՉՈՒՆԵԱՆ (Բաբիկ) որուն ընդարձակ կենսագրականը տե՛ս «Ամենուն Տարեցոյցը» 1912: Տնօրէն ՍԱՐԳԻՍ ԳՕՉՈՒՆԵԱՆ. 1867 Փետրուարին ծնած Հալէպ և Քիլիսի ազգային վարժարանը առած իր նախնական կրթութիւնը: Եղբօրը հետ 1886ին Պոլիս գալով իր գլխաւոր գրագործը եղած է **Պոլսոյ բոլոր թերթերուն ծանուցմանց բաժինը**՝ 1895էն սկսեալ: Եւրոպական մեծ տուներու ամէն լեզուէ ազդեր պոլսական լրագրաց մէջ առաջին անգամ ընդհանրացնողի փառքն իրեն կը վերաբերի: — Սարգիս արտօնատէրն է նաև իր մօտոյ հրատարակելի **Հնդամոյն** օրաթերթի: — Իրենց տպարանին մէջ կը տպուի միայն 15 Հոկտեմբեր 1908էն ի վեր **Ժամանակ** «Ժողովրդական» այգաթերթը (առաջ խմբագիր Ե. Տ. Անդրէասեան), գրաշարապետութեամբ Եր. Մուրատեանի:



ՔԱՍԻՄ



Ս. ԳՕՉՈՒՆԵԱՆ

158. **Արշակ Չարոյեան.** — Ծնած է Համբեկ, Եգիպտ. խանի իր տպարանը հիմնած 190 ի վերջերը, գրաշարապետ Յակոբ Չէքիճեան: — Բաց ի կառավարական բազմաթիւ գործերէ՝ տպած է **Աշխարհ** (Համլետ), **Հաշի ԹԷՐ** (Վ. Փափազեան), **Հեղինէ** կամ գաղտնիք մը ի Կ. Պոլիս, **Նաճոյ** բեմական վարագոյր (1909), **Ճակատ** (հատորեայ), **Երկրանիս** (1910), Մարտիրոս Մնակեանի ալպօմը (1912) եւն. եւն.: — Կարոեան Սահմ. հռչակումէն առաջ կը գործէր Պապա Թաճիրի տպարանը՝ բարոյին ազգերու ձեռքը տանձնելով, ծանօթ այն տանն «Իւանճի Արշակ» անուամբ:



Ա. ԿԱՐՈՅԵԱՆ

159. **Յովհան Պ. Փալագաշեան** — ծնած է 29 Յունուար 1860ին Սամաթիա. ուսումն առած Սահակեան, Մայր, Մեզպուրեան և Սալբաշեան վարժարաններուն: Ուսուցիչ մաթեմաթիքի, աշխարհագրութեան, պատմութեան և բնական գիտութեան: 1897-1900 կրթական տեսուչ մայրաքաղաքիս ազգային դպրոցներուն: Խմբագրած է «Ծաղիկ»ը (1890-3 և 9), «Նոր» մանկավարժական հանդէսը (1900) և «Կարուն» շաբաթաթերթը: Եղած է նախաձեռնողը Թրքահայոց մէջ մանկավարժական գիրքերու խմբագրութեան և հրատարակութեան: 1901 Մայիսին կը բանայ համանուն վարժարան մը աղջիկանց՝ գիշերօթիկ և ցերեկեայ, Կատըգիւղ, զոր 8 տարի կը շարունակէ: Այնուհետև կը հիմնէ տպարան մը Մօտա Թաղ, զոր յետոյ կը փոխադրէ Մեծ Նոր Խան, թիւ 55, ուր ընծայեց Քնար հայկական, Ծրագիր բարեկարգմանց (Երկնեան), Խօսք գնայմանց, Պ. Սրուանձտեանց, Ճիգախիններու պատմութիւն, Յովսէփ Գեղեցիկ, Կանայք վաստակոց, Բոլոր կարավէլքի դէմ, Ի՞նչ կ'ըսէ Գուրեան Պատրիարք, Յուշեր Մեծկերտի և շրջակայ գիւղերի կեանքից, Ժողովրդական սպորդ քարոզներ, Աւարայր, Պատասխան, Ազատաբար շարժական բանակ..., Կենսագրութիւն Տիկին Մարիամ Գամբուրեանի, Անգեր, Հայրենիքի քնար, Լօրտ Արքըր Աւգուստի ոճիրը ևայլն:



Յ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

160Բ. **Տիգրան Յօղրամաճեան** — ծնած է Հասգիւղ 14 Մարտ 1854ին. 1867ին գրաշար՝ Ճ. Արամեանի տպարանը: Ա. անգամ գրաշարական Ա.Լ.Է.Մ.ի, յետոյ «Միութիւն» ամս. թերթին, Ն. Թիւլեմաճեանի «Լրագիր»ին, եւ 1890ին՝ Ապլիքէճի: 1882ին ծննդավայրին «Ընթերցասիրաց Ընկերութիւն»ը հիմնած է և զայն 10 տարի շարունակած: — 1894 Դեկտեմբերին անցած է ՓԱՐԻԶ՝ Իշխան Գուխասն Լուսինեանի Ֆրանսերէնի բառարանը շարելու համար. 5 տարի վերջ բացած է հոն պզտիկ տպարան մը (18, Rue des Gobelins), ուրկէ լոյս ընծայած իր անդրանիկ գործը եղած է Օրմանի պատմութիւնը, յետոյ Ս. Պօղոսի գիրքին յառաջաբանը, «Կանոնագիր Հայ Աշխատաւորաց Միութեան Փարիզի» 1905, «Կանոնագրութիւն Փարիզի Հայկ. Միութեան» 1905, «Տունկերը և անոնց հայերէն անունները» 1906, Ե. Օտեանի «Ազատ խօսք»ը (4 թիւ), Բասմաջեանի «Լեւոն Ե. Լուսինեան»ը (1908), Զօպանեանի «Անահիտ»ը (1904-8), «Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը», «Թուղթ հովուական» 1907, «Ջահը» Պ. Վարուժանի, «Երգուածներ» Ա. Չօպանեանի (1908), Տ. Աճեմեանի «Յաղթերգ»ը: — Հօնկէ կեղծանուամբ բերրակցած է Արևելքի, Ծաղկունքի, Հայրենիքի և Բիւզանդիոնի: Դեր ծախսով ընդունած Բարիզի Հայոց Բարեգործ. Ընկ.եան: — Օսմ. Ազատութենէն օգտուելով, 1908ի վերջերը Պոլիս դարձած է և Մօտա Թաղ տպարան մը հիմնած, ուր հրատարակած է Բանակային ձայնը, Թշուառներու քոյրը, Հերոսը, Ջավահիրն, Յօրեկեան Վարդապետ Ժաւնդ. Վրժինի, Հերթման եղանակացութեանց, Բիբլիոն, Կանոն, Հայոց երգարանը, Պարոս Կարապետեան, Թափառական Հրեայ, Դաղաղիկ, Տաճար, Փարոս, Մայրիկ, «Աւետաբեր» օրացոյց. Ազգ. Պատրիարքարանի հաշուոյն խնդրոց վերաբերեալ հաց և բազ. տեղեկագիրներ են.:



Տ. ՅՕՂՐԱՄԱՃԵԱՆ

161. **Յովհ. Մ. Այնաւոր.** — Ծնած է Պարտիզակ 1870ին. աշակերտած Պէրպէրեան վարժարանին: Տնօրէն **Ասըր** տպարան-գրատան (1890-1908): 1908ին Պապը Ալի ճատտէսի, թիւ 48, կը հիմնէ ՆՈՐ ՕՍՄԱՆԵԱՆ գրատունը, յետոյ նոյնանուն տպարանը՝ նախապէս գործակցութեամբ Օ. Բարսեղեանի որմէ շուտով կը բաժնուի: — Աշխատակցած է Գ. Պալըեանի «Ծաղիկ» շաբաթաթերթին (1904), Լոյսի, Հանրագիտակի, Մանզումէի, Մէճմուայի Ֆիւնունի, Թէրագգիի ևն.: — Օսմ. լեզուէ հրատարակած իր գիրքերէն զատ՝ ունի հետեւեալները. — Նոր երգարան, Նապէօլոնի Հօճայի զուարճալիքները, Ընդհանուր ազգաց պատմութիւն (Մ. Ծալեան), Ծրագիր կանոնաց, եւայլն:



Յ. ԱՅՆԱՒՈՐ

162. **Օսմ. Գործակցական Ընկ.** — Պապը Ալի, Էպուսսուուտ ճատտէսի, թիւ 27: Բաժնետիրական ընկերութիւն, իւրաքանչիւր բաժին 5 ոսկի, 15 ոսկի վճարողը՝ հիմնադիր: Այս տպարանէն լոյս կ'ընծայուին 2 տարիէ ի վեր՝ Ազգ. ժողովի ատենագրութիւնները, «Լուսարձակ» պզտիկները (19 Նոյեմ. 1911էն սկսեալ), Տաճար, Չգիտակցութիւն, Վենետիկի վաճառականը, Սիրոյ ներշնչումներ, Գաղտնիք Բարիզու, Վարդան Մամիկոնեան, Հողագործ բնագէտ մը, Սրտի հիւանդութիւն, Գիրք ևն. ևն.: — Գրաշարապետ՝ Երուանդ Մարգեան եւ Գաբրիէլ Յովհաննէսեան: — **Օսմ. Գործակց. Ընկ. ին հիմնադիրը եղած է** ԲԻՒԶԱՆԴ ՊՕՂԱՃԵԱՆ. ծնած է Լանկա 1859 Փետր.ին: Երզնկացի Պօղաճեանց ազգատոհմէն: Աշակերտած է Մխիթարի ճեմարանին ուրկէ Մայր վարժարան անցնելով՝ կիսատ թողուցած է ուսումը: Հօրը հետ եւ նոր Հայերէնի, ֆրան. եւ տաճ. լեզուաց՝ զորս յառաջացուցած է ինքնօգնութեամբ եւ յամառ աշխատանքով: — Խմբագրական աշխատութեան բռնած է հին «Մասիս»ի քով, ուր՝ առօրեայ թերթի վերածուած ատեն: Այդ տարիներին կը գնէ փաստաբանականը որուն կը հետեւի: «Ներքիններու յառաջացուած «Մասիս»ի Ա. երեւք 6 տարի կը խմբագրէ եւ այդ օրէն ատենը կը մնայ **Ներքինի**, նոյն թերթին «Արեւելք»ի միացումէն առաջ՝ 7 ամիս ալ կը մնայ խմբագրապետ: Այդ երկու լրագիրներուն միացման բուն նպատակն էր Ներսէսի կարողութեան յաջողցնել, իսկ բուն խորհուրդն էր լրագրական հրապարակը մենաշնորհը դարձնել «Արեւելք»ի խմբագրին: Այս պարագան առիթ կ'ընծայէ իրեն՝ բողոքելով գիրը առանձնելու, եւ նախ 10 ամիս «Հայրենիք»ի (Մէլիքեանի օրով) կ'աշխատակցի, յետոյ Հմայեակ Եղեկ.ի «Լոյս»ն օրաթերթի վերածելով՝ մինչեւ կը պաշտօնի կառավարական ծանօթ խնդիրին ատեն, մինչեւ թերթին դադարումը որ իր պատմութիւնն ունի: Նոյն ատենի Կրօն. ժողովը կախակայելու բարի առիթութիւն ունէր. Աղօթ. խնդրոյն մէջ Պօղաճեանի բռնած բողոքալի գիրը կղերականաց եւ ազդեցիկ ադամերը շնչերը գրգռած էր արդէն երբ պատր. խնդիր մըն ալ կը ծագի: «Արեւելք»ի ընկերն էր Ս. Աճէմեան Ա., իսկ «Լոյս»ինը՝ Յ. Վենետիկեան Ա.: «Լոյս»ի հրատարակած մէկ քանի բուռն յօդուածները կարծեաց փոխանակ յառաջ կը բերեն եւ իր ընկերին կը յաջողի: Աճէմեան Ա. որ Կրօն. ժողովի անդամ էր՝ պաշտօնակիցներու հետ համախորհուրդ ճնշում կը բանեցնէ «Լոյս»ի արտօնատիրոջ վրայ, զայն կախակայելու պատրուակով, (այսինքն քաղաքական պաշտօնէն զրկել, մեռցնել, ճառերի



Բ. ՊՕՂԱՃԵԱՆ

չըլլալ)։ Արտօնատէրը փոխանակ խոստովանելու թէ ո՛չ միայն տարեկան վարձքն, այլ և թերթը փոխանցելու համար 35 ոսկի կանխիկ գանձած է, իր թերթին մահուանը կ'ստորագրէ՝ կառավարութեան ուղղեալ երկտող պաշտօնագրով մը յայտարարող թէ այլ ևս չուզեր «Լոյս»ը հանել։ Տպագր. Տնօրէնէն խնդրոյն հրաման կու գայ Բիւզանդի թէ այլ ևս իրաւունք չունի թերթը հրատարակելու։ — Պօղաճեան երբ լրագր. հրապարակի վրայ չկրնար արմատ բռնել, կը փորձէ գրավաճառութիւնը որ — իր խոստովանութեան համեմատ — լրագրութենէ աւելի ալ-տոտ գործ մըն է։ — 8-10 տարի կը վարէ Չարմուքճեանի իր խանութը, լոյս ընծայելով կարգ մը դասագիրքեր՝ շատ մը գրքոյներ. թարգմանած, (Էքօ տը Բառի, Աշխ. և Ֆրան. քերականութիւններ, Հայոց Պատմութիւն, Ֆրանսերէն գրպանի բառարան ևն.)։ Իր փոխ դրամագլուխը կեր կու տայ **Մէնէլլէ**ի հրատարակութեան և կը քաշուի առևտր. գործի մը մէջ, երբ **Բիւզանդիոն**ի երևումը թերթին ստորոտը կը տանի զինք՝ իբրև թարգմանիչ թերթօնի։ Այս տարիներուն՝ յաջորդաբար կը հայացնէ Օնէի «Կամքը», «Տրբ. Ռամըօն», Բօրէի «Յանցաւոր»ը, [նաև ուրիշ ժամանակներ՝ Օնէի «Դարբնոցապետը», Տիմայի «Թագուհւոյն մանեակը», Ժ. Վէռնի «Շուրջ գլումով»ը, «Լուսնակներու երկիրը», «Գաղտնիք Բարիզու»ն (Է. Սիւ), Ինքնապաշտպանութիւն]։ Պօղաճեան «Բիւզանդիոն»ի Բ. տարիէն սկսեալ կ'ստանձնէ «Ներքին լուրեր»ու խմբագրութիւնը՝ բուռն պահպանողական իր անփոփոխ աշխարհահայեացքով, մինչև իր արուեստը Բէշեանի հետ և ետքը «Ծաղիկ» օրաթերթի գիրկը որ իր և Ե. Տ. Անդրէասեանի ձեռքերուն մէջ կ'սկսի ծաղկիլ։ Վերջինյն խափանումէն ետք Պօղաճեան 1899ի վերջերը կը փորձէ գիտական ու գրական ձեւով ինձ հետ հրատարակել «Համագիտակ»ը որ 6 ամսուան կեանք մը միայն կ'ունենայ։ — Անցեալ տարի Ա. Չէօմլէքճեանի, Ա. Գալըքճեանի և Ե. Սօղիկեանի հետ կը հիմնէ «Լուսարձակ» հանրագօրեան, իբր «ընդդիմադիր օրկան», որուն մէջ ստորագիր և **Խաւազան** ու **Մտրակ** ծածկանուններով ցարդ կ'երևի՝ քննադատական սուր ու չեշտ նիշերը անդրադարձնելով ամէն օր։ — Իր կողակիցը եղած է 1894ին մեռնող Տիկին Բերուզ որ յօդուածներ ունի ատենոյն հրատարակած «Լոյս»ին և Մեքքեանի «Հայրենիք»ին մէջ Ա. Բ. Գ. և **Բրիանոյս** ծածկանուններով։

163. **Տպ. "Կիւթէմպէրկ,,**ը կազմած են ԵՐՈՒԱՆԴ ՄՍՐԼԵԱՆ ու ԳԱԲՐԻԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ։ — Ա.ը ծնած է Գամրկի 1888ին։ Կառավարութիւնը Տրիպոլիս ղրկած է զինք՝ հօրը քով — քաղաքական յանցանօք ցկեանս թերդարգելութեան դատապարտեալ մը։ Երուանդ հոն կը յաճախէ Ֆռէռներուն դպրոցը։ Իր հօր աքսորէ փախուստին առթիւ՝ ինք Պոլիս բերուելով երաշխաւորութեամբ ազատ կ'արձակուի։ 1902ին կ'սկսի գրաշարութեան զոր ցարդ կը շարունակէ։ Յեղափոխական խնդիրի մը առթիւ ոստիկանութենէն հետապնդուելով կը փախչի և հօրը հետ կը միանայ Գահիրէ՝ ուր բաւական ատեն կ'աշխատի Journal du Caireի տպարանը, մինչև Սահմանադրութեան հռչակում, որմէ յետոյ կը փոխադրուի Պոլիս։ — Ինք ու Գ. Յովհաննէսեան «Մանզումէ»ի գրաշարական գործը կ'ստանձնեն, ապա 16 օրեայ **Օրագիր**ը, պրակ առ պրակ Թշուառները (վերջինս Զարդարեան Եղբարց հետ)։ Պոլսոյ մէջ գիրքի մը՝ պրակով տպաւման նորութիւնն իրենցմով սկսած է։ «Թշուառներ»ն աւարտելէ վերջ կը հիմնեն **Կիւթէմպէրկ Մատենաշար**ը, հրատարակելով «Ճշմարտութիւն»ը, Երեք հրացանակիրներ»ը, «Քսան տարի ետք», «Իննսուն երեք», Պաղտասարեանի պատկերազարդ «Հայոց Պատմութիւն»ը, «Պատերազմ և խաղաղութիւն», Ծերենցի 3 գործերը, Թիէռի «Ֆրանսական յեղափոխութեան պատմութիւն»ը (5 հատոր պատկերազարդ)։ Իսկ 19 Նոյ. 1911ին կ'ստանձնեն հրատարակումը **Լուսարձակ**ի՝ 4 խմբագրաց հետ համախորհուրդ։ — Գաբրիէլ ծնած է Հէյպէլի կղզին 1887ին։ 1900ին սկսած է գրաշարութեան։ Ինքնօգնութեամբ յառաջդիմած և լաւ անուն մը շինած է։



Գ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ, Ե. ՄՍՐԼԵԱՆ
(Երկու անբաժանելիներ)

164. **Տպ. «Ճանճ»**, Գալաթիա, Ճամի Գարսը, թիւ 9, հիմնուած 1 Փետր. 1909ին ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆի (կենսագրութիւնը տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը» 1911, էջ) կողմէ, ԵԱԶԸՃԵԱՆ ՆՇԻՊԱՐԻ հետ ընկերովի : — ՃԱՆՃ «Ճեճոսդ» պատկերազարդ ատձկերէն հանդէսին տպագրութեան ձեռնարկած է Մասրէանէն վերջ, իսկ 15 Յունիս 1911էն սկսեալ լոյս ընծայած **Ճանճ** կիսամսեայ չրեր հանդէսը (գրական և գեղարուեստական) որ ցարդ կը շարունակուի : — Այս տպարանը որ յետ Սահմանադրութեան բացուածներուն մէջէն մին է առաջնորդին չու կազմակերպուածներէն — ճաշակաւոր ու մաքուր գործ արտադրելու սեպակտով, — ունեցեր տարի այրած և կարծ գաղափար մը վերջ վերադարձուած է' ցարդ հրատարակած են հետևեալները . — **Մեր Տարեցոյցը** (1910-2), Կեանքին մէջ (Եր. Սրմաքէշխանլեան), Ծիրկանգաւէ (Գ. Մայխաս), Զանազան բարգմանութիւնք (Մ. Աճէմեան), Մանուկներու առողջապահութիւնը, Հայ-Գիւղի քարտէսը, Ավետիս, Ապուշներու տարեցոյցը (Ե. Օտեան),



Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Վիպարերը, Մարմնամարզ եւայլն եւայլն : — Գործավարուհին' Եռնվը Պարսամաճեան :

165. **Տպ. «Արամ»**ը հիմնած է Ատոմ Ճաշէն (= Երիցեան), ծնած է Ակն 1875 Մարտին. աշակերտած Դալարիոյ Կեդրոնականի վարժարանի. Լայպցիկ, Եէնա և Բարիզ' համալսարանական ուսմանց : — Իր տպարանը նախ Բերա' Եէնի Չարշի, թիւ 52 էր' որ սկսաւ հրատարակել 10 Յունիս 1909ին **Ազատամարտ** օրաթերթը (որուն տպագրութիւնն ստանձնեց Հ. Թիրեաքեան), և որկէ փոխադրուեցաւ Պոլիս, Պասքը Ալի, Էսպատալի փողոց : — Բաց ի ասոր ցեղուէ բազմաթիւ գիրքերէ, հայերէն տպածներն են . **Մեղրագետ** (Ռուբէն Զարդարեան), **Լուսաբերներու շարքը**, Արուսյակ (Ա. Իսահակեան), Պարսուածներ, Արձակ երգեր (Մաննիկ Պէրպէրեան), Բիւրղո-Հայ պատմութիւն, Բիւրանիա, Վերժին (Ճանք), Հին Աստուածներ (Ճանք), ևն. ևն. :



Մ. ՌԷՍԻՄՃԻ



ԱՏՈՄ ՇԱՀԷՆ

166. **Տպ. «Գասէր»**, Մօդա Թաշ, թիւ 16, հիմնուած 1909 Փետրուարին ՄԵՍՐՈՊ ՌԷՍԻՄՃԻի կողմէ' ԱՐԻՍ ՎԱՆԼԵԱՆի հետ ընկերովի : — Մեսրոպ ծնած է 1870ին Բերա : Հայ հռոմէական : Աշխատակցած է **Արամազդ**ի և հիմոց ի վեր տպարաններու և խմբագրատանց մէջ անցուցած իր կեանքը : Ամիսէ մը չափ այլ հրատարակած է **Գասէր** ամսաթերթին թիւրը' 1911ին կառավարութեան կողմէ դադրեցուցած : — «Գասէր»

տպարանն ալ տուած է բաւքերէնի ձեւին, հրատարակելով գիտութական բժշկական գիրքեր և հանդէսներ. — Ճաղ (հանդէս), Գրիգոր Օտեան, Զապէլ Եսայեանի Աւերակներուն մէջը (իրբեւ «Հրատարակչական» ի առաջին ու վերջին հրատարակութիւնը՝ փոխանակ տպագրատան անուան), ևայլն :

167. **Վահրամ Ս. Բիւրատ.**— Սմբատ Բիւրատի անդրանիկ որդի, 10 Օգոստ. 1886ին ծնած Զէյթունի Պողպայիր թաղը, երբ հայրը Միացեալի տնօրէն էր հոն: Զէյթունի մեծ հրդեհին՝ իրենց տունն ալ հրոյ ճարակ եղած, Բիւրատենք կը փոխադրուին Պոլիս, երբ Վահրամ 1½ տարու էր դեռ: Հայրը Սամաթիոյ Ազգ. վարժ.ի տնօրէն կարգուելով՝ հոն կը փոխադրուին, ուր 3 տարի մնալէ վերջ ծնողական վերադարձման ծնողքը կը ձերբակալուի և հայրը Մարաշ, ապա Հալէպ կը բանտուի 5 տարի, մինչեւ իր ազատ արձակումը՝ 1895ի ընդհ. ներման, և բնակեր Պոլիս հաստատուիլ: Վահրամ Պատրիքեայի Արամեանը կը յաճախէ երբ Պանքալթի Դէպքը կը պայթի և իրենք Եգիպտոս կը փախչին՝ ուր հայրենին հիմնած «Գանձրէ կեռը. կրթարան»ին մէջ կ'ստանայ նախնական կրթութիւնը: 4 տարի Գահիրէ մնալէ յետոյ կը փոխադրուին Աղեքսանդրիա ուր ուսումը կը լրացնէ «Էքոլ Սեն»: 1905ին Վենետիկ Մ. Ռափայէլեան վարժ.ը կ'ընդունուի եղբօրը հետ: Հոն քիչ ատեն կը մնայ և Աղեքսանդրիա դարձին՝ կ'աշխատի հօրը սեփական տպարանը: Վահրամ միջոց մըն ալ Պէօրէնեան գանուած է և Ռումանիոյ գիւղի մը տպարանին մէջ գրաշարութիւն բրած: — Սահմանադրութեան հռչակումին Պոլիս գալով կը հիմնէ **Ժամանակակից մատենաշար** անուամբ տուն մը՝ հրատարակելով Վեցարաւոր հերոսը, Զէյթունցի վարդապետը, Բանաք բամբ, Երկուշաբթի Սուսան, Դիւանագիտութեան, Ֆէրրէր, Երջանկութեան երկիրը, Դէպ ի Երկիրը, Խմատինկեց, Հայրենի ձայներ, Հրացանակիր քաջեան, Զէյթունի պատմութիւն, Անին ծախուեցաւ, Կարապետ, Թիպարար, Աւազակապետ, Արտաւազդը, Վաչէտուն, Տէմիր Մուշեան, Շաւենն ի Սիպիր, Զէյթունի վրէժը, Երկրորդ Պանդուխտ, Հայկական ընդհանուր պատմութիւն, Արևելի ճամբուն վրայ, (մեծամասնութիւնը հայրիկին հաստատուր վկայեր՝ պրակ առ պրակ): — Երիտասարդ այս տպագրիչ-հրատարակիչին տպարանը նախ Չէմպէրլի Թաշ էր, յետոյ յաջորդաբար փոխադրուած է Մօլա Թաշ, Սլաա Բազա (Բերա), ուր արեւն Պոլիս՝ Օրհանի պէյ խան, թիւ 25:



Վ. Ս. ԲԻՒՐԱՏ

168. **Հ(այկ) Թիրեաքեան** (= **Հրաչ**). — Ծնած է Տրապիզոն 1871ին: — Աստ Շանէն վերջ՝ արտագրիչ եղած է **Ազատամարտ** օրաթերթին և 10 Յուն. 1911 էն սկսեալ՝ նոյնին **Յաւելուածին**, նաև **Բազմինին**, իսկ այս տարի Օգոստոսին երբ «Ազատամարտ» փակուեցաւ՝ **Ատանայամարտ**ին և ապա **Բագինին**:— Հասցէ՝ Բերա, Համալ Պաշի, թիւ 76:— Հ. Թիրեաքեանի տպարանէն չայս ընծայուած են. — Հողային հարցը, Յրն. յեղափոխութիւն, Սարբերկեան Ռուսաստան, Արարիչ զինուորեան ուղեւ, Մի ժողովուրդ մեղադրական հասարակի վրայ, Ի՞նչ է դասակարգը, Կապուտիկը են.:— Գրաշարադաս՝ Օրմանեան Անտոն և Մարգարեան Միհրան:



Հ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

169. **Նշան-Գապիկեան** անուամբ ընկերովի գրատուն մը նախապէս բացող ՊԵՏՐՈՍ ՆՇԱՆԵԱՆ և ԱՐՇԱԿ ԳԱՊԻԿԵԱՆ (որոնք Եւրոպական գիրքերու և հանդէսներու ճիւղ մըն ալ ունին), 1910 ին տպարան մը կը հիմնեն Մօլա Թաղ, ուրկէ լոյս ընծայուածներն են՝ բացի դասագիրքերէ. — Պարոնեանի գործերը, Յուշարձան, Խաւարին ետեւէն, Բիւրանիա, Կիլիկեան արհաւիրք (1910), Ծաղկվար, Հայոց պատմութիւն (1911), **Յո՞ երթաս** (առաջին հատորը՝ Ռ. Սագայեան և Յ. Թէքէեան, երկրորդը՝ Գործակցական, երրորդը՝ Նշան-Գապիկեան տպագրութիւն), Ուր խեցիներ ժողվեցի (1912) են.: — Գրաշարապետ՝ Մկրտիչ Նահապետեան: — Պետրոս Նշանեան ծնած է Գարրալ 1880 ին, իսկ Արշակ Գապիկեան՝ Գիւրին 16 Հոկտեմբեր 1881 ին:



Պ. ՆՇԱՆԵԱՆ

170. **Մանուկ Յ. Գօչունեան.** — ծնած է Կիւրին 1851 ին. — Զանկին հետ Պօլիս առեւտրական գործով երկար ատեն պարապելէ վերջ՝ անցեալ տարի կը հիմնէ տպարան մը Մեծ Նոր խան, թիւ 45, լոյս ընծայելով «**Աստղ** Բեթղեհէմի» կրօնաբարոյական պարբերականն՝ իր խմբագրութեամբ, Պատմութեան փիլիսոփայութիւնը, Հոգւոյ խօսքեր, Աշխարհաբար **Եզնիկ**, Տաճար (տաճկերէն մասը), Հայրենի Տարեցոյց (1912) են.:



ՄԱՆՈՒԿ ԳՕՋՈՒՆԵԱՆ

171-187. *Travaux de Ville* խորագիրին տակ ուզեցինք խմբել հետագայ 17 հատ Հայու տպարանները որոնք Սահմանադրութենէն առաջ ու վերջը բացուած՝ գլխաւորաբար զբաղած են հրապարակի բազմազգեան մանր մունր գործերով, (տեղեկագիր, կանոնագիր, շրջաբերական, հրաւիրատոմս, մահազդ, թռուցիկ, նամակ, նամակագլուխ, պահարան, այցաքարտ են.): — ԳՐԱՄԵՔԵՆԱՅին (Machine à écrire) հնարմամբ՝ որուն հայատառն ալ յօրինուեցաւ վերջերս, առեւտրական և աշխարհիկ տպագրական գործեր քիչ շատ նուազած են ամենուրեք: ** Այս 17 հայ տպագրիչներէն առաջինն է — հնութեան կարգաւ — ՆԵՐՍԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ. ծնած է Պօլիս 1864 ին: Հրապարակի վրայ տպածոյի վաճառականութեամբ զբաղելէ վերջ՝ 1893 ին Ուզուն Չարշիի գլուխը բացած է տպարան մը զոր յաջորդաբար փոխադրած է Տիգրանեան, Աշըր էֆ. և Ճրնկըր օղլու խաները:




ԳՐԱՄԵՔԵՆԱՅ

** ՊԷՃԻՏԵԱՆ ԵՂԲԱՐՔ (Անտոն և Երուանդ, հայ հռոմէական), Ղալաթիա, Պիլլուր փողոց,

բիւ 2, հիմն. 1901 Յունիսին, տպագր. **Ամառնային տեղեկատու** (հանդէս), **Տեղեկագիր** և եկեամուտացոյց 1908 տարւոյ Ս. Յակոբայ Ազգ. Անկելանոցի, **Նազմ. կանոնագիր** Վ.աճառի Խնայողի. Ընկ.ման (1910): ** ՃՈՐՃԻ ՏԻՏՄԱՆԵԱՆ, Մօլա Թաշ, Ծանուցմանց տպագրութեան ալ առաջ: ** ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՏՊԱՐԱՆ, հիմն. 1910ին Սիրմաքեշի խան, **Մ. եւ Ն. Յովակիմեանէ**, որոնցմէ Մերոն վարիչն է, (իր հօրեղբօրորդիներուն՝ կայարի ձուլարանատէր Նորայր, Հայկ և Արամի հետ ընկերովի), ծնած 1886ին և վկայուած Մխիթ. Հայոց վրժրն. էն, տպագր. աշակերտը մտած 1905ին՝ միանալով Թէրզեան տպարանին որ կը վերածուի **Թէրզեան եւ Յովակիմեան Ընկ. եան** (Ղալաթիա, Բէրէքէթզադէ Բազար): — Առեւտր. Նոր Տպարանէն լոյս ընծայուած են «Գզոփի առածներ» և «Դաւաւի Տարեցոյցը» 1911: * ԹԷՐԶԵԱՆ ԵՒ ԸՆԿ., Ղալաթիա, Ճէնի Եօլ, տպարան-վիմագրատուն: ** ՕՆՆԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ, Մօլա Թաշ, վիմագրատուն: ** ՏՊ. «ԿԻԼԻԿԻԱ», Գէորգ Բարսեղեանի և գրաշարապետ Արամ Գիրազեանի, Մըսր խան: Հոն տպուած է Գրաշարաց ընկ.ան երկլեզուեան **Կանոնագիրն** ու քանի մը թիւ միայն շարունակուած **Ծիլիկիա** հանդէսը: — Այժմ փակուած: ** ՀՐԱՆՏ ԳԷՈՐԳԵԱՆ, Սկիւտարի: Նախապէս Նոր Նաւակատան եղած էր իր տպարանն ուրկէ լոյս ընծայած է Սկիւտարի ճեմարանին ուսման ծրագիրը, Թէոդիկի մէկ **երգը**՝ նոր Սուլթանին ձօնեալ: ** ԶԳՕՆ ՓԱՓԱԶԵԱՆ (Էգսամ խան), տպած է Արամ Անտոնեանի **Խորտակման** ու Մարտ 31ի Դէպքին նշանաւոր **իլալէները**: «Տիպ ու Տառ»ին գրաշար՝ Տիգրան Ցակոբի ընկերակցութեամբ պատ մը հրատարակած է **Ակիս** զաւեշտաթերթը, **Առաւօտ** օրաթերթը, Զինուորագրութեան կանոնագիրը են.: Նախապէս փորագրիչ, ցարդ նոյնպէս: ** ՅԱԿՈԲ ՔՕՉՕՒՆԵԱՆ, Մօլա Թաշ, վիմագիր Օ. Մոքսուեանի տպարանի: ** ԱՐՏԱՇ. Յ. ՏԻՏՄԱՆԵԱՆ, վաղեմի գրաշարապետ Արեւելքի, Մանզումէի, իսկ հիմայ՝ Ճէրիտէի: 1910ին Պապը Ալի տպարան մը կը կազմէ առանց մեքենայի, լոյս ընծայելով **Տանարի** քանի մը թիւերը, Ե. Արմէնի «Ազգ. Սահմանադրութիւն»ը, «Բոցեր ու խոցեր», Այսող Ծամնագարի գրքոյկները են.: Այժմ գոցուած: ** Մ. ԳԱԼՖԱՅՃԵԱՆ, ձրգալ օղլու եօգուշը: ** ՄԻՔ. ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆ, 2 եղբայր, այժմ գրաշար: Մօլա Թաշի իրենց տպարանէն լոյս ընծայած են **Փանիլա**, **Նայծ**, **Սոխակ** (հանդէս) և **Աւերակներուն մէջ** ը (որուն ձախակողմ վերջէն փակցուած պիտակ մը կայ «Տպ. Միքայել Տէր-Սահակեան», սակայն նոյն գիրքը ԳԱՏԷՐ տպարանէն լոյս ընծայուած է): ** ՅԱԿՈԲ ՀՕԼԱՍ, հայ ուսմկական: 1911ին առանց մեքենայի տպարան մը ունեցած է և լոյս ընծայած տառենալ մը «պռօշիւռ»ներ: Նոյն տարին գործը դադրեցնելով սկսած է գրաւոր գրաշարութեամբ: ** ՀՐԱՆՏ ԽՏՃԵԱՆ, Մօլա Թաշ, կը շարունակէ: ** ՅԱԿՈԲ ՔԷՃԻՃԵԱՆ, Բերա, Պէթար փողոց, թիւ 20: Տպագրիչը **Նոր Աշխարհ** թերթին որուն առաջին թիւը Թօփալեան տպարանէն լոյս տեսաւ 5 Մարտ 1912ին, կառավարական 509 ոսկւոյ նոր օրէնքին պաշտօնապէս յայտարարութենէն քանի մը ժամ առաջ: **Նայծ** ամսաթերթը, նաեւ Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան օրկան այդ գաղաթեալ կրօնքը 13 թիւէն սկսեալ տպուած է Յ. Քէչիչեանի կողմէ: — Գրաշարապետ Միրանիչ Նահապետեան: ** Ս(ԻՄՈՆ) ՕՀԱՆԵԱՆ ընկերակցով Յ. Թօփալեան տպարանի վաղեմի գրաշարապետ Հարեան Յրանցիի՝ այս տարի կը բանայ տպարան մը Ղալաթիա, Եիւքսէք Գալտըրըմ (Թէքքէ), Էսկի փողոց, թիւ 3, տպագրելով **Ուսանողաց** գաղղիական հանդէսն ու **Նախոս** երգիծաթերթը:

# ԳԱՒԱՌՆԵՐ

**ԻԶՄԻՐ** (Զմիւռնիա) առաջնութիւնը կը շահի Տաճկաստանի գաւառներուն մէջէն, 1676ին իր ունեցած ծնունդով հայ տպարանին համար՝ կոչուած

26դ. **Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի**. — Այս անուամբ բացուած տպարաններուն վիճակուեցաւ թիւով շատ առաջ՝ նախ 26Ա թուա-

համարով ի Լիվոռնօ (Իտալիա), ապա 26ը թուահամարով ի Պոլիս : — Ամսթերտամ (Հոլանտա), յետոյ Մարսիլիա (Ֆրանսա) քաղաքներուն վերապահելով անդրադառնալ համանուն տպարաններուն սկզբնական ընդուն և արկածալից գործունէութեանց, թանք բէ ասկէ 236 տարի առաջ Իզմիր գրուած հատորին անունն է Գիրք Մաշտոցի կարգաւորի «Արարողութիւնք համառօտ գործեան եկեղեցւոյ Հայաստանեայց, պարունակող երեանց գլխաւորաց խորհրդական սրբազնագործութեանց... արդեամբք և ծախիւք Աւետիսի և Սողոմոնի պաշտօնէութիւն» : Արդ, Աւետիս եղբայրն է մեծանուն տպագրիչ Ոսկան վարդապետի, իսկ Սողոմոն՝ Ոսկանի քեռորդին և տպարանին ժառանգորդը : — Բանանք հիմայ այս Մաշտոցին յիշատակարանը. տպագրողը եղած է ՄԿՐՏԻՉ անուն մէկը՝ Ջուղայեցի Ոսկեկուբնեց Տէր Դաւիթի օգնութեամբ ու Եւդոկիացի գրավաճառ Խաչատուրի աջակցութեամբ : Դարձեալ, «սրեն հատատութեան գործարանին» Մանասացի Ղազարի որդի Մհտ. Պողոս և իր զաւակը՝ Յովհ Ձելէպի : — ՄԿՐՏԻՉ շատ հաւանական է որ Ոսկանի գրաշարներէն մին ըլլայ, (քանի որ իր Յիշատակարանը մէջբերում մը ունի ԹԱԴԷՈՍ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆի անուան՝ չորեց յորջորջուած, ընկերներուն հասցուցած վնասուց և անոր բանտարկութեանց ակնարկութեամբ), որ Մարսիլիայէն Իզմիր անցած է՝ հետ իր գլխուն տպագրութեամբ պարապելու : — Ոսկանի պատրաստած խումբը չէ՞ր արդեօք որ Մարսիլիայի մէջ ցրուեցաւ, մէկ մասը Լիվոռնօ անցնելով և 1670-1702 գիրքեր տպելով, քար գոյութեան Թադէոս Համազասպեանն ալ Վենետիկ տպարանելով և 1686 էն նոր գործելով : — Մկրտիչէ վերջ 83 տարի Հայոց տպարան գոյութիւն չէ ունեցած Իզմիրի մէջ : — Յետոյ կու գայ


ԳԻՐՔ ՄԱՇՏՈՑ
[illegible]
Արարողութիւնք համապարզոտեան եկեղեցւոյ հայաստանեայց. Պարունակող եօթեանց գլխաւորաց խորհրդական սրբազնագործութեանց, և այլոց մանաւորաց պաշտամանց հաստատեցելոց ՚ի հնագունից հարցն սրբոց առ ՚ի լրումն հոգեկանին հարկաւորութեան. և մարմնականին պիտանացութեան. առ հանդարտեալ օժանդակութեամբ հոգւոյն սրբոյ.

Տպագրեցաւ ի տպարանի տէր [illegible]

Ի հայրապետութեան Տեառն Յակոբայ ամենայն հայոց կաթողիկոսի. Արդեամբք և ծախիւք Աւետիսի և Սողոմոնի պաշտօնէութիւն.

Ի ԶՄԻՒՌՆԻԱ.

Ի թուիս փրկչին. 1676. Իսկ ըստ հայոց. ՌՃԻԵ.

1676ԻՆ ԻԶՄԻՐ ՏՊՈՒԱԾ ՄԱՇՏՈՑԻՆ ՃԱԿԱՏԸ

189. **Մանուկի Մարկոս,** հաւանաբար Ամստերտամի տպարանին աշխատաւորներէն, որ Իզմիր գալով՝ 1759 ին տպած է **Մեկնութիւն ժամակարգութեան**. 1761 ին **Խորհրդատետր** սրբոյ. պատարագի արարողութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, 1762 ին՝ Գիրք ընդդիմութեանց **Եզնկայ Կողբացւոյ** : — Մհտ. Մարկոսի տպարանը հաստատել տուողը եղած է անդրանիկ առաջնորդ՝ Աստապատցի Աբրահամ եպիսկոպոս :

190. **Տպ. Մարդասիրական Ընկերութեան Ամերիկացւոց.** — Մալթայէն Իզմիր փոխադրուած բողոքական Միսիոնարներու տպարանն է ասիկա, որ 1835 ին տպած է **Քերականութիւն անգղ. եւ հայ.**, իսկ յաջորդ տարին՝ **Այբէն** «կամ առաջին կարդալու գիրք» : — Հաստատումէն քանի մը տարի յետոյ կը վերածուի անհատական ձեռնարկի, անցնելով Հ. ՀԱԼԼՕՔի, ապա Գ. ԿՐԻՖՖԻԹի, որոնք (մանաւանդ վերջինս) հրապարակը կ'ողողեն հաւատաքիւռ. գիրքերով, մեծ մասամբ աշխարհաբար :

Թուրքիոյ գաւառներուն մէջ գոյութիւն ունեցող հայ տպարաններու այս խմբումը պատրաստած պահուս՝ չեմ կրնար անյիշատակ անցնիլ ԲԱԼՕԻի **Բաղդասարեան Ս. Աճամի** վանուց վրայէն, ուր Միրտիչ եպսկ. հաստատած էր վիմագրատուն-տպարան մը, որ լոյս ընծայած է հանի մը բանուգիկ եւ ԱՐԵՒԻԱՆ թերթը: Գրաւարապես էր հոն + Տիգր. Մանավեան : Հին «Մասիս»ներու մէջ յայտարարութիւն մը կայ այս մասին: — * * ԻԶՄԻՐի տպարաններու նկատմամբ այս տարի իրենց տեղեկութիւնները պարգեւեցին Մ. Նուպարեան (հարեւանցիկ նօթերով «Հայ գրականութիւն» հանդէսին մէջ) եւ Թ. Ճերմակեան (պզնաքիս մանրամասնութիւններով եւ հեղուկներով «Աւետաբեր» լրագիրին մէջ) :

191. **Հօմըն Հալլօք** ✦ — Տպած է Աւետարան, Դաւանութիւնք Պաղպաքիի Հրէի, Նոր Կտակարան, Հնգարան, Հնգարան նոր կարգով և գլուխն ձամբով կարգալ սորվե-լու համար, Զբօսարան մանկանց հոգևոր տաղերու և խրատներու, Բանալի ընթերցանու-թեան, Կանոնք ... իմաստակարծութեան, Վարք Նահապետաց և Մարգարէից, ձրագ հոգւոյ, (բոլորն ալ 1838 ին). Իսկ 1839 Յունվար 1 ին կ'սկսի հրատարակել **Շտեմարան պիտանի գիտելեաց** ամսաթերթը զոր ապա Գրիֆիթի յանձնած է:

192. **Կուլիէլմոս Գրիֆիթ** ✦ — Իզմիր՝ գործի փառաւորեալ նախանձու գերդաստանէն: Տպած է Առաջնորդ ծննդեան, Կերակուր քրիստոնէից, Մանկավարժ, Վար-դապետ քրիստոնէից (1838), Աղաչաւորացայց (1839), **Շտեմարան** պիտանի գիտելեաց, 6 հա-տոր (1839-45, հանդերձ պատկ. որ 1843 ին միայն ընդմիջում կրած է), Դիւզի եկեղեցւոյ, Մայր որդեխնամ, Մովսէսին պէշ քիթապը (1840), Անհատականութեան դէմ, Աստղաբաշխութիւն համառօտ, Խաչնարածին աշխարհ Եղիսաբեթին երջանիկ մահը, Մարխամին պատմութիւնը, Սաղմոս (գրբ.), Բարոզ ընդհ. աշխարհի, Անոր Արիք (1841), Առաջնորդ փրկութեան, Դա-լու աշխարհ, Երկինքին մէջի ուրախութիւնը, Երկու գառնուկներուն պատմութիւն, Ի՞նչ է Բուսի հաւատքը, Յայտարարութիւն քրիստ. ուսմանց, Յովսէփին պատմութիւնը, Նոր Կտակա-րան (աշխ. և գրբ.), Ճան ըէֆիրչի, Պիր Խնձիկ փազը օկանգարըն նազիլէլի (1842), Խրձմբ-տանքին 5 գէրքերը, Սաղմոս (աշխ. և արաբատառ), Վարք նահապետաց պատկ., Քրիս-տինոսին և Քրիստինէին ձամբորդութիւնը՝ ան աշխարհէս հանդերձեալ աշխարհը երազի ձե-ւով, պատկ., Բնական Աստուածութիւն (տճկ.), Եէնի Անա, Թէվրէ իւգէրինէ, Խայրը սաէյ-լէր, Մեզամիր եախօտ Սաղմոս (1843), Անուան մեղաց, Այբբենարան և Հնգարան, Դաւանու-թիւնք Նոր Իսրայէլի մը, Երեք խօսակցութիւնք փրկութեան ձամբուն վրայով, Հոգեշահ մտա-ծութիւնք, Մեղքը խաղալիք չէ, Մարին մշակութիւնը, Իրիկուայ սիւալէր, Աստուածշուն օգնականը պօրձ վէ Ալլահտան խնամ օստագուն Ալիզ Քիրաղլարտան վէ հայրապետներտէն չեմաէլէր, Բարեպաշտութիւն (տճկ.), Մարխամ աարմաս պիր քիւչիւք գըզըն նազիլէլի, Պիւբլիան ալէմէ պիր քարոզ, Տիմին ըէմէլլի պօրձլարընըն կենձ քրիստոնեայէ բարիֆի (1844), Աստուածական վարդապետութիւն, Ընտանի խօսակցութիւններ (անգղ. հայ. յուն. գաղ.), Ճառ. Մկրտութեան, Դափնաստ նամ հէքիմին նազիլէլի, Էչքի իւգէրինէ (որուն Բ. տպագր 5 տարի վերջ), Կիրակի կիւնի, Կիւճան վէ խէչաս իւգէրինէ միւքեալիմէլէր, Հայրապետներին քիրապ-լարը ալին միւձառէլէլէրինտէ ֆայխալէրի իւգէրինէ պիր բէայն, Փախանըն խաախայէլի (1845), Աւետարանական քարոզութիւնք, բարեգործութեան օգուտը, Համառօտ Եբրայեցւոց բառ ած քրիստոնէից գործածած հաւատոյ դաւանութեանց և քրիստոնէականաց, Պատասխան Աւետ. քրիստոնէից դէմ հրատարակուած Ս. յայտարարութեան, Պատասխան «Հաղորդութեան ճառ.»ին Ս. տետրակին, Պատմութիւն ԺԶ. դարու բարեկարգութեան որ ի Գերմանիա, (պատկ., Բ. հա-տորը՝ 2 տարի վերջ), Քրիստ. վարդապետութիւն (1846), Անգղ. քերականութիւն, Աղացոյց քրիստ. հաւատոյ, **Աստուածոյ** [աշխարհագրական առաջին տպագրութիւնը, սակաւ ալիւ, 4 հա-տոր, որ նոյնքան տարի տևած է, բարգմանուած Անդրէաս Փափազեան յայտնի վարժապե-տին կողմէ՝ հայագէտ Էլիաս Րիկզ ամերիկ. միսիոնարին օգնութեամբ], Կանոն հաւատոյ, Մովսէսին 5 գիրքը, Աւետարանական քարոզչար, Խաչին, Նոր Կտակարանին Աշխարհ իւ-համը իւէ վէրիմին օստագունտ խապարլար (1847), **Համարարան** «կամ Յանկ նմանաձայն բառից Նորոյ Կտակարանի» աշխարհակ, Պապականք և Բողոքականք, Իշք մէրըէլ քիրապը, Մէձմայի միւֆիտ, Քրիստիան բաղխարը (նոյնին յաւելուածն ալ), Քրիստիան քիւխէնին բէ-վարիխի (1848), Համառօտ վկայութեանց Ս. Գրոց, ձրագ հոգւոյ, Նոր Կտակարան վկայու-թիւններով, Բուհանի միւքեալիմէ, Քրիստիան տինինտէ այն ու աաէրլէրին գունուրա (1849), Էշմիլէր (1850), Հոգևոր երգեր, Երաժշտ. եղանակներ, Յանխաան, Աղիքիք, Ախուէր (ան-թուական): — Գրիֆիթ 1850 ին լոյս ընծայած է «**Ցուցակ** հայերէն և տաճկերէն գրեանց որ կը գտնուին Բողոքականներուն գրատուներ ի Պոլիս և ի Զմիւռնիա». այդ ցուցակէն էր որ խմբեցինք վերոյիշեալները, դուրս ձգելով միսիոնարներու 1840-4 **Մալթայի** և 1846-50 **Կ. Պոլսի** տպագրութիւնները: 16 էջնոց նոյն Ցուցակին վերջին երեսը ծանուցուած են ընդ մամուլ 10 գիրք ևս, որոնցմէ յիշենք «Առաջնորդ Աւետ. Եկեղեցւոյ անդամներուն», «Իմա-ցական Փիլիսոփայութեան», «Հոգւոյն Սրբոյ գործը», «Քրիստ. Աստուածութեան», ևն.: — Նոյն

տպարանէն լոյս ընծայուած գիրքերէն մէջ ծանօթ են նաև «Հերքումն մոլար գրութեան», «Աստուածպաշտութիւն» 1852:

193. **Ստեփանոս Պապօեանց**, հայրենասէր կալուածատէր-վաճառական, որ 1840ին Տէրվիշ օղլու խանին մէջ տպարան մը կը բանայ ու իր հոգածութեամբ 10 Օգոստոսին կ'սկսի հրատարակել **Արշալոյս Արարատեան** մինչև 1844, երբ իր և ընկերին մէջ

194. **Ղուկաս Պալթազարեանի** միջև համաձայնութիւն մը ծագելով, վերջինս Պապօեանցի հոգածութիւնը կը չէ ու իր անունով կը փոխանցէ տպարանը, հոն տպելով միևնոյն թերթը 20 Մայիս 1844էն սկսեալ: Տպարան ու տառեր կը փճանան 1845ի հրդեհին, և «Արշալոյս Արարատեան» առանց ընդմիջումի կ'սկսի հրատարակուիլ

195. **Մեսրոպեան Վարժարանի Տպարանը**, որուն մամուլն ու կազմածքը 1... նուիրուած էր Թրիէսթի ընկեր † Եուստինիանոս Պետրոս (1773-1846) որ մեծ ա-ռատաձեռ...ութիւններ ալ ըրած է Իզմիրի բարենպատակ հաստատութեանց: Մեսրոպեան տպարանը 1841ին լոյս ընծայած է մեծանուն վարժապետ-քահանայ Միրզա Յովհ. Վանանդեցիի **Ոսկի դար Հայաստանին** որուն յառաջաբանէն կը քաղենք սա ուշագրաւ հատուածը. — «Ոսկի դարն Հայաստանի գրեթէ յետին էր, յորում զանմեղութիւն նախահարցն դարուն գե-«ղեցիկ նկարագրեաց' հատուածն. . . Եթէ նախկին խանձարուրք կրթութեանն այնմիկ Հա-«յաստան եղեւ, որ անկեալ գրախտն ի բանկութիւն նախածնողին բանկութեան: Բայց աւա՜ղ «գերադարձոյս. զի տիրանտուէր կոչումն նորին յետոյն հաստարակաց, չարժանացաւ գովանի «առնս զապաշխարութիւն նորին տեսանել»: — Դարձեալ, 1843ին հոն տպուած են Փենելոնի **Արկածք Արիստոնոսի** (թրգմ. Գ. Հմայեակ Կոստանդեան), **Ատալա** (թրգմ. Հ. Տ. Սամուէլեանի), **Սենեկա**, 1842ին **Խորհրդածութիւնք** չորրեաց և ուշանաց և խորհրդոց քրիստ. Մ. Եկեղեցւոյ, **Տրամաբանութիւն** (թրգմ. նոյն), **Հարիւր բարոյ. առակներ** (1844): — Դառնալով **Արշալոյսի**, անկցանենք թէ տիրոջը մահէն վերջն ալ Յր. Ակնաճեանի խմբագրութեամբ շարունակուած է այս թերթը զոր կառավարութիւնը դադրեցուց 1886ին (*):

196. **Թաղիկեան**, վիմագրատուն-տպարան, ըստ Մ. Նուպարեանի' 1840էն առաջ հիմնուած Պօղոս Թաղիկեանէ, որուն կը յաջորդէ եղբայրը Պետրոս: Ասոնց մահուանէ, հիմայ երկու քեռորդիները կը շարունակեն միևնոյն գործը, գրաւելով առևտրական բազմա-ցեղեան գործերով: Տպած են «Մրագիր ուսմանց Զմիւռնիոյ վիճակին» 1892, «Տեղեկագիր հայ ընթերցարանին» 1894-5, «Մանչերն և մեծերն» ևն.:

197. **Տպ. Արարածունեաց**. — 1 Մարտ 1843ին Խաչատուր Յ. Մելիք-սեդեկեանէ, Պապօ Պապիկ և Մհտ. Գէորգ Մհտ. Խաչիկեանէ կազմուած հանրանուն Ընկ.ք Քալթակճի Վէզիր խանին մէջ կը հիմնէ տպարան մը ուրկէ 28 Մայիս 1843ին լոյս կ'ընծայէ **Հայրենասէր** թերթը' դադրած 1846ին: — Թերթին սկզբնաւորութեան ատենը' հոն տպագրուած է նաև «Համառօտութիւն ազգասիրական սիրագործութեանց Տեառն Ներսէսի նորընտիր Հայրա-պետի Ամենայն Հայոց»: — Այսու հետև ընկերութիւնը լուծուած է:

198. "**Յատմանեան Տպարաններ**" կը կոչէ Մ. Նուպարեան 1850ական և 60ական թուականներուն' առներու մէջ հիմնուած այն մանր մունր տպարանական ձեռնարկ-ները զորս Անդրէաս վարժարանի աշակերտները կատարած են' հոսկէ հոնկէ իրենց ձեռք ձգած Արամեան տառերով և փայտաշինուած յառաջ մամլակներով (presse) լոյս ընծայե-լով մանրադիտական հանդէսներ որոնցմէ կը յիշէ խոր Մեսրոպեան ամանց **Բողբոջ** թերթիկը:

199. **Տէոտէեան Կղզայր**. — ՅԱՐՈՒԹԻՒՆ ծնած է Իզմիր 10 Մարտ 1832ին: Նախ. կրթ. առուգած Մեսրոպեան դպրոցը: Պզտիկուց սիրահար տպագր. արուեստի'

(*) Ինչ որ այլ բանի, անուրանալի է որ Իզմիրի Հայոց մտաւոր զարգացման գրական ազդակ մը հանդիսացած է Բողոքականաց **Ճեմարան** պաշտօնալից ուսանողներ ..., որոնք յետոյ այլ եւս արծարծած կ'երևին ընթերցասէր ուրեմն եռանդը տեղացի ազգայնոց որոնք յաջորդաբար կ'ունենան զանազան թերթեր: Եսկ 1843ին Տիգրան Սամվալեան, Արամ Տէտէեան եւ Մարտիրոս Այվազեան ուսումնական կը կազմեն հրատարակչական մը: Ուր ուրեմն Տէտէեանք կը սադմենեն Իզմիրի Հայոց Ոսկեդարը:

կ'աջողի իրագործել իր խնդիրը, 1851ին հիմնելով Հայոց թաղին մէջ տպարան մը՝ արտօնագիրով եւ քաղքենիներու օժանդակութեան շնորհիւ: Տառերը հայթայթուած են Վենետիկէն, Վիեննայէն ու Պոլիսէն (Միւհէնտիսեան): — Յաջորդին ուզելով լաւ ձօնացնել իր գործառնութիւնը՝ կ'ուղեւորի Փարիզ. կը գնէ մամուլ եւ նորաձոյլ տառեր, աջակից ունենալով ԿԱՐԱՊԵՏ [քաջ տառամարագէտ, լեզուագէտ եւ յօդուածագիր **Արշալոյսի** եւ **Արփիի**] ու ՍԱՐԳԻՍ իր հարազատները: — 1853ին կ'սկսի հրատարակել «Արփի Արարատեան»ը որ կը տեւէ մինչեւ 1856 Յուլ.: — Այնուհետեւ Իզմիրի, Պոլսոյ եւ արտասահմանի գրավաճառական հրատարակները տարինե՛ր ողողած է բազմօրինակ հատորներով (Ֆրնս. բ[illegible]ն Հայր մատենադարանը մղած վիպասանութեան — Տպագրական այս ընդունած գործունէութիւնը դադրած է իր մահով (25 Դեկտ. 1868): — Եղբայրները սակայն մինչեւ **1893** շարունակած են հանգուցեալին թողած տպարանը, լոյս ընծայելով նորագոյն հատորներ: — Անուանի Տէտէեան Եղբարց տպագրութիւնք՝ որոնց հեղինակներն ու թարգմանիչները եղած են Հ. Յ., Ա. Կ. եւ Տ. Յ. Տէտէեանք, Գ. Մսերեան, Մ. Մամուրեան (Վրոյր), Գ. Պասկանեան, Մ. Նուպարեան, Գր. Չիլինկիրեան, Ս. Միրզայեան, Գ. Պալըքի, Ա. Գ. Կոստանդեան եւայլք, մեծամասնութեամբ Իզմիրցի յայտնի մատուրականք. — Ագահն, Ալամայ բժիշկ, Աղօթագիրք(եր), Ամուրիի մը երազները, Անիծեալն, Անուշաւան, Աշխարհի շրջանն, Ապստամբարան սիրոյ, Արեւելեան Մամուլ, Գաղտնիք Բարիզի, Ռաշինէկրրն, Դատաւէրք, Դրախտարան, Երեք հրացանակիրք, Եղիշէ, Երկաթուրութիւնք Պարոնիզզանեանի եւ Միրզայեանի, 12 կեսարաց պատմութիւն, Ջաւան եւ Փառնակ, Բարոյախօսութիւն, Թշուառներ, Ժօզէֆ Պալսամօ, Լ. Պօրճիա, Խորհրդաւոր կղզի, Կրացիէլլա, 1001 գիշերներ, Հայկական նամականի, Հեռվինճի երդումը, Հռոմայ արարողութիւնք, Մարիա, Մաճ Պարէսի, Մանօն Լէսքօ, Մարդ, Մարիօն Տըլօրմի խոստովանանքը, Միրզայ եւ Աննա, Միքքօ մեղաւ, Մօնթէ Քրիսթօ, Նարեկ, Նեռասհար աղաւնի, Նօթրտամ Բարիզի, Ուղղք գրախտութեան, Պարոյր, Ռաֆայէլ, Վէրթէր, Տօմարականութիւն, Տօրա, Փարիզն յԱմերիկա, 20 տարի ետքը, Օմ. Պատմութիւն, Անգղ. նամականի են. են. եւ շատ մը դասագիրքեր: — Հասցէներ. 96 կամ 50, Բէշխանէ ճանապի: — 67, Պզտիկ Վէզիր խան:



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

200. **Տէր Կրթոնեա**, տպարանատէր եւ հրատարակիչ **Թուրքա Հայկազեան** թերթի (1854-5):

201. **Գրիգոր Մսերեան**. — ծնած է Իզմիր 1846ին: Աշակերտած Մեսրոպեանի եւ Միխիթարեանց: Կանուխէն կ'իջնէ գործի ասպարէզը, բայց աւելի մատուցական գրաղման կոչում ունեցող անձ՝ մեծապէս կը ծախսէ երաշխական գիրքերու համար, եւ ըլլալով առեւտուրը՝ կ'սկսի գրավաճառութեան (քանի մը թարգմանութիւն եւ հեղինակութիւն): — Տէտէեանի տպագրական գործունէութեան շրջանին, 1878ին տպարան մը հիմնած է քանի մը համախոհներու հետ եւ հրատարակել սկսած իր իսկ խմբագրութեամբ **Մէտէօրա** հանդէսը զոր 1881ին դադրեցու-



ԳՐ. ՄՍԵՐԵԱՆ

ցած է և ճամբորդած Եւրոպա։ Աշխատակցած է նաև «Արեւելեան Մամուլ»ի, **Սիւնի ծաղ-կանոնով**, աշխարհաբարի պայքարին ատեն։ Համիտեան Ռէժիմը կասկածելով իր բուն հայ-րենասէրի ձգտումներուն համար, փակած է նոյն տպա-րանը։ — Մեռեան մեռած է 1883ին երկարատեւ հասա-կին մէջ ի Գուռուչեսմէ։ — Բաց ի «Մեղուայէն» տպա-գրած է Դիցաբանութիւն, Վարդ և սոխակ, Ընկերցա-րան, Ուսումնական առանձնախօսութիւն մը, Ողջախոհն Արայ։



Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

202. **Մատթէոս Մամուրեան** . — Ծնած է Իզմիր 1830ին և մեռած անդ՝ 2 Յունուար 1901ին։ — Այս նշանաւոր գրագէտին, կարող հրապա-րակագիրին և ազգային գործիչին ընդարձակ կենսագրու-թիւնը տե՛ս «Ամենուն Տարեցոյցը» 1911։ — Մամուրեան **1883**ին իր սեփական տպարանը կ'ունենայ ուրկէ կ'սկսի լոյս ընծայել շարունակութիւնն իր **Արեւելեան Մա-մուլ** հանդէսին, **Ուղեւորութիւն ի Ն. Պօլիս** (Գ. Չի-լինկիրեան) 1883, **Կարապի Երգը** (1888), **Տանտոր-եան, Մահարձան** (1898) են.։

203. **Մ. Մամուրեան Որդի** . — Մատթէոսի երեց զաւակն է Հրանտ, որ շարունակած է հօրը հիմնած թերթը՝ մինչև 1909 անընդմիջաբար, իբր շաբաթաթերթ, յետոյ **Եռամսեայ** ձե-ւով։ — Իր տպարանէն լոյս ընծայուած են Կատակերգ.ք Մօլիէռի (1905), Դէպ ի Բեւեռ (1906), Արձագանգ (թերթ), Դաշինք (3 Օգոստոս 1909էն սկսեալ առօրեայ), Մագնիսական փորձեր (1909), Բայ-քայում (1910), Լառօշ Ֆուքոյի բարոյ. առածները (1912) են.։



ՀՐԱՆՏ ՄԱՄՈՒՐԵԱՆ

204. **Բարսեղ Քէչիչեան** . — Ծնած է Թալաս 1870ին։ Նախնական կրթութիւնը առած ծննդավայրին ազգային և Կեսարիոյ Ֆրանսական վարժարաններուն մէջ, ապա Պէրպէրեան՝ ուրկէ շրջա-նաւարտ։ 1900ին Եւրոպա մեկնած է բժշկութեան զոր հիւանդութեան հե-տեւանօք դադրեցուցած է։— 1905ին կը հաստատուի Իզմիր. հոն կը հիմնէ տպարան մը ուրկէ 20 Հոկտեմբեր 1907ին լոյս կ'ընծայէ **Արշալոյս** օրաթերթը։— Եղերական մահով մը կնքած է մահկանացուն 1 Յունուար 1909ին անդ։— Իր եղբայրը Տ. Քէչիչեան կը շարունակէ ցարդ նոյն տպարանը, հրատարակելով հետեւեալները. — Մի-մոս, Մունետիկ, Փերակ, Աշխատանք (10 Յուլիս 1910ին սկսեալ), Հայ գրականութիւն (1 Յուլիս 1911էն), Երկու դի-ցազունք, Կանոնագիր Հայ որսորդաց ակումբի, Երգարան Հա-յաստան, Մարդը մարդուն գայլ, Կոյսի մը վիշտը, Յառաջ, Ոչ-Իսլամ օսմ. զինուորներու զինուորագրութեան կանոնագիրը, Համաչափք, Մարդկային պարտականութիւններ, Ուժ, իրա-ւունք և արդարութիւն, Ուղեւորական նօթեր, Դէր, Մարդը։ — Հասցէ՝ Փէշթիմալճըլար, Խամամ փողոց, թիւ 87։



† Բ. ՔԷՉԻՉԵԱՆ

205. **Օսմանիէ** տպարանէն լոյս ընծայուած է «Տեղեկագիր հայ ընկերցարանի»։

**ԿԻՐԱՍՈՆ** քաղաքը Թուրքիոյ գաւառներէն Բ.ը կու գայ, ուր 1832ին հայկական տպարան մը կը հիմնուի

206. **Առաքելական Աթոռոյ Սրբ. Յակոբեանց** տպարան, որ կոչուած է նաև ԹԱԳԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ ՏԵԱՌՆ ԵՂԲՕՐ կամ Ս. ԱԹՈՌՈՅՆ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ ԱՐԴԱՐ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ։ Այս տպարանը հաստատուած է Կ. Պոլսոյ նախկին պատր. Ա. Պոլսեցի Պօղոսի ձեռամբ որ 1828-38 կառավարած է Երուսաղէմը «Ծայրագոյն կառավարիչ» տիտղոսով։ Բուն գաղափարը՝ Նիկոմիդացի Գաբրիէլ պատր. այդ տարիներուն հոնկէ հեռացուցուած՝ կը վարէր Իզմիրի առաջնորդութիւնը։ — Տպարանը գործունէութեան փայլուն շրջան մը բոլորած է Եսայի պատրիարքի օրով, մանաւանդ անոր պաշտօնավարութեան Ա. տասնամեակին (1865—75)։ Այս արուեստագէտ պատրիարքին արեւմտակարգութեան, գաղութանածուլման և գունաւոր պատկերներու ճիւղեր ալ աւելցուցած է՝ որոնք լրումի պատրաստուած են իրմէ յետոյ։ Իր մահէն վերջ նախկին գործունէութիւնը չէ կրցած շարունակել այս տպարանը որուն կարծես մենաշնորհը դարձած է միայն եկեղ. գրեանց տպագրութիւնը։ — Վանքին այս վաղեմի գործատունը նախ կը գտնուէր 1727ին կառուցուած՝ հին տպարանի բազում գիրքեր պարունակող Մատենադարանի շէնքին մէջ. բաւական ժամանակ վերջ մամուլն ու տառերն այլուր փոխադրուած են. հիմայ կը գտնուի վանքին շրջափակին մէջ՝ Ս. Յակոբայ եկեղեցիին հարաւակողմը, որ առեւոք ուխտաւորի ուղեւորու և ձիանին յատկացուած մեծ ախոռ մըն էր և որուն վրայի յարկը կը գրաւեն ուխտաւորաց սենեակները։ — Ե. Տնտեսեան, յայտնի ազգ. գործիչն ու տպագրիչը 1867-8 երկիցս Երուսաղէմ հրաւիրուելով գացած է իբր անօրէն նոյն տպարանին և ուսուցիչ երգեցողութեան։ — 1865ին Եսայի պատր. Պօլիս գալուն Յ. Միւհէնտիսեանէ գնած է անոր մայր-տառերը զորս տարած է վանք։ Ս. Յակոբեանց այս գործատան անդրանիկ բարերարը եղած է Եւստաթեան Պետրոս որ նշանաւոր մեկենաս մըն էր արդէն, օժանդակած ըլլալով Վենետիկի Մխիթարեանց և Զմիւռնիոյ Հայոց։ Յետոյ կու գան † Յակոբ Աշըգեան և Պօլսոյ Ներսէսեանք։ Առաջինը Սալիմայ վանուց կտակած գումարով իր անձնական կալուածոց տարեկան արդիւնքին 10%ը (տարեկան շուրջ 3000 դրշ.) յատկացուցած է տպարանին, ի յիշատակ իր ազգասէրին՝ դասագիրքերու հրատարակութեան համար։ Իսկ 1891ին, երբ Խրիմեան հայրիկ աքսոր էր հոն, Ներսէսեանք անոր առաջարկութեամբ նուիրած են արագատիպ անուադարձ մամուլ մը՝ «Համաբարբառ»ի տպագրութեան համար։ Գտնուած են երկրորդական ստացորդներ ալ, որոնցմէ՝ հնդկահայ Սեր Արգարեան «Միխայէլ Ասորի»ի Բ. տիպին և Աբրահամ Բաշա Բարրող ու Պօղոս Պէյ Աշըգեան «Երուսաղէմի պատմութեան» ծախքերը հոգացած են։ — Երուսաղէմի այս տպարանն օրացոյցին ճակատը 75ամեակը կը ծանուցանէ նոյն տպարանին (1837-1912), ինչ որ բացարձակապէս սխալ է, քանի որ **1833** Յնվր. 1ին հոնկէ լոյս ընծայուած անդրանիկ գիրքն է — մեր պրպտումներուն համեմատ — **Տեառն աղօթամատոյց վասն ջերմեռանդ աղօթասիրաց**։ Իսկ այնուհետեւ մինչեւ այսօր հոն տպագրուածներն են. — Տետրին Անբառամ ծաղիկ մեծացուցէին (1834), Մեկնութիւն «Հայր մեր»ի (1836), Թափորի տետրակ (3 տարբեր անգամներ), Պէշ տէճր ֆիքրի, Տետրակ զովեստի (հայ. և տաճկ.), Ցուցակ Ս. Յարութեան տաճարի հանդիսաւոր արարողութեանց (1839), Խորհրդածութիւն Ս. Պատարագի (1842), Մաշտոց կանոնաց Մկրտութեան (1843), Բառարան «Զանազանութիւն» գրքի արար. և պրսկ. բառերու (1844), Յովսէփ Գեղեցիկ (1849), **Մեկնութիւն թղթոյն Պօղոսի** (1850), Երեւոյթ կրից (1851), Հայելի վիրաց, Տարերք իմաստասիրութեան (1852), Մեկնութիւն յարութեան, Կոնակագիր հոգեշահ բանից (1853), Տրամաբանութիւն (Գր. Փէշտմալճեան), Բացատրութիւն հրաժարման և զղջման (1854), Տեղագրութիւն Երուսաղէմի (թրգմ. Զամուրճեան) 1855, Մատենագրութիւն նախնեաց (Նարեկացւոյն և Վարդան Վրդ.ի ճառ.ք) 1856, Ուսումն բարուց (թրգմ.) 1857, **Ստորագրութիւն Երուսաղէմի** (1859), Ճառ. հաղորդութեան, Պատասխանիք Մխիթ. քհնյ. Սկեւռացւոյ (1860), **Ժամանակագրութիւն Միխ. Ասորւոյ** (1860, իսկ Բ. տիպը 1871), Հերքումն անիրաւ զրպարտութեանց և **ադեռ** առ. ընդհ. Ազգ. ժողով



ԵՍԱՅԻ ՊԱՏՐ. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

(նաեւ նոյնին Բաղդր) 1861, **Զանազանութիւն հինգ դարուց** (1862), Մեծն Ներսէս (ողբերգ) 1863, Եղիշէ, Պատասխանի ընդդէմ տետրակի Հ. Ռ. Պօչէլեի (1865), **Օրացոյց** (1866-1912), **Սիոն** (ամսաթերթ՝ յաջորդական խմբագրութեամբ Տիգրան Հ. Թ. Սաւալանեանցի, Մելքիսեդեկ Վարդապետ Մուրատեանի, Կիւրեղ Վարդապետ Սրապեանի և Դարբնիկ սարկաւագ Խապայեանի) 1866-77, Աղօթագիրք, Գործ ոսկեղինիկ (Սամուէլ Ռաբբի), Ճառք դպրոցականք, **Պատմ. Հայոց** (Յովհ. Կաթող.), Նոր Կտակարան, Պատմ. Ս. Գրոց (Ե. Տմեանեան), Տեսչութեան հովուական, Question sur la propriété du couvent de St. Jacques à Jérusalem (1867). Ճաշու Աւետ., Նոր նախագիտելիք, **Պետրոս Եղեսացի**, Ճարտասանութիւն (Ե. Մուրատեան), Նարեկ (միջակ տառերով, խել 97 ին՝ մանրատառ.), Սաղմոս (5 տարբեր անգամներ), Գործոց (երկիցս), Տօնացոյց (1868), Անուրջ ի Սիոն, Թուաբանութիւն, Կենսագր. Փափկալայ, **Մատթէոս Ուռհայեցի.** Տրամաբանութիւն, Քերականութ. Գաղղ. (1869), **Թանգարան խրատու**, Հեռիկոս և Մարիամ, Հրաման սիրոյ, **Պատմ. Թարգմանչաց**, Քերականութիւն Հայ., Երկրաչափական (1870), **Երկամեայ պանդխտութիւն ի Հայաստան** (նաեւ ֆրանս.), **Ընդհանրական** (Ն. Շնորհալի), **Խնդիր Ս. Տեղեաց**, Կարգադրութիւն առողջութեան, **Երգարան ուխտ. բանից** (1871), Ազնիւ, Մեսրոպ մանկանց, **Դագիկ** վերջին արքայ Հայոց Բագրատունի, Երկու խօսք (Մ. Վ. Մարկոսեան), **Ուղեցոյց Ս. Տեղեաց** (աշխ.), **Պատմ. Հայաստանեայց** (Մ. Վ. Մուրատեանց), Քերական (1872), Ամեն մարդոց բարեկամ, Համառօտութիւն քրիստ. ուսման (Պ. Շահնազարեանց), Ճաշոց, **Պատմ. Լէնկ Թիմուրայ** (հեղ. Առաքելեան), Խորհրդատետր (1873), Աշխարհագրութիւն, Բանախօսութիւն աշակերտութեանց մէջ, Ուխտ հայրենասիրի (Մ. Վ. Մուրատեանց), Ուսումն պարտուց (Պ. Շահնազարեանց) 1874, Աւետարան (երկիցս, նաեւ Ուղարկեից՝ 1900), Բարոյ. պատմութիւններ, Մարգարէական յարակցութիւն, Սիրուն գրօսարան, **Բան ի յայտնութիւն** Տեառն և յօծումն Լեւոնի Գ. (Վ.սերպամ վրդ., առնմապիկ Լեւոնի) 1875, Տիեզերագրութիւն (1876, Բ. տիպ՝ 1884), Պատմ. Հին Կտակարանի (1878, Բ. տիպ՝ 1879, Գ. տիպ՝ 1881, Դ. տիպ՝ 1896), Բովանդակութիւն ազգ. սեպհականութեանց (1880, Բ. տիպ՝ 1890), Նոր բուսաբանութիւն (2 հատոր) 1880-1, Հեքեթն, **Սանդուխտ** (ողբերգ. Թ. Թերզեանի) 1881, Գիրք խոստովանութեան, Պատմ. Նոր Կտակարանի, Քերական Հայ.-գաղ. (1882), Արձագանգ ողբերգութեան ի չարչարանս... Յս.ի (1884), Գիրք ընթերցանց (Թրգմ. Օր. Մարիանէ Բաղքալ), 1886, Բախտ (1887), Բնական պատմ., Գիտութիւն զԱստուծոյ (1888), **Ժամանակագր. պատմ. Երուսաղէմի** (Աճառեան եպսկ., 2 հատոր), Հրաւիրակ Երկչին Աւետեաց (Խրիմեան, Բ. տիպ) 1892, Ժամագիրք (1895, խել 1903 ին՝ ծոցակիր), **Համառօտ Ս. Գրոց** (Թ. Վ. Եկաւեան) 1895, Ճանապարհ երկնից (Գ. տիպ) 1897, **Բաղդատութիւն** տպագիր Սոկրատի և Երուսաղէմի ձեռագրին (1898), Աւետարան առենի, Ժամագիրք առենի (1899), **Եփրեմ Խուրի**, Մաշտոց, Պատմ. Ս. Լուսաւորչի (Պաղտասար դպիր՝ տաճկերէն) 1901, Վարժութիւն փոխատուց մանկանց (1903), Գովասանք (հայ-տաճկ.) 1906, **Ցուցակ** գրոց տպագրեալց ի տպ. Ս. Աթոռոյս Յակոբեանց [որոն պատրաստած ենք մեր ցանկը՝ շատ մը նորերու և [՞]իններու յաւելմամբ] 1907, **Ներածութիւն** յայտնութեան գրոց հին հայ թարգմանութեան (Փր. Մուրատ), Երկու տախտակ (1911), Զանգուածեղ չարական (վերջին տիպ՝ ընդ մանրով), Ս. Յակոբ նամ 2 առաքելական նամակի (Բ. տիպ, Ա.ն ի Պոլիս) 1912: — Առնցմէ զատ առանց թուականի կան հետեւեալները. — Խորհրդածութիւն ի վերայ չարչարանաց Քս.ի, Կեանքէ առնուած պատմութիւններ, Կիպրիանոս, Կիրակէ, **Յայտնութիւն Յովհաննու** (բաղդատական ուսումնասիրութիւն, Պ. Յ. Մուրատեանի), **Պատմ. Երուսաղէմի** (Խ. Վ. Միսիրպեան), Տաղարան, Տարերք ընթերցանութեան, Բանաստեղծարան: — Տպարանապետ՝ Գէորգ Վրդ. որ այս տարի Յուլիսին Պոլիս եկաւ՝ բողոքելու իր պաշտօնանկութեան մասին, «Ս. Գրքի մեկնաբանութեան» տպագրութեան առթիւ ծագում առած խնդիրէ մը:

207ա. **Աբրահամ Մուրատեան**. — Ծնած է 21 Յուլիս 1833 ին Արմաշ՝ ուր ուսուցիչ էր հայրը (Հայկազի Տիգրանեան Մուրատ վրդպտ.): Նախ. կրթ. առացած է հոն: — 1844 ին ընտանեօք Երուսաղէմ ուխտի երթալնուն, Աբրահամ Ս. Աթոռի տպարանը կ՚այցելէ, և անհուն սէր մը կ՚արծարծի իր մէջ՝ այդ արհեստին մասին: Նուէր առացած ափ մը տառերով կը շարէ «Հայր-մեր»ը զոր իր խել ձեռքով կը տպագրէ: Հոն կարեցի եղածին չափ իր ջերմերը Հրէի մը տպարանէն հագալով և պակաս տառերն ալ տոտախի վրայ հորը փորագրել տալով՝ կ՚սկսի աղօթագիրքի մը պատրաստութեան զոր կ՚աջողի գլուխ հանել, յետոյ Այրիեմարան մըն

ալ կ՚աւարտէ : Տարի մը վերջ ՆԻԿՈՄԻԴԻԱ կու գան հաստատուելու : — Աբրահամ պահ մը փեթեգակութիւն կ՚ընէ, մինչեւ իր հօրը մահը (1848) : Հոն **ձեռագիր** հրատարակող Համբ. Պերպէրեանի «Սոխնամուղ» զաւեշտաթերթն ու Յովհ. Միրեանի «Բանբեր Պարոնգակեանց»ը գրգիռ կ՚ըլլան Աբրահամի՝ **տպագիր** թերթի մը հրատարակութեան : Գաղափարը կ՚իրականանայ 1 Մայիս 1850ին, երբ **Հայրենասէր**ի Ա. թիւը լոյս կը տեսնէ (ընդ ամէնն 3 օրինակ) : Տպարանն իր կրպակին ետեւը հաստատուած էր եւ շատ կը նեղուէր տառերու անբաւականութենէն, մինչեւ որ Օշտունի Յովհ. Վրդ.ի բարեխօսութեամբ եւ Տատեան Յովհ. Ամիրայի աջակցութեամբ տպագրական պատուհին բախտը կ՚ունենայ տիրանալու փայտէ պզտիկ մամուլի մը եւ կապարեայ բաղձալի տառերուն՝ բարեխիրարար հայթայթուած Յ. Մխիթարեանէ : «Հայրենասէր» 3 տարուան կեանք մը միայն ունեցաւ՝ բաժանորդներու օրըստօրեայ ցանցառութենէն, որովհետեւ տեղական լուրերէ դուրս հանրականներու գրուածքներով կը լեցուէր թերթը : Տպարանն այնուհետեւ Յովհ. Մարգարեան գնելով ՕԿԻՒՏԱՐ կը փոխադրէ եւ գիրք մը միայն տպել կու տայ : — Մուրատեան հրաւիրուելով Կ. Ս. Իւթիւճեանէ՝ վերին հսկողութիւնը կ՚ստանձնէ անոր տպարանին, զոր կը կազմակերպէ . սակայն գրաշարներու մախանքէն զզուած՝ կը դառնայ Իզմիտ, յետոյ կրկին Պոլիս՝ ուր Ֆրանսերէնի կ՚աշխատի եւ 1857ին կ՚ընկերանայ իր թարգման ու գործակալ՝ վաճառականութեամբ Ֆրանսա մեկնող Յովհ.ի հայր՝ Մարտիրոս Մարգարեանի որուն գործը տարի մը աւրուելով, Աբրահամ Մարտիկեանէն կ՚անցնի ԲԱՐԻԶ 1859 Յունիսին, Ճ. Արամեանի տպարանը պաշտօն մը խնդրելու : Սա. Ոսկան նոյն տառերը դարբեցուցած էր 1855ին սկսած իր **Արեւելք**ը : Ճանիկի խորհուրդով Աբրահամ 6 Յնվր. **1860**ին կ՚սկսի հրատարակել **Փարիզ** առեւտր. հանդէսը : Արամեանի հոնկէ մեկնելուն պատճառաւ՝ Աբրահամ կ՚առնուի Կ. Վ. Շահնազարեանէ գնել հայերէն գիրեր եւ իր շարածը դրոշմել Գառ.ֆոնի տպարանը : Յետոյ կը ձուլէ նոր տառեր՝ իր պատրաստած մայր-տառերուն վրայ : Այս յօգնութիւններէն ընկճուած, թերթը **1863** Սեպտ.ին դադրեցունելով՝ կ՚անցնի ԵԳԻՊՏՈՍ, կազդուրուելու համար : Դանիէլ անտեւ կը կարգուի Խորէնեան վարժարանի : Եգիպտահայ ջոջերու թելադրութեամբ, Կիրեմակելի այս ուխտեալ աշակերտը կը փարի նորէն տպարանական կեանքին եւ Ֆրանսա բերուած կազմածքը բերել տալով կ՚սկսի հրատարակել **Արմաւենի** կիսամսեայ հանդէսը, 16 Մարտ 1865ին : Հնդափոխին հետեւանօք թերթը կը դադրի : 1870 թ. Պոլիս դարձին՝ կը թարգմանէ Միշլէի **Սէր**ը (տպ. Պետր. Ճէգվէճեան) : Նետուելով այս անգամ ուսուցչական ասպարեզ, կը դասախօսէ յաջորդաբար Մեզպուրեան, Արամեան, Մայր եւ Ս. Փրկչեան վարժարանները՝ մինչեւ իր մահը (Սեպտ. 1903, Այ-Ստէֆանօ) : — 1877ին Եգիպտահայերէ երեսփոխան ընտրուելով՝ 13 տարի անդամակցած է Ազգ. Ժողովին :



ԱԲՐ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

## ՆԻԿՈՄԻԴԻԱ [ԻԶՄԻՏ] եւ ԱՐՄԱՇ . —

Նիկոմիդիոյ մէջ առաջին տպագրիչը եղած է բազմարդիւն ԱԲՐԱՀԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆ (207 Բ. թուահամար), որուն տպարանական գործունէութիւնը պատկերացուցած ենք ԵՐՈՒՍԱՂԷՄի բաժինին մէջ : — Ա. Մուրատեանէ վերջ՝ 1879էն սկսեալ մինչեւ այսօր Արմաշէն վարձու առած մամուլով գործած է ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՎԵԱՆ (**208** թուահամար) որ տառ. չունենալուն՝ ծխախոտի գործարանաց յատուկ ծրարներու պիտակներ միայն կը տպագրէր : Ծխախոտը Ռէժիի վերածուելուն, Մավեան կ՚առնուի տառեր գնել եւ կառավարական եւն. թղթոց տպագրութեամբ պարապիլ, զբաղո՛ւմ զոր ցարդ կը շարունակէ : — Տարւոյս սկիզբէն՝ Իզմիտցի ՕՆՆԻԿ Տ. ԱԶԱՐԵԱՆ (**209** թուահամար) կ՚ունենայ հոն իր մամուլն ու տառերը՝ մանր գործերու յատկացեալ :

— Իսկ ԱՐՄԱՇի մէջ Մաղաքեան Սմբատոս արքեպսկ.ի [ծն. Աստարագար 1803] առաջնորդութեան ատեն (1856 - 65) հիմնուած միակ տպարանը եղած է.

210. **Զ(արխափան) Ս. Աստուածածնի Վանքին** տպարանը: Խանգարեալ այս վանքը Մաղաքեան Ս.ի շնորհիւ ծաղկած է: Անոր ջանքերով կը բացուին ուսումնարան և տպարան՝ **1863**ի վերջերը: **1864** Օգոստ.ին է որ կ'սկսի հոն հրատարակուիլ **Յոյս** բանասիրական ամսաթերթը «Դրօշակ Հայրենեաց» տիտղոսով, որուն Ա. թիւին սկիզբը «Յերախայրիս նորահաստատ տպարանիս» վերնագիրով տաղաչափ ձօն մը կայ՝ միաբաններուն զգացած ուրախութիւնն արտայայտող: Ցաւալ բերենք հատուած մը այդ ներբողեանէն՝ երախտաւոր վանահօր ուղղեալ.

*Քեզ ուղեմն հոսեալ ի մեզ աղբիւր մեղու եւ կաթին,*
*Զոր արբ երբեմն աշխարհ մեր 'ի փառակացն Եդեմին,*
*Եւ Քեզ անտ պարուրեալն յանգիտութեան խաւար խոր,*
*Մեծարեսցեն արփւոյն ճաճանչ յերկնից կանթեղ ծագէ նոր,*
*Քեզ այդ հանճար Գերմանիացւոյն 'ի մեծատաղն կայսրս մեռն . . .*



ԱՐՄԱՇԻ ՉԱՐԽԱՓԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏԱՃԱՐՆ ՈՒ ՎԱՆՔԸ

Տպարանին կազմակերպութեան գործին հոգ տարած են միաբան չորս վարդապետներ. — Գէորգ Ալիքսանեան, Պօղոս Խոյատեան, Խորէն Աշըգեան և Սմբատ Տիգրանեան (Փօտաձենց): Մաղաքեան Ս. վախճանած է Պարտիզակ՝ 29 Օգոստ. 1865ին: Յաջորդ տարին վանքն Իզմիթի վիճակէն զատուելով՝ Արմաշն ու Խասկալը բեմ կը պահէ իրեն և «առաջնորդ»ներ այնուհետև կը կոչուին «վանահայր» (Աշըգեան, Օրմանեան, Դուրեան): Վանքը վիճակային խնդիրներէ զերծ՝ զարկ կու տայ ուսումնական մասին: Աշըգեանի օրով կը բացուի Ս. Ղեւոնդեանց գիշերօթ. վարժ.ը որ սակայն քանի մը տարեշրջան միայն կը բոլորէ և 1878ին կրթարանը կը փակուի: **Յոյսն** ալ նոյն տարին դադրած է: — Ռ. Բիւրքճեան տպագրիչին մահուամբ՝ այս վանքը ծախու կ'առնէ Եւրոպայէն հասած անոր գործիքները: — 1879ին Արմաշցի ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՎ.ԵԱՆի վարձու կը տրուի Արմաշի տպարանին կազմածքը, գալով տառերուն՝ ամ-

բողջը մէկ ծախուած են պոլսեցի Հայու մը : — 1864-79 Արմաշ տպագրուած են՝ բաց ի «Յոյս»էն. — Հերձուածող Պապութեան, Վարդապետարան, Համառօտ տրամաբանութեան, Սկզբունք բարոյ. Հնախօսութեան, Ուսումն **Համաբարբառ Աւետարանի** (Ներսէս Վարժապետեան), Հեգարան, Խրատք ընտանեաց, Պօղոսի յաղագս ծանօթութեան Աչ., Հանի Սափէր, Ճանապարհորդութիւն ի Բաբելոն, Վարսկերի անգղները, Տէրտերեան Ճառ. ոռոյ, Աստղաբաշխութիւն, Համառօտ փիլիսոփայութիւն, են. :

**ՎԱՆ**այ Վարագ վանքը Խրիմեան վրդ. (85 Բ. թուահամար) իր տպարանը կ'ունենայ 1858-62 ին : — Մինչեւ Սահմ. հռչակում բնական էր որ հոն Հայու տպարան չըլլար՝ բռնապետութեան պատճառաւ : — Այնուհետեւ կը հիմնուին հետեւեալները. — ԺԱՄԿՈՉԵԱՆ (211 թուահամար), ԵԱՐՍԵՂԵԱՆ (212 թուահամար), որոնք տպագրած են **Վանտոսպ** (1911 էն սկսեալ թերթ), **Աշխատանք** (1910 էն սկսեալ թերթը) : — Իսկ Տ. Չիթունի 1909 ին «Մայրենի մամուլ» գաւառաթերթին Ա. համարը միայն հրատարակեց՝ **խմորատիպ** (*) :

**ՄՈՒՇ (ՏԱՐՕՆ)**ի ԳԼԱԿԱՅ ՎԱՆՔը գործած է դարձեալ Խրիմեան վարդապետ (85 Դ. թուահամար) 1863 ին : — Տե՛ս զինքն ի Պոլիս, 85Ա թուահամարով :

**ՍԵԲԱՍՏԻԱ (ՍԻՎԱՍ)** 1871-5 հայ տպարան մը Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆի (213 թուահամար) գոյութիւն ունէր որ դրոշմուածներէն գիտենք միայն 1875 ի **Աղօթագիրքը** «Յորում պարունակին հոգեշարժ աղօթք ի դէմս Ս. պատարագին» : — Այնուհետեւ մինչեւ Սահմ. հռչակում հայ տպարան գոյութիւն չէ ունեցած հոն : Կ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ (214 թուահամար) կը հիմնէ **Հողդար** թերթին, որ տպագրուած է **Տրտունջ Ե. Տէմիրճիպաշեանի** (Դ. Վարուժան : — Դարձեալ 1909 ին Սվազ տպագրուած է **Անդրանիկ** անուամբ գաւառաթերթը :

**ՊՐՈՒՍԱ** հայ տպարան չէ ճանչցած : 1877 ին հայատառ տաճկերէն պատկերազարդ 256 էջնոց մէկ գիրք լոյս ընծայած է ՄԷՀԷՄՄԷՏ ՇԱՔԻՐ (215 թուահամար), որուն անունն է **Գափութան Հաթէրասըն ալէր կիւզէրի** «Մուսավվէր գութպը շըմալի սէյահաթնամէսի» Ժիւլ Վէռնի երկը՝ զոր թարգմանած է Յովհ. Դոլգաեան : Այս գիրքին ճակատը կը կարդանք. «Մաարիֆի Ումումիյէ Նէզարէթի ճէլիլէսինին ռուխսաթը իլէ պիրինճի տէֆա օլարագ՝ ԽԻՒՏԱՎԷՆՏԻԳԵԱՐ վիլայէթի **մաթպաասընտա** բասմ օլունմըշտըր» : — Պր. մէն Զարդարեան օրինակ մը ձեռք ձգած ըլլալով այս հազուագիւտ գիրքէն, այս տարի նուիրեց Վէննայի մատենադարանին : — Կարապետ Փանոսեան եւս գիտական երկհատոր այս մեծեւոյն վէպը թարգմանած և հրատարակած է Պոլիս :

**ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ** առաջին ու միակ հայ տպագրիչն ունեցած է.

216Ա. **Տ. Պետրոս Քհնյ. Փափազեան,** աշխարհական անուամբ Յակոբ: Ծնած է 6 Դեկտ. 1847 ին անդ, Արշակունեան վարժարանին ընթացքն աւարտած և մեկնած Երուսաղէմ՝ «Ժառանգաւորաց»ի աշակերտելու : Ծննդավայրը դառնալով, քանի մը տարի վաճառատուն մը կը ծառայէ. 1870 ին ուսուցիչ կը կարգուի «Արշակունեան»ի, իսկ 1871-6 տնօ-

(*) Սահմանադրութեան հռչակումէն վերջ, ինչ ինչ գաւառներու մէջ երեւցող **խմորատիպ** թերթերէն յիշենք Կիւրասունի **Փերակը**, Ամասիո (Տրապիզոնի)ի **Գեղջուկը** (1909), Մուշ Սասունի **Հայկը** (1910), Գօնեայի **Յուսաձանը** (1911), Սիվրի Հիսարի **Ականիսը**՝ 1909 ին հիմնուած թերթն եւ ուսուցիչ մշակութականները, (այժմ դադրած) :

րէն Թարգմանեան Ընկ.եան հանդէսուն վըժըռ.ի․ անոր Տիմօթէոս՝ մինչեւ 1879 Յուլիս : Նոյն տարին Օգոստ. 5 ին քահանայ կը ձեռնադրուի Հաւքէոյ՝ քարոզիչ Գրիգոր Արքագանէ, ծննդավայրին եկեղեցւոյն համար ուր կը պաշտօնավարէ 7 տարի : Յետոյ Իզմիրլեան Ս.ի կ'ընկերանայ, անոր՝ Եգիպտոսի առաջնորդ ընտրուելուն առթիւ, 12 Մարտ 1886 ին : 3 տարի կը մնայ Աղեքսանդրիա, ուրկէ — Կրօն. ժողովի որոշմամբ — կ'անցնի Կալաց, և 17 տարի անընդհատ կը պաշտօնավարէ քաղքին Ս. Աստուածածին ժամը : 1906 ի ամառն՝ կը հաստատուի Թուլչա ուր կը բնակի, ներկայիս մէջ անպաշտօն, Հոգաբարձութեան քմայքով տեղւոյն ժամը փակ մնացած ըլլալուն : — Երուսաղէմ ուսանող եղած տանն՝ տիպի ու տառ.ի ստոյգի սէր ունենալով, պատանին Յակոբ սովորութիւն ունէր առեալ այցելել Ս. Աթոռ.ի տպարանը : 1874 ին (տակաւին աշխարհական) Է. Տնտեսեանէ բառական մը գիր գնած է և գրաշարութեան վարժուած, յոլ ինքնօգնութեամբ : Այնուհետեւ, Յ. Յ. Պարոնեան երբ իր **Խիկար** երգիծաթերթը պահ մը Լոնդոնէ փոխադրեց, Աստուծոյ Տան ծառայող այս պաշտօնեան եղաւ անոր թերթը շարող (1885-6), եկեղեցւոյն շրջափակին մէկ խուցը : Թերթը տպագրուած է տեղւոյն կառավարական մամուլով : Հոն է որ Տ. Ղեւոնդ տպած է նաեւ հայատառ տաճկերէն **Մօր մը բաւած վիշտերը** կարօղիկ-Պուլկարաց վանքին մամուլով, բայց այդ գիրքին վրայ տպարանի անուն չէ յիշատակուած : — Բազմամեայ պաշտօնով ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ անցնելուն, իր տառերուն քանակը շատցուցած է և 1888 ին հիմնած **Նեղոս** շաբաթաթերթը՝ Անտոն Ուշտունիի աշխատակցութեամբ : Իր գրաշարութիւնն նորէն ժամին մէջ կ'ընէր, և թերթը կը տպէր Յ. Միզրահի անուն Հրեայի մը տպարանը : Հոն բաց ի «Նեղոս»էն՝ տպագրած է նաեւ զանազան կանոնագրեր և **Դաստարեայն Տօնօսն** ազգային վէպը (վերջերս Կ. Պոլիս Բ. տպագրութեան արժանացած), որուն մէջ «Տպագրողն առ սիրելի ազգայինս իւր» խորագիրով գեկոյց մը ունի ինք : — Իսկ ԿԱԼԱՑ (Ռումանիա) հաստատուելուն, Փափազեան Հայր հետամուտ եղած է տպարանական կազմածքը ճոխացունելու՝ Հայերէն և Ռումաներէն տառեր, նաեւ ձեռ.քի հին մամուլ մը հայթայթելով և **1891** էն սկսեալ լոյս ընծայելով հետեւեալները․ — 1891 **Կանոնագիր Լուսաւորչեան Սանուց Ընկ.եան Թուլչայի** (երկլեզուեան), 1895-9 **Հայկական տարեցոյց** պատկերազարդ (հայ-ռում.) իր խմբագրութեամբ, Յոսֆ.



Տ. ՂԵՒՈՆԴ ՔՀ. ՓԱՓԱԶԵԱՆ



Տ. ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԻՆ ՀԻՆ ՄԱՐԴԱԳԻՐԵՐԷՆ ՆՄՈՅՇՆԵՐ

Լուսիկ Սրմաքաշեանի թարգմանութեամբ և աջակցութեամբ Վահրամ Մամիկոնեանի՝ փառաւորման ի Ֆօքշան : Վերջին տարեցոյցին հետ, իբր յաւելուած, ձրի տուած է իր ընթերցողներուն գեղքեր **Նկարագիր** մըն ալ : 1896 **Նամականի** և 1898 **Պատմութիւն Երկուս. Եկեղեցւոյ** (Մելքիսեդեկ Եպսկ.ի) : 1895 **Ռումանահայոց Ներկան եւ ապագան** (Պետր. քհնյ. Մամիկոնեանի) : 1902 **Հրահանգիչ վէպեր** : — Իսկ 1902-10, տտուպարուղի վրայ տպած է միայն Ռումաներէն Օրացոյցներ : — Տ. Ղեւոնդ թէեւ անձնական մամուլն ունէր, բայց ռու-

մանացիններու մամուլով կը տպէր, գէրծ մնալու համար տուրքէ՝ իբր տպագրիչ: — «Եթէ նիւթապէս մեծ վնասներու ենթարկուեցայ (կը գրէ ինծ), բարոյապէս վարձատրուած կը համարեմ զիս, 1906 ին Պուքրէշի ցուցահանդէսին՝ արծաթեայ մետալին և Յորկեարի նշանին արժանանալով»: — Փախագեան Հայոց հին գաղթագիրը կազմող «մարդագիր»երն ամբողջացուցած է. որոնցմէ դրինք հոս մէկ քանին՝ իբր նմոյշ: — Լէօ այս քանանակին համար կը գրէ թէ **Արօր** տառին շարաբարերը մին ալ հրատարակած է:

217. **ԱՏԱՊԱԶԱՐ** 1 Սեպտ. 1911 ին հիմնուած է ԱՏՐՈՒՇԱՆ տպարանական միութիւն՝ 10 հոգիէ բաղկացեալ, որոնք Օ. Բարսեղեան և ընկ.է (Դալարիա) գնած են բազկամամուլ մը և 1911-2 հրատարակած **Ամէնուն տարեկանը** (Յովհ. Ազարեան), **Հրաժեշտ** (Ն. Թարիգեան), **Ընդվզում** (Զ. Պալուլ), **Հայ պարերգներ** (Կ. Ցոլիանճեան), **Թուաբանութիւն** (Յ. Արամեան) և Նիկոմեդիական փոխադրուած **Ռիւբանիա** շարաբարերը (որ այս տարի Օգոստոսին **Ազատամարտի** տեղ հրատարակուեցաւ Պոլիս):

218. **ԳՕՆԻԱ** հրատարակուած է **Իկոնիոն** թերթը:

219. **ԿԻՐԱՍՕՆ** գոյութիւն ունի նախապէս խմբատիպ հրատարակուող **Փերակ** թերթին տպարանը որ 1911 ին ալ լոյս ընծայած է **Թամար Ճէմմէշեանի**:

220. **ՍԱՄՍՕՆ** գոյութիւն ունի ԱՐԵԳԱԿ տպարանը որ այս տարի տպած է Լեւոն Լաճիկի **Արիւնոտ խաչելութիւնը**:

221-223. **ՏՐԱՊԻԶՈՆ** բացուած են 3 տպարաններ. — ՍԵՌՈՒԱՌԻ ԵՂԲԱՐՑ (յոյն) որոնք տպած են՝ այժմ Պոլիս փոխադրուած **Ոժիւղ** ամսաթերթը՝ 12 թիւ, **Ամբոխին հոգեբանութիւնը** (1911), **Պասհաւր** (1909), 1 Ապր. 1909 էն սկսեալ **Խարիսխ** շաբաթաթերթը (խմբ. Մալխաս), **Պղնձէ երգեր** (1910): «ՈՍԿԻՆԱԼ»ի, ուրկէ լոյս ընծայուած են **Ծամանեղա** (1911), **Դեղջուկ** (1909), **Ծարժում** (1910): «ՄԷՇՎԷՐԷԹ»ի, ուր տպուած է **Փերակ** նաև «Ներկայ սովը և իր պատճառները» 1909: Տրապիզոնի տպուած թերթերէն յիշենք նաև **Պանոսը**: [Գաւառի թերթերէն շատեր դադրած են հիմայ]:

224. **ԿԱՐԻՆ** հիմնուած է 4 Յունիս 1909 ին սկսող **Յառաջ** թերթի [արտօնատէր Ա. Աարունի և խմբ. † Եղիշէ Թօփչեան] տպարանը որ նախ Զանգր փողոց կը գտնուէր, իսկ հիմայ Կանայ ճամբայ: Թերթը ցարդ կը շարունակուի՝ խմբագրութեամբ Ծատուր Միսաքեանի (որ Պոլսէն յանկարծ Կարին մեկնեցաւ) և աջակցութեամբ տեղացի հայ առաջադիմականներու: — Կարին տպուած է նաև **Սիրտը**:

225. **ԵՐԶՆԿԱ** տպուած է **Արօր** թերթը:

226. **ԵՒԴՈԿԻԱ** (ԹՕՔԱԹ) տպուած է **Իրիս** թերթը:

227. **ԽԱՐԲԵՐԴ** (ՄԱՄՈՒՐԷԹ-ՈՒԼ-ԱԶԻԶ) տպուած են 1910 ին **Ամենուն համար** և **Եփրատ** թերթերը:

228. **ԱՄԱՍԻԱ** տպուած է **Ամասիա** և **Ապառաժ** թերթերը 1911 ին:

229-231. **ՄԱՐԶՈՒԱՆ** բացուած են 3 տպարաններ որոնցմէ ամենաբեղուն գործունէութիւնը ցոյց տուած է ՆԵՐՍԷՍ ԵՒ ԱՐԱՊԵԱՆներ, որ 1910 էն սկսեալ կանոնաւորապէս լոյս կ'ընծայէ ցարդ **Նոր Այգ** պրակները [որուն մէջ այս տարի երկար ուսումնասիրութիւն մը ունեցաւ Լոնտոնաբնակ Բրոֆ. Կ. Թումանեան, վաղեմի տպագրիչ և հայրենակից Գրիգոր Մարզուանեցիի վրայ], **Հայկական հարուածներ**, **Լէյլի մէջնուն** (Տ. Զիրունի), **Թարգմանմեներ** (1911), **Միութենական հարց եւ Շնորհալի** (Ա. Վրդ. Դաւէթեանի), **Խունկ եւ Արցունք** (1910), **Եօթը գայլեր** (1909): — Մարզուանի մէջ բացուած տպարաններէն Բ.ն է Ս. ՄԻԱԾԻՆԵԱՆներուն որ 1909 ին լոյս ընծայած է **Փոքր Հայքի կոչը**

**հայ կուսակցութիւններուն** ։ Իսկ Գ.ն է «ԿԻՒԹԷՄՊԷՐԿ» որ տպուած են **Բողբոջ** և **Հայկունի** թերթերը, նաև **Միւսբէրկիսին վէճարը** (1910), **Հայաստանի ոգին** (1911) ։

232-233. **ԱՅՆԹԱԲ** Սահմ. հռչակումէն առաջ ալ գոյութիւն ունէր ԿԵԴՐ. ԹՈՒՐՔԻՈՅ ԳՈԼԷՃԻ (Ամերիկացւոց) պզտիկ տպարանը որ վարժարանին տպագր. մանր մունր գործերովը կ'զբաղէր ։ Իսկ վերջերս այս քաղաքին մէջ ԱՒԵՏԻՍ ԽԱՆՋԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ. հիմնեցին «Թիճարէթ մաթպաա'ասը»ն որ հրաւիրագիրի, նամակագլուխի, այցաքարտի են. գործերէ անդին չէ անցած ։ ☞ 1884 ին «Կիլիկեան» գիշերօթիկ վարժարանի ուսանողք ձեռ հրատարակած են **Մեղու** թերթը՝ (Վահան Ֆիւրքճեանի տնօրէնութեամբ և Միսաք Գօչունեանի աշխատակցութեամբ) որ տարուան մը կեանք ունեցաւ և որուն տպագրութիւնը կը կատարուէր Կ. Պոլիս, Գ. Պաղտատլեանի կողմէ ։

## ԳԼՈՒԽ Գ.

| 1616 էն սկսեալ | ԼԵՀԱՍՏԱՆ | մինչեւ 1912 |
|---|---|---|

### ԱՒՍՏՐԻԱ - ՀՈՒՆԳԱՐԻԱ

ԺԷ. դարուն սկիզբները, Հայոց հայրապետին քով և շահախնդիր ընթացքով՝ Լեհաստանի հայ պաղկաւորի գաղութը տակաւ կորսնցուցած իր մայրենի լեզուն և որ ուրեմն Յիսուսեանց շահատակութեանց պատճառաւ, հազիւ բախտն ունեցած է 1616 ին Լեհաստանի մայրաքաղաքին՝ ԼԸՎՕՎ ի մէջ բացուիլը տեսնելու հայ տպարանի մը, նախաձեռնութեամբ

234. **Յովհ. Կրէց Քարմատանեանց**ի որ զաւակն էր Բաղէշցի Մուրատի. իր մայրն էր Աննա, պապը՝ Տէր Սիմէոն քհնյ. ։ Տ. Յովհաննէս տարի մը ամբողջ աշխատած է գրաշարներու և այլ գործաւորներու հետ՝ հայ տառեր յօրինելու և յարմարի ածելու համար տպագրութիւնը 2 գիրքերու որոնք են **Սաղմոսարան**, 478 էջ, թուերը ձեռագիր դրուած և տպագրութիւնը 15 Դեկտ. 1616 ին աւարտած ։ Այս գիրքէն Հ. Յովհ. Զօհրապեան Լեհաստան ճամբորդած առեն օրինակ մը ձեռք ձգած է Սենեթին գիւղաքաղաքին ։ Զարդախիկ ճակատ մը ունի՝ վերը խաչելութիւն, ու վարը Հայր Աբրահամի ողջակիզին պատկերներով, մէջտեղը զարդագիր ՍԱՂՄՈՍ Ի ԴԱՒԻԹ. մէջերը զանազան խորանազարդեր, պատկեր՝ հանդերձ մեկնութեամբ Սաղմոսի, նաև Սաղմոսէ դուրս աղօթքներ ։ — Քարմատանեան նոյն տարին տպած է դարձեալ **Բժշկարան** մը ։ — Իր տպարանն «Ընդ հովանեաւ նշման Ս. Աստուածածնի» կը գտնուէր Իլախաց երկրին մէջ (= Լեհաստան) Լէվ (= Լվով կամ Լըվօվ) քաղաքը որ Բօլաքերէն է Լէմպէրկ գերմ. յատուկ անուան ։ — Իրմէ վերջ Լեհաստանի մէջ Հայու տպարան երբեք գոյութիւն չէ ունեցած ։ 160 տարի ետք միայն պառակտեալ Մխիթարեանք կը հիմնեն իրենցը ԹՐԻԷՍԹԷ (Աւստրիա-Հունգարիա) զոր ապա կը փոխադրեն ՎԻԷՆՆԱ ։

235. **Տպ. Մէրապօղոսեան** (ՍՈՒՉԱՎԱ)էն 1649 ին լոյս ընծայուած է **Աւետարան** մը, — ըստ Հ. Գաֆրանեանի ձեռագիր ցուցակին ։

236. **ԿԱՄԵՆԻԵՑ-ՓՕԴՕԼ** (Լեհաստան)ի մէջ 1876 ին լոյս ընծայուած է **Տօնմարան մանկանց**ն, — ըստ Հ. Գաֆրանեանի ձեռագիր ցուցակին ։

237. **Մխիթարեանք Թրիեսթէի եւ Վիեննայի.** — Երբ Մխիթար Աբբահայր կնքեց իր արդիւնաշատ կեանքը 1749ին, իր Միաբանութեան կը թուէր 41 Վարդապետ եւ 13 աշխատաւոր Եղբայր (Փրէր)։ Տարի մը վերջ, երբ Հ. Ստեփանոս Մելքոնեան իրեն յաջորդեց՝ փոփոխութիւններ մտցուց Մխիթարի սահմանած կարգերուն մէջ։ Իր օրով, գրեթէ ամբողջ շրջան մը բոլորուած եղաւ՝ կրթական, գրական եւ տպագրական գործերու արտադրութեան տեսակէտով։ Այս ընթացքը բնական էր որ դժգոհներ ծնցունէր իր շուրջ. եւ ահա 25 Մայիս 1772ին կը գումարուի ընդհանուր ժողով. զինքը վար կ'առնեն՝ նոր մը ընտրելու համար (*)։ Այն ատեն Մելքոնեան արտաքին ոյժի կը դիմէ՝ ախոյեանները զսպելու դիտմամբ։ Հակառակորդներու պարագլուխներէն Աստուածատուր Բաբիկեան եւ Մինաս Գասպարեան հայրերը զինուորական ուղեկից գունդով կը հեռացուին հոնկէ, եւ պահ մը Ս. Ղազարու անքոյթ մենաստանը բանտարան կը հանդիսանայ դժգոհներուն։ — Վտարեալները կ'անցնին ուղղակի Թրիեստ. ուրիշներ ալ (ամէնքը 20ի չափ) կը հետեւին անոնց, որով վանքին կեանքը կը դադրի՝ կրմանաշոյտ հիմնադիրին մահէն հազիւ քառորդ դար վերջ։ 19 Մայիս 1773ին իրենց նոր կայանին մէջ վանատուն մը բանալու ծրագիրը կը հաստատուին եւ անդրանիկ Աբբահօր անուամբ՝ կ'որոշեն կոչուիլ **Մխիթարեան**, մինչ Ս. Ղազարեանք մինչեւ այն ատեն **Անտոնեան** կը յորջորջուէին՝ նոյն ճգնաւորին անունով։ Եռանդը բորբոքած է այլ եւ իրենց հոգիներուն մէջ։ Հայ կղզեակին մէջ Մխիթարի գործակցութեան շարքով, տպատարածութեան այդ հոգէն արմատախիլ այս շառաւիղը՝ զատ իր արմատներուն համար այլուր մը՝ կը բաղձար նորատունկ վերընձիւղիլ, եւ, զօրցեա Մայր-Երկիրէն բաժնելուն համար՝ աւելի խորարմատ ու ոռոգուած։ — Բաբիկեանք որպէս զի հովանաւորութիւն ապահովեն՝ կը դիմեն Աւստր. Արքունիքին։ Մառիա Թէրէզա կայսրուհին բարեբախտաբար չզլանար խնդրուած առանձնաշնորհումները։ Այլ եւ աւարտումին եղան իրենք։ Կը հիմնեն վանք, տպարան ու դպրոց։ Այսպէսով, Հայութիւնը կ'ունենայ երկրորդ Միաբանութիւն մը որուն անդամները յուսատուութեան առաքեալներ ըլլալու վէճ առաջադրութիւնն ունէին լոկ։



Հ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԲԱԲԻԿԵԱՆ

** Թրիեստէ, 30 Մայիս 1775ին կայսրուհւոյն տուած արտօնագիրին 24րդ համարն էր. «Կը շնորհենք Միաբանութեան իշխանութիւն՝ բանալու հայ. եւ հռոմ. տառերով տպարան մը» որ տարի մը վերջ արդէն գոյութիւն ունէր հոն «Տպարան Մխիթարեան հայ կրօնաւորաց՝ կայսրաքաղաքական արտօնութեամբ» անունով, եւ ուրկէ լոյս ընծայուած Ա. գիրքն է **Ցարգարակ առ պաշտօնատուութիւն Ս. Աստուածածնի**։ — 1795ին կային 47 տեսակ տառ. (24ը լատին, 7 գերմ., 15 հայ. եւ 1 յուն.)։ 1776-1810, երեսուն հինգ տարուան մէջ հոն տպուեցան **45** հայերէն եւ 25 հայատառ տաճկերէն գիրքեր, առանց հաշուելու օտար լեզուով տպագրուածները։ Անուանիկ քան մը առնենք՝ մեծ մասամբ կրօնական։ 1776 Այրենարան, 1777 Հոգեւոր երգք, 1783 Ցիշատակք ի վերայ կայսրութեան Չինաց։ — Խաչ եօթնըրդ գիրքերի։ — Ճեմեմնեմ աշխարհ։ 1784 Առակք Եզովբոսի։ — Ժամագիրք։— 1785 Սղատաւորութիւն բուն պատարագի։ 1786 Խրատք բարուք քա-

(*) Իրենց պաշտօնանկութիւն զլխաւոր պատճառը եղած է Հնդկահայերէ հաւաքուած մեծագումար նպաստ մը որուն վրայ Մելքոնեան Աբբահայր իր ախտս բնոյթով... բուխար հասած էր, ակնոց չկախելով իրաւացի զանգատներուն խմասուն միաբաններու որոնք կը բաղձային նոյն դրամը յատկացունել վանքին մէջ աշխարհական կրթարանի մը բացման, զարկ տալու համար կրթական գործին։

ղաքավարութեան : — Վիպասանութիւն Ամերիկոյ : 1787 Սաղմոս : — Գիրք ձեռնադրութեանց: — Համառօտական արուեստ : — Պարտէզ հոգեւոր : — Ամենասուրբ Ռօզարին : 1788 Բովանդակութիւն Ս. Թովմայի : — Հայնակ և Նեմեցնակ այբուբեն : — Քրիստոնէական : — Պատմութիւն Ճենկիզխանի : 1790 Մաշտոց : 1791 Բարոյական ած.աբանութիւն : 1796 Ս. Կղեմէսէ 9 կինգիք մտածական ասու : 1798 Տ. Կոմիտաս քահանայի փառքը վէ նահատակութիւնը : 1799 Վարք Լուսիա Կուսին : 1800 Ազիզ բարիկէր : — Քրիսթիանին զըլավուզը : — 1802 Գիրք Սաղմոսի : 1803 Խորհրդատետր : 1805 Թովմաս Գեմբացի : 1806 Օն իքի բաշ : 1809 Յովսէփ Գեղեցիկ :


ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿՈՅ.
Արարեալ 'ի վարդապետէն կուլիէլմոս
Ռոպերթսոնէ :
Ե Ի
Բաժանեալ յերկուս հատորս :
Թարգմանեալ նախ յանգլիական բնագրէ յիտա-
լական լեզու . և անտի 'ի Հայ բարբառ 'ի Հայր
Մինաս Վարդապետէ Գասպարեանց Եւդոկիացւոյ
'ի Միաբանութենէ բազմավաստակ բարեկիշատակ
Մխիթարայ Ռաբունապետի և Մեծի
Աբբայի.
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ.
Որ յաւելու 'ի վերջոյ համառօտ բացատրու-
թի խրթին բառից, որք հանդիպին յայսոսիկ
երկուս հատորս :
Տպագրեցաւ ծախիւք և աշխատութեամբ Բաբիկեանց
Պարոն Յօհաննիսի Ջուղայեցւոյ.
Յամի Տն 1786. և 'ի Թուին Հայոց ՌՄԼԵ.
Ի ԹՐԻԵՍՏ
Ի Տպարանի Հարց Մխիթարեանց,
Հրամանաւ Մեծաւորաց.

Թրիէստէ տպուած այս գիրքին ծաղկեպսակը կը պարունակէ զարդախաչ մը՝ իր ճառագայթներուն մէջ զետեղուած Ո. Կ. Վ. Ա. տառերով (=**Որդեգիր Կուսին, Վարդապետ Ապաշխարութեան**). — Մխիթարայ հիմնած Ուխտին նշանաբանը:

** Մելքոնեանի մահէն (4 Հոկտ. 1799) գրեթէ 4 տարի վերջ, այս անջատուած Մխիթարեանք կ՚ընտրէին աբբահայր Ջուղայեցի Հ. Աստուածատուր Բաբիկեանը որ այն ատեն 65 տարու՝ երիցագոյն անդամն էր նոյն Միաբանութեան, և ամբողջ Ուխտը կը կոչուի «Տրիեստեան Մխիթարեանց» : 1810ի քաղաքական փոփոխութիւնները կը դժուարացնեն իրենց կացութիւնը : Այդ բաշող ժամանակամիջոցին՝ Միաբանութիւնը՝ — նոյն իսկ կարօտ օրուան հացի — քայքայման վիճակի մը հասած էր : Բաբիկեան կ՚ստիպուի Վիեննա անցնիլ, մինչ անդին՝ իրենց անշարժ կալուածները կը գրաւուին . հազիւ կարելի կ՚ըլլայ շարժական գոյքերէ մաս մը Վիեննա փոխադրել : Այն ատեն, անոնք Աւստրիայի կայսեր կը մատուցանեն աղերսագիր մը որով կը յայտնէր թէ իրենք չէին ուզեր բեռ ըլլալ կառավարութեան վրայ ու կ՚ընդունին նոր իրենց գոյութիւնը պահպանել՝ տպարան մը և Արեւելքի մէջ դպրոցներ բանալով : 1811 Փետրվարին իրենց կը յանձնուին լքուած վանք մը և եկեղեցի մը որոնք Բարուչինեան կրօնաւորներուն էին: — «Տրիեստեանք» այլ եւս **Վիեննական** յորջորջուած՝ կ՚սկսին ճըլ-տորիլ վերստին, պտղիլ ու ծաղկիլ՝ ժողովրդեան համակիր վերաբերումով : Այդ օրէն մինչեւ հիմայ «Վիեննական Ուխտ»ի բոլորած արդիւնաւոր գործունէութիւնները — մանաւանդ ուսումնական տեսակէտով — անուրանալի են . և Հայութիւն ի շարս իր ձեռնարկներուն ու դպրեվանուց՝ այսօր 2 կեդրոնավա՛յր ալ ունի ամփոփ, Վենետիկն ու Վիեննան, — իմացական լուսաւորութեան այդ մշտապայծառ փարոսները :

** Երկար պիտի ըլլար մանրամասնել տեւականօրէն օգտաշատ այն գործունէութիւնը զոր ունեցան Վիեննականք յիրաւցս մէկ դարու : Յիշենք միայն իրարու յաջորդող Աբբահայրերը . — **Բաբիկեանի** վախճանումէն վերջ (18 Ապրիլ 1825) կ՚ունենանք Պոլսեցին **Արիստակէս Ազարեան.** որուն մահուամբ (5 Մայիս 1855) Գաղատիացին **Յակոբոս Պօզաճեան.** որուն մահուամբ (1 Հոկտ. 1883) Սամօշուվարցին **Վարդան Քոսկարեան,** որուն մահուամբ

(15 Յնս. 1886) անզուգական Պօլսեցին **Արսէն Այտընեան** որ քառորդ դար արտօնակալեց և երբ վախճանեցաւ 21 Յուլիս 1902 ին, 6 տարի տեղակալ մնաց **Հ. Թադէոս Թօռնեան**, մինչեւ ընտրութիւն նոր Աբբահօր (18 Յուլիս 1909), Սամօշուլվարցի **Գրիգոր Գովրիկեանի**: Ասոնց ամէն'ւն ալ օրով հետզհետէ բարգաւաճած է Միաբանութիւնը, երբեմնի խարխուլ վանքին ու ժամին տեղ՝ կառուցելով հոյակերտ աբբայարան, վարժարան, մատենադարան, տպարան՝ միշտ Վենետկեան հովանաւորուած ու նպաստաւորեալ: Վիեննականք այսպէս զարկ տուած են կրթական ու գրական գործին, մասնաճիւղեր ալ հաստատելով Արեւելքի մէջ: Միայն 1870ի պատերազմին հետեւանօք էր որ հարկադրուած են ձեռքէ հանելու շատ մը տպագրածք, ընդ որս և տպարանին զոր Այտընեան վերագնած է 1887 ին: — Իրենց Ա. տօկանն է եղած **Եւրոպա** շաբաթաթերթը (1847-63): 24 տարուան դադարէ մը վերջ՝ 1887 ին սկսած են հրատարակել **Հանդէս Ամսօրեայն**, տարուէ տարի լրջացնելով և դարձնելով զայն հայագիտական ուսումնաթերթ մը: — Բաց ի իրենց հովուապետներէն, ի՛նչ հոյակապ դէմքեր



ԳՐԱՇԱՐՆԵՐՈՒ Ա. ԸՆԴԱՐՁԱԿ ՍՐԱՀԸ (Բ. ԴՍՏԻԿՈՆ) ԵՒ ՓՈՐՁԵՐՈՒ ՄԱՄՈՒԼԸ (ՁԵՌՆԱՇԱՐԺ)

ու անձինք՝ յաչս Հայ Մատենագրութեան. — Յովնանեան, Կարբրճեան, Կարապաշեան, Սիպիլեան, Տէրվիշեան, Ազգերեան, Գովրիկեան, Գալէմքեարեան, Տաշեան, Մէնէվիշեան, Ակինեան եւն., իրենց ուրոյն գործերով ու գործքերով աւելցնելով փառքը նոյն Ուխտին:

** 1811 ին տպարանին բանելու վրայ էր արդէն՝ մասամբ Թրիէսթէն հրաւէրով ալչօպուած տառերով և մամուլի մը շնորհիւ: Հ. Ազարեան տպարանապետն էր, իսկ բանուորները օտարազգի էին: Յաջորդ տարին լոյս ընծայուեցաւ Ա. գիրքը, **Վարք Ամենասուրբ Կուսին Մարիամու Աստուածածնի**: Կար 2 փայտէ մամուլ. 23 տարի յետոյ այս թիւը 15 ի բարձրացած էր, իսկ 3 տարիէն՝ 19 ի: Հիմայ նոյն տպարանն ունի երկաթէ 5 մեծ և 8 փոքր արագատիպ. 1855-1901 շրջանին՝ շոգեշարժ, այնուհետեւ ելեկտրաշարժ: 1838 ին ձուլարան մըն ալ հիմնուեցաւ՝ ուր պատրաստուեցան մայր տառեր և թափուեցան հայ և օտար ազգաց գիրեր: — 8 Ապրիլ 1848 ի գիշերը տեղացի նախաձեռնող տպագրիչներ — Հայուն յաջողութեան ոխերիմ — չեն խղճեր վառ յարձակում մը գործելու Մխիթարեանց տպարանին վրայ, պատուհանները քարկոծելով և դուռը ուժի բանալ փորձելով: Առխ ծամիրս պաշտակներ կ'ընդդիմա-

նան ներսէն, մինչեւ որ այս աղէտին առթիւ ժամին զանգակները կը ղօղանջեն, ոստիկանութիւնը կը փութայ ու կը ցրուէ ցուցարար խուժանը : Տպարանին բանուորները կ'առնուին տասը տարեկաններ աշխատելու : Ամիսէ մը վերաբացում, շնորհիւ քաղաքին մէջ շրջագայող բռուցիկներու՝ որ պարզուած էին Մխիթարեանց խրատուերն ու նպատակը : 1889էն սկսեալ Վիեննականք ոյժ տուած են օտար հրատարակութեանց ճիւղին — իբր առատ շահու աղբիւր — եւ տպած են ցարդ 2000 հատոր, մինչ հայերէն գիրքերու թիւը մէկ չորրորդն է այս գումարին : — Լատին պաշտամանց մատեաններու տպագրութեան գառ (Ա. Արքահօր օրով), Միաբանութիւնը 1849ին պատուաւոր յանձնարարութիւն առած է կառավարութենէն՝ համագամական թղթադրամ ալ դրոշմելու : — Այսպէս, **Մխիթարեան բազմալեզուեան Տպարանը** նկատի մէջ առնելի կերպով կատարելագործուած՝ տարիներէ ի վեր բոլորած է ամէնքին գործունէութիւն Գիմնազիոններու դասագրեանց, գիրքերու եւ պատկերազարդ պարբերականներու տպագրութիւնով : — Աւելցունենք թէ տպարանին բարեկամաց գործին վերջին տասնեակներու հոգ տարած են Գալէմքեարեան, Արփիեան եւ Թիրոյեան Հայրք : — Հայր Մէնէվիշեան բարեհամբուն ունեցաւ մեզ ցոյցնելու 7 շքեղ տեսարան՝ իրենց վիթխարի գործատունին մասերէն, որոնցմէ մին զետեղած ենք առա : Այդ պատկերներուն տակը արձանագրուածներէն խելամտեցանք թէ 1. Բուն տպարանը կը գտնուի գետնայարկ սրահ մը կամարակապ՝ 7 ելեկտրաշարժ մեքենաներով, իւրաքանչիւր կամարին տակ մամուլ մը, (3 հատր մեծ, անձնիւրը մինչեւ 23000 Ֆր. արժողութեամբ) : Այդ սրահին տարածութիւնն է 28,80 մեթր երկայնք եւ 7,20 լայնք : **2.** Առաջին Դստիկոն (ներքին սրահ), 16,60 մեթր երկայնք, 7,20 լայնք, յատկացուած կազմատան եւ ելեկտրաշարժ ծալող ու թելակապ մեքենաներու : — **3.** Նոյն Դստիկոն (արտաքին սրահ), 12 մեթր երկայնք եւ 7,20 լայնք, ուր 2 ամերիկեան ոտնակաւոր մամուլ կը պտտուին : **4-5.** Երրորդ Դստիկոն, երկրորդ թեւին վրայ (հաշուակալութեան գրասենեակներ) : **6-7.** Առաջին եւ երկրորդ Դստիկոն, 28,80 մեթր երկայնք եւ 7,20 լայնք (2 ընդարձակ սրահներ, Գրաշարատուն) :

** Իրենց տպարանէն ելած 500է աւելի հայերէն գիրքերու վերջին ցուցակ մը 1908ին հրատարակուած ըլլալով՝ խիստ կարեւորներէն փունջ մը կը ներկայացնենք հոս. — Ագաթանգեղոս առ. Գէորգայ Աստղի Եպիսկոպոսին, Ակնարկ մը Հայ Հնագրութեան վրայ, Ամառնային ուղեւորութիւնից դէպ ի Հայս, Աղուան, Արդի լեզուագիտութիւնը, Գերմ.-Հայ. բառարան, Յուն. Իտալ. Հայ. Տաճկ., Գրիգոր Մագիստրոսի «Դաշնագրական» ամբողջական լուծումը, Խօսք վասն տիեզերական պատմութեան, Դաստուրութիւն Ռուբինեան Դրամոց, Դրան-ակալանից Հայոց Մետրապոլիսը, Էջմիածնի Աւետարանը, Իրաւախոհի կեղծիք եւ իրաց ճշմարտութիւնք, Ծովք, Կոյտս Յովհաննէս Պապ., Հայ Բդեաշխք, Հայ գիւղական տունը, Հայերէն բարբառախօսութիւն, Հայերէն եւ գրոցի լեզուները, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, Հայք յԵղիսաբեթուպոլիս, Համառօտ Հուռաթ, Հերանոս Հայաստանի 8 մեհեանները, Հեսադօտութիւնք նախնեաց ռամկօրէնի, Հին Հայոց տեղւոյ անունները, Մայր ցուցակ հայ. ձեռագրաց, Մանր ուսումնասիրութիւնք, Ուսումնասիրութիւնք Սոսյն-Կովկասեան Վարուց Աղեքս., Պատմութիւն Հայ Լրագրութեան, Պատմ. Մատենագրութեան Հայոց, Սասուն եւ Տիգրիսի աղբերաց սահմանները, Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը, Տիեզերական պատմութիւն, Տօմար բնատեսկան, **Քննական Քերականութիւն արդի հայերէն լեզուի**, Քննութիւն Դիոց Դարի, եւն. եւն. եւն. : — Իսկ տպագրութիւնը 1909ին սկսուած եւ ձեռնարկին ակարութեամբ պատճառաւ ընդհատուած գլուխ-գործոց երկասիրութիւն մըն է Հ. Յակոբոս Վրդ. Տաշեանի **Ուսումն Դասական Հայերէն Լեզուին** : Մեծադիր 44 «փոռմա» տպուած է ցարդ : Գրաբար շարադրուած այս գիրքը **Հայկաբանութիւն** է լիակատար : Ամբողջութիւնը պիտի կազմէ 3 հատոր՝ իւրաքանչիւրը շուրջ 1000 էջնոց :

** Առնեօք Վիեննա տպուած հայատառ տաճկերէն գիրքեր ՊԷՉՏԷ (՚ի Պէջ) բառը կը կրեն իրենց վրայ : ՊԷՉ մաճառերէնն է ՎԻԷՆՆԱՅԻ : Աւելորդ կը սեպենք տառնցնէ ալ քաղ մը ընել՝ ամբողջութեամբ կրօնական ըլլալուն եւ վերոյիշեալ ցուցակին մէջ արդէն գրանըւելուն համար : ☞ Ռուսահայ պատմաբան-հրապարակագիր Լէօ, չգիտցուիր ի՛նչ հայեցակէտով, վերջին ծայր վատ փարուած է՝ այս Միաբանութեան կատարած բազմարդիւն գործունէութեան համար յատկացունելով ա՛յնքան աննշան տեղ՝ իր նոր երկին մէջ :

238. **Անանուն**. — Մեր համեստ մատենադարանին մէջ կայ ՎԱՐԴԱՐԱՆ մը «Սրբոյն յաւերժակոյս Աստուածածնի ի պատիւ Ս. Անտոնեան Մարիա» վերնագրով որ 84 շրջափակ եզերով և միջակ յաջողութեամբ **վիմագիր** կաթողիկ Հայոց տպագիրք մըն է, և որուն ճակատը դրոշմուած կայ ԹԻՖԼԻՍ 1843: Տպարանի անուն չէ յիշուած, միայն Բ. թուղթին վրայ կը կարդանք. «Առ հոգեւոր Ազնուութեան Պրն. Անտոն Ճարտարապետեան, Նուէր սիրոյ և յարգանաց, ընծայէ Ն. Թէոֆիլ Ռուբինեան»: Այս Վարդարանը կը պարունակէ Յիսուսի Մօր 5 վիմատիպ պատկերներ: — Արդ, գիտենք թէ 1811 ին, այսինքն վերոյիշեալ թուականէն 33 տարի առաջ՝ Մխիթարեանք Թիֆլիսէն ելած և Վիեննա անցած են, որով սոյն տպագիրքն իրենց տպագրութիւնը չէ:

## ԳԼՈՒԽ Գ.

| 1633էն սկսեալ | ՖՐԱՆՍԱ | մինչեւ 1912 |
|---|---|---|

Ֆրանսայի քաղաքներէն մեզ կը ներկայանան ՓԱՐԻԶ և ՄԱՐՍԻԼԻԱ, միայն ուր հայ և օտար տպարաններ զբաղած են մեր լեզուով գիրքերու և թերթերու տպագրութեամբ: — Մեր ուղղութեան համեմատ, ՖՐԱՆՍԱ պէտք էր որ կանխէր ԹՈՒՐՔԻԱն, քանի որ **ի Պօլիս** հայ տպագրութեան սկզբնաւորութենէն [**1567**] 30 տարի առաջ [**1537**] ի ՓԱՐԻԶ դրոշմուած կը տեսնենք

239. **Փօսթէլ**ի կողմէ՝ 12 լեզուներու այբուբենը պարունակող 75 էջնոց գիրք մը որուն մէջ հայերէն այբուբենք ալ կայ. ինչ որ բաւական չէր սակայն զայն հայեցի տպագրութիւն մը նկատելու և իր նմութեանը տեսակէտով արժանի՝ դասելու յառաջ քան 1567 թուականը: — ՓՕՍԹԷԼ ծնած է 1512 ին Օրանժ: Բանասէր-լեզուագէտ: Պետ. անձի մը ընկերացած, ճամբորդած է Պօլիս, Յունաստան, Փոքր Ասիա և Սուրիա, և այդ տեղերուն բնակչաց լեզուներով զբաղած: Յետոյ անցած է Իտալիա և ծանօթացած ԹԵՍԷՕՍ ԱՄԲՐՕԶԻՕՍի [տե՛ս **20** թուահամար] որուն արեւել. ազգաց ձուլածոյ տառերու հետ կ՚առնէր նաեւ հայ և քաղդէական լեզուներով «հայր մեր»ը: Հոնկէ դարձած է Բարիզ և տպագրութեան յանձնած **12 լեզուաց այբուբեր** պարունակող գիրքը. «Linguarum duodecim characteribus differentium alphabetum, introductio ac legendi modus longè facillimus». միայն թէ ամէնուն ալ փակատար տառերը չունենալուն՝ պակասները փայտի վրայ փորագրածներով ամբողջացուցած է: Փօսթէլ այդ գիրքով ջանացած է ապացուցանել թէ ամէն բարբառ եբրայականէն ծագած է: Կրկին Արեւելք ուղեւորած է և գնած բանկագին ձեռագիրներ զորս վերջէն ծախած է Բարիզի և Գերմանիոյ Մատենադարաններուն:

240. **Արքունի կամ Ազգային Տպ.** (IMPR. ROYALE OU NATIONALE)ը Ֆրանսուա Ա.ի օրով հիմնուած է Վ.իէյլ տիւ Թամբլ փողոց, ապա փոխադրուած Քօնվանսիօն փողոց և յանկացուած կառավարական պաշտօնագրութիւններու և. գործերու տպագրութեանց: Այս տպարանը կոչուած էր հայերէն տառեր ալ. իր նպատակն էր արեւելեան լեզուներով գիրքեր տպել, որպէս զի իր ազդեցութիւնը տարածուի Արեւելքի մէջ: — Հոն դրոշմուած են 1633 ին **Բառգիրք Հայոց** (հ. լտ., հեղինակ՝ ի Միլան հայ. քերականութիւն հրատարակող Ֆրանչեսկօ Ռիվօլա), 1634 ին **Սաղմոսաց պարզաբանութիւն** (հեղինակ Պետրոս Պօղոս հայազգի քհնյ.) Բ. տիպ, 1812 ին **Քերականութիւն հայկ. լեզուի**, 1818 ին **Տեղեկութիւն ի վերայ այժմեան կացութեան քաղաքութեան Պարսից** առնեալ ի Գա-

ւիր Պէկլ. Տատուրեան : Պատմագրութիւն ի վերայ գիւտուածոյ մերոյ պատասնեկոյ ի Դարբէձ քաղաք վասն բոլլատութեան կրօնի, տուեալ ի Պ. Յակոբայ Ճանճ Չրպետեան. . . : Ընդհ. ծանօթութեամբ ի վերայ աշխարհին Պարսից, շարադրեալ գաղղ. լեզուաւ ի Պ. Լուդովիկոսէ Լանկլեսեան, թարգմանեալ ի նոյ բարբառ. ի Պ. Ճանճ Չրպետեան, արքայական վարժարանի հայկ. լեզուի բազմարուեստեան Դպրատան, անդամ արքայական Համալսարանին Հնագիտաց Գաղղիոյ ևն.» : Իսկ 1850 ին Բարիզի Ազգ. տպարանէն լոյս ընծայուած է **Ալփոնսոսի Լամարթինեայ ի Սիոնադրին իւր Ճերուած առ կանանս Ա'Օռւէ** (թրգմ. Հ. Դարբ. Այվազովսկի):

241. **Տ. Տիւքրէ:** Ֆրանսացիին տպարանէն հրատարակուած են **Նոր Կտակարան** (1825, իսկ 1828 ին՝ Բ. տիպ, ու նոյն տարին աշխարհաբարն ալ):

242. **Թիլլէր.** — Տպած է **Պատուիրանագիր** (1852), **Առաջնորդ** Հայերէն և Գաղղիերէն զրուցատրութեան (1855):

243. **Վիկտոր Պեւէնք:** տպագրիչը Բարիզ ունեցած իր տպարանին մէջ Մխիթարեան տառ. չունէր: Ճ. Արամեանի շարած մէկ գիրքը «Խորհրդածութիւնք յաղագս քրիստոնէական հաւատոյ» տպագրած է միայն 1854 ին:

105.ա **Ջանիկ Արամեան.** — Բարիզի մէջ իր սկզբնական փայլուն գործունէութիւնը [1854-62] տե՛ս **105դ** բուանմար (Թուրքիոյ բաժին):

244. **Ե. Թիւնօ եւ Ընկ.** — Կարդալ Վ.Ի.ԼԵՐՄ Թ.ԷՄԲԷի մասին գրուածքը: 1857 ին տպած է **Հայեր**, նաև **Երկրագործութիւն՝ որպէս ուղիղ ճանապարհ** (Սիմ. Մանիկեան = Միք. Նալբանդեան), դարձեալ Կարապետ Վրդ. Շահնազարեանցի կողմէ շարուած մասնաճիւղը: — Իր տպարանը կը գտնուէր Բասին փողոց, թիւ 26:

245ա. **Կարապետ Վրդ. Շահնազարեանց.** — Ծնած է Համասան 14 Մայիս 1814 ին: Կովկաս անցնելով, ուսումնարանէ ուսումնարան՝ իր մտաւորական պաշարը կը ճոխացունէ: 1839 ին սարկաւագ կը ձեռնադրուի Էջմիածին ու կը կարգուի տեսուչ «Ժառանգաւորաց»ի: 1842 ր. արեղայ, իսկ տարի մը վերջ վարդապետ ձեռնադրուելով՝ առաջնորդ կ'ընտրուի Տարօնի: 1849 ին կը գտնէք զինք ի Պոլիս, ուր քիչ տանէնէ ամէնուն համակրութիւնը կը շահի: Բարոզիչ Ղալաթիոյ, ապա Հասքէօյի: Իսկ արդամիտ ազգայիններ կը ջանան վարկաբեկել զինք՝ ազատ խօսքի համբաւէն զգուշացած, մինչև որ Պատրիարքարանի մէջ կը կազմուի հաւատաքննական ատեան մը ուր Շահնազարեանց յաղթանակը կը տանի: 1856 ին կը մեկնի ԲԱՐԻԶ, կ'առաջացունէ Ֆրնս. լեզուն և հոյ գաղութին (ի մասնաւորի Նուպար Բաշայի) օժանդակութեամբ՝ տարի մը վերջ կը հիմնէ տպարան մը ուրկէ լոյս ընծայած իր գիրքերը կ'ըլլան «Ճար Հայ Պատմագրաց»ը, **Ղևոնդ պատմագիր, Ասողիկ. Տարօնեցի. Ոս. Օրբելեան, Տարեգիրք Միքայէլ ասորւոյ պատրիարքի (1859), Վահրամ Րաբունի. Մովսէս Կաղանկատուացի. Թովմաս Մեծոբեցի. Հերմուհի Գուսանց երգոց** (1862) և քանի մը դասագիրք: Առանցմէ Ա-ր Ֆրնս.ի թարգմանելով կը հրատարակէ, նաև Հայոց Պատմութիւն մը, ջանալով իր ազգը եւրոպացւոց ծանօթացնել: Կ'սկսի բանախօսել Ֆրանսերէն և յուրջ յօդուածներով աշխատակցիլ տեղական թերթերու: 1862 ին կ'ընտրուի պատուական անդամ Ֆրնս. Կամառի Արձանագրու-



Կ. ՎՐԴ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ
(Անեցիք լուսանկար Տէր. Ա. Թէրզեանի)

րեանց և Գպրոցեանց ձիւղին : Հակառակ իր փայլած ճամբուն, մինչդեռ տառապագին կեանք մը կը բոլորէր սակայն անորոշ ու տանջուած էր յաճախ գրաշարութիւն ալ ընելու : — Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ԳՈՐԾԱՏԱՆ մէջ շարուած գիրքեր կը տպագրուէին Է. ԹԻՒՆՕ ԵՒ ԸՆԿ.ԵԱՆ մամուլով : 1862ին Մանչէսթրաբնակ Հայեր երբ իրենց մատուռ կ'ունենան՝ իրենց առաջնորդ կ'ուզեն ունենալ զինք : Շահնազարեանց իր տպարանը կը փոխադրէ ՄԱՆՉԷՍԹԸՐ ուր առաջին գործը կ'ընէ Անգլիերէն զարգացունել և 1864ին կ'սկսի հրատարակել **Երկրագունտ** հանդէսը՝ 59 թիւ միայն : — Հիւանդանալով՝ նոյն տարին կ'անցնի Փարիզ, Եգիպտոս և Պոլիս՝ ուր կը կնքէ իր բազմարդիւն կեանքը 29 Օգոստ. 1865ին՝ շաքարախտէ : Թաղուած է Հասքեօյ : — Յետ մահու՝ անմոռաց օգտակարութիւն մըն ալ մատուցած է կրօնքի այս վեհ պաշտօնեան, իր որբութեանց և զրկանաց պատող հարստութիւնը հրապարակած ըլլալով Ազգին՝ Նուպար Փաշայի միջոցաւ բարձրագոյն կրթարանի մը բացման համար : Փաշան 3000 եւս աւելցունելով անոր թողուցած 1000 ոսկիին վրայ, բանալ կու տայ «Ասարեան-Նուպար Շահնազարեան Վարժարան»ը Հասքեօյ : — Թողած է պատմա-բանասիրական կարևոր երկասիրութիւններ ձեռագիր, որոնցմէ **Քրիստոնէականը** միայն իր մահէն 4 տարի վերջ տպուեցաւ համանուն զարգոյն տպարանը :

207Գ. **Արդաճան Մուրատեան** — Փարիզի մէջ իր տպարանական գործունէութիւնը [1860] տե՛ս 207Ա. թուահամար (Երուսաղէմ) :

246. **Ա. Յուրատիէ** — Կարդալ **Վիկտոր Օտէմէ**ի մասին գրուածքը : 1861ին իր տպարանէն լոյս ընծայուած է **Նոր Ընթերցարան** :

247. **Մօռիս եւ Ընկ.ի** — Այս տպարանէն լոյս ընծայուած հայերէն գիրքեր եղած են ամփոփապար Գուիտոն Լուսինեանի սեփական հայ տառերով շարուած նոյն իշխանին գործերը, որոնցմէ յիշենք Պօղ և Վերգինէ (1881), Նախնական Սրբազան պատմութիւն (1896), Ֆրանսահայ երկհատոր բառագիրք (1900) ևն. :

248. **Կիմանցիի տպագրութիւններ** են ի Փարիզ **Գաղափարը այդ է** (1891), **Քաղաքական իրաւունք մեր** (1892) :

249. **Միջազգային Տպարան** (INTERNATIONALE)էն լոյս ընծայուած գիրքերն են Գիւղացիների մէջ, Անիշխանութիւն, Գիտութիւնների քաղաքականը, Եղբ. իրաւունքներ (1893, Խնդրի են հեղափոխական: Յեղ. փորձառութիւնները: Համայնք (5 թիւ միայն, 1894:

250. **Անահիտ** — 1897-1911՝ Ա. Չօպանեանի հրատարակած այս թերթը տպագրուած են. — ա. Vve Albouy, 75, Ավենիւ տ'Իթալի : բ. A. Pauvert, 7 և 9, Ֆոսէ Սէն Ժագ փողոց : գ. Ch. Noblet et Fils, 13 Գիժա փողոց : դ. Տ. Տօղրամաճեան, 18, Կօպլէն փողոց : ե. Կ. Ճերաքեան, 328, Սէն Ժագ փողոց : — Ասոնցմէ Շ. Նօպլէ և Ֆիսի մամուլով Ա. Չ. հրատարակած է «Անահիտ» Մատենադարանի թիւ 1-2 գործերը (Եղիկոսի պարունք, Աշխէնն որ Վինեիի քերթուածները), Նահապետ Քուչակի դիւանը, Օմար Խայեամի Քառեակները (պատկերազարդ թարգմանութիւն Գառնիկ Ֆնտգլեան) :

251. **Կէչիչէ** 1900ին տպած է «Բաղդատական քերակ. ձայնը և օրէնքները :

252. **Տպ. «Յառաջարան»ի** (Օտըօրան փողոց). — Բաց ի համանուն հանդէսէն տպած է «Փարիզի համալս. ուսանողական» 1900, **Խառազան** (Ա. Պարթեւեանի յախուռն քննադատական Ա. Չօպանեանի դէմ) 1901, **Դիւցազնական** (Միսաքեան) 1902 :

253. **Յ. Միսաք** տպած է **Օ խա** 1901, Ծրջագիծ (1902), Հայրենասիրութիւն իբրեւ յանցագործութիւն (1903).

254. **Բազմալեզուեան Տպ. Կ. Բասմաճեանի** — Բաց ի նոյնին կողմէ հրատարակուած **Բանասէր** հանդէսէն, այս տպարանէն լոյս ընծայուած են. — Բնն. պատ-

մուրհան ԺԹ. դարու հայ դպրութեան, Իրանի հերոսները հայ ժողովրդի մէջ (1901), Հայ Վաճառականութիւնը Թուրքիայում, Գլխաւոր ամսաների ցուցակը (Լզմ.), Ոսկի խաչադամը, Արտաշիր Բաբական (Յ. Թիրեաքեան հետ) 1906, Մ. Մեսրոպի և գրերու գիւտի պատմութեան աղբիւրներ և անոնց քննութիւնը, **Նաւնամակ** (Յ. Թիրեաքեան հետ) 1907:

255. **Ռ. Քանղէր**, տպած է 1901-2 տարւոյ «Անահիտ»: — Իսկ ՇԱՐԼ ՆՕԴԻԷ 1902ին տպած է **Թող չմեռցրեն** (Արմէն, որ «Անահիտ»ի պարգևն է):

256. **Տպ. Հայկական** (IMPRIMERIE ARMÉNIENNE)էն լոյս ընծայուած է **Ա. Չօպանեան, Հայաստանի դատաստանին** (1901), **Հայր ի Պոլիս** (1906):

257. **Էսթ-Ուէսթի** տպարանէն (Est-Ouest) 1905ին լոյս ընծայուած է **Բարիզի Հայ որբերու խնդիրը**:

160ա. **Տիգրան Տօղրամաճեան**. — Բարիզի մէջ տպարանական իր գործունէութիւնը (1899-1908) տե՛ս 160ա թուահամար (Թուրքիոյ բաժին):

258բ. **Կարապետ Ներսէսեան** (Ch. Nercès). — Ծնած է Զմշկածագ 1876ին: Նախ. կրթութեան աւարտելու տարի մը մնացած՝ կառավարութիւնը անոր ոյժ Միացեալ Ընկերութեան վարժարանը կը փակէ և աշակերտը կը ցրուին: Կարապետ կ'անցնի Տրապիզոն, անկէ Պոլիս և շոգենաւային ընկերութեան մը մէջ ծառայելէ վերջ՝ Ա. Արփիարի խորհուրդով կը մտնէ «Հայրենիք»ի տպարանը, հոն կը սորվի գրաշարութիւն: 1896ին դեր կ'ունենայ հայ. յեղափոխական գործին մէջ և մահուան կը դատապարտուի, բայց կ'աջողի փախչիլ Աթէնք ուր կը մնայ 5 տարի, գործելով անդամական տպարանի մը մէջ և սորվելով Յունարէն: 1901ին Բարիզ կ'անցնի ուր տարի մը կը մնայ: 1902ի վերջերը Ժընեւ կը կոչուի՝ Եղբ. Հայ. Յեղ. Միութեան հրատարակչական գործերուն համար: Հինգ մը տարի կը մնայ Դաշնակցութեան տպարանը, յետոյ հիմնելով առանձին փոքր տպարան մը՝ կը հրատարակէ **Գիտութիւն և Կրօնք** հանդէսները: 1906ի ամրան կը վերադառնայ Բարիզ ուր կ'սկսի հրատարակել **Նոր-Հոսանք** անուն ժամանակի երկշաբաթաթերթը: Բուռն ալ մը կ'արծարծի իր մէջ՝ հոն բանալու համար հայկական տպարան մը որպէս կարենալ լոյս ընծայել գեղարուեստական ճաշակով պատրաստուած գործեր: Այդ ալ կ'իրականանայ և Ներսէսեան նոյն խանդով կը տպագրէ **Արմաւիր** (1908), «Անահիտ» հանդէսը՝ 1909-11, **Նաղաշ Յովնաթան** (1910), **Անանիա և Եղէգնաձոր** (թրգմ. Գ. Յօնդլեան) 1911 և հայկ. տպ. 400ամեակի առթիւ՝ Չօպանեանի պատկ. հոյակապ **Հայ Էջեր**:



Կ. ՆԵՐՍԵՍԵԱՆ

259. **Համազգային** տպարանէն 1907-8ին լոյս ընծայուած են **Հոգեւարքի եւ յոյսի ջահեր** և **Հայորդիներ** (Սիամանթօ = Ատոմ Եարճանեան):

260. «**Ջնչակ**»ի տպարանէն լոյս ընծայուած է — բաց ի համառօտ յեղափոխական թերթէն — **Բարդ Մամար** (1910):

**ՄԱՐՍԷՅԼ** (հին անուամբ ՄԱՍՍԻԼԻԱ) քաղաքին մէջ Ա. անգամ տպարան հիմնողը եղած է բազմաջանաջան **Ոսկան վրդ.** իր խմբով **1673**ին: Այս տպարանը

Ոսկանի մահուամբ՝ ընդհատումներով շարունակուած է մինչեւ 1710։ Այնուհետեւ մէկ ու կէս դար՝ ի Մարսիլիա հայ տպարան գոյութիւն չունենար. 1862ին է որ **Ճ. Աւագեան** քանի մը տարուան համար հոն կը հաստատուի, և իր՝ հոնկէ հեռանալէն 21 տարի վերջ միայն տպարան մը կը հիմնէ հոյ. ազգ. գործիչ **Մ. Փորթուգալեան**՝ անխափան գործելով ցարդ։

## 26Դ. Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի. —

Սոյն բաւականաչափով և ախորժով տպարանին բոլորած գործունէութիւններն անկէ առաջ արձանագրած ենք 3 տարբեր տեղեր. Լիվոռնոյ (Իտալիա, 1670-1702), Կ. Պոլիս (Թուրքիա, (1700-1) և Իզմիր (1676)։ Ամսթերտամի պանելով այս գործատան ծագման ամբողջական պատմութիւնը՝ խօսինք հիմա ՈՍԿԱՆ Վ.ՐԴ.ի և իր անձնուէր աշխատակիցներուն մասին։ — Երկար թափառումներէ վերջ, — քանի որ չէ գիտցած պատրաստել կայծն և չէ իր գիրերուն բաղդաւորման երկրի մը մէջ տպուած ըլլալն այնքան խափանել ժամանակներու մէջ, որպէսզի կը համոզուած անոնց սպառումին, — Երեւանցին Ոսկան ամփոփեց անցնիլ Փրանսա՝ որ թէև կաթոլիկ երկիր՝ սակայն ունէր Գալլիկանութիւն (Gallicanisme) անուամբ եկեղեցական ինքնավարութիւն, և ուր հեզ ազատախոհ կը յուսար թէ կրօն. հալածանքն այնքան սաստիկ չըլլար։ Այս առաջադրութեամբ, 1669ին Լուի ԺԴ.ի կ'ուղղէ աղերսագիր մը՝ անոր ընկերացանելով իր դրոշմած Աստուածաշնչէն օրինակ մը։ Թագաւորը նուէրը կ'ընդունի, ինչպէս նաեւ իր երկրին մէջ տպարան մը բանալու մասին Ոսկանի մատուցած խնդրանքը, պայմանաւ որ կաթոլիկ կրօնին հակառակ դէմ ոչինչ պարունակեն իր տպելիքները։ Վստահելով արքունական խոստումին, Ոսկան Վրդ. Ամստերտամէն Մարսիլիա փոխադրեց համանուն տպարանը: Նիւթականի խնդիրը սակայն չափազանց կը նեղէր զինքը. հարկադրուեցաւ իրեն շահակից ընկեր ընել ԹԱԴԷՈՍ ԵՐԷՑ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆԸ որ արդէն իրեն գործակցած էր յԱմստերտամ: Ոսկան իրեն կը վերապահէ գիրերու սրբագրութիւնը, կասկածելով Թադէոսի ուղղամտութեան վրայ։ 1673ին մէկտեղ պայմանաւորուած են արդէն և երկուքին 1000ական դահեկան դրամագլուխ դրած։ Տպուած գիրքերէն 350 օրինակ Ոսկանի սեփականութիւնը պիտի դառնային՝ իրր սրբագրութեան վարձք, իսկ գոյացած հասոյթը կէս առ կէս պիտի բաժնէին։ Բայց հազիւ թէ տպարանը բացուած էր, կաթոլիկ Եպիսկոպոսը չուշացաւ իր իշխանութեամբ տակ առնել զայն. խնդրուեցաւ Մարսիլիոյ եպիսկոպոսէն որ արգիլէ տպագրութիւնը ոչ-պապական գիրքերու՝ այդ բարեպաշտ թեմին մէջ։ Եպիսկոպոսը խիստ միջոցներ ձեռք կ'առնէ Ոսկանի դէմ և Հռոմէն դրկուած հայ-հռոմ. քահանայի մը միջոցաւ գրաքննիչի մը պաշտօնը կ'սկսի կատարել։ Ծերունին Ոսկան չընկրկեցաւ այս խոչընդոտներուն առջեւ. քաջաբար ձեռնարկեց գործի, նոյն տարին իսկ (1673) տպելով **Գրքուկ կարեւոր հանապազորդեանը** «Նորում կայ սպառնական պարզատօմար, յանանցոյց և այլ մանրամասնարար բան» (*)։ Ձեռնամուխ կ'ըլլայ նաեւ **Նարեկի** տպագրութեան որ անկատար մնացած է [48 էջ միայն տպուած] իր մահուամբ։ Նարեկի բոլոր տպագրութիւններէն անդրանիկագոյնն է. տակաւին որուն օրինակներն խիստ հազուագիւտ են հիմայ։ — Բայց իր գլխաւոր մտադրութիւնն էր լոյս ընծայել պատկերազարդ **Ժամագիրք** մը, նկէ առանց ընելու որ այդ գիրքն անանկ հրատարակութիւն մըն էր, որ առանց քան երբեք ենթարկելի էր պապաշունչ գրաքննութեան խստութեանց, մանաւանդ որ իր դիմացն ունէր հայ-կաթոլիկ գրաքննիչ մը։ Թադէոս երէց թէև անոր շահընկերը, բայց կրօնամոլներէ կաշառուած՝ սկսաւ տարին ընթացք մը բռնել ծերունիին հանդէպ։ Ժամագիրքին առաջին թերթերը հազիւ թէ մամուլէն դուրս ելած էին, և ահա Համազասպեան անօրէն ու վատ կերպով կը շարժի իր դէմ, մատնութիւններով և անհուր քսութիւններով ջանալով յար տապածել թէ Ոսկան հերետիկոս մըն է, քանի որ կաթոլիկէ ուղղափառութեան դէմ էր իր տպագրածը, և խնդիրը կը հանէ պետական և կրօն. ատեաններու առջեւ։ Հալածանքն այնքան առաջ կը տանի և բազմամեայ ու բազմերախտ ալեւորն ա՛յնքան կը տառապեցունէ, որ Ոսկան Վրդ. ուր ուրեմն կը մեռնի հոն, սրտին ցաւէն, պանդխտութեան մէջ, 1674ի սկիզբները՝ 60 տարեկան։ — Օրմանեան Ս.ի «Ազգապատում» խորագիրով ստուար անտիպ երկասիրութենէն կը քաղենք սա քանի մը խորհրդածութիւնները. «Իր կրած երկարատեւ և հոգեմաշ տագնապներուն

(*) 3 տարի վերջ այս գիրքին Բ. տիպը եղած է. օրօրում կայ պառունակեալ յանձնացուց եւ այլ բանք յոյժ պիտանի ձեռայնեալ հայկազնեանց եւ յաւէտ վանականաց: **Նաեւ, եւ ի Տեառն Ոսկանայ վրդ.ի՝ յետ դառն մահուան լինոյ ի պատճառս տիրանենց եկեղեցոյն յԹադէոսի Երեւանցւոյ** բանսարկուի:

պէտք է վերագրել իր տարաժամ մահը . . . երբ շատ աւելի արդիւնքներ հնար էր սպասել իրմէն նման տոկուն և անխոնջ բնաւորութեան վիճակուած անձէ մը : . . . Համազասպեան աւելի տպարանք փճացնելու և գիտութեան լոյսը մարելու նպատակ ունէր , ինչպէս բաւած են զինքը ճանչցող ժամանակակից Զմիւռնացիք որոնք զայն ոչ միայն քահանայ՝ այլ և փիլիսոփայ կոչելու անարժան կը համարին : . . . Այս կերպով տպագր. ձեռնարկին կատարելապէս նահատակ մը եղաւ՝ տպարանի փոշիներուն մէջ բանալով այս Սրբազան Արքեպիսկոպոսը , մինչ շատ դիւրին էր իրեն՝ իր ծագմամբ և սարկաւագ փառքերու և հեշտութիւններու մէջ անցընել իր կեանքը , կարգակից եկեղեցականներու նման : Ոսկանի անձնուրութիւնն արժանի է մեր ազգին մտաւոր զարգացման տեսակէտէն՝ մեծ երախտաորներու կարգը դասուելու , և հայ տպագրութեան խոկալս մղում տուողը ճանչցուելու : Նախընթաց տպագրութիւն ճանչցուած 1512-3 տարիներու հրատարակութիւնները ժամանակագրական փառք մը ունեցան միայն , առանց իրական օգուտի . Աբգար Եւդոկիացիին ձեռնարկն ալ ամփոփուած ու սեղմուած մնաց ու անհետացաւ . Ոսկանի գո՛րծն է որ իր տարաբաղդ մահուընէ ետքն ալ շարունակուեցաւ , և ցրուած բոյսէ մը բախուած սերմերու նման՝ բողբոջները բազմացան : Դաւանական տեսակէտէն Հռոմէականք իրենց համախոհ մը եղած կը կարծեն Ոսկանը . սակայն բոլոր պատմական պարագաներ կը ցուցնեն թէ պատահմամբ ու բռնադատեալ առ. երես համակերպող մը եղած է նա , և ոչ աւելի , և այն ալ տպագր. ձեռնարկը չխափանելու համար : . . . Գերեզմանին անյայտ մնացած ըլլալն ալ իրր նշան կրնայ նկատուիլ թէ իր յիշատակը պատւոյ արժանացած չէ անոր այն կրօնական իշխանութենէն» :

** ԹԱԴԷՈՍ ԵՐԷՑ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆՑ [7Ը թուահամար] չարաչահութեանց անդրադարձանք վերև . այս չքահամն անզուգական Ոսկան Վրդ.ի յաջորդին ու անոր մահուան դրդապատճառ հանդիսանալու տխուր դիւցազնութիւն ունեցաւ : Հանգուցեալին յաջորդելէն և ազգական , իր շողոմ շարժուձևերով կրցած էր անոր մտերմութիւնը վաստկել և անոր կողմէ՝ Ամստերտամէն Լիվոռնօ ղրկուիլ , հոն պատրաստելու , Ածաշունչի տպագրութեան համար գրամ խոստացած հայ վաճառականներէ , որոնք — ըստ Թադէոսի — իրր թէ խոստումնին չյարգեր զառ , կը յանկարծակի՝ ուղարկուած բոլոր գիրքերը : Սակայն Համազասպեան երբ դատարան կը դիմէ , փոխանակ անիրաւողներուն՝ ի՛նքն է որ կը դատապարտուի բանտարկութեան , այսպէսով փակուն տպացոյցը տալով իր ստոգութեան : Պաղին նախկին միջնորդութեամբ՝ Թադէոս ազատ կ'արձակուի քիչ յետոյ , ինչ որ կրկին ապացոյց մըն է թէ ինք պիտանի մարդ մըն էր կարողիկ կղերին համար : — Բնականաբար չհամարելով Ոսկանի դէմ սարքած չարութիւնները , Համազասպեան անոր մահէն վերջն ալ շատ դժուարութիւններ յարուց ժառանգորդ՝ Ս. Լեռնեանի և իր ընկերներուն դէմ , ու նոյն խել մտածութեանց ալ դիմեց : Երբ ի Մարսիլիա Ոսկանի հաւատարիմ գործակիցներուն դէմ մղած փառ պայքարին հետևանօք անոնցմէ ոմանք վերադին բռնեցին Ամստերտամի ճամբան , ինք անցաւ Վենետիկ (տե՛ս Եւդոկիոյ բաժին , 7Ա թուահամար) :

** ՍՈՂՈՄՈՆ ԼԵՌՆԵԱՆ Ոսկանի քեռորդին՝ աշխատակցած էր յԱմստերտամ ու Մարսիլիա : Ոսկանի Մահէն վերջ՝ ժառանգորդը կը մնար անոր : Երբ Համազասպեան կառավարութեան միջոցաւ կնքել տուաւ տպարանը , վէճ ծագեցաւ իր և Ս. Լեռնեանի միջև . այս վերջինը կը փախցնէր մեծամասն տպագրիչին տառագրած պայմանը ճշդել գործադրել «Ժամագիրք»ի հրատարակութեան համար , ու յետոյ վերջացունել անէն հաշիւ խազմարար քահանային հետ : Տպագրութիւնը յառաջ կը տանէին ՆՇԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ և գրաչար ՎԱՆԱՆԴԵՑԻ ՄԱՏԹԷՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ որոնք նոյնպէս «Ս. Էջմիածին և Ս. Սարգսի Զօրավարի տպարան»ին անձնուէր մշակներն եղած էին : Միւս կողմէ , կարողիկ կղերին կասկածները փարատելու համար՝ իրր գրաքննիչ ուզեցին Յով՛աննէս Հոլով քահանան : Համազասպեանին գործին չէր գար այս երեքին եռանդուն գործունէութիւնը . կը դիմէ դատարանին՝ յայտնելով թէ տպածնին հերետիկոսական մասեր կը պարունակէ և պահանջելով վերստուգումը լոյս ընծայուած Տ պրակներուն , նաև իր անուան յիշատակութիւնը «Ժամագիրք»ին վրայ : Դատարան ի նպաստ Համազասպեանի կը վճռէ . բայց Ն. Գրիգորեան ջերմապէս կը բողոքէ Տ թերթերը վերստին տպելուն դէմ և ետ առնել կու տայ արուած վճիռը : Համազասպեան ուզելով հեռի մնալ Նախիջի պէս գործունեայ հակառակորդէ մը՝ կը դիմէ մտածութեան . կ'ըսէ թէ սինլքոր մըն է անիկա . ուստի կը բանտարկուի և 1676ին միայն կրնայ ազատիլ : Մարսիլիոյ եպիսկոպոսը

նոյն տառերը քաղաքէն անցնող կարգիկ քահանայ մը՝ Թովմաս Հայրապետեանը գրաքննիչ կը կարգէ որուն կը յանձնէ «Ժամագիրք»ին սրբագրութիւնը : Հայրապետեան իր մոլեռանդութեամբ կը գերազանցէ Հոլովն ու նոյն իսկ Համազասպեանը, պահանջելով որ արդէն արգիլուած 8 թերթերէն զատ 8 թերթեր եւս վերատպուին, ու ջանալով ընել կարգ մը սրբագրութիւններ ալ : Ոսկանի օրով 1673 ին սկսուած «Ժամագիրք»ը՝ հազար ընդդիմութիւններով ու չարչարանքներով կարելի կ'ըլլայ աւարտել 1676 ին, Ոսկանի և Համազասպեանի անուանց յիշատակութեամբ : Լեռնեան խմբակը մէկ կողմէն կռուելով կրօնամոլ կղերին կողմէ յարուցուած արգելքներուն դէմ, միւս կողմէ կարող կ'ըլլայ հրատարակել հետեւեալները. — **Հաւատամնութիւն** (1674), **Գիրք այբուբենից** «և կերպ ուսանելոյ զլեզուն խօսս. նախ քերականութեան» 1675 : Վերջնոյն յիշատակարանին մէջ կը կարդանք. «Աւարտեցաւ գրքուկս.. արդ որ հանդիպիք սմա, աղաչեմք զմի հայր մեր՝ վասն աջողութեան գործարանիս և պատճառաց սորին, Ոսկանայ վարդապետին հանգուցելոյ ի Քս., և եղբօր նորին Պարոն Աւետիսին, նաեւ վասն իմ նուաստիս ամենից պաշտօնատարի Սողոմոնիս, որ յոյժ վշտիւք վճարեցի...» : Իսկ 1676 ին (բաց ի **Գործուկ կարեւոր**ի Բ. տիպէն զոր յիշատակեցինք արդէն), կը հրատարակեն **Մաշտոց** մը (Բ. տիպ) որուն յառաջաբանին մէջ ասուած է «... աղաւնամիտ վարդապետն (Ոսկան) միաբանեալ էր ընդ կայենածին և օձաբարոյ արիստոկրատեան չերիցոյն Թադէոսի Երեւանեցւոյ առ ի տպումն Աւետի Սաղմոսին, յորմէ պատճառէ կրեալ զզանազան փորձութիւնս և զնորատես հարուածս... մանաւանդ բարձեալ ի կենաց առնի, զորոյ զկապէր պատմութիւն անցից նորին ամենայնի ընթեռնլոց էք ի յատուկ գիրս նորին. և այսու ամենայնիւ զկնի մահուան սեառն խոյ մատնեցայ եւ որդւոյ փոխանակ նորին ի ձեռն անօրէն գողգողին անն չորս... գործելով միշտ (Թադէի) ընդդէմ ազգին Հայոց և Ս. Աթոռոյն Էջմիածնի և գործարանի նորին, ոչինչ համարելով զամենայն Հայս և զզօրս բանադրանս կաթողիկոսին և ամենայն վարդապետաց... Որովք... պատճառաւք ոչ կարացաք ցարդ կատարել զհրաման վեհին. այժմ սակաւ ինչ զօգի առեալ... ձեռն արկաք առ ի տպել... նախ զփոքր Մաշտոցն, և ապա զկատարեալ բանն բառ հրամանի հոգեւոր տիրին» : Յիշատակարանը կը յաւելու. «... յիշեսջիք... զՍողոմոնն, որ կայ մատնեցեալ բազմաց չարչարանաց ի Մառջիկայ սակս գործարանի Ս. Աթոռոյն Էջմիածնի... և զիս զնուաստս յանձնեցուն զՄկրտիչ անուամբ և եր բանի տպատարս... հանդերձ... Ջուղայեցի Ոսկեձեռբենց Տէր Պաւլին, որ ոչ խնայէ օգնել մեզ ի նեղութեանս մերում, ի գործառնութիւնս յայս» ... : — Հակառակ այս խումբ մը հրատարակիչներուն կորովի դիմադրութեանց, կարգիկ կղերին յարուցած արգելքները չեն ուշանար վերջ ի վերջոյ ընդհատելու անոնց գործառնութիւնները : Այսպէս Լեռնեան և իր ընկերները կը մնան անգործ քանի մը տարի : 1683 ին միայն՝ Սողոմոնի երկարժամանակեայ դիմումներուն վրայ, կառավարութիւնը կ'արգիլէ Հայրապետեանին՝ խառնուիլ հայ տպարանի գործերուն, և կը պատուիրէ տպարանատիրոջ՝ ճշդիւ կատարել կառավարութեան դրած 1669 ի պայմանը որ էր կարգիկ եկեղեցիին հակառակ գիրքեր չտպել : Այն առեն է որ Սողոմոն կրկին գործի կը ձեռնարկէ ու նոյն տարին կը հրատարակէ **Գիրք աշխարհացոյց**, **Ակն հոգեկանը**, նաեւ **Պարտէզ հոգեւոր**ի Բ. տիպը : — Տասնամեայ հալածանաց դէմ դրած մաքառումներէն այլ եւս տանելի դարձուցած չէին Լեռնեանց խումբին հոն մնալը. Կ'որոշեն Ամստերտամ անձնիլ և հոն գործել : Այս ընդրէն սակայն գրաշար ՄԱՏԹԷՈՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ'ն է որ պիտի հանդիպինք ի ՀՈԼԱՆՏԱ : Միւսներուն հետքը կը կորսնցունենք. Կ'երեւի թէ անոնք կ'սկսին ուրիշ գործերով զբաղիլ : Միայն «Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի զօրավարի տպարան»էն 1686 ին լոյս ընծայուած փոքր ժամագիրք մըն է որ կը տեսնենք, ճակտին դրոշմուած «... վերակացութեամբ, ծախիւք և աշխատութեամբ Ջուղայեցւոյ Մովսէսի որդի Սիմոնի Ճօրճի, և արդեամբք Մոշադրիպեցւոյ Հայրապետի որդի Գրիգորի... վաճառականի», բոլոր բոցրով ու զարդարեալ էջերով : 1702 ին Մարսիլիա տպուած կը տեսնենք 3 գիրք. — **Տառակոց**, **Հայելի վարուց** և **Յիսուս Որդի**, Ոսկանեան տառերով, բայց առանց տպարանի յիշատակութեան : 1708 ին **Բանալի չերմեռանդակերս** (Բ. տիպ) և **Կարգաւորութիւն հաւատակաց աղօթից եկեղեցւոյն Մեծին Հռոմայ.** այս 2 ին Յիշատակարաններէն կ'իմանանք թէ Խոջաչինեցի Մինասի որդի Յովհաննէս անուամբ մարդ մըն է զանոնք «պատմայ ընել տուող»ը : Իսկ 1710 ին դարձեալ առանց տպարանի յիշատակութեան Մարսիլիա դրոշմուած է **Սաղմոս** մը :

105բ. **Ճանիկ Արամեան.** — Մարսիլիոյ մէջ տպարանական իր կարեւոր գործունէութիւնը [1852-4] տե՛ս **105գ** թուահամար (Թուրքիոյ բաժին) :

261. **Մկրտիչ Փորթուգալեան.** — Ծնած է 9 Հոկտ. 1848ին Պոլիս՝ Եակըրդ Պարոյ փողոցը : Հայրն էր սեղանաւոր Ռափայէլ որ իր ժամանակին ուսեալ Հայոցմէ կը նկատուէր եւ որուն մատենադարանով՝ պատանին Մկրտիչ կրցած է յագուրդ տալ իր ընթերցասիրութեան : Ռափայէլ մեռած է 59 տարու, երբ իր որդին մանկահասակ էր : Ուսումը կ'առնէ Գում Գաբուի Պէզճեան վարժարանը, հայերէնի եւ պատմութեան ուսուցիչ ունենալով Յ. Մայէզեանը, ֆրանսերէնի՝ Յ. Ոսկանը, թուրքերէնի՝ Հերերիկ հօճան, բուսաբանութեան եւ աշխարհագրութեան՝ Յ. Թիւլեանը : Այդ առենները, բառ Սահմանադրութեան կազմուած Ազգ. ժողովն իր նիստերը կ'ընէր նոյն դպրոցին մէջ, մինչ Մայր եկեղեցիի Ս. Խաչ ժամը կը փոխադրուէին ուսանողք՝ որոնցմէ շատեր կ'երթային «Լուսաւորեալ» եւ «Խաւարեալ» կուսակցութեանց բուռն մաքառումները դիտելու, եւ անկէ ժողովի — որոնք յաճախ գինարբական միջամտութեան առթիւ կը զառանցին — աշակերտ ժամին մէջ ծնունդ «սէր ողորմեա» կ'երգէին կառավարիչ Յովհաննէսի ընկերութեամբ, «ազգին հայոց սէր միութեան» մաղթելով : Մ. Փորթուգալեան տեսնելով որ իր դպրոցին հոգաբարձութիւնը «Խաւարեալ»ին յանձնուած է, կ'անցնի Սամաթիոյ Ս. Սահակեան վարժարանը որ «Լուսաւորեալ» (այսինքն Սահմանադրական) հոգաբարձութիւն ունեցող համբաւ ունէր. շրջանաւարտ կ'ելլէ հոնկէ 1867ին : Հայ լեզուի ուսուցիչն էր Թ. Նազարեան : — Փորթուգալեան



Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Ուսուցիչ-հրապարակագիր եւ ազգ. գործիչ

կը պաշտօնավարէ ֆրնս. գրավաճառ-բլբավաճառ Բիեռ Թուռոյի քով որուն խանութը Մազա-ճըլար փողոց կը գտնուէր եւ որ ֆրանսերէնի ուսուցիչ ալ եղած էր Սամաթիա, եւ Լուսաւորեալներու հետ յարաբերութիւն ունենալով՝ հրատարակած էր La Question Arménienne անուն տետրակ մը՝ անձնիւր էջի համեմատական հայերէն թարգմանութիւնն ալ գրուած . (բեռ թարգմանիչի անուն նշանակուած չէ, բայց կը կարծուի գործն ըլլալ Մազատարեան Թումէնի) : — Գրավաճառութեան գործին ծանօթանալէ վերջ, Փորթուգալեան 1876ին գրատուն-բլբավաճառանոց մը կը բանայ, Բաբըգի Հաչէկեան բերել տալով գրեն. պիտոյքը : Այդ առենին է որ Ճ. Արամեանի տպարանէն հրատարակած է **Խավեար խանի Պօռասին փինակը** գրգոյկը զոր «Սարաֆ Ամբակում» ծածկանունով երիտասարդ մը (այժմ քահանայ ի Կովկաս) գրած ու իրեն ծախած էր : Տարին մը ձեռնարկի կ'ըլլայ այդ գործէն՝ տարիքին անչափահասութեան եւ ժառանգական խնդիրներու առթիւ յաճախակի դատավարութեանց հետեւանօք . այնուհետեւ պաշտօն մը կ'աշխատի մեծ եղբօրը՝ Պետրոսի քով որ Բ. Թուռոյի հետ կը գործէր : Կարապետ Պալճեան վարժապետի (տես † Բարթողիմէոս վրդ.) առաջարկութեամբ կ'սկսի իբրեւ ուսուցիչ պաշտօնավարել Եէնի քէօյ՝ Ըէքզեանց բնակարանը, յետոյ Թէրզեանի ընկերութեամբ, Պէշիկթաշ՝ Զօհրապեան Յակոբի տունը : Առնք կ'ըլլան նախաքայլերն իր ուսուցչական ասպարէզին : Յետոյ Յ. Թօզլեանի եւ Կ. Պարոնեան տպագրիչներուն հետ համաձայնելով՝ կը կազմէ Հրատարակչական մը. Մկրտիչ կ'սկսի թարգմանել Ա. Տիւմայի **Տիկին Մօնսորօն**՝ զոր ընկերները լոյս կ'ընծայեն պրակ առ պրակ : Բաց աստի, Փորթուգալեան մասնակցած է «Գործաւոր անուն» հրատարակչական ընկերութեան, որուն անդամներն էին Ա. Սուրէնեան, Յ. Չինճիրճեան, Յ. Թիւլեան, Խ. Թաշճեան, Անդրէաս Փափազեան եւն. եւ որ 1871ին Վէզիր խանի իր կեդրոնատեղիէն լոյս ընծայած է քանի մը գիրք (ինչպէս «Բանք հաստատելոց որուք», «Դաշտին առեան անկախ դատաւորաց», «Համառօտ դասագիրք Հայոց պատմութեան», «Փող արեւելեան» եւլն) : — Ազգ. պատմութեան ընթերցումը ջերմ փափաք մը ծնցուցած էր Փորթուգալեանի մէջ՝ երթալ Հայաստանը տեսնելու եւ գաւառի Հայութեան համար աշխատելու, փափա՛ք որ 1869ին կ'իրա-

Կամախայ՝ իբր ուսուցիչ իր մեկնումովը Եւդոկիա ուր «Անձնուէր Ընկերաց» մասնաճիւղ մը կը հաստատուէ, նպատակ ունենալով կիրակի օրերը մայրենի լեզուի ձրի ուսուցում՝ թրքախօսներու : Մասնաւոր յառաջդիմութեան այս եռանդին հաշտ աչօք չեն ուզեր նայիլ տեղացի մեծ-աղաները որոնցմէ. Յ. Մուրթեանեան չվարանիր նոյն ընկերութիւնը կառավարութեան մատնանշելու իբրեւ յեղափոխական խմբակցութիւն մը : Պարագլուխ ուսուցիչը տարապարտուց կը բանտարկուի, եւ երբ առժամանակեայ արձակուրդ մը կը շնորհուի իրեն՝ առիթէն օգտուելով կ'անցնի Սվազ, գրեթէ արտասահման վիճակի մէջ, Պատրիարքարանի կողմէ իբր քննիչ Փոքր Հայք ղրկուած Նաճառեան Փիլիպպոս եւ Սրապեան Կիւրեղ վարդապետներու պաշտպանութեան տակ, առաջնորդ Պետրոս Վ. Թաշճեանի միջոցաւ կուսակալին բողոքելու համար Եւդոկիոյ հայ ժողովուրդին վրայ բռնացող աղաներու կամայականութեանց դէմ : Դատը բարձի թողի կ'ընեն եւ տարաբախտ վարժապետին 8 ամիս աքսորելու պատժուէ վերջ կը դառնայ Պոլիս ուր, 1874-5, կը վարէ **Ասիա** թերթին խմբագրութիւնը : 1875 ին է որ կը մեկնի Վան, դարձեալ կրթ. առաքելութեան պաշտօնով, Վասպուրական աշխարհի Հայութեան մատուցանելով բազմագին ծառայութիւններ որոնք Տաճկաստան իր բնակիլն անկարելի դարձուցած են այլ եւս : — 1885 ին կ'անցնի ՄԱՐՍԷՅԼ, ուր իր սեփական տպարանը հիմնելով կ'սկսի հրատարակել **Արմէնիա** լրագիրը՝ (15 տարի անընդհատ հրատարակուող իբր եռօրեայ) որ այս տարի թեւակոխեց Իէ. տարին եւ որ առաջին մէկ օրէն նուիրուեցաւ Հայոց դատին : Թերթը տպագրուած է միշտ Մարիուս Ճիքէլի մամուլով : Ի սկզբան իր հասցէն էր Armény փողոց, թիւ 2. եւ երբ Փորթուգալեան կ'աջողի բնակիչը Վանէն Մարսէյլ փոխադրել՝ իր տպարանական կազմածքովը կը փոխադրուի Vacon փողոց թիւ 50. ապա Allées de Meilhan, թիւ 44, նաեւ Glandevès եւ Beaumont փողոցները, հուսկ ուրեմն Place Alexandre Labadié, թիւ 17 : — Ա. անգամ տառերը Պոլսէն՝ Տամատեանի ձուլարանը հայթայթած է իրեն . իսկ երբ Թուրքիոյ հետ իր յարաբերութիւնները կը խզուին՝ Վենետիկէն : Դրաշարի մասին միշտ նեղութիւն քաշած է : Նախ Պոլսէն հոն կ'երթայ Վանցի Եղիազար Տատուրեանը, յետոյ յաջորդաբար Թոսունեան մը, Պէրպէրեան Յակոբ Պոլսեցին եւ Մ. Ճիքէլի գրաշարներէն Լուի Լայռաք անուն Ֆրանսացին որուն հայերէն սորվեցուցած էր եւ որ 4 տարի հայերէնի գրաշարութիւն ըրաւ անոր մօտ: Փորթուգալեանի վերջիններ գրաշարը եղած է Նշան Սիրունեան, իսկ ներկայիս մէջ՝ իր աղջիկները, Օրք. ՃԱԻՃԱՆ եւ ՀԱՅԿԱՆՈՅՇ, — պարագայ մը որ հայ տպարանական աշխարհի 400ամեայ գործունէութեան մէջ աննախընթաց նորութիւն մը կը կազմէ: Իրենք գրաշար-մեքենայ (linotype) ալ վարել գիտեն եւ անդրանիկը 3 տարիէ ի վեր տողաշարն է La Sémaphore de Marseille օրաթերթին : — Այս գործիքը որ 13 րդ էջին վրայ գծագրուած գրամեքենային պէս ստեղնաշար ունի, իր մէջ պարունակող հնոցով եւ. կը ձուլէ ու կը շարէ ամբողջական տողեր՝ ստեղնաշարին վրայ դաշնակահարութեան պէս սատարող մատներու ճնշման տակ : Երբ տողը լեցուի, ձուլուած նիւթէն ցայտք մը մայր տառերու ամբողջութեամբ կազմուած կաղապարին մէջ կը նետուի, եւ այսպէս կը յօրինէ միաձոյլ տող մը . ապա մայր տառերը կ'երթան իրենց տեղերը: Օտարազգիներ իրենց օրաթերթերուն համար վերջերս Պոլիս եւս բերած են նոյն մեքենայէն:




ԳՐԱՇԱՐ-ՄԵՔԵՆԱՅ

** Բաց ի **Արմէնիայէ՝ Մ. Փորթուգալեանի հրատարակութիւնք** եղած են . — Հայ դիցաբանութիւն մը (այս տարի Բ. տիպ), Հայ գիւղացի, Սարգիս Իսրայէլի, Ազատութիւն Պուլղարիոյ եւ կենսագր. Պուլղար ապստամբապետաց (1888), Հայաստանի թշուառները (1889), Ժողովրդ. բնբերգարան, Լինչի օրէնքը Տաճկահայաստանում, Թիւրքիան հայերն եւ իրենց դրացիները, Արմէնիայի յուշարար (1890), Վէժ, Թոմաս Բոցարիս, Նամակներ Մ. Փորթու-

գալեանի գրած տաղաչափութեան (1891), Մի Պօլկար հայրենասէր (1894), Վարդապետարան Հայաստանի ազատութեան, եւ հայրապատան ընկերը :

**ՄՕՆԹԵՐԵՅԻՆ** ի մէջ այս տարուան հրատարակուիլ սկսած է.

262. **Ա. Տէր Բաղդասարեանի Փորձ** երկամսեայ հանդէսը՝ գրական, գեղար. եւ գիտ. (Յուն.-Օգոստ. 1912, Ա. տարի, թիւ 1) : — Հասցէ՝ Յօրքընի փողոց, թիւ 5 :

## ԳԼՈՒԽ Ե.

| 1640էն սկսեալ | ՊԱՐՍԿԱՍՏԱՆ | մինչեւ 1912 |
|---|---|---|

### ՆՈՐ-ՋՈՒՂԱ

263. **Ամենափրկիչ Վանքի Տպարանը.** — Պարսկաստանի երբեմնի արքայանիստ քաղաքին՝ Սպահանի (որ տակաւին ՇՕՇ կը կոչուէր) գիւղաքաղաքն էր ՆՈՐ-ՋՈՒՂԱ, ուր Հայերը Ամենափրկիչ անուամբ վանք մը ունէին : «Շահաբասեան» բարեխօսութեան օրով, անդ ուր առաջնորդն էր ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՍԱՐԱՑԻ, Սիմեոն դպրոցի աշակերտներէն, որ իր ժամանակին ուսումնական համբաւ հռչակուած մըն էր բարեպաշտօն, աշխատասէր եւ անշահախնդիր : 1630 ին Մովսէս կաթողիկոսի արտօնութեամբ՝ այդ առաջնորդութիւն թողով, Լեհաստան կ'ուղարկուի Սիմէոն արեղային հետ՝ կրօն. խնդիրներու կարգադրութեան համար : Վերադարձին, Երեւան կը հանդիպի Լիմ անապատի Մեսրոպեղեկ գիտուն վարդապետին որու մեծ եռանդով կ'սկսին դաս առնել, եւ տապա իրենց բրած ճամբորդութեան ընթացքին՝ հանգուած ըլլալով թէ ո՛րքան բան կար սորվելիք : Խաչատուր Կեսարացին նման արծնամիտ մէկը չէր կրնար այլ եւս անտարբեր մնալ իր ազգին լուսաւորութեան գործին հանդէպ . եւ երբ Նոր-Ջուղա դառնալ, Ն. Ջուղայի Ամենափրկիչ վանքը ժողվեց աշակերտներ, որոնց ինչպէս գիտակ կ'իրենն ու յառաջդիմեն : Այդ



1642ին Ամենափրկիչ վանքը տպ. «Աստեղի ժամագիրք»ին էջ մը

գրքեկանքը — զոր իրենք «Մեծատառ կուսակրօնից բանատիրաց» կ'անուանեն, իսկ Ջուղայի

պատմագիր մը՝ «Համայնապատում» կը պատրաստէր աշակերտաց նորերու ձեռագիրներու վերծանութեան և ուսումնասիրութեան. Խաչատուր ալ իր կարգին կ'զբաղէր միշտ գրական աշխատութիւններով, որով սկսաւ Հայաստանի մէջ նոյնչափ համեստ իրեն գնահատ վարդապետ: Եւրոպա ուղեւորութեան առթիւ **տպուած** գիրքեր տեսած ըլլալով, յառաջդիմասէր այս կղերականը փափաքեցաւ որ Հայ Տպագրութիւնը հայրենի աշխարհի մէջ ալ տարածուի, և ջանալով որ գլխաւին ամենեցուն էր այդ բազմապահանջ արուեստին՝ գործի ձեռնարկեց միաբաններու հետ որոնցմէ Սիմէոն աջ բազուկը հանդիսացաւ Խաչատուրի: Ամէնքը մէկ, ձեռք ձեռքի տուած՝ փորագրեցին, ձուլեցին, մելան ու տառ պատրաստեցին, շարեցին, ի չգոյէ ի գոյ ածին **թուղթը**, փորձեր արրագրեցին, պրակներ խմբեցին ու կազմեցին, մինչեւ որ կարող եղան 1641 (ՌՂ.)ին 500 օրինակ միայն դրոշմել **Հարանց վարք** անուն երկսիւն ու մեծատառ գիրքը: Առաջին հրաշքի համար բան մը՝ մեծագործութիւն մըն էր այդ համբերատար հրատարակութիւնը, քանի որ խնքնահնար միջոցներով, փորձերով ու արհեստներով միաբանք գլուխ հանած էին զայն, և այդ խել պատճառաւ գործը զերծ չէր կրնար ըլլալ խոշոր թերութիւններէ. այս մասին Յիշատակարանին մէջ կը կարդանք. «Եւ պակասութեան սորին անմեղադիր լերուք... **զի ոչ ուստ յամենէ** ... ընդեւ յառաջանալով յառ եւս լիցի»: Ու իրաւ ալ տարի մը վերջ նոյն տպարանէն լոյս կ'ընծայուի **Աւետիք Ժամագիրքը** (համանուն գիրքին առաջին տպագրութիւնը) որ բաղդատմամբ առաջնոյն՝ աւելի փոքր ու վայելուչ տառերով կանոնաւոր տիպ մըն է, բովանդակելով «կարգաւորութիւնք եկեղեցւոյ և արարողութիւնք ժամանակաց, Հրաժարիմք, Հաւատով խոստովանիմ, Նարեկ, Տարական, Սաղմոս ու Տօնացոյց»: «Աւետիք Ժամագիրք»ը կը պարունակէ ձայնական բուրմունքեր և հայկական ռամիկ խորանազարդեր՝ որոնք ենթադրելի է որ պատրաստուած ըլլան Ջուղայեցի պատկերահան Միմաւէ, այնքան համար համած իր սանեխն: Երկու մանուկէն դուրս եկած այս երկու գիրքերն ալ խիստ հազուագիւտ են հիմայ. մենք ներկայ երկու էջերն արտագրեցինք Օրմանեան Ս.ի սեփականութիւնը եղող **Ժամագիրքէն**, որուն Յիշատակարանէն կ'ընդօրինակենք հետեւեալ հատուածը. «... Բանջի ամէնիրջանիկ վարդապետս Խաչատուր օր ըստ օրէ տեսանէր զտպագրութիւն ի մէջ ազգացն Լատինացւոց, ցանկայր միշտ որպէս զի լիցի ի մէջ Հայաստանեայց եւս... : Ընդ Ս. Հօրս լծեալ մաղթեմ զմարդասուն աշակերտաց մանկունս իւր (Սիմէոն, Դաւիթ, Մկրտիչ, Պաղտասար վարդապետք եւայլք)... **Եւ զՅովհաննէս վարդապետն որ զնացեալ սոյն յաշխարհին Լատինացւոց, որպէս զի ուսեալ ի նոցանէ եւ եկեալ ուղղեսցէ եւ հաստատեսցէ զսա ի մէջ Հայաստանեայց ...**»:



ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ

** 25Ը ՅՈՎՀ. ՎՐԴ. ՋՈՒՂԱՅԵՑԻ. – 50րդ երեսին վրայ 25Ա թուահամարով հանդիպեցանք այս միաբանին տպագրական առաքելութեան Իտալիոյ ԼԻՎՕՌՆՕ քաղաքին մէջ ուր 1643ին **Սաղմոս** մը միայն կրցած էր տպել՝ համար հազար չարչարանքներով: Հոն, արուեստին հմտանալէ վերջ երբ Նոր Ջուղա վերադարձաւ՝ վախճանած գտաւ վանահայր Խա-

չասուր Կեսարացին, և տպարանական գործն ալ անչքացած։ Միաբաններ անօգուտ կը համարէին այդ արուեստը։ Այս անձկոտ և արուեստին սիրոյն բորբոքուն վարդապետին ճակատագրուած էր կրկին պայքարիլ, փոխանակ լաւին կրօնաւորներու՝ հայրենակից նոյնադաւան խաւարամիտներու դէմ։ Եւ այդ աննպաստ պայմաններու մէջ ձեռնամուխ եղաւ գործի, մեծանուն վանահօր յիշատակին անմահացումն ու և ազնիւ Միաբանութեան ջախջախիչ դաս մը տալու համար։ 1647ին է որ կը դրոշմէ **Պարզատումար Աղարիային** իսկ 1650ին **Ա.Ծ.ասունց** մը զոր կիսկատար կը թողու։ — Խ. Կեսարացիի մահէն վերջ Ն. Ջուղայի արոռը թափուր կը մնայ առաջնորդէ, նոյն թեմը կը կառավարուի իր ձեռնասուններէն Դաւիթի կողմէ՝ զոր յիշատակեցինք վերև։ Տպագրիչ Յովհաննէս Վրդ.ի դէմ եղած հակառակութիւնք ա՛յնքան կը սաստկանան որ, անիկա կ'ստիպուի Էջմիածին անցնիլ. հոն եպիսկոպոս կը ձեռնադրուի և կ'ուղարկուի Հին Ջուղա, ուր կ'րապանուի՝ հայ ժողովուրդին շահերը պաշտպանած ատեն։



**1642ին Ամենափրկիչ վանքը տպուած «Ասենի Ժամագիրք»ին Յիշատակարանը [փոքրցուած]**

** Ամենափրկիչ վանքն իր հնուացմամբ՝ 37 տարի անգործութեան դատապարտուած է վանքին մամուլը։ 1687ին, առաջնորդ Ստեփաննոս Եպսկ.ի ջանքերով է որ տպարանը կը վերարացուի, կէս նորատակի ունենալով տարածել «զվաղեմի սուրբ գրեանքս» և մաքառիլ Պապականներու ա՛յն տարաձայնութեան դէմ թէ Հայերը հերձուածողներ են։ Նոյն տարին կը տպուին 2 հատորներ, Ա. **Գիրք ասենական** «որ ասի վիճաբանական... Յառաջնորդութեան յայսմ նահանգի Տ. Ստեփաննոսի յայսո ածողի զտպագրատունս և հրամայողի առնել զգիրս։ Աշխատասիրութեամբ ումեմն նուաստի Տէր Աղեքսանդրի ծառայի բանի»։ Բ. **Գիրք խնկայէս համառօտ** «վասն և ճշմարիտ հաւատոյ և դաւանութեան ուղղափառ կաթուղիկէ ընդհ. Հայաստանեայց Եկեղեցւոյ...», հեղինակ Յովհաննէս Մրքուզ Ջուղայեցի։ Սոսր Յիշատակարանին մէջ կը կարդանք «... յիշել... որ և կամակցութեամբ միմիանց զուն գործեալ ի վերայ գործարանի տպագրութեանս, այսինքն զՄիքայէլ Վ., զՅովհաննէս Վ. զշարադրօղ գրոյս, զԱղեքսանդր Վ., զԵսայի. զԱնդրոն Վ., զհոգեբարձու Վանաց և տպագրութեանս զՏէր Անդրէասն, Թովմասն, Յոհանն, և այլք գործակալք տպագրութեանս»։ 1688ին դարձեալ Ամենափրկչի տպարանը լոյս ընծայած է **Գիրք ժողովածոյ ընդդէմ Երկաբնակաց**, «մանաւանդ... ժողովոյն Քաղկեդոնի, արարեալ Ս. Վարդապետաց»։ ** Վանքը 192 տարուան տպարանական ամլութիւն մը կ'ունենայ։ 1844ին Ճավայի մէջ վաճառական՝ Ջուղայեցի Մանուկ Յարդանանեան վանքին կը նուիրէ տպարանական կազմածք, բայց 36 տարի վերջ միայն կարելի կ'ըլլայ նոյն տպարանէն գիրք հրատարակուիլ, թղթ. աննպաստ պարագաներու հետեւանօք։ 1880ին հոն կը դրոշմուի երկհատոր **Պատմութիւն Նոր Ջուղայու**՝ հեղինակ † Գ. Յարութիւն Թ. Տէր Յովհաննեանց, Ն. Ջուղայի բնիկներէն որ առեննադպիրն էր համանուն վանքին և որուն կենսագրութիւնը կը գտնուի այս շահեկան աշխատասիրութեան մէջ։ — 1892ին դարձեալ հոն կը տպուի **Խօսք**

եւ **զարդ** Խաչատուր Վ. Կարապետեան Ն. Ջուղայեցւոյ. իսկ 1903 - 7, նուիրատուութեանց եւն. **Հաշիւներ**, նաեւ **Նոր Ջուղայի Լրաբեր** թերթիկը:

## ԴԱՒՐԷԺ (ԹԷՎՐԻԶ)

264. **Տպ. Դավրիժու Հայոց Արամեան Դպրոցի.** — Հայր Եղիշէ Գաբրիէլեան իր ձեռագիր ցուցակին մէջ կը յիշատակէ 1889 թուականաւ **Նկարագրութիւն Ս. Գէորգայ** (Մուղնի) անուն գիրք մը, առանց տպարանի անուան: — Իսկ Լէօ նոր հրատարակած իր «Հայ Գիրքի ասօր» երկին մէջ կը գրէ. «Թաւրիզն էլ ունեցաւ իր տպարանը, որ բացուեց 90ական թուականներին, առաջնորդ Եղիշէ Վ. Մուրատեանի ջանքերով»: — Մեր գիտցածն այն էր որ «Արամեան դպրոց»ի այս տպարանէն 1898 - 1903 հրատարակուած են զանազան **Կանոնագիրներ** և **Տեղեկագիր-հաշուեկշիռներ**՝ Լսարանական, Հայուհեաց Բարեգործական, և Հակալքոհոլական Ընկ.եանց (Դաւրէժի ու Սալմաստի):

265. **Թեմական Առաջնորդական Տպ. Ատրպատականի Հայերի.** — 1903 - 4, բաց ի վերեւ յիշուած նմանօրինակ քանի մը հրատարակութիւններէ, այս տպարանէն լոյս ընծայուած են. — **Կարմա** (1903), **Երկերի ժողովածու**, **Վիքեալայի զաւակները**, **Օտար փուշեր**, **Եղանական** քաղաքականութիւնը, **Ականջներ** (1904), **Դիմակներ**, **Մայրական սէր**. **Տիգիէնի** որդին (1905), **Ռժժածներ** (1906), մեծամասնութեամբ Ակոպեանի գործերը: — Ներկայիս մէջ հոն կը սպուի **Ազգային** ամսաթերթը: — Իսկ սլուկ. յեղափոխութեան թերմամբ Դաւրէժ լոյս տեսնող **Առաւօտ** թերթը անցեալ տարի դադրեցաւ:

## ԹԵՀԵՐԱՆ (ԹԷՀՐԱՆ)

266. **Անդր. Քէֆխուդարեանի** տպարանէն լոյս ընծայուած են **Շաւիղ** (1894-6) և **Աստղ Արեւելեան** (1896) շաբաթաթերթերը:

267. **Փարոսի** տպարանէն լոյս ընծայուած են **Հայրենասէր Իտալացին** (Մ. Նորդաու) 1904, **Նոր Զէփիւռ** (1908), **Ծովահէնը** (1911):

# ԳԼՈՒԽ Զ.

1660էն սկսեալ

# ՀՈԼԱՆՏԱ

մինչեւ 1717

## ԱՄՍԹԷՐՏԱՄ (ԱՄՍԹԵՌՕՏԱՄ)

268. **Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի.** —

** **Մատթէոս Դպիր Ծարեցի.** — 1655 ին Փիլիպպոս կաթողիկոսի վախճանումէն վերջ, յաջորդ՝ Յակոբ Դ. Ջուղայեցի որ ուսումնասէր և ազգասէր հայրապետ մը եղաւ, մեծ հոգ տարաւ նաեւ հայ տպագրութեան գործին, կերպով մը գործադրելով վաղուց ի վեր հանգուցեալ Սրապիոն կաթողիկոսին կտակը: Այդ նպատակաւ 1656 ին Եւրոպա կը ղրկէ Փիլիպպոսի քարտուղար Մ. Ծարեցին (քիչ յետոյ Ոսկան վրդ.ն ալ՝ որուն բազմաբեղուն գործունէութեան պիտի անդրադառնանք անջատաբար): Երբ 1678 ին այս կաթողիկոսը

Պոլիս կու գայ կրօն. վէճեր կարգադրելէ վերջ Եւրոպա անցնելու՝ ազգ.-քղք. կենսունակ խնդիրներու համար, կը վախճանի 1 Օգոստ. 1680 ին 82 տարու, թողլով Բանկալթիի գերեզմանոցը, որ այժմ անփառ՝ անկորուստ պահած ունի դեռ. երկարափակ դամբարանը **Հագեւոր Տէր** մակագրութեան այդ պատուական հովուապետին. ամենազգի հիւանդներ ցարդ կը դիմեն հոն՝ իբրեւ ուխտատեղի:— Դառնալով Ծարեցիի, անիկա կ'երթայ ուղղակի Վենետիկ ուր 14 ամիս անցորդ կը մնայ՝ դիւրութիւններ չգտնելուն. կ'անցնի Հռոմ, հոն ալ Տամսեան պանդոյր կեանք մը բոլորելու կը հարկադրուի՝ անդրոյն պապական «հաւատատարածութ.» կղերին յարուցած խոչընդոտներուն հետեւանօք, որ — ինչպէս տեսանք ԻՏԱԼԻԱ բաժինին մէջ — մաղձով լեցուած էր հանդէպ Լուսաւորչականութեան դէմ: Ծարեցի չվհատիր սակայն. ձեռնամուխ կ'ըլլայ որ և է կերպով գլուխ հանելու իրեն վստահուած սուրբ գործը: Կը մեկնի ՀՈԼԱՆՏԱ, կրօն. տեսակէտով այդ ազատ երկիրը, մասնաւոր խնդրած ըլլալով որ հոն առեւտրական գաղութ մը գոյութիւն ունէր հոն: Կը դիմէ ԱՄՍԹԵՐՏԱՄի ու. Էջմիածնեցիներու ապարանին համար տառեր փորագրող Վան Տիքին որ 27 Նոյ. 1658 ին կնքուած պայմանագրով մը յանձն կ'առնէ 3 տեսակ հայ տառեր փորագրել՝ Ա.Ծ.աշունչի տպագրութեան համար, ինչ որ սկըզբնական գործն էր քաղքին գործատանց: Վան Տիք 1660ին սակայն մէկ տեսակ գիր պատրաստած էր. Ծարեցի կ'սկսի տպել Շնորհալիի **Յիսուս Որդին**. բայց չունենալով սակայն տեսնելու գործին աւարտը. կը հիւանդնայ. մօտալուտ մահուան մը կանխազգացութեամբ՝ իր մօտ կը կանչէ Էջմիածնայ միաբաններէն Ոսկան Վրդ.ի եղբայր՝ վաճառական Աւետիսն, առաջարկելով անոր որ գործակցի իրեն: Արդէն բաւական պարտքի տակ ինկած էր. ընկերը պիտի հատուցանէր զայն ու տպարանին գործառնութեան գոյանալիք հասոյթին շահակից պիտի ըլլար. իսկ երբ Ծարեցի մեռնէր՝ գործատան տէր պիտի դառնար Աւետիս: Այս ազնիւ Հայր պայմանադրութեան չափազանցական մասը մերժելով առաջարկեց տպարանը նուիրել յանուն **Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի**: Աւ. այս պատրաստ էր թէ՛ դրամագլուխ դնելու եւ թէ անձամբ աշխատելու: Համաձայնութիւնը գոյանալէ վերջ, Ծարեցի կտակը կը գրէ ու կը վախճանի 1661ի սկիզբը: Իր հիմնած գործատան առաջին մայր-տառերը պատրաստուած է ցվերջ՝ Ֆրանսայի (Մարսիլիա), Իտալիոյ (Լիվոռնօ) և Թուրքիոյ (Կ. Պոլիս և Իզմիր) մէջ յաջորդաբար իրենց տպարանական արդիւնաշատ գործունէութիւնը բոլորած բարեհամբաւ Ոսկանեանց կողմէ, ինչպէս տեսանք այդ երկիրներուն մէջ՝ 26 Ա.-Դ. թուահամարներով:— Այս պանծալի տպարանի տիպարն ու թուահամարն անփոփոխ պահելով, բաւականացանք անոր անունով բազմաթիւ գործողներ ջնջել հաստատուած առ հաստատուած:

** **Աւետիս Գիլիճեան** (Գղձեան) ծնած է Սպահան. որդին է Թորոսի և Գոհարազիզի: Ծարեցիի մահէն վերջ՝ ինք էր որ վճարեց անոր թողուցած պարտքերը, յետոյ ստիպեց Վան Տիքին՝ որպէսզի փութացնէ անաւարտ տառերուն փորագրութիւնը: Անկատար մնացած **Յիսուս Որդին** փոխարէն որոշելով խնդիրը հիմայ կը վիճաբանեն զինք՝ հայրենի՝ շատ ակար ըլլալուն համար: Կանի մը ամիս երկմտելէ վերջ, տեսնելով որ հնար չկայ, տպագրութիւնները գէշ աղէկ կը կատարէ և կ'աւարտէ զայն: Իր աղձաւ հայլէնով ան հետաքրքրական Յիշատակարանն ալ գիրի կ'առնէ. «Վասն որոյ աշխատանք ունիմ ի վերայ այս գործիս, թէ դրամով և թէ այլ օգնութեամբ և թէ ախտալից եղեր եմ որ մինչ ի մահն աղի որ աշխատիմ վասն սուրբ Էջմիածնին... Մատթէոս որ մեռաւ, թէ որ նա չէր՝ ո՛վ աղի տիրէր ի վերայ քէրխանային. 1000 մարչիլ չոր պարաք քէրխանային, որ 500 մառչիլ չէր արժէր...»: Իր շնորհիւ, Հոլանտա դարձաւ Հայոց լուսաւորութեան Բ. հայրենիքը: Վաճառական մարդ մը սակայն ի՛նչ չափով կրնար գրագէտ աստուածաբանական բազմատարաց գործով հակառակ տալ, կարելին բրաւ և 1661 ին տպագրեց **Ժամագիրք** մը, յաջորդ տարին ալ նոյն գիրքին մեծադիրը: Իր վիճակը պարզած է՝ Էջմիածին ուղղած նամակներով, նաեւ իր եղբօր՝ Ոսկանի: Այս պարագային կը խօսի՝ 1664 ին Ամստերտամ դրոշմուած Սաղմոսի Յիշատակարանէն. Աւետիս այլ եւս մինակ չէ, իրեն գործակից ունի Ոսկանի աշակերտ Կարապետ Վրդ. Անդրիանեցին՝ իբրեւ փորձառու սրբագրիչ: Հոն գտնուող վաճառականներ՝ — յատուկ Ջուղայեցի — նիւթապէս ձեռնտու կ'ըլլան գործին. տպարանը կը բարգաւաճի եւ հոլանտական նորեր նոր ալ կ'սկսի արտածել. — **Յիսուս Որդի** 1200 օրինակ, **Սաղմոս** 2700, **Ժամագիրք** 3000, որոնք կը փոխադրուին Արեւելք:

** **Մատթէոս Վրդ. Անդրիանեցի.** — Քիչ մ'առաջ հանդիպեցանք Ոսկանի այս աշակերտին որ իբրեւ օգնական եւ սրբագրող՝ գործակցած էր Ղլիճենց Աւետիքին: Երբ այս վերջինը մեկնեցաւ Ամստերտամէն դէպ ի Ծննդավայր, ինք մնաց կանգուն պահեց տպարանը, ձեռնարկելով **Ձայնագրեալ Շարականի** մը տպագրութեան, որուն խազերը նախապէս պատրաստել տուաւ ինչ որ մինչեւ այն ատեն ո՛չ մէկ Հայ փորձած էր որ եւ է տեղ: — Քիչ մը վերջը պիտի տեսնենք թէ այդ Շարականը Ոսկանի օրով աւարտեցաւ:

** **Երեւանեցի Ոսկան Վարդապետ Ղլիճենց.** — Ջուղայեցի Յակոբ կաթողիկոս՝ գործին գլուխ անցած յաջողութենէն խանդավառ՝ մանաւանդ ուշադրութեան առարկայ կը դարձունէ յԱմստերտամ բացուած տպարանը, մանաւանդ որ Էջմիածնապատկան հիմնարկութիւն մըն ալ էր ան: Ուստի կ'որոշէ գործին նախկին փախաքող կարո՞ղ մէկու մը յանձնել զայն: Իր միաբանութենէն Ոսկան վարդապետը կար — օժտուած ձեռներէց ոգիով մը — որ խիստ կը հետաքրքրուէր արդէն տպագր. գործերով: 1662ին Ոսկան կ'ուղարկուի Եւրոպա: — Երեւանեցի կը կոչուէր: Հայրը՝ Թորոս, մայրը՝ Փոփարագիզ, դեռ երիտասարդ, Շահ Աբբասի Երեւանէն դէպ ի Սպահան քշած գաղթականներուն մէջն էին. հոն կ'ամուսնանան եւ 1614 Յունվարին կ'ունենան մանչ զաւակ մը՝ Ոսկան որ իր նախն. կրթութիւնը կ'առնայ տեղացի ուսուցիչի մը մօտ: Ծնողքը բաւական կը սեպէ անոր սորվածը. սակայն ինք միշտ աւելին սորվելու բաղձացող՝ ի հեճուկս անոնց կամքին՝ կը մտնէ Ջուղայի Ամենափրկիչ դպրեվանքն ուր կ'ուսանի ինչ որ Սիմէոնց դպրոցը կարող էր ջամբել իր սաներուն: Մովսէս կաթողիկոսի յանձնարարութեամբ երբ Խաչատուր Կեսարացի Լեհաստան կ'ուղեւորի, հայրապետն ալ նոյն ժամանակ իր կատարած համբոյրութեան պատուն՝ Ոսկանը Սպահանէն առնելով իրեն հետ Էջմիածին կը տանի: Խաչատուրի՝ Սիմէոնի հետ Եւրոպայէն վերադարձէն վերջ, երկուքին մէկ կ'սկսին դասեր առնել՝ մեծ չարչարանքներով գիտութիւն սորված Մելքիսեդեկ վարդապետէն: Այդ դասերուն մասնակից կ'ըլլայ նաեւ Ոսկան: Երբ Խաչատուր միաբանական վանահայր կ'ընտրուի Ն. Ջուղայի վանքին, Սիմէոն եւ Ոսկան կ'ընկերանան իրեն: Փիլիպպոս կաթողիկոսի օրով Ոսկան կրկին կը կանչուի Էջմիածին ուր կը գտնէ Նախիջեւանի կարողի դպրոցին համար Եւրոպայէն ուղարկուած տոմինիկեան կրօնաւոր մը (Պօղոս Պիրոմալլի), որմէ կ'սկսի մեծ եռանդով լատիներէն սորվիլ եւ ապա թարգմանութիւններ ընել, աղճատուած հայերէնով մը, ինչպէս էին արդէն ուրիշներու նմանօրինակ հայացումները: — 1662ին Ոսկան երբ ճամբայ ելաւ դէպ ի Եւրոպա, միտքին մէջ ունէր կարգ մը գիրքեր հրատարակելու գաղափարը. փափաքներուն էն խոշորն էր Աստուածաշունչ տպագրել. ասոր համար կ'երթայ գործաւորներ գտնելու: Լիվոռնոյէ անցած ատեն՝ կը հանդիպի իր եղբօր Աւետիսի որ — ինչպէս գիտենք — հայրենիք կը վերադառնար: Այնտեղ դիմում կ'ընէ հայ վաճառականներու որ ձեռնտու գտնուին իրեն՝ գիրքերու՝ գիրքին անդրանիկ հրատարակութեան համար: Այսպիսի խոստումներէ վերջ, կ'անցնի Հռոմ. հոն ալ երբ կ'իմանան թէ Ոսկան կ'աշխատի յանուն Ս. Էջմիածնի, ձեռնտու կը մնան: Կրկին կը դիմէ Լիվոռնօ եւ աս հոնտեղ կ'աջողի համոզել 3 Ջուղայեցիներ (Սանդխանոս Խաննեց, Թոսպենց Թէոդորոս եւ Աւագեան Պետրոս) որոնք յանձն կ'առնեն օժանդակել իրեն եւ շահը բաժնել Էջմիածնի, Երուսաղէմի եւ Ս. Սարգսի վանքերուն: Ստացած այս խոստումներէն երջանիկ, Ղլիճենց կը մեկնի Ամստերտամ՝ նոր կորովով մը վարելու համար իր մատաղ նոյն տպագրական գործը: Ամէնէն առաջ լոյս կ'ընծայէ **Այբբենարան** մը (1666) եւ կ'ամբողջացունէ Անդրիանեցիին սկսած **Ձայնագրեալ Շարականը**. յետոյ կ'սկսի **Աստուածաշունչի** հրատարակութեան: Չափազանց կ'աշխատի, ոչ միայն իբրեւ սրբագրիչ, այլ եւ իբր խմբագրող. կը բաղդատէ զայն Լատիներէնի հետ (*). կը կազմէ յաւելուած ցանկ մը, քանի մը կարգ թարգմանութիւններ ալ կը դնէ Ս. Հերոնիմոսէն: Տպագրութիւնը փայլուն է, մաքուր, պատկերազարդ, անխալ: Ա. անգամ էր որ Հայ մը այս տեսակ գեղեցիկ եւ ընդարձակ գործ մը Մամուլին կը յանձնէր՝ անօրինակ գլուխներու եւ աշխատութեանց յանձնառու

(*) Այս առթիւ յառաջ բերենք «Ազգապատում»էն սա տողերը. «Կ'ընդունինք թէ մեղադրանքի կէտ մըն է Աստուածաշնչի նախնեաց թարգմանութիւնն այլայլելու եւ աղաւաղելու ձեռնարկած ըլլալը, բայց աւելի գործին քան թէ գործողին մասին է մեր դատաստանը: Ուղղամիտ բարեմիտ եղած է Ոսկանի նպատակը, նայելէն Աստուածաշունչը թերի կարծելով, քանի որ Ս. Գրոց ուսումն Հայերու անծանօթ էր, Եւրոպայի մէջ ալ մշակուած չէր, եւ Ոսկան կրնար իբր տիպար ենթադրել Լատին աշխարհի մէջ գործածական բնագիրը»:

ըլլալով: Երկու տարի (1666-8) կը տեւէ տպագրութիւնը : Փորձերուն հոգ տարած է Կ. Վ. Անդրիանացի. թուղթերը սխուած, ժողված ու կազմած է՝ դարձեալ իր աշակերտը՝ Երեւանցի Յոհան սարկաւագ : — 1666ին կը հրատարակէ նաեւ իր թարգմանած ու շարադրած **Քերականութիւնը**, նաեւ **Քրիստոնէական** մը, 1667ին՝ **Ժամագիրք մեծ** Բ. տիպ, **Մաշտոց**, **Քրիստոնէական հայ-լատին**. իսկ 1669ին՝ Դաւրիժեցի Առաքել Վրդ.ի **Պատմութիւնը** որ ԺԷ. դարու ամենագեղեցիկ գործն էր, և հեղինակն ալ դեռ կենդանի : — Հակառակ իր գիրքերը կարդալի կղերին կողմէ արգիլուած ըլլալուն՝ իբր հերետիկոսական գրուածքներ, Ոսկան ազատական և անկաշկանդ միտքի տէր անձ՝ «Ս. Էջմիածին» նոյն տպարանին մէջ թոյլ տուաւ դրոշմել պապական գործեր՝ կրօն. բովանդակութեամբ : Համաձայն երկերու հրատարակութեամբ չուզեց սահմանափակուիլ. 1668ին տպեց Խորենացիի **Աշխարհագրութիւնը**, որուն միացուց նաեւ **Աղուեսագիրքը** : Իրաւ է թէ գիտական նորութիւն մը ըլլալէ շատ հեռու էր այդ «Աշխարհագրութիւն»ը, բայց մեր ազգին համար աննախընթաց նորութիւն մըն էր : Նոյն տարին կը տպէ **Նոր կտակարան** և **Սաղմոսագիրք**, 1669ին՝ Ձայնքաղ Շարական : Այսպէս 4 տարուան մէջ հրատարակած եղաւ բազմաթիւ գիրքեր. իր եռանդին հետ՝ մեծ էր նաեւ գործունէութիւնը, բայց դժբախտաբար անմրցելի զրկանքներ ու դառնութիւններ բաժին ինկան իրեն : Պարտքերը դիզուած էին իրարու վրայ. Յակոբ կաթողիկոս չէր կրնար որ և է օգնութիւն հասցնել, քանի որ ինքն ալ շատ անձուկ վիճակ մը ունէր : Աւելի՛ն կար. **Ոսկանի տպած Աստուածաշունչով ու Շարականով բեռնաւորեալ նաւ մը կ'ընկղմի**, վարդապետին մուխը մարելով : Անկէ կողմէ հարուածեալ և յուսահատ, դիմադրելու կարողութիւնը սպառած, մէ՛կ միջոց միայն կը մնար իրեն, վերջնապէս հեռանալ պարտատէրներու հետապնդումներէն : [Իր արտասոյց կենսագրութեան շարունակութիւնը ու իր տպարանի մասին տե՛ս ՅՈՒՍԱՆՈՒՆԴԻ ԲԱԺԻՆ (Մարսիլիա), 26ᵒ բաժանմունք] :



Վանանդեցի Մատթէոսի 21 Սեպտեմբեր 1685ին տպած Շարակնոցին 3րդ. էջը [փոքրցուած]

## 268. Վանանդեցի Յովհաննիսեան Մատթէոս. —

Մարսիլիոյ տպարանը գրաշարութիւն կ'ընէր և զայն կանգուն պահելու համար մաքառողներէն էր. «և տեսեալ եմ — կը գրէ — զչարակրութիւն և զանաշողութիւն յամենայն կողմանց, վասն որոյ դիմեցի յերկիրն Հօլանտիոյ, ի վայելուչ քաղաքն յԱմսդերտամ» ուր կ'ուզէ դարձեալ պարապիլ իր նախասիրած գործով, և ուր կը գտնէ Նիկօղայոս անուն «լաւ վարպետ» մը և անոր պատրաստել կու տայ «զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք, և զայլ տեսակս եւս գրոց նօտրի և բոլորի» : Բայց տեսնելով որ բաւականաչափ դրամ չունի ինքնագլուխ գործելու համար, կ'ընկերանայ Երեւանցի Յովհաննէս քահանայի և Ջուղայեցի վաճառական Փողոսի՝ **Շարակնոց** և **Ժամագիրք** դրոշմելու համար : Առաջինը լոյս կ'ընծայէ 1685ին, Բ.ը՝ 1685ին : Երկու տարի վերջ կը կրկնէ վերջինոյն տպագրութիւնը : Այնուհետեւ 7 տարուան դադար մը : — Ինք, ինչպէս կ'իմացուի իր մականունէն, Գողթան գաւառի Վանանդ գիւղէն էր.

նոյն գիւղէն՝ իր հօրաքեռորդին էր Նուրիջանեան Թովմաս որ գրելու կարողութիւն ունեցող վարդապետ մըն էր և որ շատ ճամբորդութիւններ ըրած էր Կիպրոս կղզին և Իտալիոյ մէջ, իր հետ ունենալով Մ. Վանանդեցին իբր սպասաւոր։ Ի Հռոմ բաժնուելով իրարմէ՝ երբ Թ. Նուրիջանեան ուրիշ կողմ կ՚ուղեւորի, Մատթէոս 1670 ին կ՚երթայ Լիվոռնօ ուր կը գտնուէր Ոսկանի տպարանը՝ Ամստերտամէն փոխադրուած. հոն Ոսկանի աշակերտ՝ Կարապետ Վ.էն կը սորվի գրաշարութիւն, — ինչպէս ինք կը խոստովանի 1685 ին տպած Շարակնոցին մէջ, — և 14 տարի Ոսկանի տպարանը կը մնայ առանց վարձք առնելու, պարագա՛յ մը որ Ոսկան Վրդ.ի և անոր յաջորդ Ս. Լեւոնեանի նիւթական անձուկ վիճակը կը շեշտէ, նաև Կիւրեմպէրկի արուեստին մասին Մատթէոսի ունեցած անսահման սէրը։ Այդ անձնուէր աշխատութեան ընթացքին է որ Յակոբ Դ. Կաթողիկոս միշտ կը խրախուսէր զինք՝ օրհնութեան գիրերով և սպագայի խոստումներով։ Վանանդեցի Մատթէոսի դրոշմած գործերը հայ տպագրութեան մէջ նշանակելի տեղ մը կը գրաւեն՝ իրենց վայելչագեղ պատրաստութեամբ։ — **յԱմստերտամ՝ իր ջանքերով բացած տպարանը՝ որ ընծայուած էր Ս. Խաչին և Մարիամու Ս. Կուսին՝** կը քայքայուի. Մատթէոս կը բաժնուի իր 2 ընկերներէն, զուրկ նիւթական միջոցներէ։ Այն ատեն է որ կը դառնայ հայրենիք՝ բերելու մեկենաս մը գտնելու և իր յարած գործին կրկին նուիրուելու համար։ Իր ազգական՝ Նուրիջանեան Թովմաս Վրդ. նոյն միջոցին Գողթնեաց Ս. Խաչ վանքին եպիսկոպոսն էր. Մատթէոս կը համոզէ զայն և ծեր տարիքին մէջ Եւրոպա ճամբորդել կու տայ անոր, ձեռք առնելու համար Ոսկանէ հիմնուած հիանալի գործը։ Միասին կ՚աշխատակցին գլխոց և իրենց հրատարակութիւններով մեծապէս օգտակար կը հանդիսանան ազգակիցներու մտաւորական զարգացման։

269. **Թովմաս Կաթղ. Վանանդեցի** (Եռամեծ վարդապետ). — Եւրոպաները պտըտող այս ծերունազարդ կղերականը որ կատարեալ զրոց-բրոց մըն էր, հակառակ Գողթան գաւառը տեսնել սիրելուն՝ կ՚որոշէ հեռանալ անկէ դէպ ի Հօլանտա, գերման Մեծ Գործարքին գիւտովը՝ անցնելու համար իր կեանքին վերջին տարիները։ Մեկնումէն առաջ՝ Մատթէոսը կը դրկէ հոն, որպէս զի անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնէ. շատ չանցած ինք ևս միանալով անոր՝ ձեռք կ՚առնէ գործատան ղեկավարութիւնը։ Իրենց հետ էին իր 2 եղբօրորդիները՝ Ղուկաս և Միքայէլ, որոնց մասին գրուած է հրատարակած գիրքերուն Յիշատակարանին մէջ թէ քաջ յառաջներէն գիտէին և բազմակողմանի հմտութիւն ունէին զօր ի սպաս դրին տպարանին՝ ձեռագիրներ հայթայթելու համար։ Ամէնքը մէկ սիրտ մէկ հոգի են հոն. ազգականներու համախմբում մըն է որ ձեռք ձեռքի տուած՝ կը նուիրուի Հայուն զարգացման գործին, բարձրացնելով հայ ցեղին անունը յաչս քաղաքակիրթ ազգերու։ Գործատան հոգին է Մատթէոս, մինչ երկու եղբայրներէն մանաւանդ Ղուկաս գլխոց չէ զլացած իր օգտակար օժանդակութիւնը՝ հեղինակի և շարադրողի կրկնակ դերերով։ Այս խմբակին լոյս ընծայած առաջին հրատարակութիւնը եղաւ **Համասարած աշխարհացոյց** անուն քարտէս մը 1695 ին՝ ա՛յնքան նուրբ ճաշակով պատրաստուած և այնքան օգտաշատ գործ մը, քանի որ Հայը վաճառական ժողովուրդ մըն էր և պէտք ունէր ճանչնալու աշխարհի մասերը։ Նոյն տարին հրատարակեցին նաև Մ. Խորենացիի **Ազգաբանութիւն Հայկին Յաբեթեան** տխողով ուշագրաւ պատմագրութիւնը որուն ընագիրը դժուարաւ կրցած էին ձեռք ձգել։ Այս երկու գործերը կը բաւէին՝ անմահացնելու համար անունը Նուրիջանեանց ընտանիքին, և դասելու զիրենք ի շարս ազգ. բարերարաց։ Իրենց շնորհիւն էր որ հայ մեծամեծ պատմագիրը ճանչցուեցաւ Եւրոպացիներէ, մինչ Հայկեան սերունդն ալ իր անցը գրուած եղաւ համաշխարհային պատմութեան մէջ։ — Յաջորդ տարին նոյն տպարանէն լոյս ընծայուած գործերը եղան «Համասարած աշխարհացոյց»ի բացատրութիւնը եղող **Ռաւալին** և Թովմաս Կեմպացիի **Համահետեւումն Քրիստոսին** (Բ. տիպ). 1698 ին՝ **Դուռ Կսակարան, Ջայնման ատակաւն**, և **Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց Հռոմայեցւոց**. 1699 ին՝ Ղուկասի և Մատթէոսի յօրինած **Դուռն իմաստութեան** «կամ Ոսկեայ դուռն դպրատան» (դասագիրք), նաև Ղուկասի հեղինակած **Դաշն** «չափոց, կշռոց, թուոց և դրամից բոլոր աշխարհի»ն. 1700 ին՝ **Դարձք առաքելոց**. 1702 ին՝ Ղուկասի **Նժարանութիւնը** (հայերէն առաջին թուապատմութիւնը) և **Շարական** (Գ. տիպ). 1704 ին՝ Ղուկասի **Գանձն Ածային, Համբոյր սրբութեան ու Ցողանքին** «Ածարանական, բարոյական և քղք. իրողութեանց սահմանք»։

1705ին՝ **Զննութիւն յերկինս** (Բ. տիպ) և **Ժամանակագրութիւն** «հասարակաց ազօրից եկեղեցեաց Հայաստանեայց. Գովեստ բերկրանաց եռանձնեայ դիմաց, բազմանշոյլ յօղից, նորին բանակաց». վերջինս ծախքը հոգացած է Ջուղայեցի Գորոնէց Աղազարի որդի Պրն. Թաաթի: Այս «Ժամագիրք»ին Յիշատակարանէն կ'իմացուի թէ «Տեառն Թօմասու եռամեծ Վարդապետի Գործարանում» կային իր «գործակալ»ները՝ Մատթէոս, Ղուկաս, ՍԻՆԱՆ և Միքայէլ: Տպագրութիւն բոլոր, զարդափակ էջերով և փայտաքանդակ պատկերներով: 1705 էն վերջ սակայն անգործութիւն կը տիրէ. կ'երեւի թէ Թովմաս եպսկ.ի միջոցները սպառած էին: — Իրենք պատուաւոր դիրք մը բռնած էին Եւրոպայի մէջ. Շրէօտէր գերմ. գիտնականը Թովմասէն սորվեցաւ հայերէն. Ղուկաս ծանօթութիւն հաստատեց Լայպնիցի՝ գերմ. նշ. փիլիսոփային հետ որուն ներկայեց իր սրբազան հօրեղբայրն ալ: Նուրբեցանեաց պետը բաղես սկիզբէն մտադրութիւն ունէր իր տպարանը Հայաստան փոխադրելու, բայց հրաժարեցաւ այդ խորհուրդէն, վասնզի հայրենիքը նպաստաւոր չէր իր ծոցին մէջ պահելու և զարգացնելու նմանօրինակ ձեռնարկ մը: Տաժանելի էր սուգի այս պատուական եպիսկոպոսին վիճակը, մէկ կողմէ ակնոյթի վատուժման անձնատուր, միւս կողմէ նիւթապէս ընկճուած և հայրենադարձութեամբ տառապողին: Կ'ուզէ վերջ մը տալ իր դժբախտ նժդեհութեան ու մեկնիլ հայրենիք, անոր սուրբ հողին վրայ կատարելու համար իր երկրպագելը. սակայն մեկնումի պատրաստութեանց միջոցին անկողին կ'իյնայ ու քիչ օրեն կը վախճանի:

270. **Ղուկաս Վանանդեցի** + — Իր կենսագրութիւնը տեսանք Թ. Վանանդեցիի բաժինին մէջ: Անոր մահէն վերջ՝ Ղուկաս մնաց Ամստերտամ ուր Շրէօտէր շարունակեց իրմէ սորվիլ հայերէնը: Թովմաս իր տպարանին բոլոր գոյքերը կտակած էր իր եղբօրորդւոյն որ 1711 ին կը հրատարակէ այդ Գերմանին հայ-լատին **Արամեան լեզուի գանձը**, միեւնոյն տարին՝ Յովհ. Վրդ. Ջուղայեցիի **Համառօտ Քերականութիւն եւ տրամաբանութիւն** «որ է քերթութեան բանի և կրթութեան բանի»: Ընթիր տպագրութեամբ 78 էջնոց այս Քերականութեան վրայ գործարանի անուն չէ յիշատակուած: — Ղուկաս իր հօրեղբօր մահուամբ որբ մնացած և մանաւանդ զուրկ դրամէ՝ շատ նեղութիւններու կը մատնուի, գործակից կ'ունենայ իր քով գրաշարութեան բնող Նուրբեցանեան Յովհ. պատանին որ կ'օգնէ իրեն: 1713 ին կը հրատարակէ **Հոգւոյ Աստուծոյ զոյց ինն կանդարանի** (Ջուղայեցի Խօջաբաղայ Պօղոսի որդի՝ Պրն. Պետրոսի ծախքով): Այս գիրքին Յիշատակարանին մէջ Ղուկաս կ'ըսէ իր անձին համար «Ծնունդս Գրիգորեան, սերունդս Վանանդեան, և անձանձիր աշխատութեամբ յարմարօղս, յիմում խակ տպարանի տպօղս այսր նորակերտ բուրաստանիս»: Ամստերտամ հաստատուած վաճառականներու աջակցութեամբ պահ մը իր գոյութիւնը կ'ապահովէ այս գործատունն ուրկէ 1714 ին լոյս կ'ընծայուի 1500 օրինակ **Սաղմոս**՝ Սահակեանի և Մարտիրոսի ծախքով, իսկ 1716 ին **Պատկերասէր պատկերաեաց** «Եւր է համաձայնութիւն պատկերաց» որ զայն դրօշմողին հեղինակութիւնն էր: Յաջորդ տարին դարձեալ հոն կը տպագրուի **Ժամագիրք կարճառօտ** գիրքը (վաճառականներու համար) որ վերջինը կ'ըլլայ: Այնուհետեւ պարտատահանջներ նոյն աշխատանոցը կը գրաւեն և Վանանդեան մեծահամբաւ ընտանիքը կը փակուի իսկ և իսկ: **12 տարի վերջ Միխիթար Սեբաստացի՝ հայ առաջնակարգի մը միջոցաւ Նուրբեցանեանց տառերուն մայրերը ծախու կ'առնէ եւ կը փոխադրէ զանոնք Վենետիկ**: — Եւ ՀՕԼԱՆՏԱՅի մէջ, 1717 էն ի վեր՝ 195 տարի, ո՛չ մէկ Հայու տպարան գոյութիւն կ'ունենայ:



# ԳԼՈՒԽ Է.

1680էն սկսեալ **ԳԵՐՄԱՆԻԱ** մինչեւ 1902

## ԼԱՅՊՑԻԿ (ԼԻՓՍԻԱ) ԵՒ ՄԱՐՊՈՒՐԿ

Տպագրութեան գիւտին հայրենիքը եղող այս երկրին մէջ տարաբախտաբար Հայ Մամուլը շատ աննշան ու մասնակի գործունէութիւն մը ունեցած է ։ **Գերմանիոյ մէջ հայերէն առաջին գիրքը լոյս ընծայողի փառքը կը վիճակի**

276. **Անդրէաս Ագոլութոս** ։ Ծնած է Պրասլաւ քաղաքը ։ Ուսուցիչ Պէռլինի արքունական համալսարանի ։ Մեռած իր ծննդավայրը՝ 1704ին ։ Դարուն նշանաւոր գիտուններէն այս Գերմանացին **առաջին հայերէնագէտը** կը նկատուի մեզ . իրմէ քանի մը տարի առաջ թէեւ Անկուսր Փֆէյֆէր անուն հայրենակից մը զբաղած է մեր լեզուով , բայց քիչ յառաջացուցած է զայն ։ Արեւելագէտներու երկրին՝ Եւրոպայի մէջ ի սկզբան քիչ կարեւորութիւն ընծայուած է մեր լեզուին . իսկ երբ ԺԷ. դարէն սկսեալ Հայերն իրենց տպարանն ունեցան անոնց հողին վրայ , եղան գիտուններ՝ հայեցի հրատարակութիւններով զբաղող . եւ այսպէս՝ Հայ Դրականութիւնը սակաւ նիւթ դարձաւ անոնց ուսումնասիրութեան ։ Ագոլութոս հայերէնը սորվելու մղուեցաւ մանաւանդ , երբ լսեց թէ «Աստուածաշունչ»ը 1666ին հայերէն դրոշմուած է ի Հոլանտա . յաջողեցաւ ձեռք ձգել օրինակ մը եւ ընագիր մը ։ Ցետոյ ուզեց իր հայ լեզուի հմտութեան նախաճաշակ փորձը տալ , ձեռնարկելով տպագրութեանն Աստուածաշնչի մարգարէութեանց բաժինէն՝ **Հայերէն Աբդիաս** (Obadias Armenus)ին **1680** թուականին ։ Իր ծախքով ու խնամքով փորագրեց տառեր , ձուլեց ու տպեց 86 էջնոց այդ գրքոյկը , որուն ընաբանը միայն հայերէն է սակայն , իսկ մնացեալ մասերը՝ լատիներէն . վերջերը դրուած կայ — իրենց անուններով ու ձայներով — երկաթագիր ու բոլորագիր մեր այբուբենքը ։ Ագոլութոս այդ գործին յառաջաբանը կը վերջացունէ հայ ազգին համար գնահատական տողերով եւ սա բարեմաղթութեամբ . «Աստուած շատ հեռու ընկած , անիրաւ գայլերով շրջապատուած եւ անհամար բարբարոսներով պարփակուած հօտը ամենողորմ գթութեամբ գերծ պահէ ըշնամիներու յարձակումներէ ու խաւարութիւններէ» ։ Մաղթա՛նք որ դեռ իրականանալէ շա՛տ հեռու է ...։

272. **Պրէյթքոփֆ եւ Հէրթէլ .** — Երկու դարէ աւելի վիթխարի ժամանակամիջոց մը կ'անցնի հայ տպագրութեան վերոյիշեալ նախափորձին վրայէն , եւ բովանդակ Գերմանիոյ ո՛չ մէկ քաղքին , գիւղին ու աւանին մէջ գէթ պատահական իր գոյութիւնը կը շեշտէ որ եւ է Հայու կամ օտարազգիի մամուլ՝ որով Մեսրոպեան տառերով գիրք դրոշմուած ըլլայ ։ — 1896ին միայն , Գերմանիոյ այս միեւնոյն քաղաքը կը տպուի ռուսահայ նշ. ձայնագրագէտ Եկմալեան Մակարի **Ներդաշնակեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի** , 4 տետր , «Իգական բարձր ձայն» էջ 18 , «Իգական խոնարհ ձայն» էջ 17 , «Արական բարձր ձայն» էջ 141 , «Արական խոնարհ ձայն» էջ 97 ։ Այս «ձայնագրեալ պատարագ»ը հրատարակուած է 272 ներկայ թուանշանը կրող գերմ. վիմագրիչ-տպագրիչ երկու ընկերներուն կողմէ ։

273. **Ֆինկ .** — Բրուսիոյ ՄԱՐՊՈՒՐԿ քաղաքին մէջ այս գերման հայագէտը 1902ին կը հրատարակէ **Համիդէս հայասպանութեան** գերմ. պարբերականը որ կը պարունակէր հայերէն հատուածներ ալ ։ Ֆինկ **Ցուցակ ձեռագրաց** մըն ալ լոյս ընծայած է ։

☛ **Գուլիելմոս Պրուգուշինի** 1872ին տպած է Լայպցիկի մէջ **Հայերէն գրաբար քերականութիւն** մը Լատին լեզուով (հեղինակ Յուլիոս Հենր. Բեթերման) ։

## ԳԼՈՒԽ Բ.

1736էն սկսեալ

# ԱՆԳԼԻԱ

մինչեւ 1905

## ԵՒ ԻՐ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

**ԼՕՆՏՕՆ** (հին ուղղագրութեամբ ԼՈՆԴԻՆՈՆ, կամ ԼՈՆՏՐԱ) կը ներկայանայ մեզ — Բրիտանական կայսրութեան քաղաքներէն — որ առաջին անգամ կը տպուի

274. **Կարոլոս Ակքերս** (Caroli Ackers) անգլ. տպագրիչին կողմէ **Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն եւ Աշխարհագրութիւնը**՝ հայ-լատին, զոր հրատարակած, լատիներէնի վերածած և ծանօթագրած են Գուլիելմոս և Գէորգիոս Գուլ. Վիսթոնի Որդիք, **1736** ին: Այս գիրքին սկիզբը դրուած Յառաջաբանը կը պարունակէ Ա.Ծ.աշունչի հայերէն թարգմանութեան մասեր. Յաւելուածն ալ կը պարունակէ «Գործոց»ին 2 գլուխ:

275. **Յ. Րիվինկթըն** (Joh. Rivington) ի տպարանէն **1780** ին լոյս ընծայուած է **Դաւանութիւն** «Հաւատոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց» — Յովսէփ Ս. Արղութեանցի փափաքին համեմատ — որ կը պարունակէ «Հաւատոյ Խոստովանութիւն»ը, Լատին., Յուն. և Անգլ. թարգմանութեամբ, «Ի Յօհաննէսէ Ակրօղերեանէ Գերմանացւոյ»:

276. **Վ. Մ. Ուաթսի** տպարանէն լոյս ընծայուած են **Նոր Կտակարան** (աշխարհաբար **1858** և գրաբար **1859**), **Սաղմոս** 1883, եւ այլն, որոնք Աստուածաշունչի ընկերութեան հրատարակութիւններ են բոլոր:

277. **Հայկական Նպաստ Տպարան.** — Համիտեան լուծին տակ կեղեքուող Հայու զաւակներ — գաղափարի ու պայքարի տղերք — գրուած եռանդա՝ գրիչ շարժեցին բերքով, տեսքով ու բռունցքով, ընդդէմ բուրք բռնակալութեան: Այսպէս Լօնտոնի մէջ ալ անոնք ունեցան իրենց տպարանը որ հակառակ իր շռայլուն անունին՝ կը բաղկանար հայկական **Բացառէ** մը. հոն շարուած գործեր Անգլիացիներու մամուլներով տպուած են: Համանուն տպարանէն լոյս ընծայուած են **Հնչակ** (1891, 1894) և **Ապտակ** լեզ. հանդէսները, **Ո՞վ է պարոն** (1891), **Մայիսի մէկ** (1892), **Դաշնակցի. Նուագ եւ մեղեդի** (Լեռնեց), **Հայ Յեղափոխականաց ձայնն հայկական խնդրոյն վրայ** «և թէ ո՛րպէս պարտ է լուծել զայն» անգլ.ով (1895), **Ծրագիր** հայ գործաւորներու և ուսանողներու միութեան (1898): Վերջիշեալ Լեռնեցը յայտնի Հնչակեան Ա. Նազարբէգն է որ 1889 ին հոն հրատարակած է նաեւ Through the Storm գործը որ Հայաստանի կեանքի պատկերներու շարք մըն է:

278. **Տպ. "Հայաստան„ի.** — Անգլօ-հայ ընկերութիւն մը 1888 ին կը կազմուի Լօնտոն որուն նպատակը կ'ըլլայ հայկական խնդիրը, հայերէն և ֆրանսերէն լեզուներով հրատարակելով **Հայաստան** անուն կիսամսեայ հանդէսը՝ մինչեւ 1892:

279. **Տպ. Հայկ. Արբանեակի.** — Յայտնի ազգ. գործիչ և Թուրքիայէ փախստական **Prof. Կ. Թումայեան** Չիսվիքի (Լօնտոն) մէջ հիմնած համանուն դպրանոցին հետ ունեցաւ տպարան մըն ալ ուր 1902-4 ին հրատարակեց **Պատանի** պատկ. ամսաթերթը, **Լինչի Սահմէնիան** (1902), Հայ որբերու Բարիզի առեւանգումը, Հայ որբերու Բարիզի առեւանգիչները (1903), Ազգ. երգարան, **Պատմութիւն Արեւել. խնդրոյ եւ առաջնորդ հայկական հարցի** (երկհատոր 1905): — «Առեւանգում»ի յառաջ այդ 2 գրքոյկներուն ի պատասխան՝ Լօնտոնի մէջ 8 Ապրիլ 1903 ին լոյս ընծայուած է 16 էջնոց տետրակ մը «Պատ. Թումա-

եանի սուտերը և շահատակութիւնները» խորագիրով : — Մեծանուն Բրօֆեսօր Լօզան' ժօռժ Գոխոէլի տպարանէն 1879 ին հրատարակած է **Ազգաբանգեղոսի** Փրանսերէնը : — Իր ընդարձակ և արկածալից կենսագրականը տե՛ս «Ամենուն տարեցոյցը» 1911 :

**ՄԱՆՉԷՍԹԸՐ**ի հայ գաղութն ալ զանազան ժամանակներու մէջ թողած է տպարանական ցանցառ. շրջաններ :

245բ. **Կարապետ Վրդ. Շահնազարեանց** . — Այս քաղաքին մէջ իր կարճատեւ գործունէութիւնը [1864] տե՛ս 245Ա թուահամար (Փրանսայի բաժին) :

280. **Թորոս Քհնյ. Ճուղայեցի** որդին է Կալկաթացի Տ. Խաչիկ քահանայի, ուսած և Խաչիկեան ալ կոչուած : Կալկաթա յաճախած է անգլ. դպրոցը : Լօնտօն անցնելով, ածուաբանութիւն ուսած է : Ապա Պօլիս գալով հրատարակած է **Հայ Եկեղեցի** կրօնաթերթը : Կրօնուսոյցի պաշտօնով ուղեւորած է Երուսաղէմ, Պարսկաստան, Եգիպտոս ու Մանչեսթր որուն հայ գաղութին ծախքով Եգիպտոսին գացած է՝ քահանայ ձեռնադրուելու 1889 ին՝ Տ. Թէոդորոս անուամբ : Բառսունքը ձամբան ընելով Ջուղայեցի կը վերադառնայ Մանչեսթր, և 1896 Յունիսին կ'սկսի գործի՝ իբր առաջնորդ : Հոն կը մնայ մինչեւ 1902 Յուլիս, դժգոհ ձգելով իր հօտը : Յետոյ մեկնած է Ամերիկա՝ ուր կը մնայ գարդ : — Մանչեսթրի մէջ իր հոգեւոր հովուութեան առեն Տ. Թորոս հայկ. մատուռին մէջ տպարան մը բացաւ ուր հրատարակեց վերոյիշեալ կրօնաթերթէն զատ՝ **Թուղթ հովուականը** (1899) :

281. **Նշան Ճիհանեան** . — Ծն. Հաւքէօյ : Դան մը գրաշարութեամբ գրադէկ վերջ՝ 1896 ի զաղթ. հոսանքին անցած է Յունաստան ուր Ե. Օտեանի **Միութիւն** թերթը



Ն. ՃԻՀԱՆԵԱՆ

շարած է քիչ մը ատեն : Յետոյ մեկնած է Մարսիլիա, Բարիզ, Լօնտօն, ու Մանչեսթր՝ իբր գրագիր Մուրատեանի : — 1898ին **Վաղուան ձայնի** հրատարակութեան առթիւ Ա. Պարթեւեան կը բանակցի Նշանի հետ որ գիշերները գրաշարութիւն ընէ իր թերթին : Անգլիացիի մը տան վերնայարկն էր՝ առանց մեքենայի իրենց աշխատանոցը. տառերը թերթ տուած էին Տ. Տօղրամաճեանէն (Բարիզ), ու նոյն թերթը կը դրոշմուէր անգլ. տպարան մը : 1899 ին Բաշալեան և Արփիար Լօնտօնէն կը հրաւիրեն Ճիհանեանը՝ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան **Նոր Կեանք** և **Mars** թերթերուն գրաշարապետութեան համար : Երկու մեծանուն հրապարակագիրք իրմէ առաջ գրաշար ունէին հոն Գրիգոր Համամճեանը որ վերջէն Եգիպտոս անցած է : Ճիհանեան 4-5 տարի վարած է այդ գործը : Հին ու նոր Հնչակեանց միանալովն էր որ եկաւ կրկին **Հնչակ** թերթը՝ զոր կը շարէին Ճիհանեան և Յովակիմ : Առնցմէ առաջինը հուսկ ուրեմն լքած է իր աշխատութիւնը՝ կուսակցական պառակտումներու հետեւանօք, և Սահմանադրութեան հռչակումին՝ վերադարձած է Պօլիս, նախ Տէր-Ներսէսեան, վերջն ալ Յ. Մատթէոսեան տպարաններուն մէջ պաշտօն վարելով :

**ՄՕՆՊԵԼԻԷՐ**ի Սկովտ. այս քաղաքին մէջ տառերի մը հետքը թողած է

282. **Ֆիլիպ. եւ Տիրանեան** տպարանը, 1904 ին լոյս ընծայելով Մ. Մինասեանի երկհատոր **Բնաշխարհիկ մը Ճեռքնամներ** երկը :

**ՄՈՍԿՒԱ** կ'զգին ամէն 84 տարի առաջ Մեսրոպ. տառերով գիրքեր լոյս ընծայած է

190ա. «**Մարդասիրական Ընկերութեան Մերհիդացւոց**», տպարանը, բոլորն ալ տաճկերէն և կրօնաշունչ. — Այդան զէ կեօյէ եօլ Բրիստոս տուր, Բաղպանի տուանըն իւզերինէ սիր վազ (1828), Թալիքի զայըզը, Տաղլարտա օյան քէօյ, Իմանըն

բապտարը, Աղին քերականի, Աղիզէքին բանալը (1829), Բառգ (1831): — Այս տպարանն անմիջապէս վերջ Ընկերութիւնը փոխադրուած է Իզմիր: (Տե՛ս անդ, 190<sup>Բ</sup> թուահամար):

**ՆԻԿՈՍԻԱ** — Կիպրոսի ոստանն այդ նոր փոխառավայրը — Կիպրոս կղզիի այն քաղաքն է որ պատսպարեցան 96 ի առաջին ջարդերէն հալածական Հայութեան մէկ հատուածը որուն մէջ որբեր մեծամասնութիւն կը կազմէին: Վահան Թիւրքճեան (տե՛ս զինք Եգիպտոսի մէջ ալ) Խորէնց գտանք յարկի մը ներքեւ որ կոչուեցաւ

283. **Ազգ. Որբ. Որբանոց.** — Հոն էր որ 1902 ին տպարան մը հաստատեց և 1897-1901 տարեշրջաններու յայտարարութիւն, կանոնագիր ու տեղեկագիր Վիեննա և Գահիրէ տպագրել տալէ դադրելով, 1902-1904 ժամանուն Որբանոցի իր տպարանէն լոյս ընծայեց հետեւեալները. — **Տեղեկագիր** Ե. և Զ. Տարեշրջանի (1902-3), **Տնական** դաստիարակութիւն մայրերու ուղղուած խօսք, **Կիպրոս** կղզի, **Լուսաբեր** գրական հանդէս (1903), Մի տեսութիւն Կիպրոսի հայ իշխանութեան վրայ (1904):

## ԳԼՈՒԽ Թ.

# ՀՆԴԿԱՍՏԱՆ

1772 էն սկսեալ — մինչեւ 1876

**ՄԱՏՐԱՍ** ՀՆԴԿԱՍՏԱՆի քաղաքներէն առաջինը կը հանդիսանայ ուր Հայ Մամուլը գործած է ասկէ 140 տարի առաջ: — Հարաւային Ասիոյ այդ փիրուզի թերակղզին իր փարթամ ծոցին մէջ ապաստանած է Նոր-Ջուղայէ սկսեալ տարագիր Հայութիւն մը որ վաճառականութեան սիրահար՝ հեռաւոր շահաստան մը որոնեց, անխափան գործելու և բարեկեցիկ ապրելու, միեւնոյն ատեն Շահ Աբբասի յաջորդներէ հարստահարուած իր հայրենիքին օգնութեան ձեռք կարկառելու համար, չուծանալով երբեք իր ազգութենէն ու լեզուէն: Հնդկահայ Ա. գաղութը արագօրէն և մեծապէս հարստացաւ հոն՝ բնիկ իշխաններու հետ գործակցելով, մինչ անգլ. մրցակցութիւնը տակաւին մուտ չէր գործած: Եւ երբեմնի Ն. Ջուղայեցիներ՝ իրենց Հնդկահայու ճոխութեամբ՝ մէջ բացին իրենց քսակները միշտ, առիթը ներկայանալուն:

284. **Շահամիրեան Տպարանը** մին էր առաջինն որ պահ մը դերձակութեամբ պարապելէ վերջ՝ մարգարիտի առեւտուրով նոխայ հարստութիւն կը դիզէ, Հնդիկի մը հետ ընկերովի: Ինքնօգնութեամբ անգլ. սորված էր և Անգլիացիներէ ստացած ազատ միտք: Ազգակիցներու օգտակար ըլլալու առաջադրութեամբ՝ 1772 ին կը կանգնէ հոն Կիւրեմպերկեան տառեր մը՝ զաւկին ՅԱԿՈԲի անունով որուն ուսուցիչը եղած է Մովսէս Բաղրամեան (հօրը աշխատակիցը): Յակոբի կրտսեր եղբայրն է ԵՂԻԱԶԱՐ: — Շահամիրեան Տպարանը չնայելով իր աղճատ հայերէնին՝ կարեւոր ըրած է ազգակիցներու մէջ ընթերցասիրութեան ճաշակը զարգացնելու, որով կերպով մը հիմնադիրը եղած Հնդկահայ գրականութեան: Իր դրոշմած առաջին փոքր գիրքը կ'ըլլայ Եւրոպ. քերականներու վրայ ձեւուած **Այբբենարան** մը (1772), Բ.ր՝ Նոր տետրակ որ կոչի **Յորդորակ** (իր երկը), Գ.ր՝ **Որոգայթ փառաց** (1773), 110 օրինակ, իւրաքանչիւրը **10 ռուփի**: 2 տարի վերջ կը տպէ **Պատմութիւն Ճանապարհաց Հայոց եւ Վրաց** անուն կարեւոր գործը (հեղինակ Մեսրոպ Երէց): Յակոբ՝ երիտասարդ մեռած է այդ միջոցին, բայց անունը կը պահուի: Տպողը Եղիազարն է որուն գործակցած է ԿԱՐԱՊԵՏ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ: Յետոյ կու գան **Թարգմանութիւն** «համակի չորրորդ և պահպանութեան

ի Տ. Եկատարինա դշխոյն Ռուսաց» եւն. (1781)՝ և **Պատմագրութիւն** «վարուցն և գործոց Նատրշահ թագաւորին Պարսից» 200 հատ՝, հեղինակ Մասր Հաննուէ, անգլ.է թարգմ. Ամդեցի Պօղոս Միրզայեան (1783): — Այս տպարանին բոլորագիրը վայելուչ և ակնահաճոյ յօրինուածք մը ունին, ուղղորդ, նառուկ ձեւերով, ինչպէս կ'երեւի նմոյշ պատկերին որ առաջին էջն է «Յորդորակ»ի Յիշատակարանին: Նոյն գիրքէն կը տեղեկանանք թէ ՄԱՏՐԱՍ քաղաքի համանիշ է ՉԻՆԱՓԱԹՆԱՄ: — Շահամիրեան չէ ուզած սահմանափակուած մնալ Մատուլի գրադումով. իր ազգին բարօրութեան խանդով՝ միշտ կը բղխեցնէր կարողինոններու, Ղարադաղի Մելիքներուն ու նոյն իսկ Վրաց վերջին թագաւոր՝ Հերակլի հետ որուն թանկարժէք քար մը նուիրած ըլլալուն՝ 1789 ին փոխադարձ ընդունեց «Վրաց իշխան»ի տիտղոսը, յաջորդ տարին ալ ամբողջ Լոռի գաւառը, յատուկ հրովարտակով: Շահամիրեան ոչ մին կրցաւ վայելել և ոչ միւսը. 1798 ին մեռաւ Հնդկաստան, և ռուս տիրապետութեան վերջ՝ երբ ժառանգորդ մը չելաւ մէջտեղ, կառավարութիւնը արքունի կալուած նկատեց այդ հողը: — Իր յաջորդներէն ո՛չ մին բարեպատեհ եղաւ. անէնքն ալ հարստութիւնը փճացուցին շուտով և հատան աղքատ վիճակի մը:



Շահամիրեանի տպած ՅՈՐԴՈՐԱԿԻՆ Յիշատակարանը [փոքրացուած]

## 285. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեան

ծնած է Շիրազ 1750 ին: Կանուխէն կինն ու զաւկները կորսնցունելով՝ 7 տարի անդադրական կեանք մը վարած է, ակմիրջներու հետ ժողովրդական և պարսկերէնը զօրացունելով: Յետոյ հրաժարած է այդ կենցաղէն և 34 տարեկանին՝ Մատրաս քաղաքի ժամին քահանայութեան կոչուած: Հոն է որ կը ծախսէ ու կ'աշխատի մէն միայնակ՝ պատրաստելու համար հայ տառեր զորս «որդի վշտաց» յորջորջած է ինք, ակնարկութեամբ այն տառապանքին որուն ենթարկուած է՝ զայնս յօրինած ատեն: Իր գործաւոնէն յոյս ընծայուած են. **Վկայաբանութիւն Մարիանեայ կուսին** (1789), **Պատմութիւն** կայսերն Փոնձիանոսի (1790), **Տաղարան փոքրիկ** (Սիմէոն կաթող.), **Երգ Հայաստանեայց** (Սօզինեանց Թադէոս քհն.) 1791, **Ցիսուս որդի. Օրինակ հանգիստոր ծանուցմանց** (երկիցս) 1792, **Գիրք Պարփիւր** որ կոչի ներածութիւն (1793), **Գիրք սահմանաց Դաւիթ** (1797), **Բառգիրք փոքրիկ** ((1803), **Տեսակ աղօթից** (1804), **Բելիսարիոս** (հեղինակ Մարմօնթէլ, թրգմ. Պետրոս Վրդ. Պատուականցեան Կարնեցի՝ Բրօքանեանի աշակերտներէն) 1809: — Սակայն չէին կրնար անշուշտ փոխարինել Շմաւոնեանի զոհողութիւնները: 1794 ին գաղափարը կ'ունենայ հայերէն **թերթ հրատարակելու** և տպագիր ազդով մը կը պարզէ իր ծրագիրը Մատրասի Հայոց: Նոյն տարւոյ Հոկտ. 16 ին լոյս կը տեսնէ **Ազդարար** Ա. թիւը որ 1½ տարի կը շարունակուի, պարունակելով պատմական և ազգագրական կարեւոր յօդուածներ, լուրեր եւն. գրբ. և այլն: Ժամին զանգակատան ներքեւ նամակատուփ մը հաստատուած էր, ուր կը ձգուէին հասնող յօդուածները: Նոյն ատեններուն Հնդկաստանցի Անգլիացիք ալ իրենց ունէին Calcutta Gazett ը: Աշխարհիս մէկ ծայրը քաշուած այս փոքրաւանդն երէցը **ակիզբ տուած եղաւ այսպէս Հայ լրագրութեան** և հայաբերրի մը խմբագրութեան նախօրինակը մեզ ընծայող հանապետին մահուան 100ամեակը 12 տարիէն կ'արժէ՛ որ տօնեն բոլոր հայ խմբագիրներ ու հրապարակագիրներ: — Իր կեանքը սկսած է անհամոզքով սակայն աղջկան ու փեսին անբարոյութեանց հետեւանօք: Այս տխուր միջադէպերը կ'առաջնորդեն զինք օջախին քայքայման և ակամայ զեղծումներու (ազգապատկան գումարներու խորում), մինչեւ իր ողբալի մահը 1824 ին: — Շմաւոնեանի դրոշմած գիրքերէն մէկ քանիներուն վրայ կը կարդանք. «Ի թագաւորութեան Օգոստափառ. տեառն Բ. Հերակլեայ Բագրատունւոյ որ ի Թիֆլիս»: Սակայն ապացոյց մըն է որ ամէն երկրի մէջ գտնուող Հայեր (ի մասնաւորի Հնդկահայք) այն մեծ յոյսը կը տածէին որ Վրաց նոյն արքան օր մը Հա-

յատակը պղինձէ փրկէր ու ոտքեր առնէր, երբ յաջորդ Բագրատունեաց : Տաճարներուն փայփա-յած երազն ալ աս էր արդէն . . . (*) :

286. **Սարգիս Ծատուր Աղայվալեանց** քաղքին երեւելիներէն էր, որ Տաճարեանի, Տմաւոնեանի պէս Հնդկահայուն բարեկամը կը բաղձար՝ մամուլի և գիրքի շնորհիւ : Այդ առաջադրու-թեամբ էր որ Շիրազեցիին կենդանութեանն իսկ «նորակերտ տպարան» մը բացաւ ուրկէ լոյս ընծայուած գիրքերը եղան. **Թանգարան բարեզարդ** (Պետր. Վ. Պուռնազեան) 1809, **Ողբ Եդեսիոյ** (Ն. Շնորհալի) 1810, **Համակեցէք կամ Արքայնագործութիւն** (Ջուղայեցի Յովհ. Վրդ.) 1812, **Աղերսագրութիւն** ի վերայ մահուան Յովսէփ (թրգմ. Անգլ. Յ. Ն. Տամբեան) 1818 : — Այս բաւականէն անդին հայ տպարան գոյութիւն չունենար ի Մատրաս, մինչ


Ս. ԱՂԱՅՎԱԼԵԱՆՑ

## ԿԱԼԿԱԹԱՅի եւ ՊՕՄՊԱՅի

Հնդկահայք անդրագին գործունէութեան շրջան մը բոլորած են մինչեւ 1870 թուականի սկիզբները, որմէ յետոյ անգլ. հզօր տիրապետութեան սակ հետզհետէ կորուսած իրենց մայրենի բարբառը՝ մասամբ զարգացումնին կ'ստանան այլ եւս անգլ. թերթերով ու գիրքերով : — 1 Ապր. 1908ին հայազգի մը՝ Կ. Ն. Պարրճի կ'սկսի հրատարակել The Armenian կիսամ-սեայ հանդէսը : 1895ին Մեսրովբ Յ. Սեթ հնդկահայը History of Armenians in India խորա-գիրով ուշագրաւ գործ մը լոյս ընծայած է Կալկաթայի մէջ, Հնդկահայ կեանքը խղճմտօրէն հա-լեկացունելով, որուն մէջ յիշուած է նաեւ անդւոյն գաղութին տպարանական գործունէութիւնն ալ : — Հնդկահայը բոլոր դէպ ի հայ գրականութիւն իր դառն ուծացումին մէջ, դառնանք երբեմնի տպարանական իր փայլուն տարիներուն :

287. **Յովսէփ Շճոնց Ստեփաննոսեան.** — Մատրասի «Ազդարար»ը դադ-րած տարին, հրատարակչին՝ Կալկաթա բնակող այս պաշտօնակիցը խեղճ տպարան մը կը բա-նայ քաղքին Ս. Նազարէթ ժամին բակը. հոն կը դրոշմէ **Պատմութիւն անցից . . . առ Նադրշահ արքային Պարսից** որ Փրանսերէն ալ թարգմանուած է և զոր շարադրած է յոյն մօրմէ Կրետէ ծնած՝ Թոռոսոյի առաջնորդ՝ սալս կարող Աբրահամ Սրբազան : Յովսէփ քա-հանայ արուեստի հանկացողութենէ բոլորովին զուրկ կ'երեւի :

288. **Տպ. "Օճանտափիւռեան,, ի.** — 1810ին ՊՕՄՊԱՅ քաղքին մէջ լոյս տեսնող համանուն վիմատիպ թերթէն զատ՝ հոն հրատարակուած է **Ծաղկասան** (1822) և Յ. Ավգալեանի **Մռսիկ** ը (1823) որուն ճակատը կը կարդանք. «Տպագրեալ ծախիւք Օժանդա-կաց տպարանին . . . ի Կալկաթա . . . յՕճանտափիւռեանց տպարանի» : Ասկէ կը հասկցուի թէ թերթը Պօմպայ, իսկ միւս 2 գիրքերը՝ թերթին տպագրատան անուամբ Կալկաթա դրոշմուած են:

289. **Յովթյում Աւետեան** (կամ **Աւես Ջնրլուեան**) որ հեղինակ ալ է, 1811ին տպած է իր սեպհ. գործատան մէջ **Նոր տեսակ այբուբենական** (որուն յառաջա-բանով կը խոստովանի իր անզուսպ եռանդը Կիւրեմլէրկի արուեստի մասին), **Տաղ պաս-զամք**, 1813ին **Ծաղկաքաղ** (աշխարհագր., պատմ., և տարեգոյց), 1814ին **Դիւս կոփային պիտակին** (թրգմ. անգլ.), 1815ին **Համառօտ արդիւնութիւն եկեղեցւոյ** (Մարգար Խօճեոց):

(*) **Ազդարար** ի. անգամ հրատարակուած է ՄԱՏՐԱՍ 1846ին, վերատեսչութեամբ Ս. Պ. Յովհաննէսեանի որ 2 տարի վերջ կը հանէ **Բանասէր**ը: ** ՍԻՆԿԱՓՈՒՐի մէջ ալ 1843ին ունեցած ենք վիմատիպ թերթ մը. **Ուսումնասէր**: ** Յիշենք նաեւ ԿԱԼԿԱԹԱ հրատարակուած Տեսմարանը (1810), **Հայելին** (1846), **Հայրենասէրն** ու **Եղբայրասէր**ը (1862), վերջինս՝ Եղիազար Տէր Յարութիւնեանի կողմէ: ** Իսկ **Ազգասէր**ը տե՛ս «Արարատեան Ընկերութեան» տպարանին մէջ:

290. **Աստուածաշնչի Ժողովոյ** «որ ի Կալկաթա, ջանիւք և արդեամբք տպագրեալ եղև **Աստուածաշունչ գիրք հնոց եւ նորոց կտակարանաց**, ի գիւղաքաղաքն ՍԻՐԱՄՓՈՒՐ 1817:

291. **Յովհ. Յօհաննու Յորդանանեան** 1821 ին տպած է **Անգղիաց անգլէս** «... ի հրահանգութիւն համբակաց» թրգմ. անգլ. Յ. Ավդալեանց, **Անգլիա բան, խօրագիտաց դիւանութիւն. Արիստակ հօր ուռուդն**: — Յորդանանեանի տպագրիչն է եղած ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ:

292. "**Հայկեան Մարդասիրական Ճեմարան**,, ի գործատան մէջ զըլխաւորաբար գրոշմուած են գործերը համանուն կրթարանին հիմնադիր՝ Երեմիանցի Յովհ. Ավդալեանի [ննդկանայ ևչ. մատենագիր, քաջ անգլիագէտ, դատախազ ու թարգմանիչ, «Անդամ Ասիական Միաբանութեան Բանգալայ»] և ուրիշներու, որոնք են. — Համառօտ մեկնութիւն **Տրամաբանութեան** (1822), **Համաեկաս** աշխարհագրին Երոփկոյ (ենդ. Զոնարեան Սամուէլ, թարգմ. անգլ. Յ. Ավդ.) 1826, **Ներբողեան** ի յիշատակ Գէորգայ Մանուկեան, **Ներբողեան** ի յիշատակ Մնացականի Վարդանեան (1827), **Յաղագս հաստատութեան** և նպատակի և արդեան քրիստոնէութեան ի Կալկաթա, **Աստուածոց** մասնան երկնային, **Քրիստոնէութեանց**, **Պատմութիւն յորդորակ** յնրիեւնոյ և ի գիտել զԱստուածային գիրս (1828), **Աւետարան, Վերջին աւուրք** Տէր. Մկրտչին Սանփանեանեան (1830), **Ատածութիւն** վարդապետութեան ի վերայ հաշտութեան (1832), **Ներբողեան** ի յիշատակ Յ. Գալուստեան 35ամեայ վարժապետին (1834), **Թուղթ** շնորհակալութեան (1844), **Յանցիմանութիւն անձին** (Գ. Աւետեան), 1846, **Խաչ եւ զաւազան** (1856), **Օրացոյց** (1867, 1870-1):

293. **Եպիսկոպոսական Ճեմարանի** գործատան (Bishop's College press) տըպագրիչն է ՅԱԿՈԲ ԱԱՅԿՈՒԵԱՆ: Այս տպարանը (նուիրուած Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանուց անուան) լոյս ընծայած է Թաղիադեանցի և այլոց գործերը. — **Ճշմարտութիւն** քրիստոնէութեան (1829), **Դիցաբանութիւն** (1830), **Մեռոփեան այրիներան**, **Մեռոփեան ծառայից** հայ և անգղիերէն լեզուաց (1840), **Պատմութիւն Հին Հնդկաստանի**, **Քրիստոնէական կրթութիւն** (1841):

294. **Միրզայ Միխիծուքը** այ ունեցան իրենց սեփական գործատունն որկէ լոյս ընծայեցին **Համառօտ** բացատրութիւն, **Ատածութիւն** ի վերայ Աստուածաշունչի (1831), **Բովանդակութիւն** բոլորի սրբազանի գրուածոց (1832):

295. **Արարատեան Ընկ.** 1845 ին կազմուած է Հնդկահայ մեծանուն մատենագիրին՝ Մեսրովպ Դաւթեան Թաղիադեանցի (Վ. Ա. Սարկաւագ Ս. Էջմիածնի) ջանքերով որ նոյն Միութեան անուամբ բացաւ տպարան մըն ալ ուր դրոշմուեցան. — **Ազգասէր** կիսամսեան (1845-8, խմբ. Մ. Թաղիադեանց), **1850-2** վերստին հրատարակուած, **Պատմութիւն Պարսից** Ա. հատոր, **Զաւարճախօս** առակք Պարսից, **Վէպ Վարդգէսի** Տեառն Տուհաց (1846), **Վէպ Վարսենկան** Ս. Սկայուհւոյն Աղուանից, **Մեռոփեան** առաջնորդ մանկանց, **Սօս եւ Սօնդիպի**, **Ճառ** դաստիարակութեան օրիորդաց, **Վկայաբանութիւն** Ս. Սանդխտոյ, **Կարգ եւ կանոն** Ս. Սանդուխտ դպրոցի (զոր հիմնած էր Տիկ. Շուշան Թաղիադեանց), **Ճանապարհորդութիւն** Մ. Թաղիադեանցի ի Հայս (Ա. հատոր). **Թուղթ** Թաղիադեանց (1847): Ասոնցմէ մեծ մասը երկասիրութիւնն է Մ. Թաղիադեանցի զոր կենսագրած է † Յովհաննէս Աւագ քահանայ Մկրեան:

296. **Արծիւ** տպարանը (հիմնուած Կ. Պօլսեցի ՊՕՂՈՍ ՎԻՐՃԷՆԵԱՆԷ) **1847** ին լոյս ընծայած է **Բնդարերից Աւետարան** մը, իսկ 1848 ին **Ժամագիրք** մը: Վիրճէնեանի մասին Թաղիադեանցի 1844 ին հրատարակած **Արարատ** լրագիրին մէջ կը կարդանք. «Թողեալ զգրաւորական մասին պակասութիւն, վերագոյն համարիմք զգործն զոր քան զոր տեսաք մինչեւ ցայսօր ի լեզու ազգիս: Միշտ փիւնիկ տպագրութեանց համարեալ, և գարմանամք ընդ արարս եւրոպացի եղբարց մերոց. բայց պարոն Պ. Վիրճէնեան Կ. Պօլսեցի շուք տուէ զամենեքումբք յարուեստական մասին, երէ հիմնաւոր և բաւական քաջալերութիւն ունիցի»:

297. **Յովհ. Քհնյ. Խաչիկեան** Արարատեան ընկ.եան տառերով կը բանայ տպարան մը ուր կը դրոշմէ (գլխաւորաբար իր գործերը). — **Հայելի** փոքրիկ, **Նոր տպարան** հիմնեալ Ս. Գր. Լուսաւորչի (իրենին համար է) 1869, **Համառօտ** քրիստոնէականութիւն, **Երկնային** հրաւիրակ, **Տեսիլ արժանեաց** ի դատախազականութիւն աշխարհի (1870), **Դաւանագիր** (1873):

## ԳԼՈՒԽ Ժ.

# ՌՈՒՍԻԱ

1771էն սկսեալ — մինչեւ 1912

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (ԷՋՄԻԱԾԻՆ)** տակաւին ռուսական տիրապետութեան չենթարկուած՝ 1771ին ունեցաւ իր տպարանը

298. **«Ս. Գր. Լուսաւորիչ»**, տպարան, որ վերջերս կոչուած է «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ կամ ՏՊ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ»: **Էջմիածնայ արքափայրին** առաջին Ոսկանեանք Հօլանտա, Իտալիա, Ֆրանսա եւ Թուրքիա գործած էին ա՛յնքան եռանդով՝ այս բաւականէն շատ առաջ: — Գ. Լուսաւորիչ գործարան հիմնադիրը եղած է 1763ին տպագրական Երեւանցի Սիմէոն կաթողիկոս որ հայրապետական գահը բարձրանալէն 2 տարի վերջ փոքր տպարան նոյն գործին, քանի մը տարի տեւող բղբակցութեան սկսելով Իզմիր՝ Դուկ. Վ.ի տպագրիչ Մարկոսը համոզելով իրեն ղրկելու համար, Ամստերտամ՝ Յովհաննէս Վ.ի, Առաքելի գիրերը գնելով ուղարկելու համար, Պոլիս՝ Էջմիածնայ արքունի գործակալ Մովսէսի, Վենետիկէն հետք Պոլիս գիր բերող Սարգիս Վրդ.ի՝ տառերը գնել տալու համար: Բոլոր այս ջանքերը կը մնան ապարդիւն. մինչեւ որ Հնդկահայ երեւելիներէն Գրիգոր Միքայէլեան Չաքիկենց 3106 ռուբլի կը տրամադրէ այդ գործին համար, իսկ քանի մը տարի վերջ բղբաշխութեան համար Բարիզէն յատկապէս 2 արուեստագէտ ուղարկել կու տայ Էջմիածին, 14000 րուբլի փարձք խոստանալով անոնց որոնք սակայն հոն համնելնուն՝ կը դժկամակին նոյն արուեստը գործադրելու մասին, սակայն հայրապետին պատուհասէն վրայ տեղի կու տան. և Գեղամեցի Խաչիկ եպսկ.ի հսկողութեան տակ 1776ին վերջապէս կը կառուցուի






Էջեր՝ 1783ին Էջմիածին տպուած «Տաղարան»էն

նոյն գործարանը — Վենետիկի Մխիթարեանց միաբանութիւնը — 7800 ռուբլի ծախքով զոր դարձեալ նուիրած է Զաքիկեանց : Կաթողիկոսն այս բարերարին անունը քանդակել տուած է տպարանին ճակատին : Հոնկէ լոյս ընծայուած Ա. գիրքը կը համարուի **Տաղարան** մը (Սիմէոն կաթող.ի) որ իր առանձնաւոր տիպին համար շատ հետաքրքրական է որ երևան չէ հանուած : Այդ գիրքը **1777** ին վերստին դրոշմուած է **Տաղարան փոքրիկ** խորագրով : Իսկ Գ. տիպը կատարուած է 1793ին : Անդրանիկ տաղարանէն վերջ, **1774** ին կը տպուին հայրապետին 2 գործերն ալ, **Տօնացոյց** և **Զբօսարան հոգւոյ** (ձրի բաշխուած), **1777** ին **Կարգ բաղման** «հայրապետաց, եպիսկոպոսաց և քահանայից» : — Սիմէոն 1780ին վախճանելով չկրնար յառաջ տեսնել **Պարտավճար** խորագրով գիրքին տպագրութիւնը որ մահէն 3 տարի վերջ միայն աւարտած է, իրեն յաջորդ՝ Ղուկաս կաթողիկոսի ջանքերով, որ տպարանը չենցունելու փոյթ տարաւ և տեղափոխեց զայն իր վերաշինել տուած «խոհանոց»ը : Հոն տպուած են **1785** ին **Աւետիք ժամագիրք** մը (փորձերու սրբագրիչ՝ Թադէոս Վրդ., տառերն ու մէջի զարդերը պատրաստող՝ Վաղարշապատցի «վարպետ» Յարութիւն և իր աշկերտը՝ տիրացու Խաչատուր, գրաշար՝ տիրացու Մաղաքիա և Աղէքսանդր սարկաւագ, գրածոյ և մրազարկ՝ Գէորգ ևն.), **Յախսկաու** (1787), **Տաղական** (1789) : ** 1793 ռուսականէն վերջ, կէս դար շարունակուող տպարանական անյարթիւն մը կը տիրէ Էջմիածին, վերագրելի՝ քաղաքական դէպքերու որոնք կը տագնապեցունեն Հայաստանը, մանաւանդ նաև Ս. Աթոռը : Յովհաննէս Ը. Կարբեցի կաթողիկոսի օրով միայն՝ 1842ին կը տպուի Ծաղիկարցի Յովհ. եպսկ. Շահխաթունեանցի **Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառաց Այրարատայ** խորագրով շահեկան երկհատոր գիրքը : — Իսկ և յաջորդ հայրապետներ (Ներսէս Ե. Աշտարակեցի, Մատթէոս Ա., Գէորգ Դ., Մակար Ա. և Խրիմեան) մղում կու տան և քաջալեր կը հանդիսանան կրթական գործին, որով Ռուսահայք Կովկասի և Ռուսիոյ զանազան քաղաքներուն մէջ նորակազմ գաղութներով (Նոգինէ Կ'ունենան իրենց դպրոցները, Միութիւններն ու տպարանները, Թրքահայոցմէ աւելի խանդով և ճշտութեամբ ծաղկեցունելով հայ գրականութեան բոլոր ճիւղերը : — Դառնալով Էջմիածնայ տպարանին, 1868ին ընտրուող Գէորգ Դ. տարի մը վերջ զայն վերակազմած է և հիմնած բազմարդիւն ճեմարանը : Մակարի օրով կառուցուած է շէնք շնորհք տպարան մը՝ պարունակող ձուլարան, գրաշարանոց և արագատիպ մամուլներ, Սանասարեանի, Անանեանցի և այլոց նուէրներով : Հայոց Հայրիկն ալ իր կարգին ջանադիր եղած է տպարանին բարելաւման, Վիեննայէն նորաձոյլ տառեր բերել տալով : — Հոնկէ լոյս ընծայուած գիրքերը եղած են. — **Առաջնորդ** լուսաշաւիղ ճանապարհին յաւիտենական կենաց (1864), **Կանոնակ**... տն. հոգևորականաց (1868), **Վիպասանութիւն** սակս Պատմութեանցն Զարմի և Մամիկոնեան տոհմի, **Ազգաբանութիւն Հայոց** (1870), **Դաւիթ բէգ** (1871), **Ստորագրութիւն** հռչակաւոր մեծի ուխտին Այրի վանուց (1873), **Դասագիրք** եկեղ. ձայնագրութեան, **Վաղարշապատ** (1874), **Նախակրթանք** հայ լեզուի (1875-6), **Մաշտոց** (1876), **Նիկոլ Եպսկ.** (1877), **Ժամագիրք ասենի** (1878), **Դատաստանագիրք** Մխիթար Գօշի (1880), **Աւետարանի** համաբարբառ (1884), **Արան Հայաստանեայց** (1888), **Աւետարան** խղարկից (1892), **Հայոց նոր վկաներ** (1902-3), **Սիրոյ և վշտի երգեր** (1908), նաև **Օրացոյցներ**, **Կանոնակներ** և 1868էն սկսեալ ցարդ շարունակուող **Արարատ** անուն Մայր Աթոռի օրկան կրօնաթերթը : — Այս տպարանը ժամանակին Մօսկուայէն նաև ստացած է մամուլ, Վիեննա. տառեր և Խալիպեանի «մայր»երը որոնք սակայն անգործութեան դատապարտուած են հիմայ :

299. **Վահան Վրդ. Բաստամեան** 1870ին ԳԱՅԻԱՆԷ ՎԱՆՔին մէջ տպարան մը կը հիմնէ (Ս. Էջմիածնի տառերով) և կը հրատարակէ **Դպրոց** ուսանող. հանդէսը :

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳ** քաղաքին մէջ (զոր Ռուսահայք նախապէս ուղղագրած են ՍԱՆԿՏ ՓԵՏԵՐԲՈՒՐԳ և ապա ՊԵՏԵՐԲՈՒՐԳ) առաջին անգամ տպարան բացողը կ'ըլլայ

300. **Գրիգոր Խալդարեանց** Զուղայեցի վաճառականը (որ Խօջամալի որդին էր և որ Հնդկաստանէն Լոնտոն անցնելով 10 տարի մնացած է հոն) : Իսկ Անգլիացիի մը պատրաստել տալով հայ տառեր՝ փոխադրած է Պետրբուրգ և 1781ին գործի ձեռնարկած, իրեն զօրավիգ ունենալով Սիմէոն կաթող.ի ձեռնասուն՝ Երկայնաբազուկ Յովսէփ Ա. (որուն առանձնական պիտի անդրադառնանք քիչ յետոյ) : — Խալդարեանց 1780ին Լոնտոն տպել տուած է՝ Յովսէփ

Ս.ի փափագով՝ «Դաւանութեան հանգանակն»: — Պետերբուրգի մէջ իր գրուած գիրքերը. — **Ժամագիրք** (1783), **Յիսուս որդի**, **Սկզբունք** քրիստ. ուսմանց, **Պատմ. Ս. Գրոց** (1785), **Վէմ** հաւատարմութեան, **Աստուածաբանութիւն**. **Ժամու** Աւետարան, **Տարեցոյց** և Օրացոյց, **Տօնացոյց** (1786), **Ժամագիրք** (նախատօն), **Պատմ. Ս. Եղիշէի** (1787), **Ընդհանրական. Ճառից լեզուագիտութեան. ... Փոխումն Ն. կտակաց.** Բանալի **գիտութեան** (1788): — Իր գործառնութեան եկած Ա. «Ժամագիրք»ին Յիշատակարանին մէջ Խաչատուրեանց տպագր. պրուեսի մասին ունեցած ակրը խոստովանելէ զատ՝ կը յաւելու. «Յովսէփ Արք. հրամայեաց ասել գիրքը **Տէրունի Օլըութենից**, զոր և ասկեցի ծախիւք խմըլի»: Դարձեալ, ինք է որ Լօռունեան հրահրեց անցնելու գրաձուլել որ Պետերբուրգի հասնելով խոյտը տառեր պատրաստեց: — Հնդկաստանի մէջ ունեցած շահած այս ազնիւ առևտրականը փարաւոն կը մաշէ զանոնք՝ հայ գիրքերու տպագրման համար, մինչև որ պարտքի տակ կ'իյնայ և Արղութեանց իր «բացուեր կ'երկարէ» տանը: Պահանջատէրերը գրաւելով՝ խմբատուն Ա. տառագծովը Խաչատուրեանցի տպ. կազմածքը կը գնէ և փոխադրէ Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆի Ս. Խաչ վանքը:

301. **Յովսէփ Յովհաննիսեան** տարկոտ անցեալ դարուն սկիզբը տպարան մը կը բանայ հոն, գլխաւորաբար գրուելով Երիտասարդական ընկերութեան քանի մը գործերը: Անոր իր տպածները. — **Բառ ուսանական** գիտութեան քերականութեան (1812) որուն Գրմ.ը Բարեգ տպուած է 1838ին. իսկ խոսչ.ը՝ Ս. Ղազար, 1879ին: **Նոր Կտակարան** (1814): **Ընկերակցութիւն** Աստուածաշունչ Ժողովոյն ի Ռուսաստան (1816): **Ատ. ատենից** (1817): **Աւետի ճէշին**: **Յանկ** կատարածաց արարեալ յերկս մասունս (1819): **Բառ եւեալ** ամփոփ տպագրած բառանիւթերիւք (Յ. Լազարեանցի դամբանականը) 1826: Այնուհետև Յոհան.ի տպարանը կը փոխանցուի

302. **Հայոց Եկեղեցական Ճեմարանի Ներսէսեան Դպրոցը**, որ 1828ին գրուած է **Աշխարհագրութիւն** «որը վերարկերին առ համառօտութիւն նաչ- ատրեանն Ռուսաց» 10 էջնոց կարևոր գրքոյկը՝ ռուսերէն և հայերէն:

303. **Ալեքսանդր Խուդաբաշեանց** որ մասնաւորապէս ալ էր, 1829ին իր «նոր գործարան»ին մէջ կը տպէ **Բառգիրք** «սպագրեալ և ձեռագիր գրոց Հայոց ի մասնաւորաբանի ներգործական խորհրդարանի ակրութեան». իսկ 1838ին **Գիրք նախակրթութեան** հայկական լեզուի «յորում համառօտի բացատրին սկզբունք գլխ. գիտութեանց»:

304-306. **Ենոքեան** Գերմանացին տպարանը յոյս կ'ընծայէ հայերէն գիրքեր: — Անոր տառերը ՈՍՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ ձեռք ձգելով, իրենք կը հիմնէ և 1860ի սկիզբները կը հրատարակէ շատ մը գիրքեր, նաև Ռուսահայոց առաջնակ լրագիրը՝ **Հիւսիս**: — ԳԷՈՐԳ ԹԵՄԱՆՑ ԱԿԱԴԵՄԻԱՆ ալ իր բազմալեզուեան տպարանին մէջ կը գործածէ քանի մը գիրք: (Այս 3 տպարաններուն յիշատակութիւնը կը պակսի Հ. Գափրանեանի ձեռագիր ցուցակին. քաղեցինք զանոնք Լէօի **Հայ Գիրքի Տօնը** երկասիրութենէն):

307. **Միք. Մ. Միհրդատեանց**ի տպածները. — Ազգ. կրթութիւն (1867), Քնար հայկական, Աւանձին յայտարարութիւն, Խմամատարութիւն երախայոց (1868): — Իր տպարանին մէջ շարուածները կը գործածուէին Ռուսերու մամուլով: Միհրդատեանցի տառերը անցած են

308. **Քաղաքի**ն որ 1869ին տպած է **Թագաւորութիւն** և **Հայերէն կարգալ** ու գրել ուսուցանելու հրահանգ «Պետերբուրգի հայ ուսանողների աշխատասիրութիւններից»:

309. **Գօլովինի** 1872ին տպած է **Կանոնաւոր եւ վայելուչ գրութեան** պատմութիւն ու տեսութիւն:

310. **Տրենքիլյա եւ Ենկ.** 1876ին տպած է «Բարեկամութեան գանձը»:

311. **Ի. Ն. Սկորոխոդով**ի տպածները. — **Հաշիւ** Սանկտ Պետերբուրգի Հայոց եկեղ. տուրքատուների, **Պատմութիւն** Դեռնեպաց Վ.ի Հայոց, **Վիրիկէլմ Տէլ**, **Պատմութիւն Տանն Արծրունեաց** (Թովմա Վ. Արծրունի), **Արամս** (Դուլամիրեանցի բանական

տարի հրատարակած գեղեցիկ պարբերականը), **Սոխակ** (1887), Ա. Բուդաղեան բժիշկին գործերը (Ի՞նչ է Սիֆիլիսը, Բժշկ. նխն. միջոցներ, Վարակիչ հիւանդութիւններ, ևն.) 1891 :

312-313. **Յ. Ի. Քէրէքեան** տպած է Պլատոնի ըմբերցուածք (1893), Առողջապահական զրոյցներ (1897) և **Արամայի** Գ. տարին, որուն Ը.ը հրատարակած է ՇՆԿՉԵԱՎ.ԵՐ:

314. **Յուշիկեան տպագրատուն** Հայոց տպարանէն 1901-4 ին լոյս ընծայուած են — գրքեր ամբողջութեամբ — Ա. Բուդաղեան բժիշկին երկերը. — Առողջ հոգին առողջ մարմնոյ մէջ: Մանկաբժ. զրոյցներ: Գեղձախտ: Ժառանգականութիւն: Մարմնամարզութիւն: Ի՞նչ է ամուսնութիւնը: Կինը և տղամարդը: Օպերացիա, Կաշու հիւանդութիւն: Երիտասարդութիւն և ծերութիւն: Առողջ ու հիւանդ երեխայի ոգին: Ուղեղի Սիֆիլիսը: Քուն և երազ: Գործարա՞ն թէ երկրագործութիւն: Սնապաշտութիւն: Մանրէ. Խորհուրդներ: Գոյութեան կռիւ: Ռուդոլֆ Վիրխով:

**ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ** — ի վերջ կոյս ԺԸ. դարու — կը դառնայ Հայոց լուսաւորութեան կեդրոն մը, շնորհիւ անդուլ ժրաջան առաջնորդ Սանահնեցի Արղութեանց Յովսէփ Արքազանի որ 1784 ին կը հիմնէ.

315. **Ս. Խաչ Վանքը**՝ քաղքին հիւսիսակողմը, ժեռուտ բարձունքի մը վրայ, իսկ 1790 ին հոն կառուցանել կու տայ ուսումնարան ու տպարան: Առաջին բոլոր ծախսերը հոգացած է Ջուղայեցի Աղայ Յոհաննէսեան «ի Սուրաթ բնակեալ» — ինչպէս կը տեղեկանանք Յիշատակարաններէն նոյն գործատունէն լոյս ընծայուած գիրքերուն որոնք են. — **Աղօթամատոյց** «և զրուցումն հոգևոր, Խանձարուրն ուխտականութեան», **Ողբք** և հառաչանք, **Ս. Կանոն Սաղմոսի** (1790), **Ժամագիրք** (1791), **Տետրակ** համառօտ և գի խմաստախոհ բանից, **Գուսն ողորմութեան** (1792), **Բժշկարան հաստատ** (շարադրեալ ի ներհուն բժիշկ Ջուղայեցի Յոհաննէս Քալանթարեան Պրն. Պետրոսէ, ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան . . . ընդ հովանեաւ Երկնահանգէտ Ս. Խաչ Վանիցն որ ի Նորն Նախիջեւան), **Պատմ. Թելեմաքի որդւոյ Ուլիսեայ**. Ա.Ծ.աղերս (1793), **Օրացոյց**ներ ևն. : — Արղութեանց, մականուանեալ Երկայնաբազուկ [1743-1800] որ տպա նշանաւոր ալ կաթողիկոս եղած է, Հայոց պատմութեան մէջ թողուցած է անմոռանալի անուն մը՝ ռուս և պարսիկ քաղաքական անցքերու միջոցին իր ազգօգուտ ծառայութիւններով զորս մանրամանել՝ դուրս է մեր ծրագիրէն : — Ինչ էր որ Ս. Խաչ վանքի տպարանին կազմածները տիրացած է՝ Պետերբուրգ բնակող Գ. Խալդարեանցի տպարանը հաստատելով : — 1794 է վերջ, նմանուն վանքի տպարանը փոխադրուած է ԱԺԴԵՐԽԱՆ՝ իր միջոցաւ : — Մինչ 100 տարի հայ Մամուլի որ և է արտադրոյթ չենք ողջուներ Նոր Նախիջեւանի մէջ : — 1894 ին է որ


ՏԵՏՐԱԿ
ՀԱՄԱՌՕՏ
ԸՆԹԵՐՑԱՆԵԼԱՑ ԳՐՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆ
ՄՈՒԹԵԱՆ
1791 Նոյեմբերի 20
Ի Սբ Խաչ Վանքն, որ ՚ի Նորն
ՆԱԽԻՋԵՒԱՆ.

Նախիջեւանի Ս. Խաչ վանքի տպարանէն լոյս ընծայուած գիրքերէն նմոյշ մը

316. **Ա. Զամինեան և Քէրլեան** կը տպեն **Սիֆիլիս և իր դարմանը**, նաև «Ն. Նախիջեւանի ուսումնական գործի անցեալը» : — Իրենց կը յաջորդեն

317. **Եղբ. Յ. և Ա. Ալադեաններ** որոնք հրատարակած են. — Շինոց (1898), Աշակերտի առողջապահութիւն, Ո՞վ է յանցաւորը (1900), Պատկերներ և պատմուած-

նէր (1905), Հօրոս-Մօրոս (1907), նաեւ Թէմ. Դպրանոցի, Հոգեւորականաց Խնամատարութեան եւ Հայազգի աղքատաց եկեղ. ծագարարձութեան հաշիւները: — Հ. Գաֆթանեան Նոր Նախիջեւանի մէջ տպուած կը նշանակէ Մեծագործութիւն (1896) եւ Այբբենարան մը (1897): — Վերջին տարիներս այս քաղաքը հրատարակուած են Մեր Ձայնը եւ Լոյս պարբերականները:

## ԱՍՏՐԱԽԱՆ (Աժտէրխան կամ Աժդարխան) փոխադրուած է.

318. **Յովսէփ Ա. Արղութեանցի** տպարանը՝ Նոր Նախիջեւանէն: 1796ին հոնկէ լոյս ընծայուած մեծադիր 9 էջնոց գրքոյկը եղած է **Խօսք** «առաջեալ ի Յ. պատկազգեանց Ս. Արք. Եպսկ.է՝ Յիսուս. կողմունս եղեալ ամենայն ազգին Հայոց» — քարոզ զոր նոյն եկեղեցականը 5 Ապր. 1796ին խօսած է Ղզլարի Ած.ածին եկեղեցին, «ի ներկայութեան Բարձր Գեներալութեան Եմարալ Անշէֆ, եւ զանազան նշանաւոր Կաւալեր Եվան Վասիլիչ Գուդովիչին, եւ այլ զօրապետաց. ի ժամանակի չուելոյն Զօրացն» են.:

319. **Տպ. Ա. Ճշմաճեանի** անունը Աստրախանի մէջ տպուած կայ **Հրաւէր** «ի խորհրդարանէ Ռուսաց Ած.աշխեաց ժողովոյն» գիրքը 1821ին, մինչ միեւնոյն քաղաքին մէջ, առանց տպարանի յիշատակութեան, ունինք հետեւեալները. — **Ժամագիրք** (1818), **Նորագոյն գրոյցք** (թրգմ. ռուս. Արք. սրկգ. Ած տարեան) 1820, **Համառօտ վարդապետութիւն** ուղղափառութեան (Գ. Պատկանեանց) 1821, **Պատմ.** Աղեքսանդրի Մակեդոնացւոյ 1827:

## ՄՕՍԿՈՒԱ (ծին ուղղութեամբ ՄՈՍԿՎԱ, կամ ՄՈՍԿՎ.Ա) հայ ուսումնասիրական գիրքերու հրատարակութեան տեսակէտով՝ կը ներկայանայ մեզ կեդրոնավայր մը ուր հայազգի մասնագէտները 1820ական թուականէն սկսեալ մղում տուած են բանասիրական-պատմական ճիւղին եւ որոնց մէջ փայլած են Պօլսեցին Միքայէլ Տ. Վ. Սալլանթեանց, Ջուղայեցին Մկրտիչ էմին Յովսէփեան, Մագիստրոս եւ Զարմայր Մսերեանք, որոց հանգուցեալ նշանաւոր բանասէր Գրիգոր Խալաթեանց եւ այլն:

320. **Օգոստոս Սեմէնի** տպարանէն լոյս կ'ընծայուին. — **Ազգօգուտ յայտարարութիւն** «Յովակիմայ Եղիազարեան առ լուսաւորչական ազգակիցս իւր...» 1820, **Բառարան ռուս. հայ.** (Յր. քհնյ Աքամզարեանց) 1821, **Քերականութիւն**(ներ) գրբ. եւ ռուս., **Եսայի** Տեառն մերոյ (թրգմ. ռուս.) 1827, **Պատասխանիք** «առ անիրաւ զրպարտութիւնս խմատակի...» գրբ. քերականութեան քննադատութեան սւրին (1828), **Մուգայք Արարատեան** (1829): — Յաջորդ տարին, առանց տպարանի յիշատակութեան լոյս տեսած են **Մին Արար ծառայի** պատմութիւն եւ **Հուշակաւոր պօրք** Ներսէսի (12 լեզուով): — Օգոստոսեան Սեմէնի տառերը գնած է յետոյ Վլադիմիր Դեոփէ:

321. **Տպարան "Ճեմարանի Հայոց Տեարց Լազարեանց,,.** — Համանուն նշանաւոր կրթարանին, տպարանին եւ Մոսկուայի առաջին հիմնողը եղած է անմահն ՅՈՎԱԿԻՄ որ ԼԱԶԱՐԵԱՆՑ բարեհամբաւ տոհմը պանծացուցած է՝ Հայութեան մատուցած իր գնահատելի ծառայութիւններով որոնց մասնակցած են իր մեկենաս եղբայրը ՅՈՎՀԱՆՆԷՍ եւ յաջորդները: — 1829ին հիմնուած այս գործատունէն լոյս ընծայուած են. — **Համառօտ քննութիւն** Քրիստ. հաւատոյ, **Երգաբանութիւն** (1831), **Սկզբունք** քրիստ. վրդպ. (1833), Նոր Կտակարան (1834, նաեւ Բ. տպ.), **Քերականութիւն** (Յ. Եղիազարեան Լազարեանց) 1839, **Սաղմոս** (1842), **Քերականութիւն** (Մ. էմին) 1846, **Ճառ** (1848), **Ընտիր հատուածք** (1849, որ 61ին նորէն տպուած է), **Մեղու Հայաստանի** ԺԹ. եւ Ի. տարիները, **Եղբայր եւ Քոյր**, **Հոգեպահական ձեռներ**, **Արշալուսաւոր** Վարդենի (1879), **Մովսէս Խորենացին** եւ Հայոց հին վէպերը (1871), դասագիրքեր, եւն. եւն.: — Տպարանը ներգիծեալ կատարելագործուած է նոր. մամուլներով եւ Մխիթարեանց փայլուն տառերով որոնք կը պատրաստէին իր սեպհ. ձուլարանին մէջ եւ որոնցմէ կը ծախուէին նոյն խուլ ուրիշ քաղաքներու հայ գործարանաց: Վերջէն Օ. Հերբէկ գնած է Լազարեան ճեմարանի «մայրերը»:

322. **Ալյադինիր Վոսիէ** (կամ **Վոլգնեար**) ֆրնս. դրամատուն Օ. Սեմէնի կազմածքը ձեռք ձգելով իրր կը բանայ եւ կը տպէ **Հռահանց** քրիստ. հաւատոյ, **Վէպ**

հնոյն Հայաստանի (1850), **Ցայգալոյս** փորձական ճողերանութեան 1851, **Պատմ.** և քաղաք. վէպ (1859): ☞ Լէօի նոր երկէն (էջ 171) կը տեղեկանանք թէ Գօրիէի տառերով տպարան մը կը բանայ ԱԹԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ (ՇԱՄԱԽԻ) որ կը տպէ Արցախեցի Մոսէս Զօհրապեանցի **Պարապոյ ժամք** ն/ն., մինչ 1859 տարուան «Ճռաքաղ» թերթի մէջ Լէօի գրածը հերքող ու ստուգող կը ճանչնինք. «Այս օրերումս եկաւ ի տպագրական Մամուլ **Պարապոյ ժամք** վերնագրով ... երկասիրութիւն, մասն Բ., որ տպուած է Մոսքուայի մէջ Գօրիէի տպարանում»:

323. **Յովհաննէս Քաջայեան Փաթմանեանց** 1861 ին տպած է **Եզնէ**, իսկ երկու տարի վերջ՝ նոյն գիրքին աշխարհաբարը:

324. **Օթոն Հերբէք** (Othon Herbeck) գերման գրաձուլիչ մըն է որ Լազարեան ճեմարանի **մարրխները** գնելով պատրաստած է հայ տառեր, զորս վաճառած է ռուսահայ տպագրիչներու: Իր գործածներէն են **Դրագիր** հայ ազգագրութեան (1887), **Հանգէս** գրական և պատմական, **Երէք գրոց** (1888):

325. **Միրզա Քարխուդարեան** տպած է **Սախակ Հայաստանի** երգարանը (1890), Եղիշէ (1892), Խ. Աբովեանի **Երկեր** (1897), Դանիէլեան Վ.ատ (1910) ևն.:

326-327. **Լատվառէ Վարդանեան եւ Անդրիասեանց** ռուս Օրինագրքերն ալ հայ գիրքեր տպած են որոնցմէ Ա.ին հրատարակութիւնն է Մ. Էմինի գործերը (1898):

328. **Ն. Ալէքսէեան.** — Ազօթք. Սէր (1906). Հայրեր և զաւակներ (1911) ևն. (*):

**ՏՓՂԻՍ (ԹԻՖԼԻՍ)** քաղաքը — որ Վրաց կը պատկանէր և որ 19րդ դարու նախամուտին կ'իյնայ ռուս իշխանութեան ներքև, — Մոսկուայէ վերջ կը ճանչնուի իբր նշանաւորն ու բեղունը որ 1822 էն սկսեալ մինչև այսօր՝ տարուէ տարի ճոխացուցած է Հայ Մամուլի իր արտադրոյթը, զարկ տալով նաև օրագրական և պարբերական հրատարակութեանց: Կովկասի և բովանդակ Ռուսիոյ Հայութիւնը Թիֆլիզ յառած է աչքը, ճանչէ անխախ չելով իբրու իր մտացական զարգացման իր յոգնաւորին պահանջները: Մեր ծրագիրէն դուրս է առանձնակի խօսիլ անոնցմէ բոլոր այն սիրելի մեծ դէմքերուն մասին որոնք ռուսահայ պատկառելի գրականութեան մը ծնունդ տալու՝ հրապարակագիրի, բանաստեղծի, վիպասանի, բանասէրի և մանկավարժի իրենց ուրոյն կարողութիւններով, ամէն տեսակ, կորովի, ճիմնաւոր ու փայլուն՝ քան արևմտեան Հայերունը: Տեղւոյն ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆներն ալ չէ ուշացած նշանակելի դեր մը խաղալու վերազարթումի այդ գործին մէջ: Կը բաւականանանք միայն ակնարկ մը ձգելով Թիֆլիզի Հայոց տպարանական աշխարհին վրայ:

329. **Տպ. Ներսիսեան Դպրոցի.** — Համանուն ուսումնարանը 1824 ին հիմնած է երանաշնորհ Ներսէս Աշտարակեցին որ այդ միջոցին Պետրպուրկոյ առաջնորդ՝ չէր սէր կը տածէր Կիւլէմպէրկեան արհեստին մասին: Սրբազանը կը դիմէ Վանցի Գէորգ Երամեան Արծրունի իշխանին որ Հօլանտա իր ճամբորդութեան ընթացքին յաջողելով ձեռք ձգել Ոսկանեան տառեր՝ կը նուիրէ զանոնք Թիֆլիզի ազգ. կրթարանին: Նոյն տպարանէն լոյս ընծայուած են. — Պատմ. և խրատ բժշկութեան ցաւոցն նորոգ ծագելոյ յաշխարհին Հնդկաց (1823), Հրահանգք քրիստ. վրդպտ. (1825), Բերականութիւն, Յայտարարութիւն քրիստ. պարտաւորութեան հպատակաց ... (1826), Համբաւք ի գիւղէ որոշեցելոյ վասն Կովկասեան սահմանաց, Հռչակ ողորմութեան կայսեր Ռուսաց (1827), Երախայրիք Ներսիսեան դպրոցին (1828), Դարասստան խրատուց (1829), Եմկլիֆիզիգիայի պատմութիւնը (1853-4), Բառարան ռուս-հայ (1854), **Վէրք Հայաստանի** (Խաչատուր Աբովեան), Բաղդատութիւն պատմութեան Մ. Խորենացւոյ (1858), Պատմութիւն Հայոց գրականութեան (1865) ևն.:

330. **Արզանեան** 1856 ին տպած է «Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի»:

(*) Մօսկուա հրատարակուած թերթերէն յիշենք «Հիւսիսափայլ», «Ճռաքաղ», «Փարոս Հայաստանի», «Մասիս», «Համբաւաբեր Ռուսիոյ» ևն.: Իսկ 1909 ին վերստին հրատարակուած է «Օրենք հայրապետականս»:

331. **Համբարձում Ենֆիաճեանց** նախ ընկերացած է ԳԱԲՐ. ՄԷԼՔՈՆՄԵԱՆՑի, ապա որդիներու [Հ. Ենֆիաճեանց և Ընկ.]: Ունէր վայելուչ տառեր, ձուլարան, բնաիր ոսկի և անտակեան գործունէութիւն, որով նմանացուցած է Ներսիսեան տպարանի փայլը: 1860էն հրատարակած է Մ. Աղաբէկեանի **Նուէն Հայոց աշխարհին**, **Վահանուկեան** և **Հայկ. Աշխարհ** թերթերը, — երբ առանցմէ առաջ Թիֆլիզ լոյս կը տեսնէր **Կովկաս** (1844-6), Մեղու Հայաստանի (1858) և **Արարատ** (1850-1): 1862ին կ'առանձնէ «Մ. Հայաստանի» հրատարակութիւնը (*): — Փունջ մը իր տպածներէն. — Բանի մը խօսք Հռովմայ եկեղեցւոյ գլխաւորութեան մասին (1861), Նախաշաւիղ կրթութեան (1862), Պարապ վախտի խաղալիք (Խ. Աբովեան) 1864, Գիշերուան սուրբ խեր է, էս էլ քի Մօզիքլութիւն (1866), Դալալ-Դաշօ, Աւետ. (1867), Հրահանգք քերակ. (1869), Մնկվրժ. նամակներ (1873), Հայկական յիշատակներու մասին, Համառօտ մանկավարժութիւն (1875), Ս. Փէյիքօ (1880) եւն. եւն.: — Իր տպարանը փոխանցուած է Ռօտինեանցի, բայց ձուլարանը գոցուած է: ☞ Թիֆլիզի մէջ ծանօթ գրաձուլիչ մը եղած է նաև Մասեր անուն Գերմանացին:

332. **Յովհ. Մարտիրոսեանց** (և ընկ.)ի տպածները (1876-87). — Գործն. խրատներ, Ժողովածու բառար. խնդիրների, Հայոց մամուլը Ռուսաստանում (Յարոյ), Թատրոնի մեղու, Դերակատութիւն (ներ), Երգարան, Երուանդ Բ., Մանկական ասմանորներ, Մարդակազմութիւն, Ազարանգեղոս, Արեգնազան, Մանկապարտէն վերջին օրը, «Աղբիւր» եւն.:

333-334. **Կովկասեան (Յ. Գրիգորեանց)** և ԿԵԴՐ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑներու հրատարակածները. — Մայրենի Լեզու (ներ), Ռուսի ամուսնութիւն (Մօլիէռ), Գարօի ընտանիքը, Անապատում, Երկրագործութիւն (ներ) 1875 ... 88:

335. **Մովս. Վարդանեանց** (և ընկ.)ի տպածները. — Ընախօսութիւն, Երկնական ճամբար, Գիւղացուն բառ խորհրդաց, Բարոյ. վէպ, Ոսկեգոյն հայ ուսուցիչ, Երկրաչափութիւն, Խմբատուացիչ ուսմունքին, եւն. եւն. (1881 ...):

336. «**Արօր**» Տ. Նազարեանի. — Տպած է Բանաստեղծութիւններ, Վաղարշապատեցի Յ. Ա.ի կեանքը, Եղիշէ (աշխարհաբար), Անահիտ (հին գրոց), եւն. եւն. 1881 ...:

337-340. **Բօտինեանց**, **Մ. Շարաձէ**, «**Հերմէս**» թէ առանձինկի և թէ ընկերովի տպած են. — Հասուածական օրացոյց, Հասարակութեան նեցուկները, Գիրք բըրոց, Բուչակ նահապետի երգերը, Թատերական խնդիրներ, Կեղեքիչ, Արդարութեան նշանակութիւնը, Կորած մարգարիտ (Ս. Փիլիպեանց), եւն. եւն. (1891 ...):

341. **Մնաց. Մարտիրոսեանց**. — Գիւղատնտեսական գործիքներ (Լ. Խանազեանց), Ղազար Փարպեցի, ևայլն ևայլն (1898 ...):

342. **Օր. Ն. Աղանեանց** միակ կին բոլոր երկիրներու հայ տպագրիչներու մէջէն որուն երկարատեւ Մամուլը կը շարունակէ բոլորել փայլուն գործունէութիւն մը: Յիշենք քանի մը հատ հին տպածներէն. — Ռուս. հայերէն հատուածներ (1906), Ազատութեան խամրը, Տարրական քերականութիւն, **Հայ գրքի sոնը** (1912) Լէոի:

343-344. **Բասումեանց**: — **Շաղանեան**. — Դասագիրք բնական պատմութեան (1907), Չմեռնողին ձեռքեր (1910):

345-364. **Քուլամբուձ եւն. Տպարաններ**. — ԵԱԿՃԱՏԻ, Հայկ. նշանագիր Ա. տետր (Վ. Լիսիցեան) 1877: — Լ. Գ. ԿՐԱՄԱՐԵԿՕ, Գ. Լուսաւորիչ և իր որդիքը (1886), Դասագիրք ընթերցանութեան (1883): — «ԿԱԻԿԱՍ» Նոր-Դար (1890): — ՏՊ. Գ.Լխ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒ, Տօմար բառ., Ընծայարերութիւն Ներսիսեան

(*) Թիֆլիզի թերթերէն կան դեռ. Փորձ, Մեկնիչ թերթ, Գ. Արծրունիի **Մշակը** (որուն 40ամեակը տօնուեցաւ այս տարի), Արքար Յովհաննիսեանի **Արձագանք** (1882 էն), Նոր-դար (1884 էն), Մուրճ, Տիգրան Նազարեանցի «Աղբիւր», Տարազ, Լումայ. Ն. Խոտոյեանի «Վարժարան», Ազգագրական հանդէս, Արօրյօս, Հորիզոն, Սուրհանդակ, Գեղարուեստ (Գարեգին Լեւոնեան) եւն. եւն.:

պարոցի (1874), Ղարաբաղի աստղագէտը (1882), Խրիմեանի կենսագր. տետրին (1892): — Վ.ՐԱՑ ՀՐՏՐՁԿ. ԸՆԿ., Զրոյցներ հողի մասին (1893), Մանուկների հոգատարութիւնը, Մարօ-նի պլրօմը, ևն. ևն.: — Վ.ԵՐԻՋԵԱՆ ԵՒ ԿԱՄԷՄՊԱԽԷՐ, Մալարիա (1902), «Լոյս» ևն.: — Ա. ԲՈՒԹԱԹԵԼԱՁԷ, Մուսա (1902), Մի խոստովանութիւն: — ԹԱԻԱՐԹԲԻԼԱՁԷ, Երկու գրոյց (1903) ևն.: — ԳՈՒՏՏԵՆԲԵՐԿ, Հայրենասիրութիւն (1906): — ԵԳՕԽԱ, Հեռու փախիր գրական խուլիգանից (1907), Թուրքիայի ապագան, Ձեռնարկ տրամաբանութեան: — Կ. Գ. ԿՈՎԼՈՍԿՈՎ, Հայ գրչագրեր Ս. Թովմայի վանաց (...): — ԶՄՕՐԱ, Խօսքեր (1907): — ՇՐՕՄԱ, Գր. գլու. ժողովածու (1908), Երիտասարդ Թուրքիան և Հայերը: — ԳԻՒՍՏԵՐՏԻՉ, Տանն ու կառուն (1908), Խօսող ձուկը: — «ՊՐՕԳՐԷՍ», Մայրենի լեզու (1908), Հին Արևելքի քաղաքակրթութիւնը: — ԿՈՒԼՏՈՒՐԱ ԸՆԿ., Պօլսի երազը (1909) ևն. ևն.: — ՆԱԳԻԲԳԻԱ, Այրենապան (1909): — ԵԿՕՆՕՄԻԱ, Զառկական պառներ (1909): — ԷՍՊԷՐԱՆՏՕ, Սոցօվիա-Նեմէցով (1910): — ՇԱՊՕՐՆԻ, Երուանդ գօշ (1911): Եւ գնո. արիչներ:

## ՌՈՒՍԻՈՅ ՄԻՒՍ ՔԵՐԹՈՂՆԵՐԸ

365-369. **ՇՈՒՇԻ** առաջին մամուլ ու. գործունէութեան ունեցած են ԲՈՂՈ-ՔԱԿԱՆ ՄԻՍԻՕՆԱՐՔ որոնց լոյս ընծայած գիրքերէն յիշենք՝ Արևել. հայերէնով՝ Նոր Կտակարանը (1832): Այս գիրքէն առաջ Շուշիի մէջ անանուն տպագրուած կը գտնենք 3 գիրք. — **Համառօտ** ածային վկայութեանց, **Ընթերցուած** ի Ս. Գրոց Հին Կտակարանի (1829), **Բառարան** համառօտ գրբ. աշխ. (Յովսէփ Վ. Արցախեցի) 1830: ** ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ տպարանը կը բանայ Ղարաբաղի առաջնորդ Պաղտասար որ Մխիթարայ թողու-ցած տառերը գնած էր: Այս տպարանը վերջէն նոր տառեր կ'ընդունի Մօսկուայէն, բայց 70ական թուականին փակցուածի վիճակին կը հասնի՝ երբ Խ. Վ. Սամսոնեան հանեց լոյս կ'ընծա-յէր **Հայկական աշխարհի** (*) քանի մը թիւերը: Յետոյ վերաբացուելով՝ լոյս ընծայած է մեծամասնութեամբ Լէօի երկերը. — Վէ՞պ թէ պատմ. (1887), Ծայրեր, Կոյրի աղջիկը, Վանան Մամիկոնեան (1888), Իմ յիշատակարանը, Սպանուած հայրը (1891), Թարախման գիշերը (1892), ևն.: ** ՄԻՐԶԱՋԱՆ ՄՀՏ. ՅԱԿՈԲԵԱՆՑ տպած է Րաֆֆիի **Խենթը** (1881), Արաղը տարին կատարի (1883), Ուխտաւորի յիշատակարանը (1885), Սկայորդի (1886), Տարաս բուլ՛բա. (Գոգոլ) ևն.: ** ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆՑ (1891...1911) տպած է Կենդանական... մագնէսիամ, Մարկը, Նորագոյն տեսող. ուսման... նախագիծը, Զրոյցներ, ևն. ևն.: ** Մ. ԲԱԲԱՋԱՆ-ԵԱՆ 1910ին տպած է Շուշի-Գանձակ ճանապարհի համառօտ հաշիւ:

370. **ԹԷՕԴՕՍԻԱ** ծննդավայրն է անման ծովանկարիչ Այվազովսկիի, որուն Բարիզ հաստատուած եղբայրը՝ Գաբրիէլ Վ. երբ Պետ-րաբուրգի առաջնորդ եղաւ, փոքր տպար. կրր. գործին, ՅԱ-ՐՈՒԹԻՒՆ Պ. ԽԱԼԻՊԵԱՆՑի օժանդակութեամբ հիմնելով Խա-լիպեան ուսումնարանն ու տպարանը, որուն «Արամեան» տա-ռերը Բարիզէն բերել տուած էր: Ազնուազարմ բարերարը ծը-նած է Նախիջեւան 22 Փետր. 1790ին: 13 տարի քաղաքա-գլուխի պաշտօնը վարած է, մեծամեծ ծառայութիւններ մա-տուցանելով ռուս կառավարութեան և իր ազգակիցներուն: Դարձեալ, իր ծախքով է որ կառուցուած է այս քաղաքին Ս. Յարութիւն եկեղեցին: Մեռած է 24 Ապրիլ 1871ին: — ԽԱԼԻՊԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ լոյս ընծայուած են **Մասեաց Աղաւնին՝** Է. տարիէն սկսեալ, Թուաբանութիւն, Դասա-գիրք (եր), Լազարեան կենցաղօգուտ գիտելեաց. Պատմ. Ս. Գրոց, Նախակրթականք (1860), Եզնիկ, Արշակ Բ., **Այսմաւուրք** (Խորէն Վ. Գալֆայեանի աշխ. Ա. կատակերգութիւնք 1861), Ընթերցարան լեզուի Ռուսաց (1862), Հեգարան (1865), Աղօթք (1866). Օրացոյց (1867), Եօթն Խօսք, Ուղղագրութիւն (1869), Քերականութիւն (1871), Յախտ.



ՅՐ. ԽԱԼԻՊԵԱՆՑ

(*) Շուշի հրատարակուած թերթերէն կան Սիմ. Հախումեանցի **Փորձը** (1882-3) եւ **Ղարաբաղ** (1911-2):

կեանք, Օրէնք վայելուչ կենցաղավարութեան (1871), Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեանց Միաբանութեան Վենետկոյ (Բ. տիպ 1876, որուն Ա. տիպը Բարիզ՝ 1858ին): Այնուհետև գրքատուն և տպագրատուն կը գոցուին:

371-373. **ԹԱՒՐԻԶ**ի մէջ իրենց կը հիմնէ Խալիպեան տպարանի գրաշարներէն ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ որ կը հրատարակէ. — Երիտու Հայոց լեզուով առակներ, Ի սէր հայրենեաց, Ազատնեալ (1875), Նոր ազգ. երգարան (1878), Երուսաղէմի Հայոց ազգ. վանուց մասին տեղեկութիւն, Աղօթագիրք, Բանալի գիտութեան ռուս լեզուի (1883), Փունջ իմաստալի բանից (1886), Վէպեր և պատկերներ, Բառարան հայ-ռուս (հեղինակ՝ ինքը) 1889: ** ՏՊԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿ.ը 1898ին տպած է Ռ. Բերբերեանի Հայոց նորագոյն պատմութիւնը: ** ԳՈՒՆՈՒԿԱՅԱ ԲԷՉ տպարանէն 1906ին լոյս ընծայուած են Ընկեր, մի՛ գառանիր, Խարուած յոյսեր: — Դարձեալ, Ռոստովի մէջ տպուած են 1896-7ի **Օրացոյց**ներ:

374-378. **ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ** քանի մը Հայու տպարաններ բացուած են՝ **1876**էն սկսեալ. — Գ. Մ. ՍԱՆՈՅԵԱՆՑ, որուն տպածներէն յիշենք. Սկզբունք երկրաչափութեան, Հիմնական . . . կանոններ, Աշըղ Ղարիբի հէքեաթը, Ծոցի բառագիրք ռուս. հայ., Օվիկեր, **Շիրակ Օրացոյց** (1901-2): ** ԱԲՐ. Մ. ՄԱԼԽԱՍԵԱՆ՝ **1892**էն սկսեալ տպած է Բանաստեղծութիւններ, Արիստակեսի Լաստիվերտցւոյ Վրդ. Հայոց Պատմ., Այբբենարան հայ-ռուս., Ճշմարտութիւնը չի մեռնում, Պառաւաշունչ (1911) ևն. ևն.: ** ՍՏԵՓԱՆԵԱՆՑ **1901**էն սկսեալ տպած է Առողջապահական նուէր նորատի կանանց ևն.: ** ՅՈՎՀ. ԱՓԻՆԵԱՆՑ (ապա ՇԻՐԱԿի 1903էն սկսեալ տպածներէն բանենք Բանաստեղծութիւններ, Շիրակ **Օրացոյց**ներ (1903-12), Խիկաֆար, Վերածնութեան մեղեդիներ, ևն.: ** Յ. ՂԱՍԱՊԵԱՆ 1905էն սկսեալ տպած է Նորահաս օրիորդներին բարեկամական խորհուրդ, Լրաեր (1906) ևն.: — Իսկ Աղեքսանդրապոլի թերթերէն յիշենք Ախուրեան, Ժայռ և Արագած:

379-389. **ԲԱԳՈՒ** 1864ին հիմնուած է ՄԱՐԳԱՐԻՏԱԿԱՆ ԸՆԿ.ը որ իր տպարանն ունեցաւ 1872ին՝ Լէնքորանեանի տառերով, ուրկէ լոյս ընծայուած գիրքերէն յիշենք Գօշ Մխիթարի, Ողոմպիանու և Եզովպոսի ընտիր առակները (1878): ** Ս. Բ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ տպած է Մի կարիլ արիւն (1885), Տեղեկագիր, Երկու վէպիկներ, ևայլն: ** ԳԻԼԻԲՈՒԶԱՐԵԱՆ տպած է Արևելեան գրոյց (1894), Զարգ-Դարվին, ևն.: ** Ս. Թ. ՇԱՀԲԱԶԵԱՆ 1897էն սկսեալ տպած է Սանինի, Փոքրիկ լորդի պատմութիւնը, Վերջին օրերս Սախալինում (1910): ** ԵՂԻ. ՂԱԶԱՐԵԱՆ տպած է Կորցրած բախտ (1899), Սոխակ Հայաստանի (1902), Բոյլը: ** Հ. Ս. ԵՐԷԽԱՆՅԵԱՆ տպած է Հին-Նոր երգավէրքերից (1902), Ինչպէ՞ս իրականացնել ազգութիւնների հաւասարութիւնը ևն.: ** Ս. ԱՆՏՕՆԵԱՆՑ 1903ին տպած է Անտոնիոսի «Լեհաստանի Հայերի պատմութեան վերջին երեսը»: ** «ԱՐՕՐ» տպած է Հայերը Տաճկաստանում (1903) ևն. ևն.: ** «ՏՐՈՒԴ» տպած է Կիրակնօրեայ դպրոցներ (1906), Բանաստեղծութիւններ: ** ԷԼԵԿՏՐԱԿՕ 1909ին տպած է Ի՞նչ բան է Զէմստվօն: ** «ԲԱԳՈՒ» թերթի տպարանէն 1910ին լոյս ընծայուած են Արտաշէս Բ., ժողովուրդը ժողովրդեան Լեկեներու մէջ: — Բագուի մէջ վերջերս սկսած է հրատարակուիլ **Նոր Խօսք** թերթը:

390-395. **ԵՐԵՒԱՆ**ի մէջ առաջնութիւն ունի ՊՍԱԿ թերթի (խմբ. Տ. Կ. Վ. Պապաջանեան) տպարանը (1880-3) ուրկէ լոյս ընծայուած են Ի՞նչ է ժամանակը, Ի՞նչ է խօսում սենեակը, Երևանու նահանգի բուսականութիւնը: ** Ա. ԹՕՒԼԱՄԻՐԵԱՆՑ հրատարակած է Տեղագրութիւն Երևանի (1889), Բարի երեխաներ: ** Է. ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ տպած է Կոնֆուկիոս (1896) ևն.: ** Թ. ԷՏԷԼՈԻՆՍ տպած է Աստղեր և նոցա առողջապահութիւնից (1899): ** ԱՅՎԱԶԵԱՆՑ ԵՒ ՆԱԶԱՐԵԱՆՑ լոյս ընծայած են Հայ-թուրքական ընդհարումը (1907): ** «ԼՈՅՍ» տպարան. — Մ. Նալբանդեանի կեանքի հետաքրքիր մի էջը, Ազատագր. շարժումը (1908), Դասագիրք ընագիտութեան (1910): Երևան հրատարակուած թերթերէն յիշենք Բժիշկ Լ. Տիգրանեանցի «Առողջապահական»ը, «Երևանի յայտարարութիւններ»ը, «Հրազդան»ը (1908), «Նոր Զայն»ը, «Կռան»ը որ ցարդ կը շարունակուի:

396-398. **ԱՐԱԵՑԻԱ** գործած են ՄԿՐ. ԴԱԼԱՄԳԱՐԵԱՆ (Բանդած օջախ, 1889. Որբուկի օրը, 1901): ** ԵՂԲ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ (Նոր վէպիկ, Արեան վրէժ, 1905-6) են.: ** ԽՈՐԷՆ ԱՄԱՐԵԱՆՑ (Աւտորիայի ձգնաժամը, 1906):

399. **ՆՈՐ ՑԱՅԱՉԻՏ** քաղաքին մէջ 1890 ին դրոշմուած կը գտնենք Աշըգ-Յագայի **Ամրան եւ Մայլի** անուն երկասիրութիւնը:

400-401. **ԳԱՆՁԱԿ**ի գաւառին վրայ շահեկան ուսումնասիրութիւն մը ունի Ե. Լալայեանց՝ 1900-1 ին Թիֆլիզ հրատարակած 2 հատորով: — Իսկ ԳԱՆՁԱԿի մէջ գործած են ԹԱՌՈՍԻՄԵԱՆ և ՅԷՕԴՕՐՈՎ տպագրիչները, որոնցմէ առաջինը տպած է տեղւոյն Սուրբ Յովհաննէս Մայր եկեղեցիին **Հաշիւները** (1893 . . . 5):

402. **ՑԱՐԻՈՒՄ** գործած է Ն. Պ. ԳՈՒՐՈԿՅԵԱՆ՝ 1901-4 ին տպելով հետեւեալները. — Ընթերցողների ուշադրութեանը, Պզտիկ Մհեր, Որբիկների արցունքները:

403. **ՑԵԱՍՏԻԿՈՐԻԱ** (Կովկաս) 1903 ին ՍՈՒԲԻԱՍԵԱՆՑ ԵՒ ԼԻՍԻՆԿՈ տպած են Ի՞նչպէս հիմնել գիւղատնտեսական ընկերութիւն:

404. **ԳՕՐԻՍ** (Կովկաս) 1910 ին «ՍԱՍՈՒՆ» տպարանէն լոյս ընծայուած է Զանգ-է-Զուր (լեգենտա պօէմա): — Դարձեալ, Գորիսի մէջ հրատարակուած է **Գաւառ** թերթը՝ նոյն տարին: ☞ Ուսկից ԱՆԱԲԱ քաղաքը Մ. Յ. Ծառ (Համշեան Արամեանց) **խմբա-րապետ** հրատարակած է 1905-7 **Օրգան** և **Իգէն** յեղափոխական թերթերը:

405. **ՍԱՄԱՐՔԱՆԴ** (Սրմբրդանտ) մայրաքաղաքն է Պուխարայի (Թարքիստան կամ Թուրքիստան): Արփունուշի ձէնկիզ խանի այս հայրենիքին մէջ — որ այժմ ռուս իշխանութեան տակ ինկած է, — սակէ քանի մը տարի առաջ Ղ.ԱԶԱՐՈՎ (կամ Ղազարեան) ունեցած է տպագրատուն մը ուրկէ լոյս ընծայած է **Սեզանի գիրք** նորապսակ ամուսիններու համար (1910), Լ. Թոլստոյէ թարգմանութիւն մը՝ **Թանկ ապէ** (1911):

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒՀԻ ԶՈՅԳԸ

Չորս հարիւր տարուան մէջ (1512-1912), բովանդակ աշխարհի վրայ հայերէն անհամար գիրքեր ու թերթեր լոյս ընծայող՝ առաւել քան 460 տպարան բացուած ըլլալով, երէ տառնցմէ իւրաքանչիւրը միջին հաշուով 3 գրաշար ունենար, կիրեմ-րան թիւը կը հասնի ղերկի հայ աշխատան-ջուրց 1400 ի: Այդ հա-**զարու բազմութեան կու հոգի միայն ո-**Օրիորդք Հայկանոյշ և Շուշի, վերջերս գրաշա-մեծանուն հօր՝ Մկրտիչ սփիլոյ «Հայ տպարան»ը **մէնիս** թերթին 4 էջերը կուսական քնքոյշ մատ-մանի փափկասուն սե-դասը տալով լուեկայն սահմանին մէջ -- ո՛չ մէկ **զար չորս հարիւրինց** մէջէն անտարակի **եր-կու՛ աղջիկ են:** Ծուշան Իչզոյէ հայ գրա-ւութիւն ունած, իրենց Փորթուգալեանի Մար-կ'աշխատին միայն, **Աւ-**լեցունելով մէջս՝ իրենց ներով, և այսպէս, հա-ռակիցներու ջախջախիչ բէ--պատուաւորութեան ձեռարուեստ խոստի է հայ իգական սեռին համար: — Անդրանիկը «փնօրիբիսը» ալ է, և ներկայիս մէջ օրա-վարձքով կ'աշխատի նոյն քաղաքը հրատարակուող «Լը Սէմաֆոռ տը Մառսէյլ» ֆրանսերէն օրաթերթին տպարանին մէջ: — Կեցցէ՛ ուրեմն հայ ֆեմինիզմը . . . :



ՕՐՔ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ԵՒ ՇՈՒՇԱՆ

# ԳԼՈՒԽ ԺԱ.

| 1857էն սկսեալ | ԱՄԵՐԻԿԱ | մինչեւ 1912 |
|---|---|---|

**ՆԻՒ ԵՕՐՔ** (հին ուղղագրութեամբ ՆԻՒ ԵՕՐՔ). — Միացեալ Նահանգաց այս հոծ ոստանին մէջ առաջին անգամ ոտք դնող Հայը եղած է Օսկանեան Խաչատուր պատանին՝ բարձր ուսում ստանալու համար, 1834ին: Այս այն անձն է որ Պոլիս դարձին՝ հրատարակած է «Ազգասէր Բիւզանդեան» թերթը (1840): Իրմէ վերջ բաւական թիւով Հայեր գացած են Նոր Աշխարհ՝ համալսարանական կրթութիւն առնելու համար: ** Բողոքական Միսիոնարներու հաւատափոխ. առաքելութիւններ — ինչպէս Կեսարիոյ, Լոնտոնի, Մալթայի, Իզմիրի և Պոլսոյ մէջ — Գոլոմպոսի գտած երկիր'ն ալ հաստատեցին հայ մամուլը՝ Ս. Գիրքը ժողովրդականացունելու համար մեր ազգին մէջ եւս, անոր՝ մանաւանդ աշխարհաբար'ը հրատարակութիւններով: Այսպէս, աւելի կէս դար առաջ, Նիւ Եօրք մուտ գործեցին Մեսրոպեան ձուլածոյ տառեր և հիմնուեցան հետագայ երկու տպարանները:

406. **Աստուածաշունչի Ընկերութիւնը**, որ 1857ին տպեց **Աղօթամատոյցը** [Ա. տիպն Իզմիր՝ 1839ին], 1859ին **Աստուածաշունչ** գիրք Հին և Նոր Կտակարանաց [Բ. տիպն անդ 1867ին], 1862ին **Նոր Կտակարան** (նաեւ 1864, 866, 867), 1864ին Գիրք **Սաղմոսաց**, 1869ին **Աւետարան** ըստ Մարկոսի (աշխարհաբար լեզուով):

407. **Ամերիկայի Տետրակի Ընկերութիւնը** որ 1860ին և 79ին երկերը լոյս ընծայեց **Հաւաքումն** վկայութեանց Ս. Գրոց [Ա. և Բ. տպերն Իզմիր՝ 1849-52], **Քրիս.** վարդապետութիւն (1861), Քրիստոնէուհիին և Քրիստոնէին ճամբորդութիւնը [Ա. տիպն Իզմիր՝ 1843], **Առաջին** դասագիրք մանկանց (1869), **Աւետարանական** քարոզներ, **Բնական** առողջապահութեան վերաբերեալ խրատներ, **Սիրոյ խօսքեր** «Տաճկաստ.ի քրիստ. կիներուն համար» հեղ. վարժուհի Մ. Է. Ռեար, սանուն աշխարհաբարով՝ բարոյականի պատմական գիրք մը, 230 էջ, խոշորագիր (1874), **Քրիսթիան** բալիմարը (1877), **Բանալի** Ս. Գիրքը բանալու կամ դիւրին դասեր (1879, Բ. տիպը 1886ին: ** Այնուհետեւ ամերիկեան գաղութը տարուէ տարի կ'աճի, մանաւանդ Տաճկաստանի հալածանքներէն վերջ՝ մեծ հոսանք մը կը խուժէ Նոր Աշխարհ, կեանքի, ինչքի և պատիւի տեսակէտէ գլխովին անքոյթ: Բնական էր որ այդ բախտառական գանգուածն իր մէջ բուէր զանազան յեղ. կուսակցութիւններու ներկայացուցիչներ ալ որոնք — այլուր արդէն սկիզբ տուած հայ ազատագրութեան գործին — հետզհետէ իրենց «օռկաններ»ը կ'ունենան Ամերիկայի այս ու այն քաղաքներուն մէջ: 1890ական թուականի այդ պրոպագանդէն առաջ՝

408. **Հ. Էկինեան Ճէրզի Սիթիի** մէջ կը հիմնէ տպարան մը, 1888ին հրատարակելով **Արեգակ** թերթը որ անդրանիկն է ամերիկեան լրագրութեան: 1889ին **Սուրհանդակ** որ տարի մը վերջ անուն փոխելով կ'ըլլայ **Ազատութիւն** և որ պզտիկ դադարներէ վերջ կը շարունակուի մինչեւ 1892: — Դարձեալ, Էկինեանի տպարանէն հրատարակուած են **Հայք** (1891-8, խմբ. Մ. Ս. Գաբրիէլեան), **Եփրատ** (1897, խմբ. Պ. Ս. Ճաղայեան), **Տիգրիս** (1897, խմբ. Էկինեան և Թ. Չարշաֆճեան), մինչ Նիւ-Եօրքի մէջ խմբագրաբար լոյս ընծայուած կան Լուսնակ, Կայծակ, Ճանճ, Հարուած ևն. թերթիկներն ալ: — Էկինեանի տպագրածներէն յիշենք **Կսկծանք** (Ա. տետր), **Դայլայլիկ** (1890), **Լոյս եւ խաւար** (1891): — Հ. Գաֆրանեան նոյն տարին **Մարզարան** մըն ալ կ'արձանագրէ իր ձեռագիր ցանկին մէջ:

409. **Տպ. Արարատեան.** — Փառնակ Այվազեան 1 Յունվ. 1891-1892ին կը հրատարակէ **Արարատ** թերթը (շարունակութիւնն իր հօր՝ Մատթէոսի Պոլսոյ մէջ 1876ին լոյս ընծայած համանուն թերթին զոր բուռն կառավարութիւնը խափանած էր): Միեւնոյն տպարանէն 1892ին ելած են **Բանալի անգլիերէն լեզուի**, Գրպանի բառարան (1905):

410. **Մ. Ա. Գաբրիէլեան** — Նիւ-Եորքի մէջ ժողովրդական անուն շահած և ազգային գործիչի համբաւ թողած կարող բժիշկներէն կամ Այվազեան, Գաբրիէլեան, Արշակունի և նորեր: Գաբրիէլեան իր ընդգրկած ասպարէզին մէջ ջերմ փարած է նաև հայ գրականութեան և երկասիրած հետևեալները, բոլորն ալ իր սեպհ. տառերով գրուած: 1891, Արուեստ առենախօսութեան: 1892, Խրիմեան Հայրիկ: 1893, Առենախօսութիւնք: Ազգ. քաղաքականութիւն Հայոց: 1894, Հայկական հոգեբանութիւն: 1897, Քրիստոնեայ Հայաստան և քրիստոնեայ ակրութիւնք (անգլ. և հայ.), 1911: Հայ ցեղը: — 1891 Յունվ. 1 էն սկսեալ փարած է նաև խմբագրութիւնը **Հայքի**, դադրած 1 Ապր. 1898 ին:

411. **Եղիսա Պուլու. եւ Ընկ.** տպած են Պիտոնի գիտելիքները (1897), Ինքնաուսուցիչ անգլ. լեզուի (նաև նոյնին անգլ.ը), Մեր վարդագոյն տետրակը (1898), բոլորն ալ գործերը ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆի որ այս տարի հրատարակեց **Ո՞վ է Մեսիան Փարբու-գալեան**: 1899, Առձեռն Ամերիկեան բառարան անգլիերէնէ հայերէն:

412. **Տպ. "Կոչնակ"ի** — † Հ. Մ. Ալէն 15 Դեկտ. 1900 ին սկսած է հրատարակել այս թերթը: Պօլսոյ «Աւետաբեր» շաբաթաթերթի խմբագրապետութեան երբ կոչուեցաւ, բողոքական Հայեր շարունակեցին լոյս ընծայել **Կոչնակը** որ այս տարի գրաշար-մեքենայով (լինօթիփի) կը տպագրուի, — առաջին նորոյթը հայ տպարանական աշխարհին մէջ:

413. **Տպ. "Երիտասարդ Հայաստան"ի** — Այս թերթը 1903 թուականին սկսած է հրատարակուիլ Սապահ-Գիւլեանի կողմէ, իրր օրկան Ս. Դ. Հնչ. կուսակցութեան: Նոյն տպարանէն լոյս ընծայուած են Գործաւոր դասակարգը (1905), **Հաւաէ** (1907), Կարմիր օրեր (1909), Սահմ. հայ. յառաջ. ընկ.: Տպարանն այժմ փոխադրուած է ԲՈՍԹԸՆ:

414-416. **Արաքս** թերթի (խմբ. Յ. Յակոբեան, 28 Հոկտ. 1905-1907 Մարտ) տպարանէն 1909 ին լոյս ընծայուած է Առողջապահ Մարսապանութեան Անդարձ: ** ԱՐԾՈՒԻ թերթը 1905 Յուլիսին հրատարակած է Արշակ Տէր Մանուկեան որ միայն 1906 ի դադարով շարունակած է զայն մինչև 1908: Երիտասարդ խմբագիրն իր անձնական միջոցներով քանի մը տարիէ ի վեր Նիւ-Եորքի մէջ կը հրատարակէ ընտիր տպագրութեամբ պատկ. Armenia անգլ. ամսաթերթը որ նախապէս (1904) օրկանն էր Ամերիկայի Հնչակեան համաժողովային վարչութեան, և որուն մէջ յայտնի հայ գրագէտներու գրուածներէ թարգմանութիւններ կը գտնուին միշտ: ** ԱՐԱԳԱԾ պատկ. շաբաթաթերթը 1911 ին շքեղ տպագրութեամբ և ձոխ պարունակութեամբ լոյս ընծայեցին Վ.եր. Հնչակեանք՝ հազիւ սակայն 20 թիւ, երբ տպարանին հրոյ ճարակ եղաւ:

**ՖՐԸՍՆՕՅԻ** քաղաքին մէջ կը հիմնուի Հ. Յ. Դաշնակցութեան օրկան՝

417. **"Ասպարէզ"ի** տպարանը: Այս թերթն ի Նիւ-Եորք 1 Մայիս 1899 ին հրատարակած է Պ. Զարդարեան որ յետոյ յանձնած է Հնչակեաններու, յետոյ ալ Դաշնակցութեան: «Ասպարէզ»ի տպարանէն լոյս ընծայուած են. — Անդրանիկ, Արշալոյս, Մոսկուի և Զօռի արշաւանքները, Յեղ. փիպակներ, Սահմ. կառավարութիւններ, Երգարան, Ռուս. Ս. Յեղ. ծրագիրը, Միութեան խնդիրը, Սոցիալիզմ, Իմ եղբայր գիւղացին, Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ (Բ. տիպ), Քաղ. սոցիալական ուսմունքը, Կրէնզրակի, Զայրոյթի օրը, Իզմիրլեան աքսորավայրին մէջ, Երազս, Դէպ ի երկիր (Է. Ակնունի), Այսպէս էր, Կանոնագրութիւն Վանի ուսումնասիրաց ընկ.եան, Շանթեր, Օրէնքի և ընկերութեան գրեթէն, են.:

418-424. **Զայն Հայրենեաց** զոր Չիրճեան 20 թիւ հրատարակած էր ի ՆԻՒ-ԵՕՐՔ, կը փոխադրուի ՖՐԸՍՆՕ հոնկէ ալ ՊՕՍԹԸՆ: Այս թերթը օրկանն էր Հնչակեան համաժողովային վարչութեան, շարունակուած մինչև 1906: Օսմ. Սահմ. հռչակումէն վերջ Լ. Լարենց 2 տարի չափ Կ. ՊՈԼԻՍ հրատարակած է զայն: Նոյն տպարանէն լոյս ընծայուած են Զինուորները (1904), Գործնական կեանքը (1905), Լուծին տակ (1906): ** ԱԶԳ 1907 էն շարունակութիւնն է «Զ. Հայրենեաց»ի: Խմբագիր եղած է Ս. Պարթևեան: Վ.եր. Հնչակեանց պառակտումէն վերջ, «Ազգ» օրկանը դարձած է Սահմ. Ռամկավար նոր կուսակցութեան: «Ազգ»ի տպարանէն լոյս ընծայուած են **Փետրուարի Օճախը** (1908), Հայդուկին աղօթքը,

Խմբուն երեք (1910), Մեր բողոքները ու Դաշնակցութեան ուժը անոնց հանդէպ (1911): ** ԼՈՅՍ թերթը 6 տարի (1901-6) հրատարակուած է Մ. Մինասեան: Հին Ռէժիմին, անոր մուտքն ի Թուրքիա արգիլուած չէր, կրթ. և երկրագործական բովանդակութեանը համար: ** ՓԻԼԻՊ. ԵՒ ՏԻԳՐ. 1904ին տպած են Աւետիկ, նաև Պատկեր Հայ Յեղափոխութեան: ** Տպ. ԱԳԼԱՆԴԵԱՆ 1905-9 լոյս ընծայած է Հայկական ճգնաժամն և վերածնութիւն, Պատմական յուշեր, կրթ. սկզբունքներ և խոկումներ: ** Ի. Ա. ԵՐԱՆ (YERAN PRESS) վերջին տարիներս լոյս ընծայած է Բառարան հայ. անգլ. և անգլ. հայ., Գաւկ. գրուցատրութիւն հայ. անգլ., Գործն. առողջաբանութիւն, Սեռ. առողջաբանութիւն, ժողովրդ. երգարան: ** ՏՊ. ԿԻԼԻԿԻԱ (Մուշեղ Ա.ի). — **Ամերիկահայ Տարեցոյց. Ճառախօսութիւններ** (1912):

425-427. **ՖՐԷԶՆՕ** քաղաքին մէջ լոյս ընծայուած են **Բաղամցի** (16 Օգոստ. 1902, Հ. Էլվինեան), **Ասպարէզ** (5 տարիէ ի վեր, խմբ. Ս. Կ. Սէքլէմեան) թերթերը: Իսկ ՐՈՕՎԻՏԷՆՍի մէջ 1912ին հրատարակուած է **Պահակ** (Վ.եր. Հնչ. կուսակցութեան): Այս թերթը 1911 Յունվ.էն սկսեալ լոյս տեսած է նախ ՊՈՍԹԸՆ, Հրաչ-Երուանդի, Եր. Մխիթարեանի և Տքք. Արշակ Տէր Մարկոսեանի յաջորդական խմբագրութեամբ: ☞ Ամերիկահայ տպարաններէն շատը մամուլ չէ ունեցած. հայ. գիրքեր ու թերթեր տպուած են օտար մամուլով:

●●●

## ԳԼՈՒԽ ԺԲ.

| 1865էն սկսեալ | # ԵԳԻՊՏՈՍ | մինչեւ 1912 |
|---|---|---|

428-436. **ԳԱՀԻՐԷ**. — Փարաւոններու աշխարհին մէջ Ա. անգամ հայ տպարան հիմնողի պատիւը կը վիճակի ԱԲՐԱՀԱՄ ՄՈՒՐԱՏԵԱՆի (207ի թուահամար), 1865ին: Տպարանական իր բախտաւորչիկ կեանքը տե՛ս 207Ա թուահամար՝ Թուրքիոյ բաժնին մէջ (Երուսաղէմ): ** ՍԱՐԳԻՍ ԴԱՐԲԻՆԵԱՆի ԱՐԱՐԱՏ տպարանէն [Պէյն-էլ-Սուրէն] լոյս ընծայուած են **Մարիս** (1897), **Տեղեկագիր** Ա. շրջանի ազգ. որբանոցի ի Կիպրոս (1898), Աղքատին պատիւը (1902), Եկեղ. կոչումները (1903), Առաքելի ջարդը (1909), Անխիղճ դատաւորներ, նաև «Մաժակ», «Փիւնիկ», «Նոր օր» և Վ. Բիւզանդեանի «Աւեւ» թերթերը (*) Արաբերէն գրպանի բառգիրք մը ևն.: Դարբինեան 1910ին իր գործատունը փակած է: Առաջ ալ կ'աշխատէր հոն տեղի կուփին. տպարանը: ** ՄՆՏԻԿԵԱՆ ԵՂԲԱՐՑ «վիմատպարան»էն լոյս ընծայուած են **Հայն ու Թուրքը** և Արևել. խնդիրը (1898), Զուարճալի անեգդոտներ և ժողովրդ. վէպիկներ: ** "ԱՐՇԱԼՈՅՍ" թերթի տպարանը կոչուած է նաև ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, 1897ին հիմնուած դաշնակցական ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆի նախաձեռնութեամբ, որուն կինը գրաշարութիւն ըրած է ամուսնոյն գործատան մէջ, համեմատաբար Գ. հայ գրաշարուհին հայկական ամբողջ տպարանական աշխարհին մէջ: Ե. Թորոսեանի հրատարակութիւններն են՝ բաց ի 12 տարիէ հետէ «Արշալոյս» լրագիրէն՝ **Սասուն եւ Զէյթուն** (Մ. Յէքէկեանի) 1900, **Կանոնագիր** Որբախնամ Ընկ.եան Հայոց ի Գահիրէ, Ազգ. Սահմանադրութիւն Հայոց, **Վերջալոյսի ձայներ** (Լոխմեան) 1901, **Յաւերժ Հայրենեաց** (Հայորդին) 1902, Լսարան Ընթերցասուն, Հարց պատասխանիք (1903), Յայտագիր Կանոնագիր, **Յիշատակարան** Նուպար Փաշա (1904), **Պատասխանագիր**՝ առ թիւ «Իմ պզտիկ կեանքը»ի, Տառապանքի աշխարհէն (1909): ** ՕՆՆԻԿ ՀԱԼԷՊԼԵԱՆ Ա. Բիւրատի տպարանին ճարպիկ գրաշարներէն, պօլսեցի Հռոմէական, որ անոր տառերուն մէկ մասը գնելով 1899ին տպարան մը կը հիմնէ նախ Աղեքսանդրիա՝ ԱՐԱՔՍ անունով որ տպարանական ընկ. մըն էր (Յ. Շմոյսեան, Մուրատօֆ, Տամատեան, Լ. Փափազեան ևն.): : Գահիրէ, Խալիլ-էլ-Մասրի համակատան դէմ հաստատուելուն՝ «Արաքս»

(*) Եգիպտահայք գիրքերէ աւելի ուժ տուած են լրագրութեան: 1865 Մարտ 16ին հրատարակուող **Արմաւենի** անգղիարէն պարբերականէն յետոյ կ'արժէ յիշատակել The Sphynx անգլ. թերթը որ կը հրատարակուի զբօսաշրջիկներու եղանակին միայն՝ Թէոսոն Պիրէ = (Աղեքսանդր Ս. Պէզիրճեան) անուն Հայու մը կողմէ:

տնունը վերածուած է ԿԻԼԻԿԻԱի : Աղեքսանդրիոյ մէջ իր տպածները յիշել նոյն անդին վերապահելով, բաւէնք Գահիրէի մէջ լոյս ընծայածները. — Նոր ժամանակներ (Վ. Թէքէեանի 3 թիւ թերթը 1907ին), **Հիւլէ**, Գարբինին երգը (1906), Ընկերվարութիւն (1910) են. : ** "ԼՈՒՍԱԲԵՐ,, նախ Կիպրոսի որբանոցին փոխադրուած տառերով գործած է. ապա Աղեքսանդրիայէն Գահիրէ փոխադրուած Տքր. Փաշայեան Խանի տպարանին շարունակութիւնը եղած է, զոր հիմնած են Տքր. Բէշէճեան, Յ. Ճէպէճեան և Վահան Թիւքքճեան, այժմ **Լուսաբեր-Արեւ**, որ Գահիրէի Հայոց լրագիրներէն է՛ (նախապէս Ա. Արփիարի, յետոյ Գր. Համբիկեանի խմբագրապետութեամբ) : «Լուսաբեր»ի տպարանէն 1906ին լոյս ընծայուած է «Կանոնագիր Մեսրոպեան Ուսումնասիրաց Ընկերութեան» : ** ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՏԻՐԼԻԿ 1905ին դրոշմած են Ռ. Ալիքեանի (= Ռ. Որբերեան) **Օփանըններ** : ** "ՍՓԻՆՔՍ,, վիմագրատուն մըն է զոր կը վարէ Օնիկոս Մուրատեան հայ արուեստագէտը : Այս անձը, քաջ յունագէտ, 1896-1901ին Աթէնքի մէջ հրատարակած է «Միութիւն» թերթը : Գահիրէի մէջ տպած է **Չէյթունի հերոսներ** (1906) : ** ՋԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ (տե՛ս իր տպարանական անդրանիկ գործունէութիւնը պատանի տարիքէն սկսեալ՝ հօրը հետ ընկերովի



Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Կ. Պոլիս **135** և **136**Ա թուահամար, Թուրքիոյ բաժին) : Պօլսէն Գահիրէ փոխադրած է 1910ի վերջերը՝ տպարանական իր կազմածքը, պահ մը ընկերակցելով դերասան-գրաշար ՎՐԹ. ՔԻՐՋԻՐԵԱՆի, խել ներկայիս մէջ ԱՍՏԻԿ ՋԱՏԷԵԱՆի որ առելի ֆրնս. գործերով կ'զբաղի. վերջինս կ'աշխատի նաեւ կ.վր. տպարանը : Զ. Պէրպէրեանի գործատունը կը գտնուի Շարա-Ալմոին, Թուալլի փողոց, թիւ 12 : Մինչեւ հիմայ իր տպածներէն յիշենք Ս. Պարթեւեանի **Հասակ** գր. շաբաթաթերթը, Հայոց Բարեգործականին օսկան **Միութիւնը**, Ռատլ-Բօնչօնի (գր. Համբիկեան) **Մայէշ** երգիծաթերթը, նաեւ հետեւեալ գիրքերը. — Համերաշխութիւն, Էգմիրեան համակարի, Նորեր Եգիպտահայ գաղութէն, Գրիգոր Պատուէլի Փէշտիմալճեան, Անցած դարձածները, Արցունք, Յուշարձան Ա. Արփիարեանի, Յայտագիր, Յ. Սերեանի գործերը, Արարեհէն քերականութիւն, Գաւիէէն, Գահիրեցին, Գահիրէցուհին (Ռ. Բօնչօն : ** † ԳՐԻԳՈՐ ՌԱՓԱՅԵԼԵԱՆ (92Բ թուահամար) : Այս վարպետ գրաձուլիչին հայ տպարաններու մատուցած ծառայութիւնը մեծ եղած է : Պատկերացուցած ենք զինք 92Ա թուահամարով Կ. Պոլիս : Իր ներկայացուցիչներն են հիմայ Բէրկոսէճեան և Ֆէնոեան : ** ՄԻՈՒԹԻՒՆ թերթը (խմբ. Վ. Մալէզեան) վերջերս տպարան մը հիմնեց Տիգրան Բաշայի պալատը, մասնաւոր շէնքի մը մէջ, Վ. Զարդարեանի վերին հսկողութեամբ և Յ. Ազատեանի գրաշարապետութեամբ : Մամուլ չունին : — Վ. Զարդարեան գեղեցիկ գաղափարը յղացած է այս տարի Հոկտ. 3|26ի գիշերը Գահիրէի մէջ սարքելու գեղարուեստական երեկոյթ մը, մոգական լապտերով ներկայացնելու համար ազգ. նշ. անձեր ու անցքեր, ի պատիւ հայ տառերու և տպագրութեան կրկնակ յոբելեաններուն :

437-444. **ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ** տպուած Ա. թերթը եղած է **Նեղոս** պարբերականը (1888-9) զոր շարած է Տ. ՂԵՒՈՆԴ ՔՀՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ [216Բ թուահամար] որուն կենսագրութիւնը տես **216**Ա թուահամար՝ Ա. Պոլիս, Թուրքիոյ բաժին : «Նեղոս»ի խմբագիր եղած է Ա. Ռշտունի : Թերթը կը տպուէր Յ. Միզրահի հրեային Մամուլով : ** † ՏԻՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, գանեշագիր-տպագրիչ : 1898ին հրատարակած է Վառնայէն փոխադրեալ **Հայելի** թերթն իր սեպհ. տառերով : ** ՕՆՆԻԿ ԶԱԼԷՊԼԵԱՆ (տպարան «Արաքս») **431**Բ թուահամար : Իր մասին համառօտակի խօսած ենք **431** թուահամարով, Գահիրէ : Աղեքսանդրիա տպածներէն յիշենք **Բնական պատմութիւն Արշակ երկրորդի և անոր Պապ որդւոյն** կարեւոր գիրքը † Մուրատեան Եղիազարի (1900) : ** Վ. ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ԸՆԿ. 1905ին հիմնած են տպարան մը, հրատարակելով **Շիրակ** ամսաթերթը որուն գրական և քննադատական իւրաքանչիւր համարը կը պարունակէր 80 էջ : Այս շահեկան պարբերականին հիմնադիրներ եղած են Վահան Թէքէեան [իր ինքնակենսագրութիւնը տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը» 1912] և Միք. Կիւրճեան յայտնի գրագէտները : «Շիրակ» 11 թիւ միայն լոյս ընծայուած է, յետոյ Գահիրէի մէջ գալն շա-

բանակած է ոյրացեալ Ա. Արփիարեան՝ 9 թիւ միայն (1906-7, տպ. Օ. Հայկազեան): Դարձեալ, Աղեքսանդրիոյ նոյն տպարանէն 1 տարի հրատարակուած է Ե. Օտեանի «Ազատ Բեմ»ը զոր նախ «Արաքս» տպած է. այս թերթը վերջէն փոխանցուած է Վ. Եր. Հրնչակեանց (*): ** ԿԱՄՊԷԹԹԱ, ապա ՐԱՖՖԻ. 1905 ին կը բացուի Տքթ. Կ. Յ. Փաշայեան-Խանի այս տպարանն ուր դրոշմուած է նոյն բժիշկին **Պարոյական առողջապահութիւնը**, **Համանագիր** Հ. Բ. Ընդհ. Միութեան, **Իմ ամառի կեանքը**՝ հանդերձ ծանօթութեամբ Ս. Տեղեաց (Ղեւոնդ Եպսկ. Ծիշմանեանի, 6 պրակ) 1906, Փրկիչներ 1907: «Կամպէթթա» յանձնուած էր քանի մը երիտասարդներու որոնք «Րաֆֆի» անուան տակ գործածեցին զայն. [այնուհետեւ, տե՛ս Գահիրէ «Լուսաբեր» տպարան]: ** Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ տպած է Երուանդ «Արեւ»ը, **Դատնուկին** հարսանեաց հրաւէրը (1906), **Այլասերութիւն** և եսասիրութիւն (1907): ** ԽՆԱՅՈՂԱԿԱՆ (ազգ. գործիչ Միհրան Տամատեանի) տպարանէն լոյս ընծայուած են **Ռամկավարութիւն**, Տարեկան տեղեկագիր Հ. Բ. Ը. Մ.ի (1910) ևն.: ** ՏԻՐԱՆ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ տպագրիչը կ'զբաղի մասնաւորապէս Եւրոպական գործերով: ** ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ Յունանք փողոցը 1903 ին կը բանայ տպարան մը, գնելով զայն Գահիրէցի Մանիկեան եղբայրներէն, և շարունակելով հրատարակութիւնն իր հիմնած **Փիւնիկին** որ Աղեքսանդրիոյ մէջ 38 թիւի կեանք մը կ'ունենայ: Այդ օրաթերթը տպուած է նախ Մանիկեանց մամուլով (Գահիրէ), ապա «Արաքս»ի կողմէ (1901-2) որ հայ բանւորաց սեփականութիւն էր և դրուած տրամադրութեան տակ Սմբատ Բիւրատի. (իր ընդարձակ կենսագրութիւնը տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը» 1912):



ՏԻՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

**ՌԱՄԼԷ**: † ՄԻՀՐԱՆ ԱՍՔԱՆԱԶ (կենսագրութիւնը տե՛ս «Ամէնուն Տարեցոյցը» 1911) ազգ. վարժարանի տնօրէնութեան պաշտօնը կորսնցնելէն վերջ, քեռայրին Լ. Միրախչեանի օժանդակութեամբ տպարան մը բացած է Ռամլէի ՊԱՔՈՍ գիւղը: Ուսուց. ասպարէզին մէջ ի Պոլիս և յԵգիպտոս բազմարդիւն շրջաններ բոլորող այս ներհուն գրագէտին վիճակուեցաւ գրաշարութի՛ւն խել ընել, ընտանիքն ապրեցունելու համար: 1 տարի (1903-4) հրատարակած է հոն **Պարտէզ** մանկամ. թերթը, մինչեւ իր մահը՝ 20 Դեկտ. 1904: «Պարտէզ» այդ գիւղին մէջ շարուելէ վերջ՝ ձեռնասայլով քաղաք կը փոխադրուէր, տպուելու համար: — Առաջնոց աշխատակցած է Աղեքսանդրիոյ **Փերակ** թերթին՝ «Մեղրածուծ» ծածկանունով:

● ● ●

## ԳԼՈՒԽ ԺԳ. - ԺԷ.

## ՌՈՒՄԷՆԻԱ (1877...1912). — ՊՈՒԼԿԱՐԻԱ (1885...1912). — ՅՈՒՆԱՍՏԱՆ (1892). — ԶՈՒԻՑԵՐԻԱ (1898-1912). — ՇՈՒԷՏ:

445. **ՊՕԹՇԱՆ** (Ռումանիա) 1877 ին հրատարակուած կայ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԸՆԿ.ԵԱՆ տպարանէն՝ Արշակ Մ. Ալբունեանի «Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան որք ի Մօլտօ-Վալաքիա, ի Հունգարիա և Լեհաստան» գիրքը: — Պ. Զարդարեանի կարծիքն այն է թէ այս գործը Պոլիս դրոշմուած է Հմայեակ Ա.ի «Հայաստանեայց» տպարանը:

216Գ. **ՎԱՐՆԱ** Հայոց Ա. և վերջին տպարանը հաստատած է Տ. ՂԵՒՈՆԴ ՔՀՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ (1891-1902), որուն կենսագրութիւնը տե՛ս 216Ա թուահամար, Ա. Պոլիս:

(*) Ե. Օտեանի Աղեքսանդրիա հրատարակածներէն կան դեռ **Ազատ Խօսք** (սկզբնաւորութիւնը Բարիզ), **Օրէնք** (տաքապաչեր), **Փերթիկ** (փոքրադիր ամսօրեայ, 28 թիւ, 1906), **Կռակ** (կարմիր թղթով, 1907), **Արեւ** (8 ամիս) որ յետոյ «Լուսաբեր»ին կցուած է: — Երոտի թելադրութեամբ կազմուած է Եգիպտահայ Հրատարակչական մը որուն Ա. գործն է «Արեւ»ը: — Յիշենք նաեւ Յ. Արփիարի **Փառքն** ու Սառաճեանի **Լարերը** (խմբագրաց):

446. **ՊՈՒՔՐԷՇ** (Bucarest, Ռումանիա) այս տարի Յուլիսէն սկսեալ հրատարակուիլ **Ճեփոր** պատկ. ամսաթերթը ԺԱՆ ՍԱՊԸԹԷՅ (Mosilor, 53)ի տպարանէն: Լէօ կը գրէ. «Մենք ունենք և մի քանի գրքեր որոնց վրայ տպագրութեան տեղը նշանակուած է ԵԱՇ քաղաքը»:

447 ... 449. **ՎԱՌՆԱ** (Պուլկարիա), 1896 ի հայ գաղթականութեան հոսանքէն առաջ, տպարան ունեցած է † ԵՕԱՆԷՍՔՈՒ Ռումանահայը՝ որուն խօսքն էր լատին տառերով տպածել հայերէն լեզուն: Այդ առաջադրութեամբ 1883 ին հրատարակած է Araçin ganonk kahakavarouthian (տպ. Կ. Պոլիս, Գ. Զարդարեան), Himaranotzi misternére (տպ. Կ. Պոլիս, Արամեան), քերական մը. իսկ Վառնայի մէջ Huïs (Յոյս) շաբաթաթերթը (1885-6): Այս արտառոց դրութիւնը ընդունելութիւն չգտներ, և իր սեպհ. տպարանը (որ քաղքին ազգ. վարժարանը կը գտնուէր), կը նուիրէ Վառնայի երիտասարդութեան որ կ'սկսի հրատարակել **Իրաւունք** անուն 4 էջնոց շաբաթաթերթ մը, կէսը՝ տաճկերէն-հայատառ: «Իրաւունք», քաղաքականութենէն յետոյ, զուտ հայաթերթի վերածուելով՝ լոյս ընծայուած է Պկր. Մամուլով՝ Պոռձուքճեանի և Յ. Գուրպէթեանի կողմէ: Դպրոցը 1896 ին այրելով, կը փճանայ նաեւ Վառնայի այդ անդրանիկ հայ տպարանը: Նոյն տարին է որ վրայ կը հասնին հայկական ջարդերը, մինչ Պոլսահայք՝ մեծամասնութեամբ միջակ դասակարգէ՝ կան կարասի են. ծախելով կը խուժեն Վառնա, Տաճկաստանի անապահով վիճակէն խելակորոյս: ** Արտագաղթի այդ վիփարի գրոհին մէջ կը գտնուէր նաեւ իր ընտանիքով ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ [140Բ թուահամար] որ հոն հասնելուն փողոցայինին խել, զաւկին՝ ԳԱՐԵԳԻՆի հետ կը հիմնէ ԱՐԵՒԵԼԵԱՆ անուամբ տպարան մը, հետը մէկտեղ փոխադրած կազմածքով: Վառնայի մէջ Կիւրէմպէկեան իր բեղուն գործունէութիւնը տե՛ս 140Ա թուահամար, Կ. Պոլիս (Թուրքիոյ բաժին): ** ՏԻՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ [437Բ թուահամար]. Պոլիս **Հնչակ** զաւեշտաթերթին ու զանազան զուարճալի գրքոյկներու հրատարակիչն է այս անձը որ Վառնա հաստատուելուն՝ իր տառամանուկը կ'ունենայ և կ'սկսի գործի: Բացի Օ. Բարսեղեանէ, ինք և ուրիշներ այդ տարիներուն՝ իրենց շարածները կը դրոշմեն Վօյնիքօֆ, Վ.զայմնօր (1), Տ. Թօտորօֆ (2) և Գնչօ Նիքօլօֆ (3) պլկր. տպարանները, մամուլ չունենալնուն: Փափազեան լոյս ընծայած է **Հայելի** շաբաթօրեայ երգիծաթերթը (12 Սպտ. 1897 - 6 Մարտ 1899, հարիւր թիւ) զոր պահ մը շարունակած է Աղէքսանդրիոյ մէջ [տե՛ս գիրքին անդ, 437 թուահամարով]: Այս թերթէն զատ, հոն լոյս ընծայուած գիրքերը եղած են Փիլիկ աղբօր հարսնիքը, Թապլաքեար վարժապետը, Խարուած Ակնցին, Գուշակ ապագայի (ընտ. բախտացոյց), Կաղանդչէք կամ գրչի գրօսանք (Վ. Բիւզիւքեանի), Էրքէին ֆէնաի՝ քարըյը եէնաի. Մահմուտպէքին Միւքեաֆաթը, Գրգանձ գօձա, և Միհրան Զգօնեանի ոտանաւորները: ** ՄԻՔԱՅԷԼ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ [182Բ թուահամար] 1905 ին տպած է **Կաղանդչէք**: Սահմ. հռչակումին, փոխադրուած է Պոլիս ուր անցողակի յիշած ենք զինք 182 թուահամարով, Travaux de Villeի խմբումին մէջ: ** ՏՊ. ''ԻՐԱՒՈՒՆՔ,, ԼՐԱԳՐՈՅ (1896-1912), տէր և տնօրէն՝ Յ. Գուրպէթեան որ հրատարակած է նաեւ Երկու սէր (1897), Նոր երգարան կամ մրմունջ (1901), Դիտապարտը (1902), Կարիպ ախպէր, Ազատ երգարան (1908), **Կարմիր ժամուց** (Ա. Արփիար) (1909), Անդրանիկ (1911), Ղուրան (1912) ևն.: ** ՄԱՏԹԷՈՍ ԼՈՊԱՍԵԱՆ (տպ. «Ոսկեդար»): Սահմ. հռչակումէն վերջ Վառնա ցարդ գործող հայու տպարաններէն Բ.ն է այս, «Իրաւունք»էն վերջ:

450-453. **ՌՈՒՍՉՈՒՔ** (Պուլկարիա) Ա. անգամ կը տպուի **Դաւնար** շաբաթաթերթը 1892 ին, ապա **Զիլենի** և **Հայաբեր** (Տ. Ճգնաւորեանի հրատարակածը զոր դրոշմած է Գ. Մազմանեան): ** ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.ԵԱՆ տպարանէն 1897 ին լոյս կ'ընծայուի Մարդու մը պատմութիւնը: ** ԳԱՌՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ. բնիկ Կիրասոնցի. արհեստը սորված Օ. Բարսեղեանէ: Տպած է կարգ մը **Տեղեկագիրներ** (1902), Ընկերվարականաց պրակներ, **Նորավէպներ** (Արգամ Սիմոն = Կոստ. Ռուբէն), Հայ Սօցիալ-Դէմօկրատութիւնը (1903), Կրթ. ծրագիր (1904), Թուրքիոյ ընդդիմադիր տարրերը (1908): Յետոյ տպարանը գոցած՝ Պոլիս եկած է, իր երեսփ. ընկերութիւնը դնելու Կիրասոնի համար: ** ''ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ,,ի տպածները 1904 ին. — Կեանքի դիմաց, Ազգերի մայիսեան տօնը, Միլիտարիզմը և բանուոր դասակարգը, Դարբնուոր, 10 էջ, (Լեռնեց = Աւետիս Նազարբէկ):

(1) Տպագրած է **Հովասուն** (1899), Արտասուաթոր (1901), **Արմաղան** (1909), ևն. ևն.: (2) Տպագրած է **Մուհամմէդ** (1904): (3) Տպագրած է **Նոր Ընթերցարան** (ներ) 1899-1900, **Ղուրան** (1910) Բ. տիպ:

454. **ՇՈՒՄԼԱ** կամ **Շումէն** տպարան ունեցած է Յ. ԱՒԵՏԱՐԱՆԵԱՆ, 1903-4 ին դրօշմելով Նկարագիր (ճառ.), Եղեռնոյ սովալի դէպքը, ճառագայթք արեւելեան:

455. **ՍՕՖԻԱ** 1904ին **Գրպ. հայ. անգլ. բառարան** մը տպած է Գ. Կ. ՋԵՆԴՕՖ:

456-457. **ՖԻԼԻՊՊԷ** (Պլովտիվ) հիմնուած է Հ. Յ. Դաշնակցութեան օռկան՝ **Ռազմիկ** թերթի (1905-8, խմբ. Ռ. Զարդարեան) տպարանը որ այդ տարիներուն լոյս ընծայած է նաև Կանոնագիր գրասիրաց եղբայրութեան, Առիւծի ժանիքներ, Նշխարներ, Կեանքի նշաններ: ** ԱՅՐԻ ՏԻԿ. ՓԻԽՍԿԻՒԼՃԵԱՆ ևս ունեցած է տպ. մը որ ցարդ կը շարունակուի:

458-459. **ԼՕՆՏՕՆ**. — 1892ի միջոցները Յունաստանէն այս քաղաքը փոխադրած են Հնչակեանք իրենց Օռկանը՝ **Հնչակ**: Բաց ի այդ թերթէն, ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ անուամբ իրենց հիմնած տպարանէն լոյս ընծայած են **Ապտակ** (գաւեշտաթերթ, 1894-7), **Գաղափար** (գիտ. թերթ, 1894) և Լեոնեցի գործերը՝ **Աւազակը**, **Մարտում**. նաև Ակն-Եանցի **Հայերն Ամերիկայում**, Իրաւունք ուժանայոյ, Սահմանադրութեան էութեան մասին: ** ՏՊ. "ՄԻՈՒԹԻՒՆ",: Ռ. Մուրատեանի և Ե. Օտեանի՝ հայկ. ջարդերէն վերջ հրատարակած համանուն թերթերէն զատ՝ 1898ին այս տպարանը դրօշմուած է **Նուագներ**: «Միութիւն» պահ մը շարած է Նշան Ճիթանեան, իսկ թերթը տպուած է Յոյնի մամուլով:

460. **ԺԸՆԵՒ**, ապա Զուիցերիոյ այս քաղքին մէջ 1891ին վերջնապէս հաստատուած են Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՔ, նուիրուելով Տաճկաստանի մէջ՝ Համիտեան լուծին տակ մեռօրէն ապրող ազգակիցներու ազատագրութեան գործին: Իրենց կուսակցութիւնը 1890ին կազմուած՝ «ունի ընկերվարական հայեացք, ու իր գործելակերպի սկզբունքն է Ապակեդրոնացումը»: Հ. Յ. Դ. կուսակցութիւնը 1891էն սկսեալ օռկան ունեցած է իրեն՝ **Դրօշակ** ամսօրեան որուն սկզբնական համարները ձեռագրային պատճէնութեանց ենթարկուած են. այսպէս «Դրօշակ»ի Ա. և Բ. թիւերը **Թիֆլիզ** տպուած են, Գ.ը՝ **Ռումանիա**, իսկ Դ. թիւին կէսը **Ռումանիա** և կէսը **Ժընեւ**: Բոլոր ասոնց վրայ դրօշմուած **Տպ. Վիեննա** բառանձեւ դիտումնաւոր է: «Դրօշակ» իր առաջադրած նպատակին հաւատարիմ, սկզբնաւորութենէն մինչեւ վերջ գլխաւորապէս պայքարած է Թուրք Բռնակալութեան դէմ և արձագանգ եղած Հայաստանի անապիտ. հարստահարութեանց, քաջարի «ֆետայի»ներու հերոսական մարտերը պատկերացնելով ու իր զգայացունց խմբագրականներով մեր նոր սերունդը մղելով դէպ ի կորով ու ինքնազոհողութիւն: — «Դրօշակ»ի տպարանէն լոյս ընծայուած են. — Փախստականը, Ապստամբական ոգի, Յեղ. կեանքից, Գաղտնի տպարան, Գիտ. Սոցիալիզմ, Կուսական խմբի արշաւանքը, Կարնոյ քիւշտակին, Բրքիչներ, Հայ. Յեղ. Դաշնակցութեան Բ. Ընդհ. Ժողով, Երիտասարդներին, Մարդը մարդուն գայլ, Ազատութեան ճանապարհին, Մեծ առաւօտը, Լեռան ռազմիկը, Ամբոխային տրամաբանութիւն, Հայաստան և Մակեդոնիա, Կովկասեան վէրքեր, Հայրենիքի գաղափարը, Դէպի կռիւ, Յեղափոխականներ, Մեծ մարդասպանի դէմ, Հայորդիները, Հայկ. տանջանքները և Եւրոպան, Մարտական հրահանգներ (Անդրանիկ), Միացէ՛ք, Թիւրքական բանակը, Եղբ. կուսակցութիւնները Ռուսաստանում, Հայաստանը և Եւրոպան, ևն. ևն.: ** ԿԱՐԱՊԵՏ ՆԵՐՍԷՍԵԱՆ գրաշար տպագրիչը 1903-6ին Ժընեւ գործած է. (տե՛ս զինքն ի Բարիզ 258Բ բաժանմամբ):

461. **ԼՕԶԱՆ**. — Զուիցերիոյ այս քաղաքին մէջ, Կ. Պոլիս՝ Պէրպէրեան վարժարանէ շրջանաւարտ Սփացցի ՄԱՐՏԻՐՈՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (= Մնով) որ **Հայկազեան Վարժարանը** հիմնած էր, 1904ին սկսաւ հրատարակել **Գիտութիւն** գիտ. հանդէսը որուն տպագրութիւնը Բարիզ կը կատարուէր: Լօզան 1907ին լոյս ընծայուած է **Երբ.բարեկամներուն**:

462. **ՍՏՕՔՀՕԼՄ**. — Շուէտի մայրաքաղաքին մէջ էր որ ռ. բանաստ. Ն. Բուզանդացի **վիմատիպ** լոյս ընծայած է «Բնատեր» անուամբ քանի մը տետր:

ԱՒԱՐՏ

Ինչպէս տեսանք, անցեալ դարերու մէջ դրոշմուած իւրաքանչիւր մատեան ունեցած է գրաբար ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մը որուն մէջ ձեռնարկի, գրչագիր եւ յաճախ տպագրիչ՝ յարաբերական ծանօթագրութիւններ մը կցկցած են: Ասոնց ամէնուն պատմութիւնը խտացնելու ներկայ հատորիս համար՝ ոչինչ այնքան պատշաճ էր քան զետեղումը նմանօրինակ Յիշատակարանի մը, դարձեալ գրոց բարբառով շարադրուած, — թէ՛ իբր շնորհակալիք երկասիրութեանս օժանդակողներու եւ թէ մանաւանդ իբր վերյիշում՝ Հայոց տպարանական աշխարհի այդ վաղնջուց սովորութեան:

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՈՇՄԱՆ ՄԱՏԵՆԻՍ

Աստ առնու դադար փորձն իմ արկանելոյ ակն յաշխատութիւնս և ի վաստակս այնչափ հարիւրաւորաց Հայոց, որ հաստատակ ձեռնամուխ եղեն ի հոյակապ արուեստ Գուտենբերգի: Բանաւէրք՝ որոց միանգամ զփորձ առեալ իցէ այնպիսի ծանրատաղտուկ և երկայնաձիգ աշխատութեան՝ դիւրաւ իմն ի միտ առնուցուն թէ որպիսի՛ դժուարին ախտախոյք և առապարք պատահեցին ինձ, ընդ որս անցի մեծաւ ճգամբ, առանց ամենևին խոտորելոյ կամ զարտուղի ի ճանապարհէս, որ առաջիս կայր, անկանելոյ և կամ թէ ուրեք երբեք ստանելոյ, սպառուցեալ ի մանուածապատ երկայնութենէ նորա. և ի դեգերմունս իմ ի տպարանական աշխարհին՝ ուշ ի կուրծս զննեալ և քննեալ զամենայն, որ միանգամ շուրջ զանձամբ իւր էին, ըստ կարի որչափ թէ հնար՝ ջանացայ հանել ճշգրտիւ ի նկարու զհին և զնոր աշխարհս, զվայրս, զանձինս, զդէպս և զժամանակս:

Այլ արդ, յորժամ ջնջեմ զգրիչս իմ ի ճովկատունէ, առնեմ վաղվաղակի մոռացօնս վաստակոց իմոց և տքնութեանց, ընդ այն եւս ցնծացեալ զի վաստակս իմ «Տիպ ու տառ» ի համառօտ էջս իւր շողացուցանէ իբրև ի հայելւոջ թէ ո՛չ լի և լի՛ սակայն գոնեայ կարճառօտիւք զպատմութիւն երկանց ամենայն մտաւորականաց մերոց:

Պարտ անձին համարիմ յիշատակել աստէն յանկեղծաւոր սրտէ զամուսին իմ զ**ԱՐՇԱԼՈՅՍ ՀԻ**, որ ի պատրաստութեան անդ մատենիս բազում վաստակս եղոյց ինձ և քաջալերեալ զօրացոյց զիս մինչև զվախճանել գործոյս և ած ի հանգիստ անվաստակ իմն ջան և փոյթ, շրջեալ ընդ արուարձանս քաղաքիս, առ ի հայթայթել գտանել զլուսանկարս Հայոց Կոստանդնուպոլսեցւոց վաղուց անհետ եղելոց, պատրաստեալ և զստուերագիրս վարուց նոցին:

Չէ մարթ թողուլ առանց յիշատակի և զպուէտն **Հրանտ Նազարեանց**, որոյ յեալ մեզ դրացի, ուղղեալ յարդարեաց խնամով զամենայն զփորձս տպագրութեան մատենիս:

Այլ և զբաժին աշխատութեան իւրեանց մատուցին ինձ, ըստ չափու ումն առաւել և ումն նուազ. **Մագաքիա արքեպս. Օրմանեան**, **Հ. Արսէն Ղազիկեան**, Հարք Վիեննական ուխտին՝ **Դանճբանեան**, **Մէնէվիշեան** և **Կէսիկեան**, ի Միաբանութենէ հարց Անտոնեանց՝ **Հ. Սրապեան**, **Մեսրոպ Վ. Նշանեան**՝ մատենադարանապետ վանուց Երուսաղէմի, Օր. Մարի՝ դուստր երևելոյ ձուլչի տառից Յովհաննու Միւհէնտիսեան, բանասէր **Հրանտ Ասատուր**, գրավաճառք **Վ. Մարգարեան**, **Վ. եւ Գ. Զարդարեան եղբարք**, նաև գրաշարապետ՝ **Կ. Պարոնեան**, այլովքն հանդերձ:

Ի վեր քան զամենայն շնորհակալ միտս ունել պարտիմ **Վ. եւ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ ԵՂԲԱՐՑ**, որ յանձն առին ի բազում դէպս զոհել զշահ օգտի իւրեանց, առ ի հասուցանել ի գեղարուեստական կատար բարձրութեան զայսպիսի մեծագին և դժուարին տպագրութիւն, որպիսի է «Տիպ ու տառ» իմ, և այն՝ ի պատիւ մեծի տօնին եւեթ, որ անուանեալ կոչի Չորեքդարեան Յոբելեան վաստակոց հանօրէն Հայկական Մամլոյ:

Մեծագոյն մասն գունակ գունակ նկարատիպ պատկերացն՝ յարդարեալ պատրաստեցաւ ի ծանօթական տան Graphische Union կոչեցելոյ, որ ի Վիեննա մայրաքաղաքի: Դրաշարապետ տպարանիս է **Վահան Տէօվլէթեան**, շարող մատենիս եղև **Տիւլկէրեան Եակոբ**, տպահար՝ **Խաչիկ Զապունեան**, կազմարար՝ **Արամ Սարաճեան**: Ի դէպ է առնել յիշատակաց արժանի և զգործաւորս տպարանիս, որոց անուանք կարգին աստէն. — Վարդան Քրքճեան, Հայկ Դալֆայեան, Տիրան Մուրաֆեան և Մինաս Պէրպէրեան:

ԹԵՈԴԻԿ

☛ ԹՈՒՐՔԻՈՅ բաժինին վրայ յաւելլի է Կ. Պոլսոյ Հռովմ. Հայոց ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆի տպարանը, (տառերը Վիեննայի Մխիթարեաններէ հայթայթուած), ուրկէ լոյս ընծայուած գիրքերէն յիշենք **Ահտը աթիք վէ ահտը ճէտիտ քիթապլարընըն նիշանյէսի (1869)**:

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

# ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

ԷՋ


... Յաւելուած. — **Մեր տպագրիչները** (Ցուցակ)։

... **Ցիտսակարան** (գրաբար) վերջին թուղթ :

3 **Ներածութիւն**

... Հայ Տպագրիչներու նահատակը :

5 **Դէպ 'ի Անցեալ.** — «Փիր»ին ծագումը : Քարանձաւի դարաշրջան: Չինական Ա. նշանագիրք: Մեհենադրոշմք: Բեւեռագիրք: Հանգուցալար-գիրեր:

6 **«Ձեռագիր»ի դարեր.** — Թուղթ: Պապիրոս: Մագաղաթ: Ձեռագիր մատեանք: Գրչագիրներ: Հայերէն ձեռագիրներու վրայ խօսող Հայեր:

8 **Վ.իրխարի հանգրուանը.** — Տպագրութեան շնորհիւ :

9 **Կիւթէմպէրկ.** — Հին օրեր: Փայտափորագրութիւն: Անբաց տպագրութիւն: Չինացիք: Հէննէ. Կիւթէմպէրկ: Տքնութեան տարիներ: Ձուլածոյ շարժուն տառերը : Իր Ա. երեք բարի ընկերները: Պատմական դատը: Վերջին չար ընկերները : Տպարանը ԺԵ. դարուն: Իր անունը փրկուած մոռացութենէ: Իր արձանը: Աշխարհիս առաջին տպագրութիւնք:

14 **Տպագրութեան ճամբորդութիւնը.**— Գտած ընդունելութիւնները: Հռչակաւոր օտար տպագրիչներ:

16 **Տպարանական աշխարհ.**— Մեքենաներու եւ գործիքներու անուններ ու պատկերներ: Հայ գրաշարին «քացա»ն: Էջերու կապուածք: Բազկամամուլ:

20 **Հայաշխարհ.**— Մեր «ա. բ. գ.»ը. — Սահակ եւ Մեսրոպ:] Դէպ ի ստեղծագործութիւն: Հայ գրականութեան ոսկեդարը: Բաղդատացոյց տախտակ Յոյն եւ Հայ այբուբենքի : Գերեզման մը Օշականի մէջ :

21 **Ցուցահանդէս հայերէն տպագրական տառերու** (դասաւորուած) — Մեսրոպեան տառերուն ստացած անունները՝ չափերնուն եւ ձեւերնուն համեմատ: Զանոնք գեղեցկացուցողներ: Պատկերագործութիւն եւ բրքանայ պատկերագործներ: Վիմագրութիւն:

28 **Փունջ մը տպագրութեանց.**— Գեղարուեստական ճաշակով դրոշմուած հին ու նոր գիրքեր եւ հանդէսներ:

29 **Հայ տպագրութեան պատմութեամբ զբաղողներ.**— Հ. Ե. Գափրանեան: Հ. Գ. Զարպհանալեան: Հ. Ա. Ղազիկեան: Լէօ: Հրանտ Ասատուր: Վ. Զարդարեան եւ այլք:

34 **Արուեստ գեղագրութեան եւ Հայ գեղագիրներ :**

# Մեր Տպագրիչները


## Եւրոպա

| | ՎԵՆԵՏԻԿ | Տեւողութիւն տպարանի |
|---|---|---|
| 37 | Մեղապարտ Յակոբ | 1512—3 |
| 40 | Աբգար Դպիր (Ա.) | 1565 |
| 41 | Տէրզնցի Յովհաննէս (Ա.) | 1587 |
| 42 | Յովհաննէս Անկիւրացի | 1642—3 |
| 43 | Ճուան Պաթիսթա Պօվիս | 1660 |
| » | Միքէլ Անճէլօ Պառպօնի | 1678—90 |
| » | Թադէոս Համազասպեան (Ա.) | 1686 |
| » | Գասպար Սահրատեան | 1687 |
| 44 | Նահապետ Գուլնազար | 1687 |
| » | Ճիագօմօ Մօռէթթի | 1687 |
| » | Անտօն Պօռթօլի | 1695—1777 |
| » | Ճուանի Պաչօ | 1719 |
| 45 | Պաթիսթա Ա. Ճէռօլիմօ | 1729—30 |
| » | Ստեփանոս Որդանեան | 1750—63 |
| » | Դեմետր Թէոդոսեան | 1772—82 |
| » | Պետրոս Վալվազեան | 1784—5 |
| 46 | Յովհաննէս Փիացեան | 1786 |
| » | Մխիթարեանք | 1789—1912 |
| 48 | Յ. Գոյաճեան | 1911 |
| | ԲԱՎԻԱ | |
| 48 | Թէսէոս Ամբրոսիոս | 1539 |
| | ՀՌՈՄ | |
| 49 | Տէրզնցի Յովհաննէս (Բ.) | 1584 |
| » | Ս. Բագլինեան | 1623 |
| » | Ուրբանեան | 1623—1890 |
| 50 | Հասունեան | . . . —1911 |
| | ՄԻԼԱՆ | |
| 50 | Ամբրոսեան | 1624 |
| | ԼԻՎՈՌՆՕ | |
| 50 | Յովհ. Վրդ. Ջուղայեցի (Ա.) | 1643 |
| 51 | Տպ. Ս. Էջմիածնի (Ա.) | 1670—1702 |
| | ԲԱՏՈՒԱ | |
| 51 | Տիմոթէոս Գառնուկ | 1690 |

## Թուրքիա

| | Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ԱՐՈՒԱՐՁԱՆՔ | |
|---|---|---|
| 53 | Աբգար Դպիր (Բ.) | 1567—9 |
| 54 | Երեմիա Քէօմիւրճեան | 1677—8 |
| » | Գրիգոր Մարզուանեցի | 1694—1734 |
| 55 | Ածատուր Դաշտեցի | 1698 |
| 55 | Անանուն | 1699—1750 |
| 56 | Տպ. Ս. Էջմիածնի (Բ.) | 1700—1 |
| » | Մհտ. Աստուածատուր | 1700—46 |
| 57 | Սարգիս Դպիր | 1703—34 |
| 58 | Գէորգ Սարգսեան | 1705 |
| » | Մարտիրոս Սարգսեան | 1721—52 |
| 60 | Պետրոս Լատինացի | 1704—12 |
| » | Թօխաթցի Սրգ. Վրդ. | 1704 |
| » | Էսկեար Գնունեանցի | 1710 |
| » | Նոր և անկատար տպ. | 1735 |
| » | Բրսղ. և Յկբ. Սեբաստացի | 1735—77 |
| 61 | Գաբրիէլ Բարսեղեան | 1745—50 |
| » | Սրգ. և Մկք. Բարսեղեան | 1747 |
| » | Աբրահամ Դպիր | 1737—46 |
| » | Յովհաննէս Ածատուրեան | 1746—76 |
| 62 | Ստեփանոս Պետրոսեան | 1750—92 |
| 63 | Յովհաննէս և Յակոբ | 1766—9 |
| » | Յովհ. և Պղ. Ածատուրեան | 1777—90 |
| 64 | Մայր Դպրատուն | 1792—1808 |
| » | Մատթէոս Դպիր | 1800—25 |
| 65 | Պօղոս Յովհաննիսեան (Ա.) | 1799—1819 |
| » | Պօղոս Յովհ. (Արապեան) Բ. | 1820—35 |
| » | 3 Որդիք Պ. Արապեան (Ա.) | 1836—53 |
| » | Արապեան Եղբարք (Բ.) | 1855 |
| » | Յար. և Խաչատուր Արապեան . . . | |
| 71 | Տպ. Մայր Եկեղեցւոյ | 1817—25 |
| » | Աբրահամ Ամիրայ Թերզեանց | 1824—6 |

72 ՏԱՃԿԱՆՈՒՆ ՏՊԱՐԱՆՆԵՐ. — Մաթպա՛աի Ամիրէ 1832—65· Շիրքէթի Խայրիէ: Ճեմիյէթի իլմիէյի օսմանիէ 1863—9: Մէճմուայի հավադիս 1863: Սէտայի հագիգաթ 1872—3· Միհրան (Սապահ) 1884. .: Ալէմ 1889: Թիճարէթ օտասը 1889: Ախթէր 1897—9·

72 ԵՒՐՈՊԱՆՈՒՆ ՏՊԱՐԱՆՆԵՐ. — A. B. Churchill 1839—58: Ս. Բենեդիկտոս 1844—54: Ն. Տէ. Քասթրօ 1846—50· Գ. Ճօնսօն 1847: Հէնրի Գայոլ 1851—8: Լէվանդ Հէրալտ 1868· Տպ. Մակլեոդիոյ· Ասմա ալթը, Ճամլը խան 1871—3: Լա Թիւրքի 1876· Անտուան Զէլիչ 1878· Մանուէլ Արտիլ 1888:

| | | |
|---|---|---|
| 73 | Յովհաննէս Միւհէնտիսեան | 1840—73 |
| 80 | Յարութիւն Մինասեան | 1842—80 |
| 81 | Արևելեան Համազգային | 1844—65 |


(*) Աստղանիշ կրող տպարանները մոռցուած են յիշատակուիլ բնագրին մէջ:

81 Կարապետ Ս. Իւթիւճեան 1852—84
82 Յովհաննէս Մարգարեան 1853
» Յարութիւն Փափազեան 1853—72
» Էմիրլէր խան 1854...
* Տպ. «Ախտարիրը Գօնսթանթինա-նիյէ» լրագրոյ 1855—7 (?)
* Արսէն Յ. Թահմիզճեան 1862—4
» Յ. Տէրոյենց 1854—77
83 Մկրտիչ Վ. Խրիմեան (Ա.) 1855–6
85 Թադէոս Տիվիրճեան 1856—76
» Ռուբէն Քիւրքճեան 1856—77

87 ԳՐԱՁՈՒԼԻՉՆԵՐ. — Մարուքէ Յովսէփեան, Տիգրան Ասլանեան: Կ. Տնտեսեան: Նշան (Իզմիր)։ Գրիգոր Ռափայէլեան (Ա.): Գ. Ռափայէլեան Որդիք։ Գր. Տէօվլէթեան: Սանփան Տամատեան: Խաչիկ Գէորգեան: Պապա Խաչիկ (Աքքարեան): Յակոբ Ծերունեան, Երուանդ Փալազաշեան. Միհրան Տէօքմէճեան:
90 Գ. Երամեան (վիմագր.) 1857—62
» Յ. Տ. Սանփանեան 1860
» Յովհաննէս Գավաֆեան 1863 - 89
92 Ճանիկ Արամեան (Գ.) 1865—79
* Տպ. Կաթողիկոսարանի Հռովմ. Հայոց (տե՛ս «Յիշատակարան») 1869...
95 Թօզլեան Եղբարք 1869—75
96 Պօղոս Քիրիշճեան 1869—81
» Ա. Ն. Շահնազարեանց 1869—70
97 Ա. Յակոբ Պօյաճեան 1869—1912
98 Գէորգ Զարդարեան 1870—87
99 Պետրոս Ճէզվէճեան 1870—6
» Յարութիւն Մարգարեան 1870—8
» Վահրամ Յ. Մարգարեան 1879 - 91
* Տպ. և վիմ. կենդրոնական (central) Բերա. 1871ին տպած է Մ. Վ. Օրմանեանի խօսած Դամբանականը Տիւզեան Պօղոս պէյի վրայ, իսկ 1872ին Ռուսինեանի Բնական Տարեցոյցը:
* Անդրանիկ Վարդանեան (Սիւմպիւլլի խան, վերի յարկ, թիւ 24). 1871ին տպած է Գ. Չափրաստճեանի թարգմանած «Պալերմացի Վարդուհին»:
121 Գ. Ս Մաղազաճեան 1872
102 Օգսէն Խօճասարեան 1872—3
103 Ս. Դ. Պարտիզպանեան 1873—1912
» Սիմոն Միքայէլեան 1874 -8
104 Եղիա Տնտեսեան 1872—82
105 Քէշիշեանք 1875—1912
» Տպարան Հայաստանեայց (Հմյկ. Վրդ. Դիմաքսեան, Կարապետ Ա. Պարոնեան, Տիմոթէոս Եպիսկոպոս Սափրիչեան 1875—87
106 Միքայէլ Կ. Սարրեան 1882...1912
108 Արամ Աշճեան 1878—88
» Յարութիւն Պարոնեան 1877—8
» Կարապետ Պիպէրեան 1878—1900
109 Յովհաննէս Մանուկեան 1879—82
* Արքին Անտոն Գանբար. 1880ին տպած են Մ. Ծ. Վ. Օրմանեանի «Հայ Երիտասարդութիւն»ը:
109 Գարեգին Պաղտատլեան 1880...1912
110 Վահան Վ. Տէր Մինասեան 1899—1908
111 Հայ Գրաշարաց Ընկ. 1880—90
» Յ. Ասատուրեան (եւ Որդիք) 1894—1912
» Սերվիչէն 1880—1912
» Տիգրան Ճիվէլէկեան (Տպ. «Թէրճիմանի Էֆքեար»ի, «Ճէրիտէի Շարգիյէ»ի և «Սուրհանդակ»ի) 1881—1912
112 Պօղոս Յակոբեան 1882—91
» Նշան Կ. Պէրպէրեան } 1882—1907
» Ն. Պէրպէրեան և որդի
» Զարեհ Ն. Պէրպէրեան (Ա.) 1907—10
113 Տպ «Արեւելք»ի (Սու. Տամատեան, Զ. Եուսուֆեան, Գ. Պօյաճեան) 1884...1912
114 Յովհաննէս Թօլայեան (Տպ. «Մէճմուայի Ախպար»ի) 1884—1912
* Տպ. «Գանձ Արհեստից» լրագրոց (տէր եւ անօրէն Տօքք. Ն. Ճէրահեան 1805
115 Սահակ Նիկողոսեան 1885—96
» Օննիկ Բարսեղեան (Ա.) } 1888...1912
» Օ. Բարսեղեան և Որդի
117 Կոմիտաս Ռուղուրլեան 1889—90
116 Մատթէոսեանք 1889—1912
117 Գայսէրեանք, «Ասըր» և «Մանզումէ» 1888...1912
118 Սանփան Եազըճեան 1889—94
» Ներսէս Ճ. Արամեան 1891—8
120 Թագւոր Սանճագճեան 1891...1912
» «Հայրենիք» 1892...1909
» Միհրան Յ. Փափազեան 1891- 9
» Ռոզոս Սագայեան 1892—1912
121 «Բիւզանդիոն» 1896—1912
122 Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան 1901—12
123 «Ճիհան» Մ. Մարտիրոսեան 1903—12

123 1908 Յուլիս 10 և Գարեգին Կոզիկեան
124 Օննիկ Արզումեան 1908—12
126 «Ժամանակ», Միսաք և Սարգիս Գօչունեան 1908—12
» Արշակ Կարօեան 1908—12
127 Յովնան Փալազաշեան 1908—12
» Տիգրան Տօղրամաճեան (Բ.) 1908—12

128 Յովհաննէս Ազնաւոր 1908–12
» Օսմ. Գործ. Ընկ. (Բ. Գօզաճեան) 1909–12
129 Կիւրեմպէրկ 1909–12
130 Ծանր 1909–12
» Արաքս 1909–12
» Գատէր 1909–12
131 Վաղինակ Ս. Բիւրատ 1910–2
» Հ. Թիրեաքեան 1910–2
132 Նշան Պապիկեան 1910–2
» Մանուկ Քօչունեան 1911–2
» TRAVAUX DE VILLE. — Ներսէս Փափազեան: Պէճիճեան Եղբարք, Ճօրճի Շիշմանեան: Առեւտրական նոր տպարան: Թէրզեան և ընկ., Օննիկ Մոզուեան, Գէորգ Փափազեան: Հրանտ Քէրեստէճեան: Զգօն Փափազեան, Յակոբ Քօչունեան: Արտաշ. Յ. Շիշմանեան, Մ. Գալբագճեան, Միքայէլ Տէր Սահակեան: Յակոբ Հօլաս: Հրանտ Խրտըշեան, Յակոբ Քէշիշեան: Ս. Օհանեան:

ԻԶՄԻՐ

133 Տպարան Ս Էջմիածնի (Գ.) 1676
134 Մհտ. Մարկոս 1759–62
» Մարդասիրական ընկ. (Բ.) 1832–6
135 Հօման Հալլօք 1838–9
» Գուլիելմոս Կրիֆֆիթ 1838–52
136 Սահփան Պապօեանց 1840–4
» Ղուկաս Պալքազարեան 1844–5
» Թաղիկեանք 1840–1912
» Մեսրոպեան վարժարան 1841–5
» Տպարան Արագածուննեաց 1843–6
» «Պատանեկան տպարաններ» 1850–60
» Տէտէեան Եղբարք 1851–93
137 Տէր Վրթանէս (Թուրքալ Հյկզեն.) 1854–5
» Գրիգոր Մսերեան 1878–81
138 Մատթէոս Մամուրեան 1883–1901
» Մատթ. Մամուրեան Որդի 1901–12
» Բարսեղ Քէշիշեան 1905–12
» Օսմանիէ 1909–12

ԵՐՈՒՍԱՂԷՄ

139 Ս. Յակոբեանց վանք 1832–1912
140 Աբրահամ Մուրատեան (Ա.) 1844

ԻԶՄԻՏ

141 Աբրահամ Մուրատեան (Բ.) 1850–3
» Մարտիրոս Մալեան 1879...1912
» Օննիկ Տ. Ազարեան 1912

ԱՐՄԱՇ

142 Չարխափան Ս. Աստուածածնի վանք 1863–79

ՎԱՆ

143 Մկրտիչ վրդ. Խրիմեան (Բ.) 1858–62
» Ժամկոչեան (նոր)
» Բարսեղեան »
* Յովհաննեան » որ 1913էն սկսեալ կը տպէ «Վան-Տոսպ» շաբաթաթերթի նոր շրջանը:

ՄՈՒՇ

143 Մկրտիչ Վրդ. Խրիմեան (Գ.) 1863

ՍՎԱԶ

143 Ա. Վարդանեան 1871–5
» Կ. Ա. Պարսամեան 1910...

ՊՐՈՒՍԱ

143 Մէհմէտ Տաքիր 1877

Ա. ՊՕԼԻՍ

143 Ղեւոնդ Քհ. Փափազեան (Ա.) 1885–6

ԶԱՆԱԶԱՆ ԳԱՒԱՌՆԵՐ

145 Ատաբազար.— Արթուշեան (նոր)
» Գօնիա.— «Իկոնիոն» Գրաշարատուն Ճէնանեան Գօլէճի (նոր)
» Կիրասօն.— Փերակ »
» Սամսօն.— Արեգակ »
» Տրապիզոն.— Սեւաճի Եղբարք, Ոսկինար: Մէշվէրէթ (նոր):
145 Կարին.— Յառաջ (նոր)
» Երզնկա.— Արօր »
» Եւդոկիա — Իրիս »
» Խարբերդ.— Ամենուն համր.: Եփրատ (նոր),
» Ամասիա.— Ասպառաժ (նոր)
» Մարզուան.— Ս. Միածինեան: Ներսէս և Արապեան, Կիւրեմպէրկ (նոր),
146 Այնթապ.— Կեդր. Թուրքիոյ Գօլէճ, Թիճարէթ մաթպաասը (նոր),

## Աւստրիա — Հունգարիա.

ԻԼՎՕՎ (ԼԵՀԱՍՏԱՆ)

146 Յովհ. Երէց Քարմատանենց 1616

ՍՈՒՉԱՎԱ

146 Տպարան Մետրապոլտական 1649

ԵՂԻՍԱԲԵԹՊՕԼ

146 Տպարան «Ծնեմարան Մանկանց»ի 1876

ԹՐԻԷՍԹԷ

147 Մխիթարեանք (Ա.) 1776–1810
151 Անանուն 1843

ՎԻԷՆՆԱ

147 Մխիթարեանք (Բ.) 1811–1912

## Ֆրանսա.

ՓԱՐԻԶ

| | | |
|---|---|---|
| 151 | Փօրէլ | 1537 |
| » | Արքունի կամ Ազգ. տպ. | 1633...1850 |
| 152 | Տիւրբէ | 1825—8 |
| » | Շիլլէր | 1852—5 |
| » | Վ.իլերմ Ռէմքէ | 1854 |
| » | Ճանիկ Արամեան (Ա.) | 1854—62 |
| » | Էջ. Թիւնօ և Ընկ. | 1857—62 |
| » | Կ. Վ.րդ. Շահնազարեանց (Ա.) | 1857—62 |
| 153 | Աբրահամ Մուրատեան (Գ.) | 1860 |
| » | Ա. Պուրտիէ | 1861 |
| » | Մօտխս և Որդի | 1881...96 |
| » | Վ.իմագիր տպագրութիւնք | 1891—2 |
| » | Միջազգային տպարան | 1893—4 |
| » | Անահիտ | 1897—1911 |
| » | Կէյնշէ | 1900 |
| » | Համալսարան | 1900—2 |
| » | Պ. Միսաք | 1901—3 |
| » | Կ. Բասմաջեան | 1901—7 |
| 154 | Ա. Բանվէռ | 1901—2 |
| » | Շ. Նօպլէ | 1902 |
| » | Հայկական | 1902—6 |
| » | Էսր-Ռէսր | 1905 |
| » | Տիգրան Տօղրամաճեան (Ա.) | 1894...1908 |
| » | Կարապետ Ներսէսեան (Բ.) | 1906—12 |
| » | Համազգային | 1907—8 |
| » | Հնչակ [* Imp. Turabian, 227, Boulevard Raspail] | 1910—3 |

ՄԱՐՍԻԼԻԱ

| | | |
|---|---|---|
| 155 | Տպ. Ս. Էջմիածնի (Դ.)= Երեւանեցի Ոսկան Վ.րդ. Ղլիճեանց, Թադէոս Համազասպեան, Սողոմոն Լեւոնեան, Նախիպ Գրիգորեանց, Վ.անանդեցի Մատթ. Յովհաննիսեան. | 1673-1710 |
| 158 | Ճանիկ Արամեան (Բ.) | 1862—4 |
| » | Մկրտիչ Փորթուգալեան | 1885—1912 |

ՄՕՆՊԷԼԻԷ

| | | |
|---|---|---|
| 160 | Ս. Տէր Բաղդասարեան | 1912 |

## Պարսկաստան.

ՆՈՐ-ՋՈՒՂԱ

| | | |
|---|---|---|
| 160 | Ամենափրկիչ վանք | 1640—1907 |
| 161 | Յովհաննէս Վ.րդ. Ջուղայեցի | 1647—50 |

ԴԱՒՐԷԺ

| | | |
|---|---|---|
| 163 | Գւրժ. Հայոց Արմեն. Դպրոց | 1890—1903 |
| » | Թեմական արագատիպ | 1903—1912 |

ԹԵՀՐԱՆ

| | | |
|---|---|---|
| 163 | Ամղր. Բէկնազարեան | 1894—6 |
| » | Փարոս | 1904—1912 |

## Հոլանտա.

ԱՄՍԴԵՐՏԱՄ

163 Տպ. Ս. Էջմիածնի (Ե.) 1660—9= Մատթէոս Դպիր Ծարեցի 1660, Ոսկան Ղլիճեանց 1661-4, Վ.անանդեցի Կարապետ Վ.րդ. 1664, Երեւանեցի Ոսկան Վ.րդ. Ղլիճեանց 1666—9, Վ.անանդեցի Մատթ. Յովհաննիսեան 1685—8, Վ.անանդեցի Թօմաս Եպսկ. 1695—1705, Վ.անանդեցի Ղուկաս 1711—7։

## Գերմանիա.

ԼԱՅՊՑԻԿ

| | | |
|---|---|---|
| 169 | Անդրէաս Աքոլութոս | 1680 |
| » | Գուլիելմոս Դրուգուլինի | 1872 |
| » | Բֆէյտկոպֆ և Հէրտէլ | 1896 |

ՄԱՐՊՈՒՐԿ

| | | |
|---|---|---|
| 169 | Ֆիսկ | 1902 |

## Անգլիա եւ գաղթավայրք.

ԼՕՆՏՕՆ

| | | |
|---|---|---|
| 170 | Կարոլոս Ակքերս | 1736 |
| » | Ց. Ռիվինկթըն | 1780 |
| » | Կ. Մ. Ուատս | 1858...83 |
| » | Հայկական ազատ տպարան | 1891—8 |
| » | Հայաստան | 1888—92 |
| » | Հայկական որբանոց | 1902—5 |

ՄԱՆՉԷՍԹՐ

| | | |
|---|---|---|
| 171 | Կ. Վ.րդ. Շահնազարեանց | (Բ.) 1864 |
| » | Թորոս Քահանայ Ջուղայեցի | 1899—1901 |
| » | Նշան Ճիհանեան | 1898—1904 |

ՌՕՔՍՊՈՒՐԿ

| | | |
|---|---|---|
| 171 | Փիլիպ. և Տիրանեան | 1904 |

ՄԱԼԹԱ

| | | |
|---|---|---|
| 171 | Մարդասիրական ընկ. (Ա.) | 1828—31 |

ՆԻՔՕՍԻԱ

| | | |
|---|---|---|
| 172 | Ազգ. Կրթ. Որբանոց | 1902—4 |

## Հնդկաստան

### ՄԱՏՐԱՍ

172 Շահամիրեան Սուլթանում }<br>» Յակ. և Եղ. Շահամիրեան } 1772—83

173 Յարութիւն Քհնյ. Շմաւոնեան 1789—1809

174 Ս. Ծատուր Աղայվալեանց 1809—18

### ԿԱԼԿԱԹԱ, ՊՈՄՊԱՅ, ՍԻՆԿԱՓՈՒՐ

174 Յովս. Քհ. Ստեփանոսեան 1796

» Օհանփիւռեան 1810…23

» Զրնրլում Աւետեան 1811—5

175 Աստուածաշունչի ժողով 1817

» Պօղոս Յորդանանեան 1821

» Հայկ. Մարդասիրական ճեմ. 1822…71

» Եպիսկոպոսական ճեմարան 1829…41

» Մկրտող Միսիոնարք 1831—2

174 Ուսումնասէր 1843

175 Արարատեան Ընկերութիւն 1845—7

174 Հայելի 1846

175 Արծիւ (Պաղտասար Վիջէնեան) 1847—8

174 Եղիազար Տ. Յարութիւնեան 1862

176 Յովհ. Քհ. Խաչիկեան 1869—76

## Ռուսիա

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ (ԷՋՄԻԱԾԻՆ)

176 Ս. Տպ. Լուս. կամ Էջմիածնի 1771…1912

177 Վահան Վրդ. Բաստամեան 1870

### ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ

177 Գր. Խալդարեանց 1781—8

178 Յովսէփ Յոհաննիսեան 1812—26

» Հայոց Եղիազարեանց ճեմ. 1828

» Աղեքս. Խուդաբաշեանց 1829…38

» Եանսօն: Ռափայէլ պատկանեան: Գիտութեանց Ակադեմիա (1860)

» Միք. Մ. Միանսարեանց 1867—8

» Բակստի 1869

» Գօլովինի 1872

» Հրկենֆիլտ և Ընկերութիւն 1876

» Ի. Ն. Սկորոխոդով 1887—91

179 Յ. Ի. Լիբերման 1893—7, Շենկգեավէր,

» Պուշկինեան 1901—4

### ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ

179 Ս Խաչ վանք 1790—4

» Ա. Ջամինեան և Քերլեան 1894

» Եղբ. Յ. և Ս. Ուազեանններ 1898—1910

180 Մեր Զայնը, Լոյս:

### ԱՍՏՐԱԽԱՆ

180 Յովսէփ Ս Արղութեանց 1796

» Տպարան Ս. Էջմիածնի 1818—27

### ՄՕՍԿՈՒԱ

180 Օգոստեան Սեմէն 1820—30

» Լազարեան ճեմարան 1829—71

» Վլադիմիր Գոտյէ 1850—9

* Էռնեսթ Պառֆքնէխտ (Հիւսիսափայլ) 1858…: Փարոս Հայաստանի A.A.Gatzouk (1879—81), Համբաւաբեր Ռուսիոյ եւայլն:

181 Յովհ. Բարայեան Բարանեանց 1861—3

» Որոն Հերբէկ 1887—8

» Մկրտիչ Բարխուդարեան 1890…1910

» Վառվառէ Կասցուկ 1898…

» Կուշնիրավցեվա…

» Ե. Աւետիքեան 1906…11

### ԹԻՖԼԻԶ

181 Ներսէսեան դպրոց 1823—65

» Արզանեան 1856

182 Համբ. Էնֆիաճեանց (և Ընկ.) 1860—80

» Մասէր (գրաձուլիչ)

» Մշակ 1872—1912

» Յ. Մարտիրոսեանց (և Ընկ.) 1876—87

» Կովկ. և Կեդր. գրվաճռ.նցք. 1875…88

» Մ. Վարդանեանց (և Ընկ.) 1881…

» Արօր 1881…

» Ռօտինեանց: Մ. Շարաձէ, Հերմէս 1891…

» Մնաց. Մարտիրոսեանց 1898—1912

» Օր. Ն. Աղանեանց 1906—12

» Թառումեանց: Շապանեան, 1907…1910

» ՌՈՒՍԱՆՈՒՆ ԽԻԱՑԼՆ. ՏՊԱՐԱՆՆԵՐ. — Եակշատի 1877, Լ. Գ. Կրամարենկո 1883—6, Կաւկաս 1890, Տպ. Գլխ. կառավարութեան փոխարքային Կովկասու 1874…92, Վրաց հրատրկչկն. Ընկ. 1893…, Վերիջէ և Կամէնսպախէր 1902…: Ա. Քութաթելաձէ 1902: Թաւարքքիլաձէ 1903: Գուտտէնբերգ 1906, Եպօխա 1907: Կ. Պ. Կովլոսկով: Զմօրա 1907, Շրոմա 1908: Դիւտտերիխ 1908: Պրօգրէս 1908: ուստուրա Ընկ. 1909: Նադիքդա 1909: Էկօնոմիա 1909: Էսպէրանտո 1910: Շապօրնի 1911:

## Շուշի

183 Անանուն 1829—30

» Բողոքական Միսիոնարք 1832

» Հայոց Հոգեւոր Տեսչութիւն …1892

» Միրզաջան Մհտ. Յակոբեանց 1881—6

» Տէր-Սահակեանց 1891…1911

» Մ. Բարաջանեան 1910

ԹԷՈԴՈՍԻԱ

183 Յարութիւն Խալխալեանց 1860–76

ՇԱՄԱԽԻ

181 Արա Գրիգորեան 1859

ՌՈՍՏՈՎ

184 Տէր-Աբրահամեան 1875—89
» Ակցիոներական Ընկ. 1898
» Դոնսկայա Րեչ 1906

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

184 Գ. Ս. Սանոյեանց 1876...1902
» Արք. Մ. Մալխասեան 1892...11
» Սոսխանեանց 1901...
» Յովհ. Աֆինեանց. Շիրակ. 1903–12
» Յ. Ղասաբեան 1905...

ԲԱԳՈՒ

184 Մարդասիրական Ընկ. 1872–8
» Ս. Բ. Տէր-Յովհաննէսեանց 1885...
» Գիւլբազարեան 1894...
» Ս. Թ. Շահրազեան 1897—1910
» Եղբ. Ղազարեան 1899...
» Հ. Ս. Երեւանցեան 1902...
» Ս. Առօնեանց 1903
» Արօր 1903...
» Տրուդ 1906...
» Ելեքտրակօ 1909
» «Բագու» 1910

ԵՐԵՒԱՆ

184 Պաւլ 1889—3
» Ա. Գուլամիրեանց 1889...
» Է. Տէր-Գրիգորեանց 1896...
» Ի. Էսակուա 1899
» Այվազեանց և Նազարեանց 1907
» Լոյս 1908—10

ԱԽԱԼՑԽԱ

185 Մկր. Ղալամքարեան 1889...1901
» Եղբ. Մարտիրոսեանց 1905...
» Խորէն Ամարեանց 1906

ՆՈՐ ՊԱՅԱԶԻՏ

185 Անանուն 1890

ԳԱՆՁԱԿ

185 Թառումեան 1893...5
Ֆէօդորով ..

ՊԱԹՈՒՄ

185 Ն. Պ. Գուրոկայեան 1901—4

ԱՆԱԲԱ

185 Մ. Յ. Շուռո 1905—7

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ

185 Սուքիասեանց և Լիտինկօ 1908

ԳՈՐԻՍ

185 Սասուն 1910

ՍԱՄԱՐՂԱՆՏ

185 Ղազարով 1910—1


## Ամերիկա


ՆԻՒ-ԵՕՐՔ

186 Աստուածաշունչի Ընկ. 1857–69
» Ամերիկայի Տետրակի Ընկ. 1860–86
» Հ. Էկինեան 1888–98
» Արարատեան 1891—1905
187 Մ. Ս. Գաբրիէլեան 1891—1912
» Էլիաս Խայաւ և Ընկ. 1897—9
» Կոչնակ 1900—12
» Երիտասարդ Հայաստան (Ա.) 1903...
» Արաքս 1905—9
» Արծիւ 1905—8
» Արագած 1911
» Պետրոս Ռ. Թորոսեան 1912

ՊՕՍԹԸՆ, ՈՒՍՏԸՐ

187 Հայրենիք 1899—1912
» Ձայն Հայրենեաց 1904–6
» Ազգ 1907—12
188 Լոյս 1901–6
» Փիլիպպոս և Տիգրան 1904
» Աղւանդեան 1905–9
» Ի. Ա. Երան 1911—2
» Պահակ (Ա.) 1911
» Կիլիկիա 1912

ՖՐԷԶՆՕ, ԲՐՕՎԻՏԷՆՍ

188 Քաղաքացի 1902
» Ասպարէզ ..
» Երիտասարդ Հայաստան (Բ.)... 1912
» Պահակ (Բ.) 1912


## Եգիպտոս


ԳԱՀԻՐԷ

188 Աբրահամ Մուրատեան (Դ.) 1865
» Սրգ. Դաբբինեան (Արարատ) 1897—1910
» Մնակեան Եղբարք 1898
» Արշալոյս (Ժողովրդական. Ն. Թորոսեան 1897—1912
» Օննիկ Հալէպլեան (Ա.) Կիլիկիա 1907—10
189 Լուսաբեր-Արեւ 1906—12
» Փափազեան և Տիրլիկ 1906

189 Սփինքս 1906
» Զարեհ Ն. Պէրպէրեան (Բ.) 1910—12
» Աստիկ Զատէեան...
» Դր. Ռափայէլեան (Բ.) (գրաձուլիչ)
» Միութիւն 1912

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

189 Ղեւոնդ Քհ. Փափազեան (Բ.) 1888—9
» Տիրան Փափազեան (Բ.) 1898
» Օննիկ Հալէպլեան (Բ.) Արաքս 1900
» Վահան Թէքէեան և Ընկ. 1905
190 Կամպէրրա,Րաֆֆի,Կ.Փաշայեան 1905—7
» Գ. Նազարէթեան 1906—7
» Խնայողական (Մ. Տամատեան) 1910
» Տիրան Մանկասարեան...
» Սմբատ Բիւրատ 1903

ՌԱՄԼԷ

190 Միհրան Ասքանազ 1903—4

## Պուլկարիա

ՎԱՌՆԱ

191 Եսանէսքու 1885...96
» Օ. Բրսեղեն.(Բ.) Արեւել. տպ. 1896-908
» Վօյնքօֆ...
» Վ.գայմոսր 1899—909
» Տ. Թօտորօֆ 1904
» Գէնչօ Նիքօլօֆ 1899—910
» Տիրան Փափազեան (Ս.) 1897—9
» Միքայէլ Գալըպգձեան (Բ.) 1905
» Իրաւունք 1896—912
» Մատթէոս Լօպասեան (Ոսկեդար)...

ՌՈՒՍՃՈՒՔ

191 Դանուբ 1892
» Չիբենի...
» Հրատարակչական Ընկ. 1897
» Գ. Գ. Մազմանեան 1902—8
» Վերածնութիւն 1904

ՇՈՒՄԼԱ

192 Ց. Աւետարանեան 1903—4

ՍՕՖԻԱ

192 Գ. Կ. Չէնրօֆ 1904

ՖԻԼԻՊԷ

192 Ռազմիկ 1905—8
» Այրի Տիկին Փիւսկիւլեան...

## Ռումանիա

ՖՕՔՇԱՆ

190 Հայաստանեայց Ընկերութիւն 1877

ԿԱԼԼԱՑ

190 Ղեւոնդ Քհ.Փափազեան (Գ.) 1891—1902

ՊՈՒՔՐԷՇ

191 Ժան Սապրթէյ (Շեփոր) 1912

## Յունաստան

ԱԹԷՆՔ

192 Հայկական Ազատ Տպարան («Հնչակ»ի) 1892—7
» Միութիւն 1898

## Զուիցերիա

ԺԸՆԷՎ

192 Հայ Յեղ. Դաշնակցութիւն 1891—1912
» Կարապետ Ներսէսեան (Բ.) 1903—6

ԼՕԶԱՆ

192 Հայկազեան (Մրտ.Նալբանտեան) 1904—7

## Շուէտ

ՍԹՕՔՀՕԼՄ

192 Նորայր Բիւզանդացի ..

ՏԻՊ ՈՒ ՏԱՌ-ի տպագրութիւնը 1912 Սեպտ.էն ի վեր բէեւ աւարտած էր, սակայն ճարկեցուցիչ պատճառ մը ստիպուեցանք այսօր միայն հանել հրապարակ: Վերջին պահուն, երբ գիրքիս ցանկը գրուած էր մամուլին տակ, ծանօթ բանասէր Եղիշէ Արքեպսկ. Դուրեան տեղեկացած ըլլալով Նալեան Յակոբ Պատրիարքի «Գանձարան ծանուցմանց» անուն հեղինակութենէն՝ թէ ԹՈՒՐՇՈՒՃԵԱՆ մականուամբ վաղեմի հայ տպագրիչ մըն ալ գոյութիւն ունեցած է, հանեցաւ ընդօրինակել եւ մեզ ուղարկել նոյն գիրքին Բ. հատորին մէջ յիշատակուող (էջ 429—30) այդ գրուածը որ անա.— **«...Յազգին մերում նախ ի Ջուղայ ոմանք ստեղծանեցին զտպագրատուն, բայց գիրն եւ թանաքն եւ թուղթն կարի ապականեալ, որպէս երեւի ի տպեալ «Հարանց վարուց» եւ յայլոց: Իսկ լուսաւոր Ոսկան վարդապետն ի Մարսեյլ գնալով ի ժամանակս Յակոբայ Կարողիկոսին՝ այնպէս զարմանալի գիր հնարեաց, որպէս յայտ է յՈսկանի Աստուածաշնչէն եւ յայլոց, որ գրեթէ ո՛չ Վենետիկեցւոյն, ո՛չ Աբբայ Մխիթարին եւ ոչ ԹՈՒՐՇՈՒՃՈՒ գրեանքն լինել կարեն նմին աղախնեայք»:**

# ՄԵԾ ԳՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

*պատիւն ունինք ներկայելու գրեթէ ազգային-քաղաքական բովանդակու-թեամբ եւ գեղարուեստական տպագրութեամբ այն գիրքը: «Տիպ ու Տառ»ը թղթատողները պիտի տեսնեն թէ անոր հեղինակը ո՛րքան արդ-նութեամբ ու պրպտումներով, իսկ հրատարակիչները ո՛րքան զոհողու-թիւնն ի յանձն առին ի լոյս ընծայել զայն՝ միմիայն ի պատիւ այն կրկնակ յոբելեաններուն զոր Հայ Ազգը կը տօնէ ներկայիս մէջ՝ իր Տառերուն, որին* **1500 ԱՄԵԱԿ** *ին եւ Տպագրութեան* **400 ԱՄԵԱԿ** *ին առթիւ: ՏԻՊ ՈՒ ՏԱՌԻ տպագրութիւնը 1912 տարւոյ Սեպտեմբերէն ի վեր [illegible] տած էր. սակայն հայրապետական հրամանաւ եղն Յոբելեաններուն տօնախմբութեանը երկարաձգումին եւ քաղաքական ան-նպաստ պարագաներու հետեւանօք, յարմար դատուեցաւ այսօր միայն հրապարակ հանել զայն: " եւ առչեւ ունենալով այս հատորին բազմա-ծ. « հրատարակութիւնը. նախատեսնելով տպեցինք 500 օրինակ միայն տպագրել, գոհացնելու [illegible] նար միայն գրագէտներու, բա-նասէրներու, հայագէտներու և Հայաստան կազմող ընթերցասէր դասակարգին: Կը ’ ,յուսի ուռնելն Հայ հասարակութենէն օգտուելի առիթէն եւ իր յանձնարարութիւններն ընել մեզ՝ ժամ առաջ, քանի ՏԻՊ ՈՒ ՏԱՌԸ չէ սպառած.*

Կ. Պոլիս 10 Ապրիլ 1913

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ

**Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան**

---

*ԳԻՆ (Փղոսկրեայ թանձր թուղթով կազմեալ)* **45** *ղրշ.,*
*Գաւառ* **50** *ղրշ., Արտասահման* **11** *Ֆր.:*

*ԳԻՆ (Ընտիր փայլուն թուղթով թղթակազմ)* **30** *ղրշ.,*
*Գաւառ* **33** *ղրշ., Արտասահման* **7** *Ֆր.:*